Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԱՀՄԱՆԵ-ՋԱՎԱԽՅ-ԹՈՒՆԴԸ
ՀԵՑ-ԼՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԱԼՈՒՅՍՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՌԵՂՔԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

(1980-ական թթ. վերջ - 1990-ական թթ.)

ՍԵՍՐՈՊ ԱՐՋ ԱՇՃԵԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ
20

ARCH MESROB ASHJIAN BOOK SERIES
20

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 941 (479 25)·32
ԳՄԴ 63 3 (2Հ) + 66
Ս 259

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պ գ·դ , պրոֆ Աշոտ Մելքոնյան
Գրախոսներ՝ պ·գ·դ·, պրոֆ. Էդիկ Մինասյան
պ գ·թ. Խաչատուր Ստեփանյան

Սարգսյան Վահե

Ս253 Սամցխե-Ջավախք-Թուեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում .- Եր.: ՀՀ ԳԱԱ Պատմ., ինստ., 2006.- 376 էջ·

Մենագրության մեջ Վրաստանի ներքաղաքական իրադրության և հայ-վրացական միջպետական հարաբերությունների հենքի վրա ներկայացված են Սամցխեի, Ջավախքի և Թուեղքի 20-րդ դարի վերջին մեկուկես տասնամյակի իրադարձությունները:

Աշխատությունը նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, միջազգայնագետների, երկրամասի ճակատագրով հետաքրքրվողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ԳՄԴ 66.3 (2Հ)+66

ISBN 99941-991-8-8 **2006թ**

Աշխատանքս նվիրում եմ մայրիկիս՝ Ջավախքի Ղազո գյուղի քսանհինգամյա մանկավարժ՝ Վարդուհի Մուրադյանի ծննդյան 50-ամյակին (որը լրացավ 2006 թ. մարտի 8-ին). Ինչպես նաև Սամցխեի, Ջավախքի, Ծալկայի (Թռեղք) բոլոր մանկավարժներին, որոնք 1990-ական թվականների ծանր ժամանակաշրջանից ցայսօր չլքեցին և չեն լքում երկրամասը՝ դաստիարակելով ու իր պատմական հողի վրա պահելով մի ողջ սերունդ:

Թող այս գիրքը դառնա մի փոքրիկ հուշարձան՝ խորհրդանշելով ձեր գործի կարևորությունը և այս երկրամասում հայկական շարունակականության հավերժականությունը:

ԵՊՀ Հայաստանին հարակից երկրների
պատմության ամբիոնի մագիստրանտ

Վ. Սարգսյան

Монография посвещается пятидесятилетию моей матери – Мурадян Вардуи Сергеевне, *честно и добросовестно проработавшей двадцать пять лет учительницеи математики в школе села Гадо Джавахкского края, а также всем педагогам Самцхе – Джавахка – Трехка, которые не смотря на тяжелейшие социально – экономичевские условия не покинули край, альтруистично воспитывая в национальном, патриотичном духе на своей исторической родине не одно поколение армянской молодежи*

Пусть эта книга станет скромным памятником, подчеркивающим важность Вашей работы и символизирующим преемственность армянского начала края Самцхе – Джавахка – Трехка

Магистрант кафедры истории сопредельных с Арменией
стран Ереванского государственного университета

В Д. Саркисян

Խորին շնորհակալություն ենք հայտնում Ախալքալաքից՝ վաստակավոր իրավաբան Ի. Աբրահամյանին, *Ախալքալաք քաղաքից՝ ֆիզիկական կուլտուրայի դասախոս, «Ջավախք» հասարակական կազմակերպության փոխնախագահ* Պետրոս Ստամբոլցյանին, *Վրաստանի ՆԳ նախարարության Ախալքալաքի ոստիկանության վարչության պետ* Սամվել Պետրոսյանին, *Վաչիան գյուղի բնակիչ, «Ակունք» պարբերաթերթի խմբագիր* Մելս Թորոսյանին, *Տուրցխ գյուղից՝* Հակոբ Ավետիսյանին, *Խանդոյից՝ «Ջավախք» հասարակական կազմակերպության նախագահ* Ստեփան Հակոբյանին, *Լոմատուրցխից* Աղվան Բերակչյանին՝ *խնդրի շուրջ հետաքրքրական նյութերի տրամադրման համար:*

Մեր կողմից շնորհակալություն նաև հայաստանաբնակ գործարարներ՝ Գևորգ Ավագյանին *(տնտեսագետ, ՀՀ Արարատի մարզ)* և Ռաֆիկ Սիմոնյանին *(ՀՀ Վայոց Ձորի մարզ) գրքի տպագրմանը մեկենաս լինելու համար:*

Автор выражает особую благодарность за финансовую поддержку предпринимателям Г. Авакяну и Р Симоняну, а также всем тем, кто внес посильный вклад в напечатание книги.

Մ. Մաշտոցի հուշարձանն Ախալքալաքի նույնանուն հրապարակում (քանդակագործ Բ. Սարգսյան):

1994 թ. հոկտեմբերի 24-ին, երբ բացվեց հուշարձանը, նախկին Վ. Ի. Լենինի անվան հրապարակը վերանվանվեց մեծ հայի անունով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ Թ 1

ԴԵԿՏԵՄԲԵՐ 1990 Թ

ԳԻՆԸ՝ 30 ԿՊ

ԺՈՂՈՎՐԴԻ ԼՈՒԼՓԻՆԸ, ԱԿԱՆՋՆԻՆ ԱՂԲՆԵԼԷ ԹԻՎԻԹ

ՏԻՐՈՒՀԱՆԸ՝ ՀԵՍԱՅՈՏ ՇՈՒՏ

ՏԱԿԱՒՈՒ ԿԱՇՄԱԿԵՐՊ ՈՐՈՇԱԾ ՇԱՀԱՆ

ԿՅԱՆՔԻ ՀՐԱՄԱՑԱԿԱՆՈՎ

ՄԻՏԻՆԳ ԱՍԻ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԱՄԱՀԱՒԱՆՔ ԵՒ...

«Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթի առաջին համարը



«ՀԱՅԿԱՐԳԱՅՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

АРМЯНСКИЙ БЛАГОТВОРИТЕЛЬНЫЙ СОЮЗ «ГРОН»
АРМЯНСКИЙ ВНЕШНЯЯ ТОРГОВЛЯ

Հայաստան Հանրապետություն
Ք. Երևան, Գ. Լուսավորչի 3
Հեռ. 52-33-73
Հեռագրի հասցե 19777
Հեռախոսների համարներ

Հայաստանի Հանրապետություն
Ք. Գյումրի, Գ. Լենինի 1
Հեռ. 2-33-73
Հեռագրի հասցե 19777
Հեռախոսների համարներ

№ 124430 ից

Հարգելի պարոն

Գյումրու արժողության մեծածախ հաղորդակցության տեղեկատվական կենտրոնը Ձեզ է հայտնում հանձնի դիմաց նախկին գնային դրությունները 2000 / երկու հազար / տարվա դեկտեմբերի 31-ից հետո «Ամառա» բաժնետիրական միությունը կորցրել է գործունեության լիցենզիան:

/ Ս. Գրիգորյան /



Զանգեզուրի մարզպետարանում օգնություն է խնդրել Արցախ

«Հայաստանի Հանրապետություն» 22 մարտի 1994թ.



«Ազգ» 13 Հունիսի 1992թ.

Ремонтная

[illegible] в [illegible] [illegible]
[illegible] и [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]

1 [illegible] 130 [illegible]

2 [illegible] 80 [illegible]

1 → 2 [illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible]

ԱՌԱՋԱԲԱՆ

«Հին վէրքերը հրահրելու եւ ինչու՞ չասել–հին թշնամութիւնները վերարծարծելու մտադրութեամբ չէ, որ ես մօտենում եմ այս հարցին: Քա՛ւ լիցի: Համոզուած կողմնակից եմ հայ-վրացական ամենասերտ բարեկամութեան: Խորապես զգում եւ գիտակցում եմ, որ այդ բարեկամութիւնից է կախուած երկու ժողովուրդների բարեկեցութիւնը և նրանց քաղաքական կշիռը ոչ միայն Անդրկովկասում, այլեւ Մերձաւոր Արեւելքում: Դրա համար էլ վերին աստիճանի ցանկալի կը գտնէի, որ անցեալում մեզ իրարից բաժանող, մեզ փոխադարձաբար ջլատող տարաձայնութիւններն օր-առաջ անհետանային մեր յիշողութիւնից»[1]:

Ա. Ջամալյանի՝ այդ մեծ մտավորականի, դիվանագետի ու հասարակական-քաղաքական գործչի, շուրջ մեկուկես հիսնամյակ առաջ ասված խոսքերը, իրենց բոլոր իմաստներով արդիական են նաև այսօր: Եվ այդ նույնն ենք ասում նաև մենք՝ մեր աշխատանքն սկսելիս:

Ջավախքի (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններ) մասին և նրա շուրջ ստեղծվող աշխարհաքաղաքական իրադրության մասին գնալով է՛լ ավելի շատ է խոսվում: Ջավախքի խնդրով, նամանավանդ մեր օրերում, մեծապես հետաքրքրված են հատկապես զանգվածային լրատվական միջոցները և տարածաշրջանային հարցերով զբաղվող վերլուծաբանները: Դրանում ընդգրկված են և՛ Հայաստանից, և՛ Վրաստանից, և՛ Ռուսաստանից, ինչպես նաև օտարերկրյա ու միջազգային մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պատճառը Ջավախքի հայահոծ պատմական հայկական երկրամաս լինելն է, ինչպես նաև վերջինիս զբաղեցրած տարածքը, որը ռազմավարական կարևոր նշանակություն ունենալու պատճառով, մեծ հետաքրքրություն է առաջացնում մի շարք մեծ ու փոքր տերությունների համար:

---

[1] Ջամալեան Ա., Հայ-Վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 28 ապրիլ, 1928, էջ 75.

Սակայն այս ամենով հանդերձ, վերոնշյալ շրջանակներից շատերի մոտ (և հատկապես հայկական կողմի ներկայացուցիչների) նկատվում է մի նշանակալի «բաց». բոլորը խոսելով Ջավախքի շուրջ ստեղծված այս կամ այն իրադրության մասին, միշտ շրջանցում են և հաճախ գրեթե չեն հիշատակում վերջինիս սահմանակից Սամցխեի (Ադիգենի, Ախալցխայի, Ասպինձայի շրջաններ) ու Թռեղքի (Ծալկայի շրջան) մասին: Այնինչ՝ և՛ պատմական տեսանկյունից, և՛ տարածաշրջանային առումով այս տարածքները նույն Ջավախքի ճակատագիրն ունեցած (և ունեցող) շրջաններ են, և գրեթե անհնար է առանց այս տարածքների ուսումնասիրել Ջավախքի հիմնախնդիրը: Դեռ ավելին, տեսնելով այս տարածքների ներկա վիճակը, կարելի է նրանցում տեսնել Ջավախքը՝ մի որոշ ժամանակ անց... Իսկ բարոյական տեսանկյունից գրեթե աններելի է (գոնե հայկական շրջանակների համար) այս շրջանների անտեսումը: Այս ամենի պատճառը, առաջին հերթին մեր պատմական ոչ այնքան հարուստ գիտելիքներն են այս գավառների անցյալի ու ներկայի վերաբերյալ, և շատ զլմ-ներ և թեման արծարծող շրջանակներ անգամ չեն տարբերակում Ջավախքն Ախալցխայից կամ վերջիններս՝ Ծալկայից: Ուստի ձևավորվում է աղավաղված պատկերացում և երկրամասի հիմնախնդրի վերաբերյալ ոչ հստակ մոտեցում. մի շարք շրջանակներ ունեն յուրովի «վախվորած» վերաբերմունք այս հարցի շուրջ, թե նպատակահարմա՞ր է, արդյոք, խոսել Ախալցխայի կամ Ծալկայի մասին ընդհանրապես: Պատճառներից մյուսն էլ այն է, որ Սամցխեի և Թռեղքի հարցում Վրաստանն արդեն ունի «հաղթողի» կեցվածք, քանի որ լուրջ հաջողություններ է ունեցել այս գավառների էթնոժողովրդագրական պատկերը հօգուտ վրացիների փոխելու գործընթացում:

Ելնելով այս ամենից, մեծապես կարևորվում է Սամցխեի, Ջավախքի ու Թռեղքի խնդրին անդրադառնալ պատմագիտական խոր ուսումնասիրությունների հենքի վրա: Իսկ հրապարակի վրա եղած գրականություն և գիտական աշխատանքներ մինչ վերջին

տարիները գրեթե իսպառ բացակայում էին: Խորհրդային շրջանում դա ինչ-որ տեղ բացատրելի էր, սակայն անհասկանալի էր պատմաբանների լռությունը այս թեմայի շուրջ՝ անկախացումից ի վեր: Միակ պատմաբանը, որն իր աշխատանքները մեծ չափով նվիրեց խնդրո առարկա երկրամասի[2] անցյալի ու ներկայի ուսումնասիրությանը, պ.գ.դ. պրոֆեսոր Ա. Ա. Մելքոնյանն է, որի գործերը նոր լույս սփռեցին ոչ միայն Սամցխե-Ջավախք-Թռեղքի, այլև այս շրջանների հետ էթնիկական ու հոգևոր սերտ կապեր ունեցող հայկական պատմական մեկ այլ նահանգի՝ Բարձր Հայքի (Էրզրումի վիլայեթի) պատմության վրա[3]:

Այս ամենով հանդերձ, դեռևս ամբողջովին չուսումնասիրված են մնում երկրամասի պատմության խորհրդային ժամանակահատվածի անցքերը, ինչպես նաև հետխորհրդային ժամանակաշրջանը՝ մինչ մեր օրերը: Առանձին զլմ-ների և վերլուծաբանների այս թեմայի շուրջ արված ուսումնասիրությունները դեռևս կարիք ունեն ամբողջական շարադրման և պատմագիտական խոր ուսումնասիրության.

Մեր աշխատանքը, որով փորձել ենք վեր հանել երկրամասի շուրջ կատարված իրադարձությունների ամբողջական պատկերը, ժամանակագրորեն ընդգրկում է հիմնականում 1980-ական թվականների վերջից՝ 1990-ական թվականների վերջն ընկած հատվածը: Այն նոր լույս է սփռում երկրամասի նորագույն՝ շուրջ մեկ տասնամյակի պատմության վրա: Միաժամանակ, ընթերցողին երկրամասի խնդիրներին առավել մոտիկից ծանոթացնելու համար անհրաժեշտ ենք համարել տալ վերջինիս վարչական բաժանումների պատմությունն սկսած ռուսական տիրապետության ժամանակաշրջանից՝ 1829 թվականից: Միաժամանակ, հարկ

---

[2] Այս և հետագա շարադրանքում «երկրամաս» ասելով, բացի Ջավախքից, հասկանում ենք նաև Սամցխեն և Թռեղքը:

[3] Տես Մելքոնյան Ա.Ա., Էրզրում (Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)), Ե., 1994, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003:

ենք համարել կարճ անդրադարձ կատարել Սամցխե-Ջավախք-Թռեղքի պատմության խորհրդային ժամանակահատվածի առանձին հարցերին, տնտեսությանը, ժողովրդագրական իրավիճակին:

Վրաստանը պատմության ընթացքում իր տիրապետությունն է հաստատել բազմաթիվ էթնիկ տարրերով բնակեցված շրջանների վրա, որոնցից մի քանիսը հանգամանքների բերումով ունեցել են մշակութային, ինչպես նաև քաղաքական լայն ինքնավարություններ: Վերջիններից են աբխազները, օսերը և այլն: Հետևաբար, հայահոծ Սամցխե-Ջավախք-Թռեղքի անցյալի ու ներկայի հիմնախնդիրները քննելու համար մեծապես կարևորվում է այս տարածքների էթնիկ հարցերի արծարծումը: Այս դիտանկյունից մեծ հետաքրքրություն է իրենից ներկայացնում նաև Աջարիան:

Երկրամասի պատմությունն ավելի ամբողջական դարձնելու համար վերջին բաժնում առանձին կետերով հատուկ քննվել են մեր օրերում վերջինիս առջև նետված հիմնական մարտահրավերները. ա) տարածաշրջանով արդեն անցկացված Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի հետագա ազդեցությունները տարածաշրջանի և ՀՀ-ի վրա, բ) Կարս-Ախալքալաք-Մարաբդա երկաթգծի հնարավոր կառուցման հետևանքները երկրամասի և ՀՀ-ի համար, գ) Թուրք-մեսխեթցիների վերադարձի և վերջիններիս վերաբնակեցման վրացական և թուրքական ծրագրերը, ինչպես և այս գործընթացի հետևանքները տարածաշրջանի և ՀՀ-ի համար, դ) ռուս-դուխոբորների արտագաղթի հարցը Նինոծմինդայի շրջանից և այս շրջանակներում ընթացող հետագա զարգացումները տարածաշրջանի և ՀՀ-ի շուրջ, ե) ռուսական ռազմաբազաների դուրս բերումը և հետագա հնարավոր սցենարները երկրամասի տարածքում:

Սամցխե-Ջավախք-Թռեղքի առջև նետված բոլոր այս մարտահրավերները (սրանց հետ մեկտեղ նաև երկրամասի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը, էներգետիկ ճգնաժամը, ազգային մշակութային վակուումը, հետզհետե մեծացող արտագաղթի

չափերը) սերտորեն առնչվում են ՀՀ-ի հետ, հետևաբար՝ ՍամցխեՋավախք-Թուեղքի հարցը ՀՀ-ի ազգային անվտանգության հայեցակարգի հիմնատարրերից մեկն է, եթե չասենք՝ կարևորագույնը[4].

Սույն աշխատանքը երկրամասի քննվող ժամանակահատվածի պատմության ուսումնասիրության առաջին փորձն է: Այս ժամանակահատվածի իրադարձությունների վերաբերյալ նյութեր հիմնականում պահպանվել են երկրամասում իրենց գործունեությունը ծավալած առանձին անձանց մոտ՝ հիմնականում փաստաթղթերի, ընդունված օրենքների, որոշումների, նամակների, կոչերի, դիմումների, նիստերի արձանագրությունների, առանձին զեկուցագրերի տեսքով, որոնք առ այսօր չեն դարձել պետական արխիվների նյութ: Ավելին, այս նյութերից շատերը ժամանակի ընթացքում մատնվել են կորստյան.

Քննվող ժամանակահատվածի պատմությանը լայնորեն անդրադարձել է ժամանակի հայկական և վրացական մամուլը: Երկրամասի վերաբերյալ ընդունված օրենքների, հայ-վրացական բարձրաստիճան կողմերի միջև տեղի ունեցած հանդիպումների, դրանց ընթացքում արծարծած թեմաների, կնքված պայմանագրերի, զանազան ակտերի մասին նյութեր են պարունակվում Հայաստանի և Վրաստանի Գերագույն Խորհուրդների օրգաններ «Հայաստանի Հանրապետություն» և «Свободная Грузия» (տե՛ս - նաև՝ «Вестник Грузии» թերթերում. բավականին նյութեր կան նաև երկու երկրների իշխանական և ընդդիմադիր մամուլում, («Երկիր», «Ազատամարտ», «Ազգ», «Հզոր Հայրենիք», «Голос Армении» և այլն՝ Հայաստանյան, և «საქართველო» (Վրաստան), «შვიდი დღე» (Յոթ օր), «ახალი თაობა» (Նոր սերունդ), «დილის

---

[4] Այս մասին տես Мадоян А., Мелик-Шахназарян Г., Признать предложение т т. армян Неприемлемым, /армяно-грузинские отношение в 1918-1921 годах и на современном этапе, Джавахк, Нухи-Ареш/, Ереван, 2006, с. 175, հմմտ "Голос Армении", 10.11.2005.

ვაზეთი» (Առավոտյան թերթ), «ახალი ტალღა» (Նոր ալիք), «რეზონანსი» (Ռեզոնանսի), «კვირის პალიტრა» (Շաբաթվա ներկապնակ), «შანსი +» (Շանսի +), «Заря Востока» և այլն): Թեև Վրաստանի իշխանամետ մամուլի նման հայկական «Վրաստան» թերթում գովերգվում են իշխանությունների քայլերը և փորձ է արվում կնճռոտ հարցերը քողարկել հայ-վրացական դարավոր բարեկամության թմբկահարումով, այնուամենայնիվ, այդ օրգանն առանձին հետաքրքրություն է ներկայացնում վիրահայության պատմության խնդրում:

Երկրամասի 1990-ական թվականների սուր և կնճռոտ հարցերին է անդրադարձել նաև «Ջավախք» ժողովրդական շարժման օրգան «Ջավախք» թերթը: Երկրամասի՝ առավալապես տնտեսական հարցերն են շոշափվում նաև տեղում հրատարակվող շրջանային «Փարոս», «Արշալույս» թերթերում:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության կողմից հրատարակվող «Ասպնջակ», 2001 թ-ից հրատարակվող «Ակունք», և 2003 թ-ից լույս տեսնող «Հարավային դարբաս» թերթերը (վերջին երկուսը հրատարակվում են Ջավախքում):

Սամցխե-Ջավախք-Թուրքիի վերաբերյալ որոշակի նյութեր են հրապարակվել նաև Երևանում գործող Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի կողմից լույս ընծայվող հոդվածների ժողովածուներում: Նմանատիպ (քիչ փոքր չափերի) հոդվածներ են հրապարակվել նաև անգլիական IWPR (Institute for War and Peace Reporting) կազմակերպության կողմից հրատարակվող «Кавказский информационный еженедельник» *հանդեսի տարբեր համարներում:*

Որոշակի նյութեր են զետեղված նաև տարածաշրջանում գործող միջազգային և վրացական ոչ կառավարական կազմակերպությունների առանձին ուսումնասիրությունների հիմքի վրա, որոնք վերաբերում են տարածաշրջանի ժողովրդագրական տենդենցներին, տնտեսական, էներգետիկ իրավիճակներին, մշակու-

թային կյանքին և այլն: Կարելի է հիշատակել խաղաղության, ժողովրդավարության և զարգացման կովկասյան ինստիտուտի (CIPDD) կատարած ուսումնասիրությունները երկրամասի զանազան հարցերի շուրջ:

Հիմնականում երկրամասի շուրջ ընթացող վերջին շրջանի իրադարձությունների մասին են հանդես եկել նաև ռուսական և արևմտյան մի շարք վերլուծական կենտրոններ և ինստիտուտներ[5]:

Կարևոր է նշել նաև սփյուռքում հրատարակվող հայալեզու մամուլը: Այդ առումով մեծ արժեք է ներկայացնում 2002 թ. Բեյրութում լույս տեսած «Հայրենի Ջաւախք» խորագրով ուսումնասիրությունների ժողովածուն, որտեղ արծարծված են խնդրո առարկա երկրամասի պատմական, ժողովրդագրական, ազգագրական, սոցիալ-տնտեսական, պատմական հուշարձաններին առնչվող մի շարք հարցեր, որոնցով ևս փորձ է արված ամփոփ ձևով ընթերցողին մատուցել երկրամասի ամբողջական պատկերը:

Հետաքրքրական աշխատանք են տանում նաև ծնունդով Ջավախքցի առանձին մտավորականներ, որոնք հանդես են գալիս երկրամասի այս կամ այն հարցերի քննությամբ: Այդպիսի աշխատանք կարելի է համարել Ա. Իսոյանի «Սամցխե-Ջավախքի նշանավոր հայորդիները» ստվարածավալ աշխատության առաջին գիրքը, որում հեղինակը ներկայացրել է երկրամասում ծնված անվանի հայորդիների կենսագրությունները, նրանց մեծ վաստակը հայ ժողովրդի շրջանում: Այդպիսի մի շնորհակալ գործ էլ կատարել է ծնունդով Ջավախքի Գանձա գյուղից՝ Վ.Ղազարյանը, որը հավաքել և մեկ ամբողջական գրքով հրատարակել է Ջավախքից և ծագումով Ջավախքցի բոլոր այն մարդկանց անցած ուղին, որոնք մասնակցել են Արցախյան ազատամարտին[6]:

---

[5] «Երկիր», 29.10.2004:

[6] Ղազարյան Վ., Ջավախքի արծիվները Արցախի լեռներում, Ե., 2003:

Ջավախքի հետպատերազմյան շրջանի և ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանի հիմնականում տնտեսական, ինչպես նաև Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների այս կամ այն հիմնախնդիրներին, ժողովրդական շինարարությանն են անդրադառնում նաև «Վրաստան» թերթի երկարամյա թղթակից, հրապարակախոս Աղասի Մելքոնյանի 2003 և 2006 թթ-ին լույս տեսած «Ջավախք իմ առասպելական» և «Հայաշխարհ գողտրիկ. Ջավախք» հոդվածների ժողովածուները, որոնք կարելի է համարել հետպատերազմյան Ջավախքի (1945-1991թթ. տարեգրությունը:

«Ջավախք» ժողովրդական շարժման կոնֆերանսների հերթականության, առանձին գործիչների մասին փոքրիշատե նյութեր են հրատարակվել նաև Գ. Սմոյանի «Ջավախք: Ովքե՞ր ենք մենք» 2000 թ. լույս տեսած գրքում: Սակայն պետք է նշել, որ չնայած հեղինակի ձգտումներին՝ բարձրացնել Ջավախքցի առանձին գործիչների գործունեության այս կամ այն կողմերը, հեղինակը խիստ աղավաղված և խառնիճաղանճ ձևով է ներկայացրել նյութերի շարադրանքը, որոնք հեռու են պատմագիտական հետազոտություններ համարվելուց:

Բավականին մեծ ուսումնասիրություն է կատարվել ռազմավարական հետազոտությունների ռուսական ինստիտուտի կողմից, որը 2001-2002 թվականներին հրատարակել է երկու հատորանոց նյութերի ստվարածավալ ժողովածու՝ "Грузия Проблемы и перспективы развития" վերնագրով՝ Ե. Մ. Կոժոկինի խմբագրությամբ: Գրքում մեծ տեղ է հատկացվել նաև Սամցխե-Ջավախքի հիմնախնդրին:

Էթնիկական կոնֆլիկտներին, ազգային հարցերին նվիրված և 1997 թ. Մոսկվայում լույս տեսած "Этнические и региональные конфликты в Евразии" խորագրով հատորյակներում ևս արծարծվում է Վրաստանի, ինչպես նաև Սամցխե-Ջավախքի թեման: Նույն թեմայով ուսումնասիրություն է հրապարակվել նաև վերոնշյալ Խաղաղության, ժողովրդավարության ու զարգացման

կովկասյան ինստիտուտի տնօրեն (CIPDD) Գիա Նոդիայի կողմից 1996 թ. Մոսկվայում լույս տեսած "Спорные границы на Кавказе"*ժողովածուում:*

Երկրամասի այս շրջանի պատմությանն են անդրադարձել առանձին վրաց գիտականներ: Այս շրջանի վերաբերյալ նույնիսկ հրապարակի վրա կա ակադեմիական հրատարակություն: Այն հրատարակվել է Վրաստանի գիտությունների և սոցիալական հարաբերությունների ակադեմիան՝ պատմաբան-պրոֆեսորներ Շոթա և Օթար Թեթվաձեների հեղինակությամբ[7]*: Նշենք, որ ինչպես վրացական շրջանակների առանձին հրապարակումներ, այնպես էլ այս գիրքն աչքի չի ընկնում «նորություններով»: Այստեղ ևս փորձ է արվում պատմության խեղաթյուրման միջոցով ներկայացնել Վրաստանի տարածքում ապրող հայերի պատմությունը: Հեղինակները, նույնիսկ որոշ տեղերում չհետևելով գիտական օբյեկտիվ պարզ նորմերին, խիստ անհարգալի տոնով փորձում են սևացնել հայերի գործունեությունը Սամցխե-Ջավախքում 1990-ական թթ. ընթացքում: Վրացական շրջաններում ոչ քիչ հրատարակվող շովինիստական այս «ուսումնասիրություններին» հարկավոր է տալ օբյեկտիվ, պատմական ճշգրիտ փաստերի վրա հիմնված պատասխան-ուսումնասիրություններ, որոնք, ցավոք սրտի, շատ քիչ են:*

Տարածաշրջանի, Վրաստանի և Սամցխե-Ջավախքի մասին բավականին հետաքրքիր և խորը վերլուծություններով է հանդես գալիս Վրաստանի քաղաքական-ռազմական հարաբերությունների և պաշտպանության խնդիրների կենտրոնի տնօրեն Դավիթ Դարչիաշվիլին[8]*: Այսօրինակ նմանատիպ վերլուծություններ է անում նաև ՄԱԿ-ի Ծրագրերի զարգացման կենտրոնը*[9]*:*

---

[7] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე), თბილისი, 1998

[8] **http: //www.ca-c.org /journal /eng-01-2000/07.darchiash.shtml.**

[9] **Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004.**

Սամցխե-Ջավախք տարածաշրջանի ընդհանուր հարցերին, 1997 թ. ժողովրդագրական իրավիճակին է անդրադարձել նաև Թիֆլիսում 1997 թ.լույս տեսած "Конфликты и переговоры" ամսագիրը[10]:

Սամցխե-Ջավախքի ժողովրդագրական տվյալները հաղորդում են Վրաստանի առանձին վիճակագրական ծառայությունների էլեկտրոնային կայք էջերը[11]:

Մոտավորապես սրանք են այն նյութերը, որոնց միջոցով փորձել ենք վեր հանել Սամցխե-Ջավախք-Թուեղքի շուրջ մեկ տասնամյա պատմության չլուսաբանված առանձին էջեր:

Երկրամասի վերաբերյալ նյութերի շարադրանքը ներկայացված է նշված ժամանակաշրջանի հայ-վրացական հարաբերությունների և Վրաստանի ներքաղաքական իրադրության բավականին ընդարձակ լուսաբանման համատեքստում, որը մեզ հնարավորություն է տալիս առավել հստակ պատկերացնել դեպքերի զարգացումները:

Երկրամասն ունեցել է ներքին զարգացումների մի հետաքրքիր ընթացք, որի խորքային իրողությունների բացահայտումը մեզ հնարավորություն կտա ճիշտ գնահատելու այսօրվա զարգացումները և խուսափել կրկնվող սխալներից:

Կապված արտաքին և ներքին մի շարք պատճառների հետ՝ «Ջավախք» ժողովրդական շարժումը չկարողացավ իրականացնել իր վրա դրված առաքելությունը՝ հասնելու Ջավախքի ինքնավարության ձեռքբերմանը: Այն ԽՍՀՄ-ի բազմաթիվ այլ տարածքներում սկիզբ առած շարժումների օրինակով պոռթկաց՝ երբ փլուզվում էր ԽՍՀՄ-ը, և իր կազմավորման պահից սկսած, դառնալով առանձին ուժերի և անձանց ձեռքին խաղաքարտ, աստիճանաբար բռնեց վայրէջքի ուղին և ի վերջո, պառակտվելով, գրեթե դադարեց գոյություն ունենալուց (մոտավորապես նույն

---

[10] http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml
[11] http://www.statistics.ge/_files/english/census/2002/Ethnic%20groups.pdf.

զարգացումների ընթացքն ունեցավ նաև Հայոց Համազգային շարժումը՝ ՀՀՇ-ն): Այն սկզբից ևեթ Վրաստանի առջև չկարողացավ դնել կոնկրետ մշակված պահանջներ (այս ամենի մասին մանրամասն անդրադարձել ենք մեր աշխատության մեջ)՝ կապված Ջավախքի ինքնավարության խնդրի հետ: Այստեղ պետք է նշել հետևյալ իրողությունը. մարդկային այն ռեսուրսները, որոնք ընդհանրապես ունեցել են խորհրդային շրջանում ինքնավարություն ունեցող տարբեր երկրամասեր, Սամցխե-Ջավախք-Ծալկայում դրանք բացակայում էին: Պատճառը նրա մեջ էր, որ եթե տարբեր ինքնավարություններում խորհրդային շրջանում գոյություն են ունեցել վարչական ենթակառուցվածքներ, պետության կամ պետականության ինչ-ինչ նմուշներ, որոնցում քաղաքական փորձ է կուտակել հետխորհրդային շարժումների լիդերները, նման վարչական կառույցները Սամցխե-Ջավախք-Ծալկայում ի սկզբանե բացակայել են: Վերջին հանգամանքը պատճառ դարձավ, որ երկրամասի շարժման առաջնորդները այդպես էլ չկարողանան հասնել որոշիչ արդյունքի:

Իսկ Վրաստանը, հայկական կողմի հայեցակարգային պահանջների բացակայության պայմաններում, թելադրում էր երկրամասի տարածքային կարգավիճակի իր սեփական մոդելը (Է. Շևարդնաձեի 1994 թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագիրը, որով ստեղծվում էր Սամցխե-Ջավախք արհեստական նահանգը): Հետաքրքրական է, որ մինչ Է. Շևարդնաձեի այս հրամանագիրը, դեռևս 1991 թ., Զ. Գամսախուրդիայի իշխանության օրոք, Վրաստանի Գիտությունների ակադեմիայի ազգային հարաբերությունների կենտրոնի ավագ գիտաշխատող Զուրաբ Դավիթաշվիլու կողմից կազմվել և մանրամասն մշակվել էր Վրաստանի ապագա վարչատարածքային բաժանումների վերաբերյալ մի առաջարկ-նախագիծ, որով Վրաստանը վարչատարածքային բաժանման վերաբերյալ հինգ հիմնական սկզբունքների (դրանք էին՝ 1) պատմաքաղաքական, 2) ազգագրական, 3) տնտեսական, 4) բնաաշխարհագրական, 5) ազգային-ժողովրդագրական) հիման

վրա բաժանվում էր 11 երկրամասերի (մխարեների)[12]: Այդ երկրամասերն էին՝ Քարթլին, Կախեթին, Իմերեթին, Գուրիան, Սամեգրելոն (Մեգրելիան), Աբխազիան, Աջարիան, Մեսխեթը, Սվանեթին, Ռաջա-Լեչխումին և Արևելյան Կովկասիոնը (Դուշեթի, Կազբեկի, Թիանեթիի և Ախալգորիի շրջանները)[13]: Յուրաքանչյուր նահանգ բաժանվում էր երկրորդ կարգի տարածքների՝ սադրոշոների: Վերջիններս թե՛ էթնիկական, թե՛ պատմաքաղաքական հիմքի վրա առանձնացվող մարզեր էին (սադրոշո էին համարվում նաև 20 հազարից բարձր բնակչություն ունեցող քաղաքները): Օրինակ՝ Մեսխեթի նահանգը (որը ճիշտ այսօրվա Սամցխե-Ջավախք նահանգն է) բաժանվում էր 4 այդպիսի սադրոշոների՝ Սամցխեի, Ջավախքի, Թորիի (վերջինս համընկնում էր Բորժոմի շրջանին) և քաղաք Ախալցիխեի:

Նախատեսվում էր Վրաստանը բաժանել 67 այդպիսի սադրոշոների: Ընդ որում կար նաև երրորդ կարգի, ավելի փոքր տարածքային բաժանումների տիպը, դրանք գյուղական հասարակություններն էին (թեմերը), որոնց մեջ մտնում էին նաև 20 հազարից փոքր թիվ ունեցող բնակչությամբ քաղաքները: Դրանք նախատեսվում էր հասցնել 800-ի:

Ինչևէ, բավականին հետաքրքրական այս բաժանումով Վրաստանն այնուամենայնիվ չէր նախատեսվում դարձնել ֆեդերացիա, այս բոլոր 11 նահանգներին (բացի Աբխազիայից) չէր տրվում քաղաքական-տարածքային ինքնավարություն, այլ նախատեսվում էր պետության կառուցվածքը որոշել «Իտալիայի և Իսպանիայի օրինակով»[14]:

Սակայն ինչպես կտեսնենք հետո, Աբխազիայի և Օսեթիայի դեպքերը ստիպեցին անգամ բաց թողնել 1995 թ. օգոստոսի 24-ին ընդունված պետության Սահմանադրության՝ պետության տարածքային բաժանման մասին (հետևաբար և պետության

---

[12] Вестник Грузии, 13.02.1991.

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում

կառուցվածքի մասին) գլուխը: Այն չի լրացված մինչ օրս՝ Աբխազիայի և Օսեթիայի հարցերի կարգավորված չլինելու պատճառով:

Ինչպես տեսնում ենք, Զ. Դավիթաշվիլու, հետագայում նաև այս սկզբունքների վրա է. Շևարդնաձեի ստեղծած Սամցխե-Ջավախք նահանգը մոտավորապես համընկնում է մեր պատկերացրած պատմական հայկական և հայերով հոծ բնակեցված տարածքների հետ, բացառությամբ Բորժոմի շրջանի, որը վրացաբնակ է, և չպետք է մտնի ապագա ինքնավար տարածքի մեջ: Սրան գումարվում է նաև Թռեղքի (Մալկայի) հարցը, որը վերոնշյալ սկզբունքներով անպայմանորեն պետք է ներառել ինչպես նահանգի, այնպես էլ ապագայում ստեղծվելիք ինքնավար վարչամիավորի մեջ:

Հետևաբար, մեր կարծիքով՝ բացարձակապես ճիշտ չէր «Ջավախք» ժողովրդական շարժման, Ջավախքի հասարակական կազմակերպությունների կոորդինացիոն խորհրդի բազմամյա պայքարը, որն ուղղված էր ոչ թե նահանգի ինքնավարության ստանալուն, այլ Ջավախքը Ախալցխայի «լծից» դուրս բերելուն: Իսկ 1998 թ. «Ջավախք» թերթում հանկարծ հրապարակվեց Ջավախքի Ինքնավար Հանրապետության Սահմանադրությունը, որով արդեն պահանջվում էր ինքնավարություն շնորհել ամբողջ նահանգին.

Ահա այսպիսի հակասական պահանջների պայմաններում, գումարած այս ամենին նաև Վրաստանի ներքաղաքական, միջէթնիկական պատերազմական իրավիճակը և պետության կառուցվածքի մասին սահմանադրության գլխի բացակայությունը, Սամցխե-Ջավախք-Թռեղք տարածաշրջանի ինքնավարության կարգավիճակի հարցը մնում է առկախ: Ընդ որում այստեղ առկա է նաև ադրբեջանական գործոնը. Սամցխե-Ջավախք-Թռեղքին կից Բորչալուի տարածքում հոծ խմբերով ապրող մուսուլմանական ցեղախմբերը (որոնց ընդհանուր անունով կոչում են ադրբեջանցիներ) ևս կարող են հանդես գալ նման պահանջներով: Ավելացնենք նաև այն հանգամանքը, որ Ադրբեջանը քիչ

չափով չի մտահոգված այս շրջանում ապրող ադրբեջանցիների խնդրով: Դեռևս 1994 թ. այս շրջան այցելած «Մուսավաթ» կուսակցության պատվիրակության արտաքին կապերի գծով քարտուղար Մուրշուդ Մուրշուդզադեն նշել էր. «Բորչալուի բնակիչները սպասում են մեր օգնությանը: Անհրաժեշտ է հեռարձակել ադրբեջանական ռադիոյի և հեռուստատեսության ծրագրերը, այստեղ հասցնել մեր մամուլը, Մառնեուլում բացել գլխավոր հյուպատոսարան: Վրաստանի ղեկավարությունը պետք է հասկանա, որ այստեղի բնակիչները անջատողական նկրտումներ չունեն, այլ միայն մարդկային վերաբերմունք են ակնկալում»[15]:

Ավելացնենք, որ նման տիպի (Ջավախքում հյուպատոսարան բացելու) առաջարկով հայկական կողմը հանդես եկավ միայն 2002 թ. սեպտեմբերի 25-ին, երբ Սամցխե-Ջավախքում Վրաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ Թեյմուրազ Մոսիաշվիլու գլխավորած պատվիրակության ՀՀ այցի շրջանակներում ՀՀ վարչապետ Ա. Մարգարյանի կողմից առաջարկվեց համատեղ ծրագրերի կատարման ընթացքին ավելի մոտիկից հետևելու նպատակով երկրամասում բացել ՀՀ հյուպատոսարան[16]: Վրաստանը այս առաջարկի նկատմամբ ցուցաբերեց կոշտ դիրքորոշում, իսկ վրացական մամուլը այս կապակցությամբ հանդես եկավ խիստ քննադատական հոդվածներով:

Ահա այսպիսի իրադրությունների ծիրում Սամցխե-Ջավախք-Թուեղքի պատմական տարածքները, իրենց հետզհետե նվազող հայազգի հարազատ ժողովրդով, քայլում են առաջ՝ դիմագրավելու բնության, պատմության ու դարի նոր մարտահրավերներին:

---

[15] «Հայաստանի Հանրապետություն», 31 08.1994.

[16] http://www.gov.am/armversion/information_centere_8/print.php?id=601&date=1032894000

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՌԵՂՔԸ ՄԻՆՉԵՎ 1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԵՐԸ

Բարձրագահ Աբուլն ու մթին սարեր...
Հովհ. Թումանյան

Սամցխե-Ջավախքի երկրամասն անցել է պատմական բարդ և երկարատև ուղի: Այն ներկայումս կազմված է նախկին Խորհրդային Վրաստանի վեց շրջաններից: Սամցխեն (Մեսխեթ) կազմում են Ախալցխայի (մակերեսը՝ 1010,3 կմ², բնակչությունը՝ 54,8 հազ.մարդ), Ադիգենի (799,5 կմ², բնակչությունը՝ 21,3 հազ.-մարդ), Ասպինձայի (825,3 կմ², բնակչությունը 13,4 հազ.մարդ) և Բորժոմի (1189 կմ², բնակչությունը՝ 39,0 հազ.մարդ) շրջանները: Ջավախքը վարչականորեն կազմված է Ախալքալաքի (մակերեսը՝ 1,2 հազ.կմ², բնակչությունը՝ 61,1 հազ.մարդ) և Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկա, 1,4 հազ.կմ², 38,0 հազ.մարդ) շրջաններից[17]: Խնդրո առարկա երկրամասը պատմականորեն համապատասխանում է Գուգարք նահանգի հյուսիսային շրջաններին: Այսպես ներկայիս Ջավախքը (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններ) համապատասխանում է Գուգարք նահանգի Վերին Ջավախք գավառին, հաջորդ գավառի՝ Ներքին Ջավախքի տեղադրության հարցի շուրջ տարբեր պատմաբաններ երկար ժամանակ հայտնել են տարբեր, երբեմն իրարամերժ տեսակետներ (Ս. Երեմյան, Բ. Հարությունյան և այլք): Իրականությանը առավել մոտ է պատմաբան Ա. Մելքոնյանի այն տեսակետը, ըստ որի

---

[17] Новикова Г. В., Дашко В И, Самцхе-Джавахети В эпицентре интересов, Грузия Проблемы и перспективы развития РИСИ, под редакцией Е М.Кожохина, т.2, М., 2002, с.236.

պատմական Ներքին Ջավախք գավառը համապատասխանում է նախկին Խորհրդային Վրաստանի Ասպինձայի վարչական շրջանի հյուսիսային մասին[18]: Ախալցխայի և Ադիգենի վարչական շրջանները հիմնականում համապատասխանում են պատմական Սամցխե գավառին[19]:

Մեր ուսումնասիրությունից հիմնականում դուրս է մնում երկրամասի հյուսիսային շրջանը՝ Բորժոմը, եթե հաշվի չառնենք նրա կազմի մեջ մտնող հարավային մի քանի հայաբնակ գյուղերը՝ Տաբածղուրին, Մոլիթը, Ջխարոլան և այլն[20]. Նշենք, նաև, որ այս երկրամասի հարևանությամբ է գտնվում Ծալկայի հայաբնակ շրջանը (պատմական Թռեղք գավառ), որը մտնում է Վրաստանի մեկ այլ՝ Քվեմո Քարթլի նահանգի մեջ)[21]. Ըստ 2002 թ.

---

[18] Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե , 2003, էջ 37 Այս տեսակետը հեղինակի կողմից հիմնավորվում է ելնելով պատմական փաստերից և հատկապես երկրամասի բնաշխարհագրական դիրքերից:

[19] Նույն տեղում: Որոշ ուսումնասիրողներ հաճախ Սամցխե գավառը դասում են Տայք աշխարհի գավառների շարքը Տես Մելքոնյան Ա , Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար–20-րդ դարի սկիզբ), Ե , 2005, էջ 9·

[20] Այս գյուղերի մասին մանրամասն կխոսվի ավելի ուշ

[21] Ծալկա - Բարմախսըզ, Բարմակսըզ, Բարմակսիզի, Բարմաղսըզ, Բարմաքսըզ, Բարմաքսիզ, Ծաղկա. Քաղաքատիպ ավան է 09.01.1957 թ., 1936 թ դարձել է շրջկենտրոն և նախկին Բարմաքսըզը վերանվանվել է Ծալկա Տարածվում է Խրամ գետի վերին և միջին հոսանքի շրջանում: Շրջանի տարածքը 1050 քառ կմ Թբիլիսիից հեռու է 121 կմ, շրջանն ունի երեք քաղաքատիպ ավան (Ծալկա, Բեդիան, Թրիալեթ), 44 գյուղ, որից 14 հայաբնակ (Այազմա, Աշկալա, Բուռնաշեն, Դամալա-Խարաբա, Դաշբաշ, Դարագյուղ, Խաչ գյուղ, Ղաբուռ, Ղզլքիլիսա, Դարագյուղ, Նարդեվան, Չիվթքիլիսա, Չինիզ, Օզնի), մյուսները մինչև 1990-ականների սկիզբը հունաբնակ: Այստեղով անցնող Խրամ գետի մոտակայքում են գտնվում Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Թռեղք գավառի նշանավոր բերդերից մեկի Ծալկայի (Թրիալեթ, Ծալքա, Ծաղկաց բերդ) բերդի ավերակները Տես Հակոբյան Թ Խ., Մելիք-Բաշխյան Ստ.Տ , Բարսեղյան Հ.Խ , Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, Ե , 1988, էջ 829.

Վրաստանի վիճակագրական տվյալների, Ծալկայի շրջանում ապրում է շուրջ 20.888 մարդ, որից՝ վրացիներ՝ 2510, աբխազներ՝ 2, օսեր՝ 18, հայեր՝ 11484, ռուսներ՝ 125, ադրբեջանցիներ՝ 1992, հույներ՝ 4589, ուկրաինացիներ՝ 3, եզդիներ՝ 2[22]:

Սկսած 1829 թ. սեպտեմբերի 2-ից, երբ Ադրիանապոլսի պայմանագրով[23] Ախալքալաքի և Ախալցխայի գավառները դուրս եկան Օսմանյան կայսրության կազմից, երկրամասը հայտնվեց ռուսական ռազմաքաղաքական իրադարձությունների ոլորտում:

Երկրամասը 1829 թ. մինչև 1840 թ. մտավ Ախալցխայի պրովինցիայի, 1840-1846 թթ.՝ Վրացիմերեթական նահանգի, 1846-1867 թթ.՝ Նորակազմ Քութայիսի նահանգի, 1867-1874 թթ.՝ վերակազմված Թիֆլիսի նահանգի կազմի մեջ: Եվ միայն 1875 թ. սկսած, վարչական վերաձևումների նոր փուլում Ախալքալաքին պաշտոնապես տրվեց գավառի կարգավիճակ և Ախալցխայի գավառի հետ միասին մտցվեց Թիֆլիսի նահանգի մեջ: Նորաստեղծ գավառը հիմնականում համապատասխանում էր պատմական Վերին Ջավախքի տարածքին (ներկայիս Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններին), որը հնարավորություն տվեց գավառին և՛ վարչականորեն, և՛ բնաշխարհագրական իմաստով ունենալու համեմատական ինքնուրույնություն և զարգանալու նախապայմաններ[24]:

1918 թ., երբ փլուզվել էր ռուսական կայսրությունը և անկախացել էին Անդրկովկասյան երեք հանրապետությունները, խնդրո առարկա երկրամասի պատկանելության հարցը մնում էր վիճելի: Չհասնելով այս խնդրում դիվանագիտական լուծման՝ կողմերի՝ ՀՀ և ՎՀ միջև 1918 թ. դեկտեմբերի 13-ին ծագեց

---

[22] http://www.statistics.ge/_files/english/census/2002/Ethnic%20groups.pdf.

[23] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբագիր Ջ Ս Կիրակոսյան, Ե., 1972, էջ 73.

[24] Սելքոնյան Ա , նշվ աշխ , էջ 205

պատերազմ[25]: Այն ավարտվեց 2 շաբաթ անց՝ դեկտեմբերի 31-ին՝ հայկական կողմի հաղթանակով. 1919 թ. հունվարի 9-17-ը տեւած խորհրդաժողովում ընդունած որոշումները խոսում էին հայկական կողմի ձեռք բերած ռազմական հաղթանակները հօդս ցնդելու մասին: Այսպես, Լոռին (առանց Բորչալուի) հայտարարվեց «Ջեզոք գոտի», իսկ Ախալքալաքի գավառում տեղակայվեցին վրացական զորքեր[26]: Ախալքալաքի գավառը Եվրոպայի դիվանագետների ակտիվ միջամտությամբ այսպիսով մնաց Վրաստանի վերահսկողության տակ:

Հետագա 2-2,5 տարիները (մինչ խորհրդայնացումը) վերոհիշյալ գավառները (Ախալքալաք, Ախալցխա) մնացին հիմնականում նույն կարգավիճակում: Հայաստանի և Վրաստանի միջև տեղի ունեցած «անպտուղ» խորհրդաժողովները գավառների պատկանելության խնդրում ոչինչ չփոխեցին:

Նշենք ևս մեկ փաստ, որ վրացական կողմի թողտվությամբ և ակտիվ աջակցությամբ 1918 և 1921 թթ. գավառներ ներխուժեցին թուրքական հրոսակախմբերը, որոնք թալանեցին և հրո ճարակ դարձրին երկրամասը[27]: Սա գավառների էթնոժողովրդական պատկերը փոխելու առումով վրացական կողմի համար մեծ ձեռքբերում էր:

Հայաստանի պատմական գավառները հանդիսացող, հայահոծ մի քանի երկրամասեր, այդ թվում Ախալքալաքի և Ախալցխայի գավառները, որոնք պատմական իրադարձությունների բերումով Հայաստանի կազմում չէին, վիճահարույց խնդիր էին մնում նաև Անդրկովկասի խորհրդայնացումից հետո: Հայաստանը, որը խորհրդայնացվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին, գտնվում էր անելանելի իրավիճակի մեջ (կապված՝ մի կողմից թուրք-հայ-

---

[25] Վիրաբյան Վ, 1918 թ վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Ե., 2003, էջ 137

[26] Նույն տեղում:

[27] Սանոսյան Ա., Ախալքալաքի և Ախալցխայի գավառների 1918 թվականի ինքնապաշտպանությունը, Ե., 1992·

կական պատերազմի, մյուս կողմից՝ կարմիր բանակի ներխուժման հետ) և չէր կարող տնօրինել այս հարցերը:

Այս ընթացքում Ախալցխայի և Ախալքալաքի գավառները դեռ ռազմակալված էին քեմալական Թուրքիայի կողմից: Ի վերջո կնքվեց 1921 թ.մարտի 16-ի Մոսկվայի տխրահռչակ պայմանագիրը, որն առանց հայկական կողմի միջամտության որոշեց հայ-թուրքական սահմանը[28]: Այս պայմանագրով Կարսի, Արդահանի շրջանները հանձնվում էին Թուրքիային, իսկ Ախալքալաքի և Ախալցխայի գավառները մնում էին Խորհրդային Ռուսաստանի վերահսկողության տակ: Ինչևիցե, խորհրդային ուժերի ճնշմամբ 1921 թ. ապրիլին Քեմալականների զորքերը հեռացան հայաբնակ գավառներից: Գավառներում հաստատվեց վրաց-բոլշևիկյան վարչակազմ:

Շուտով խորհրդային հանրապետությունների միջև վիճելի համարվող տարածքների խնդիրները վերջնականորեն վճռելու համար Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կավբյուրոն (Կովկասյան բյուրո) ստեղծեց հանձնաժողով: Վերջինս երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո հունիսի 25-27-ը Թիֆլիսում գումարեց իր անդրանիկ նիստը՝ Ս. Կիրովի նախագահությամբ: Վրաստանը ներկայացնում էին հանձնաժողովի երկու, Ադրբեջանը՝ երեք, իսկ Հայաստանը՝ մեկ անդամ (Ալ. Բեկզադյան): Վերջինիս առաջարկը, այն է՝ Ախալքալաքի գավառը, Լոռին և Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանի (նրա կողմից այդ առթիվ բերվում էին լուրջ փաստարկներ), չի ընդունվում հանձնաժողովի կողմից: Հարցը որոշվում է տեղափոխել ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրո: Իսկ Կավբյուրոն իր հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարած նիստում (որին մասնակցում էր նաև Խորհրդային Ռուսաստանի ազգությունների ժողկոմ Ի. Ստալին), ձայների 6 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվում է Լոռու Ջեզոք գոտին միացնել

---

[28] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 499.

Հայաստանին, իսկ Ախալքալաքի և Խրամի (Ծալկա) շրջանները Հայաստանի ՍԽՀ-ին միացնելու հարցը տեղափոխել Վրաստանի կոմկուսի կենտկոմ և վերջինիս եզրակացությունը ներկայացնել Կավբյուրոյի պլենումի քննարկմանը[29]: Իսկ Վրաստանի կոմկուսի կենտկոմը հուլիսի 16-ին անընդունելի համարեց Խորհրդային Հայաստանի առաջարկը՝ Ջավախքը թողնելով Վրաստանի կազմում: Իսկ նույն Կավբյուրոյի հուլիսի 5-ի որոշմամբ որոշվել էր հայկական մեկ այլ երկրամասի՝ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը՝ հօգուտ Ադրբեջանի ...

1918-1921 թթ. ընթացքում Ջավախքի՝ Հայրենիքի հետ վերամիավորման խնդիրը մնաց չլուծված:

Խորհրդային Վրաստանի տարածքում սկսեցին կազմավորվել ներկայիս ինքնավար հանրապետությունները (այս բոլոր հարցերը որոշվում և լուծվում էին ոչ թե բնակիչների ինքնորոշման իրավունքի հիման վրա, այլ կուսակցական վերին օղակների որոշմամբ և ճնշմամբ, որի պատճառով 1990-ական թվականներին Վրաստանը հայտնվեց ազգամիջյան պատերազմների իրողության առջև): Դեռևս 1921 թ. դեկտեմբերին միութենական պայմանագիր ստորագրվեց աբխազական և վրացական կողմերի միջև (ըստ աբխազների՝ Ի. Ստալինի և Ս. Օրջոնիկիձեի ճնշման տակ)[30]: Եվ միայն տասը տարի անց՝ 1931 թ. փետրվարին, Աբխազիան դարձավ Վրացական ՍՍՀ-ի Ինքնավար Հանրապետություն[31]:

Հարկ է նշել, որ դեռևս Ռուսական կայսրության շրջանում, երբ երկրում վարչատարածքային բաժանումները իրականացվում էին ոչ թե պատմական կամ էթնիկական տեսանկյունից, այլ տնտեսական և վարչական կառավարման «պատահական հարմա-

---

[29] Մելքոնյան Ա., նշվ.աշխ., հավելված, փաստաթուղթ N 44, հմմտ ՀՀ ՀՔ.ԿՓ ԿՊԱ, հավաքածու 1, գ. 7, թ 45:

[30] Митяев В. Г., Грузино-абхазский конфликт и гражданская война в западной Грузии, /Грузия: Проблемы и перспективы. /, РИСИ, с 48

[31] Նույն տեղում

րության» հիմքի վրա, Աբխազիան 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին անվանվեց Սուխումի զինվորական օկրուգ, որը սկզբից մտավ Քութայիսի նահանգի մեջ, այնուհետև անմիջականորեն ենթարկվեց Կովկասում ռուսական գլխավոր վարչությանը, որը գտնվում էր Թիֆլիս քաղաքում: Իսկ Գագրան և իր մերձակայքը 1904-1917 թթ. ենթարկվում էին Սևծովյան նահանգի Սոչիի օկրուգին:

Վրաստանի անկախացման սկզբին Աբխազիան մտավ Լեռնականների հանրապետության մեջ, միանալով Հյուսիսային Կովկասի իրեն էթնիկական առումով ավելի մոտ ժողովուրդներին: Սակայն 1918 թ. հունիսին տեղի է ունենում նրա միացումը Վրաստանին. ըստ վրացական տեսակետի՝ կամավոր պայմանագրի հիման վրա, Աբխազիային տալով ներքին լայն ինքնավարություն, իսկ ըստ աբխազական կողմի պնդման՝ վրացական զորքերի ակտիվ միջամտությամբ և աբխազական ժողովրդական Սովետի ցրմամբ: Իսկ Անդրկովկասում սովետական իշխանության հաստատումից հետո Աբխազիան 1921 թ. մարտի 31-ին (մինչ դեկտեմբերյան վերոնշյալ պայմանագիրը) իրեն հայտարարեց անկախ սովետական սոցիալիստական հանրապետություն[32]:

Հաջորդը Վրաստանի տարածքում Հարավ-Օսական ինքնավար մարզն է: Այն կազմավորվել է 1922 թ. ապրիլի 20-ին[33]: Ինքնավար մարզի մեջ մտան չորս վարչական շրջաններ՝ Ջնաուրիի (նախկին Օկոնի, Լենինգորիի (Ախալգորիի), Ցխինվալի և Ջավիի շրջանները): 1926 թ. այստեղ հաշվվում էր շուրջ 558 գյուղ[34]: Առաջ անցնելով, նշենք, որ վրաց-օսական հարաբերություններն առաջին անգամ լրջորեն սրվեցին և առաջին արյունալի ընդհարումները տեղի ունեցան այն բանից հետո, երբ 1989 թ.

---

[32] Նույն տեղում: Հմմտ Зверев А , Этнические конфликты на Кавказе, 1988-1994, /Спорные границы на Кавказе/, М , 1996, с 41

[33] Скаков А. Ю., Южная Осетия социально-демографические проблемы, экономика, /Грузия, проблемы и перспективы. /,РИСИ, с. 167

[34] Նույն տեղում

նոյեմբերի 10-ին Հարավային Օսեթիայի Գերագույն Խորհրդի կողմից որոշում ընդունվեց Ինքնավար Մարզը հռչակել որպես Հարավային Օսեթիայի Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն՝ Վրաստանի կազմում[35]*:*

Եվ վերջապես, Վրաստանի Խորհրդային Հանրապետության տարածքում ձևավորվեց 2-րդ և վերջին ինքնավար հանրապետությունը (եթե նկատի ունենանք, որ Հարավ-Օսականն ուներ մարզի կարգավիճակ), դա Աջարականն էր: Վերջինս ունի 2,9 հազար կմ[2] *տարածք կամ ամբողջ Վրաստանի տարածքի 4,2 %-ը*[36]*: Հարկ է նշել, որ Բաթումի մարզը երկար ժամանակ գտնվել է Օսմանյան կայսրության կազմի մեջ և միայն 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում, Բեռլինի կոնգրեսում այն տրվել Ռուսաստանի կայսրությանը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ այն Խորհրդային Ռուսաստանին անցավ 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով (ինչպես նաև նույն բնույթն ունեցող 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով), երբ վերագծվեցին վերջնական սահմանները և այս մարզի փոխարեն Խորհրդային Ռուսաստանը թուրքական կողմին զիջեց հայկական մեկ այլ շրջան՝ պատմական Սուրմալու գավառը*[37]*:*

---

[35] Зверев А., Этнические конфликты на Кавказе, 1988-1994, /Спорные границы на Кавказе/, с. 48.

36 Курдов А. А , Аджарская автономная республика остров стабильности Грузии, / Грузия, проблемы и перспективы ../,РИСИ, с 199.

[37] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում. , էջ 500 Պայմանագրի 2-րդ հոդվածով Բաթում քաղաքը և իր շրջակա տարածքները Թուրքիան զիջում է ՌՍՖՍՀ-ին, իսկ դրա փոխարեն պայմանագրի հավելված 1 (A)-ում կարդում ենք « .հասնում է (սահմանը – ՎՍ) Արփաչայ գետին - այնտեղից շարունակ առաջ շարժվելով Արփաչայի հնահունով հասնում է Արաքս գետին – շարժվում է Արաքսի հնահունով մինչև այն տեղը, որտեղ Արաքսի մեջ թափվում է Ստորին Կարասուն» (նույն տեղում, էջ 505) Այսինքն, Թուրքիայի տարածքում էր մնում Սուրմալու (Իգդիր) գավառը:

Այսպիսով դեռ խորհրդային առաջին տարիներին վրացական բոլշևիկյան իշխանությունը տարածվեց Անդրկովկասի մի հատվածի վրա, որտեղ ապրում էին տարբեր լեզվով խոսող, պատմական ընթացքով և էթնիկական առումով միմյանցից խիստ տարբերվող ժողովուրդներ, որոնցից մի քանիսը, ինչպես տեսանք, ձեռք բերեցին որոշ ինքնավարություն:

Իսկ ի՞նչ էր «մտածում» այս (ինքնավար լինելու) մասին գերազանցապես հայերով բնակեցված Ջավախք երկրամասի ժողովուրդը: Պատմաբան Ա. Մելքոնյանի ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ դեռևս 1922 թ. մի խումբ հայ գործիչներ նախագիծ են ներկայացրել Ախալքալաքի գավառից և Բորչալուի հայաբնակ գյուղերից Վրաստանի ՍԽՀ կազմում մեկ հայկական ինքնավար վարչամիավոր ստեղծելու մասին: Սակայն, ինչպես երևում է ուսումնասիրությունից, վրացական կողմը (հատկապես պատմաբան Իվ. Ջավախիշվիլին) սվիններով է ընդունել այդ նախագիծը՝ այն դիտելով իբրև Վրաստանն անդամահատելու քայլ և 1923 թ. հասել է դրա մերժմանը[38]:

Իսկ 1921 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում արդեն կնքվել էր Հայաստանի և Վրաստանի միջև հայ-վրացական սահմանի մասին պայմանագիրը: Հայաստանի կողմից այն ստորագրել է ժողկոմխորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը, Վրաստանի կողմից՝ հեղկոմի նախագահ Բուդու Մդիվանին[39]: Ինչպես հանգամանորեն ցույց է տվել Ա. Մելքոնյանը, Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի սահմանների մասում ընկած էր նախկին ցարական վարչատարածքային բաժանումը, իսկ Լոռու Ջեզոք գոտում նախկին սահմանները լիովին փոփոխված էին՝ ի վնաս Հայաստանի: Հետևաբար, Լոռու Ջեզոք գոտին ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի հուլիսի 7-ի որոշմամբ ամբողջովին չի անցել Հայաստանին[40]:

---

[38] Մելքոնյան Ա., նշվ.աշխ., էջ 347.
[39] Նույն տեղում, էջ 344.
[40] Նույն տեղում, էջ 345.

Հետագայում ևս, մինչև 1930-ական թվականների կեսերը չդադարեցին վիճելի մնալ հայ-վրացական սահմանային հարցերը: Կնքվեցին դարձյալ մի շարք պայմանագրեր, որոնց արդյունքում, թեև ոչ էականորեն, փոփոխության ենթարկվեց Ալեքսանդրապոլ-Ախալքալաք սահմանը, և ամեն անգամ՝ հօգուտ վրացական կողմի:

Սամցխեի տարածքում (Ախալցխայի գավառ) ձևավորվեցին Ախալցխայի, իսկ հետագայում նաև՝ Ադիգենի վարչական շրջանները: Ջավախքի տարածքում (Ախալքալաքի գավառ) ձևավորվեցին Ախալքալաքի, իսկ հետագայում (1930-ական թվականներին) նաև Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա, վրացերենից թարգմանաբար՝ Սուրբ Նինո) վարչական շրջանները[41]: Ջավախքի հյուսիսային գյուղերից՝ Տաքածղուրին, Մոլիթը, Ջխարոլան, մտցվեցին մեկ այլ վարչական շրջանի՝ Բորժոմի մեջ[42]:

Խորհրդային Միության գոյության հետագա տարիներին Սամցխե-Ջավախքի երկրամասը ենթարկվեց վարչական նոր վերաձևումների: Ինչպես գիտենք, երկրամասի հարավային և կենտրոնական շրջաններում ապրում էին մեծ թվով թուրք-մեսխեթցիներ: 1944 թ.նոյեմբերի 15-18-ը ընկած ժամանակահատվածում ԽՍՀՄ կոմկուսի կենտկոմի գլխավոր քարտուղար Ի. Ստալինի հրամանով Սամցխե-Ջավախք երկրամասից և նույն թվականի նոյեմբերի 25-26-ը՝ Աջարիայից, Ռիզբեկական, Ղազախական և Կիրգիզական ՍՍՀ-ներ վերաբնակեցվեց 92,3 հազար մարդ (ըստ որոշ տվյալների՝ նրանցից մոտավորապես 500-ը մահացան

---

[41] Այս շրջանում մեծ թիվ էին կազմում ռուս դուխոբորները, և այս փաստը հետագայում հիմք էր ծառայում Վրաստանի կողմից Ջավախքը մեկուսացնելու Մայր Հայաստանից և միջանկյալ գոտի ստեղծելու գործում (տես Ադրբեջանի օրինակով ԼՂԻՄ-ի և Հայաստանի միջև Կարմիր Քրդստան ստեղծելու փաստը).

[42] Այս ամենն արվեց վերոնշյալ հայաբնակ գյուղերը շրջկենտրոնից (Ախալքալաքից) կտրելու և արհեստականորեն (շուրջ եռակի, քառակի անգամ) երկարացնելու և դժվարացնելու հայ բնակչության կապը շրջկենտրոնի հետ:

ճանապարհին)՝ թուրքեր, քրդեր և համշեններ (համշենահայեր): 1953 թ. հունվարին ԽՍՀՄ-ի ներքին գործերի ժողկոմի տվյալներով Միջին Ասիայում կային 86,7 հազար վրացական վտարանդիներ: Դրանցից 66,8 հազարը՝ թուրքեր, 8,8 հազար քրդեր և 14,0 հազարը համշենահայեր էին[43]: Իսկ երկրամասի (տեղաբնիկ) հայերին արգելվեց բնակվել դատարկված գյուղերում[44]: Դատարկված գյուղերի կեսից ավելին ամայացավ, իսկ մյուս մասը բնակեցվեցին Իմերեթիայից և այլ տեղերից այս շրջաններ տեղափոխված վրացիներով: Արհեստական վերաբնակեցման արդյունքում երկրամասի տարածքում ձևավորվեց ևս մեկ (հիմնականում վրացաբնակ) շրջան՝ Ասպինձան (Ասպնջակ): Այս ամենն արվեց հիմնականում հայաբնակ Ախալցխայի և Ախալքալաքի գավառների միջև մի արհեստական «վրացական սեպ» ստեղծելու նպատակով: Հռոմեական հայտնի «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքն իր փայլուն դրսևորումը գտավ այստեղ. Բավական է միայն նշել այն փաստը, որ Ասպինձայի շրջանի ամենամեծ գյուղի՝ հայաբնակ Դամալայի բնակչությունը միշտ էլ կազմել է ամբողջ շրջանի բնակչության 1/4 մասը[45]:

Հետպատերազմյան տարիներին ամբողջ Վրաստանի տարածքում ապրող հայության թիվը, ընդհանուր առմամբ, ենթարկվեց շատ քիչ փոփոխությունների, եթե չասենք, որ աճի փոխարեն, ընդհակառակը, այն ունեցավ նվազման միտում: Այսպես, մարդահամարի տվյալներով, 1959 թ. ամբողջ Վրաստանում հայության թիվը կազմում էր 442,9 հազար մարդ, 1979 թ.՝ 448,0 հազար մարդ, իսկ ահա 1989 թ.՝ 437,2 հազար մարդ[46]: Հետաքրք-

---

43 Новикова Г В , Дашко В. И., Самцхе-Джавахети В эпицентре интересов, / Грузия Проблемы и перспективы . . / РИСИ, с 246

44 Ներկայումս մեծ հիմնախնդիր է դարձել թուրք-մեսխեթցիների վերադարձի հարցը, որն իր մեջ պարունակում է մեծ թվով կոնֆլիկտային տարրեր.

45 **Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004, p. 59.**

46 Новикова Г В , Дашко В. И., Самцхе-Джавахети . .,/Грузия Проблемы и перспективы развития/, РИСИ, с 237.

բական է, որ այս նույն տարիներին ադրբեջանցիների թիվը համապատասխանաբար կազմում էր 153,6 հազար, 225,7 հազար, 307,6 հազար մարդ: Այսինքն՝ այն ավելացել էր մոտ երկու անգամ:

Հետաքրքիր փաստ է նաև այն, որ 1959 թ. Վրաստանում տեղի ունեցած մարդահամարի արդյունքներում ամփոփված հարցման արդյունքները ցույց են տվել, որ 442.916 հայերից միայն 364.381-ն են իրենց մայրենի լեզուն համարում հայերենը, մնացած 78.535 հայերից 44.184-ը իրենց մայրենի լեզուն համարել են վրացերենը, 33.342-ը՝ ռուսերենը, 1009 հայեր իրենց մայրենի լեզուն համարել են այլ լեզուներ[47]: Ինչպես տեսնում ենք, տասնյակ հազարավոր հայեր արդեն դարակեսին կորցրել էին իրենց ազգային ինքնագիտակցությունը և կանգնել ձուլման եզրին: Դրան, իհարկե, մեծապես նպաստում էր նաև Վրաստանի կողմից «ստեղծված» համապատասխան միջավայրը: (Ադրբեջանցիների շատանալու փաստն այստեղ մեծապես կապված է վրացական միջավայրում կրոնական անհամատեղելիության, հետևաբար նաև ձուլման վտանգից բացարձակապես հեռու լինելու հանգամանքի հետ):

Այս ճանապարհով 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին տասնամյակներին հազարավոր հայեր ձուլվեցին Կախեթում և Քարթլիի շրջանում[48]: Բազմաթիվ վերլուծաբանների կողմից ցույց է տրված, որ իր մեջ բազմաթիվ ենթաէթնոսներ պարունակող վրաց ժողովուրդը միշտ ավելացել է ոչ թե ի հաշիվ բնական աճի, այլ իր մեջ այլ ժողովուրդներին ձուլելու ճանապարհով[49]:

---

[47] «Ազատամարտ», թիվ 47, նոյեմբեր, 1994:

[48] Այս շրջանների էթնիկ հայության պատմական անցյալի և նրանց հետ տեղի ունեցած սպիտակ եղեռնի հանգամանորեն տես Կարապետյան Ս., Հայերը Կախեթում, Բեյրութ, 2004

[49] «Ազատամարտ», թիվ 47, նոյեմբեր, 1994.

Սամցխե-Ջավախքի (և հատկապես Ջավախքի) հայերով հոծ բնակեցված շրջաններում այս (էթնոձուլման) ճանապարհն այնքան էլ իրատեսական չէր, և վրացական շրջանակները որդեգրեցին այլ՝ մասնատման, արհեստական վերաբնակեցման քաղաքականություն: Այդ հատկապես ցայտուն դրսևորվեց Սամցխեի (Ադիգենի, Ախալցխայի շրջաններ) և Ասպինձայի պարագաներում: Այսպես, 1979 թ. Սամցխե-Ջավախքի վարչական շրջաններն ունեին հետևյալ ազգային կազմը.

1. Ադիգենի շրջան – 20.000 մարդ, որից՝
   ա) հայեր – 1213
   բ) վրացիներ – 18.007
   գ) մնացածն այլ ազգեր,
2. Ախալցխայի շրջան – 50.350 մարդ, որից՝
   ա) հայեր – 24.036
   բ) վրացիներ – 21.036
   գ) մնացածն այլ ազգեր,
3. Ախալքալաքի շրջան – 69.455 մարդ, որից՝
   ա) հայեր 63.892
   բ) վրացիներ – 2867
   գ) մնացածն այլ ազգեր,
4. Ասպինձայի շրջան – 12.411 մարդ, որից՝
   ա) հայեր – 2686
   բ) վրացիներ- 9725,
5. Բոգդանովկայի (Նինոծմինդա) շրջան – 36.632 մարդ որից՝
   ա) հայեր - 32.331
   բ) ռուսներ – 3830
   գ) վրացիներ – 370
   դ) մնացածն այլ ազգեր:

Իսկ Ծալկայի շրջանի մոտ 40.000 բնակչից 16.000-ը հույներ էին, 14.000-ը՝ հայեր, մյուսներն այլ ազգեր (այդ թվում՝

վրացիներ)[50]*: Նոր դարաշրջանին (2002 թ. տվյալներով), փաստորեն, Ծալկայի բնակչության այս թվաքանակից մնացել էր շուրջ կեսը՝ 20.888 մարդ, որից՝ հայեր 11484, հույներ՝ 4589, մնացածն այլ ազգեր (այդ թվում՝ 2510 վրացիներ)*[51] *:*

Այս շրջանում Սամցխե-Ջավախքի ժողովրդագրական պատկերի փոփոխությունն ավելի ակնհայտ դարձնելու համար նայենք ստորև բերվող 1979 թ-ից առաջ (1970 թ.) և հետո (1980 թ.) անցկացված մարդահամարի տվյալները.

ա) Սամցխե-Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1970 թ.[52]

շրջանը	հայեր	վրացիներ	ռուսներ	ընդամենը
Ադիգեն	1466 (7,2 %)	17582 (86,7 %)	676 (3,3 %)	20,272
Ախալցխա	25497 (49,1 %)	21436 (41,3 %)	2849 (5,5 %)	51,907
Ասպինձա	2421 (19,4 %)	9929 (79,5 %)	95 (0,8 %)	12,494
Ախալքալաք	63954 (91,4 %)	3926 (5 6 %)	1297 (1,9 %)	69,992
Նինոծմինդա	32399 (86,9 %)	321 (0,9 %)	4344 (11,7 %)	37,267
Ընդամենը	125737 (65,5 %)	53191 (27,7 %)	9261 (4,8 %)	191,932

բ) Սամցխե-Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1989 թ.[53]

շրջան	հայեր	վրացիներ	ռուսներ	ընդամենը
Ադիգեն	1237 (5,8 %)	19491 (91,6 %)	294 (1,4 %)	21282
Ախալցխա	23469 (42,8 %)	25648 (46,8 %)	3426 (6,2 %)	54822
Ասպինձա	2565 (19,1 %)	10753 (801 %)	45 (0,3 %)	13432

---

[50] Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Ե , 1997, էջ 26, 15, 67, 60-61, 52-53, 68-69, 84-85. Հմմտ. Սահակյան Տ , Մեծ Հայաստանի Գուգարք-Գողթնական տարածաշրջանի քաղաքական և հոգևոր-մշակութային ճակատագիրն ի սկզբանե մինչև 1980-ական թվականները, Ե., 2004, էջ 364

[51] **http://www.statistics.ge/_files/english/census/2002/Ethnic%20groups.pdf.** Բնակչության թվաքանակի այս կտրուկ անկումը պայմանավորված էր հիմնականում հույն բնակչության զանգվածային արտագաղթով:

[52] **Samtskle-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004, p. 59.**

[53] Նույն տեղում.

Ախալքալաք	63092 (91,3 %)	3005 (4,3 %)	1737 (2,5 %)	69108
Նինոծմինդա	33964 (89,6 %)	454 (1,2 %)	3161 (8,3 %)	37895
Ընդամենը	124327 (63,3 %)	59351 (30,2 %)	8663 (4,4 %)	196539

Այսպիսով, եթե վերոնշյալ թվականին (1979 թ.) Ախալցխայի շրջանն ուներ 24.036 հայ և 21.702 վրացի բնակիչ, ապա նույն շրջանը 1970 թ. ունեցել է 25.497 հայ և 21.436 վրացի բնակիչ, իսկ ահա 1989 թ. շրջանն ուներ 23.469 հայ և 25.648 վրացի բնակիչ:

Նույն օրինակը կարելի է բերել նաև Ադիգենի շրջանի պարագայում. եթե 1979 թ. շրջանն ուներ 1213 հայ և 18.007 վրացի բնակիչ, ապա 1970 թ. շրջանն ուներ 1466 հայ և 17.582 վրացի բնակիչ, իսկ ահա 1989 թ.արդեն շրջանն ուներ ժողովրդագրական այլ պատկեր. 19.491 վրացի և 1237 հայ բնակչություն: Փաստորեն Ադիգենի շրջանում 1970 թ. համամատությամբ 1989 թ. հայերի թիվը նվազել է 229-ով, իսկ վրացիների թիվը ընդհակառակը, աճել է 1909-ով: Ախալցխայի շրջանում նույնպես վերոնշյալ թվականներին հայերի թիվը նվազել է 2.028-ով, իսկ վրացիներինը, ընդհակառակը, աճել է 4.212-ով: Ասպինձայի շրջանում նույնպես գրանցվել է հայերի համեմատ վրացիների «անբնական» աճ: Այս թվականներին շրջանում վրացիների թիվն աճել է 10.102-ով, իսկ հայերինը՝ ավելացել է 144-ով (2421-ից հասնելով շուրջ 2565-ի)[54]:

Վիճակն այնքան «բարվոք» չէր այս առումով նաև Ախալքալաքի գավառում (Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում): 1989 թ. գերազանցապես հայերով բնակեցված այս շրջաններում բնակչության թիվը հասավ միայն 1914 թ. մակարդակին՝ կազմելով շուրջ 100 հազար մարդ[55]:

---

[54] Այս թվերն ավելի սարսափելի չափերի կհասնեն այս շրջաններում 1990-ական թվականներից հետո, երբ հայերի թիվը ինչ-ինչ պատճառներով կտրուկ կնվազի Այս մասին հանգամանորեն կխոսվի հետագայում.

[55] Մելքոնյան Ա., նշվ.աշխ , էջ 230:

Եվ այս թվերը միայն այն դեպքերում, երբ երկրամասի հայ բնակչությունն աչքի էր ընկնում բարձր ծնելիությամբ, իսկ դրա փոխարեն, ինչպես արդեն նշել ենք, վրացիների մոտ բնական աճը շատ դանդաղ էր ընթանում

Հարկ է նշել, որ Ախալցխայի գավառը (Ախալցխայի, Ադիգենի, Ասպինձայի շրջանները) 1914 թ. ուներ 93.441 բնակիչ, որից հայեր 25.473 (27,3 %), թուրքեր 50.756 (54,2 %), վրացիներ 7840 (8,4 %), քրդեր 1981 (2 %), ռուսներ 789 (0,8 %), այլ ազգեր՝ 6602 (7 %)[56]: Համեմատելով թվերը՝ նշենք, որ 1989 թ. 3 շրջանները միասին վերցված (Ախալցխա, Ասպինձա, Ադիգեն) ունեին 55.892 վրացի, 27.271 հայ, 3765 ռուս բնակչություն: Փաստորեն, շուրջ 75 տարիների ընթացքում այս երեք շրջաններում հայերի թիվն ավելացել է ընդամենը 1798-ով, իսկ վրացիներինը՝ 48.052-ով:

Նույն գործընթացն էր տեղի ունենում նաև ազգային փոքրամասնություններով բնակեցված (հատկապես քրիստոնյա) մյուս շրջաններում: Օրինակ՝ Հարավային Օսեթիայի բնակչությունը, ինչպես այդ մասին նշում է Ինքնավար մարզի լիդերներից Թորեզ Կոլումբեկովը, 1990-ականներին ուներ ավելի ցածր թիվ, քան 1917 թ. նախահեղափոխական շրջանում[57]: Իսկ ըստ բերված տվյալների, նույն մարզի բնակչությունը 1939 թ. կազմելով 106 հազար, 1984 թ. կրճատվել էր 8 հազարով՝ հասնելով 98 հազար մարդու[58]: Իսկ եթե 1979 թ. ինքնավար մարզում օսերը կազմում էին բնակչության 66,4 %-ը՝ շուրջ 65 հազար մարդ, ապա 1989 թ. մարզում օսերի թիվը կրճատվել էր շուրջ 2000-ով, հասնելով 63.2 հազարի[59]:

---

[56] Սահակյան Տ., նշվ աշխ., էջ 304.

[57] Зверев А., Этнические конфликты на Кавказе, 1988-1994, /Спорные границы на Кавказе/, М., 1996, с 44

[58] Նույն տեղում:

[59] Скаков А.Ю., Южная Осетия социально-демографические проблемы, экономика и политика /Грузия проблемы и перспективы /, РИСИ, с. 71.

Հայաբնակ Ջավախքի և Հայաստանի Հանրապետության միջև արգելապատնեշը խորացնելու նպատակով 1989 թ. Բոգդանովկայի[60] շրջանում փորձ կատարվեց ստեղծելու մի քանի սվանական գյուղեր, իսկ հետագայում Վրաստանի իշխանությունների կողմից դուխոբորների Սպասովկա գյուղում վերաբնակվեցին բնակլիմայական պայմաններից տուժած մեծ թվով աջարների[61]: Նույն պատրվակի տակ մեծ թափով շինարարություն ծավալվեց նաև Ախալքալաքի շրջանի Կոթելիա, Հոկամ, Գոգաշեն, Ջունչխա և այլ գյուղերում: Ջավախքում խորհրդային 70 տարիների ընթացքում այս ծավալների շինարարություն դեռ չէր իրականացվել: Այդուհանդերձ, այս ամենն անցավ անօգուտ. բնակլիմայական խիստ պայմաններին չդիմանալով Ախալքալաքի շրջանում մնացին քիչ թվով աջարներ[62]: Դրա փոխարեն, վրացական կողմի այս «միջոցառումը» «իր նպատակին ծառայեց» Ծալկայի շրջանում: Հույների տեղերը (որոնք ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեծամասամբ գաղթեցին իրենց պատմական հայրենիքը) վրացական կառավարությունը ձեռնամուխ եղավ բնակեցնելու թուրքմեսխեթցիների, սվանների, աջարների, որոնք ի սկզբանե դարձան պատճառ՝ այս շրջանում լարվածության օջախ ստեղծելու առումով:

---

[60] Բոգդանովկա գյուղը հիմնադրվել է 1841 թ Տավրիայի նահանգից արտաքսված աղանդավորների դուխոբորների կողմից, Ագրի գետի ափին Դարասկզբին այստեղ եղել է հարյուր ընտանիք, 1920-ական թվականներին նրանց հարևանությամբ ապրել են նաև հայ ընտանիքներ: Գյուղը բուռն զարգացում է ապրել այն բանից հետո, երբ 1930 թ հունվարին դարձել է վարչատերիտորիալ նոր միավորման Բոգդանովկայի շրջանի կենտրոնը: 1961 թ գյուղը վերածվել է ավանի, 1982 թ քաղաքի: Տես Բոգդանովկայի շրջան Տեղեկագիրք, կազմողներ Կարախանյան Մ, Սնխչյան Ժ, Սեդրակյան Մ, Ղազարյան Լ, Եսոյան Մ, Վարդանյան Մ, Երանոսյան Ս, Բոգդանովկա, 1992, էջ 10·

[61] Новикова Г. В, Дашко В.И., Самцхе-Джавахети в эпицентре интересов, /Грузия проблемы и перспективы . /, РИСИ, с.237.

[62] Օրինակ Բալանթա, Ջունչխա, Խավեթ և այլ գյուղերում աջարները քիչ թե շատ հաստատվեցին.

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Սամցխե-Ջավախքի երկրամասում դեռևս մինչ ԽՍՀՄ փլուզումը հայ բնակչության թիվը չի ավելացել (և ընդհակառակը ինչ-որ տեղ նվազել է ահեստական (վրացական կառավարության կողմից ստեղծված) խոչընդոտների պատճառով: Դրան հակառակ, վրացիների թիվն այստեղ կտրուկ ավելացել է (դարձյալ արհեստականորեն): Ազգային վիճակագրական աղյուսակները ցույց են տալիս, որ եթե 1970-ական թվականներին հայերի աճը հանրապետությունից դուրս մեծ չէր, ապա ՀԽՍՀ-ի տարածքում այն 2.2 անգամ բարձր էր Վրաստանում ապրող վրացիների աճից[63]: Այլազգիներին ձուլելու լավագույն միջոց էր դիտվում վրաց լեզվի տարածումը (այս գործընթացը մեծ թափ է ստացել արդեն նոր դարասկզբին): 1970 թ. մարդահամարի տվյալներով՝ հայերից 11,3 %-ը, օսերից՝ 24 %-ը և ադրբեջանցիներից՝ 6 %-ը տիրապետում էին վրացիներին, որպես երկրորդ լեզվի[64]: Այս ամենից հետո վրաց բնակչության աճի անհամեմատ դանդաղ ընթացքը վրացիների աստիճանական ծերացման արտահայտումն է: Մյուս կողմից, կամա թե ակամա սպառված կարելի է համարել ձուլման ճանապարհով վրացիների թվի ավելացման «հիմնական աղբյուրները»՝ ելնելով այն հանգամանքից, որ արդեն ավարտվել են Կախեթի և Քվեմո Քարթլիի հայության մեծ մասի ձուլման գործընթացները, իսկ մնացյալ հայությունը (Թբիլիս, Ջավախք) կամաց-կամաց ձեռք է բերում ազգային դիմադրողականության մեծ պոտենցիալ: Հաջորդը. պատերազմական ճանապարհներով անջատվեցին Աբխազիան և Հարավային Օսեթիան (Աջարիայի ինչպես նաև ադրբեջանցիների պարագան այդ իմաստով էական նշանակություն չուներ՝ ելնելով կրոնական անհամատեղելիությունից), հույների մի մասը ձուլվեց, իսկ մյուս մասը հեռացավ Հունաստան, ռուսների դերը ևս նվազեց, այս գործընթացում ելնելով վերջին տարիներին վրացիների դրսևորած ազգայնական, թշնամական վերաբերմունքից: Ի-

---

[63] «Ազատամարտ», թիվ 48, Ե., 1994:
[64] Նույն տեղում.

Տարկե, այս ամենի հետահար վտանգները Վրաստանին ուշ թե յուտ զգացնել են տալու:

Սամցխե-Ջավախքի երկրամասը խորհրդային տարիներին երկար ժամանակ գտնվել է անբավար ճանապարհատրանսպորտային, երկաթուղային, ցածր զարգացած տնտեսաարդյունաբերական իրադրության մեջ: Դրա պատճառներից մեկն էլ 1950-ական թվականների վերջերից այս շրջանում մինչև 78 կմ շերտով սահմանային գոտու ստեղծումն էր, որը երկարությամբ շոշափում էր սովետա-թուրքական սահմանը (մնացած տեղերում գոտին ուներ 27-ից մինչև 7 կմ լայնություն): Մերձսահմանային գոտում հատուկ կարգավորված վերահսկողական ռեժիմ էր, որտեղ կարելի էր գնալ միայն հատուկ հրավերների միջոցով (վիզաներով), որոնք պետք է տային այնտեղի մշտական բնակիչները: Բացի Ջավախքից, այս գոտին տարածվում էր նաև Հարևան Ասպինձայի, Ադիգենի, Ախալցխայի տարածքների վրա և այն գոյատևեց ընդհուպ մինչև «վերակառուցման» սկիզբը: Տեղացի հայերի կողմից դա ընկալվում էր որպես Հայաստանի հետ փոխհարաբերությունները սահմանափակող քաղաքականություն:

Այս առումով նշենք մի հետաքրքրական փաստ: Ծնունդով ախալքալաքցի Ս. Պողոսյանի[65] կողմից 1977 թ. գարնանը մանրամասն մշակվել և ԽՍՀՄ սահմանադրական հանձնաժողովին է ներկայացվել ԽՍՀՄ առաջիկա սահմանադրական փոփոխություններին վերաբերող մի նախագիծ, որտեղ կան մեր խնդրին առնչվող բազմաթիվ հետաքրքրական կետեր: Նախքան դրանց անցնելը նշենք, որ նախագիծը ուղարկվել է ԽՍՀՄ ամենաբարձր ատյաններին[66]. ԽՄԿԿ կոմկուսի կենտկոմին, ՀԽՍՀ ԳԱ պրեզի-

---

[65] Իր նախագծի սկզբում վերջինս տալիս է մի քանի խոսք իր կենսագրության մասին, որտեղից իմանում ենք, որ նա ծնվել է 1926 թ: Ապրելիս է եղել ք Ախալքալաքում, Կեցխովելի 12 հասցեում՝ 1945-50 թթ. ծառայել է խորհրդային բանակում, 1948 թվականից եղել է ԽՄԿԿ անդամ.

[66] Ուղարկվող բարձր ատյանների անվանը կից կա ուղարկելու և վերջիններիս կողմից նախագծի ստացման թվականները՝

դենտ Վ. Համբարձումյանին, սահմանադրական հանձնաժողովին, «Պրավդա» թերթի խմբագիր Ա.Ֆանասևին, ՌՍՖՍՀ Գերագույն խորհրդի գլխավոր քարտուղարին, Հայաստանի կոմկուսի կենտկոմ՝ Կ. Դեմիրճյանին, Մոլդովայի կոմկուսի կենտկոմ՝ Բոդյուլին, Էստոնիայի կոմկուսի կենտկոմ՝ Կեբինին, Լիտվայի կոմկուսի կենտկոմ՝ Գրիշկյավիչուսին, Մոսկվա՝ Կենտրոնական հեռուստատեսային 9-րդ ալիքին: Այս ամենը խոսում է նախագծի մանրակրկիտ մշակման և նրա լրջության մասին, ընդ որում, հնարավոր է, որ փաստաթուղթը մշակվել է ժողովրդական լայն զանգվածների, տարբեր կազմակերպությունների, բնակչության լայն շերտերի մասնակցությամբ, իսկ Ս. Պողոսյանը, հնարավոր է, հանդիսացել է պարզապես իրավաբանական անձ:

Փաստաթղթի սկզբում նշվում է սոցիալիզմի հաղթանակի, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության և եղբայրության մասին. առաջարկվում է դեկտեմբերի 30-ը դարձնել մեր ժողովուրդների բարեկամության և եղբայրության օր. խոսվում է նաև ազգային փոքրամասնությունների՝ իրենց մայրենի լեզուն օգտագործելու, ինչպես նաև պաշտոնական (ռուսերեն) լեզվով հաղորդակցվելու իրավունքի ամրապնդման մասին:

Այնուհետև գալիս են ԽՍՀՄ-ի ազգային պետական կառուցվածքի մասին կետերը, ըստ որոնց նախ առաջարկվում է ստեղծել ֆեդերացիա՝ հնարավորության դեպքում յուրաքանչյուր հանրապետությունում, քանի որ «ֆեդերատիվ կառույցները ԽՍՀՄ-ում ամբողջությամբ արդարացրել են իրենց: ԽՍՀՄ-ը պետք է լինի կազմված ոչ թե 15, այլ 16 հանրապետություններից: Այդ նպատակով պետք է միավորել Կարելական ԻԽՍՀ-ը Մուրմանսկի մարզի մեջ և տալ նոր անվանում՝ Կարելական ԽՍՀ: ... Պսկովյան մարզը միացնել Էստոնական ԽՍՀ-ին, Կալինինգրադը՝ Լիտվական ԽՍՀ-ին: Ուկրաինական ԽՍՀ-ից հանել Օդեսական և Զերնովեցյան մարզերը և տալ Մոլդովական ԽՍՀ-ին: Միացնել Հյուսիս-Օսեթական ԻԽՍՀ-ն Հարավ-Օսեթական Ինքնավար մարզի հետ, տալ նրանց նոր անվանում «Օսեթական

ԻՍՍՀ» և այն մտցնել Վրացական ՍՍՀ-ի կազմի մեջ: Հեղինակն այնուհետև գալիս է ջավախքցիներին մտահոգող կետերին այն է՝ «...Հանել Վրացական ՍՍՀ-ի կազմից Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանները, Տաքածղուրիի գյուղսովետը Բորժոմի շրջանից, Նարդևանի գյուղսովետը Ծալկայի շրջանից, Նախիջևանի ԻՍՍՀ-ը և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզերը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից և մտցնել դրանք Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ: Խնդրում եմ հավելվածում նայել իմ բերած աղյուսակները (Հեղինակն իրոք, իր նախագծի վերջում բերում է մի քանի աղյուսակներ, որտեղ ներկայացվում են ԽՍՀՄ 15 հանրապետություններն իրենց բնակչությունների թվերով և տարածքներով և հանրապետությունների՝ իր կողմից առաջարկվող նոր, փոփոխված տարածքային ու բնակչության թվերը - Վ.Ս.): Այստեղ բերված 16 հանրապետություններից ամենափոքրը դարձյալ կլինի Հայկական ԽՍՀ-ը (45 000 կմ^2): Իմ կարծիքով այս տարածքային փոփոխությունները կունենան միջազգային, քաղաքական, տնտեսական և սոցիալ կուլտուրական նշանակություն»:

4-րդ «Սահմանադրական այլ հարցերի մասին» բաժնում հեղինակը նշում է. «Մեր շրջանները՝ Ախալքալաքը, Ախալցխան, Ասպինձան, Ադիգենը և Բոգդանովկան գտնվում են սահմանային գոտում՝ թուրքական սահմանի երկայնքով: Մինչև 1952թ. այցելությունները այս շրջանները ազատ էին (նշանակում է, 1952 թվականից հետո այցելությունները անհամեմատ դժվարացել են - Վ.Ս.): Պետք է նշել, որ մեզ մոտ ոչ-ոք մշտական ապրելու չի գալիս: Ընդհակառակը, մեզ մոտից միշտ էլ եղել է արտագաղթ:

Մեր կյանքի պայմանները լեռնային են, ապրում ենք դժվար պայմաններում, շատ մթերքներ և մրգեր հիմնականում ներմուծվում են: Իմ կարծիքով, պետք է ավելի շատ վստահել վերոնշյալ շրջանների բնակիչներին և հանել սահմանային պահակազորները, վերացնել արգելքները և թույլ տալ մեզ մոտ ազատորեն այցելելու այլ սովետական քաղաքացիների, որոնք

հիմնականում գալիս են հյուր կամ շուկա (առևտրի - Վ.Ս.)»: Այնուհետև հեղինակը իր վերոշարադրյալը փորձում է հիմնավորել՝ անելով հետևյալ համեմատությունը, այն է՝ «...Բաթում և Լենինական քաղաքները նույնպես գտնվում են սահմանին (թուրքական - Վ.Ս.) մոտ, նույնիսկ ավելի մոտ, քան մեր քաղաքները, սակայն այցելությունը այնտեղ ազատ է: Անհրաժեշտ է մեզ մոտ նույնպես այն ազատ դարձնել՝ դրանով բարելավելով քաղաքացիների կյանքի պայմանները»:

Ասվածից պարզ է դառնում, որ Ջավախքի բնակչությունը պարզ հասկացել է Վրացական կառավարության քաղաքական կուրսի ողջ իմաստը և փորձել է գտնել ելքեր:

Միջանկյալ նշենք, որ Վրաստանի տարածքի ինքնավար կազմավորումներից Աբխազիայի մտավորականության և կուսակցական ղեկավար շրջանակները ևս (1956, 1967 և 1978 թթ.) բազմիցս դիմել են Կենտրոնին (Մոսկվային)՝ Աբխազիան Վրաստանից առանձնացնելու և Ռուսաստանին միավորելու խնդրանքով[67]: Կենտրոնի կողմից այս ամենին, որպես արձագանք, միշտ հետևել են մշակութային և քաղաքական շրջանակներում կադրային հաճախակի փոփոխությունները: Նույն ձգտումը նկատվել է նաև օսերի շրջանում, որոնք միշտ ձգտել են ֆեդերատիվ կարգավիճակով մտնել Վրաստանի կազմի մեջ, իսկ դրա անհնարինության դեպքում միշտ ձգտել են միանալ Հյուսիսային Օսեթիային և մտել Ռուսաստանի կազմի մեջ[68]:

Արդեն 1980-ական թվականների սկզբին, երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը, Վրաստանի կառավարությունն ընդունեց «Ջավախքի բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր»[69]: Հավանաբար, դա փորձ էր ղերծ պահելու Ջավախքն

---

[67] Зверев А., Этнические конфликты на Кавказе, 1988-1994,/ Спорные границы на Кавказе/, М., 1996, с 43

[68] Նույն տեղում, էջ 44:

[69] Տես Ախալքալաքի շրջանի «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության ծրագիրը, Ախալքալաք, 1990, էջ 6

հնարավոր ընդվզումներից՝ ընդդեմ Թբիլիսիի: Այդ ծրագրի միակ արդյունքը եղավ Աջարական լեռնային շրջանների տարեբային աղետներից տուժած բնակչությունը՝ Ախալքալաքի շրջանի զանազան տեղերում վերաբնակեցնելը: Սակայն ծանր կլիմայական պայմանները, և սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ԽՍՀՄ-ի գոյության վերջին տարիների պարտվողական կեցվածքը ձախողեցին վերոնշյալ ծրագիրը:

Խորհրդային շրջանում վրացական կառավարությունը էականորեն չզարգացրեց Ջավախքում արդյունաբերական արտադրանքը, չնայած երկրամասում առկա աշխատուժի մեծ հնարավորություններին: Դրա հետևանքով մեծ տարածում գտավ երկրամասի հայ բնակչության մեկնումը արտագնա, սեզոնային աշխատանքի՝ դեպի ԽՍՀՄ-ի այլ շրջաններ: Միակ հսկա արդյունաբերական ձեռնարկությունը, որը կառուցվեց Ախալքալաքի շրջանում՝ ճոպանուղիների սարքավորումների գործարանն էր, որը ստեղծվեց միայն այն բանի հետևանքով, երբ նրա ստեղծումը և աշխատանքային ընթացքը թելադրվեց անմիջականորեն Մոսկվայից: Այս ամենի հետ մեկտեղ, այս գործարանի արտադրանքն այնպիսին էր, որ փաստորեն այն չուներ տեղում պահանջարկ և իրացման շուկա:

1980-ական թվականների կեսերին Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում մեծ զարգացում ապրեցին քարհանման և մշակման արտադրամասերը, որոնց արտադրանքն հիմնականում իրացվում էր Ռուսաստանում: Այս գործընթացը միանգամից լուրջ դրական ազդեցություն թողեց Ջավախքի բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի վրա: Սակայն շատ չանցած Վրաստանի կառավարության կողմից կատարվեցին «համապատասխան» քայլեր՝ արհեստականորեն դժվարացնելով այդ արտադրամասերի գործունեությունը: Մասնավորապես դժվարացվեցին այդ արտադրանքի տեղափոխումները Վրաստանի տարածքով, բարձրացվեցին հարկերը և այլն: Վրաստանի առանձին շրջանակների և մտավորականների կողմից սա նույնիսկ դիտվեց որպես

«Ջավախքի հարուստ քարի հանքերի անխղճորեն ոչնչացում, որ այս ամենը վրաց հողին ու ջրին հասցրեցին մեծ էկոլոգիական (բնապահպանական) աղետ»[70]:

1990 թ. աշնանը Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցու մերձակայքում կազմակերպվեց միտինգ, որտեղ մասնակիցները զայրույթով արտահայտվեցին այն փաստի դեմ, որ արդեն շուրջ մեկ տարի է ինչ համապատասխան վերադաս մարմինները որոշում են ընդունել բազալտե երեսպատման սալիկների արտադրության մասին: «Հարևան շրջանների ոչ ֆորմալ կազմակերպություններն էլ այդ որոշման լիազորությունները վերցնելով իրենց ձեռքը, չարաշահումներ են կատարում, արգելում են քարե սալիկների առաքումը, գործի դնում կաշառքի մեխանիզմը»[71]:

Հասկանալի էր, որ ցանկության դեպքում շրջանում գործող երեսպատման սալիկների արտադրամասերում ու ցեխերում կարճ ժամանակամիջոցում կարելի էր կարգ ու կանոնի մեջ դնել արտադրությունն ու քարհանքերի շահագործման տեխնոլոգիան: Դրանով կլուծվեին երկրամասի սոցիալ-տնտեսական կարևոր հարցեր, ըստ տվյալների՝ շուրջ 5000 բանվորներ կհրաժարվեին շրջանից դուրս արտագնա աշխատանքից[72]:

Այդուամենայնիվ երկրամասում արտագնա աշխատանքը շարունակում էր իր «ընթացքը»՝ հետզհետե մեծացող չափերով[73]:

1987 թ. սեպտեմբերին շարք մտավ Մարաբդա-Ախալքալաք 160 կմ պողպատե մայրուղին: Դրա շինարարությանը (նախահաշվային գումարը 150 մլն ռուբլի) մասնակցեցին երկու հազարից

---

[70] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე), გვ 229.

[71] «Ջավախք», N 1, օգոստոս, 1990

[72] Նույն տեղում·

[73] «Ազատամարտ», 12 ապրիլի, 1991:

ավելի շինարարներ՝ Մոսկվայից, Լենինգրադից, Մինսկից, Օդեսայից, Երևանից ու Դիլիջանից[74]:

Ջավախքում 1980-ական թվականների վերջին կային 18 կոլտնտեսություններ և 24 սովխոզ տնտեսություններ՝ Ախալքալաքի շրջանում և 24 կոլտնտեսություններ և 5 սովխոզ տնտեսություններ՝ Բոգդանովկայի շրջանում: Ջավախքի կոլխոզ-սովխոզ տնտեսությունների 1985-1987 թթ. մթերատվության մեջ 30 %-ը կազմում էր բուսական մթերքը, իսկ գյուղատնտեսական արտադրանքի 70 %-ը ստացվում էր անասնապահությունից: Ընդ որում անասունների 60 %-ից ավելին կազմում էին խոշոր եղջերավոր անասունները: 1990թ. խոշոր եղջերավոր անասուններն ամբողջ Ջավախքում կազմել են 82.489 գլուխ (Ախալքալաքի շրջանում՝ 42.147, Բոգդանովկայի շրջանում՝ 40.342 գլուխ). Այստեղից միայն կովերը կազմել են 34 939 (42,3 %), որից 18.024-ը՝ Ախալքալաքի շրջանում, 16.915-ը՝ Բոգդանովկայի շրջանում[75]: Շարունակում էր զգացվել բուժսպասարկման հիմնարկների պակաս: Այսպես, Ախալքալաքի շրջանում (չհաշված քաղաքային հիվանդանոցը) կային 3 հիվանդանոցներ (Ալասան, Բարալեթ և Սուլդա գյուղերում), յուրաքանչյուրում 30 մահճակալ:

Վատթար վիճակում էին նաև ճանապարհները (դրանք առավել վատթար վիճակի են նաև այսօր): Ախալքալաքի շրջանում ներշրջանային գյուղական ճանապարհների երկարությունը 273 կմ է, այստեղից գործուն էր 256 կմ, 4.4 կմ քարուքանդ վիճակի մեջ էր (համարյա անանցանելի), իսկ ասֆալտապատ էր ընդամենը 12.6 կմ[76]:

1980-ական թվականների կեսերին ինչ-որ չափով լայն շինարարական աշխատանքներ ծավալվեցին դպրոցաշինության ո-

---

[74] Մելքոնյան Աղասի, Ջավախք իմ առասպելական, Ե , 2003, էջ 288·

[75] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე), გვ. 229-230

[76] Նույն տեղում:

լորտում: Դպրոցական շենքեր են կառուցել Վաչիան, Մաջադիա, Կուլիկամ, Զակ, Խանդո, Գոգաշեն, Կաջո, Ալաթուման, Արագվա, Սուլդա, Դիլիսկա և այլ գյուղերում[77]:

Շրջաններում ուշացած սկսում են երևալ կենցաղսպասարկման և այլ արհեստավորական տներ: Օրինակ, Բոգդանովկայի շրջանում շարք են մտնում Հիգիենայի տուն, Դիլիֆ, Գոնդուրա գյուղերում՝ ոսկերչական և փականագործական արհեստանոցներ:

Սակայն այս ամենը ևս խիստ ուշացած էր, և, ինչպես արդարացիորեն դժգոհում էին տեղի բնակիչները, այն չէր համապատասխանում ժամանակի պահանջներին: «...Բանն այն է, որ կոմբինատի աշխատանքներում դեռևս գերակշռում է հնամոլությունն ու անշարժությունը, որը ոչ միայն իր բացասական ազդեցությունն է թողնում արտադրության վերջնական արդյունքի վրա, այլև ստեղծում է բարեհոգության և հանդուրժողականության մթնոլորտ, արգելվում նորի, առաջավորի արմատավորումը»[78]:

Ահա այսպիսին էր իրադրությունը Սամցխե-Ջավախքի երկրամասի շրջաններում, երբ հասավ 1980-ական թվականների վերջը՝ իր հետ բերելով «վերակառուցում» կոչված քաղաքական կուրսի ձախողումները: Տարիներ, երբ նորովի պիտի բոցկլտային տասնամյակներով անթեղված շատ ազգային հարցեր, որոնք պիտի հիմքից սասանեին «հավերժական» թվացող Խորհրդային Միությունը: Այդ տեսանկյունից Սամցխե-Ջավախքը նույնպես գտնվում էր «զգայուն» դաշտում, որտեղ ևս տեղի պիտի ունենային լուրջ գործընթացներ: Դրա հետ մեկտեղ՝ տարբեր էին և՛ այդ գործընթացները ծնող պատճառները, և՛ դրանց ընթացքն ու ի վերջո, հետևանքները՝ ինչպես երկրամասի Հայության, այնպես էլ տարածաշրջանի ու Հայաստանի համար:

---

[77] Մելքոնյան Աղասի, Նշվ.աշխ , էջ 275-276·
[78] Նույն տեղում, էջ 295:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՋԱՎԱԽՔՈՒՄ ԽՍՀՄ ՓԼՈՒՋՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԶԲՈՒՄ

1980-ական թվականների կեսերից սկսած ԽՍՀՄ տարածքում ծայր առան ազգամիջյան հուզումներ: Աշխարհաքաղաքական փոփոխությունները տարածաշրջանում միջէթնիկական կոնֆլիկտների վերաբացման հիմք հանդիսացան: Քաղաքական վերլուծաբանների կողմից բազմաթիվ զուգահեռներ են անցկացվում 1918-1921 թվականների Կովկասում տեղի ունեցող ազգամիջյան բախումների և 1980-ական թվականներից սկիզբ առած շարժումների միջև: Երկու դեպքում էլ դրանք կապվում են Ռուսաստանի կայսերական պետության ներսում տեղի ունեցող իրադարձությունների հետ, որոնք անմիջականորեն իրենց ազդեցությունն էին թողնում նաև Կովկասի և Անդրկովկասի վրա՝ վերջիններիս Ռուսաստանի ակտիվ ազդեցության գոտում գտնվելու պատճառով: Առաջին դեպքում բախումները կապված էին Խորհրդային կայսրության փլուզման հետ, երկրորդ դեպքում՝ ԽՍՀՄ-ի ներքաղաքական լճացման և ճգնաժամի խորացման հետ, որոնք ի վերջո հանգեցրին նրա վերացմանը[79]:

Սամցխե-Ջավախքը, նույնպես 1918-1921 թթ. լինելով վիճելի տարածք և միայն կուսակցական մարմինների որոշմամբ մնալով Վրաստանի կազմում, 1980-ական թվականներին սկիզբ առած ազգային շարժումների հենց սկզբից ունեցավ ներքին զարգա-

---

[79] Зверев А., Этнические конфликты на Кавказе, 1988-1994, /Спорные границы на Кавказе/, М , 1996, cm 10

ցումների մի ողջ համալիր, որոնց արդյունքում պետք է որոշվեր երկրամասի հետագա ճակատագիրը: Ջավախքում նույն մակարդակի վրա միաժամանակ եղել են (և կան) միանգամից երեք ոլորտի առնչվող հիմնախնդիրներ, որոնք են.

ա) սոցիալ-տնտեսական

բ) քաղաքական-ռազմավարական

գ) ազգային (մշակութային)–կրոնական

Այս երեք ոլորտներն էլ սկզբից ևեթ ունեցել են (և ունեն) ռազմավարական նշանակություն ինչպես Ջավախքի, այնպես էլ հավասարապես Հայաստանի համար:

Եվ այս հիմնախնդիրների լայն գիտակցումով միայն պետք է մոտենալ Ջավախքի հարցին:

Վերլուծելով մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը՝ կարելի է եզրակացնել, որ դեռևս 1980-ական թվականների վերջերին Ջավախքում ազգային հարցը հիմնականում փորձ է արվել բարձրացնելու՝ Ադրբեջանում հայերի հանդեպ տեղի ունեցող բռնարարքներին արձագանքելու, ինչպես նաև ՀՀ-ում տեղի ունեցող շարժումներին գնահատականներ տալու միջոցով: Միաժամանակ, հաճախակի բարձրացվել են նաև սոցիալ-տնտեսական, վրացական կողմի վարած քաղաքականության առնչվող հարցեր: Այսպես, 31.07.1989 թվագրմամբ Ախալքալաքի քաղաքից և համանուն շրջանի գյուղերից բնակչությունը դիմում պահանջագիր է հղել նույն շրջանի շրջկոմի քարտուղար Մ. Ֆիդանյանին (դիմումին հետևում է շուրջ 216 ստորագրություն): Դիմումի մեջ նշվում է, «Վերջին երկու-երեք տարում Վրաստանում գործող մի քանի էքստրեմիստական խմբեր իրենց սև գործը առաջ տանելու համար, ինֆորմացիոն միջոցների, բանագնացների, պատմության կեղծարարների միջոցով ցանկանում են սեպ խրել հայ-վրաց բարեկամության հնամյա փոխհարաբերությունների միջև: Զարմանալիորեն այդ ամենը տեղ են գտնում վրացական մամուլում, հեռուստատեսությունների առանձին թողարկումներում... Ցավալին այն է, որ հանրապետության կառավարությունը լռության է

մատնել հակահայկական, հակաիրավական պրովոկացիաները Ի՞նչ, պահանջում ենք մեր ներքոհիշյալ պահանջները ներկայացնել վրացական կառավարությանը.

Ա) պատասխանատվության ենթարկել բոլոր նրանց, ովքեր գբաղվում են ու հրապարակում պատմական կեղծ փաստեր, նաև հայտարարում, թե կաթոլիկ հայերը վրացիներ են[80]

Բ) օրինականացնել և այս ուս տարում մտցնել հայ ժողովրդի պատմության ուսուցումը հայկական դպրոցներում

Գ) անհապաղ սկսել 1986 թ երկրաշարժից (տեղի ունեցած Ախալքալաքի շրջանում - Վ Ս) տուժած դպրոցների, ակումբների և այլ օբյեկտների վերակառուցումը, հատուցելով այդ առթիվ տրված կառավարության որոշման

Դ) դադարեցնել աջարացիների վերաբնակեցումն առանց այդ էլ խտաբնակ Ախալքալաքի շրջանում

Ե) ստեղծել Ախալքալաքի հիմնական բնակչության համար ապրելու և աշխատելու նպաստավոր պայմաններ. դրանով իսկ կանխել ոչ միայն արտագնա աշխատանքը, այլև՝ արտադաղթողների համար ցավալի արտագաղթը

Զ) ժամանակն է, որ մեր շրջանն անցնի ինքնաֆինանսավորման և իր կարողության սահմաններում ինքը լուծի մի շարք սոցիալ-տնտեսական, կուլտուրլուսավորչական պրոբլեմները»

Հարկ է նշել, որ Ջավախքում ապրող հայ կաթոլիկների և ոչ կաթոլիկների (առաքելականների) միջև ոչ միայն բացակայել են հակասությունները, այլև երկրամասում տակա բոլոր հարցերը

---

[80] Վրացական շրջանակների այս հայտարարությունների առթիվ տես Сообщение Грузинформа о Восстановлении исторической и гражданской справедливости", Заря Востока, Тбилиси, 07 06 1989 ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս Երեմյանի և պ գ դ պրոֆեսոր Պ Մուրադյանի կողմից նամակ է հղվել թերթի խմբագրությանը, որտեղ մանրամասն վերլուծություններից հետո վերոնշյալ պատմաբանների կողմից անընդունելի է համարվում վրացական շրջանակներում մարդկանց էթնիկ (ազգային) պատկանելությունը լեզվաբանական (ստուգաբանական) մեթոդներով որոշելը

(այդ թվում՝ հատկապես ազգայինը) բարձրացվել (և բարձրացվում) են համատեղ ջանքերով։ Այս առումով հետաքրքրական է Ախալքալաքի շրջանի Տուրցխ գյուղի (որը կաթոլիկ գյուղ է) բնակիչների դիմում-պահանջագիրը՝ ուղղված Ախալքալաքի շրջանային գործկոմի նախագահ Մ. Գոքորյանին։ Դիմումի մեջ (որին հետևում է 40 ստորագրություն) բնակիչներն իրենց դժգոհությունն են հայտնում Տուրցխ գյուղ այլազգի հոգևորական ուղարկելու կապակցությամբ. «...Օտարը երբեք էլ չի հասկանա մեծ մարդասերներ Մեսրոպ Մաշտոցին ու Գրիգոր Լուսավորչին, Նարեկացուն ու Ներսես Շնորհալուն։ Օտարը իր ազգային հատկանիշներն է պարտադրելու մեզ, որը կհակասի մեր Մայր եկեղեցու սովորույթներին։ Մեր պահանջն է, որ մեր գյուղի եկեղեցու հոգևորականը (լինելու դեպքում) լինի հայազգի (ցանկալի է կաթոլիկ), որ մեզ հետ հաղորդակցվի հայկական ոգով։ Մեզ հայաշունչ հայերեն է պետք ...»[81]։ Այս առումով հետաքրքրական է նաև նույն (Տուցխ) գյուղի բնակիչներ Գուրի Եթերի, Սիլվա Սիփանուհու և Հակոբ Ավետիսյանի կողմից 1989 թ հուլիսի 25-ի թվագրությամբ առաջարկ-նախագիծը, որն ուղարկվել էր Հայաստանյան մի թերթի խմբագրություն։ Առաջարկների մեջ մասնավորապես նշվում է « ստեղծել ներքին սփյուռքի կապերի կոմիտե՝ իր բաժիններով (գրական, պատմաճարտարապետական, լեզվաուսուցողական և այլն)։ Հրատարակել հատուկ պարբերական «Ներքին Սփյուռք» խորագրով։ Դրանով իսկ, ամրապնդել կապերը ոչ միայն Մայր Հայաստանի հետ, այլև՝ Միության տարբեր վայրերում ապրող հայության մեջև. »[82].

Այսպիսի փաստերը կարելի է դիտել սաղմեր, որոնք հետզհետե հասունանալու և շուտով հրապարակ էին գալու ազգային հարցի տեսքով

---

[81] Տես դիմումի բովանդակությունը (հայերեն լեզվով)։

[82] Տես նախագծի բովանդակությունը (հայերեն լեզվով)

Շուտով Ջավախքի բնակչությանը հասավ Ղարաբաղյան շարժման կոչը: Շարժման ալիքները տարածվեցին ողջ Ջավախքով մեկ և ալեկոծեցին յուրաքանչյուր հայի միտքն ու հոգին[83]:

Այսպիսի պայմաններում Ջավախքում ծնունդ առավ «Ջավախք» կոմիտե, Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում», «Ջավախք» ժողովրդական շարժում անուններով մի կազմակերպություն, որը հետագայում (մինչև 90-ական թվականների կեսերը) էական դերակատարություն էր ունենալու Ջավախքի ներքաղաքական կյանքում: Դեռևս 1988 թ փետրվարի վերջին, Ղարաբաղյան շարժման սկզբնավորումից մեկ շաբաթ անց, Ախալքալաքում, Հ. Մանուկյանի տանը հինգ անձանց կողմից (Ս. Պետրոսյան, Հ. Մանուկյան, Գ. Ափոյան, Մ. Թադևոսյան և Վ Մահտեսյան) կյանքի կոչվեց «Ջավախք» կոմիտեն: Այն հետագայում ընդլայնվելու էր «Ջավախք» ժողովրդական շարժման ձևով[84]: Հարկ է նշել, որ կապված ԽՍՀՄ ողջ տարածքում իրականացվող «վերակառուցման» քաղաքականության հետ, շարժման սկզբնական փուլում (մինչև 1990 թ. հունվարի 27-ի առաջին կոնֆերանսը) այն կոչվել է «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական Շարժում» ընկերություն» անունով և գործել որպես կամավոր հասարակական կազմակերպություն[85]: Կազմակերպության կանոնադրությունից ելնելով կարելի է նշել, որ այն թեև նպատակ ուներ օգնելու Ջավախքում իրականացվող «վերակառուցմանը», սակայն մեծ տեղ էր հատկացվում նաև ժողովրդի շրջանում ազգային ինքնագիտակցության բարձրաց-

---

[83] Обращение к армянам, проживающим за пределами Армении, 03 08 1988г г Степанакерт.

[84] **http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml**

[85] Տես Կանոնադրություն Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական Շարժում» ընկերության, ընդունված «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերության կողմից 01 հունիսի, 1989 թ, գրանցված Ախալքալաքի շրջխորհրդի գործկոմի առ 08 09 1989 թ N 118 որոշմամբ Հմմտ տես Устав, Ахалкалакского общества "Народное движение перестройки" (НДП).

մանն ուղղված միջոցառումների ծրագրերին: Կանոնադրության «Ընկերության նպատակներն ու խնդիրները» գլխի Ա կետում նշվում է. «Բարձրացնել շրջանի բնակչության կուլտուրական մակարդակը, մասսայականացնել մեր երկրի ժողովուրդների և համաշխարհային մշակույթների նվաճումները, առանձնապես ուշադրություն դարձնելով հայոց լեզվի և հայ մշակույթի պրոպագանդմանը, որպես մեծամասնություն կազմող ժողովրդի լեզվի և մշակույթի, միևնույն ժամանակ պրոպագանդել վրաց և ռուս լեզուները և մշակույթները»[86]: Իսկ Բ կետով նախատեսվում է «...նպաստել հայ, վրաց, ռուս և մյուս ժողովուրդների բարեկամության զարգացմանն ու ամրապնդմանը, աջակցելով հայ, վրաց և մյուս ժողովուրդների պատմությունների ուսումնասիրմանը»[87]:

Հետաքրքրական է նաև կանոնադրության Գ կետը, որում ասվում է. «Օգնել շրջանում ապրող բոլոր ժողովուրդների մշակույթի օջախների և անցյալի հուշարձանների պահպանմանն ու վերականգնմանն ընկերության միջոցների հաշվին»[88]:

Այսպիսով, կազմակերպությունը նախատեսում էր շրջանում ստեղծել ինտերնացիոնալիզմի մթնոլորտ՝ ազգայինը միշտ վեր բարձրացնելու հիմքի վրա, ինչը բավականին դրական քայլ էր՝ հաշվի առնելով, որ ԽՍՀՄ-ում տասնամյակներ շարունակ տիրում էր կեղծ ինտերնացիոնալիզմ: Այդուհանդերձ դեռ հստակորեն դրված չէ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների վիճակը (գոնե առնվազն կանոնագրում չի նշված):

Նշենք նաև, որ կազմակերպությունն իր ստեղծումից հետո ձեռնամուխ եղավ Ջավախքում իրականացվող տարբեր բնագավառների միջոցառումների համար ստեղծել համապատասխան հանձնաժողովներ: Այսպես, օրինակ, ստեղծվել էր «Վերակա-

---

[86] Նույն տեղում, էջ 4
[87] Նույն տեղում
[88] Նույն տեղում:

ուցման ժողովրդական շարժում» ընկերության ազգամիջյան հարաբերությունների գծով հանձնաժողովը (նախագահ՝ Գ. Սմոյան, տեղակալ՝ Դ. Բագրատունի, քարտուղար՝ Ս. Մոքոյան)[89], որն ուներ իր ամսական պլան ծրագիրը: Վերջինս ունի բազմաթիվ հետաքրքրական կետեր, որոնցից 13-րդում ասվում է. «Պահանջել շրջանի ղեկավարությունից, ինչպես նաև Վրաստանի և Հայաստանի համապատասխան մինիստրություններից ու գերատեսչություններից, որ մեր շրջանի պատմական ուսումնասիրությունները բոլոր տեղանքներում, մշակույթի օբյեկտներում, կատարվեն երկու եղբայր ժողովուրդների՝ հայերի և վրացիների ներկայացուցիչների մասնակցությամբ»[90]: 14-րդում նախատեսվում է «Հակահարված տալ «Մոամբե» (վրացական լրատվական ծրագիր - Վ. Ս.) հաղորդումների ապակողմնորոշող ընկերներին: Ճշմարտությունը շատ դառն է, բայց դա մենք պիտի ասենք մեր եղբայրներին»[91]: Հետաքրքրական են նաև 15, 16 և 17-րդ կետերը, որոնցով նախատեսվում էր «Հրավիրել պատմաբանների, գիտնականների դասախոսական խմբեր, պրոպագանդել եղբայրություն, բարեկամություն: Ուսումնասիրել գավառագիտական թանգարանը (գտնվում է Ախալքալաքում - Վ.Ս.), նրա ազգային կոլորիտը: Կլոր սեղանի շուրջ զրույցներ կազմակերպել Հայաստանի և Վրաստանի գիտնականների կողմից[92]:

Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական Շարժում» ընկերության մյուս հանձնաժողովներից էր «Գթասրտություն» խումբը (Օ. Օքրոյանի նախագահությամբ), որը նպատակ ուներ շրջանում անցկացնել տարբեր տիպի բարեգործական միջոցառումներ[93]:

---

[89] Տես Հանձնաժողովի կազմը և նրա պլան-ծրագիրը, 1989 թ.սեպտեմբեր
[90] Նույն տեղում.
[91] Նույն տեղում
[92] Նույն տեղում:
[93] Տես Հանձնաժողովի կազմը և նպատակային ընդհանուր դրույթները:

ԽՍՀՄ-ում այս ընթացքում տիրող լարված իրավիճակում էլ ավելի սուր բնույթ էին ստանում երկրում առկա ազգային հարցերը: Ջավախքում առկա վերոնշյալ կազմակերպությունը 1990թ. արդեն միտում ուներ ստանալու համընդհանուր բնույթ: 1990թ. հունվարի 27-ին տեղի ունեցավ Շարժման I կոնֆերանսը[94]: Կոնֆերանսին մասնակցելու համար ընտրվել էին ամբողջ շրջանից 532 պատգամավորներ, որոնք ընտրվեցին «Ջավախք ժողովրդական Շարժման» խորհուրդ՝ բաղկացած 55 ակտիվիստներից[95]: Կոնֆերանսին մասնակցել են նաև Հայաստանի ԼԿԵՄ կենտկոմի օրգան «Գարուն» ամսագրի խմբագիր Մերուժան Տերգուլանյանը, Հայոց համազգային շարժման պատվիրակներ Ս. Ավագյանը, Ս. Ղարագեբակյանը, Լ. Անանիկյանը, Ախալցխեի «Շառլ Ազնավուր» մշակութային ընկերության պատվիրակներ Ռ. Մուրադյանը և Լ. Մաթևոսյանը, Մառնեուլիի շրջանի պատվիրակ Գ. Մուրադյանը, Ասպինձայի շրջանի Դամալա գյուղից Կ. Հովհաննիսյանը և Մ. Տոնականյանը: Կոնֆերանսը նախագահում է Ջավախքի ճանաչված պետական-հասարակական գործիչ, մտավորական Ի. Աբրահամյանը[96]:

Կոնֆերանսի օրակարգը հետևյալն էր.

1. Խորհրդի զեկուցումը կազմակերպության կատարած աշխատանքի մասին և հետագա գործունեության նպատակները:

2 .«Վերակառուցման Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության ծրագրի հաստատումը.

---

[94]http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml

[95] Նույն տեղում. Հմմտ տես Գ Սմոնյան, Ջավախք Ովքեր ենք մենք, Ե, 2000, էջ 42·

[96] Տես Արծանագրություն Ախալքալաքի շրջանի «Վերակառուցման Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության I կոնֆերանսի, էջ 1, 27 հունվարի, 1990 թ. Ի Աբրահամյանը, որն այս կոնֆերանսում ընտրվել էր կազմակերպության նախագահ մեծ դերակատարում ուներ կազմակերպության ինչպես ստեղծման, այնպես էլ նրա հետագա ընթացքի մեջ:

3. Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին.

4. Ընտրություններ՝ կազմակերպության խորհրդի և վերատուգիչ հանձնաժողովի[97]:

Կոնֆերանսում, մասնակիցների առաջարկների հիման վրա, փոխվում է նաև կազմակերպության անվանումը: Այսուհետև կազմակերպությունը «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն» անվան փոխարեն կկոչվի «Ջավախք» ժողովրդական շարժում[98]: Հետաքրքրական է, որ հետագայում, բոլոր գրությունների մեջ հեղինակներն օգտագործում են այս՝ «Ջավախք» ժողովրդական շարժում անվանումը, նույնիսկ այն դեպքում, երբ խոսքը գնում է կոնֆերանսից առաջ ընկած «Վերակառուցման ժողովրդական շարժում» կազմակերպության մասին:

Կոնֆերանսում ընդունվեց նոր՝ լրամշակված և փոփոխված ծրագիր[99]: Ծրագրում արդեն բացահայտ նշվում է Արցախյան շարժման օրինակով Ջավախքի բնակչության շրջանում ազգային խնդիրների նոր ըմբռնմանն ուղղված նպատակային դրույթների մասին: «Մեր շարժումն աստիճանաբար ավելի միասնական է դառնում, հոգեպես, բարոյապես և գաղափարապես հասունանում և ամրապնդվում է պայքարում, որի հիմնական նպատակն է Ախալքալաքի սարահարթում ընդմիշտ պահել ու պահպանել ազգային գիրն ու լեզուն, երաժշտությունն ու արվեստը, գրականությունն ու կենցաղային սովորույթները, նպաստել շրջանի տնտեսական, սոցիալական, մշակութային ու կենցաղային զարգացմանը»[100]: Շարժման գաղափարական հիմքն էր «նպաստել Հայոց

---

[97] Նույն տեղում, էջ 2

[98] Նույն տեղում, էջ 5.

[99] Տես Ախալքալաքի շրջանի «Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության ծրագիր, ընդունված է «Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության հիմնադիր ժողովի կողմից 1989 թ. հունիսի 1-ին, փոփոխության է ենթարկվել I կոնֆերանսում 1990 թ. հունվարի 27-ին·

[100] Նույն տեղում, էջ 3·

համազգային շարժմանը, խոսքի, մամուլի, խղճի իրական ազատությանը, հայոց լեզվի զարգացմանն ու ամրապնդմանը: Մեր ժողովրդի գոյատևման ու հոգևոր զարգացման երաշխիքը եղել և մնում է հայոց լեզուն: Առանց մայրենի լեզվի հայ ազգը դատապարտված է»[101]: Այսինքն, շարժումն ի սկզբանե իր առջև դրել էր խնդիր՝ Ջավախքում հնարավորություն տալ շրջանների հայությանը պահել իր հայեցի դիմագիծը և լուծել սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ: «Մեր շարժումն ուղղված չէ որևէ ժողովրդի դեմ: Մեր շարժման սկզբունքն է՝ համերաշխ ապրել բոլոր ժողովուրդների, ամենից առաջ մեր եղբայր վրաց ժողովրդի հետ: Իսկ այդ համերաշխությունն ու խաղաղությունը պետք է հիմնված լինեն արդարության վրա, երբ չեն ոտնահարվում որևէ ժողովրդի իրավունքները»[102]: Միաժամանակ, շարժման ծրագրային դրույթների առանձին կետեր չէին բացառում ինքնորոշման ճանապարհով արդյունքի հասնելու հնարավորությունը. «Մեր կազմակերպությունը համերաշխ է բոլոր այն շարժումների հետ, որոնք հիմնված են սոցիալական արդարության, ինքնորոշման սկզբունքների վրա: Մենք մերժում ենք ազգային խտրականության և ազգայնամոլության բոլոր դրսևորումները»[103]:

Ինչպես տեսնում ենք, Ջավախքահայության, ինչպես նաև «Ջավախք» ժողովրդական շարժման կողմից արված հետագայի հայտարարությունները՝ Ջավախքին վարչաքաղաքական ինքնավարություն շնորհելու վերաբերյալ, միայն հետևանք էին Վրաստանի կողմից վարվող քաղաքականության:

Առաջին կոնֆերանսում ընդունվեցին մի շարք կարևոր բանաձևումներ, որոնցում մանրամասն վերլուծության են ենթարկված այդ ժամանակահատվածում Ջավախքի առջև ծառացած հիմնական հիմնախնդիրները, ցույց են տրված դրանց լուծման ուղիները: Դրանցում հատկապես մեծ տեղ են հատկացված Ջա-

---

[101] Նույն տեղում, էջ 4.
[102] Նույն տեղում:
[103] Նույն տեղում:

վախքի կրթամշակութային ոլորտներին վերաբերող հարցերին: Այսպես՝ «...մատաղ սերնդի հայեցի դաստիրակության գործում վճռորոշ են հանրակրթական դպրոցները: Այս ասպարեզում որոշակի խոչընդոտներ են ստեղծվել Ախալքալաքում: Գործող ռուսական երկու դպրոցներում աշակերտների մոտ 90 %-ը հայեր են: Հետևապես հարկավոր է շրջկենտրոնում ունենալ մեկ ռուսական դպրոց՝ ռուսախոս երեխաների համար:

Հարկավոր է լուրջ կարևորություն տալ հայկական դպրոցներում վրացերենի ուսուցմանը, որը մեծապես կնպաստի եղբայրական վրաց ժողովրդի լեզուն սովորելու համար:

Կազմակեպությունը համազգային կարևորագույն հարց է համարում ազգային դպրոցներում հարազատ ժողովրդի պատմությունը սովորելը: Այս առումով անբավարար համարել պայքարը, որը ծավալվել էր շրջանում և հայկական դպրոցների ուսումնական պլանում հայ ժողովրդի պատմության դասընթաց մտցնելու և համապատասխան ուսումնական ձեռնարկներ հայթայթելու համար: Այդ պայքարը հարկավոր է շարունակել ու հասցնել ցանկալի արդյունքի»[104]: Քննարկվել և բանաձևվել էր նաև Ջավախքի տեղեկատվական (ինֆորմացիոն) դաշտի կարգավորման հարցերը, որոնցում կարևորվում էր ոչ միայն Վրաստանի, այլ նաև Հայաստանի հեռուստահաղորդումների դերը: «...Շրջանի Կարզախ, Մաջադիա, Մերենիա, Գոման, Բալխո, Օլավիրդի և այլ գյուղերում հեռուստահաղորդումները ընդունվում են լուրջ թերություններով: Ոիստի մեծ կարևորություն տալով այս գործին, կոնկրետ միջոցներ ձեռնարկել և կարճ ժամանակահատվածում ձեռք բերել վերահաղորդիչներ՝ հիշատակված գյուղերում հեռուստահաղորդումները հստակ ընդունելու հա-

---

[104] Տես Բանաձև «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության կոնֆերանսի (պահպանվել են նաև արդեն շրջանառությունից դուրս եկած Ախալքալաքի շրջանի «Վերակառուցման Ջավախք ժողովրդական շարժման» բանաձևումները, որոնք պարզապես կրկնում են միմյանց):

մար»[105]: Մյուս կողմից՝ «հաշվի առնելով այն, որ 1989 թ. դեկտեմբերին Վրաստանի Կոմկուսի Ախալքալաքի շրջկոմի բյուրոյում որոշում է ընդունվել Ախալքալաք-Երևան նոր հեռախոսագծի մասին՝ օգտագործելով հեռուստատեսային ռադիո-ռելեային հաղորդագիծը: Ոստի խնդրել Հայաստանի հեռագրական գործակալությանը՝ համաձայնության գալով ինչպես Հայաստանի, այնպես Վրաստանի կուսակցական-սովետական համապատասխան վերադաս օրգանների հետ Ախալքալաքի շրջանում ստեղծել «Արմենպրեսի» թղթակցական կետ, որը լուսաբանի մեր ռեգիոնի հայ և վրաց ժողովուրդների եղբայրական համագործակցությունը՝ վերակառուցման սրբազան պահանջները կենսագործելու համար ծավալված պայքարը:

Կարևոր համարել նաև Ախալքալաքում ստեղծել «Ջավախք» կազմակերպության գրավոր օրգան՝ «Ջավախք» ամսաթերթ»[106]:

Այսպիսով բարձրացնելով այս և մի շարք այլ կարևոր հարցեր և ձեռնամուխ լինելով դրանց լուծմանը, միանշանակ կարելի է նշել, որ լուրջ դրական տեղաշարժեր կգրանցվեին Ջավախքի կյանքում: Սակայն վրա հասած ԽՍՀՄ փլուզումը, Վրաստանում և Արցախում ընթացող պատերազմները հօդս ցնդեցրին այս և մի շարք այլ հարցերի շուտափույթ լուծման հույսերը, այս ամենին գումարվեց Վրաստանի վարած նոր քաղաքական կուրսը, որին ասպարեզ էր իջեցնելու Զ. Գամսախուրդիան: Իսկ մինչ այդ ամենին անցնելը՝ մի քանի խոսք Շարժման այս ժամանակահատվածի գործունեության մասին: Այս պարագայում մեր ձեռքի տակ ունենք «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի նիստերի արձանագրությունները, որոնք լայն տեղեկություններ են հաղորդում Շարժման անցկացրած միջոցառումների մասին:

Դեռ 1990 թ. մարտի սկզբին Շարժման նախագահությունը ձեռնամուխ եղավ ստեղծելու Շարժմանն անընթեր տարբեր

---

[105] Նույն տեղում
[106] Նույն տեղում

հանձնաժողովներ: Գործունեության ոլորտները բաժանվեցին հիմնականում երեք մասի: Դրանցից՝ առաջինը մշակույթին, ժողովրդական կրթության, պատմական հուշարձանների պահպանման, ֆիզկուլտուրայի և սպորտի հանձնաժողովն էր (նախագահ ընտրվեց Ե. Շիրինյանը):

Երկրորդը՝ սոցիալ-տնտեսական հարցերի և բնության պահպանման հանձնաժողովն էր (որի նախագահ ընտրվեց Օ. Օքրոյանը).

Երրորդը՝ բարեգործության, գթասրտության և մարդու իրավունքների պաշտպանման հանձնաժողովն էր (որի նախագահ ընտրվեց Մ. Թադևոսյանը)[107]:

Շարժման ծրագրերի մեջ էր մտնում նաև եկեղեցիների շենքերի ազատումը (որոնք խորհրդային տարիներին մեծամասամբ վեր էին ածվել կոլտնտեսությունների պահեստների) և նրանց շրջապատի բարեկարգումն ու վերանորոգումը[108]:

Այս հիմնախնդրի մասին ճշմարտացի էր արտահայտվել ՀԺՇ-ն նախագահ Ի. Աբրահամյանը՝ ՀԺՇ-ի առաջին կոնֆերանսում ունեցած իր ելույթում. «Ոչ քիչ նշանակություն ունի նաև մեր սարահարթում (Ջավախքում-Վ.Ս.) բնակվող ազգերի պատմական հուշարձանների պահպանումը, ուսումնասիրումն ու վերականգնումը, որոնք ցայսօր գրեթե չեն ուսումնասիրված: Մեզ թվում է, որ շրջգործկոմի պահանջով պատմական հուշարձանների ուսումնասիրությունը պետք է կատարվի Վրաստանի և Հայաստանի հուշարձանների պետական կոմիտեների մակարդակով»[109]:

---

[107] Տես Արձանագրություն N 1, «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության նախագահության նիստի, 05.մարտի 1990 թ.

[108] Տես Արձանագրություն «Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության սկզբնական բջիջների նախագահների խորհրդակցության, 22 մարտի, 1990 թ., ք.Ախալքալաք·

[109] Տես Ի Աբրահամյանի «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության հիմնադիր կոնֆերանսի տրված զեկուցումը, 27.01.1990 թ., ք Ախալքալաք· Մեր կողմից ավելացնենք, որ հասարակական գործչի

Շարժման 1990 թ. աշխատանքային պլանի մեջ ներառված էին բուժսպասարկման, իրավական, կրթամշակութային, ուսումնական, սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներին առնչվող բազմապիսի ծրագրեր[110], որոնք իրականացվելու էին հստակ ժամանակացույցով: Միաժամանակ կազմակերպությունը սերտ կապ էր պահպանում Հայոց համազգային շարժման հետ, որի կողմից «Ջավախք»-ին տրամադրում էր ոչ մեծ չափի և քանակի օգնություն (պահպանվել է դեղորայքի և միանվագ ներարկիչների մասին տեղեկություն)[111]:

1990 թ. մայիսի 19-ի հերթական նիստով «Ջավախք» ժողովրդական շարժում» կազմակերպության նախագահությունը որոշում կայացրեց «հիմնել «Ջավախք» կազմակերպության տպագիր օրգան և այն անվանակոչել «Ջավախք» (թերթի խմբագիր հաստատվեց խորհրդի անդամ Մ.Խ. Խաչատրյանը)[112]:

Շարժման մշակույթի պահպանման, ֆիզկուլտուրայի և սպորտի հանձնաժողովը ևս ուներ բավականին հետաքրքրական ծրագրեր: Նախատեսվում էր մասնավորապես «կազմակերպության անունից մշտապես հանդես գալ հանրապետության ու խորհրդային մարմինների առաջ՝ Կարտիկամի ու Մերենիայի միջնակարգ դպրոցների շինարարությունն ավարտելու, Բարալեթի, Ազավրեթի, Դիլիսկայի, Օրջայի, Սուլդայի, Տուրցխի, Գոմանի, Կորխի դպրոցական շենքերի կառուցման և Օրջայի մշակույ-

---

այս ցանկությունն ի կատար ածվեց 2006 թ, երբ «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հասարակական կազմակերպության (**RAA**)» ն կողմից Երևանում լույս ընծայվեց «Ջավախք» հանրագիտարանային բնույթի մի ստվարածավալ աշխատություն, ուր ներկայացված է Ջավախքի բնակավայրերի և պատմական հուշարձանների ամբողջական պատմությունը: Տես Կարապետյան Ս, Ջավախք, Ե, 2006

[110] Տես «Ջավախք» ժողովրդական շարժում հասարակական կազմակերպության 1990թ- աշխատանքային պլանը:

[111] Տես Արձանագրություն N 2, 18.06.1990 , ք. Ախալքալաք

[112] Տես Արձանագրության N 3, 19 05 1990, ք Ախալքալաք

թի տան կառուցումն ավարտելու և մյուս բոլոր գյուղերում մշակույթի տներ կառուցելու:

Շրջանի կուսակցական ու խորհրդային մարմինների միջոցով հասնել այն բանին, որ հայկական դպրոցների համար ընդունված ուսումնական պլանում Վր. ԽՍՀ ժողկրթմինիստրությունը նախատեսի հայ ժողովրդի պատմության համար դասագրքեր, և ոչ թե Վրաստանի ժողկրթմինիստրության դասագրքերով:

Կապվել Հայաստանի ժողկրթության համապատասխան մարմինների հետ շրջանի հայկական դպրոցները հայ ժողովրդի պատմության ու այլ օժանդակ գրականությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև հրավիրել գեղարվեստական ինքնագործունեության խմբեր ու համույթներ, գիտնականներ ու գործիչներ հասարակության առաջ ելույթ ունենալու նպատակով:

Շրջանի մշակույթի տանը (մարտի 23-ին) անցկացնել զորավար Անդրանիկի ծննդյան 125 ամյակին նվիրված երեկո: Ախալքալաքի եկեղեցու հրապարակում անցկացնել սգո միտինգ՝ նվիրված հայ ժողովրդի Մեծ Եղեռնի 75 ամյակին, բարեկարգել եկեղեցու բակը, պատվանդանին դնել հայկական խաչքարը»[113]:

Եվ վերջապես, Շարժման ոչ պակաս կարևոր, օրվա խնդիր հանդիսացող հարցերից մեկն էլ Արցախին օգնելու (ինչպես նյութապես, այնպես էլ ֆիզիկապես) հարցն էր[114], որն էլ դրվեց 1990թ. հունիսի 10-ի խորհրդի նիստի օրակարգում: Նիստով «որոշվեց դրամական օգնություն ցույց տալ Արցախին: Հանձնարարել Մ. Թադևոսյանին դուրս գրել Պետբանկից 55 հազար ռուբլի և հանձնել «Ամարաս» բարեգործական միությանը և ներկայացնել համապատասխան փաստաթղթեր»[115]: Միաժամա-

---

[113] Տես Աշխատանքային պլան, 1990թ, Ախալքալաքի «Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության մշակույթի պահպանման, ֆիզկուլտուրայի և սպորտի հանձնաժողովի:

[114] Ջավախքի Արցախին բերած օգնության մասին մանրամասն կխոսվի մեր աշխատանքի հետագա մասերում

[115] Արձանագրություն, «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի նիստի, N 5, 10.04 1990 թ-, ք Ախալքալաք:

նակ, «...ի նկատի ունենալով, որ այժմ մեր կազմակերպությունը հանգանակության կարգով բավական մեծ գումար ունի, այդ գումարից 5 հազար ռուբլի առձեռն հանձնել «Ամարաս» բարեգործական միությանը, քանի որ փոխանցման կարգով կարող է այդ գումարը Ադրբեջանում բռնագրավվի»[116]:

Ելնելով ՋԺՇ նախագահության շուրջ մեկամյա հաշվետվությունից, կարելի է ասել, որ նախատեսված այս համալիր ծրագրերի մեծ մասը դրվել էր ընթացքի մեջ և կային շոշափելի արդյունքներ: Բացի այդ այս բոլորը հիմք էին հանդիսանալու ՋԺՇ-ի գործունեությունն էլ ավելի ընդգրկուն դարձնելու և ժողովրդական լայն մասսաների մեջ տարածելու համար[117]:

Հարկ է նշել, որ այս ժամանակահատվածում «Ջավախք» ժողովրդական շարժումն իր սկզբնական կազմակերպություններն էր ստեղծել նաև Ջավախքի գյուղական շրջաններում: Կազմակերպության գյուղերում տեղի ունեցած ժողովներում քննարկվել են բազմապիսի գյուղական հարցեր և քայլեր են ձեռք առնվել՝ դրանց լուծման նպատակով[118]:

Այս ընթացքում, Սումգայիթի և Բաքվի ջարդերը որակելով որպես ցեղասպանություն, «Ջավախք» ժողովրդական շարժման կողմից դիմում հղվեց ԽՍՀՄ բոլոր ժողովուրդներին և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ պահանջելով խստիվ դատապարտել այն և տալ դրան քաղաքական գնահատական[119]:

---

[116] Նույն տեղում

[117] Տես «Ջավախք» ժողովրդական շարժման նախագահության (նախագահ Ի Աբրահամյանի) հաշվետվությունը ՋԺՇ խորհրդի նիստին, 13.10 1990 թ , ք Ախալքալաք

[118] Տես Արձանագրություններ N 1, N 2 և այլն, «Ջավախք» ժողովրդական շարժման սկզբնական կազմակերպության, 02 04.1990թ-, 10 06 1990 թ ,Գյուղ Խանդո. Հմմտ- Տուրցխ գյուղի կոմիտեի (նախագահ Հ Ավետիսյան), Բերակչյան Լ Ա , Լոմատուրցխ գյուղի պատմա-աշխարհագրական ակնարկը, Ե , 1999, էջ 50·

[119] Обращение, делегатов конференции организации "Народное Движение Джавахк" ко всем народам СССР и Верховнову Совету СССР.

«Ջավախք» ժողովրդական շարժման ստեղծումից և առաջին կոնֆերանսից (1990 թ. հունվարի 27) շուրջ կես տարի անց՝ 1990 թ. հուլիսին Ջավախքում (ք. Ախալքալաքում) ստեղծվեց Վրաստանում գործող հայկական հասարակական ու բարեգործական միությունների ու կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդ, որի մեջ մտան Ախալքալաքի «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպությունը, Թբիլիսիի հայկական մշակութային, բարեգործական ընկերությունը, Ախալցխայի «Շառլ Ազնավուր» բարեգործական ընկերությունը, Բոգդանովկայի «Փարվանա» կազմակերպությունը, Աբխազիայի «Համշեն» մշակութային միավորումը, Մառնեուլի շրջանի հայկական բարեգործական միությունը, Ասպինձայի շրջանի Դամալա գյուղի «Շառլ Ազնավուր» ընկերության մասնաճյուղը, Բաթումի, Ծալկայի և Բոլնիսի շրջանների հայկական կազմակերպությունները[120]: Նոր ստեղծված կառույցը որոշում ունեցավ ակտիվորեն համագործակցել Հայաստանի վիրահայ հայրենակցական բարեգործական միությունների (ՀՎՀԲՄ) հետ (վերջիններիս ներկայացուցիչները նույնպես մասնակցում էին նորաստեղծ կազմակերպության հիմնադիր ժողովին)[121]:

Նորաստեղծ կազմակերպության նպատակն էր.

- սատար կանգնել հայ-վրացական դարավոր բարեկամության անսասանությանն ու հետագա զարգացմանը
- կարելվույն չափ նպաստել վրաց ժողովրդի ազգային ազատագրական շարժումներին
- պաշտպանել հայ ազգաբնակչության ազգային ու էթնիկական շահերը, նրա համար ապահովել վրացիների ու վրաստա-

---

[120] Տես Արձանագրություն Վրաստանի հայկական հասարակական և բարեգործական միությունների, կազմակերպությունների ներկայացուցիչների ժողովի, 28 հուլիսի, 1990 թ , ք Ախալքալաք

[121] Տես Որոշում Վրաստանի հայկական հասարակական ու բարեգործական միությունների ու կազմակերպությունների և Հայաստանի վիրահայ հայրենակցական բարեգործական միությունների ներկայացուցիչների ժողովի, 28 հուլիսի, 1990 թ , ք Ախալքալաք:

նաբնակ այլ ժողովուրդների հետ իրավահավասար պայմաններ Վրաստանի ամբողջ տարածքում

- հասնել Վրաստանում գործող հայ դպրոցը, հայ ազգաբնակչության հոգևոր մշակութային կյանքը ինքնուրույնաբար տնօրինելու սահմանադրական իրավունքի

- լուրջ ուշադրություն դարձնել հայաշատ շրջաններում սոցիալ-տնտեսական դժվարությունների հաղթահարմանը, աջակցել որպեսզի նրանցում տնտեսական կյանքը կազմակերպվի լրիվ տնտհաշվարկի, ազատ ձեռներեցության խթանման ու շուկայական ազատ հարաբերությունների հիման վրա

- վրացական հասարակական-քաղաքական և մյուս շահագրգիռ կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցությամբ կանխել հնարավոր լարվածությունները Վրաստանի հայաշատ շրջաններում

- մշակել միջոցառումներ Հայաստանի ու Վրաստանի քաղաքական-տնտեսական, մշակութային առնչությունները ընդլայնելու համար[122]:

Նույն օրը (1990 թ. հուլիսի 28-ին) Վրաստանի հայկական-հասարակական ու բարեգործական միությունների և կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ցույց էին տրվում վիրահայության վերոնշյալ հիմնախնդիրների լուծման ճանապարհները[123]: Դրանցից էին. «...իրենց (վիրահայերի-Վ.Ս.) ազգային ու էթնիկական առանձնահատկությունների հարգումը վրաց ժողովրդի կողմից և միասնական համայնքային կյանքի համար բնականոն պայմանների ապահովումը գերազանցապես հայ բնակչությամբ Ջավախքում և հայաշատ մյուս շրջաններում»[124]:

---

[122] Տես նույն տեղում:

[123] Տես Հայտարարություն Վրաստանի հայկական-հասարակական ու բարեգործական միությունների կոորդինացիոն խորհրդի, 28 հուլիս, 1990 թ. ք Ախալքալաք:

[124] Տես նույն տեղում:

Այս ամենով հանդերձ, բավականին իրատեսական և գործունեության լայն դաշտ ունեցող այս կառույցը տարբեր պատճառներով չկարողացավ հասնել լուրջ հաջողությունների:

Ջավախքի հայ բնակչության շրջանում ազգային ինքնագիտակցության բարձրացման դրսևորում կարելի է համարել ՎԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Է. Ձերժինսկուն ուղղված դիմումը, որում խնդրվում է թույլ տալ Ջավախքում կառուցելու հուշարձան՝ նվիրված 1918 թ. Ջավախքյան արյունալի կոտորածներին զոհ դարձած 60 հազար մարդկանց հիշատակին: Դիմումի տակ ստորագրել են 600 բնակիչներ: Այդպիսի մեկ այլ օրինակ է Ջումբեր Պատիաշվիլուն[125] ուղղված դիմումը, որում խնդրվում է թույլ տալ, որպիսի Ջավախքում կառուցվի այգի կամ բարեկամության խճուղի, ուր կտեղադրվի երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող (նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ 1988 թ. Սպիտակի երկրաշարժին զոհ էին գնացել 286 ջավախքցի, որոնք ժամանակավոր կամ մշտական բնակության էին մեկնել աղետի գոտում):

1980-ական թվականների վերջին Ախալքալաքի ս. Խաչ եկեղեցու բակում և Բարալեթ գյուղի մերձակա սարի բարձունքում կանգնեցվեցին 1915 թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարեր՝ որտեղ ամեն տարի հավաքվում են բազմահազար հայեր:

1990 թ. երկրորդ կեսից սկսած Ջավախքում մեծ հուզումներ առաջացան, կապված ՎԽՍՀ Արդարադատության նախարարության որոշման հետ: Ըստ վերոհիշյալ նախարարության որոշման և նույն նախարարության Քաղաքացիների սպասարկման բաժնի պետ Մ. Ռազմաձեի 05/02 հրամանագրի, որն ուղղված էր Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների պետական նոտարիուսներին (Վ. Օքրոյանին և Շ. Մանուկյանին), պահանջվում էր դադարեցնել բնակելի տների առք ու վաճառքի ձևակերպումները Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների տարածքնե-

---

[125] Վրացական ԽՍՀ Կոմկուսի վերջին առաջին քարտուղարը:

ում՝ մինչև ՎԽՍՀ-ի արդարադատության նախարարության նոր հրամանագրի ստացումը[126]:

Մ. Ռամզաձեն այս պահանջը կապում էր Վրաստանում տիրող բարդ իրադրության հետ, միաժամանակ նկատի էր առնվում այն հանգամանքը, «որ Մ. Կոստավայի[127] *ֆոնդը գնում է բնակելի տներ ՎԽՍՀ Մինիստրների Սովետի որոշմամբ»*[128]:

Մի որոշ ժամանակ անց ստացվեց ՎԽՍՀ Ախալքալաքի ժողպատգամավորների շրջսովետի գործկոմի դիմումը՝ ուղղված ՎԽՍՀ արդարադատության նախարար Է.Ա. Շարաշենիձեին: Դիմումից երևում է, որ Ախալքալաքի ժողպատգամավորների շրջխորհրդի գործկոմ են դիմել շրջանի մի խումբ բնակիչներ՝ կապված պետնոտարիուս Վ. Օքրոյանի «անօրինական քայլերի» հետ: «Մեր կարծիքով արդարադատության նախարարության այդ որոշումը անօրինական է: ... Այդպիսի գործողությունները ստեղծում են լարված կոնֆլիկտային իրավիճակ և շրջանի բնակչության մոտ առաջացնում են սոցիալական անպաշտպանվածության վիճակ: Ուստի խնդրում ենք ձեզ անհապաղ արձագանքել արդարադատության նախարարության տվյալ անձի (Մ. Ռամզաձեի - Վ.Ս.) հակաօրինական որոշումը փոխելու համար»[129]:

---

[126] ГССР, Министерство Юстиции, указ N 05/02, 27 08 1990 г., г. Тбилиси

[127] Մերաբ Կոստավան եղել է Վրաստանի առաջին նախագահ Զ Գամսախուրդիայի մերձավոր ընկերներից և Հելսինկյան խմբի հիմնադիրներից մեկը. Զ Գամսախուրդիայի և մյուսների հետ ձերբակալվել է 1989 թ-ապրիլի 9-ի դեպքերի ժամանակ, որպես ազգային-արմատական լիդեր: Ավտովթարի զոհ է դարձել 1989 թ հոկտեմբերի 13-ին կասկածելի հանգամանքներում Տես "Свободная Грузия", 02.07.1991, N 117.
Հմմտ Скаков А Ю, Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия Проблемы и перспективы. /РИСИ, с.261.

[128] ГССР, Министерство Юстиции, указ N 05/02, 27 08 1990 г , г. Тбилиси

[129] ГССР, Ахалкалакский Районный совет народных депутатов исполнительных комитет, N 384, 02 10 1990 г , г. Ахалкалаки.

Ինչպես տեսնում ենք, Վրացական կառավարությունը հստակ քայլերով իրականացնում էր Ջավախքում հայաթափման, նրկրամասի ժողովրդագրական պատկերը փոփոխելուն ուղղված մի շարք ծրագրեր: Պարզ է, որ այդ տները հատուկ ձևով չէին պնվում հայերին «նվիրելու» համար, այլ դա սվանների, աջարների, մեսխեթցի-թուրքերի՝ Ջավախքում վերաբնակեցնելու գործընթացի մի փուլն էր: Իսկ շրջանի հայությանն իր սեփական տան առք ու վաճառքով զբաղվելու իրավունքից զրկելը դա մարդկային տարրական իրավունքների կոպիտ խախտում էր:

Այս անարդարացի որոշման առթիվ Ախալքալաքի Ս. Խաչ եկեղեցու բակում «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության նախաձեռնությամբ տեղի ունեցավ բողոքի ակցիա, որի մասնակիցները դատապարտող կոչեր հնչեցրին Վրաստանի ԴԽ-ի և Հանրապետության Մինիստրների խորհրդի հասցեներով[130]:

Միաժամանակ հարց բարձրացվեց այն մասին, որ արդեն մի քանի տարի էր, ինչ շրջանի քսանչորս կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների աշխատավորները չեն կարողանում անհատական բնակարանաշինարարության համար գործող օրենքի սահմաններում հողամաս ստանալ: «Այդ բողոքները միշտ էլ մնացել են ձայն բարբառո հանապատի»[131]:

Այս ամենն արդյունք էր Վրաստանի ազգային-արմատական կուսակցության վարած քաղաքականության, որի նախընտրական պլատֆորմում մատնանշվում էր Վրաստանը՝ առանց որևէ ինքնավար տարածքի և վրացական պատմական հողերի վերադարձումը: Ազգային-արմատականների հողի վրա է՛լ ավելի աճեց վրացական ազգայնականությունը: «Վրաստանի պետությունը պաշտպանում է վրաց ժողովրդի հետաքրքրությունները, օժանդակում է նրա գիտակցության գոյատևման, ձևավորում է Վրաստանի քաղաքացու տեսակը, որի մեջ պետք է նախա-

---

[130] «Ջավախք», N 1, դեկտեմբեր, 1990.
[131] Նույն տեղում

տեսնվեն գեները, հոգեբանությունը, պատմական գործընթացներով տրված ազգային մտածողությունը, անսահման սերը վրաց լեզվին, հայրենիքին, սովորույթներին և ավանդույթներին»[132]:

«Մերաբ Կոստավա» և «Սելիմ Խիմշիաշվիլի» համավրաստանյան կազմակերպությունների կողմից վրացիների վերաբնակեցումը (ինչպես դրսից եկածների, այնպես էլ տեղացի վրացիների) ոչ վրացաբնակ, այլ էթնիկ խմբերով բնակեցված շրջաններում, դրա վառ արտահայտությունն էր[133]:

1990 թ. հոկտեմբերի 28-ին կայացան Վրաստանի Գերագույն Խորհրդի պատգամավորների ընտրությունները, որին իրենց մասնակցությունը բերեցին 14 կուսակցություններ և կուսակցական բլոկեր: Նոյեմբերի 11-ին կայացավ ընտրությունների երկրորդ փուլը, որի արդյունքում Վրաստանում առաջին անգամ ձևավորվեց բազմակուսակցական օրենսդիր մարմին՝ 246 պատգամավորներով, որոնցից 125-ը ընտրվել էին համամասնական, 121-ը՝ մեծամասնական կարգով:

Խորհրդարանի 81 մանդատներն իրենց ձեռքը վերցրին «Կլոր Սեղան-Ազատ Վրաստան» բլոկի ներկայացուցիչները՝ Զ. Գամսախուրդիայի գլխավորությամբ. Նշենք, որ այս բլոկը, որը հետագայում ղեկավար դեր պետք է ստանձներ Վրաստանի քաղաքական կյանքում, ստեղծվել էր 1990 թ. ապրիլին, որի կազմի մեջ էին մտել Վրաստանի Հելսինկյան Միությունը, «Իլյա Բարեպաշտ» ընկերությունը, Մերաբա Կոստավայի Համավրաստանյան ընկերությունը, Վրաստանի ավանդապաշտների միությունը, «Վրաստանի Ազգային Ճակատ-Արմատական Միություն»

---

[132] Скаков А. Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия Проблемы и перспективы.../ РИСИ, с 266 Հմմտ- "Свободная Грузия", 30 09.1992.

[133] Նույն տեղում. Հմմտ «Свободная Грузия», 10.03.1992, նույն տեղում, 02.10.1992:

կազմակերպությունը, Ազգային-քրիստոնեական կուսակցությունը[134]:

Սրանով Վրաստանն անցավ նոր քաղաքական ուղու:

Այս բլոկի նպատակն էր՝ ազդարարել Վրաստանի վերականգնված անկախության մասին՝ քաղաքական խաղաղ պայքարի ճանապարհով, դուրս գալ ԽՍՀՄ կազմից, հանրապետության տարածքից դուրս բերել Խորհրդային բանակի զորամասերը, Վրաստանն անդամագրել ՆԱՏՕ-ին և այլն: «Կլոր Սեղան-Ազատ Վրաստան» բլոկի հիմնական նպատակներից էր նաև 1921 թ. Վրաստանի դեմոկրատական հանրապետության սահմանադրության վերականգնումը[135]:

---

[134] Скаков А. Ю., Внутриполитическая ситуация в Грузии, /Проблемы и перспективы /, РИСИ; т.2, М. 2002, с 261. Նշենք, որ 1990 թ ընթացքում շուրջ երկու անգամ (ապրիլի 20-ին և հոկտեմբերի 20-ին) «Կլոր սեղան - Ազատ Վրաստան» բլոկի ներկայացուցիչների հետ հանդիպել են «Ձավախք» ժողովրդական շարժման ներկայացուցիչները, որտեղ քննարկվել են և քաղաքական, և սոցիալ-տնտեսական ոլորտներին առնչվող հարցեր (տես «Ձավախք» ժողովրդականա շարժման նախագահ Ի Աբրահամյանի հաշվետվությունը խորհրդի նիստին, 13 10 1990 թ , ք Ախալքալաք)

[135] Նույն տեղում

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍԱՄՑԽԵ – ՋԱՎԱԽՔ – ԹՌԵՂՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԵՎ Զ. ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ГРУЗИЯ – ЭТО МАЛАЯ ИМПЕРИЯ
АНДРЕЙ САХАРОВ

ԽՍՀՄ-ը 20-րդ դարի վերջին տասնամյակի սկիզբ թևակոխեց լրջորեն խորացած ճգնաժամային վիճակում: Երկրի ներսում եղած բազմապիսի լուրջ հակասությունները ստիպեցին ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ Մ.Ս.Գորբաչովին 1990 թ. նոյեմբերի վերջին միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներին, ինքնավար հանրապետությունների գերագույն խորհուրդներին, ինքնավար մարզերի և ինքնավար օկրուգների ժողովրդական պատգամավորների խորհուրդներին ուղարկել միութենական նոր պայմանագրի նախագիծը: Վերոհիշյալ նախագծով նախկին ԽՍՀՄ-ը դառնալու էր նոր տիպի պետություն՝ Սուվերեն Խորհրդային Հանրապետությունների Միություն[136]:

Նախագծին ԽՍՀՄ 15 հանրապետություններից յուրաքանչյուրն արձագանքեց յուրովի մոտեցումներով: Երկու օր անց՝ նոյեմբերի 27-ին, ստացվեց Վրաստանի Գերագույն Խորհրդի՝ ԽՍՀՄ պրեզիդենտին ուղղված հայտարարությունը, ըստ որի անկախության ուղին բռնած Վրաստանը նույնիսկ հրաժարվում էր քննության առնել միութենական նոր դաշնագրի հայեցակարգը, քանի որ, ինչպես ասված էր հայտարարության մեջ՝ «դրա ցանկացած ձևը անընդունելի է Վրաստանի Հանրապետության համար, որը լիակատար պետական անկախության հաս-

---

[136] «Հայաստանի Հանրապետություն» 25 11.1990:

նելու ճանապարհին սոսկ անցումային ժամանակաշրջանի սկզբում է գտնվում»[137]: «Դրա հետ մեկտեղ,- ասված է փաստաթղթում,- նման մոտեցումը չի նշանակում, թե Վրաստանը հրաժարվում է մյուս երկրների հետ (խոսքը մնացած միութենական հանրապետությունների մասին է—Վ.Ս) տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային համագործակցության ոլորտներում պարտավորություններ ստանձնելու որևէ ձևից, որոնց հետ այսօր էլ արդյունավետորեն, համագործակցում է: Ելնելով դրանից, հանրապետության Գերագույն Խորհուրդը պատրաստ է պարտնյորական կապերի մեջ մտնել լիակատար իրավահավասարություն ու փոխշահավետություն նախատեսող նոր քաղաքական պայմաններում, որակապես նոր իրավական հիմքի վրա»[138]:

Իսկ մինչ այս ամենը, 1990 թ. նոյեմբերի 14-ին, Վրաստանի բազմակուսակցական սկզբունքով ընտրված նորընտիր Գերագույն Խորհրդի նստաշրջանի օրը, պատգամավորների ձայների 232 կողմ, 5 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ Վրաստանի Գերագույն Խորհրդի նախագահ ընտրվեց «Կլոր սեղան - ազատ Վրաստան» բլոկի լիդեր Զվիադ Գամսախուրդիան[139], որով պիտի բացվեր Վրաստանի պատմության նոր՝ ամենափոթորկալից, վայրիվերումներով լի էջերից մեկը: Խորհրդարանի որոշմամբ հաստատվեց հանրապետության նոր անվանումը՝ Վրաստանի Հանրապետություն: Փոխվեց դրոշը: Հնչեց Վրաստանի հանրապետության նոր հիմնը[140]:

Գալով իշխանության, Զ. Գամսախուրդիան և իր կողմնակիցները Վրաստանում ստեղծեցին հասարակական կարծիքի նոր մթնոլորտ, որի մեջ ցայտուն ձևով դրսևորվեցին այդ երկրում ապրող ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող քաղաքականության բոլոր կողմերը: Հետաքրքրական է, որ Զ.

---

[137] Նույն տեղում, 27.11 1990:
[138] Նույն տեղում՝
[139] Նույն տեղում, 15 11 1990:
[140] Նույն տեղում:

Գամսախուրդիան իր ելույթներում ԼՂԻՄ-ը անվերապահորեն Հայաստանի մաս ճանաչելով, միաժամանակ իր երկրում հենց առաջին օրվանից վերացրեց Հարավ Օսական ինքնավար մարզը, այն («Հարավային Օսեթիա» արտահայտությունը) որակելով որպես բոլշևիկյան եզր և հայտարարելով, որ «... ոչ մի Հարավային Օսեթիա Վրաստանում չկա: Կան օսական գյուղեր, իսկ օսերը եկվոր են, վերաբնակներ»[141]: Հարկ է նշել, որ հայ-վրացական հարաբերություններն այս շրջանում դեռևս չէին մտել բնականոն հունի մեջ, որի պատճառներից մեկն էլ Զ.Գամսախուրդիայի կողմից համարվում էր հայկական շրջանակներում գործող «Ջավախք» կազմակերպության գործունեությունը[142]:

1991 թ. հունվարի 29-ի իր հերթական նիստում Վրաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց տեղական ինքնակառավարման մասին օրենք: Այդ օրենքի համաձայն հանրապետական ենթակայության քաղաքներում և շրջաններում այսուհետև կառավարման գործառույթները իրականացնող անձ էր լինելու պրեֆեկտը[143]: Այս փաստը հատուկ նշում ենք, քանի որ, ինչպես կտեսնենք առաջիկայում, այդ գործընթացի հետագա զարգացումները մեծապես անդրադառնալու էին Ջավախքի ներքաղաքական կյանքի վրա: Պրեֆեկտը կենսագործելու էր վերադաս մարմինների որոշումները: Այն նշանակվում էր չորս տարի ժամկետով, Գերագույն խորհրդի նախագահի ներկայացմամբ, ազատվում Գերագույն խորհրդի նախագահության կողմից և հաշվետու է Գերագույն խորհրդի, նրա նախագահությանն ու նախարարների խորհրդին: Պրեֆեկտը նշանակում և ազատում էր ինչպես պրեֆեկտուրատի ստորաբաժանումների, այնպես էլ տեղական սեփականությանը պատկանող ձեռնարկությունների հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին: Նա իրավունք ուներ վերացնելու տեղական իշխանության մարմինները՝ ժողովների

---

[141] Նույն տեղում, 2 մարտի, 1990.
[142] Նույն տեղում
[143] Նույն տեղում, 31 հունվարի, 1991·

այն ակտերը, որոնք չէին համապատասխանում Վրաստանի Հանրապետության օրենսդրությանը, թույլատրում է տնտեսական գործունեություն, իրականացնում մի շարք այլ գործառություններ[144]: Ինչպես տեսնում ենք, այս պաշտոնյային օժտում էին մի չափք լուրջ իրավունքներով, որոնց կենսագործման միջոցով վերջինս կարող էր ազդել տվյալ շրջանի ինչպես տնտեսական, այնպես էլ ներքաղաքական կյանքի վրա[145]: Մինչ այս ամենին անդրադառնալը նշենք, որ ամբողջ խորհրդային տարածքում ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ հանրաքվեն (որով, ինչպես վերը նշեցինք, ԽՍՀՄ-ը դառնում էր նոր տիպի ֆեդերացիա) նշանակվեց մարտի 17-ին: Վրաստանը, ինչպես տեսանք, ի սկզբանե հրաժարվել էր մնալու ԽՍՀՄ կազմում՝ որևիցե ձևով: Իր տարածքում ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեն չանցկացնելու մասին որոշում ընդունեց նաև Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը[146]: Հետաքրքրական է նաև այն, որ իրենց հերթին «Ջավախք» և «Փարվանա» ժողովրդական շարժումները (վերջինս մի կազմակերպություն էր, որը հիմնադրվել և գործում էր Բոգդանովկայում) նույնպես Ջավախքի ազգաբնակչությանը կոչ արեցին չմասնակցել ԽՍՀՄ-ը պահպանելու մասին 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ համաժողովրդական հանրաքվեին՝ այն (մասնակցությունը) համարելով սխալ. «...քանզի ԽՍՀՄ-ը այն կայսրությունն է, որի գոյությունը ինքստինքյան հակադեմոկրատական է, վարում է ամբողջատիրական քաղաքականություն, խեղդում ամեն մի ազգային-դեմոկրատական շարժում»[147]: Ինչևէ, մարտի 17-ի ընտրությունների արդյունքում ԽՍՀՄ-ում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող 185.647.355 մարդուց քվեարկութ-

---

[144] Նույն տեղում:

[145] Այս ինստիտուտը վերացավ Ջ. Գամսախուրդիայի վարչակարգի տապալման հետ մեկտեղ, երբ պրեֆեկտին փոխարինելու եկավ շրջանային վարչության նախագահը:

[146] «Հայաստանի Հանրապետություն», 5 մարտի, 1991:

[147] Տես կոչի բովանդակությունը:

յանը մասնակցեց 148.574.606 մարդ, կամ 80 տոկոսը, որոնցից՝ «Այո» պատասխանեցին 76,4 %-ը, «Ոչ»՝ 21,7 %-ը[148]: Հանրաքվեի կենտրոնական հանրապետական հանձնաժողովներ չստեղծվեցին Վրաստանում, Լիտվայում, Լատվիայում, Էստոնիայում, Մոլդովայում, Հայաստանում (այս երկրները փաստացի դուրս եկան ԽՍՀՄ կազմից):

Մի քանի օր անց՝ մարտի 31-ին, Վրաստանի Հանրապետության բնակչությունը քվեարկեց Վրաստանի անկախ պետականության վերականգնման օգտին: Հանրաքվեին մասնակցեց ողջ բնակչության 90,3 %-ը, որի 98,9 %-ը «Այո» ասաց անկախությանը[149]: Ախալքալաքում հանրաքվեին մասնակցեց բնակչության 90 %-ը, որից կողմ քննարկեց՝ 95 %-ը՝, Բոգդանովկայում 90 % մասնակիցներից կողմ քվեարկեց 92 %-ը[150]: Ապրիլի 1-ի մամլո ասուլիսի ժամանակ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ակակի Ասաթիանին շնորհակալություն է հայտնել Վրաստանի հայ բնակչությանը[151]:

Ապրիլի 9-ին, Թիֆլիսի ողբերգական իրադարձություններից երկու տարի անց, կայացավ Վրաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի անդրանիկ նստաշրջա-

---

[148] «Հայաստանի Հանրապետություն», 30 մարտ, 1991·

[149] Նույն տեղում, 3 ապրիլի, 1991

[150] Նույն տեղում:

[151] Կարևոր է նշել, որ Վրաստանի ինքնավար շրջաններից Աբխազիան և Հարավային Օսեթիան այս հարցում չմիացան Վրաստանին. Նույն սցենարը տեղի ունեցավ նաև Մոլդովական հանրապետության պարագայում: Վերջինիս լարված օջախներից մեկը Մերձդնեստրյան շրջանի աջափնյա անկլավը Բենդեռյան շրջանը ևս ձայների 98,9 %-ով հանդես եկավ ԽՍՀՄ-ի պահպանման օգտին· Սա այն դեպքում, երբ ինքը Մոլդովան բոյկոտեց վերոնշյալ հանրաքվեն Ըստ որոշ հեղինակների վերջիններս քվեարկեցին ոչ թե ԽՍՀՄ-ի պահպանման, այլ Ռուսաստանի կազմում մնալու օգտին. Տես Мяло К Г , Россия и последние войны XX века (1989-2000), К истории падения сверхдержавы, М., 2002, с 110, 189. Այս փաստը ևս խոսում է այն մասին, որ ի սկզբանե Սամցխե-Ջավախք-Ծալկայում չի եղել անջատողական տրամադրվածություն.

նի արտակարգ նիստ: Նիստում ելույթ ունեցավ Վրաստանի Հանրապետության ԳԽ-ի նախագահ Զ. Գամսախուրդիան և ժամը 12-ին հռչակեց Վրաստանի անկախության վերականգնումը 1918 թ.մայիսի 26-ի անկախության ակտի հիման վրա[152]: «...Մարտի 31-ի հանրաքվեում Վրաստանի ժողովուրդները բացահայտորեն դրսևորեցին անկախ երկրում ապրելու իրենց կամքը»,- նշեց Զ. Գամսախուրդիան և երկրի ոչ վրացի բնակչությանը շնորհակալություն հայտնեց աջակցության համար[153]: Ասվեց նաև, որ Աբխազիային երաշխավորվում է ինքնավարություն, իսկ Աջարիայի ինքնավարության հարցը կորոշի այդ հանրապետության բնակչությունը՝ հանրաքվեի միջոցով: Զ. Գամսախուրդիան ընթերցեց անկախության վերականգնման մասին ակտը, որն ընդունվեց միահամուռ՝ աննշան փոփոխություններով և լրացումներով:

Ելնելով այս հանգամանքից, կարևոր է նշել այն փաստը, որ 1918 թ. Վրաստանի առաջին հանրապետության գոյության շրջանում Սամցխե-Ջավախք-Թուեղքը չի եղել անկախ Վրաստանի կազմում. Երկրամասն այս ամիսներին վրացիների գործուն աջակցությամբ և թուրքական հրոսակախմբերի ներխուժմամբ դարձել էր սրի ու հրո ճարակ, որի պատճառով զոհվեց շուրջ 60.000 մարդ: Իսկ վրացիները երկրամասն առանց Հայաստանի գիտության բռնազավթեցին միայն հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարով թուրքերի հեռանալուց հետո՝ դեկտեմբերի 5-ին (այդ օրը գեներալ Մակաևի (Մաղաշվիլու) գլխավորությամբ զորքերը մտան Ջավախք): Այս փաստը (միաժամանակ նաև Լոռիի բռնազավթման իրողությունը) մի քանի օր անց սանձազերծեց հայ-վրացական պատերազմ: Հետևաբար, երբ նորանկախ Վրաստանն իրեն համարում էր 1918 թ. Վրաստանի (այլ ոչ թե Խորհրդային Վրաստանի, որի կազմի մեջ իրավաբանորեն գտնվել է Սամցխե-Ջավախք-Թուեղքը) իրավահաջորդ պետություն, իրավական տեսանկյունից պետք է որոշակի վերապահում-

---

[152] «Հայաստանի Հանրապետություն», 10.04 1991.
[153] Նույն տեղում:

ներով մոտենար Սամցխե-Ջավախք-Թուեղքը (Ծալկան) Վրաստանի տարածքում տեսնելու խնդրին: Այս տրամաբանությունն ավելի հիմնավոր է դառնում, եթե նայենք նախկին ԽՍՀՄ-ի կազմի մեջ գտնվող պետությունների 1991 թ. դեկտեմբերի 21-ի Ալմա-Աթայի հռչակագիրը, որով նախկին միութենական 11 հանրապետություններ միանալով ստեղծում էին մի նոր տիպի կառույց՝ Անկախ պետությունների հանրակցությունը (ԱՊՀ-ն)[154]: Իր հերթին, հռչակագրում նշվում է.«Հանրակցության մասնակից պետություններն իրենց սահմանադրական արարողակարգերին համապատասխան երաշխավորում են նախկին ԽՍՀՄ Միության պայմանագրերից ու համաձայնագրերից բխող միջազգային պարտավորությունների կատարումը»[155]: Վրաստանը (ինչպես նաև Մերձբալթյան երեք հանրապետությունները) հրաժարվեց նույնիսկ միանալ այս պայմանագրին՝ սրանով փաստորեն մերժելով այն ամենն ինչը կապված էր նախկին Խորհրդային Վրաստանի հետ, և ինչը ժառանգություն էր մնացել նրանից: Ավելին, նշենք այս տրամաբանության օգտին խոսող ևս մեկ հզոր կռվան. դեռ 1990 թ.մարտի 9-ին, հետզհետե աճող քաոսի պայմաններում, ազգային-ազատագրական շարժման լիդերների ճնշման ներքո, ընդունվեց ՎԽՍՀ Գերագույն Խորհրդի «Վրաստանի սուվերենության պաշտպանության երաշխիքների մասին» որոշումը, որի մեջ 1921 թ. կարմիր բանակի մուտքը Վրաստան անվանվեց անեկսիա և օկուպացիա[156]: Այս որոշումն ըստ էության մատնանշում էր ԽՍՀՄ օրենքի շրջանակներից Վրաստանի դուրս գալը: Ավելացնենք Վրաստանի՝ այս հարթության վրա կատարած հաջորդ քայլը. 1990 թ. հունիսի 20-ին ՎԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը, Թբիլիսիի համալսարանի ուսանողների կոչով, անօրինա-

---

[154] Նույն տեղում, 24.10 1991

[155] Հռչակագրի տեքստը տես «Հայաստանի Հանրապետություն», 24.10.1991:

[156] Скаков А. Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия. Проблемы и перспективы. /,РИСИ, с. 261

կան ճանաչեց պետական այն բոլոր պայմանագրերը, որոնք կնքվել էին «Վրաստանի օկուպացիայից» հետո և դրանից հետո ստեղծված բոլոր կառույցները[157]: Դրանով ուժը կորցրած հայտարարվեց 1922 թ-ի՝ ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը[158]: Այսպիսով չեղյալ ճանաչվեցին Վրաստանի երեք ինքնավար հանրապետությունների գոյության իրավաբանական հիմքերը՝ ելնելով այն հանգամանքից, որ նրանք փաստորեն ինքնավար հանրապետություն և ինքնավար մարզ էին դարձել Վրաստանի խորհրդայնացումից հետո: Այս օրենքով Վրաստանը իրավաբանորեն (դե յուրե) չէր ճանաչում իր տարածքում գտնվող ինքնավար հանրապետությունները, որոնք ի վերջո հանգեցրին իրադրության ծայրահեղ սրմանը Աբխազիայում և Հարավային Օսեթիայում: Վերջիններս պայքարի ելան զենքի միջոցով, որով նրանք ձեռք բերին եթե ոչ իրավաբանական, ապա գոնե լիարժեք փաստական անկախություն Վրաստանից:

Այս գործընթացների մեջ բավականին հետաքրքրական էր Աջարիայի պարագան: Երեք հազար կմ^2 ունեցող այս մարզին ինքնավարության կարգավիճակ է տրվել 1921թ.հունիսի 16-ին[159]: Խորհրդային Վրաստանի ժամանակաշրջանում կնքված բոլոր պայմանագրերից հրաժարված Վրաստանը, բնականաբար, պետք է լուծարեր նաև այս մարզը, եթե չլիներ մի կարևոր հանգամանք՝ Բաթումի մարզը լայն ինքնավար կարգավիճակով Վրաստանի կազմում է հայտնվել 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական և նույն թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի թուրք-անդրկովկասյան դաշնագրերով: Հետևաբար, եթե Վրաստանը լուծարեր այս մարզը, ապա պետք է չեղյալ հայտարարեր վերոնշյալ

---

[157] Նույն տեղում·

[158] Мяло К Г , Россия и последние войны XX века (1989-2000), К истории падения сверхдержавы, М , 2002, с 109.

[159] «Ազատամարտ», թիվ 29, օգոստոս, 1993: Հմմտ Էվոյեան Ս , Աջարական հանգոյց, Հայրենի Ջաւախք, Պէյրութ-Լիբանան, 2002, էջ 389.

պայմանագրերը[160], ինչն էլ իր հերթին իրավաբանական հիմք կհանդիսանար, որպիսի Բաթումի մարզը (Աջարիան) անցներ Թուրքիային: Հետևաբար, երևի այս վտանգի գիտակցումով էր, որ Վրաստանը «ետ կանգնեց կես ճանապարհից» և Աջարիայի ինքնավարությունը թողեց նույն կարգավիճակով[161]:

Ելնելով այս փաստերից, կարելի է հստակորեն եզրակացնել, որ նորանկախ Վրաստանն այսպիսով ընդունում էր միայն Վրաստանի՝ 1918 թվականին ստեղծված Հանրապետության գոյությունը և իրեն անվերապահորեն համարում էր նրա իրավահաջորդ (Ադրբեջանի և Հայաստանի պարագան մի փոքր այլ էր: Ադրբեջանը չնայած իրեն համարում էր 1918 թ. ստեղծված պետության իրավահաջորդ, բայց միաժամանակ, ինչպես եւ Հայաստանը, ստորագրել էր Ալմա-Աթայի պայմանագիրը, որով էլ վերջիններս տարբերվում էին Վրաստանից): Իսկ այսպիսի պետության տարածքում Սամցխե-Ջավախք-Թուեղք երկրամասի՝ Վրաստանի պատկանելության հարցը պետք է վերաբացվեր և լուծում ստանար բանակցությունների սեղանի շուրջը, որտեղ Հայաստանը և Վրաստանը կունենային հավասարազոր մասնակցություն՝ հարցի լուծման մեջ իսկ բանակցությունների ընթաց-

---

[160] Ստեփանյան Խ , Ջավախքի ինքնավարությունը որպես նրա զարգացման նախապայման, (Ջավախքը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ. Խորհրդաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2006, էջ 25.

[161] 1991 թվականից Աջարիայի Ինքնավար Հանրապետության փաստացի ղեկավար, պաշտոնապես Գերագույն խորհրդի նախագահ Ասլան Աբաշիձեն այս կապակցությամբ նույնպես հանդես էր գալիս հայտարարությամբ, ըստ որի «ըստ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, Աջարիան հանդիսանում է միջազգային իրավունքի ենթակա (սուբյեկտի), իսկ միջազգային պայմանագրերը գերակա են Սահմանադրությունից» (տես Էվոյեան Ս , Աջարական հանգոյց, «Հայրենի Ջաւախք», էջ 393). Պատմանական հիմնավոր փաստերի և միջազգային իրավական նորմերի վրա հիմնված Ա Աբաշիձեի այս հայտարարությունը հերթական անգամ հիշեցնում էր Վրաստանին այն մասին, որ վերջինս իր մշակած քաղաքական ուղեգծում (նաև Սահմանադրության պետության կառուցվածքի մասին գլխի ընդունման գործընթացում) պարտավոր էր մեծապես հաշվի նստել այս ամենի հետ:

քում երկրամասի պատկանելության հարցը անվերապահորեն պետք է քննարկվեր վերջինիս ժողովրդի արտահայտած դիրքորոշման հիման վրա (այսինքն, այստեղ պետք է գործեր ազգային ինքնորոշման իրավունքի սկզբունքը): Բանակցության վայրեր պետք է լինեին և՛ Թիֆլիսը, և՛ Երևանը, կամ կողմերը կարող էին փոխադարձ համաձայնությամբ ընտրել մեկ այլ (երրորդ, չեզոք) վայր: Քննարկումները պետք է ընթանային միջազգային ազդեցիկ կառույցների (ՄԱԿ, ԵԱՀԽ/ԵԱՀԿ, Եվրախորհուրդ և այլն) դիտորդական խմբերի և գանգվածային լրատվամիջոցների ներկայությամբ:

Սակայն Հայաստանը, ելնելով ստեղծված ծանր իրավիճակից, երկրին սպառնացող համընդհանուր շրջափակման պայմաններում, երբ շուտով (1991 թ. ապրիլի վերջին) ԽՍՀՄ զորքերի կողմից Լեռնային Ղարաբաղում իրականացվելիք տխրահռչակ «Օղակ» գործողության հետևանքով, պետք է աչք փակեր (և փակում է այսօր) Ջավախքի հարցի առջև: Դրանով Հայաստանը փորձեց բաց պահել արտաքին հաղորդակցության իր վերջին միջոցը՝ Վրաստանի տարանցիկ միջանցքը (հատկանշական է, որ ելնելով վերոնշյալ հանգամանքներից ՀՀ Գերագույն Խորհուրդն այդ օրերին (ապրիլի 12-ին) հեռագիր հղեց Վրաստանի Հանրապետության ԳԽ-ի նախագահ Զ. Գամսախուրդիային, որում խնդրվում էր բաց թողնել Վրաստանի տարածքով Հայաստան մտնող շարժակազմերը և վերականգնել միջերկրային երկաթուղային հաղորդակցությունը)[162] *:*

Վերադառնալով Վրաստանի անկախության հռչակմանը, նշենք, որ այդ առթիվ Վրաստանի Գերագույն Խորհուրդն ընդունեց որոշում՝ ուղղված աշխարհի ժողովրդներին և ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին:

Առաջինում կոչ էր արվում «ազատության, ժողովրդավարության և արդարության իդեալների համար պայքարող ժողովրդին, թույլ չտալ ուժի կիրառում նրա դեմ, նպաստել Վրաստանի

---

[162] «Հայաստանի Հանրապետության», 16 04 1991:

Հանրապետության ճանաչմանը և նրա հաստատմանը ժողովրդական պետությունների ընկերակցության մեջ»[163]: Երկրորդում պատգամավորները հույս էին հայտնում, որ պրեզիդենտը մինչև վերջ հավատարիմ կմնա ժողովրդավարական սկզբունքներին և կճանաչի Վրաստանը՝ որպես անկախ, ինքնիշխան պետություն: Ընդունվեց նաև մեկ կարևոր որոշում՝ Վրաստանի Հանրապետության պրեզիդենտի պաշտոն մտցնելու մասին[164]: Առաջ անցնելով նշենք, որ շուտով (մայիսի 26-ին, Վրաստանի 1918 թ. հանրապետության անկախության օրը) Վրաստանում անցկացվեցին նախագահական ընտրություններ: Ընտրություններին, որպես նախագահի թեկնածու, մասնակցում էին 6 անձինք՝ տարբեր բլոկներից:

Սամցխե-Ջավախքի երկրամասի առանձին շրջաններում ընտրությունների արդյունքները հետևյալներն էին.

1. Ասպինձայի շրջան.

– 8716 – ընտրողների ընդհանուր թիվը

– 8492 (97,41 %) – մասնակից ձայների ընդհանուր թիվը

ա) Գամսախուրդիա Զվիադ – 6239 (73,47 %)

բ) Շենգելայա Իրակլի – 45 (0,53 %)

գ) Միքելաձե Ջեմալ – 88 (1,04 %)

դ) Ադվաձե Վալերիանի – 173 (20,38 %)

ե) Կվաչիրաձե Թամազ – 22 (0,26 %)

զ) Նաթաձե Նոդար – 28 (0,33 %)

2. Ախալքալաքի շրջան

– 39.460 – ընտրողների ընդհանուր թիվը

– 33.460 (85,6 %) – մասնակից ձայների թիվը

ա) Գամսախուրդիա Զվիադ – 17.450 (52,22 %)

բ) Շենգելայա Իրակլի – 149 (0,45 %)

գ) Միքելաձե Ջեմալ – 688 (2,06 %)

---

[163] Նույն տեղում, 11.04 1991:

[164] Նույն տեղում:

դ) Ադվաձե Վալերիանի – 14.695 (43,98 %)
ե) Կվաչիատիրաձե Թամազ – 113 (0,34 %)
զ) Նաթաձե Նոդար – 129 (0,39 %)
3. Ախալցխայի շրջան
– 33.157 – ընտրողների ընդհանուր թիվը
– 29.125 (87,84 %) – մասնակից ձայների թիվը
ա) Գամսախուրդիա Զվիադ – 21.454 (73,68 %)
բ) Շենգելայա Իրակլի – 637 (2,19 %)
գ) Միքելաձե Ջեմալ – 684 (3,04 %)
դ) Ադվաձե Վալերիանի – 4882 (16,77 %)
ե) Կվաչիատիրաձե Թամազ – 75 (0,26 %)
զ) Նաթաձե Նոդար – 398 (1,37 %)
4. Նինոծմինդայի (Բոգդանովկայի) շրջան
– 22.589 – ընտրողների ընդհանուր թիվը
– 18.041 (79,8 %) – մասնակից ձայների թիվը
ա) Գամսախուրդիա Զվիադ – 11.640 (64,57 %)
բ) Շենգելայա Իրակլի – 201 (1,12 %)
գ) Միքելաձե Ջեմալ – 328 (1,82 %)
դ) Ադվաձե Վալերիանի – 5318 (29,5 %)
ե) Կվաչիատիրաձե Թամազ – 46 (0,27 %)
զ) Նաթաձե Նոդար – 98 (0,54 %)
5. Վրաստանի Հանրապետություն
– 3.604.810 – ընտրողների ընդհանուր թիվը
– 2.978.247 (82,62 %) – մասնակից ձայների թիվը
ա) Գամսախուրդիա Զվիադ – 2.565.362 (86,41 %)
բ) Շենգելայա Իրակլի – 26.886 (0,91 %)
գ) Միքելաձե Ջեմալ – 51.717 (1,74 %)
դ) Ադվաձե Վալերիանի – 240 243 (8,09 %)
ե) Կվաչիատիրաձե Թամազ – 8553 (0,29 %)

գ) Նաթաձե Նոդար – 36.266 (1,22 %)[165]:

Բերված թվերից երևում է, որ ինչպես ողջ Վրաստանում այնպես էլ Սամցխե-Ջավախքի շրջաններում ընտրողներն իրեն ձայների մեծամասնությունը տվել են «Կլոր Սեղան - Ազատ Վրաստան»-ի լիդեր Զ.Գամսախուրդիային[166]:

Երկրորդ տեղում էր նախկին կոմունիստներից կազմված «Ազգային համաձայնություն միասնություն»-ն լիդեր, ժողովրդատնտեսության ինստիտուտի ղեկավար Վալերիան Ադվաձեն Կոմունիստների պաշտոնական թեկնածու Ջեմալ Միքելաձեն մյուսները հավաքեցին ձայների չնչին տոկոսը:

Ջավախքի հայության շրջանում ընտրությունների ձայների թվի հարաբերակցության մասին կարելի է իմանալ նաև առանձին գյուղերի ընտրական տեղամասերի արձանագրություններից որոնցում նույնպես առաջին տեղում Զ.Գամսախուրդիան է, երկրորդում՝ Ադվաձե Վալերիանին, իսկ մյուսները հավաքել են ձայների չնչին տոկոս[167]:

Այս ընթացքում Վրաստանի կառավարությունը ստեղծեց բանակի կմախքը՝ Ազգային գվարդիայի տեսքով, որի թիվը հաս

---

[165] "Свободная Грузия" 2 июля 1991, N 117.

[166] Վերջինս ծնվել է 1939 թ Նրա հայրը Կոստանդինե Գամսախուրդիան, մեծ հայասեր և վրաց գրականության դասականներից էր Իր կյանքի ընթացքում Զ Գամսախուրդիան տարիներ անց է կացրել համակենտրոնացման ճամբարներում Ազատ արձակվելուց հետո գլխավորեց «Իլիա Բարեպաշտ» հասարակական կազմակերպությունը, ինչպես նաև իր անբաժան ընկերոջ Մերաբա Կոստավայի հետ միասին, եղել Հելսինկյան խմբի հիմնադիր Տես նույն տեղում·

[167] См.-Протокол – участковои избирательной комиссии о проведении выборов на избирательном участке Избирательный участок N 112, с. Турцх, Ахалкалакского рсиона.

[167] "Свободная Грузия", N 117, 02 07.1991 См -Протокол – участковой избирательной комиссии о проведении выборов на избирательном участке. Избирательный участок N 112, с Турцх, Ахалкалакского рсйона.

նում էր, ըստ վրացական աղբյուրների 15.000 հոգու: Այս թիվը մինչև աշուն նախատեսվում էր հասցնել 60.000-ի[168]:

Այսպիսով, անցնելով բոլոր վերոնշյալ փուլերով, ընտրական գործընթացների բովով, Վրաստանը բռնեց անկախացման ուղին:

Վրաստանում իշխանության գլուխ անցավ ընդգծված ազգայնականների մի վարչախումբ, որոնց վարած քաղաքական կուրսի ձախողումների արդյունքում երկիրը ներքաշվեց ազգամիջյան պատերազմների մեջ: «Վրաստանը՝ վրացիների համար» Զ.Գամսախուրդիայի որդեգրած կարգախոսը սվիններով ընդունվեց բազմազգ Վրաստանի էթնիկ փոքրամասնություններով բնակեցված մասերում: Հակառակ Վրաստանի կառավարող օղակների ներկայացուցիչների այն հայտարարությունների, թե «Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունները պետք է մշակութային ինքնավարություն ունենան, զարգացնեն թատրոնը, կինոն և այլն»[169], գործողության մեջ դրվեցին մի շարք ծրագրեր, ընդունվեցին բազմապիսի օրենքներ, որոնք բացահայտորեն հակասում էին նման հայտարարությունների բովանդակություններին: Երկրի որոշ նախկին ինքնավար կարգավիճակ ունեցող մարզեր (Աբխազիա, Հարավային Օսեթիա) պատերազմի միջոցով բռնեցին անկախացման ուղին: Ո՛չ իրավական, ո՛չ ռազմական ճանապարհով Վրաստանին չհաջողվեց (ու մինչ օրս չի հաջողվում) վերոնշյալ մարզերը ենթարկել իրեն. Աբխազիան չհամաձայնեց մնալ Վրաստանի կազմում՝ անգամ քաղաքական լայն ինքնավարություն ստանալու պայմանով:

Վրաստանի ազգային փոքրամասնություններով բնակեցված մեկ այլ երկրամասում՝ Սամցխե-Ջավախքում ևս վիճակն անկայուն էր: Սակայն այստեղ խոսքը վերաբերում էր ոչ այնքան քաղաքական ինքնավարության պահանջների, որքան Վրաստանի

---

168 "Свободная Грузия", N 117, 02.07.1991

169 Նույն տեղում

ընդունած հակահրավական, հակաժողովրդավարական և հակա Հայկական օրենքների դեմ պայքարելի մասին:

Երկրամասում իրավիճակի սրությունն այս շրջանում կապված էր շրջաններում պրեֆեկտների նշանակման հետ:

Պրեֆեկտուրայի ինստիտուտի ձևավորումից հետո Ջավախքում ազգությամբ Հույն Մացուկատովին պրեֆեկտ նշանակելուց առաջ բերեց Հայության շրջանում մեծ հուզումներ, որն ի վերջո կարող էր ունենալ անկանխատեսելի հետևանքներ: Չնայած այն հանգամանքին, որ պրեֆեկտների նշանակումը Գերագույն խորհրդի կողմից ինքնին հակասում էր ընտրության սկզբունքին, Ջավախքի բնակչությունը սկզբից ևեթ հույս ուներ, որ շրջանների պրեֆեկտները կլինեն գոնե Հայության շրջանում քիչ թե շատ հեղինակություն վայելող մարդիկ: Սակայն այս նշանակումներն արդեն այլ բան էին նշանակում: Մինչ մարտի 31-ի հանրաքվեն, չընդունելով պրեֆեկտուրայի իշխանությունը, մարտի 17-ին Ախալքալաքում տեղի ունեցած շրջանի տնտեսության ղեկավարների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ նիստում (որտեղ որոշվել էր նաև ԽՍՀՄ պահպանման մասին մարտի 17-ի հանրաքվեին չմասնակցել) որոշվեց հրավիրել լիազոր ներկայացուցիչների ժողով, որը շրջանը կղեկավարեր մինչև նոր ժողովրդավարական իշխանության ստեղծումը, որոշվեց նաև ստեղծել կազմկոմիտե, որը տեղերում պետք է անցկացներ ժողովներ՝ լիազորներ ընտրելու համար: Այս նիստում կոչ արվեց ժողովրդին բոյկոտել մարտի 31-ին կայանալիք տեղական մարմինների ընտրությունները, որովհետև մանդատները բաշխվել են ոչ ժողովրդավարական սկզբունքով[170]: Վերջում նաև կոչ էր արվում շրջանի քաղաքական, հասարակական, տնտեսական կազմակերպություններին, ինչպես նաև ազգաբնակչությանը՝ ենթարկվել նոր ստեղծված լիազորների ժողովների որոշումներին[171]: Փաստորեն սա մի յու-

---

[170] «Հայաստանի Հանրապետություն», 16.03.1991·

[171] Նույն տեղում·

բատեսակ «ժամանակավոր կառավարություն» էր՝ ժողովրդական Լիազորների խորհուրդ անունով, որը փաստացի դարձել էր ժողովրդի կամքն արտահայտող շրջանային իշխանություն: Խորհրդի մեջ մտնում էին 26 հոգի, նախագահն էր Սամվել Պետրոսյանը[172]: Զգիտես ինչու, Ջավախքում այս առթիվ շարունակվող հուզումները վրաց արտգործնախարար Գ.Խոշտարիան համարում էր «Գորբաչովի սարքած գործ» և մեղքը բարդում բացառապես Մոսկվայի վրա[173]:

Մինչ մարտի 31-ի հանրաքվեն Մացուկատովի՝ պրեֆեկտի պաշտոնից ազատվելուց հետո, շրջանում իրավիճակը չդադարեց սրված լինելուց, քանի որ նրա փոխարեն դարձյալ ժողովրդի կամքին հակառակ Ախալքալաքի շրջանի պրեֆեկտ նշանակվեց ապգությամբ վրացի, շրջխորհրդի բյուրոյի անդամ Վ.Մ.Ալելիշվիլին[174]:

Նախագահական ընտրությունների նախօրյակին, մասնավորապես Հայության շրջանում վստահություն ունենալու և հուզումները մեղմելու նպատակով Զ.Գամսախուրդիան մայիսի 25-ին Վ.Մ.Ալելիշվիլուն[175] փոխադրեց մեկ այլ աշխատանքի: Սակայն մեծ եղավ Հայության հիասթափությունը, երբ կարճ ժամանակ անց՝ հուլիսի 15-ին, Ախալքալաքի պրեֆեկտ նշանակվեց դարձյալ ապգությամբ վրացի, Ախալքալաքի շրջանի պետանվտանգության կոմիտեի նախկին նախագահ Վ.Ն.Ինասարիձեն[176], որը վերջին տարիներին նույն պաշտոնն է վարել Թիֆլիս քաղաքի Գործարանային շրջանում[177]:

---

[172] «Ազգ», 30 03.1991

[173] Նույն տեղում·

[174] См.- Обращение – Населения Ахалкалакского района президенту Республики Грузия гос. Звиаду Гамсахурдия, г Ахалкалак Հմմտ «Ազատամարտ», 02.05.1991·

[175] Վ Մ Ալելիշվիլու մայրը հայուհի է գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի քույրն է Տես «Երկիր» , 1-7 փետրվար, 2002.

[176] "Свободная Грузия", N 128, 16.07.1991.

[177] «Ազատամարտ», թիվ 21, 25.07.1991

Ջավախքում դեռ 1991 թ. փետրվարից ծայր առան հուզումները, բողոքի ցույցերը: Մեծ ցույց տեղի ունեցավ փետրվարի 12-ին՝ «Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության նախաձեռնությամբ, որին միացել էին նաև «Զարթոնք», «Դեմոկրատների միություն» և այլ հասարակական կազմակերպություններ

Հանրահավաքին մասնակցում էր շուրջ 5.000 մարդ: Իսկ փետրվարի 20-ին տեղի ունեցած ցույցի՝ Վրաստանի Գերագույն խորհրդին ուղղված բանաձևի մեջ ասվում էր. «Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշմամբ Ախալքալաքի պրեֆեկտ է նշանակվել մեկը, որը չի ընտրվել բնակչության ձայների մեծամասնությամբ, որն էլ օրինական բարկություն է առաջացրել ողջ բնակչության մեջ: Բազմահազարանոց ցույցի մասնակիցները, արտահայտելով շրջանի բնակչության կամքը, Վրաստանի Հանրապետության ղեկավարությունից պահանջում են վերանայել իրենց որոշումը՝ կապված Ախալքալաքի շրջանի պրեֆեկտի ընտրության հետ: Ցույցի մասնակիցները միաձայն բանաձև են ընդունել՝ «Եթե Վրաստանի Հանրապետության ղեկավարությունը հաշվի չառնի ժողովրդի վերոնշյալ պահանջները, ապա այստեղից բխող ողջ պատասխանատվությունը կընկնի Վրաստանի Հանրապետության ղեկավարության վրա: Միաժամանակ խնդրում ենք Ախալքալաքի շրջանի պրեֆեկտ նշանակել Սամվել Գեորգիի Պետրոսյանին.20.02.1991 թ.(ռուս.)»:

Մարտի 12-ին այս առթիվ Ախալքալաք ժամանեց Վրաստանի Գերագույն խորհրդի հատուկ պատվիրակությունը, որը հանդիպում ունեցավ «Ջավախք» ժողովրդական շարժման, Բոգդանովկայի «Փարվանա»[178] հասարակական կազմակերպության, հա-

---

[178] «Փարվանա» հասարակական կազմակերպությունը ծնունդ է առել Բոգդանովկայում 1989 թ, ժողովրդի շրջանում ազգային ինքնագիտակցության վերածննդի շրջանում, միտինգային թոհուբոհի մեջ: Կազմակերպությունը ակտիվորեն հակադրվեց նախ կոմունիստական, ապա զվիադիստական իշխանությունների նկրտումներին Համագործակցելով «Ջավախք» ժողովրդական շարժման հետ և ստանալով վերջինիս

սարակական այլ կազմակերպությունների, տնտեսությունների ղեկավարների, լիազոր ներկայացուցիչների, Ասպինձայի, Ախալցխայի, Ադիգենի շրջանների ղեկավարների հետ[179]:

Հանդիպմանը բարձրացվել են լայն հնչեղություն ունեցող հարցեր, այդ թվում՝ պրեֆեկտի նշանակման հարցը: Տեղի հայության կողմից կտրականապես մերժվել են Վրաստանի կողմից նշանակված պրեֆեկտները, փոխարենն առաջարկելով իրենց թեկնածուներին: Բարձրացվել են նաև Վրաստանի լեզվի մասին օրենքին վերաբերող հարցերը (այս մասին կխոսվի հանգամանալից առաջիկայում):

Ջավախքում մեկը մյուսի հետևից Զ.Գամսախուրդիային և շրջանի բնակչությանն էին շարունակում ուղղվել դիմումի բողոքներ, կոչեր, նամակներ, որոնցից առաջինից պահանջվում էր «իր խոսքերի տերը լինել» և շրջանում պրեֆեկտ նշանակել ժողովրդի կամքը արտահայտող մեկին, իսկ ժողովրդին կոչ էր արվում «...ցուցաբերել զգոնություն. բոլոր տեսակի խարդավանքների նկատմամբ և չնահանջել մեր արդարացի պայքարի դիրքե-

---

օժանդակությունը, «Փարվանա»-ն Բոգդանովկայի շրջանում (Գորելովկայում շուրջ 7 տասնյակ, Եֆրեմովկայում երեք տասնյակ, Օռլովկա, Սպասովկա, Կալինինո գյուղերում մեկական տասնյակ) տներ գնեց կարիքավոր հայ ընտանիքների, Գյումրիի երկրաշարժից տուժածների և այլոց համար: Դա այն ժամանակ էր, երբ «Մ Կոստավա» հիմնադրամը նույնպես սկսել էր վերոնշյալ գործընթացը (տներն ազատվում էին ռուս դուխոբորների այս շրջանից արտագաղթելու պատճառով): Ինչպես արտաքին (իշխանական) ճնշումների, այնպես էլ ավելի շատ իր անդամների միջև առաջացած հակասությունների պատճառով կազմակերպությունը 1990-ական թթ կեսերին փաստացի դադարեց գոյություն ունենալուց:

Վերջինիս անդամներից մեկի կողմից այս ընթացքում հիմնադրվեց Ջավախքի քաղաքական կյանքում քիչ թե շատ դերակատարություն ունեցող մեկ այլ կազմակերպություն «Օդան»: «Փարվանա» կազմակերպության կողմից 1991 թ հիմնադրվեց և հրատարակվեց «Փարվանա» անունով չորս համար թերթ Տես «Ջավախք», ապրիլ, 1995, N 3 (9), հմմտ Բոգդանովկայի շրջան: Տեղեկագիրք, էջ 99.

[179] «Հայաստանի Հանրապետություն», 16.03.1991:

րից, քանզի այն մեզ համար հզի է վտանգավոր հետևանքներով (մի կոչի[180] բովանդակությունից): Զ. Գամսախուրդիայի այս՝ բար հակասող քայլերը ավելի են ընդգծվում, եթե մեջբերեն նրա պատասխանը՝ փետրվարի 2-ին մամուլի ասուլիսում թղթակցի այն հարցին, թե՝ ինչպե՞ս եք գնահատում պրեֆեկտի ինստիտուտը և նրա նշանակման փաստը.«Ճիշտ չէ, որ շատերը պրեֆեկտն ընկալում են որպես դիկտատուրայի արմատավորում Այն շատ դեմոկրատական է. Պրեֆեկտը կնշանակվի համաձայն տեղի բնակչության շրջանում ունեցած ռեյտինգի»[181]:

Նշենք, որ նույն իրավիճակում էր նաև Հարևան Բոգդանովկայի շրջանը: Հետաքրքրական է, որ վրացական իշխանություններն այստեղ որդեգրել էին առավել «նուրբ» գործելաոճ այստեղ որպես պրեֆեկտի առաջին տեղակալ էր նշանակվել Հայազգի մի անձնավորություն, որի միջոցով փորձում էին իրականացնել իրենց հակահայ ծրագրերը: Հարկ է նշել, որ Բոգդանովկայի բնակչությունը չի ընդունել նաև պրեֆեկտի այս տեղակալին[182]: Անդրադառնալով Բոգդանովկայում ստեղծված իրադրությանը՝ Զ. Գամսախուրդիան ասել է, որ իրենք չեն կարող բավարարել հայերի պահանջը: Նա նաև այս առթիվ դիմել է Հայաստան Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին՝ հարցի միջամտելու խնդրանքով[183]: Ավելացանենք, որ Բոգդանովկայի շրջանի պրեֆեկտն էր ոմն Զազա Արձևանիշվիլին, որն ինչպես ժամանակին ցավով անդրադարձել է տեղական մամուլը, բացարձակ անծանոթ լինելով տեղանքին, ժողովրդին, նրա վարք ու բարքին, հիմնահարցերին, նույնիսկ չէր էլ հասկանում այդ ժողովրդի լեզուն[184] (մինչդեռ, ըստ Վրաստանի կառավարության որոշման, հավասարապես վրացերեն և հայերեն իմանալը պարտա

---

[180] Կոչը, ինչպես որոշ այլ փաստաթղթեր, չունեն նշված տարեթվեր:
[181] Նույն տեղում, 28 02 1991·
[182] «Ազատամարտ», 02 05 1991
[183] «Հայաստանի Հանրապետություն», 13.03.1991
[184] «Ասպնջակ», թիվ 9, 10 08 1991

դիր պայման էր Ջավախքում նշանակվելիք պրեֆեկտի համար)[185]:

Երկրամասի մնացած շրջաններն արդեն, անշուշտ, ունեին վրացի պրեֆեկտներ (օրինակ՝ Ախալցխայի շրջանում 1991 թ. օգոստոսի 17-ին պրեֆեկտ նշանակվեց՝ ազգությամբ վրացի Զ. Ի. Խարիսչարիշվիլին)[186]: Իսկ մինչ այդ Ախալցխայի պրեֆեկտն էր ոմն հոգևորական՝ հայր Թեոդորեն (աշխարհիկ անունով՝ Թամազ Ամբրոլաձե), որն իրեն համարում էր կոմունիստների դեմ ամենահամառ պայքարողներից մեկը[187]:

1991 թ. հունիսի 20-ին Ախալքալաք քաղաքից Վրաստանի Հանրապետության նախագահ Զ. Գամսախուրդիային, Գերագույն խորհրդի նախագահ Ա. Ասաթիանուն և վարչապետ Թ. Սիգուային ուղղված հերթական դիմումում պահանջվում էր մեկ շաբաթում լուծել պրեֆեկտուրայի ձևավորման հարցը, «...այլապես ձգձգումն է՛լ ավելի կբարդացնի ու կսրի իրավիճակը»[188]: Դիմում-նամակի տակ ստորագրել էին վեց կազմակերպությունների ղեկավարներ

1. Ժողովրդական Լիազորների խորհուրդ, նախագահ՝ Ս.Պետրոսյան.

2. Ռուսթավելու հասարակական շրջանային բաժնի նախագահ՝ Ս. Թեթվաձե

3. «Ջավախք» կոմիտե, նախագահ՝ Ա. Մանուկյան.

4. «Ջավախեթի» հասարակական կազմակերպության նախաձեռնող խումբ, նախագահ՝ Վ. Անանիաշվիլի.

5. «Դեմոկրատների Միություն» հասարակական-քաղաքական կազմակերպություն, նախագահ՝ Ա. Գրիգորյան.

---

185 Տես նույն տեղում

186 "Свободная Грузия", N 160, 25 08 1991.

187 «Ասպնջակ», թիվ 4, 15 04.1991

188 წერილი, საქართველოს რესპუბლიკის პრეზიდენტს ბატონ ზვიად გამსახურდიას.., 17 ივნისი, 1991 წელი, ქ. ახალქალაქი.

6. Գրողների շրջանային միություն, նախագահ՝ Յ. Մովսեսյան[189]:

Շուրջ մեկ ամիս անց՝ հուլիսի 20-ին, Ախալքալաքում տեղի ունեցավ Վրաստանի կառավարության ներկայացուցիչների, Հայաստանից այս նպատակով հրավիրված Դ. Վարդանյանի և նոր պրեֆեկտ Վ. Ինասարիձեի համատեղ հանդիպումը, որն անցավ փակ դռների հետևում[190]: Հանդիպումը, ինչպես և սպասվում էր, անցավ «անպտուղ», հարցի վերջնական լուծումը դարձյալ թողնվեց ապագային: Այդ շրջանում Ջավախքում ստեղծված իրավիճակի վերաբերյալ ընդարձակ տեղեկություն է պահպանվել Ժողովրդական Լիազորների խորհրդի հուլիսի 17-ին արված կոչի մեջ, որոնցից վերոնշյալ հանդիպման օրը փակցված էին քաղաքի պատերին: Անհրաժեշտ ենք համարում այն մեջբերել ամբողջովին. «Հայրենակիցնե՛ր, մեր ժողովրդի համար ճակատագրական այս վճռորոշ պահին, երբ ամբողջ էությամբ մեր ազգի առաջ ծառացել է իր հողի վրա լինելու կամ չլինելու հարցը, մեր շարքերում կան այնպիսի մարդիկ, որոնք կամ շահադիտական նպատակներից ելնելով, կամ էլ չըմբռնելով պահի ամբողջ լրջությունը, արհեստականորեն ուզում են բաժանել մեր ժողովրդի միասնությունը, դրանով իսկ խանգարել մեր արդար պահանջների լուծմանը:

Հարկավոր է, որ այսօր յուրաքանչյուր հայ, ով հասկանում և ըմբռնում է մեր գործողությունների տրամաբանությունը, իր մեջ ուժ գտնի և անդուլ կերպով մեր ժողովրդի տատանվող մասին բացատրի, թե ինչ հետևանքներ կունենա մեր նահանջը, մեր ժողովրդի կողմից թելադրված հիմնահարցերի արդարացի լուծման տեսակետից:

Եթե մենք այսօր տեղի տանք հետադիմական ուժերի ճնշմանը, ապա աստիճանաբար կկորցնենք այն ամենը, ինչը մեզ

---

[189] Նույն տեղում:
[190] «Ազատամարտ», թիվ 21, 25.07.1991:

հայ է պահում, ինչը մեզ պահում է որպես ազգ իր պատմական հողի վրա:

Հայրենակիցներ, մեր հակառակորդները ջանք չեն խնայում բոլոր միջոցներով պախարակել մեր շարժումը, բայց ճշմարտությունը պահանջում է, որ մեր ժողովուրդը ինքը որոշի, թե ո՞վ է իր իսկական թշնամին, իսկ ով է նրա ցավերի ու հոգսերի սատարը: Մեզ մեղադրում են, որ մենք պահանջում ենք անպայման հայ պրեֆեկտ, այն էլ մեկին: Դա կատարյալ սուտ է: Մենք Վրաստանի Գերագույն Խորհրդի քննարկմանն ենք ներկայացրել երեք թեկնածուների, բայց չնայած այն բանին, որ պարոն Գամսախուրդիան ազնվորեն խոստացել էր մեզ, որ կնշանակի մեր թեկնածուին պրեֆեկտի պաշտոնում, այդ բանը տեղի չունեցավ: Փաստորեն դուրս է գալիս, որ պարոն Գամսախուրդիան մոլորեցրեց մեզ, իսկ մենք խաբեցինք մեր ժողովրդին:

Չնայած այդ ամենին, հիմա էլ կանգնած ենք մեր դիրքերում և շարունակում ենք պայքարը մեր արդարացի պահանջների լիակատար իրականացման համար, որոնց մեջ պրեֆեկտի հարցը մանակի հարց է:

Բարեկամներ, հիմա մենք կշարադրենք այն հիմնադրույթները, որոնք կենսական նշանակություն ունեն Ջավախքը հայեցի պահելու գործում:

1.Վրաստանի Գերագույն Խորհրդի կողմից ընդունված օրենքները, դատավարության և դատակազմության, լեզվի մասին խիստ հակասում են Ջավախքի հայ ազգաբնակչության շահերին:

2. Նմանապես Վրաստանի նախկին Գերագույն Խորհրդի կողմից ընդունված օրենքը՝ գործավարության, լեզվի մասին, չի բխում Ջավախքում ապրող հայ ազգի շահերից:

3. Չնայած ժողովրդական լայն մասսաների բազմակի պահանջներին և շրջանի ժողպատգամավորների նստաշրջանի որոշմանը, մինչև օրս չի լուծվել հայ ժողովրդի պատմության դասավանդման հարցը հայկական դպրոցներում:

4. Քաղաքացիության մասին օրենքի մեջ տեղ գտած կասկածելի և մինչև վերջ չպարզաբանված կետերը մեր ազգին պահում են անորոշ վիճակում:

5. Վրաստանի իշխանությունների կողմից նախապատրաստվում են ակտեր, որոնք արգելելու են շրջանի քաղաքական և հասարակական կազմակերպությունների, շարժումների գործունեությունը:

6. Վրաստանի իշխանությունները իրենց ձեռքում ունենալով մասսայական ինֆորմացիայի միջոցների մոնոպոլիա՝ սիստեմատիկաբար հարձակումներ են գործում Ջավախքում գործող կազմակերպությունների վրա, դրանով իսկ թյուրիմացության մեջ են պահում Հանրապետության ամբողջ բնակչությանը:

7. Վերջին մի քանի ամիսների ընթացքում անօրինական գործողություններ են ծավալվել (պիկետներ, ճանապարհների շրջափակումներ, ծեծկռտուքներ, թալան, անգամ սպանություններ հայ բնակչության նկատմամբ). Ժողովրդի բողոքներին Վրաստանի իշխանությունները չեն արձագանքում:

8 Ժողովրդի արդար ցասումն է առաջացրել Վրաստանի կառավարության որոշումը Նինոծմինդայի շրջանը աքսորավայր դարձնելու մասին, որը հակասում է միջազգային օրենքներով ընդունված բոլոր նորմերին:

9. Արդարադատության նախարարության հրահանգով Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում արգելված է տների առ ու վաճառքը, բացի «Կոստավայի» ֆոնդից:

10. Մինչև օրս չի լուծված հողհատկացումների հարցը բնակարանային շինարարության համար, ինչպես շրջկենտրոնում, այնպես էլ գյուղերում:

11. Ինչպես տարիներ շարունակ, այնպես էլ ներկա պայմաններում չի ձեռնարկվում ոչ մի գործնական քայլ շրջանի սոցիալ-տնտեսական հարցերի բարելավման ուղղությամբ:

1986 թ. և նրա հաջորդող երկրաշարժերի և բնական այլ աղետներից տուժած բնակչությունը չի ստացել համապատասխան փոխհատուցում կամ նյութական օժանդակություն:

Օրինակի համար.

ա) չի գործում երկաթուղին:

բ) ճանապարհաշինարարական աշխատանքները գտնվում են անմխիթար վիճակում:

գ) չի լուծվում տարիներ առաջ խոստացված բնական գազի շրջան բերելու հարցը:

դ) պետական մակարդակով չեն առանձնացնում միջոցներ բնակարանային շինարարության համար:

ե) չպարզաբանված պատճառներով արգելված են շրջանում տեղակայված քարի վերամշակման արտադրամասերի աշխատանքները:

Հայրենակիցներ, ահա այն հիմնական խնդիրները, որոնք պետք է անպայմանորեն լուծվեն մեր շրջանում: Հակառակ դեպքում մենք չենք ունենա այն վստահությունը, որ կարողանանք բարգավաճել մեր հողի վրա:

Մենք կոչ ենք անում մեր ժողովրդին միահամուռ կերպով, մի բռունցք դարձած վճռականորեն պայքարել մեր արդարացի պահանջների իրականացման համար:

Ժողովրդական Լիազորների խորհուրդ.
ք.Ախալքալաք, 17 հուլիսի 1991 թ.»[191]*:*

Առաջ անցնելով նշենք, որ այս ամենն ի վերջո տվեցին իրենց արդյունքները.1991 թ նոյեմբերի 11-ին Զ. Գամսախուրդիան, հրամանագիր ստորագրեց Ս.Պետրոսյանին Ախալքալաքի պրեֆեկտ նշանակելու մասին[192]*: Այդ առթիվ, նոյեմբերի 18-ին Վրաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ Օ. Գրիգորաշվիլին և նրա հետ ժամանած այլ պաշտոնական անձինք Ախալքալա-*

---

[191] «Ազատամարտ», թիվ 21, 25 07 1991.

[192] **http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml**
Հմմտ «Ասպնջակ», 04 12.1991, թիվ 12·

քի շրջանի հիմնարկ ձեռնարկությունների, տնտեսությունների, ուսումնական հաստատությունների ղեկավարների և հասարակության ներկայացուցիչների համաժողովում ներկայացրին Ախալքալաքի շրջանի նոր պրեֆեկտ Ս.Պետրոսյանին[193]*:*

Այդուամենայնիվ, Ջավախքում չէին թուլանում ներքին դժգոհությունները՝ մի շարք հարցերի չլուծված լինելու պատճառով:

Հիմնախնդիրները, որոնց մասին խոսելու ենք ստորև, դարձյալ վերաբերում են Վրաստանի ընդունած օրենքներին, որոնք կոպտորեն խախտում էին ազգային փոքրամասնությունների իրավունքները և հակասում նրանց ազգային շահերին: Դրանցից առաջինը լեզվի մասին օրենքն էր, որի 13-րդ հոդվածում նշվում էր, որ դատավարությունը պետք է լինի վրացերեն լեզվով[194]*: Երկրամասի շրջանների բնակչությունը բազմիցս դիմում բողոքներ հղեց այս «անօրինական» օրենքի դեմ, պատճառաբանելով, որ բնակչության գերակշիռ մեծամասնությունը չի տիրապետում վրացերեն լեզվին. Բողոքների մեջ պահանջվում էր նաև, որպիսի դպրոցական ծրագիր մտցվի հայոց լեզու և հայոց պատմություն առարկաներ*[195]*:*

Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների բնակչությունը մեծ վրդովմունք ապրեց նաև Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումի հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետի փակման կապակցությամբ: Ջ. Գամսախուրդիային ուղղված դիմումի մեջ Շրջխորհրդի գործկոմի ներկայացուցիչները բողոքում էին, որ «...Ջավախքի հայ երիտասարդությունը փաստորեն դրանով զրկվում է Ախալցիխեում սովորելու հնարավորությունից...»[196]*:*

---

[193] «Ազատամարտ», թիվ 38, 20 11 1991

[194] См. – Обращение населения Ахалкалакского и Ниноцминдского районов Республики Грузия ко всем демократическим силам Грузии

[195] Обращение - населения Ахалкалакского района президенту Республики Грузия гос. Звиаду Гамсхурдия

[196] Обращения президенту Республики Грузия гос Звиаду Гамсхурдия

Վրաստանի Գերագույն Խորհուրդը վերոնշյալ շրջանների հայ բնակչության այս բոլոր հայցադիմումները բավարարեց «մասնակիորեն». 1991 թ. հուլիսի 25-ին Վրաստանի Գերագույն Խորհրդի որոշումով «պարզաբանում» մտցվեց Վրաստանի սահմանադրության 75-րդ հոդվածի կետերի մեջ: Որոշումով «բացատրվում էր», «...որ Վրաստանի սահմանադրության 74-րդ հոդվածով Վրաստանի ողջ տարածքում պետական լեզուն վրացերենն է: Ըստ այդմ պետական, հասարակական օրգաններում, կրթական, մշակութային և լուսավորչական այլ կազմակերպություններում որպես պետական լեզու օգտագործվում է վրացերենը: Միաժամանակ, 75-րդ հոդվածի 3-րդ կետով վերոնշյալ կազմակերպությունները ազատորեն կարող են օգտագործել այն լեզուները, որն օգտագործում է տեղի բնակչությունը: Սահմանադրության այս կետի հիման վրա պետական և հասարակական կազմակերպություններում, կուլտուր-լուսավորական և այլ տեղերում վրաց լեզվի շարքում կարող են օգտագործվել նաև ռուսերեն և հայերեն լեզուները»[197]:

Ջավախքում իրավիճակը սրելուն ուղղված Վրաստանի հաջորդ հակահայ որոշումը վերաբերում էր Նինոծմինդայի շրջանը աքսորավայր դարձնելուն: Այդ առթիվ վարչապետ Թ.Սիգուայի կողմից 1991 թ. մայիսի 23-ին իջեցվեց N 419 կարգադրությունը, որով նախատեսվում էր.

1.Հանրապետությունում ինչպես հիմնական, այնպես էլ երկարատև աքսորի վայր որոշել Նինոծմինդայի շրջանը.

2.Նինոծմինդայի շրջանի պրեֆեկտուրան պետք է հոգ տանի տվյալ թվաքանակով տեղափոխված մարդկանց բարօրության և աշխատատեղեր ստեղծելու համար.

3.Վրաստանի Հանրապետության Ներքին գործերի մինիստրությանը.

---

[197]. См Постоновление Верховного совета республики Грузия, 25 июля, 1991 г., г Тбилиси

ա) ապահովել Նինոծմինդայի շրջան տեղափոխված անձանց (խմբերի) նկատմամբ պատժի իրագործումը՝ ի նկատի ունենալով նրանց վրա սահմանված համապատասխան հսկողության չափը.

բ) դատապարտվածների տեղափոխության փորձերը Վրաստանի տարածքից դուրս դադարեցնել[198]*:*

Որոշումն իհարկե պատահական չէր: Նախ, որ հայաբնակ շրջանը շուտով կփոխեր իր էթնոժողովրդագրական պատկերը, հաջորդը, որ ապագայում ստեղծվելիք ոչ հայաբնակ տարածքը կդառնար բուֆերային, միջանկյալ գոտի՝ Ջավախքի և Հայաստանի Հանրապետության միջև, ինչը կդժվարացներ Ջավախքի հայության կապը մայր հայրենիքի հետ (այս մասին կխոսվի նաև առաջիկայում՝ կապված ռուս դուխոբորների խնդրի հետ): Եվ երրորդը, որ հանցագործ մարդկանց (խմբերի) ներկայությունն իսկ ինքնին մեծ վտանգ էր ներկայացնելու շրջանում, ինչը դառնալու էր լրացուցիչ կոնֆլիկտների ու բնակչության արտագաղթի խթանման պատճառ: Չնայած Նինոծմինդայի շրջանի պրեֆեկտ Զ.Արձևանիշվիլին հայտարարեց որոշման անիրականանալի լինելու մասին (այդ դեպքում Վրաստանի օրենքները ձևական՞ էին ընդունվում), Ջավախքի բնակչությունն այդ առթիվ բողոքներ հղեց վրացական վերին օղակներին, որոնցով պահանջվում էր վերացնել Նինոծմինդայի շրջանում աքսորի գոտի ստեղծելու որոշումը, որը «...Հայաստանի հետ շփման գծում ստեղծելու էր արհեստական էթնիկական խոչընդոտ»[199]*:*

Ավելացնենք նաև այն, որ 1991 թ. սկզբին նախկին Բոգդանովկան (առանց տեղի բնակչության կարծիքը հաշվի առնելու) վերանվանվել էր Նինոծմինդա[200]*: Ըստ 11-րդ դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովելու «Վրաց թագավորների և նախահայրերի*

---

[198] საქართველოს რესპუბლიკის მთავრობა, განკარულება N 419 გ, 1991 წლის, 23 მაისი, ქ., თბილისი. Հմմտ «Ասպնջակ», թիվ 9, 10 08.1991

[199] Обращение населения Ахалкалакского и Ниноцминдского районов Республики Грузия ко всем демократическим силам Грузии.

[200] «Ասպնջակ», թիվ 1, 25 03 1991, (թարգմանաբար նշանակում է «Սուրբ Նինո»)·

ու տոհմերի պատմության», Սուրբ Նինոն քրիստոնեություն է տարածել Վրաստանում, ըստ տեղեկությունների՝ հենց այս շրջանից: Թողնենք պատմական գեղեցիկ ավանդությունները և զրույցները: Նշենք միայն, որ Վրաստանն այս օրենքով «պըղծում էր» իր կողմից սուրբ համարված վայրը և մինչև օրս հայտնի չէ, թե ետ կանչվե՞լ է այն պաշտոնապես, թե ոչ:

«Վրաստանը վրացիներին» կարգախոսի իրականացմանն ուղղված հաջորդ օրենսդրական քայլը վերաբերում էր Սամցխե-Ջավախքի երկրամասում ժամանակավոր արտակարգ շտաբ ստեղծելուն: Դա կապված էր Արևմտյան Վրաստանում 1991 թ. ապրիլի 29-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետ, որի հետևանքով 90%-ով քանդվել էին բնակելի տները և մի քանի հազար մարդ մնացել էին անօթևան: Զ. Գամսախուրդիան 1991 թ. հուլիսի 26-ի իր հրամանագրով ստեղծելով վերոնշյալ արտակարգ շտաբը, ևս մեկ անգամ փորձ էր անում արհեստականորեն վերաբնակեցման միջոցով փոխելու երկրամասի ժողովրդագրական պատկերը՝ հօգուտ վրացիների: Իրոք, ժամանակավոր արտակարգ շտաբի (այսուհետև՝ ԺԱՇ) ստեղծումը մի յուրատեսակ «արտակարգ» ռեժիմ էր Սամցխե-Ջավախքի շրջանների համար: Ըստ ընդունված օրենքի տեղացիները զրկված էին տների առք ու վաճառքով զբաղվելու իրավունքից (այնպես, ինչպես մեկ տարի առաջ (1990 թ.27.08. N 05 / 02 հրամանագրով) արգելվում էր բնակչությանն իր սեփական տների առք ու վաճառքով զբաղվելու՝ այդ իրավունքը վերապահելով միայն Մ.Կոստավայի ֆոնդին): «Սամցխե-Ջավախքում տների գնումը իրականացնելու էր միայն ժամանակավոր արտակարգ շտաբը: Արգելվում է բյուրոյին (շրջանային - Վ.Ս.) կատարել տեխնիկական գույքագրում և նոտարական գրասենյակներին՝ ձևակերպել ու օրինականացնել այլ կազմակերպությունների և անձանց կողմից այդ շրջաններում գնված տները: ...Նինոծմինդայի, Ախալքալաքի, Ասպինձայի, Ադիգենի և Ախալցխայի շրջանների կոլխոզների և տնտեսությունների ղեկավարներին.ապահովել աշխատանքով ԺԱՇ-ի

կողմից ներկայացրած ընտանիքներին: Վերը նշված շրջանների ներքին գործերի բաժիններին.անհապաղ կարգավորել ԺԱՇ-ի կողմից ներկայացրած ընտանիքների գրանցման հարցերը և հսկողություն սահմանել նրանց անվտանգության ապահովման համար», նշված է հրամանագրում[201]:

Մանրամասնորեն հրահանգվում էր նաև Վրաստանի կառավարությանը՝ ԺԱՇ-ին տների գնման համար միջոցներ ապահովելու մասին: Սամցխե-Ջավախքի ժամանակավոր արտակարգ շտաբը ենթարկվում էր միայն հանրապետության նախագահին[202]: Մեկ ամիս անց՝ օգոստոսի 21-ին, հրապարակ իջավ Զ.Գամսախուրդիայի նոր հրամանագիրը՝ 1991 թ.հուլիսի 26-ից Սամցխե-Ջավախք ժամանակավոր արտակարգ շտաբի պետ նշանակել Կիրզո Գեորգիի Մելաձեին (օրգանական և ֆիզիկական քիմիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, քիմիական գիտությունների թեկնածու, «Ջավախեթի» ասոցիացիայի փոխնախագահ)[203]:

Նույն օրը նախագահի կողմից ստորագրվեց նաև «Ժամանակավոր արտակարգ շտաբին աշխատանքի ապահովման համար միջոցառումների անցկացման մասին» նոր հրամանագիրը, որով ԺԱՇ-ի համար աշխատանքային տեղեր էին հատկացվում՝ Նինոծմինդայի շրջանում (գյուղ Գորելովկա), Ախալքալաքի շրջանում (Ախալքալաքի շրջկոմի շենքում 1 սենյակ՝ Աջարիայում տարերային աղետներից տուժածների շտաբի համար), Ախալցխայում (շրջկոմի շենքում՝ 1 սենյակ)[204]: Հրամանագրով պահանջվում էր նաև Վրաստանի նավթարդյունաբերության կոմիտեից, Արդարադատության նախարարությունից, Նինոծմինդայի, Ախալքալաքի և Ախալցխայի կապի բաժիններից, Վրաստանի կառավարությունից, Բանկի Ախալցխայի բաժնից (յուրաքանչյուր իր ոլորտին համապատասխան) անհապաղ միջոցներ ձեռք առնել ԺԱՇ-ի գոր-

---

201 "Свободная Грузия", 27.07.1991.
202 Նույն տեղում
203 Նույն տեղում, 22.08.1991.
204 Նույն տեղում.

ծությանն օժանդակելու համար: Ինչպես նաև Վրաստանի կառավարությունից պահանջվում էր ԺԱՇ-ին ազատել տների ցնման համար պետական տուրք վճարելուց[205]:

Ինչպես տեսնում ենք, այս ընթացքում Վրաստանը հիմնավորապես նախապատրաստվեց վրացիների և աջարների՝ դեպի Մամցխե-Ջավախք վերաբնակեցմանը: Ինչպես և սպասվում էր, այս լուրը տեղում այնքան էլ «չողջունվեց»: Հետևեցին բողոքները՝ ուղղված Վրաստանի բարձր ատյաններին[206]: Դրանցում պահանջվում էր «ուժը կորցրած ճանաչել նախագահի 1991 թ. մայիսի 26-ի (պետք է լինի հուլիս-Վ.Ս.) հրամանագիրը». և արդարացիորեն նշվում էր այն հանգամանքը, որ այս երկրամասում 1986 թ. նույնպես եղել է մեծ երկրաշարժ, շատ մարդիկ կորցրել են տները, սակայն կառավարությունն այդ առթիվ դեռևս ոչինչ չի ձեռնարկել[207]: Դրան ավելացրած՝ 1991 թ. հուլիսին Ջավախքում տեղի էր ունեցել մեծ ջրհեղեղ (որի վնասը կազմում էր մոտ 4 մլն. ռուբլի), որը նույնպես մատնվել էր անուշադրության[208]:

Ռուսական «Վեստի» լրատվական ծրագրի հավաստմամբ, Վրաստանում՝ նախագահի հրամանագրով, ստեղծվել էր ժողովրդագրական հիմնադրամ, որը զբաղվելու էր Վրաստանից հեռացած քաղաքացիների տների ու բնակարանների գնմամբ: Մասնավոր անձանց արգելվում էր դրանց գնումը: Հաղորդման մեջ նշվում էր նաև, որ Վրաստանում ոչ պաշտոնական մակարդակով

---

[205] Նույն տեղում:

[206] Обращение населения Ахалкалакского и Ниноцминдского районов Республики Грузия ко всем демократическим силам Грузии.

[207] Обращение населения Ахалкалакского района президенту Грузии гос Звиаду Гамсахурдия .

[208] Решение общего собрания руководителей предприятий, учреждений, организаций, хозяств, общественно-политических организации, новоизбранных депутатов Сакребуло, президиум собрание – Д Рсткян, М.Гарибян, С.Петросян, А Иорданян, 31 07 1991 г., г Ахалкалаки.

արդեն կիրառվում է ազատվող տները գերազանցապես վրացիներին տրամադրելու քաղաքականությունը, որպեսզի սահմանափակվի ուրիշ ազգությունների ներկայացուցիչների ներհոսքը Հանրապետություն[209]:

Հետաքրքրական է, որ Զ. Գամսախուրդիայի 1991 թ. հուլիսի 26-ին ընդունած օրենքի դեմ բողոք են բարձրացրել նաև մեսխեթցի-թուրքերի համամիութենական «Վաթան» կազմակերպության ներկայացուցիչները, Սամցխե-Ջավախքի հողերը համարելով իրենցը: «Այդ հողերը (խոսքը Սամցխե-Ջավախքի շրջանների մասին է-Վ.Ս.) պատկանում են թուրքերին, և վրացիները իրավունք չունեն զբաղեցնելու այդ տարածքները»,- նշում էին 1991 թ. օգոստոսի 1-ին Մոսկվայում, Վրաստանի մշտական ներկայացուցչության առջև հավաքված ցույցի մասնակիցները պահանջելով իրենց տալ «կորցրած պատմական հայրենիքը»[210]:

Սամցխե-Ջավախքի երկրամասում չէին կարգավորված (կամ կարգավորված էին ոչ ճիշտ ձևով) նաև անտառտնտեսությունների և հողերի օգտագործման հարցերը: Կոնկրետ առաջին պարագայում, երբ Ախալքալաքի շրջանը 1988 թ. ուներ միջտնտեսական անտառտնտեսություն, շրջանի անտառների մեծ մասը (մոտ 5.000 հա մակերեսով) գտնվում էր Ասպինձայի անտառտնտեսության տրամադրության տակ: Սա առաջին հերթին դժվարացնում էր վերոնշյալ անտառտարածքների ճիշտ տնօրինումը (հեռավորության պատճառով). մյուս կողմից բնակչության շրջանում լուրջ դժվարություններ էր առաջանում այս անտառների օգտագործման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման գործում[211].

---

[209] «Ազատամարտ», 21.07.1991:

[210] "Свободная Грузия", 03.08.1991.

[211] См Обращение первому зам председателя правительства Республики Грузия гос М.Оманидзе /председатель президиума совета уполномоченных – Сетросян/.

Երկրորդ պարագայում, որտեղ հարցը վերաբերում էր բնակչության շրջանում հողօգտագործման խնդիրներին, Վրաստանի կառավարության կողմից արհեստականորեն ստեղծվել էին մեծ դժվարություններ՝ հողերի բաշխման գործընթացում: Բնակչությանն օրինականորեն չէր հատկացվում հողակտոր՝ տնամերձ այգիներ հիմնելու, բազմամյա բույսեր ցանելու, ինչպես նաև շինարարություններ կատարելու համար: Այս ամենի հետ կապված Ախալքալաքի շրջանի ագրոարդյունաբերության միավորումը նամակ ուղղեց Վրաստանի կառավարությանն առընթեր հողօգտագործման և հողշինարարության գլխավոր վարչությանը, որից ստացված պատասխանում նշվում էր, որ «Վրաստանի կառավարության որոշման համաձայն՝ առայժմ կանգ է առել հողերի բաժանորդագրությունը, մինչ նոր օրենքի ընդունումը, և այստեղ բացառություն չի նաև տնամերձ հողամասը: Միաժամանակ, գործող հողային կանոնադրության 79-րդ հոդվածի համաձայն տնտեսությունների դիրեկցիաները և կոլտնտեսությունների ընդհանուր ժողովները կարող են գյուղում ապրող և աշխատող բանվոր-ծառայողների, ուսուցիչների, բժիշկների և այլ մասնագետների ընտանիքներին տալ բանջարանոցային հողակտոր՝ ժամանակավորապես օգտագործելու համար[212]»: Ժամկետն էլ իր հերթին շատ կարճ էր՝ կես տարի (մինչև աշուն), ընդ որում դարձյալ արգելվում էր այդ փոքրիկ հողակտորների վրա կատարել շինություններ, բազմամյա տնակներ հիմնել, ցանկապատել և այլն[213]:

Մինչ պատմական այս երկրամասը դիմակայում էր Վրաստանի վերին օղակների ընդունած բազմապիսի հակահայկական օրենքներին, Հայաստան-Վրաստան միջպետական տարաբնույթ

---

212 საქართველოს რესპუბლიკის მინისტრა საბჭოთან არსებული მიწათსარგებლობისა და მიწათშოწყობის მთავარი სამმართველო «საქმთავარმიწათსარგებლობა», ახალქალაქის რაიონის აგროსამრეწველო გაერთიანებას, N 321, 12.04.1991 წ., ქ. თბილისი.

213 Նույն տեղում·

հարաբերություններում գրանցվում էին դրանց բարելավմանն ուղղված սկզբնական քայլերը: Այս առումով երկու երկրների միջպետական, դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանն ուղղված խոշոր քայլ էր 1991 թ. հուլիսի 27-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի այցը Թբիլիսի: Անկախության ուղին բռնած երկու երկրների ղեկավարների այսպիսի մակարդակի հանդիպում կայանում էր առաջին անգամ:

Հանդիպման ժամանակ ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների մասին» 7 հոդվածից բաղկացած խոշոր պայմանագիրը, որով «Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում են միմյանց պետական ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը, ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը» (հոդված 1)[214]: Պայմանագրի մյուս հոդվածները վերաբերում էին հասարակական հարաբերությունների մյուս ոլորտներին: Կարևոր էր նաև պայմանագրի 3-րդ հոդվածը, որով «Բարձր պայմանավորվող կողմերը միջազգային պրակտիկային համապատասխան հայտարարում են դիվանագիտական ներկայացուցչությունների փոխանակման մասին: Դրանց փոխանակման կարգը և ներկայացուցչությունների կարգավիճակը կհստակեցվեն հատուկ համաձայնագրով»[215]: Այս պայմանագիրը հանդիսանում էր դիվանագիտական հարաբերությունների սկիզբը: Նախատեսվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել առաջիկայում՝ դեսպանների մակարդակով[216]: Հանդիպմանն անդրադառնալով վիրահայերի մշակութային ինքնավարության խնդիրներին, Զ. Գամսախուրդիան նշել է. «Հայ ժողովուրդը, ինչպես և Վրաստանում ապրող ժողովուրդ-

---

[214] "Свободная Грузия", 30.07.1991.Հմմտ. «Հայաստանի Հանրապետություն», 30.07.1991, թիվ 161·

[215] Նույն տեղում:

[216] Նույն տեղում:

ները, ունի մշակութային ինքնավարություն, և ավելի պիտի խորանա և օրինական հիմք ստանա: Վրաստանում ապրող ոչ մի հայ չի կարող ասել, թե ինքը չի կարող խոսել հայերեն, թե չունի թերթ, դպրոց, թատրոն: Վրաստանում են ապրում և գործում հայ մտավորականներ, գրողներ. և եթե կան ինչ-ինչ խնդիրներ, ապա մենք հավատում ենք, որ դրանք կլուծվեն»[217]*: Անդրադառնալով Հայաստանի՝ Վրաստանի նկատմամբ ունեցած տարածքային հավակնությունների, ինչպես նաև Ախալքալաքում գինված խմբավորումների մասին հարցին, ՀՀ ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հրապարակեց Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը. «Վրաստանում բնակվող հայերը Վրաստանի լիարժեք իրավահավասար քաղաքացիներ են, որոնք պետք է իրենց լուման ներդնեն Վրաստանի պետության կերտման գործում, ապրեն Վրաստանի և վրաց ժողովրդի շահերով ու հոգսերով: Վրաստանի հայությունը չունի որևէ ազգային կամ քաղաքական պրոբլեմ, բայց վիրահայությունը, ինչպես և Վրաստանի բոլոր քաղաքացիներն ունեն սոցիալական, քաղաքացիական իրավունքներին վերաբերող խնդիրներ, նման պրոբլեմներ կան նաև Ախալքալաքում և Վրաստանի այլ հայաբնակ վայրերում, և ես համոզված եմ, որ այդ պրոբլեմները պետք է լուծվեն Վրաստանի օրենքների և սահմանադրության շրջանակներում՝ վրաց իշխանությունների և հայազգի քաղաքացիների միջև բանակցությունների, փոխզիջումների միջոցով»*[218]*:*

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում ստեղծված ծանր, էներգետիկ ճգնաժամի և շրջափակման պայմաններում, երբ գրեթե արտաքին աշխարհի հետ կապը միայն Վրաստանի միջոցով էր, Հայաստանի պատվիրակության ղեկավարին ստիպում էր աչք փակել վիրահայության և հատկապես Սամցխե-Ջավախքի հայության առջև ծառացած բազմաթիվ (սոցիալ-տնտեսականի հետ համատեղ) ազգային ու քաղաքական խնդիրների առջև, որոնք

---

[217] «Ազգ», 31.07.1991.
[218] Նույն տեղում:

առաջացել էին բացարձակապես Վրաստանի վարած ներքին քաղաքականության արդյունքում:

Ինչևէ, շուտով հրապարակվեց ՀՀ Գերագույն խորհրդի որոշումը՝ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների մասին պայմանագիրը վավերացնելու մասին[219]: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 13-ին, Հայաստանի Հանրապետության պառլամենտը միաձայն որոշում ընդունեց հարևան Վրաստանի (ինչպես նաև Մերձբալթյան երկրների) անկախության ճանաչման մասին[220]:

Հայաստանում սեպտեմբերի 21-ին նախատեսված անկախության հանրաքվեի կապակցությամբ Ջավախքի հայությունը կոչով դիմեց Հայաստանի ժողովրդին, որում մասնավորապես ասվում էր. «Հայրենակիցնե՛ր, մենք մեծ ափսոսանք ենք ապրում այն փաստի գիտակցումից, որ զրկված ենք համայն հայության համար վճռորոշ այս պահին Ձեզ հետ միասին Հայաստանի անկախության հանրաքվեին մասնակցելու հնարավորությունից: «...Ջավախքի հայ ազգաբնակչությունը մեծ հույս կապելով Ձեր ողջախոհության հետ, կոչ է անում ձեզ սեպտեմբերի 21-ին միահամուռ մասնակցել հանրաքվեին և միանշանակ ասել ԱՅՈ անկախ Հայաստանին»[221]:

Միաժամանակ շարունակում էր Ջավախքում իր գործունեությունը ծավալել «Ջավախք» ժողովրդական շարժումը, որն արդեն բավականին թվով հետևորդներ ու կազմակերպական կառույցներ ուներ շրջանի որոշ գյուղերում: Այն փորձում էր սերտ կապ հաստատել նաև Ախալքալաքում տեղակայված Ռուսական 62-րդ ռազմաբազայի ղեկավարության հետ՝ ձգտելով փոխադարձ

---

[219] "Свободная Грузия", 14 09 1991.Հմմտ «Հայաստանի Հանրապետություն», 13 09 1991

[220] "Свободная Грузия", 14.09 1991

[221] Տես Դիմում.Ախալքալաքի շրջանի հայության կողմից Հայաստանի ժողովրդին, 9 09 1991, ք Ախալքալաք

ուժերով հասնել շրջաններում կայունության հաստատմանն ու ամրապնդմանը[222]: Շարժման առաջնորդները կոչով դիմում էին շրջանի հասարակության լայն շերտերին՝ համախմբվելու շարժման շուրջ, միասնական պայքարելու առկա հիմնախնդիրների լուծման համար[223]:

Այդուհանդերձ, պայմանավորված մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններով, Շարժումը դեռևս հեռու էր համաժողովրդական լինելուց, այն ակտիվանում էր մերթ ընդ մերթ՝ կախված տիրող իրավիճակի սրությունից:

1991 թ. վերջին նախապատրաստական աշխատանքներից հետո, «Ջավախք» ժողովրդական շարժումը գումարեց իր երկրորդ կոնֆերանսը, ընտրվեց նոր խորհրդի կազմ՝ նոր նախագահությունով: Նախագահ ընտրվեց Ս. Հակոբյանը, տեղակալ՝ Ն. Կարապետյանը, քարտուղար Ա. Քամալյանը[224]: Կոնֆերանսի ընթացքում մեծ տեղ հատկացվեց Արցախին հատկացվող օգնություններին վերաբերող ծրագրերի կազմմանը, որոնք պետք է իրականացվեին առաջիկա ամիսներին:

Վերադառնալով Վրաստանում տիրող իրավիճակին և հայ-վրացական միջպետական հարաբերություններին՝ նշենք, որ այս շրջանում ակտիվացան նաև միջտնտեսական կապերը: Դրանք ամրագրվեցին շուտով ձեռք բերված նոր համաձայնագրով, որ ստորագրվեց Հայաստանի և Վրաստանի միջև՝ 1991 թ. դեկտեմբերի 13-ին, երբ մեկօրյա գործարար այցով Վրաստանում էր գտնվում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝

---

[222] См Справка-Для укрепления дальнейшей связи народного движения "Джавахк" с руководством контингента Российских войск Ахалкалаки.

[223] Տես «Ջավախք» ժողովրդական շարժման կոչը ուղղված Ախալքալաքի շրջանի ողջ աշխատավորությանը, տնտեսությունների և կազմակերպությունների ղեկավարներին, դպրոցների տնօրեններին, բանվորներին ու կոլտնտեսականներին, մտավորականության բոլոր ներկայացուցիչներին, 1991 թ.ք Ախալքալաք:

[224] Սմոյան Գ., նշվ.աշխ , էջ 42

փոխնախագահ, վարչապետ Գ. Հարությունյանի գլխավորությամբ[225]: Այցի շրջանակներում երկու երկրների վարչապետների միջև ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության 1992-1995 թթ. տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին, 17 հոդվածից բաղկացած մի խոշոր համաձայնագիր[226], որով կողմերը մտնում էին վերոնշյալ բնագավառներում միմյանց հետ սերտ փոխհարաբերությունների մեջ: 1991 թ.դեկտեմբերի 20-ին (ԽՍՀՄ փլուզման նախօրյակին) Վրաստանի անկախությունը ճանաչեցին Լիտվան և Ղազախստանը[227], իսկ մի քանի օր անց՝ դեկտեմբերի 26-ին, Վրաստանի անկախությունը ճանաչեց նաև ԱՄՆ-ը, թեև, ինչպես հայտարարում էր Ջորջ Բուշը, ԱՄՆ-ը դեռևս չէր պատրաստվում Վրաստանի (ինչպես և մյուս նորանկախ երկրների) հետ հաստատել սերտ դիվանագիտական հարաբերություններ[228]:

1991 թ. դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում տեղի ունեցավ Անկախ պետությունների համագործակցության մասին հռչակագրի ընդունումը՝ նախկին ԽՍՀՄ-ի 11 հանրապետությունների մասնակցությամբ[229]: Պայմանագրին չմիացան Մերձբալթյան երեք հանրապետությունները և Վրաստանը:

Իսկ այս ընթացքում Վրաստանը հայտնվել էր մի «անձև քաոսի» մեջ: Զ. Գամսախուրդիան, որը «աղոթում էր մարդկության, իր ժողովրդի համար»[230], իր վարած ոչ ճիշտ կադրային քաղաքականության պատճառով հայտնվեց ծանր կացության մեջ: Դեռ սեպտեմբերի 15-ին, ինչ-ինչ պատճառներով պաշտոնաթող եղավ Թ. Սիգուան[231], որն անցավ ընդդիմության շարքերը: Լուրջ

---

[225] "Свободная Грузия", 14 12 1991.
[226] «Հայաստանի Հանրապետություն», թիվ 271, 17.12.1991:
[227] "Свободная Грузия", 21 12 1991.
[228] «Հայաստանի Հանրապետություն», 27.12.1991.
[229] Նույն տեղում, 24.12 1991
[230] "Свободная Грузия", N117, 02.07.1991
[231] Նույն տեղում, N 175, 18.09 1991:

հակամարտություն առաջացավ նախագահի և Ազգային գվարդիայի ղեկավար Թ. Կիտովանու միջև. վերջինս օգոստոսի 24-ին ազատ արձակվելով նախագահի կողմից (քանի որ Զ. Գամսախուրդիան ցանկանում էր Ազգային Գվարդիան ենթարկել անմիջականորեն իրեն), պայքար էր սկսել նրա դեմ՝ երկրում ստեղծելով զինված ընդհարումներ: Երկրում ձևավորվել էր լուրջ ընդդիմություն, որի պարագլուխներ դարձան Թ. Կիտովանին (Ազգային Գվարդիայի նախկին ղեկավար), Թ. Սիգուան (նախկին վարչապետ) և Գ. Խոշտարիան (նախկին արտգործնախարար), Գեորգի Ճանթուրիան (Ազգային-ժողովրդավարական կուսակցության և Ազգային կոնգրեսի ղեկավար, արմատական անհաշտ ընդդիմության փաստական ղեկավար), որը Զ. Գամսախուրդիային և նրա գլխավորած «Կլոր Սեղան-ազատ Վրաստան» բլոկի կողմնակիցներին անվանում էր «նեոբոլշևիկներ»[232]:

Ընդդիմության շարքերում հանդես եկան Ազգային-դեմոկրատական կուսակցությունը, Ազգային ճակատը, Քրիստոնեա-դեմոկրատական միությունը, Ռուսթավելի ընկերությունը, «Մխեդրիոնի»-ին (բառացի՝ «Ձիավորների կոհորտա» [սերտախումբ], որը ստեղծվել էր 1989 թ. նոյեմբերի 24-ին՝ Զաբա Իոսելիանու գլխավորությամբ, որին դիտարկում էին որպես ապագա անկախ Վրաստանի բանակի կմախքը: Կազմակերպությունը «ռազմական կնունք» ստացավ Հարավային Օսեթիայում: 1990 թ. գարնանը «Մխեդրիոնի»-ից անջատվեց և առանձին կազմավորվեց «Թեթրի Գիորգի [Սպիտակ Գիորգի]» ընկերությունը, դառնալով իր տեսակի մեջ Զ. Գամսախուրդիայի անձնական գվարդիան: 1990 թ.սեպտեմբերին «Մխեդրիոնին» օրինականացվեց որպես «Փրկարարների կորպուս»)[233], Երիտասարդական ազգային կոնգրեսը, պատգամավորների մի մասը, այդ թվում՝ կոմունիստները: Զ.Գամսախուրդիայի հավաստմամբ այս գործո-

---

[232] «Հայաստանի Հանրապետություն», 18.09 1991·

[233] А.Ю.Скаков, Внутриполитическая ситуация в Грузии, /Грузия Проблемы и перспективы развития/, РИСИ, с 261

ղությունները ուղղորդվում էին դրսից, Է.Շևարդնաձեի խունտայի կողմից[234]:

Ուշագրավ է, որ երկրում ձևավորվել էր նաև մի միապետականների կուսակցությունը, որի նպատակը միապետական Վրաստանի ստեղծումն էր: Այն պայքարում էր Վրաստանում սահմանադրական միապետության հաստատման համար: Նրանց կողմից որպես օրինակ բերվում էին զարգացած երկրներ Անգլիան, Իսպանիան, Շվեդիան, Ճապոնիան: Նրանք ունեին նաև վրացական գահի ժառանգորդ-հավակնորդին՝ իշխան Գեորգի Բագրատիոնին, որը ապրում էր Իսպանիայում[235]:

Երկրի ներքաղաքական կյանքում հետզհետե մեծանում էր նախկին ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Է. Շևարդնաձեի դերը, որի պաշտոնավարությունից անմիջապես հետո ավելի հաճախակի դարձան նրա կողմից արված հայտարարությունները՝ Վրաստանի ներքաղաքական կյանքի վերաբերյալ: Մասնավորապես, Զ. Գամսախուրդիան նրան (ինչպես նաև Յակովլևին ու Գորբաչովին) մեղադրում էր Վրաստանում ընդդիմությանը, հրահրիչներին հովանավորելու մեջ[236]:

Այս պայմաններում 1991 թ.վերջին Վրաստանի ընդդիմադիր ուժերը ստեղծեցին Զինվորական խորհուրդ, որը տապալեց նախագահին և նրա վարչակազմը, դադարեցրեց սահմանադրության աշխատանքը, ազատ արձակեց պառլամենտը, մայրաքաղաքում մտցրեց արտակարգ դրություն և ձևավորեց ժամանակավոր կառավարություն[237]: *Կառավարության նախագահ դարձավ Թ. Սիգուան*[238]:

---

[234] Նույն տեղում, էջ 264

[235] «Հայաստանի Հանրապետություն», 11.01 1992

[236] "Свободная Грузия", 19.08 1991.

[237] Նույն տեղում, 10 01 1992

[238] Իրոք, ինչպես նշում էր այդ մասին ինքը Զ Գամսախուրդիան, Վրաստանում իշխանափոխության մեջ մեծ դեր ուներ Ռուսաստանը Վերջինս վախենալով Զ Գամսախուրդիա-Վ Արծինբա-Զ Դուդաև եռանկյունու մերձեցումից բխող, իր համար խիստ անցանկալի հետևանքնե-

Վրաստանի հակամարտող կողմերի՝ պաշտոնական իշխանության և ընդդիմության լիդերների հունվարի 1-ի և 2-ի դիմումների համաձայն, Հայաստանի կառավարական պատվիրակությունը հունվարի 2-3-ը Թիֆլիսում խաղարար առաքելությամբ հանդիպում ունեցավ հակամարտող կողմերի հետ: Շուտով ընդդիմության կողմից Զ. Գամսախուրդիային հնարավորություն տրվեց լքելու Վրաստանը և Ադրբեջանի տարածքով անցնել Հայաստան: Հունվարի 9-ին Զ.Գամսախուրդիան պաշտոնապես դիմել է ՀՀ նախագահին՝ խնդրելով իրեն, իր ընտանիքի անդամներին և թիկնապահներին տրամադրել ժամանակավոր ապաստարան: Որոշակի պահանջներ առաջադրելով (այն, որ Գամսախուրդիայի կողմից Հայաստանի տարածքը չպետք է օգտագործվի քաղաքական նպատակներով), ի վերջո, Հայաստանի կառավարությունն իր երկիր ընդունեց վրաց վտարանդի նախագահին[239]*:*

Աշխարհի, Հայաստանի և Վրաստանի տարբեր շրջանակներ տարբեր կերպ արձագանքեցին Վրաստանի վերոնշյալ իրադարձությունը: Հայկական ընդդիմության առանձին ներկայացուցիչներ, մասնավորապես ԱԻՄ-ի հիմնադիր-առաջնորդ Պարույր Հայրիկյանը, որն այդ օրերին մեկնել էր Թիֆլիս, ողջունել է Վրաստանի ընդդիմությանը՝ հաղթանակի կապակցությամբ:

Հետաքրքրական էր նաև նրա՝ մինչ այդ Վրաստանին ուղղված հեռախոսագիրը. «Թանկագին ընկերներ, մի՛ ուղարկեք մեզ մոտ Զ©Գամսախուրդիային: Մենք ունենք մերը (նկատի ուներ Լ. Տեր-Պետրոսյանին - Վ.Ս.)»[240]*:*

ԽՍՀՄ նախկին արտգործնախարար Է. Շևարդնաձեն նույնպես ԱՄՆ-ից (որտեղ նա գտնվում էր այդ ժամանակ) ողջունեց կատարվածի առթիվ ժամանակավոր կառավարությանը և հանրապետության օգնության ֆոնդին իր կողմից նվիրեց 100 հազար

րից, ձեռնամուխ եղավ Վրաստանում իշխանափոխության իր կողմից նախագծված սցենարի իրագործմանը

[239] Նույն տեղում, 16.01.1992.

[240] Նույն տեղում, 10.01.1992.

դոլար (որը, իր խոսքերով, կուտակել էր ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում կարդացած դասախոսություններից և հրատարակված գրքերից)[241]:

Ժամանակավոր կառավարության վարչապետ Թ.Սիգուան իր տված հարցազրույցում նշեց, որ Զինվորական խորհուրդը վերահսկում է իրադրությունն ամբողջ Վրաստանի տարածքում, բացառությամբ Զուգդիդիի, Փոթիի և Սուխումի[242]: Իսկ գլխավոր դատախազ Վախթանգ Ռազմաձեի հավաստմամբ հունվարի 4-ին դատախազության կողմից Զ.Գամսախուրդիայի նկատմամբ հարուցվել է քրեական գործ Վրաստանի քրեական օրենսգրքի 75-րդ (ազգամիջյան թշնամանք բորբոքելու), 96-րդ (պետական ունեցվածքի կողոպուտ մեծ չափերով), 186-րդ (պաշտոնական դիրքի չարաշահում) 257-րդ (մշակութային և ճարտարապետական հուշարձանների ոչնչացում) հոդվածներով[243]:

Շուտով հրապարակվեց Վրաստանի ժամանակավոր կառավարության դիմումը ՄԱԿ-ին և աշխարհի պետությունների կառավարություններին, որի մեջ մանրակրկիտ հիմնավորումներով մերկացվում էր նախկին վարչակարգի ողջ էությունը և հավաստիացվում էր, որ Վրաստանը շուտով անցում կկատարի դեպի լիակատար դեմոկրատիան[244]:

Առաջ անցնելով, մատնանշենք Վրաստանի «գահազուրկ» նախագահի հետագա ոդիսականը և ի վերջո՝ վախճանը: Ինչպես արդեն նշել էինք, հունվարի 6-ին անձնակազմով Հայաստան ժամանեց Զ.Գամսախուրդիան և ապաստանեց Իջևանում[245]: Շուրջ 10 օր Հայաստանում մնալուց հետո Վրաստանի նախագահն ինքնաթիռով հեռացավ Հայաստանից (ըստ որոշ տեղեկությունների՝ մեկնեց Գրոզնի)[246]: Ավելացնենք նաև, որ Զ. Գամսախուրդիան

---

[241] Նույն տեղում
[242] Նույն տեղում, 16.01.1992.
[243] Նույն տեղում
[244] Նույն տեղում
[245] «Ազգ», 08 01 1992·
[246] «Հայաստանի Հանրապետություն», 17 01 1992

Հայաստանից Վրաստան էր անցել Սամցխե-Ջավախքի տարածքով: Հետաքրքրական է, որ վերոհիշյալ երկրամասով անցնելու ժամանակ տեղի հայության կողմից բռնվել և զինաթափ է արվել նրա թիկնազորային ողջ զինված անձնակազմը. Ջավախքում ի սկզբանե սվիններով է ընդունվել ամեն մի վրացական զինված ներկայություն (դա ցույց տվեցին նաև 1998 թ. օգոստոսյան դեպքերը), անգամ «օրինական» նախագահի պարագայում: Շուտով լուրեր տարածվեցին այն մասին, որ նա ժամանել է դարձյալ Վրաստանի Զուգդիդի շրջան, որտեղ մեծ թիվ էին կազմում նրա կողմնակիցները: Այնտեղ տված հարցազրույցում Զ. Գամսախուրդիան իրավաքանորեն իրեն համարել է նախագահ. «Ճիշտ չէ, թե ես պաշտոնանկ եմ արված: Ես ընտրվել եմ ժողովրդի կողմից: ...Ջեմ պատրաստվում ես հեռանալ Վրաստանից»[247]:

Ի վերջո Զ. Գամսախուրդիան և նրա ընտանիքը ապաստան գտան Չեչնիայում: 1992 թ.փետրվարի 20-ին տեղի ունեցավ Չեչնիայի նախագահ Ջոհար Դուդաևի և Զ. Գամսախուրդիայի հանդիպումը Գրոզնիում[248]: 1992 թ.օգոստոսի 15-ին Զ. Գամսախուրդիան Գրոզնիից տարածեց մի հետաքրքրական հաղորդագրություն, որի մեջ ասվում էր վրաց ժողովրդից, Կովկասի ժողովուրդներից, աշխարհի ժողովուրդներից, բարի կամքի տեր բոլոր մարդկանցից՝ փրկել ցեղասպանությունից փոքրաքանակ, բազմաչարչար աբխազ ժողովրդին[249]: Հետաքրքրական է, որ նրա հաղորդագրության ստացումից մեկ օր առաջ՝ օգոստոսի 13-ին, լույս 14-ի գիշերը սկսվել էր վրաց-աբխազական պատերազմը[250]:

Ըստ տեղեկությունների, Չեչնիայի նախագահ Զ.Դուդաևը Զ. Գամսախուրդիայի տրամադրության տակ էր դրել մի հարմարավետ տուն՝ Գրոզնու կենտրոնում, որտեղ ապրում էր Վրաս-

---

[247] Նույն տեղում, 01.02 1992:
[248] Նույն տեղում, 20.02 1992:
[249] "Свободная Грузия", 01.01.1993.
[250] Скаков А. Ю , Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия Проблемы и перспективы развития/, РИСИ, с. 267.

տանի նախագահն իր կնոջ՝ Մանանայի և որդիների հետ՝ խիստ հսկողության պայմաններում[251]: Աքսորյալ վրացական մյուս դեմքերը՝ վարչապետը և խորհրդարանի նախագահը, տեղավորվել էին «Կովկաս» հյուրանոցում, որը նույնպես հսկվում էր զինվորականների կողմից:

1992 թ. մարտի 26-ին «Նեզավիսիմայա Գազետա»-ին տված հարցազրույցում Թիֆլիսին կարոտող և իրեն «ընդմիշտ նախագահ» համարող Զ. Գամսախուրդիան իր փոթորկահույզ կյանքի վերջին օրերը անցկացրեց Չեչնիայում: Ինքնասպան եղավ 1993 թ. դեկտեմբերի 31-ի գիշերը՝ այդպես էլ հրաժարական չտալով իր՝ նախագահի պաշտոնին: Ըստ որոշ տեղեկությունների՝ Զ. Գամսախուրդիայի դին հողին էր հանձնվել Արևմտյան Վրաստանի Զուգդիդ քաղաքին մոտակա Ջիխաշքարի գյուղին հարող տարածքում, որտեղ դեռևս մեծ թիվ էին կազմում նրա կողմնակիցների զինված խմբավորումները[252]: Մեկ ամիս անց, 1994 թ.փետրվարի 25-ին նախագահի աճյունը իր վերջնական հանգրվանը գտավ Չեչնիայի այն տարածքում, որտեղ վերջին երկու տարիները ապրել էր Զ. Գամսախուրդիան: Նրա հուղարկավորության արարողությանը մասնակցել էր նաև Չեչնիայի նախագահ Ջոհար Դուդաևը[253]:

---

[251] «Ազգ», 23.10 1992.
[252] «Հայաստանի Հանրապետություն», 14.01 1994.
[253] Նույն տեղում, 26.02 1994

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՋԱՎԱԽՔԸ՝ ԱՐՑԱԽԻՆ

Ջավախք, դյուցազուն քաջերիդ մատաղ,
Որ հերոսաբար հասել են Արցախ ..

Հայաստանի կողմից Ջավախքում առկա ծանր սոցիալ-տնտեսական, ազգային և քաղաքական բազմաթիվ հիմնախնդիրների անտեսումը ինչ-որ տեղ բացատրելի էր՝ պայմանավորված Լեռնային Ղարաբաղում ընթացող պատերազմական վիճակով: Քիչ թե շատ ազգային ինքնագիտակցություն ունեցող յուրաքանչյուր հայ այդ շրջանում քայլում էր Արցախյան դեպքերին համընթաց. Արցախի ազատագրումը դարձել էր համահայկական, համազգային գերխնդիր: Ադրբեջանցիների դեմ մղած ծանր, արյունալի մարտերից հետո 1992 թ. մայիսի 9-ին ազատագրվեց Շուշին, շուտով բացվեց նաև Լաչինի մարդասիրական միջանցքը, որով հայությունը հնարավորություն ունեցավ ցամաքային կապով հաղորդակից դառնալ Արցախին և հանդես բերել իր օգնությունը:

Ջավախքում նույնպես, չնայած սեփական ցավոտ հիմնախնդիրների առկայությանը, օրակարգում էր Արցախին օգնելու հարցը: Ինչպես արդեն վերը նշել ենք, Սումգայիթի և Բաքվի ջարդերը որակելով որպես ցեղասպանություն և այն խստիվ դատապարտելու և քաղաքական գնահատական տալու՝ ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդներին և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին ուղղված

պահանջից հետո[254], Ջավախքի ողջ ազգաբնակչությունը և նրա հետ նաև «Ջավախք» ժողովրդական շարժումը գործի լծվեցին:

Ինչպես վերը հիշատակել ենք, «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի նիստում դեռ 1990 թ. հունիսի 10-ին որոշվեց դրամական օգնություն ցույց տալ Արցախին, որի համար Մ. Թադևոսյանին հանձնարարվեց Ախալքալաքի պետբանկից 55 հազար և կազմակերպության դրամական միջոցներից 5 հազար ռուբլի առձեռն փոխանցել Արցախի «Ամարաս» բարեգործական միությանը և ներկայացնել համապատասխան փաստաթղթեր[255]:

Մինչ այս հարցերին անդրադառնալը, նշենք, որ Ջավախքի հայությունը մեծ օժանդակություն ցույց տվեց 1988 թ.դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժից տուժածներին: Փլատակների տակ մնացած բազմաթիվ որբացած ու անօթևան երեխաներ ապաստան գտան հյուրընկալ Ջավախքցու հարկի տակ: «Ջավախք» ժողովրդական շարժման նախկին նախագահներից, Ախալքալաքի Խանդո գյուղի բնակիչ Ս.Հակոբյանի հավաստմամբ, մարդասիրական օգնության ավտոշարասյունը (թվով 28 բեռնատար), որը Ջավախքից մեկնում էր Արցախ, լսելով աղետալի երկրաշարժի մասին, Թալինի շրջանից վերադարձավ Գյումրի: Երկրաշարժից անմիջապես հետո, երբ աշխարհը դեռ նոր-նոր էր լսելու ցնցող լուրը, Ջավախքյան այս օգնությունը ժամանակային առումով հանդիսացավ ամենաառաջինը: Չնայած երկրաշարժի պատճառած ահռելի վնասներին, տասնյակ հազարավոր զոհերին, ազգային-ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիրը՝ Արցախի հարցը մնաց օրակարգում, որի արդարացի լուծումից էր կախված Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագիրը: Այդ ամենի գիտակցումով էր, որ շուտով Արցախյան շարժման՝ որպես համազգային գերխնդրի շուրջը համախմբվեց

---

[254] Обращение – делегатов конференции организации "Народное Движение Джавахк" ко всем народам СССР и Верховному совету СССР

[255] Տես Արձանագրություն N 5, «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի նիստի, 10 06 1990 թ , ք.Ախալքալաք:

Սամցխե-Ջավախք-Թուրքի հայությունը՝ հանդես բերելով իր և՛ նյութական, և՛ ֆիզիկական մասնակցությունը:

Սումգայիթյան նախճիրը, Արցախի պատերազմը, աբխազական վանդալիզմը շատ հայերի դարձրին անօթևան և վերջիններիս ձեռքին կրկին հայտնվեց պանդխտության ցուպը: Գաղթականների ալիքը հասավ նաև Ջավախք: Միայն 1992 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին շուրջ 100 ընտանիք հանգրվանեց Ջավախքում. երկրամասում ստեղծվեց փախստականների հարցերով զբաղվող հատուկ հանձնաժողով[256]:

Շուրջ մեկ տարվա ընթացքում գաղթականները ոչ միայն տեղավորվեցին բնակարաններում, այլև ստացան պետական տեղական մարմիններից նպաստ՝ ավելի քան 4,2 միլիոն կուպոն: Դիլիսկայի, Խոսպիայի, Կարզախի, Հոկամի տնտեսությունները հայրենասիրական ըմբռնումով հյուրընկալեցին փախստականներին և զգալի նյութական օժանդակություն ցուցաբերեցին[257]: Ախալքալաքի շրջանի համարյա բոլոր տնտեսություններում, ուր հանգրվանել էին փախստականները, հողամաս հատկացվեց, որպիսի վերջիններս կարողանան հայթայթել ապրուստի միջոցներ:

Այս գործընթացում մեծ դեր ունեցան նաև երկրամասի հասարակական կազմակերպությունները:

Խոսելով նյութական աջակցության մասին, պետք է նշել, որ այս խնդրի լուսաբանման գործում մեզ մեծապես օգնում են այն բոլոր գրավոր շնորհակալագրերը, երախտիքի խոսքերով լի զանազան գրությունները, որոնք տրվել են երկրամասի բնակիչներին; նրա ներկայացուցիչներին, Ջավախքում գործող զանազան կազմակերպություններին, տնտեսություններին, հիմնարկ-ձեռնարկություններին, անհատ մարդկանց, առանձին գյուղերի՝ Արցախում և Հայաստանում գործող նմանատիպ կառույցների

---

[256] «Ջավախք» , Ախալքալաքի շրջանի «Արշալույս» բարեգործական կազմակերպության պաշտոնաթերթ, N 1, սեպտեմբեր, 1993:
[257] Նույն տեղում

կողմից: Ցավով պետք է նշել, որ այդպիսի գրությունները թեև ժամանակին շատ-շատ են եղել, սակայն շատ փոքր մասն է միայն պահպանվել բնակչության շրջանում, մնացածն անուշադրության պատճառով ժամանակի ընթացքում անհետ կորել է: Այդուհանդերձ, պահպանված տեղեկությունների և մամուլում տեղ գտած որոշակի հատ ու կենտ վկայությունների միջոցով կարելի է ընդհանուր առմամբ վեր հանել և պատմության էջ դարձնել վերոշարադրյալ իրադարձությունների սկիզբն ու ընթացքը:

Հետաքրքրական է, որ Ջավախքից օգնություններ են հասել Հայաստան և Արցախ՝ դեռ պատերազմի նախօրեին՝ 1988-1990 թվականներին, երբ հայերի նկատմամբ վայրագությունները մեծ չափերի էին հասել Ադրբեջանի հայաշատ վայրերում՝ Բաքվում, Կիրովաբադում և այլուր[258]:

1988 թ. մարտից Ջավախքում ամենուր սկսվեց նյութական միջոցների հանգանակում: Նույն թվականի հունիսի 1-ին Ախալքալաքի ճոպանուղու սարքավորումների գործարանի ավտովարորդ «Աբխազ» ժորայի սննդամթերքով բեռնված «Կամազ»-ը մտավ Երևան՝ Ազատության հրապարակ, որտեղից սննդամթերքը այլ տրանսպորտով հասցվեց Ստեփանակերտ[259]:

«Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության նախագահի տեղակալ Մ. Թադևոսյանի հավաստումը.«Անցած երկու տարվա ընթացքում (1988-1990 թթ. – Վ.Ս.) մենք՝ հազարավոր Ջավախքցի հայրենասերների բարեգործական օգնությամբ Հայաստանի տարբեր անկյուններ ենք տեղափոխել 138 ավտոմեքենա (13 մեծ ու փոքր շարասյուն), ավելի քան 1200 տոննա սննդամթերք և մեկուկես միլիոն ռուբլի Արցախի և Հարևան «ամենաինտերնացիոնալ» հանրապետությունից մազապուրծ մեր հայրենակիցների համար»[260]:

---

[258] Մովսեսովա Ի., Հովնանյան Ա , Բաքվի ջարդերը, Ե , 1992·
[259] «Ջավախք» N 1, դեկտեմբեր 1990.
[260] Նույն տեղում:

Սկիզբ առած մարդասիրական այս օգնությունների շարքը էլ ավելի մեծ թափ ստացավ 1990 թ. և հետագա տարիներին՝ մինչ Արցախի ազատագրման ավարտը: Այսպես՝ «Գթություն» հայկական բարեգործական միությունը ստացել է Ջավախքի Խանդո գյուղի նվիրատվությունը. 8.5 տոննա կարտոֆիլ, 550 գույգ բրդյա գուլպաներ[261]*:*

Նույն ժամանակ «Գթություն» հայկական բարեգործական միության «Ամարաս» արցախյան մասնաճյուղը «խորին շնորհակալություն է հայտնում (Ջավախքի – Վ.Ս.) Խանդո գյուղի բնակիչներին 2000 (երկու հազար) ռուբլու արժողության ձմեռային հագուստով արցախցիներին օգնելու համար»[262]*:*

Մեկ այլ շնորհակալագրով «ՀՀՇ (Հայոց Համազգային Շարժում – Վ.Ս.) վարչությունը (վարչության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի ստորագրությամբ) շնորհակալություն է հայտնում Ախալքալաքի շրջանի Ղադո գյուղի բնակիչներին, ցուցաբերած օգնության համար (130 պարկ կարտոֆիլ, 80 պարկ ալյուր)»[263]*:*

Ջավախքից օգնություն է հասել նաև Եղեգնաձոր (հարկ է նշել, որ այս ընթացքում արդեն Նախիջևանի կողմից կատաղի ռմբակոծությունների էին ենթարկվում Նախիջևան-Հայաստան սահմանային շրջանները. թեժ մարտեր էին ընթանում Երասխավանի շրջանում): «Մենք՝ Եղեգնաձորի ՀՀՇ-ի անդամներս, Ախալքալաքի Խանդո գյուղի «Ջավախք» կազմակերպությունից ստացանք 220 հատ գլխարկ, 19 հատ պլաշ (անջրանցիկ վերարկու –Վ.Ս.), 89 հատ տաք բաճկոն, 56 հատ տաք շալվար, 19 հատ սաղավարտ, որի համար ստորագրում ենք»[264]*: Պահպանվել է նաև*

---

[261] Տես Ստացական, «Գթություն» հայկական բարեգործական միության, 1 02 1990 թ, ք Երևան

[262] Տես Շնորհակալագիր, Գթություն հայկական բարեգործական միության «Ամարաս» արցախյան մասնաճյուղի, 1 02 1990 թ., ք.Ստեփանակերտ·

[263] Տես Շնորհակալագիր, ՀՀՇ վարչության, 06.08 1990 թ ք Երևան·

[264] Տես Ստացական, Եղեգնաձորի ՀՀՇ-ի խորհրդի, 01 03.1990թ , ք.Եղեգնաձոր

Ջավախքի նույն Խանդո գյուղի գյուղացիների անունների ցուցակը (83 անուն), որոնք Ղարաբաղի օգնության ֆոնդին են փոխանցել յուրաքանչյուրը որոշակի թվով գումար. Գումարի նոր չափը կազմում է 972 ռուբլի, որը հավասարեցված է ԱՄՆ դոլարի այն ժամանակվա փոխարժեքին՝ 972 դոլար:

Սկիզբ առած Արցախյան համընդհանուր պատերազմը նոր թափ հաղորդեց Ջավախքում տեղի ունեցող այս գործընթացին. Սամցխե-Ջավախքի շրջաններում, նաև հարևան Հայաբնակ Ծալկայի (Թռեղք) շրջանում այս նպատակով կազմակերպվեցին հանգանակության մարաթոններ: «Ախալքալաքի «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպությունը հանդես է գալիս նախաձեռնությամբ՝ Արցախի մեր հայրենակիցներին ձեռք մեկնելու և անելու հնարավոր ու անհնարինը մեր հերոս ժողովրդին օգնելու համար: Լիահույս ենք, որ Ջավախքցին գիտակցում է պահի կարևորությունը և կկարողանա սեղմ ժամկետում կազմակերպել վերոհիշյալ գործընթացը: Նախատեսվում է մինչև ապրիլի 20-ը (հավանաբար՝ 1991 թ – Վ.Ս.) կազմակերպել հանգանակության մարաթոն շրջանի բոլոր գյուղերում և քաղաքում, տեղերում կձևակերպվեն համապատասխան օգնությունները»[265]:

Ինչպես վերևը նշեցինք, Ծալկայի շրջանը նույնպես ընդգրկված էր այս ամենի մեջ: 1992 թ. օգոստոսի 23-ին Այազմա գյուղում տեղի ունեցավ հայ մեծանուն գուսան Հավասուն նվիրված հանդիսություն, որի ժամանակ կազմակերպվեց հանգանակություն՝ հօգուտ արցախցիների[266]:

Իսկ մինչ այդ՝ 1992 թ. մարտին, Վրաստանի Հայկական մշակութային բարեգործական ընկերության Ծալկայի մասնաճյուղի խորհուրդը շրջանի «Ժամանակի ձայն» թերթում հրապարակել էր կոչ, որով դիմել էր հայ համայնքին՝ կրկին կազմակերպելու նյութական և դրամական օգնություն՝ մարտնչող ղարաբաղցիներին: Շրջանի 13 հայկական գյուղերում ծավալվել էր

---

[265] Տես Կոչ, «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության
[266] «Հայաստանի Հանրապետություն», 12.07.1992.

հանգանակություն, որին մասնակից եղան նաև ծնունդով Մալկայից, բայց ԱՊՀ անդամ տարբեր պետություններում ապրող և աշխատող մարդիկ: Հանգանակության ժամանակ խոշոր գումարներ են նվիրաբերել Տյումենի մարզի պետտնտեսություններից մեկի տնօրեն Յուրի Նազարեցյանը, Լուգանսկում աշխատող Դիոգեն Բալյանը[267]: Այս անգամ Մալկայում հավաքել և ՀՀ-ի հատուկ ծրագրերի վարչությանն էր հանձնվել շուրջ 35 տոննա սննդամթերք և հագուստ, 40 հազար ռուբլի[268]: Բացի այդ, գյուղերում կար նաև պահեստավորված սննդամթերք, որը դեռ չէր տեղափոխվել Երևան՝ Արցախ ուղարկելու համար:

Շնորհակալագրերից մեկն էլ տրվում էր դարձյալ Խանդո գյուղի բնակիչներին անմիջապես ԼՂԻՄ-ի մինիստրների խորհրդի կողմից (խորհրդի փոխնախագահ՝ Ա. Գրիգորյանի ստորագրությամբ), որի մեջ խոսվում էր 4700 կգ կարտոֆիլի ստացման մասին, և այն մասին, որ դրանով շատ մարդիկ Ստեփանակերտում փրկվեցին սովից[269]:

Հաջորդ օրվա (1992 թ. մայիսի 26-ի) թվագրմամբ մեկ այլ շնորհակալագրով ԼՂԻՄ-ի մինիստրների խորհրդի նախագահ Օ. Եսայանը շնորհակալություն է հայտնում Ախալքալաքի շրջանի պրեֆեկտ Ս. Պետրոսյանին, «150 տոննա տարողությամբ 15 բեռնատարներով Արցախին կարտոֆիլ, հացահատիկ, ալյուր, պանիր, վառելանյութ և այլ մթերքներով բնակչությանն օգնություն ուղարկելու համար»[270]:

1992 թ. հունիս ամսվա ընթացքում, երբ ինչպես նշել ենք, արդեն ազատագրվել էր Շուշին և բացվել Լաչինի միջանցքը, երկու անգամ Ջավախքից Արցախ և Հայաստան հասան մարդասիրական օգնության բեռներով լցված բեռնատարների շարասյու-

---

[267] Նույն տեղում
[268] Նույն տեղում:
[269] См.– Совет министров Нагорно-Карабахской республики, письмо N 34, 25 мая,1992 г , г Степанакерт
[270] Տես Սմոյան Գ , նշվ.աշխ , էջ 34·

ները: Այդ մասին տեղեկություն է հաղորդում նաև Հայաստանյան մամուլը: Հունիսի առաջին կեսին Ախալքալաքի շրջանի 16 գյուղերից Լաչինի միջանցքով Ստեփանակերտ է տեղափոխվել 52 տոննա կարտոֆիլ, 14 տոննա հացահատիկ, 4.5 տոննա ալյուր, 7 տոննա դիզելային վառելանյութ և այլ ապրանքներ: 20 հազար ռուբլի էր փոխանցվել Լեռնային Ղարաբաղում զոհվածների և վիրավորների ընտանիքների օգնության հիմնադրամին[271]:

Հունիսի վերջին թվագրվող մեկ այլ շնորհակալագրում երախտիքի խոսքեր էր ասվում «Ջավախք» ժողովրդական շարժմանը կազմակերպված օգնության համար: Շնորհակալագրում նշվում էր բոլոր այն գյուղերի, կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և հաստատությունների անունները, որտեղ կազմակերպվել էր օգնության գործընթացը: Դրանք էին

1. գյուղ Խանդոն
2. գյուղ Խուլգումոն
3. Ախալքալաքի 174 ՊՏՈՒ-ն (Պրոֆտեխնիկական ուսումնարան)
4. Ախալքալաքի յուղպանրագործարանը
5. Ախալքալաքի արենդային մատակարարման կայանը
6. Ախալքալաքի քաղաքային խորհուրդը

«Սույն թվականի հունիսի 23-ին Ջավախքի վերոնշյալ գյուղերի և հիմնարկ- ձեռնարկությունների կողմից կազմակերպված Մեծ օգնության համար խորին շնորհակալություն ենք հայտնում այսօրվա դժվարին պատերազմական օրերին Արցախի քույրերին և եղբայրներին ձեռք մեկնելու համար: Արցախցիք երբեք չեն մոռանա իրենց Ջավախքցի քույրերի և եղբայրների օգնությունը»[272]: Շնորհակալագրի տակ ստորագրել են Ջարենցավանի Քաղաքային խորհրդի նախագահ Յու. Իշխանյանը,

---

[271] «Ազգ», 13 հունիսի, 1992:

[272] Տես Շնորհակալագիր, «Ջավախք» ժողովրդական շարժմանը, 24.06 1992

«Արցախ» պատգամավորական խումբը, «Վերադարձ» Հայրենակցական բարեգործական միությունը, «Ջավախք» ՀԲՄ-ի (Հայրենակցական բարեգործական միություն) Զարենցավանի մասնաճյուղի նախագահությունը: Շնորհակալագրին կից ստացականի մեջ նշվում է տրված 5780 կգ կարտոֆիլի, 15.320 կգ հացահատիկի, 200 կգ սպիտակաձավարի, 200 կգ հյութերի, մեծ քանակությամբ խալաթների, երկարաճիտ զինվորական կոշիկների, տաք (ձմեռային) հագուստեղենի և այլ անհրաժեշտ իրերի մասին:

1991 թ. դեկտեմբերի 30-ի շնորհակալագրով Հայաստանից Խ. Ստամբոլցյանը շնորհակալություն է հայտնում Ախալքալաքի շրջանի նորընտիր պրեֆեկտ Ս. Պետրոսյանին՝ փախստականներին, բռնագաղթվածներին 50 երկաթյա վառարանով ապահովելու համար[273]:

Բազմապիսի այսպիսի մարդասիրական օգնությունների կողքին Ջավախքի բնակչությունը ցուցաբերում էր նաև անհատական, ոչ փոքր չափերի օգնություններ: Օրինակ, մեր ձեռքի տակ է «Արցախ» Հայրենակցական ընկերության կողմից տրված կտրոնը, որի մեջ նշվում է Ախալքալաքի շրջանի Տուրցխ գյուղի բնակիչ Հակոբ Ավետիսյանի կողմից, իր անձնական հաշվից 1000 ռուբլի վերոնշյալ ընկերությանը նվիրաբերելու մասին:

Ջավախքյան մարդասիրական օգնությունները շարունակվում էին գրեթե մինչ պատերազմի ավարտը. 1994 թ. մարտի 21-ին Ջավախքից Արցախ հասավ մարդասիրական օգնության հերթական՝ թվով երրորդ ավտոշարասյունը, որն ուղեկցում էին «Ջավախք» ժողովրդական շարժման ներկայացուցիչները: Ջավախքի բնակչության կողմից այս անգամ Արցախ էր ուղարկվել շուրջ 55 տոննա կարտոֆիլ, 250 կիլոգրամ պանիր և 300 զույգ գուլպա[274]:

---

[273] Սմոյան Գ., նշվ աշխ., էջ 34:
[274] «Հայաստանի Հանրապետություն, 22.03 1994·

Ամփոփելով ջավախքյան օգնությունների այս շարքը, նշենք, որ Արցախին այդ օրհասական օրերին օգնության ձեռք էին մեկնել նաև Վրաստանի հայության այլ շրջաններից ստվար հատվածներ: Օրինակ, Մառնեուլի շրջանի Կարմիր գյուղի հայերը Արցախի օգնության ֆոնդին են փոխանցել 17.000 ռուբլի[275]:

Նույնիսկ, աբխազահայությունը, որը գտնվում էր նույնպիսի պատերազմական իրավիճակի մեջ, հոգատարություն էր դրսևորում իր հայրենակիցների նկատմամբ.Աբխազիայի Լեչկոպ գյուղի «Կոմիտաս» ընկերությունը Արցախի ինքնապաշտպանության ու տնտեսության զարգացման նպատակին էր տրամադրել 90 հազար ռուբլի[276]:

Հատկանշական է, որ ցուցաբերած օգնություններին վիրահայության և ջավախահայության մասնակցությանը փոխլրացնելու էր գալիս Արցախին նյութական օգնության տրամադրման մեկ այլ աղբյուր, որից բավական ինտենսիվ ձևով օգտվում էին Ջավախքի հանգանակության կազմակերպիչները: Դա Ախալքալաքում տեղակայված ռուսական ռազմաբազաներն էին, որոնց հետ համագործակցելով, ջավախքցիները հայթայթում և Արցախ էին ուղարկում զինվորական հագուստեղեն, կոշկեղեն, այլ իրեր: Վրացական առանձին գիտական և հասարակական լայն շրջանակների պնդումներն այն մասին, թե ռուսական ռազմաբազաներից ստացված զենքի շնորհիվ Ջավախքում ստեղծվել են զինված խմբավորումներ[277], իրականությանը չեն համապատասխանում: Զենքի և զինամթերքի ձեռքբերումն ու փոխադրումը բխում էր տվյալ ժամանակի պահանջներից և այն կարևոր նշանակություն ունեցավ արցախյան պատերազմում հաղթանակի հասնելու համար:

---

[275] Նույն տեղում, 17 04.1992

[276] Նույն տեղում, 17 04.1992·

[277] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე), გვ· 202.

Ջավախքի բնակչության ձեռքին ինչ-որ չափով (ոչ մեծ քանակությամբ) զենք և զինամթերք գտնվել է (մինչև 1990-ական թվականների կեսերը), սակայն դրանք ծառայել են բոլորովին այլ նպատակի: Նպատակներից մեկը, ինչպես նշեցինք, Արցախին օգնելն էր: Մյուս կարևոր պատճառը, որը ստիպում էր Ջավախքցուն ունենալ զինամթերք, դա Վրաստանի ներքաղաքական անվերահսկելի իրավիճակն էր, երբ ամբողջ Հանրապետության տարածքում վխտում էին զինված, հանցագործ խմբերը, և որոնք կարող էին ամեն վայրկյան մտնել Ջավախք և երկրամասում ստեղծել կոնֆլիկտային իրավիճակ. Ջավախքցու՝ զենք կրելու այս երկրորդ պարագան ուներ սոսկ ինքնապաշտպանական բնույթ (այս մասին կանդրադառնանք քիչ ուշ):

Բացի նյութական ու բարոյական աջակցությունից, բավականին շոշափելի էր նաև Ջավախքցիների ցուցաբերած մասնակցությունը Արցախյան ազատամարտին[278]: Ինչպես ճիշտ է նշվում ժամանակի հայկական մամուլում, «Ամեն ինչ Արցախի համար» կարգախոսը Ջավախքի ներքին կյանքի միակ ու անխախտ օրենքն է»[279]:

Արցախյան հերոսամարտում՝ ազատագրական պայքարին երկարատև ու գործուն մասնակցություն ունեցած, բացառապես Ջավախքցիներից կազմված ջոկատ չի եղել: Դա հավաստում են հերոսամարտին մասնակից Ջավախքցի առանձին ազատամարտիկներ: Տարբեր վկայություններով, Ջավախքցիների ոչ մեծ խմբեր կարճատև մարտեր են մղել Նոյեմբերյանի շրջանում (Տավուշի մարզ), նաև Ղուբաթլիի և Լաչինի շրջաններում[280]:

Ջավախքցիների՝ Արցախի պատերազմին մասնակցած անձանց թիվը կոնկրետ նշել հնարավոր չէ: Այդ մարդիկ այսօր էլ կան և շարունակում են ապրել Սամցխե-Ջավախքում և այլ վայրերում:

---

[278] «Մարտիկ», թիվ 37, սեպտեմբեր, 2001·
[279] «Ազատամարտ», թիվ 24, 12-18 յունիսի, 1992·
[280] Սմոյան Գ , Ճշվ.աշխ , էջ 44

Մասնակիցների հավաստմամբ շատ ջավախքցիներ մարտընչել են լեգենդար հրամանատար Պետոյի (Պետրոս Ղևոնդյան), Կարոտի (Կարոտ Մկրտչյան), Դուշման Վարդանի (Վարդան Ստեփանյան), Կոմանդոսի (Արկադի Տեր-Թադևոսյան) և այլոց ղեկավարած ջոկատներում, վաշտերում ու գնդերում:

Ջավախքում հավերժացվել է երիտասարդ-ուսանողներ Պետրոս Միքայելի Աբաջյանի (1965-1992), (Ջավախքի Վարևան գյուղից), Միսակ Անուշավանի Ադամյանի (1972-1993), (Սամցխե-Ջավախք երկրամասի Տաբածղուրի գյուղից) հիշատակը:

Պետրոս Աբաջյանը Երևանի Ճարտարապետական ինստիտուտի ուսանող էր[281], Միսակ Ադամյանը՝ Երևանի ֆիզկուլտտեխնիկումի[282]: Ե՛վ Վարևանի, և՛ Տաբածղուրիի միջնակարգ դպրոցները կրում են քաջարի երիտասարդների անունները: Իսկ գյուղերի մոտակա բարձունքներին վեր են խոյանում հերոսների (Պետրոսի և Միսակի) հիշատակները հավերժացնող հուշակոթողները:

Ծնունդով Գանձայից, այժմ երևանաբնակ Վարդ Ղազարյանը կատարել է շնորհակալ գործ՝ մեկ ամբողջական գրքով ի մի բերելով ջավախքցի բոլոր զոհված ազատամարտիկների կենսագրությունները[283]:

Գրքում բերված շուրջ 53 զոհերից, որոնք տեղ են գտել Վ.Ղազարյանի գրքում կան ինչպես ջավախքաբնակ, այնպես էլ հայաստանաբնակ և երևանաբնակ ջավախքցիներ:

Վերոնշյալ շարքից հարկ է հիշատակել այնպիսի մարդկանց, ինչպիսիք են 1989-1991 թթ. «Մալաթիա» երկրապահ կամավորական ջոկատի հրամանատար, մարտական և քաղաքական բարդ ուղի անցած Վահան Ջատիկյանը (ծնունդով Ջավախքի Լոմա-

---

[281] Ղազարյան Վ., Ջավախքի արծիվները Արցախի լեռներում, Ե., 2003, էջ 15:
[282] Նույն տեղում, էջ 21
[283] Ղազարյան Վ., նշվ.աշխ

տուրքիս գյուղից)[284], նույն ջոկատի ազատամարտիկ-հերոս Արարատ-Մխիթար Էլբակյանը (ծնունդով Ջավախքի Սուլդա գյուղից)[285] և այլք:

«Մալաթիա» ջոկատը Երևանում կազմավորված մնացած այլ ջոկատների հետ համատեղ, նրանց կողքին (դրանցից էին՝ «Սասունցի Դավիթ», «Մեծն Տիգրան», «Արաբո», «Արամո», «Արծիվ 28», «Արծիվ-1», «Արծիվ-33», «Ասպետ», «Սասնա ծռեր», «Կարիճ», «Մուշ», «Արաբկիր», «Նիկոլ Դուման», «Օդաչուներ», «Գարեգին Նժդեհ», «Զորավար Անդրանիկ», «Մահապարտներ» ջոկատները)[286], անցավ մարտական փառավոր ուղի:

Ջնայած ջավախքյան ծագումով հերոսներից շատերի դին հանգչում է Երևանի Եռաբլուր պանթեոնում, սակայն նրանց ծննդավայր-գյուղերում բազմաթիվ են վերջիններիս հիշատակները հավերժացնող հուշակոթողները, նրանց անուններով դպրոցները և այլն: Օրինակ, հայրենի Սուլդա գյուղում վեր է խոյանում հիշատակված լեգենդար հերոս Արարատ-Մխիթար Էլբակյանի հուշակոթողը[287]: Լոմատուրքիս գյուղի դպրոցը կրում է Վահան Ջատիկյանի անունը:

1995 թ. դեկտեմբերին, Խանդո գյուղի դպրոցի բակում կանգնեց նույն գյուղի ազատամարտիկ, 1994 թ.մարտի 27-ին Հորադիզում քաջաբար զոհված Ատոմ Ջիլավյանի կիսանդրին[288]:

Հատկանշական է, որ պատերազմի, դժվարին տարիներին Ջավախքը նույնպես զգում էր ֆիզիկական պաշտպանվածության կարիք:

Հայտնի են դեպքեր, երբ հանցագործ, իշխանությունների կողմից հովանավորվող, թալանչի խմբեր և խմբավորումներ փորձեր են արել թափանցելու Ջավախքի տարածք: Այդ նպատակով էր աՀա, Ջավախքի դեկավար ուժերի, «Ջավախք» ժողովրդա-

---

[284] Մուրադյան Ռ., Մեր երթի խաչակիրը ժողովրդի հետ, ժողովրդի սրտում, Երևան, 2001, էջ 30

[285] Մուրադյան Ռ , «Մալաթիա» ջոկատի լեգենդը, Երևան, 2005, էջ 20

[286] Նույն տեղում, էջ 55

[287] Նույն տեղում, էջ 163.

[288] «Ազգ», 13.12 1994, հմմտ Ղազարյան Վ., Նշվ.աշխ , էջ 127

կան շարժման և բնակչության կողմից ակտիվորեն կազմավորվեցին պաշտպանական խմբեր, որոնք այս գործում ունեցան քիչ թե շատ էական նշանակություն[289]*:*

Միաժամանակ, Ջավախքի տարբեր վայրերում անցկացվում էին փոքրիկ զինավարժություններ՝ փորձելով բնակչությանը և երիտասարդներին ծանոթացնել զենքի տարբեր տեսակների:

Այդպիսի մի բավականին մեծ չափերի զորավարժություն տեղի ունեցավ 1991 թ. հոկտեմբերին, Ճոբարեթիի անտառում, որին, ըստ որոշ տվյալների, մասնակցություն ունեցան շուրջ 450 մարտիկներ[290]*:*

---

[289] Այդ մասին տես **Բերակչյան Լ.Ա** , Ճշվ.աշխ , էջ 50-51:
[290] **Սմոյան Գ.**, Ճշվ.աշխ., էջ 45

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՌԵՂՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ՝ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (1992 Թ.-Ի ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

1992 Թ. մարտի 7-ին Վրաստան ժամանեց Է. Շևարդնաձեն: Խորհրդային Միության նախկին արտգործնախարարը Վրաստան էր վերադառնում սեփական ցանկությամբ: «Գուցե ես պարտվեմ, սակայն ես չէի կարող չվերադառնալ Վրաստան», հայտարարեց նա «Իզվեստիա» թերթի թղթակցին՝ Մոսկվայից հայրենիք վերադառնալուց անմիջապես հետո[291]: Սակայն այդ ժամանակի Վրաստանը այլ պատկեր ուներ, քան այն ժամանակ, երբ ինքն այդ երկրում աշխատում էր որպես ՊԱԿ-ի նախագահ և կենտկոմի առաջին քարտուղար: Նրա գալուց հետո կազմավորվեց Վրաստանի չընտրված Պետական խորհուրդը՝ գործադիր մարմինը, որի մարտի 10-ի առաջին որոշումով Պետխորհրդի նախագահ հաստատվեց Է. Շևարդնաձեն.սրանով Ռազմական խորհուրդը դադարեց գոյություն ունենալուց: Պետխորհրդի նախագահի տեղակալ դարձավ Ջաբա Իոսելիանին: Բացի Է. Շևարդնաձեից և Ջ. Իոսելիանիից, Պետխորհրդի նախագահության կազմում ընդգրկվեցին նաև վարչապետ Թ. Սիգուան, և նրա տեղակալ, պաշտպանության նախարար Թ. Կիտովանին: Ազգային անվտանգության նախարար դարձավ Ջ. Իոսելիանիի մերձավորներից՝ Ի. Բատիաշվիլին: Պետխորհուրդը, որը կազմվեց 20 վրացական կուսակցությունների

[291] «Հայաստանի Հանրապետություն», 08 07 1992·

56 ներկայացուցիչներից, կատարեց նաև պառլամենտի (օրենսդիր մարմնի) գործառույթները[292]:

Հաստատված արտաքին և հարաբերական կայունությունը խիստ պայմանական էր, քանի որ երկրի ներսում դեռևս շարունակվում էին նախկին նախագահ Զ. Գամսախուրդիայի կողմնակիցների ակտիվ գրոհները, որոնք վեր էին ածվում արյունալի բախումների: Այդպիսի գրոհներ տեղի ունեցան Մեգրելիայում (1992 թ ապրիլի 3-ին), Թբիլիսիում (1992 թ. հունիսի 24-ին), շուտով նորից Մեգրելիայում (1992 թ. հուլիսին) և այլն: Այս անկայուն իրադրությունը (սրան ավելացված նաև Հարավային Օսեթիայում ստեղծված ռազմական իրադրությունը) տարավ այն բանին, որ երկրում իշխող քաղաքական դեմքերը սկսեցին միմյանց ներկայացնել փոխադարձ մեղադրանքներ· Ընդգծված հակասություններ առաջացան հենց Է.Շևարդնաձեի և Թ. Կիտովանու միջև, որոնք իշխանությունը տարան հայացքների երկբևեռվածության.մի կողմում կանգնած էին Է.Շևարդնաձեն և Զ.Իոսելիանին (որոնք, ի դեպ, հետագայում նույնպես պետք է հեռանային իրարից), մյուս կողմում՝ Թ. Կիտովանին և Թ. Սիգուան[293]:

Ի դեպ, ընդհանուր գծերով ներկայացնելով Վրաստանի ներքաղաքական իրավիճակը, հարկ ենք համարում մի քանի խոսքով անդրադառնալ մի մարդու մասին, որը իր անցած կյանքի ողջ ուղով մեծ ազդեցություն թողեց Վրաստանի քաղաքական ճակատագրի որոշման գործում: Խոսքը «Մխիդրիոնի» ռազմականացված կորպուսի հիմնադիր-նախագահ, այս շրջանում Վրաստանի Գերագույն խորհրդի փոխնախագահ Զ.Իոսելիանու մասին է. Վերջինս էթնիկ պատկանելությամբ սվան էր, իսկ սվաններն ինչպես գիտենք հին լեռնական ժողովուրդ են, որոնց հատուկ է լեռնականներին բնորոշ բնավորության սուր գիծը: Ծնվելով 1924 թ., նա արդեն 16 տարեկանում դարձել էր հանցագործ աշ-

---

[292] Скаков А Ю , Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия Проблемы и перспективы развития/,РИСИ, с 267

[293] Նույն տեղում

խարհի առաջնորդ, համամիութենական ճանաչում ունեցող «օրենքով գող»: Նա երկար տարիներ անցկացրել է բանտերում և ճամբարներում՝ դատապարտված լինելով թալանի և սպանության մեղադրանքներով: 35 տարեկանում դուրս գալով կալանավայրից, Իոսելիանին ավարտել է միջնակարգ դպրոցը, ստացել է բարձրագույն կրթություն, պաշտպանել է թեկնածուական և դոկտորական թեզեր.ստացել է արվեստագիտության դոկտորի աստիճան, դասավանդել է Թբիլիսիի բարձրագույն թատերական ուսումնարանում: Նա մի քանի պիեսների հեղինակ էր, որոնք բազմիցս բեմադրվել են: Նա ֆանտաստիկ հեղինակություն էր վայելում երիտասարդության շրջանում և բարեկամություն էր անում վրացական մտավորականության նշանավոր ներկայացուցիչների հետ: Վերլուծաբանների կողմից նշվում էր նաև, որ նա ՊԱԿ-ի գործակալ էր, որի միջոցով Անդրոպովը վերահսկել է Վրաստանի հանցագործ աշխարհը: Վերջին հանգամանքով էլ փորձում էին բացատրել նրա հաջողությունները գիտության բնագավառում, ասելով, որ նրա բոլոր գիտական աշխատություններն ու թատերական պիեսները գրված են ՊԱԿ-ի աշխատանոցներում:

1989 թ. ապրիլի 9-ի ողբերգական դեպքերը Ջ. Իոսելիանիին հանգեցրին այն հետևության, որ հարկավոր է զինված կազմավորում ստեղծել ազգի պաշտպանության համար: Այս նպատակով շուտով ստեղծվեց «Մխեդրիոնի» ջոկատը, որի հրամանատար դարձավ Ջ. Իոսելիանին: Ըստ նրա՝ «մենք չենք ենթարկվում քաղաքական որևէ ուժի և պետական կառույցի, այլ ծառայում ենք ազգի շահերին: Մենք ազգամիջյան հակամարտություններին կմասնակցենք խաղաղ բնակչությանը պաշտպանելու համար»[294]:

Ստեղծված Գերագույն Խորհրդում Ջ. Իոսելիանին ստանձնեց վրաց-աբխազական հակամարտության կարգավորման հանձնաժողովի նախագահի պաշտոնը, եղավ նաև ԺՆԽում, աբխազա-

[294] Տես «Հայաստանի Հանրապետություն», 10.02.1994:

կան կողմի հետ վարվող բանակցություններում՝ Վրաստանի պատվիրակության ղեկավար.

1992 թ.հունիսին Վրաստանի նախարարների կաբինետը հաստատեց Ջ. Իոսելիանիի գլխավորած «Մխեդրիոնի» փրկարարական կորպուսի կանոնադրությունը: 1992 թ. աշնանից կորպուսը մտավ վրացական բանակի կազմի մեջ:

1994 թ. փետրվարին. Թբիլիսիի օպերայի թատրոնում ժողով գումարելով «Մխեդրիոնի» ռազմական ջոկատի ղեկավարությունը զեկուցելով իր անցած գործունեության մասին, որոշում ընդունեց իր կառույցները ապառազմականացնելու մասին: Դրանից հետո «Մխեդրիոնի» կազմակերպության հիման վրա կազմվեցին փոքր փրկարարական ջոկատներ:

1995 թ. նախագահական ընտրություններում, «Ընտրություններ» կոչվող քաղաքական կազմակերպության կողմից, որպես պաշտոնական առաջին թեկնածու գրանցվեց նաև Ջ. Իոսելիանու անունը: Սակայն «ծեր մոջահեղը», ինչպես նրան ընորոշում էին այդ ժամանակներում, ընտրություններին հաղթանակելու շատ քիչ երաշխիքներ ուներ: Սակայն այդ ամենը ընդհանրապես չէր մտահոգում նրան և նա մինչև իր փոթորկուն կյանքի մայրամուտը դուրս չեկավ քաղաքական պայքարից[295]*:*

Վերադառնալով 1992 թ. նշենք, որ երկիրը հայտնվել էր ծանր, գրեթե անելանելի դրության մեջ: Ինչպես այդ մասին դիպուկ է նկատել ավանդապահների միության նախագահ Ակակի Ասաթիանին (որը Գամսախուրդիայի օրոք Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահն էր), որ «մենք հին խորհրդային համակարգը քանդողները եղանք, սակայն ոչինչ չկարողացանք ստեղծել դրա փոխարեն: Մենք ցրեցինք ոստիկանության ուժերը՝ կոմունիստների հետ ունեցած կապերի համար, իսկ դրա արդյունքում ստացանք հանցագործության աճ»[296]*:*

---

[295] Նույն տեղում, 23.04.1993, նույն տեղում, 13 10 1994, «Ազգ», 8.09.1995·

[296] «Հայաստանի Հանրապետություն», 08 07.1992.

Է. Շևարդնաձեի և նրա շուրջը եղած մարդկանց ձևավորված իշխանական ապարատում թեև մեծ թիվ էին կազմում Ռուսաստանի նկատմամբ սուր արտահայտություններ հնչեցնող քաղաքական լիդերները, այդուհանդերձ արդեն նկատվում էր չափավորում այս ամենին: Համեմատության մեջ դնելով Զ Գամսախուրդիայի վարած քաղաքականության հետ, հստակորեն ընդգծվում է Է. Շևարդնաձեի վարած չափավոր ազգայնական քաղաքականությունը՝ հատկապես Ռուսաստանի պարագայում: Դա երևում է հատկապես Ռուսաստանի ռազմական բազաների՝ Վրաստանի տարածքում գտնվելուն ուղղված առանձին քաղաքական գործիչների չափազանց մեղմ արտահայտությունների մեջ: Մասնավորապես, Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիկվաիձեի խոսքերով[297], «...նախկին նախագահի օրոք անգամ օրենք էր ընդունվել այն մասին, որ ռուսական բանակն անհապաղ պետք է հեռանա Վրաստանի տարածքից: Ախր ճիշտ մոտեցում չէ դա: Այստեղ սահմաններ կան: Ինչպե՞ս կարող ենք մնալ առանց այդ սահմանների հուսալի պաշտպանության երաշխիքների: Ես օրինակ, գտնում եմ, որ ռուսական բանակը պետք է մնա Վրաստանում»[298]:

Այդուհանդերձ, Վրաստանի անդամակցությունը ԱՊՀ-ին երկրի բոլոր քաղաքական դեմքերը համարում էին գրեթե առժամանակ անհնարին: Է. Շևարդնաձեն այս փաստը բացատրում էր այն բանով, որ «Վրաստանը ԱՊՀ-ին հրաժարվում է անդամակցելուց այն պատճառով, որ հանրապետությունում հանրային կարծիքը առարկում է դրա դեմ: Մենք այդ գործընթացում

---

[297] Վերջինս երկար տարիներ աշխատել է Վրաստանի և ԽՄԿԿ Կենտկոմի ապարատներում, դիվանագիտական ակադեմիան ավարտելուց և դոկտորական թեզը պաշտպանելուց հետո աշխատել է այդ բնագավառում Բոմբեյում, Լոնդոնում, Քենիայում· Վերջին երեքուկես տարվա ընթացքում Հոլանդիայում ԽՍՀՄ լիազոր դեսպանն էր· Տես նույն տեղում, 15 05 1992

[298] Նույն տեղում

դեռևս չենք ուզում հապճեպ որոշումներ ընդունել»[299]: Մեկ այլ հարցազրույցում անդրադառնալով Ռուսաստան-Վրաստան հարաբերություններին, Է. Շևարդնաձեն մասնավորեցրել է «Ապագայում Ռուսաստանի և Վրաստանի հարաբերությունները պետք է կառուցվեն իրավահավասար հիմքի վրա: Կարծում եմ, որ սա լավ է հասկանում նաև Բ. Ելցինը, թեև նա հապաղում է Վրաստանի դիվանագիտական ճանաչման խնդրում»[300]:

Մյուս կողմից, Վրաստանի՝ ԱՊՀ-ին չանդամակցելը Վրաստանի որոշ քաղաքական շրջանակներ կապում էին նաև ԱՊՀ-ի տարածքում առկա կոնֆլիկտային իրադրությունների հետ. «...ԱՊՀ-ում սկսված գործընթացները, ցավոք չընթացան այն ճանապարհով, որը նախընտրելի էր: Ձևավորվեցին և շարունակում են ստեղծվել կոնֆլիկտային իրավիճակներ: Այդ իսկ պատճառով մենք պատրաստ չենք ԱՊՀ-ի մեջ մտնել», - նշվում էր արտգործնախարար Ա. Ջիկվաիձեի հարցազրույցում[301]: Միաժամանակ Վրաստանը այս ընթացքում ձգտում էր հումքի ձեռքբերման և իր ապրանքների իրացման համար այլընտրանքային շուկաներ որոնել, մինչ որ ի վերջո ասպարեզում հայտնվեց նրա ապագա ավագ պարտնյորը՝ Թուրքիան:

Ինչևէ: Հարավային Օսեթիայում շարունակվում էին զինված, արյունալի ընդհարումները, որի մեջ վրացական և ռուսական կողմերը անընդհատ մեղադրում էին միմյանց, շարունակվում էին նաև արյունալի բախումները նաև երկրի այլ շրջաններում, որոնց մեջ ակտիվորեն ներգրավված էին նաև ռուսական խաղարարար ուժերը, որոնք բազմիցս հարձակման էին ենթարկվում վրաց ազգային գվարդիականների կողմից: Շարունակվում էին ցնցումները նաև Աբխազիայում, երկաթգծի շրջանում, թեև այստեղ պատերազմը դեռևս «պաշտոնապես» սկսվեց միայն 1992 թ. օգոստոսի 13-ի (լույս 14-ի) գիշերը, երբ Պետխորհուրդը

---

[299] Նույն տեղում, 21 03 1992:
[300] Նույն տեղում, 16.04.1992
[301] Նույն տեղում, 15 05 1992:

հրաժարվեց Վրաստանի ֆեդերալիզացիայից և որոշեց «աբխազական հարցը» լուծել ռազմական ճանապարհով[302]:

Վերոնկարագրյալ համատեքստում փորձենք լուսաբանել այն ամենը, ինչը կատարվում էր Սամցխե-Ջավախքի երկրամասում:

Թեև Վրաստանում իշխանությունը փոխվել էր, սակայն քաղաքական կուրսի դրսևորումները, որ առկա էին Զ. Գամսախուրդիայի ազգայնական իշխանության օրոք, շատ քիչ էին տարբերվում Է. Շևարդնաձեի կողմից «ստեղծվող» «հանրապետական» երկրի վարած քաղաքականությունից:

Դեպի համընդհանուր սեփականաշնորհում գնացող երկրում, երբ գյուղացուն էր հանձնվում հողը Վրաստանի կառավարության կողմից ընդունվու էին օրենքներ, որոնք այդպես էլ չէին կարգավորում, և ընդհակառակը, է՛լ ավելի էին սրում եղած հակասական հարցերը ինչպես հողային սեփականության շուրջ, այնպես էլ շատ այլ ոլորտներում:

Ջավախքը, լինելով ագրարային երկիր, ի սկզբանե կանգնեց այս հարցերի առջև, և Վրաստանի ընդունած մի շարք օրենքներ իրենց ծանր հետևանքներով, հենց առաջինը բախեցին Ջավախահայության դռները. երկրամասը արհեստականորեն դարձյալ ներքաշվում էր ազգամիջյան հարաբերությունների միջև եղած հակասությունների մեջ:

Դեռ 1992 թ. հունվար ամսից սկսած, երբ, երկիրը նետվել էր քաղաքացիական պատերազմի գիրկը, վրացական մինիստրների կաբինետը (կառավարությունը) «հասցրեց» ընդունել որոշումներ «գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողային ռեֆորմների վերաբերյալ», որոնք մինչև գարնան սկսվելը պետք է կարգավորեին հողային հարաբերությունները, ապահովեին հողերի նպատակային բաշխումը Վրաստանի շրջաններում: Այդպիսի որոշումներից առաջինն ընդունվեց 1992 թ. հունվարի 18-

---

[302] Скаков А.Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия: проблемы и перспективы развития/, РИСИ, с. 267

ին[303], որով փորձ էր արվում ինչ-որ կերպ կարգավորել հողերի բաշխման գործընթացը Վրաստանում: Այդ օրոշման 4-րդ կետով Վրաստանի ամբողջ տարածքում հողերը բաժանվում էին երկու կատեգորիաների. «Հանրապետության սեփականության տակ գտնվող հողերը, հաշվի առնելով նրանց նշանակությունը և նրանց վրա սեփականության տարբեր ձևերի հետագա տարածումը, բաժանվում են պետական հողերի ֆոնդի և հողային ռեֆորմների ֆոնդի»[304]: Այս որոշման մեջ դեռևս խոսք չի գնում տխրահռչակ «սահմանային գոտու» ստեղծման և կազմավորման մասին, ինչի մասին որոշում ընդունվեց հետագա երկու հրամանագրերի մեջ, որոնք ընդունվել էին շաբաթներ անց՝ 1992 թ.փետրվարի 6-ին N 128 և 1992 թ. մարտի 10-ին (N 290)[305]:

Այդ որոշումներով Վրաստանի կառավարությունը կատարում էր իր հերթական «չմտածված» քայլը, որով իր դեմ էր լարում երկրում բնակվող բազմաթիվ ազգությունների: Դրանցով, փաստորեն, դարձյալ վերականգնվում էր սահմանային գոտու ռեժիմը (առաժմ փոքր մասշտաբներով)՝ նման 1950-ական թվականներից առկա, ինչպես նաև՝ Զ. Գամսախուրդիայի սահմանած հակահրավական և հակաազգային ռեժիմներին Սկսած սահմանից, մինչև 21 կմ խորության վրա բնակվող մարդիկ (ընտանիքներ), ըստ այդ որոշումների, հնարավորություն չունեին ունենալու տնամերձ հողի սեփականության իրավունք՝ անհատական բնակելի տներ և այլ շինություններ կառուցելու համար:

Իսկ Ախալքալաքի շրջանային վարչությունը իր 1992 թ. ապրիլի 11-ի N 25[306] և նույն թվականի ապրիլի 21-ի N 25 որոշ-

---

[303] Кабинет министров Республики Грузия, Постоновление N 48, 18. января, 1992 г., г Тбилиси

[304] Նույն տեղում

[305] Заседания Правления Ахалкалакского района от 26 05.1992 г , Реше ние N 48, г. Ахалкалаки

[306] Заседания Правления Ахалкалакского района от 11.04 1992 г , Решение N 25, г Ахалкалаки.

մամբ (վերջինս նախորդ որոշման շարունակությունն էր)[307] կիրառության մեջ դրեց Թբիլիսիի կողմից ընդունված N 48, N 128 և N 290 տխրահռչակ որոշումները: Շրջանի բնակչության շահերին բացահայտորեն հակադրվող Թբիլիսյան այդ որոշումները կիրառվեցին առանց փոփոխությունների և լրացումների: Եթե նայենք այդ տեսանկյունից, օրինակի համար՝ Փոթի սահմանամերձ քաղաքի բնակիչն իրեն հատկացված հողակտորի նկատմամբ ուներ նույն իրավասությունները, ինչը, ասենք, Ջավախքի սահմանամերձ Կարծախ գյուղի բնակիչը, որի ապրուստի միակ եկամուտը գալիս է իր գյուղի ունեցած հողատարածքներից:

Հետաքրքրական է, որ Ախալքալաքի շրջանային վարչության սկզբնական N 25 որոշման մեջ տեղ չեն գտել բացառապես սահմանային գոտուն վերաբերող օրենքների (ժամանակավոր վարձակալության, սեփականության իրավունք չունենալու և այլնի մասին) կետեր[308], ապա ապրիլի 21-ի՝ N 25 որոշման հավելվածի մեջ արդեն կարելի էր տեսնել այսպիսի կետեր, որոնք իջեցվել էին շրջանի բնակչության վրա. «Սեփական տներ կառուցելու համար քաղաքացիներին հողատարածքներ են տրվում միայն ժամանակավոր օգտագործման իրավունքով և ժամանակի լրացումից հետո այն ենթակա է վերադարձման» (3-րդ կետի 3-րդ ենթակետ)[309]: Փաստորեն, եթե գյուղացին մեծ դժվարությամբ կառուցելու է ինչ-որ շինություն (բնակելի տուն, անասնագոմ, պահեստ և այլն), ապա ինչ-որ «ժամկետի լրանալուց հետո» այն խլվելու էր նրա ձեռքից. «Տրված տնամերձ հողատարածքների օգտագործման հրաման ստանալուց հետո, տեղական իշխանության օրգանները պարտավոր են տիրոջը զրկել հողատարածքի օգտագործման իրավունքից և վերցնեն հողատարածքը՝ տալով հո-

---

[307] Дополнение к решению N 25 от 11 04 1992 г., принято заседанием Правления Ахалкалакского раиона от 21 04 1992 г., г. Ахалкалаки

[308] Заседания Правления Ахалкалакского района от 11 04 1992 г, Решение N 25, г Ахалкалаки.

[309] Дополнение к решению N 25 от 11 04 1992 г , принято заседанием Правления Ахалкалакского района от 21 04 1992 г , г. Ахалкалаки

ղի պահեստային ֆոնդին» (որոշման 6-րդ կետ)[310]: Ակնհայտ է, որ այս որոշման կետերը բխում էին Թբիլիսյան վերոնշյալ որոշումներից.«Տնտեսությունների ղեկավարությունը պարտավոր է գյուղատնտեսության վերաբերյալ ակտի հիման վրա առանձնացնել հողատարածքներ՝ չխախտելով Վրաստանի Հանրապետության նախարարների կաբինետի կողմից ընդունված N 48, N 128 և N 290 ռեֆորմների պահանջները» (որոշման 11-րդ կետ)[311]:

Հողային հարաբերությունների շուրջ եղած այս հակասական մոտեցումներին լրացնելու եկավ Վրաստանի պետխորհրդի 1992 թ. մայիսի 7-ի որոշումը[312], որը էլ ավելի «թարմացրեց հին վերքերը» և ի վերջո լցրեց Ջավախքի բնակչության համբերության բաժակը: Իսկ այդ որոշումը ոչ միայն «կարգավորում էր» հողային հարաբերությունները, այլև իր մեջ պարունակում էր կետեր, որոնք վերաբերում էին բնակչության իրավահարաբերությունների այլ ոլորտներին: Տվյալ որոշմամբ նախատեսվում էր «անհապաղ աշխատանքներ սկսել սահմանային գոտու ստեղծման և կազմավորման համար՝ Հանրապետության ցամաքային և ծովային սահմանների ամբողջ երկարությամբ»[313]: Այդ նպատակով «Վրաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը մյուս բոլոր շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համատեղ պարտավորվում է միջազգային իրավական նորմերին համապատասխան և հաշվի առնելով անկախ հանրապետությունների սահմանների պաշտպանության պրակտիկան, համալիր մշակել և լուծել հիմնախնդիրների մի ողջ շարք, որոնք կապված են սահմանային ծառայությունների ձևավորման և օգտագործման, նրանց նյութատեխնիկական բա-

---

[310] Նույն տեղում

[311] Նույն տեղում·

[312] Постоновление Государетвенного совета Республики Грузия, о решении комплексных проблем по формированию и функционированнию пограничной зоны республики Грузия, 7 мая, 1992 г., N 10, г. Тбилиси.

[313] Նույն տեղում:

գայի ստեղծման հետ»[314]: Փաստորեն վերոնշյալ օրենքը գալիս էր լրացնելու Թբիլիսիի 1992 թ. փետրվարի 6-ի N 128 որոշմանը (սահմանային 21 կմ-ոց գոտու ստեղծման մասին), որի առաջինից մինչև վերջին կետերը իրենց մեջ պարունակում էին հակաիրավական և բնակչության շահերին բացահայտորեն հակառող, ավելին՝ սահմանային գոտիներում իրադրությունը պայթյունավտանգ դարձնող դրույթներ: Այսպես, N 10 որոշման համաձայն, 21 կմ-ոց գոտին ամբողջովին հանձնվում էր Պաշտպանության նախարարությանը, որտեղ հաստատվում էր ռազմական ռեժիմ: Վերոհիշյալ նախարարությունը պետք է սեղմ ժամկետներում ներկայացներ «...սահմանային գոտու անձնագրային ռեժիմի ստեղծման որոշման նախագիծ՝ ամբողջ ցամաքային և ծովային սահմանների երկայնքով, այդ թվում սահմանամերձ քաղաքներում, նավահանգիստներում և ծովային ակվատորիաներում»[315]: Վերոհիշյալ սահմանային երկայնքով գտնվող բոլոր կոլտնտեսությունները, հասարակական տնտեսությունները (գյուղատնտեսական ձեռնարկությունները), գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկությունները և այլ օբյեկտները փոխանցվում էին Պաշտպանության նախարարության տնօրինությանը՝ համաձայն N 1, 2, 3 հավելվածների[316]: Վերոնշյալ բոլոր տեսակի կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների տնօրինումը հանձնվում էր Պաշտպանության նախարարության տրամադրության տակ գտնվող Հատուկ ծառայությանը, որը պետք է կարգավորեր այդ ոլորտների հարաբերությունները, ինչպես նաև բանակին և այդ շրջաններում տեղակայված զորքերին ապահովեր սննդամթերքով[317]: Իսկ այն հողատարածքները, որոնք գտնվում են 21 կմ-ոց սահմանային գոտում, «կազմում են հանրապետական հողերի ֆոնդը (ինչպես այդ մասին նշել

---

[314] Նույն տեղում·
[315] Նույն տեղում
[316] Նույն տեղում.
[317] Նույն տեղում.

ենք 1992 թ. հունվարի 18-ի N 48 որոշման մասին խոսելիս– Վ.Ս.) և ենթակա չեն սեփականաշնորհման: Սահմանային գոտում արգելված է առանձնացնել նոր տնամերձ հողային տարածքներ, այդ թվում՝ անհատական բնակելի շինարարության նպատակով»[318]: Նայելով Սամցխե-Ջավախք երկրամասի՝ Վրաստանի տարածքում գտնվելիք աշխարհագրական դիրքին դժվար չէ կռահել, որ այդ որոշումը լիովին «վերաբերում էր» այս շրջաններին: Ինչպես նաև թռուցիկ հայացք գցելով Վրաստանի քարտեզին, կարելի է տեսնել, որ Վրաստանի ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջանները հիմնականում տեղակայված են սահմանամերձ գոտիներում (հայեր, թուրք-մուսուլմաններ («ադրբեջանցիներ»), աջարներ, աբխազներ, օսեր և այլն), որոնց շրջանում էթնոժողովրդագրական պատկերը փոխելու և նրանց ղեկավարումը հեշտացնելու նպատակով Վրաստանը նրանց մեջ փորձում էր «մխրճվել» այս ձևով: Դա հասկանալի կդառնա, եթե հաշվի առնելով Վրաստանի պաշտպանության նախարարության որոշումը, որով զինակոչիկը պետք է իր ծառայությունն անցկացներ իր բնակավայրից 70 կմ հեռու գտնվող տարածքում[319] (այսինքն տեղացիների ծառայությունը սահմանային գոտում բացառվում էր), վկայակոչենք Պետխորհրդի որոշման ևս մեկ դրույթ, որով նախատեսվում էր «...թույլատրել երիտասարդությանը, որոնք զորակոչված են բանակ սահմանային գոտուց և Հանրապետության այլ շրջաններից, հաշվի առնելով նրանց ցանկությունը, անցկացնելու այլընտրանքային ծառայություն սահմանային տնտեսական գոտու գյուղատնտեսական ձեռնարկություններում և այլ տնտեսական նշանակության օբյեկտներում՝ աշխատանքային մասնակցության ձևով»[320]: Այսինքն, չէր բացառվում, որ այլ տեղերից Սամցխե-Ջավախք եկած արտոնյալ զինակոչիկները, տեղում լավ աշխատանք գտնելով, հետագայում

---

[318] Նույն տեղում

[319] «Ազատամարտ», 5-11 յունիսի, 1992, թիվ 23.

[320] Постоновление Госсовета Республики Грузии. ., N 10.

նույնպես արտոնյալ պայմաններում մնային այդ տարածքներում.

Օրենքով նախատեսվում էր «Հանձնարարել Աբխազիայի, Աջարիայի, սահմանամերձ այլ շրջանների (պատերազմական թոհուբոհի մեջ գտնվող Հարավային Օսեթիան չէր էլ հիշատակվում - Վ. Ս.) գործող օրգանների ղեկավարներին՝ Վրաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությանը հատկացնելու ցանկացած օգնություն՝ հանրապետության սահմանների պաշտպանության կազմակերպման, ղեկավարության ներկայացմամբ՝ Պաշտպանության նախարարության սահմանապահ զորքերի ստեղծման, բնակեցված մասերում կամավորական խմբերի ստեղծման համար, որոնք նախատեսված են սահմանապահ զորքերին գործակցություն ցուցաբերելու համար...»[321]:

Թե ո՞րն էր Վրաստանի նպատակը՝ սահմանների պաշտպանության այսպիսի ինտենսիվ նախապատրաստման, դժվար է ասել: Ելնելով հատկապես այն հանգամանքից, որ նայելով նրա հարևաններին, կարելի էր հստակ ասել, որ ոչ Ադրբեջանի, ո՛չ Հայաստանի, ո՛չ Ռուսաստանի, և ոչ էլ Թուրքիայի կողմից նրա վրա հարձակման վտանգ գրեթե չկար: Ավելին, երկրում առկա էր ներքին հիմնախնդիրների մի ողջ համալիր, որոնք օրենքի կիրարկման դեպքում է՛լ ավելի էին խորանալու (Համարյա բացառապես ազգային փոքրամասնություններով բնակեցված սահմանամերձ շրջաններում վերոնշյալ օրենքի իրագործումը գրեթե անհնարին էլ էր):

Ինչպես և սպասվում էր Ջավախքում «սվիններով ընդունեցին» օրենքի հրապարակման լուրը: Ախալքալաքի շրջանային վարչությունն իր 26.05.1992 թ. նիստի որոշման մեջ դատապարտեց Վրաստանի կառավարության կողմից արված նման քայլերը[322]: Որոշման մեջ ի հայտ են բերված նոր հիմնախնդիրներ, ո-

---

[321] Նույն տեղում.

[322] Решение N 48, Заседания Правления Ахалкалакского района от 26 05 1992 г , О результатах обсуждения постоновления Госсовета

ռոնք ի հայտ էին եկել օրենքի կիրարկման փորձերի ժամանակ: Մասնավորապես շրջանները զրկված էին կարտոֆիլի մթերման հնարավորությունից, ելնելով այն բանից, որ բոլոր պահեստները հանձնվել էին պաշտպանության նախարարությանը, իսկ նոր պահեստների շինարարության տարրական իրավունքից բնակչությունը զրկված էր: Փաստորեն, փչացման վտանգի տակ էր լինելու շուրջ 6000 տոննա կարտոֆիլ[323]: Որոշմանը հետևում էր Վրաստանի պետխորհրդին ուղղված խնդրագիրը՝ վերոնշյալ որոշման առանձին կետեր վերանայելու և անձնագրային ռեժիմի հետ կապված հարցերը կարգավորելու ժամանակ հաշվի առնել Ջավախքի՝ Հայաստանի բնակչության հետ կապվածությունը[324]:

Շրջաններում դժգոհություններն արտահայտվեցին նաև զանգվածային բողոքի հանրահավաքներով և ստորագրահավաքներ կազմակերպելով՝ ընդդեմ այս որոշման: Մեծ հանրահավաք տեղի ունեցավ 1992 թ. հունիսի 5-ին և 6-ին Ախալքալաքում, որի ընթացքում ընդունված կոչի տակ ստորագրեցին շատ գյուղերի բնակիչներ (օրինակ գյուղ Ազավրեթից ստացվել էր 98, գյուղ Կորխից՝ 213 ստորագրություն)[325].

Բողոքի ընդարձակ հոդվածով հանդես եկավ նաև շրջանում լույս տարածվող «Ասպնջակ» պարբերաթերթը[326]:

Վրաստանի Պետխորհրդի 1992 թ. մայիսի 7-ի չարաբաստիկ որոշումից երեք օր անց՝ մայիսի 10-ին, վրացական ազգային գվարդիայի զինվորական մի գումարտակ տեղակայվեց Հայաստան-Վրաստան սահմանի վրա, որոնց կողմից շուտով փակվեց սահմանը, այն պատճառաբանությամբ, որ այդտեղ պետք է տեղակայվեն մաքսային վարչության արգելափակոցները: Եվ միայն

Республики Грузия и о решении комплексных проблем по формированию и функционированию пограничной зоны республики Грузии, 7 мая, 1992 г., за N 10, г Ахалкалаки

[323] Նույն տեղում

[324] Նույն տեղում·

[325] Տես այդ առթիվ հավաքված ստորագրությունների ցանկերը·

[326] «Ասպնջակ», 27 06 1992, թիվ 4 (16)

այն բանից հետո, երբ Ախալքալաքի սակրեբուլոն (շրջխորհուրդը) իր վերոհիշյալ նիստով բողոքի նոտա հղեց Վրաստանի Պետխորհրդին, և շրջանի բնակչությունը բազմահազարանոց միտինգի ելավ Ախալքալաքի Մ. Մաշտոցի (նախկին Լենինի) անվան հրապարակում, ազգային գվարդիան հեռացավ վերոհիշյալ սահմանագլխից[327]: Վրաստանի իշխանությունները փաստորեն ոչ միայն ընդունում, այլև ընդունումից անմիջապես անց ձեռնամուխ էին լինում վերոնշյալ օրենքների իրագործմանը: Եվ դրանք կիրականացնեին իրենց վերապահված «գործառույթները», եթե չլիներին բնակչության կողմից վերջիններիս հակազդող քայլերը:

Ինչևէ, մեկ անգամ ևս ընդգծենք, որ Վրաստանի կողմից ընդունված այս հերթական օրենքի պատճառով Ջավախքում իրավիճակը էապես սրվեց: Նախ՝ ձգձգվեց հողի հանձնումը գյուղացուն մինչև գարնան ցանքսի սկսվելը, և բնակչությունը չկողմնորոշվեց իր անելիքների մեջ, երկրորդ, այն, ինչ տրվեց գյուղացուն՝ սերմացուի, պարարտանյութի, վառելիքի և այլնի անհրաժեշտ քանակով չտրամադրելու պատճառով վերջինս դարձյալ հայտնվեց ծանր կացության մեջ[328]:

Իսկ Վրաստանը իր հերթական որոշումով սեփական երկրին էր վերադարձնում «նորանոր հողային տարածքներ»: Այս անգամ էլ որոշվում էր Վրաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությանը հանձնելու բոլոր այն տարածքները, որոնք տրվել էին նախկին խորհրդային զինծառայողներին, որպեսզի վերջիններս այնտեղ զինվորական ավաններ, բազաներ կառուցեին[329]: Նախկին սովետական զինծառայողների ունեցվածքի կառավարման պետական հանձնաժողովի կողմից Վրաստանի Պաշտպանության նախարարությանը պիտի փոխանցվեին

---

[327] «Ազատամարտ», թիվ 35, յունիս, 1992

[328] «Ազգ», 14.11.1992. Հմմտ "Свободная Грузия", 11 04.1992,

[329] Правителство Республики Грузия, постоновление N 984, 9 октября, 1992 г , г Тбилиси

նաև ամբողջ գույքը և ունեցվածքը, որոնք ժամանակին գտնվել էին Անդրկովկասի Զինվորական Օկրուգի տրամադրության տակ[330]:

Չնայած ծանր սոցիալ-տնտեսական, Վրաստանի կողմից արհեստականորեն ստեղծված դժվարին պայմաններին, Ջավախքի շինարար ժողովուրդը շարունակում էր կառուցապատել իր Հայրենի երկրամասը: Ախալքալաքի քաղաքապետ Վ. Բաղոյանի հավաստմամբ, իր մոտ արդեն հավաքվել էր մոտ 300 դիմում՝ անհատական կառուցապատման թույլտվություն ստանալու համար, սակայն երկար ժամանակ էր, ինչ դրա համար հողային տարածքներ չէին տրամադրվում[331]:

Երկրամասում այս շրջանում կանգ էին առել նախկին քարմշակման արտադրամասերը, շատ ու շատ մարդիկ մնացել էին անգործ: Կաթվածահար վիճակի մեջ էր մնում տեղեկատվական դաշտը: Էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով մարդիկ զրկվել էին հեռուստահաղորդումներ դիտելու հնարավորությունից: Առանց այն էլ աղքատիկ տեղեկություններ պարունակող շրջանային «Փարոս» թերթը ևս գտնվում էր անմխիթար վիճակում[332]: Շրջանների համախառն արտադրանքի մեջ նախորդ տարիների նման շարունակում էր արդյունաբերական արտադրանքի համեմատ գերակշռել գյուղատնտեսականը: Ինչպես ճոպանուղու սարքավորումների, այնպես էլ երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարանները չէին գործում իրենց ողջ հզորությամբ (ցեմենտի և երկաթի բացակայության պատճառով): Ախալքալաքի շրջանի պանրի գլխավոր գործարանը 1992 թ.արտադրել էր 17,5 %-ով քիչ մթերք, քան 1991 թ., իսկ անասնավերամշակման գործարանը նախորդ տարվա ցուցանիշին զիջում էր 43,7 %-

---

330 Նույն տեղում

331 "Свободная Грузия", 11 04.1992

332 Նույն տեղում.

ով[333]: Դադարեցվել էին 1986 թ. երկրաշարժի հետևանքով ավերված բնակավայրերի քիչ թե շատ սկսված վերականգնողական աշխատանքները: Մեծապես կրճատվել էին նաև գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալները. Ախալքալաքի շրջանում 1992 թ. մթերվել էր 351 տոննա միս, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ 30 % էր կազմում: Պետք է նշել, որ մսի իրացման ծավալները կրճատվել էին արհեստականորեն.մնացած 70 %-ը կազմող մսամթերքը (շուրջ 700 տոննա) փոխանակվել էր վառելիքի հետ՝ վերջինիս բացակայության պատճառով: Շրջանում 40 %-ով կրճատվել էին կաթնամթերքի արտադրման ծավալները:

1992 թ. հուլիսի 1-ի դրությամբ Ախալքալաքի շրջանի ձեռնարկությունների և կազմակերպությունների պարտքը կազմում էր 68 մլն ռուբլի, միայն կոլտնտեսությունների և սովխոզների պարտքերը բանկին՝ կարճաժամկետ վարկերով, կազմում էր 23 մլն ռուբլի՝ նախորդ տարվա 15 մլն ռուբլու դիմաց: Ֆինանսական ծանր դրությունը թույլ չէր տալիս ուսուցիչներին, թոշակառուներին, սոցիալապես անապահով ընտանիքներին ժամանակին վճարել աշխատավարձերը և նպաստները: 1992 թ. առաջին կիսամյակի արդյունքում շրջանի տեղական բյուջետի կատարումը, առանց փոխադարձ հաշվարկների, դեֆիցիտով եղել է 26.711, 9 հազար ռուբլի (96,8 %), շրջանի տեղական բյուջեի ծախսային մասը նշված ժամկետում առանց փոխադարձ հաշվարկների կազմել է 56,4 %.փաստորեն չլուծված էին մնացել բազմաթիվ խնդիրներ:

Ծանր վառելիքաէներգետիկ ճգնաժամի մեջ հայտնված բնակչությունը ստիպված էր իրականացնել զանգվածային ծառահատումներ, ինչը մեծ վնաս հասցրեց առանց այն էլ սակավանտառ շրջանին:

Այսպիսով.չնայած բազմիցս արված այն հայտարարություններին, թե Է.Շևարդնաձեի իշխանության գալով Վրաստանը

---

[333] Ինչպես այս, այնպես էլ հետագա տվյալները վերցված են Ախալքալաքի շրջանային վարչության աշխատակցի հաշվետվությունից:

մտավ պատմության ավելի դեմոկրատացված, ազգային և ժողովրդավարական արժեքների վրա հիմնված փուլը, Ջավախքի օրինակով դրանք այնքան էլ իրականությանը մոտ չէին: Ընդհակառակը, կարելի է ասել, որ Ջավախքցու համար փոխվել էին լոկ պետության ղեկավար դեմքերի անուն-ազգանունները, մնացյալը (իր հանդեպ վարած հակաժողովրդական քաղաքականությունը, ազգային ու մշակութային արժեքների մշտական ոտնահարումը, ծանր սոցիալ-տնտեսական, էներգետիկ ճգնաժամը, իրավական դաշտի խստիվ բացակայությունը և այլն) դոփում էին նույն տեղում:

Է. Շևարդնաձեի ժամանակաշրջանում Սամցխե-Ջավախք-թուեղքը կանգնեց աշխարհաքաղաքական նոր մարտահրավերների առջև:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՈՒԵՂՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1992 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – 1995 Թ.

Մեծ ժողովրդի ժողովրդավարական համակարգը կամ պետք է ինքնակառավարումը զոհի հանուն միասնության, կամ պահպանի այն ֆեդերալիզմի օգնությամբ:

Լորդ Ակտոն
(բրիտանացի ազգայնագետ)

Խորհրդային Միության քայքայումից հետո Վրաստանը կտրուկ կերպով գնաց Ռուսաստանի հետ հարաբերությունների սառեցման: Գործնականում Զ. Գամսախուրդիայի ուղին, որ հեռացում էր Ռուսաստանից, իրեն չարդարացրեց, և երկիրը կանգնեց քաղաքացիական պատերազմի առջև: Քաղաքական պայքարի արդյունքում երկրի գլուխ կանգնեց Է.Շևարդնաձեն, որի գալով իրավիճակի թվացյալ կայունությունը շուտով դարձյալ տեղի տվեց նոր պատերազմների: Եթե ԽՍՀՄ փլուզումից հետո Ադըրբեջանը բացահայտորեն ձգտեց դեպի իր «ավագ եղբայրը»՝ Թուրքիան, ապա Վրաստանը Թուրքիային մերձենալու քայլը կատարեց արևմտյան արժեքներին ինտեգրվելուն վերաբերող հայտարարությունների փուլն անցնելուց հետո: Իրականում, տեսնելով Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունները, Արևմուտքն այնքան էլ չէր շտապում «իր գիրկը վերցնել» նորանկախ Վրաստանին և նրան ընդունելու որպես ժողովրդավար պետություն:

Այնուամենայնիվ, 1992 թ. հուլիսի 31-ին Վրաստանը դարձավ Միավորված Ազգերի Կազմակերպության 179-րդ անդամը[334]:

Վրաստանի անկախությունը շարունակում էին ճանաչել ինչպես Արևմուտքի, այնպես էլ նախկին ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող տարբեր պետություններ (դեռ 1991 թ. դեկտեմբերի 12-ին, մյուս պետությունների շարքում Վրաստանի անկախությունը ճանաչել էր Ուկրաինան[335], նույն օրը Վրաստանը փոխադարձել էր այդ քայլը)[336]: Ինչպես արդեն հիշատակել ենք, 1992 թ. օգոստոսի 14-ին ծայր առավ արյունալի պատերազմը Աբխազիայում[337]:

Վրաստանն Աբխազիայի հարցում որդեգրեց վերջինիս՝ զենքի միջոցով իրեն ենթարկելու ուղին: Ինչպես այդ մասին հաղորդում էր Աբխազիայում Վրաստանի զորքերի հրամանատար Գեորգի Կարկարիշվիլին, «այն դեպքում, երբ բանակցությունները չբերեն հաջողություն, ես կարող եմ հավաստիացնել այդ անջատողականներին, որ եթե զոհվի ընդհանուր թվով հարյուր հազար վրացի, ապա ձեզանից կզոհվի ամբողջ ինքնությունը հազարը, որոնք կպաշտպանեն Արձինբայի որոշումը»[338]:

Մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս համարելով վրաց-աբխազական հակամարտությունների ընթացքը, հարկ ենք համարում անդրադառնալ հայերի մասնակցությանը այս պատերազմին, որից ելնելով Վրաստանը շատ անգամներ մշակում էր համապատասխան վերաբերմունք՝ իր տարածքում ապրող հայության այլ շրջանների նկատմամբ:

Սկզբից ևեթ նշենք, որ վրացական զինված ջոկատների կողմից ոչ մի տարբերություն չէր դրվում հայերի և աբխազների միջև: Վրացիների դաժան վերաբերմունքի զոհ դարձան ոչ

---

[334] "Свободная Грузия", 01.08.1992

[335] Նույն տեղում, 13 12.1991:

[336] Նույն տեղում·

[337] "Свободная Грузия", 15.08.1996, N 115

[338] Скаков А.Ю., Внутриполитическая ситуация в Грузии, /Грузия Проблемы и перспективы развития/, РИСИ, с. 268.

միայն աբխազ, այլև՝ հարյուր հազար բնակչություն ունեցող հայկական բավականին կենսունակ և աշխույժ մշակութային կյանքով ապրող համայնքը[339].

Ձերբակալվեցին «Կռունկ» հայկական բարեգործական-հասարակական կազմակերպության մասնաճյուղի ղեկավարները, որոնց, ինչպես նաև աբխազահայ մտավորականների կողմից, դիմում հղվեց ՀՀ «նախագահին և Գերագույն Խորհրդին՝ օգնություն խնդրելու նպատակով[340]: Իսկ Հայաստանում այս մասին գերադասեցին չխոսել.խնդրագիրը մնաց որպես «ձայն բարբառո հանապատի»: Նշենք նաև, որ Աբխազիայի հայերը ենթարկվել են ոչ միայն ֆիզիկական ամենադաժան կտտանքներին (եղել են բռնաբարության, անզեն մարդկանց, ծերունիների սպանության բազմաթիվ դեպքեր), այլև վերջիններս զրկված են եղել մի շարք իրավունքներից (մեքենա վարելու, անգամ ունենալու և այլն), իսկ հայերի ունեցվածքը գրեթե ամբողջովին ենթարկվել էր թալանի ու ավերածության[341] Մոխրի տակից ծխում էին Գումիստա, Աչադարա, Լաբրա, Լեչկոպ, Արակիչ, Աթարա երբեմնի ծաղկուն հայկական գյուղերը:

Վերոհիշյալ պայմաններում աբխազահայությունը ձեռնամուխ եղավ «Մարշալ Բաղրամյան» գումարտակի ստեղծմանը, որին վիճակված էր պատերազմական գործողություններում ունենալու երկարատև մասնակցություն:

Որքան էլ վրացական պաշտոնական և այլ շրջանակներում այն սևացվի, որակվի որպես անջատողականներին օժանդակող խմբավորում, որի կողմից վրացիների հանդեպ գործադրվել են անասելի բռնություններ[342], այնուամենայնիվ, ելնելով պատերազմական իրավիճակից՝ և վրացական զորքերի՝ հայերի նկատ-

---

[339] «Ազատամարտ», թիվ 35, օգոստոս, 1992
[340] Նույն տեղում:
[341] «Ազատամարտ», թիվ 35, օգոստոս, 1992
[342] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე), გვ. 171

մամբ ցուցաբերած անմարդկային մոտեցումներից, վերոնշյալ ջոկատը կոչված էր պաշտպանելու Հայության ֆիզիկական գոյությունը. Հետաքրքրական է այդ առթիվ վրաց Հեղինակ՝ Բոնդո Արվելաձեի «Իվերիա էքսպրես» հանդեսի 1995 թ.փետրվարի թիվ 12-ում տպագրված «Բաց նամակ ՀՀ գրողների միության նախագահին կամ ինչու են լռում հայ գրողները, երբ Աբխազիայում վրացիների ցեղասպանություն են կազմակերպում նաև հայերը» բաց նամակը՝ ուղղված Սերո Խանզադյանին, որտեղ Հեղինակը նշում է. «Աբխազիայում վրացիների ցեղասպանության առյուծի բաժինը պատկանում է հայ բոլշևիկներին, իսկ վայրագությամբ նրանք գերազանցեցին անգամ ափսուա (աբխազներն այսպես են անվանում իրեն իրենց–Վ.Ս.) անջատողականներին[343]:

Հետաքրքիր է, որ հայկական տարբեր շրջանակներ տարբեր մեկնաբանությամբ են հանդես եկել այս հարցերի շուրջ: Ըստ վրացական այս տեղեկությունների, Թիֆլիսի հայ հասարակության որոշ ներկայացուցիչներ պնդել են, թե աբխազական ուժերի կողմից հայերը բռնի կերպով են զինվել և ելել պատերազմի[344]: Այս փաստն ինքնին հասկանալի էր Թիֆլիսի Հայությունը պարզապես խուսափել է վրացական շրջանակներին իր դեմ տրամադրելուց: Ավելին, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրդյանի կողմից արված հայտարարության մեջ «Հանուն հայ-վրացական բարեկամական հարաբերությունների չխաթարման» բացարձակորեն մերժվում էր այս գումարտակի գոյությունն ան-

---

[343] Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990), նյութերի ժողովածու, պրակ առաջին, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հրաչյա Բայրամյանը, Ե , 2001, էջ 117-124 Մեր կողմից ավելացնենք, որ Վրաստանի գրողների միության նախագահը անգամ չի իմացել ՀՀ գրողների միության նախագահի իսկական անուն ազգանունը ՀՀ գրողների միության նախագահն այդ ժամանակ ոչ թե Սերո Խանզադյանն էր, այլ Ռազմիկ Դավոյանը

[344] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე), გვ. 174–175

գամ[345]: Դրա փոխարեն, հայաստանյան շատ շրջանակներ ճիշտ էին համարում աբխազահայերի այդ քայլը, բացատրելով, որ «դա աբխազահայերի բնական ռեակցիան է այն վայրագությունների դեմ, որ կատարել են վրացական բանակում ընդգրկված բանդիտական խմբավորումները հայերի դեմ: Այդ վայրագությունները, փաստորեն, կանխորոշեցին նման գումարտակի ստեղծումը, և աբխազահայերն ստիպված զենք վերցրին՝ միայն ու միայն իրենց պաշտպանելու նպատակով»[346]:

Ըստ պաշտոնական տվյալների աբխազական պատերազմում ոչ քիչ թվով հայեր են զոհվել թե՛ աբխազական, թե՛ վրացական կողմերից[347].ապրելով մասնատվող նախկին Խորհրդային Վրաստանի տարբեր մասերում, փաստորեն հայը ստիպված էր կռվել հայի դեմ:

Շուրջ մի քանի տարի տևած աբխազա-վրացական պատերազմում զոհվեց ավելի քան 9.000 մարդ, 250 հազարը մնացին անօթևան և դարձան փախստական[348]:

Իսկ Վրաստանի իշխանություններ այս ընթացքում փորձում էին երկիրը տանել դեմոկրատական ճանապարհով. 1992 թ. հոկտեմբերի 11-ին տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Ընտրություններին մասնակցում էին 44 քաղաքական կուսակցություններ (ընտրությունների մասնակցության համար արգելեցին հաշվառել Իլյա Բարեպաշտի ընկերությանը, Հելսինկյան խմբին (որը գլխավորում էր Զ.Գամսախուրդիան) և Կոմունիստական կուսակցությանը): Խորհրդարան անցան 26 կուսակցություններ և բլոկեր: Շուրջ 30 բազմամանդատ ընտրատեղամասերից համամասնական կարգով ընտրվեցին 150 պատգամա-

---

[345] Նույն տեղում, էջ 175: Հմմտ «Հայաստանի Հանրապետություն», 19 03.1993

[346] «Ազգ», 29 04.1993:

[347] «Ազատամարտ», թիվ 34, սեպտեմբեր, 1993·

[348] "Свободная Грузия", 15.08 1996, N 115

վորներ, 84 պատգամավորներ ընտրվեցին Հանրապետության տարբեր շրջաններից՝ մեծամասնական կարգով[349]:

Սամցխե-Ջավախք-Թռեղք երկրամասից մեծամասնական կարգով ընտրվեցին,

1. Ծալկայի շրջանից - Զիտլով Դմիտրի
2. Ախալցխայի շրջանից - Բավիաշվիլի Իվան (Վալիկո)
3. Ախալքալաքի շրջանից - Ալեքսանյան Ֆերդինանդ
4. Ասպինձայի շրջանից - Ցիտլանաձե Գեորգի
5. Նինոծմինդայի շրջանից - Սնխչյան Ժորա[350]:

Նորընտիր խորհրդարանը նոյեմբերի 6-ին Է. Շեւարդնաձեին ընտրեց Վրաստանի Պետության գլխավոր[351]:

Դառնալով պետության ղեկավար Է. Շեւարդնաձեն հենց սկզբից ձեռնամուխ եղավ կադրային որոշակի փոփոխությունների. 1993 թ. մայիսին պաշտպանության նախարար Թ. Կիտովանուն փոխարինեց Գ. Կարկարիշվիլին, Պաշտպանության և անվտանգության խորհուրդը պահանջեց Ջ. Իոսելիանու հրաժարականը:

1993 թ.օգոստոսի 6-ին պաշտոնաթող եղավ նաև վարչապետ Թ. Սիգուայի ղեկավարած կառավարությունը, նրան շուտով փոխարինելու եկավ նախկին ԽՄԿԿ կենտկոմի Զուգդիդի շրջկոմի առաջին քարտուղար, Ինգուրիի թղթի կոմբինատի տնօրեն, Զուգդիդի շրջանի վարչության ղեկավար Օթար Պացացիան. սրանով փորձ էր արվում անհնազանդ Մեգրելիայի ժողովրդին կապել երկրի հասարակական կյանքին, մեղմել այնտեղ տեղի ունեցող հուզումները:

Այդուհանդերձ, երկիրը գտնվում էր ծանր քաղաքական ճգնաժամի մեջ: Կապված Աբխազիայում տեղի ունեցող ծանր պատերազմի հետ, 1993 թ. հուլիսի 2-ից երկրում հայտարարվեց

---

[349] Скаков А.Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с 268.
[350] "Свободная Грузия", 28.10.1992, N 143.
[351] Նույն տեղում, 07.11.1992, N 149.

արտակարգ դրություն: Շատ չանցած, 1993 թ. օգոստոսի 28-ին, զինված խմբավորումները Մեգրելիայում Լ.Կոբալիայի գլխավորությամբ բարձրացրին հերթական չորրորդ զվիադիստական ապստամբությունը, ինչը ստիպեց 1993 թ. սեպտեմբերի 13-ին Է. Շևարդնաձեին տալ հրաժարական. Ջ. Իոսելիանու կողմից նրան մեղադրանք էր ներկայացվում՝ արտակարգ դրություն մտցնելու և խորհրդարանի գործունեությունը դադարեցնելու միջոցով երկրի քաղաքական կացությունը կայունացնելու Վրաստանի պետության ղեկավարի փորձը որակելով որպես բռնատիրություն հաստատելու փորձ: Թիֆլիսում միտինգի մասնակիցները և խորհրդարանը չընդունեցին Է. Շևարդնաձեի այս հրաժարականը[352]: Իսկ վերջինս այս ընթացքում երկրում տեղի ունեցող բոլոր դժբախտությունները, ինչպես նաև Աբխազիայի պատերազմում կրած պարտությունները անընդհատ շարունակում էր կապել Ջ. Գամսախուրդիայի կողմնակիցների դավաճանության հետ[353]:

1993 թ. սեպտեմբերի 15-ին Արևմտյան Վրաստանում բարձրացավ զվիադականների ապստամբության նոր ալիք. Կոբալիայի մինչև 400 մարդու հասնող ջոկատները լայնամասշտաբ հարձակում սկսեցին կառավարական զորքերի վրա[354]: Սեպտեմբերի 16-ին ծայր առան աբխազական զորքերի նոր հարձակումները: Որոշ վերլուծաբաններ նույնիսկ փորձում են այս հարձակումների զուգադիպությունը կապել նրանց միջև եղած փոխհամաձայնության հետ[355]: Այս ամենը ստիպեց Է. Շևարդնաձեին և խորհրդարանին 2 անգամ (սեպտեմբերի 16-ին և նոյեմբերի 25-ին) երկուական ամիսներով երկարացնել երկրում հայտարարված համընդհանուր արտակարգ դրությունը[356]. Է. Շևարդնաձեն դրանով

---

[352] «Հայաստանի հանրապետություն», 15 09.1993.
[353] «Ազգ», 27.10 1993, «Հայաստանի Հանրապետություն», 27 10 1993:
[354] «Հայաստանի Հանրապետություն», 16.09 1993.
[355] Скаков А.Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с 272
[356] Նույն տեղում.

իրեն վերապահում էր արտակարգ լիազորություններ՝ երկրում ստեղծված քաոսը կարգավորելու համար:

Զվիադականների այս վերջին արկածներն ի վերջո ավարտվեցին ռուսական բանակի ակտիվ միջամտությամբ, երբ Վրաստանը խոստացավ մտնել ԱՊՀ-ի կազմի մեջ. 1993 թ. հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբին ապստամբական ջոկատները վերջնականապես ջախջախվեցին: Նրանց առանձին խմբավորումների առաջնորդները 1994 թ. հունվարի ընթացքում ձերբակալվեցին[357]:

Վրացական կառավարող օղակներում տարբեր կերպ արձագանքեցին Վրաստանի՝ ԱՊՀ-ին անդամակցելը: Մասնավորապես, Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից պատգամավոր Գ. Մուչաիձեն և փոխվարչապետ Թ. Նադարեիշվիլին լիովին պաշտպանեցին այս գաղափարը: Ռ. Բերիձեն (խորհրդարանի փոխխոսնակ), Պ. Բերձենիշվիլին (պատգամավոր Հանրապետական կուսակցությունից), Թ. Զխեիձեն (պատգամավոր Իլիա Ճավճավաձե ընկերությունից), Մ. Նանեիշվիլին (պատգամավոր Լիբերալ-դեմոկրատական ազգային կուսակցությունից) և Ա. Ասաթիանին (պատգամավոր Վրաստանի ավանդապաշտների միությունից) կտրականապես դեմ արտահայտվեցին Վրաստանի՝ ԱՊՀ-ին անդամակցելուն[358]:

Այդուհանդերձ, 1994 թ. մարտի 1-ին, ձայների 124 կողմ, 47 դեմ և 4 ձեռնպահ հարաբերակցությամբ խորհրդարանը որոշեց Վրաստանի՝ ԱՊՀ-ին անդամակցության հարցը[359]:

Վրաստանը թևակոխեց նոր քաղաքական փուլ: Իշխանության մեջ հայտնվեցին նոր մարդիկ: Քաղաքական դաշտում հայտնվեց Ինֆորմացիոն-հետախուզական ծառայության ղեկա-

---

[357] «Ազգ», 29 01.1994

[358] Скаков А.Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с 272.

[359] Նույն տեղում·

վար Ի. Բատիաշվիլուն փոխարինած Իգոր Գեորգաձեն, որը հետագայում դարձավ անվտանգության նախարար[360]:

1995 թ. փետրվարին պաշտպանության նախարար Գ. Կարկարաշվիլուն փոխարինեց Վ. Նադիբաիձեն, իսկ ներքին գործերի նախարար դարձավ նախկին (1992-1993 թթ.) Ինֆորմացիոն-հետախուզական ծառայության ղեկավարի տեղակալ Շոթա Կվիրայան[361]:

1993 թ. երկրորդ կեսին Վրաստանի քաղաքական դաշտը համալրվեց նոր կուսակցությունով, դա 1993 թ. սեպտեմբերի 21-ին ստեղծված «Վրաստանի քաղաքացիների միությունն» էր, որի հիմնադիր ժողովում նախագահ ընտրվեց Է. Շևարդնաձեն, քարտուղար՝ «Կանաչների» կուսակցության ղեկավար Զ. Ժվանիան[362]: *Վերջինիս մեջ ընդգրկվեցին «Թբիլիսցիներ» ընկերությունը, Վրաստանի «Կանաչների» կուսակցությունը, «Միավորվածություն և բարեկեցություն» շարժումը*[363]: *Կուսակցությունը պաշտոնապես հաստատագրվեց 1994 թ. մարտի 20-ի իր առաջին համագումարում: Այս կուսակցությունը շուրջ 10 տարի (1993 թ. մինչև 2003 թ. նոյեմբերի «Վարդերի հեղափոխությունը») ղեկավարում էր երկիրը, համենայն դեպս երկրի այն մար-*

---

[360] Վերջինս ծնվել է 1950 թ ծառայողի ընտանիքում: Հայրը Պանտելեյմոն Գեորգաձեն, գլխավորել է «Ստալին» ընկերությունը, եղել է Վրաստանի միացյալ կոմկուսի լիդեր. Ի Գեորգաձեն իրավաբան-օրենսգետ էր, ավարտել էր ՊԱԿ-ի բարձրագույն դպրոցը, 1993 թվականից գեներալ-մայոր էր Գլխավորել է Վրաստանի Հակահետախուզական Վարչությունը: Գտնվել է հատուկ գործուղման մեջ Աֆղանստանում: Գլխավորել է ազգային անվտանգության օրգանները Ախալցխայում և Փոթիում· Մինչև վերջին նշանակումը գլխավորել է Վրաստանի ներքին գործերի նախարարության Օպերատիվ վարչությունը Տես նույն տեղում, էջ 273·

[361] Նույն տեղում

[362] «Հայաստանի Հանրապետություն», 24 11.1993·

[363] Скаков А.Ю , Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия. проблемы и перспективы развития/, РИСИ, с. 273.

գերը, որոնց վրա տարածվում է Թբիլիսիի փաստացի իշխանությունը[364]:

Որոշ վերլուծաբաններ այս կուսակցությունը նմանեցնում են նախկին կոմունիստական կուսակցությանը, երբ Վրաստանում որևէ վարչական, տնտեսական, նաև գիտական ու ստեղծագործական գործունեություն ծավալելու համար պարտադիր էր նրան անդամակցելը[365]: «Սա Վրաստանի քաղաքական կյանքում նոր էտապի սկիզբն է, որը բնութագրվելու է քաղաքական մեծ ռեալիզմով և պրագմատիզմով»[366], հայտարարեց նոր կուսակցության ստեղծման առթիվ Զ. Ժվանիան:

Իսկ ընդհանրապես հետխորհրդային Վրաստանի 1990-2003 թթ. պատմությունը որոշ վերլուծաբաններ բաժանում են 2 հիմնական փուլերի՝ 1990-1995 թթ. և 1995-2003 թթ.[367]: 1990-1995 թթ. տեղի ունեցան 5 ընտրություններ (2 պառլամենտական, 2 նախագահական, 1 տեղական ինքնակառավարման), պետական հեղաշրջում, քաղաքացիական պատերազմ, պատերազմ Աբխազիայում, ռազմականացված խմբավորումների սանձարձակություն, անօրինականություն, տնտեսության կործանում, հիպերինֆլացիա (գերարժեքազրկում) - այս ամենն ամենակուլ քաոսի նման տարածվեց ամբողջ երկրի տարածքով Հետաքրքրական է, որ այս փուլն ինչպես խաղաղ սկիզբ էր առել իշխանությունից կոմունիստների հեռացումով, այնպես էլ խաղաղ ավարտվեց՝ 1995 թ. օգոստոսի 25-ի սահմանադրության ընդունումով. ի դեպ, Վրաստանի պատմության մեջ ընդունված 1921, 1922, 1937

---

[364] Хаиндрова Ивлиан, Политические процессы в пост советской Грузии, /Диаспора, нефть и розы Чем живут страны южного Кавказа Под редакцей Ивлиана Хаиндравы и Александра Искандаряна/,Фонд Г Белия и КИСМИ, Е , 2005, с 138.

[365] Նույն տեղում

[366] Скаков А Ю , Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с 274

[367] Хаиндрова Ивлиан, Политические процессы в пост советской Грузии, /Диаспора, нефть и розы. /, Фонд Г Белия и КИСМИ, с 138

և 1978 թթ. սահմանադրությունների մեջ 1921 թ. սահմանադրության ամենանշանակալի ժառանգորդը համարվում էր 1995 թ.սահմանադրությունը[368]:

Վրաստանում 1993 թ. ապրիլ ամսից, որպես անցումային արժույթ, ռուսական ռուբլու հետ 1:1 հարաբերակցությամբ մտցվեց կուպոնը[369]: Սակայն այս արժույթն իր ստեղծման օրվանից բռնեց արժեզրկման ուղին: Այսպես, 1993 թ. նոյեմբերին արդեն 25 կուպոնի դիմաց էր ստացվում 1 ռուսական ռուբլին, իսկ մեկ դոլարն արժեր երեք հազար կուպոն[370], իսկ ահա արդեն 1994 թ. մայիսին շուկա դուրս գալու համար հարկավոր էր ֆանտաստիկ մեծության թվերով կուպոն: Այսպես, Ջավախքում մեկ տոննա դիզելային վառելիքը 15 մլն կուպոն էր, իսկ մեկ դոլարն արժեր 500 հազար կուպոն: Ծիծաղելի կթվա, եթե նշենք, որ այս շրջանում նվազագույն աշխատավարձը տատանվում էր 60-70 հազար կուպոնի սահմաններում[371]:

Այսպիսով, 1994 թ. ապրիլի 5-ի դրությամբ, երբ լրանում էր կուպոնը որպես ազգային արժույթ շրջանառության մեջ մտցնելու մեկ տարին, ռուսական ռուբլու նկատմամբ 1:1 հարաբերակցությունից հասել էր 1:250 հարաբերակցության: Երկրի աղետալի վիճակը պատկերացնելու համար նշենք այն փաստը, ոչ չնայած արտադրծնախարարի բարձր վճարովի պաշտոնին, նրա տարեկան եկամուտը կազմում էր ... 12 դոլար: Բնակչության ճնշող մեծամասնությունը՝ ավելի քան 90 %-ը, ըստ պաշտոնական վիճակագրության, հայտնվել էր աղքատության նշագծից ցածր պայմաններում[372]: Տեղի փորձագետները Վրաստանի սոցիալ տնտեսական ճգնաժամը բացատրում էին հետևյալ պատ-

---

[368] "Свободная Грузия", 27 08.1996, N 120. Միայն սա էր ընդունվում հետխորհրդային Վրաստանում, քանի որ վերջինս ընդունվել էր անկախ Վրաստանի գոյության ընթացքում. Տես «Ազգ», 26 08.1995:
[369] «Ազգ», 18 11 1993:
[370] Նույն տեղում
[371] «Հայաստանի Հանրապետություն», 06.05 1994:
[372] Նույն տեղում, 16.04 1994

ճառներով. նախկին ԽՍՀՄ-ի հետ տնտեսական կապերի խզումը, Ռուսաստանի և ԱՊՀ շուկայի կորուստը[373]:

Այս ճգնաժամային իրավիճակում, երբ «իրականացվում էր պետության տոտալ թալան» (Վրաստանի վերահսկողության պալատի նախագահ Ռ. Շավիշվիլու խոսքերից)[374], Վրաստանը ցանկություն էր հայտնում մտնել ռուբլու գոտի, որը կօժանդակեր նրա տնտեսական վերածննդին[375]: Վրաստանի՝ ռուբլու գոտու մեջ մտնելու հարցը քննարկվեց նաև 1994 թ. հունվարին, սակայն այն միանշանակ չընդունվեց կառավարող ուժերի կողմից. Վրաստանի շատ քաղաքական ուժեր այն համարեցին ձեռք բերված անկախության կորուստ[376]:

1992-1993 թթ. իրականացված այսպես կոչված դրամակրեդիտային քաղաքականությունը փաստորեն քայքայեց բնակչության կողմից սկզբնապես մեծ խանդավառությամբ ընդունված նոր վրացական արժույթը՝ կուպոնը: Ազգային բանկի հովանավորության ներքո (որը տրամադրեց արտոնյալ կրեդիտներ ազդեցիկ տնտեսական խմբերին և քաղաքական ֆավորիտներին) տեղի ունեցավ շարքային քաղաքացիների համատարած աղքատացում և էլիտայի առավել հարստացում[377]: Ըստ Վրաստանի էկոնոմիկայի նախարար Մ. Ջիբութիի՝ 1992 թ. ներքին համախառն արտադրանքի ծավալը 1991 թ. համեմատությամբ նվազել էր 40 %-ով, ազգային եկամուտը՝ 45 %-ով, արդյունաբերական արտադրանքը 46 %-ով, գյուղատնտեսականը 31 %-ով[378]:

Աբխազական պատերազմի պատճառով փակված երկաթուղին և Հարավային Օսեթիայի չկարգավորված իրադրությունը

---

[373] Նույն տեղում:
[374] Նույն տեղում, 18 02 1992·
[375] «Ազգ», 13.01 1994
[376] Նույն տեղում, 13 01 1994, հմմտ «Հայաստանի Հանրապետություն», 12.03.1994:
[377] Гоциридзе Р., Канделаки О , Влиятельные группы и коррупция в Грузии, /Диоспора, нефть и розы ../, Фонд Г Белия и КИСМИ, с 180
[378] «Ազգ», 04 03 1993.

տնտեսական շրջափակման մեջ էին առել Վրաստանը: Սրան գումարած նաև 1994-1996 թթ. Հյուսիսային Կովկասում ընթացող ռուս-չեչենական պատերազմը և, ինչու չէ նաև՝ Վրաստանի ընդգծված հակառուսական տրամադրվածությունը, վերջինիս կամաց-կամաց դուրս բերեցին ռուսական շուկայից և ստիպեցին նոր տնտեսական շուկաներ որոնել Իրանում և, առաջին հերթին Թուրքիայում:

Ներքոբերված աղյուսակը ցույց է տալիս 1993-1995 թթ. հունվար-մայիս ժամանակահատվածում Վրաստանի արտաքին տնտեսական շրջանառության հետևյալ աճը՝ Թուրքիայի հետ և նվազումը՝ Ռուսաստանի հետ[379].

Վրաստանի գլխավոր արտաքին առևտրական գործընկերները . (%-ով)

	1993	1994	1995 (հունվար-մայիս)
Թուրքիա	11	25,1	31,9
Ռուսաստան	44	16,2	9,2

Անդրադառնալով այս տարիների հայ-վրացական հարաբերություններին, պետք է նշել, որ դրանք ունեցել են բարելավման միտումներ, եթե չասենք, որ դրան հակվելուն կողմերը (և հատկապես՝ հայկականը) եղել են ինչ-որ տեղ «պարտադրված»: Միանգամից նշենք, որ կողմերի միջև բարձր մակարդակի բոլոր հանդիպումների օրակարգում գրեթե առանց բացառության եղել է Վրաստանի տարածքով անցնող հայկական հաղորդակցման միջոցների և, հատկապես, գազատարի անվտանգությունն ապահովելու մասին հարցը: Շատ անգամներ կողմերը (և հատկապես հայկականը) ստիպված են եղել հանդիպումներ կազմակերպել

---

379 Кухианидзе А , Армянское и Азербейджанское меньшиства в Грузии О национальной и внешней политике Грузии, /Центральная Азия и Кавказ, Этнические и региональные конфликты в Евразии, общая редакция Малашенко А , Коппитере Б , Тренин Д /, кн 1, М , 1997, с 172

վրացական կողմի հետ՝ հատուկ այս՝ Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող հարցի հետ կապված: Օրակարգի այդպիսի հարց ուներ երկու երկրների ղեկավարների 1992 թ հունիսի 5-ի Ստեփանավան քաղաքում կայացած հանդիպումը[380], երբ սրա հետ մեկտեղ կողմերը պայմանավորվեցին նաև մի շարք այլ հարցերի շուրջ ձեռք բերել փոխադարձ համաձայնություններ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև երկու պետությունների մայրաքաղաքներում դեսպանատներ բացելու մասին: Այս գործընթացն իր շարունակությունը ստացավ 1992 թ. հուլիսի 18-ին երկու երկրների արտգործնախարարների երևանյան հանդիպման ժամանակ, երբ կողմերը ստորագրեցին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համաձայնագիրը[381]:

Մոտավորապես օրակարգի նույն հարցերով ընթացան (Բաթումի և Փոթի նավահանգիստներից հայկական բեռների փոխադրման ապահովում, պայթեցված գազատարի վերականգնում, այլ բեռնափոխադրումների ապահովում Վրաստանի տարածքով և այլն) և՛ երկու երկրների նախագահների 1992 թ. հոկտեմբերի 23-ի[382], և վարչապետների՝ օգոստոսի 14-ի[383] և դեկտեմբերի 10-ի[384] Թբիլիսյան հանդիպումները, ինչպես նաև նույն բնույթի են եղել 1992 թ. հունիսի 1-ին կնքված միջպետական մի շարք համաձայնագրեր[385]:

Արտաքուստ ջերմ ու բարեկամական թվացող այս հարաբերությունների տակ կուտակված էին բազմապիսի հիմնախնդիրներ: Վրաստանը, «խուլիգանական արարք» որակելով գազատա-

---

[380] «Հայաստանի Հանրապետություն», 06.06.1992.

[381] «Ազգ», 18 07 1992, հմմտ «Հայաստանի Հանրապետություն», 18 07 1992·

[382] «Ազգ», 24.10.1992, հմմտ "Свободная Грузия', 24.10 1992, «Հայաստանի Հանրապետություն», 24.10.1992:

[383] «Հայաստանի Հանրապետություն», 18 08.1992:

[384] «Ազգ», 11 12.1992

[385] Նույն տեղում, 04.06 1992

րի պայթեցումները, փորձում էր արհեստականորեն փոքրացնել Հայաստան մտնող գազի քանակությունը: Դա հատկապես պարզորեն երևում էր, երբ երկկողմ հանդիպումներից կարճ ժամանակ անց, ամեն ինչ կրկնվում էր նույն ձևով: «Եթե այսպես շարունակվի, Հայաստանի նախագահի կամ վարչապետի նստավայրը հարկ կլինի տեղափոխել Թբիլիսի», - կատակով նշում էր ժամանակի մամուլը[386]*:*

Նշենք նաև, որ ըստ պայմանավորվածության, Վրաստան մտնող 28 մլն խորանարդ մետր գազից 12 մլն պետք է տրվեր Հայաստանին[387]*: Վրաստանում անխնա կողոպտվում էին նաև հայկական ավտոշարասյուները և գազատարի հայազգի շինարարները*[388]*:*

Բարձրացնելով առկա ծանր հիմնախնդիրների հարցերը՝ դրանց լուծմանն ուղղվելիք քայլերի ձեռնարկման կոչով վրաց մտավորականությանն են դիմել նաև հարևան երկրների հետ համագործակցության ու մշակութային կապերի և Վրաստանի հետ համագործակցության ու մշակութային կապերի հայկական ընկերությունները[389]*:*

1993 թ. ընթացքում հայ-վրացական հարաբերությունները մոտավորապես ընթացան նույն ուղիով և նույն թեմաներով: Դեռևս փետրվարի 23-ին Թբիլիսիում հանդիպեցին արտգործնախարար Ա. Զիկվաձեն և հայկական նույն գերատեսչության պաշտոնակատարը[390]*: Դարձյալ օրակարգում գազամուղի պայթեցման հարցն էր:*

Երկու երկրների նախագահների մայիսի 19-ի հանդիպումից մեկ օր առաջ՝ 1993 թ. մայիսի 18-ին, ՀՀ Կառավարության թիվ 202 կարգադրությամբ Հայաստանի Հանրապետության և Վրաս-

---

[386] Նույն տեղում, 06.01.1993.
[387] Նույն տեղում·
[388] Նույն տեղում, 05 02.1993:
[389] «Հայաստանի Հանրապետություն», 27 02 1993
[390] Նույն տեղում, 25.02 1993·

տանի Հանրապետության միջև առևտրատնտեսական և միջպետական աշխատանքների կազմակերպման նպատակով ստեղծվեց հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության նախարար, օպերատիվ կառավարման հանրապետական շտաբի կոորդինատոր Գագիկ Մարտիրոսյանի գլխավորությամբ[391]: Իսկ մեկ օր հետո, մայիսի 19-ին, տեղի ունեցավ Երևանում երկու երկրների նախագահների բարձր մակարդակի հանդիպումը[392], որտեղ ստորագրվեց հայ-վրացական բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին միջպետական պայմանագիր: Միևնույն ժամանակ վարչապետների (Թ. Սիգուայի և Հ. Բագրատյանի) և համապատասխան այլ գերատեսչությունների ղեկավարների կողմից ստորագրվեցին կյանքի տարբեր ոլորտներին առնչվող մեկ տասնյակից ավելի երկկողմանի համաձայնագրեր[393]:

Վրաստանի տարածքով հայկական բեռնափոխադրումների, արդեն «ավանդական» դարձած գազամուղի անխափան գործարկման և այլ հարցերին էին նվիրված երկու երկրների վարչապետների 1993 թ. սեպտեմբերի 18-ի[394] և 1994 թ. փետրվարի 20-ի[395] համապատասխանաբար ստեփանավանյան և երևանյան հանդիպումները: Միակ «նորությունը» դա Գյումրի-Ախալքալաք-Ախալցխա-Բաթում ավտոճանապարհի անխափան աշխատանքը կազմակերպելուն ուղղված քայլերի մասին ոչինչ չասող խոսակցությունն էր[396]:

Երկու երկրների կառավարությունների բարձր մակարդակի մեկ այլ հանդիպում տեղի ունեցավ 1994 թ. հուլիսի 2-ին Ստեփանավան քաղաքում: Ստորագրվեցին մի շարք պայմանագրեր,

---

[391] Նույն տեղում, 21 05.1993.
[392] Նույն տեղում, 20.05 1993, հմմտ «Ազգ», 20.05 1993.
[393] Նույն տեղում.
[394] Նույն տեղում, 21.09 1993:
[395] «Ազգ», 22.02.1994.
[396] «Հայաստանի Հանրապետություն», 21.09.1993.

որոնցով Վրաստանը պարտավորվում էր վճարել Հայաստանի շուրջ 17.1 մլն դոլար կազմող պարտքը[397]:

Այսպիսով, տալով հայ-վրացական հարաբերությունների ընդհանուր ընթացքը, պետք է նշել, որ իրականացվում էր ձեռք բերված համաձայնագրերի շատ փոքր մասը. դրանք հիմնականում խախտվել են կամ չեն իրականացվել Վրաստանի կողմից և կողմերը շատ անգամներ ստիպված են եղել կրկնել նույն պայմանագրի կնքումը մի քանի անգամ՝ գրեթե նույն բովանդակությամբ (իհարկե, ամեն անգամ չմոռանալով բարձրացնել հայ վրացական բարեկամության կենացը): Այդուհանդերձ, ինչպես երևում է դեպքերի հետագա ընթացքից, պետք է շարունակվեին այդպիսի «ոճով» ընթացող հարաբերությունները, պետք է շարունակվեին նաև նույն ձևի ու բովանդակությամբ պայմանագրերի կնքումը, քանի որ 1994-1995 թթ. ընթացքում չէին դադարեցվում Վրաստանի տարածքում գազամուղի պայթեցումները: Ինչպես նշում են առանձին լրատվամիջոցներ, այս երկու տարիների ընթացքում (1993-1995 թթ) տեղի էր ունեցել գազամուղի նման 35 պայթեցում: Հարկ ենք համարում նշել, որ գազատարի վերականգնման և անխափան աշխատանքի երաշխիքներ Վրաստանի կողմից տրվում էին ոչ այնքան ելնելով Հայաստանի հետ բարեկամական հարաբերություններից. վերլուծելով փաստերը պարզ է դառնում, որ Թբիլիսին ապահովում էր Երևանի հետ հաղորդակցությունը՝ եվրոկառույցների պարտադրանքից ելնելով, երբ վերջիններս (Եվրամիությունը և Համաշխարհային Պարենային ծրագիրը) սպառնում էին Վրաստանին դադարեցնել մարդասիրական բեռների առաքումները վերջինիս տարածք, եթե Թբիլիսին չկարողանա արագորեն վերականգնել երկաթուղային հաղորդակցությունը Հայաստանի և Ադրբեջանի հետ[398]:

Հայ-վրացական հարաբերությունների համեմատական ջերմացում կարելի էր համարել հայ մեծանուն բանաստեղծ Վահան

---

[397] «Ազգ», 05.07.1994·

[398] Նույն տեղում, 09.12 1994.

Տերյանի ծննդավայր Գանձա գյուղում կազմակերպված պոեզիայի ավանդական տերյանական օրվա տոնահանդեսը (այդպիսի տոնահանդես կազմակերպվում է ամեն տարի), երբ 1993 թ. հուլիսի 18-ին Գանձա գյուղում հանդիպեցին ՀՀ խորհրդարանի առաջին փոխնախագահ Արա Սահակյանի և Վրաստանի Հանրապետության խորհրդարանի խոսնակ Վախթանգ Գոգուաձեի գլխավորած պատվիրակությունները[399]: Այդուհանդերձ, հայ-վրացական հարաբերություններում չէր բացառվում պայթյունավտանգ իրավիճակի ստեղծումը՝ կապված Վրաստանում աճող հակահայ տրամադրությունների հետ[400]: Վրացական կողմը հարաբերությունների հնարավոր վատացումները կապում էր նաև Աբխազիայի պատերազմին հայերի մասնակցության հետ՝ փորձելով այդ միջոցով ճնշում գործադրել Հայաստանի վրա[401]:

Այսպիսով, այս ժամանակահատվածում Վրաստանի առջև ծառացել էին հետևյալ հիմնական խնդիրները (հակասությունների օջախները).

1. Աբխազիայի խնդիրը, որը ամենացավոտն էր.
2. Մեգրելա-վրացական հակասությունները.
3. Աջարիայի հարաբերությունները Թբիլիսիի իշխանությունների հետ.
4. Բռնագաղթած թուրք-մեսխեթցիների խնդիրը.
5. Հարավային Օսեթիայի ինքնորոշման հարցը.
6. Սամցխե-Ջավախք-Թռեղքի հարցը.
7. Վրաստանում բնակվող ադրբեջանցիների խնդիրը:

Հետաքրքրական է, որ խնդիրների մեծ մասի այս կամ այն ձևով լուծման մեջ էին գտնվում Վրաստանի՝ իր հարևանների հետ հարաբերությունների հաստատման հիմնական չափորոշիչ-

---

399 «Հայաստանի Հանրապետություն», 20 07.1993·

400 Որպես օրինակ կարելի է բերել 1994 թ մարտի 15-ի Թիֆլիսի հայկական թատրոնի շենքի պայթեցումը, երբ զոհվեց մեկ երեխա, վիրավորվեց 16 մարդ, որոնցից մի քանիսը ևս մահացան, (տես «Ազգ», 17 05.1994).

401 «Հայաստանի հանրապետություն», 04 06.1994

ները: Ելնելով այս տրամաբանությունից և հայ-վրացական կայուն հարաբերությունների հաստատումից՝ կարելի էր եզրակացնել, որ Սամցխե-Ջավախք-Թռեղք տարածաշրջանում շատ աննշան են չլուծված հիմնախնդիրները, կամ գոնե դրանց մասին համարյա չի խոսվել և հայ-վրացական բարձրաստիճան պաշտոնյաների գրեթե ոչ մի հանդիպման ժամանակ: Առանձին մանր սոցիալ-տնտեսական հարցերի արծարծումը ոչինչ չէր նշանակում, որոնց մասին էլ սովորաբար խոսք էր գնում ոչ թե մասնավորապես երկրամասի, այլ շատ անգամ ընդհանուր, ամբողջ Վրաստանում ապրող հայության մակարդակով:

Այնինչ, խնդրո առարկա երկրամասում առկա էին ազգային ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք չլուծված հիմնախնդիրներ, որոնք ավելանում էին Վրաստանի կողմից հատուկ մշակված ծրագրերով և հայկական կողմի թողտվության պատճառով:

Դրանցից մեկը հողային հարցն էր, որին բազմիցս անդրադարձել ենք: Հողային բարենորոգչության առաջին փուլը սկսվել էր դեռևս, ինչպես արդեն նշել ենք, Վրաստանի նախարարների կաբինետի 1992 թ. հունվար-մարտ ամիսներին ընդունած որոշումներից հետո: Վրաստանի ազգային փոքրամասնություններով բնակեցված սահմանամերձ մարզերում տնտեսության զարգացմանը խոչընդոտող (ինչպես և ազգային փոքրամասնությունների շրջանում էթնոժողովրդագրական պատկերը փոխելուն ուղղված) այս որոշումները «թարմացվեց» 1993 թ. հունվարի 16-ի՝ «Գյուղատնտեսական նշանակության հողերի բարենորոգումների ընթացքի մասին» որոշումով, որի չորրորդ կետով նախատեսվում էր հանրապետության քաղաքների բնակչությանը բեռնաթափելու և սննդամթերքի մատակարարումը բավարարելու համար հանրապետական ենթակայության քաղաքների և շրջկենտրոնների բնակիչներին հողեր հատկացնել գյուղական վայրերում: Շրջանների իշխանությունները պարտավոր էին երկշաբաթյա ժամկետում ճշտել սեփականաշնորհվող հողերի չափը և

համաձայնեցման համար ներկայացնել Վրաստանի Հանրապետության հողային ռեսուրսների և հողային կադաստրի կոմիտե: Հող ստացող քաղաքաբնակներին օգնելու համար այդ կոմիտեի համակարգում նախատեսվում էր ստեղծել հատուկ կազմակերպություն[402]:

Առաջին հայացքից քաղաքային բնակչության շրջանում խորացած պարենային ճգնաժամը հաղթահարելուն ուղղված այս ծրագիրը իրականում նպատակ ուներ քաղաքաբնակ այլազգիներից հողը խլել և քաղաքաբնակ ազգային շրջանների ներկայացուցիչներին դարձնել խոշոր հողատերեր: Դա պարզ երևում է 1993 թ. հունվարի 16-ի որոշման հավելվածից, որտեղ այս հողհատկացումներն արվում էին խիստ խտրական սկզբունքներով. եթե վրացաբնակ շրջաններում որոշման հավելվածում նախատեսվում էր շրջկենտրոնների և հանրապետական ենթակայության քաղաքների բնակիչների միջև հողը բաժանել համամասնորեն, ապա ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում տեղացիներին գրեթե ոչինչ չէր տրվում և միաժամանակ հսկայական չափերի հողակտորներ էին առանձնացվում հանրապետության քաղաքների այն բնակիչների համար, որոնք ցանկանում էին գյուղ տեղափոխվել կամ էլ ուղղակի գյուղում հող ստանալ: Սրանով հողազուրկ էր արվում այլազգի գյուղացին և դառնում քաղաքաբնակ վրացու «վարձու մշակը»: Ասվածը պարզ դառնալու համար հարկ ենք համարում մեջ բերել որոշման հավելվածից[403] պատմաբան Գ. Խուդինյանի առանձնացրած մի քանի վրացական և հայկական ու ադրբեջանական շրջանների՝ վերոհիշյալ ծրագրով նախատեսված հողաբաշխման պատկերը, որոնք դրված են համեմատության մեջ[404]:

Վրաստանի Հանրապետության Նախարարների դահլիճի

---

[402] «Ազատամարտ», թիվ 14, ապրիլ, 1994:
[403] Հավելվածի և այլնի մասին տես "Свободная Грузия', 04.02.1993.
[404] «Ազատամարտ», թիվ 14, ապրիլ, 1994.

1993 թ. Հունվարի 16-ի որոշման հավելվածից

Հողատարածություններ, որոնք առանձնացվում են Հանրապետության քաղաքների և շրջկենտրոնների բնակչության համար.

ա) Վրացաբնակ 6 շրջաններ

Շրջանը	Առանձնացվող ողջ տարածքը (հեկտարներով)	Այդ թվում՝	
		շրջկենտրոնների և ավանների բնակիչներին	Հանրապետության քաղաքների բնակիչներին
Կվարելի	1.130	600	530
Լանչխութի	1.300	800	500
Ծալենջիխի	730	500	230
Կազբեգի	120	100	20
Լենտեխի	70	50	20
Թիանեթի	1 645	750	715
Ընդամենը	4.645	2 800	2 015

բ) Հարավային 6 (հայաբնակ և ադրբեջանաբնակ) շրջաններ

Շրջանը	Առանձնացվող ողջ հողատարածքը (հեկտարներով)	Այդ թվում	
		Շրջկենտրոնների և ավանների բնակիչներին	Հանրապետության քաղաքների բնակիչներին
Ախալքալաք	890	40	850
Նինոծմինդա	960	20	940
Ծալկա	1.030	50	980
Բոլնիս	4.020	170	3 850
Մառնեուլ	5.870	120	5 750
Գարդաբանի	6.590	90	6 500
Ընդամենը	19 360	490	18 870

Ինչևէ, որ վրացիներին ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում հողատեր դարձնելու այս քաղաքականությունը ևս ձախողվեց. Վրաց բնակչությունը չցանկացավ զբաղվել գյուղատնտեսական աշխատանքով, իսկ այլազգիների զգալի մասն էլ զրկվեց նման հնարավորությունից: Արդյունքում տուժեցին թե՛ քաղաքաբնակ վրացիները, և թե՛ ազ-

գային փոքրամասնությունները. շատ հողատարածքներ ծածկվեցին մոլախոտերով, երկրի տնտեսությանը հասցվեց մեծագույն վնաս: 1993 թ. հունվարի 16-ի որոշումն իրագործելիս շրջանին պատկանող վարելահողերի 28 %-ն անցավ անհատներին, իսկ 72 %-ը մնաց հանրային տնտեսության ձեռքում: Եթե 28 % վարելահողերի վրա 1994 թ. հունվարի մեկի դրությամբ, Բոգդանովկայի շրջանում մասնավորն ուներ 20.000 պայմանական գլուխ անասուն, ապա հանրային տնտեսությունների վարելահողերի 72 %-ի, ինչպես նաև՝ խոտհարքների և մարգագետինների վրա, 1994 թ. հունվարի 1-ի դրությամբ կար ընդամենը 11.000 գլուխ անասուն[405]:

Այսպիսով, 1 հեկտարի հաշվով անհատը 3.5 անգամ ավելի անասնագլխաքանակ ուներ, քան հանրային տնտեսությունը: Այս անհամամասնությունն առկա էր նաև գյուղատնտեսական տեխնիկայի բնագավառում. հանրային տնտեսությունները, մինչև իրենց գործը չավարտեին, գյուղտեխնիկային թույլ չէին տալիս աշխատելու գյուղացիական անհատական տնտեսություններում, ինչն առաջացնում էր գյուղացիների դժգոհությունը, բացասաբար անդրադառնում գյուղացու աշխատանքի արտադրողականության վրա:

Վրացական իշխանությունների հերթական հաջորդ քայլը, որ կատարվեց Սամցխե-Ջավախքում և առաջացրեց բուռն հուզումներ, «Սամցխե-Ջավախք» տերմինով անվանակոչված երկրամասի ստեղծումն էր, որտեղ մտցվեց կառավարման հատուկ ձև՝ Վրաստանի նախագահի անձնական և լիազոր ներկայացուցչի ղեկավարության ներքո:

Ցայժմ մեր կողմից շրջանառվող «Սամցխե-Ջավախք» տերմինն օգտագործվել է, երբ խոսքը գնացել է պատմական հայկական Սամցխե և Ջավախք գավառների տարածքում ստեղծված շրջաններին (Ծալկայի [Թռեղքի]) մասին խոսելիս մենք անունը հատուկ նշել ենք), և «երկրամաս» բառն ունեցել է ոչ թե

---

[405] Նույն տեղում, թիվ 31, օգոստոս, 1994:

քաղաքական-վարչատարածքային, այլ պատմական Հայկական տարածքներին վերաբերող իմաստ:

Այժմ իրավիճակն արմատապես փոխվում էր. «Հաշվի առնելով, որ երկրում վերջին ժամանակներում ստեղծված ծանր քաղաքական, տնտեսական, քրեածին իրադրության պատճառով Սամցխե-Ջավախեթիում՝ Ադիգենի, Ասպինձայի, Ախալքալաքի, Ախալցիխեի, Բորժոմի և Նինոծմինդայի շրջաններում տեղ են գտել լուրջ դժվարություններ էկոնոմիկայի ոլորտում, ձգձգվում են նոր տնտեսավարման, սեփականաշնորհման անցնելու գործընթացները, չեն գնվում և իրացվում բնակչության արտադրած մթերքները, առկա են դժվարություններ էներգակիրների բաշխման գործում, չեն կատարվում սոցիալ-տնտեսական և այլ հարցերի վերաբերյալ իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների որոշումները, թուլացել է դրանց կատարման վերահսկողությունը, ինչը բացասաբար է անդրադառնում բնակչության վիճակի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրական երաշխիքների վրա»[406], ստեղծվում էր նոր տիպի մի «երկրամաս»: Նոր ստեղծվող երկրամասի մեջ մտնում էր, ինչպես տեսանք, Բորժոմի վրացաբնակ շրջանը, իսկ դրա փոխարեն ստեղծված երկրամասի մեջ չէր ներառվում Հայաբնակ Ծալկան: Այս նոր տիպի երկրամասի ստեղծումն այս տարածաշրջանում իրագործվելիք ծրագրերի սկիզբն էր ու նաև նախադրյալը: Այն իր մեջ ուներ լուրջ պատճառահետևանքային կապերի մի ողջ համալիր: Այս նահանգի ստեղծումը նշանակում էր Վրաստանի՝ առաջին հերթին կառուցվածքային փոփոխությունների լրջորեն նախապատրաստվող գործընթացի սկիզբը: Ոչինչ չստանալով Աբխազիայում և զգալով սեփական ընդդիմության ճնշումը՝ Վրաստանի ղեկավար շրջանակները փաստորեն անընդունակ էին առանձին-առանձին լուծելու բազմաթիվ ու բազմապիսի ազգամիջյան խնդիրները: Վրաստանին

---

[406] Указ N 237, Глава Грузинского гасударства, 1994 г. 31 июля, г Тбилиси.

չէր ենթարկվում Աբխազիան. վրացիները ստիպված էին ուժեր կենտրոնացնել թե՛ աբխազական, թե՛ օսեթական, թե՛ աջարական գոտիներում, ինչպես նաև Արևմտյան Վրաստանի 14 շրջաններում, որոնցում ևս արտակարգ դրություն էր: Այս պայմաններում Վրաստանը չէր էլ կարող մտածել երկրի միասնությունը բռնի ուժով վերականգնելու մասին: Մնում էր միայն երկրի ֆեդերատիվ կառուցվածքի մոդելի մշակումը:

1994 թ. փետրվարի 3-ին կնքված ռուս-վրացական պայմանագրով[407] *Վրաստանը նորից կողմնորոշվել էր դեպի Ռուսաստան, ուստի պետք է ցանկացած մոդելի մշակում ձեռնտու լիներ նաև Ռուսաստանին, վերջինիս օգնությամբ այդ մոդելը պիտի պարտադրվեր անհնազանդներին: Այստեղ սկզբունքորեն Վրաստանի և Ռուսաստանի շահերը համընկնում էին, բայց միմյանցից տարբերվում էին ֆեդերացիայի մոդելի իրականացման կոնկրետ մեխանիզմների հարցում, ինչը մինչև վերջ էլ մնաց չկարգավորված, որն էլ իր հերթին տարավ հարաբերությունների նորանոր փոփոխումների և այդպես էլ Վրաստանում շատ հարցեր (այդ թվում նաև երկրի կառուցվածքի հարցը) մնացին չլուծված:*

Վրաստանին փաստորեն անհրաժեշտ էր ֆեդերալիզացիայի այնպիսի տարբերակ (ի միջի այլոց, երկրի՝ դաշնային հիմունքներով կառուցվածքի ստեղծման օպտին էր հանդես եկել նաև Է. Շևարդնաձեն, իր հարցազրույցներից մեկում)[408]*, որը՝*

ա) կերաշխավորեր նրա տարածքային ամբողջականությունը,

բ) կապահովեր ուժային կառույցների միասնական համակարգի ձևավորումը,

գ) կստեղծեր պայմաններ շարունակելու վրացիների վերաբնակեցման քաղաքականությունը դաշնության սուբյեկտների տարածքներում:

---

[407] «Ազատամարտ», թիվ 26, հուլիս, 1994, հմմտ «Հայաստանի Հանրապետություն», 05.02.1994, «Ազգ», 12 021994·

[408] «Հայաստանի Հանրապետություն», 23 03 1995

Ռուսաստանին անհրաժեշտ էր Վրաստանի ֆեդերալիզացիայի այնպիսի տարբերակ, որ կարող էր ապահովել.

ա) Սև ծովի և վրաց-թուրքական սահմանի երկայնքով ինքնավարությունների շղթայի ձևավորումը՝ Աբխազիա-Մեգրելիա-Աջարիա-Ջավախք (կամ Սամցխե-Ջավախք) գծով:

բ) տեղերում որոշակի ուժային կառույցների առկայությունը, որոնք կարող են հակակշռել Թբիլիսիի գաղութային քաղաքականությունը.

գ) իր ռազմական խարիսխների գոյատևման երաշխավորումը, թե՛ Թբիլիսիի և թե՛ տվյալ ինքնավարության կողմից, որի հետևանքով նրանց դուրս բերման վտանգ այլևս չէր սպառնա:

Ֆեդերալիզացիայի ծրագրերի միջև առկա տարբերությունները ստիպում էին վրացիներին դիմել կանխարգելիչ գործողությունների՝ նպատակ ունենալով ֆեդերատիվ նոր համակարգի միջոցով.

ա) հետ բերել նրանց, ովքեր արդեն փաստորեն անջատվել են,

բ) թույլ չտալ ֆեդերալիզացիայի նոր սուբյեկտների ձևավորումն ազգային հատկանիշի հիման վրա՝ ազգային շրջանները վրացական շրջանների հետ միաձուլելու ճանապարհով (- Սամցխե-Ջավախք երկրամասին Բորժոմի արհեստական կցումը, - ինչպես նաև Սամցխեի համեմատաբար վրացաբնակ շրջանների՝ Ջավախքի հետ միավորելը դրա վառ օրինակն էր):

Այսպիսով, սահմանադրության ընդունման նախօրեին, Վրաստանում, ինչպես պետական սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած, այնպես էլ տարբեր քաղաքական ուժերի կազմած առանձին նախագծերի մեջ (ընդհանուր թվով 7) կառավարման կենտրոնական և տեղական օրգանների միջև մրցվում էր մի նոր հասկացություն՝ «մխարե», որը թարգմանաբար ընկալվում է որպես «երկրամաս» կամ «հող»: Ինչպես նշում էր պետական սահմանադրական հանձնաժողովի նախագահ Ավթանդիլ Դեմետրաշվիլին «Սվոբոդնայա Գրուզիա» թերթին

տված հարցազրույցում, ««մխարե» բառը թարգմանելով որպես երկրամաս մենք հասկանում ենք, որ օգտագործում ենք ֆեդերալիզացիայի որոշ տարրեր ...նման տարածքային կառույցի միջոցով, մենք կցանկանայինք լուծել Աբխազիայի կոնֆլիկտի հետ կապված շատ հարցեր: Բայց ներկա վարչական կառուցվածքի դեպքում, մեր որոշ տարածքային միավորներն ունեն ինչ-որ հատուկ կարգավիճակ, նկատի ունեմ ինքնավարություններն Աբխազիայում և Աջարիայում: Որքանով է դա արդարացված հեռանկարի տեսանկյունից՝ դա այլ հարց է, բայց մարտավարական առումով, հնարավոր չէ իջեցնել նրանց կարգավիճակը»[409]: Այսպիսով, Վրաստանում ընթանում էր Սահմանադրության - մշակման միջոցով երկրի ֆեդերատիվ կառուցվածքը որոշելու գործընթաց:

Ահա այս գործընթացների համատեքստում պետք է դիտարկել Է. Շևարդնաձեի 1994 թ. հուլիսի 31-ին ստորագրած «Սամցխե-Ջավախքի ռեգիոնի ստեղծման մասին» թիվ 237 հրամանագիրը և «Ռեգիոնի (երկրամասի) վարչության մասին» կանոնադրությունը: Հրամանագիրը ֆեդերալիզացիայի ընդհանուր, թելադրվող և Վրաստանի համար պարտադիր գործընթացը սեփական ազգայնական շահերի լուծման գործիք դարձնելու փորձ էր: Այս ամենը խոսում էր այն մասին, որ Զ. Գամսախուրդիայի ազգայնամոլական վարչակարգի տապալումից և ինչ-որ չափով Ռուսաստանի «հովանու» ներքո անցնելուց հետո, Վրաստանի ղեկավարությունը չէր փոխել այլազգիներին դուրս մղելու քաղաքականությունը, միայն փոր-ձում էր ավելի նուրբ ու զգույշ հնարքներով իրականացնել այն: Այս հրամանագիրը, փաստորեն, ֆեդերալիզացիայի վրացական տարբերակի փորձարկումն էր, որը ստորագրելուց հետո Է. Շևարդնաձեն «տեղի բնակչության կենսական գործընթացների առավել կայուն կազմակերպման» և տարածաշրջանում պետու-թյան ղեկավարի անձն-

---

[409] "Свободная Грузия", 27 07 1994.

ական ներկայացուցչի պաշտոնի ստեղծման նպատակով», մեկնեց Ախալցխա[410]:

Տրամաբանական էր նաև փորձարկման օբյեկտի ընտրությունը: Վրացական իշխանությունները դեռևս չէին կարող ֆեդերալիզացիայի միջոցով այլազգիներին դուրս մղելու իրենց ծրագրերը պարտադրել այն ինքնավարություններին, որոնք տվյալ պահին իրենք էին դուրս մղել վրացիներին: Աբխազիան և Օսեթիան արդեն այդպես էին վարվել, Աջարիան չէր ենթարկվում Թբիլիսիին: Բորչալուին նման նախագիծ պարտադրելը դժվար գործ չէր, քանի որ նրա տարածքը ձգված էր Խրամ գետի հովտով և շատ տեղերում ուներ շերտ ընդ մեջ բնակված վրացա-ադրբեջանական, հայ-ադրբեջանական համայնքներ: Միակ չփորձարկված, բայց ամուր ընկույզը, մնում էր Ջավախքը, որը սահմանակից էր Հայաստանին, ուներ հավաք բնակչություն և դաշնային Վրաստանի կազմում հավակնում էր դառնալ առանձին երկրամաս («մխարե»): Բնական էր, որ անհրաժեշտ էր նման ձրգտումը կանխել վարչական կարգով՝ հրամանագրով՝ ստեղծելով Սամցխե-Ջավախեթիի երկրամաս: Այն, որպես նախադեպ, մեխանիկորեն կտեղափոխվեր Սահմանադրության մեջ, իսկ մինչ այդ, նշանակովի վարչությունը կիրականացներ վերաբնակեցման քաղաքականություն: Տարալուծելով վրացական շրջանների մեջ՝ Ջավախքը կդառնար ոչ թե հայկական ինքնավարություն, այլ խառը բնակչությամբ սովորական վրացական երկրամաս՝ «մխարե»[411]:

Ֆեդերալիզացիայի այս ծրագիրը հակասում էր ռուսական հայեցակարգին, քանի որ.

---

[410] «Ազգ», 03.08 1994·

[411] Ի դեպ, այս տերմինն օգտագործվել է նաև Զ Դավիթաշվիլու կողմից Վրաստանի ապագա վարչատարածքային բաժանման վերաբերյալ իր առաջարկ–նախագծում դեռ 1991 թ, երբ նույն այս (Սամցխե-Ջավախք) նահանգը նախատեսվում էր ստեղծել նույն ձևով Մեսխեթի անվանումով: Տարբերությունը միայն նահանգում երկրորդ և երրորդ կարգի ենթաշրջաններ ստեղծելու մեջ էր (տես Вестник Грузии", 13.02 1991)

ա) չէր ստեղծվում կորդոն (բուֆեր)՝ Թուրքիայի և Վրաստանի միջև,

բ) տեղերում ուժային կառույցները հանձնվում էր վրացիներին, որոնք կարող էին օգտագործել դրանք վերաբնակեցման քաղաքականության համար,

գ) ռուսական հենակետի ռազմականյանի նկատմամբ չէր երաշխավորվում երկրամասի ղեկավարության կողմից Թբիլիսիից տարբերվող, առանձին մոտեցման առկայությունը, քանի որ ինչպես այդ հարցին վերաբերվեր Է. Շևարդնաձեն, նույն կերպ կմոտենար Ախալցխայում նստած նրա լիազոր-ներկայացուցիչը:

Դա էր պատճառը, որ թեև ռուսական կողմը սկզբունքորեն կողմնակից էր ֆեդերալիզացիային, բայց, Վրաստանի հետ նույն խնդրի վերաբերյալ ունենալով հակադիր դիրքորոշումներ, ի վերջո չգնաց փոխզիջման: Այս ամենը հանգեցրեց նրան, որ 1995 թ. օգոստոսի 24-ին Վրաստանի ընդունած սահմանադրության մեջ բացակայեցին երկրի պետական-տա- րածքային և վարչա-տարածքային կառուցվածքի, սրա հետ մեկտեղ նաև՝ տեղական կառավարման և ինքնակառավարման աշխատակարգի մասին գլուխները[412]*: Պատգամավորների մի մասը քննարկումների ժամանակ առաջարկում էր դաշնության մասին սկզբունքների հարցը փակել Սահմանադրության մեջ:*

Ընդունված փաստաթղթում որևէ հիշատակություն ֆեդերացիայի մասին բացակայում էր: Սահմանադրության մեջ նշվում էր, որ «պետական-տարածքային կառուցվածքը պետք է ամրագրվի սահմանադրական օրենքով՝ Վրաստանի տարածքով մեկ սկզբունքային սահմանազատման հիման վրա»[413]*:*

Վրացական քաղաքագետները երբեմն փոխարինում էին ֆեդերալիզմը տարածքայնությամբ (ռեգիոնալիզմով), և հատկապես վերջինս համարվում էր «Վրաստանի զարգացման ան-

---

[412] Скаков А.Ю., Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с. 276.

[413] Նույն տեղում.

կյունաքարը»: Է. Շևարդնաձեի խոսքերով, տարածքայնությունը չի բացառում, մի կողմից՝ համակարգի և մեխանիզմների ամրապնդում, որոնք անհրաժեշտ են պետության ամբողջակա-նության համար, մյուս կողմից՝ ֆեդերատիվ հարաբերությունների ընդլայնումը դաշնության սուբյեկտների հետ՝ ինքնավար կազմավորումներով[414]*:*

Փոխարինելով ֆեդերալիզմը ռեգիոնալիզմով, առաջատար վրացական քաղաքագետներն առաջարկում էին օրենքներով հավասարակշռել-հավասարեցնել ապագա ֆեդերացիայի բոլոր սուբյեկտներին: Այդ պարագայում, նախկին ինքնավարություններ Աբխազիան, Հարավային Օսեթիան և Աջարիան կունենային այնքան ինքնավարություններ, որքան վրացական տարածքներ Կախեթը, Գուրիան և այլն: Այս ամենով փոքրացվում էին նաև հնարավորությունները ոչ վրացաբնակ, ազգային փոքրամասնություններով հավաք բնակեցված շրջաններում ստեղծելու ազգային ինքնավար միավորներ[415]*:*

---

[414] "Свободная Грузия", 20 07 1999

[415] 1993-1995 թթ ընթացքում Վրաստանն այսպիսով բաժանվեց 11 վարչատարածքային միավորների, որոնք գոյություն ունեն առ այսօր Դրանք են 1. Աբխազիան, 2 Աջարիան, 3 Գուրիան, 4. Իմերեթին, 5 Կախեթին, 6. Մցխեթա-Մթիանեթին, 7 Ռաջա-Լեչխումին և Քվեմո (Ներքին) Սվանեթին, 8. Սամեգրելո-Զեմո (Վերին) Սվանեթին, 9. Սամցխե-Ջավախեթին, 10. Քվեմո (Ստորին) Քարթլին, 11. Շիդա (Ներքին) Քարթլին: Եվ քանի որ 1995 թ օգոստոսի 24-ին ընդունված Վրաստանի սահմանադրության պետության կառուցվածքի մասին (հետևաբար և երկրի վարչատարածքային բաժանման մասին) գլուխը այդպես էլ չլրացվեց (Աբխազիայի, Հարավային Օսեթիայի և Աջարիայի հետ հարաբերությունների չկարգավորված լինելու պատճառով), ապա վերոնշյալ վարչանահանգային բաժանումներն այդպես էլ չստացան իրավաբանական ձևակերպումներ

Դեռևս Զ Գամսախուրդիայի ժամանակ լուծարված հարավային Օսեթիայի ինքնավար մարզին, ինչպես տեսանք, չտրվեց անգամ նահանգային կարգավիճակ վերջինս (ինչպես նաև նախկին Ինքնավար Մարզին հարակից մի քանի շրջաններ) մտցվեց Շիդա (Ներքին) Քարթլի նահանգի մեջ·

Ահա այս պայմաններում է. Շևարդնաձեի հուլիսի 31-ի հրամանագրին «Ջավախք» ժողովրդական շարժման տված պատասխանը ելնում էր այն դրույթից, թե վրացիները ստեղծում են կոնֆլիկտի արագացման սցենար: ՋԺՇ-ն և Ախալքալաքի շրջանի ղեկավարությունը մեր կարծիքով, ճիշտ չըմբռնելով իրավիճակը, վրաց ղեկավարությունը տվեց կոշտ, ժխտողական պատասխան[416]: Բայց, այդ պատասխանից նախ չէր պարզվում ամենակարևորը՝ թե սկսված գործընթացում ի՞նչ էր ուզում ինքը՝ Ջավախքը:

ՋԺՇ-ի լիդերների կողմից չկար Վրաստանի առջև դրվելիք հստակ մշակված հայեցակարգ, որտեղ պարզ ու հստակ թվարկված լինեին այն բոլոր պահանջները, որոնք հուզում էին Ջավախքի հասարակությանը[417]:

Մինչ այդ, անդրադառնանք Ջավախքի ներքաղաքական մի քանի հարցերի: Այս ընթացքում, ինչպես նշեցինք, ժամանակ առ ժամանակ Ջավախքի շուրջ ստեղծված հարցերի այս կամ այն ձևով բարձրացմամբ հանդես էր գալիս «Ջավախք» ժողովրդական շարժումը: Սակայն այնպիսի մի նուրբ, իրատեսական մոտեցում-

---

[416] Резолюция принята на собрании актива Ахалкалакского района, 04.08.1994г г. Ахалкалаки, копия Главе государства Республики Грузия г-ну Э. Шеварднадзе, спикеру парламента Республики Грузия г-ну В. Гогуадзе.

[417] Ջավախքի քաղաքական ինքնավարության համար համապատասխան ստատուս մշակող հանձնաժողը պահանջ էր ներկայացրել Վրաստանի պետության ղեկավար է Շևարդնաձեին փորձարարական հանձնաժողով գործուղել Ախալքալաք Ջավախքի սահմանադրական ստատուսի մշակման համար. Վերջինս «սովորույթի համաձայն» մնաց որպես «ծայն բարբառո հանապատի». Այդ մասին խոսվեց միայն 1995 թ հուլիսի 22-ի Ախալքալաք ժամանած Թեմուր Փիփիայի (որը, կառավարական մարմիններում գլխավորում էր պետական իշխանության տեղական մարմինների ատյանը) այցի ժամանակ Վերջինս հայտարարեց, որ Վրաստանի հանրապետության սահմանադրության նախագծի մշակման, համաժողովրդական քննարկման դնելու նախապատրաստման այս էտապում Ջավախքի հասարակական կազմակերպությունների պահանջը խրախուսելի է: Տես «Ջավախք», հուլիս, 1995, N 7 (13)

ներ պահանջող հարց, ինչպիսին Ջավախքի հարցն էր, միայն գոյություն ունեցող ՋԺՇ-ով անհնար էր հասնել վերջինիս այս կամ այն ձևով լուծմանը: Առավել ևս, որ ՋԺՇ-ը ոչ թե գաղափարական համախմբվածությամբ, այլ այդ ընթացքում փոխադարձ անձնական շահերով պայմանավորված մի կառույց էր, որի այս ընթացքում տեղի ունեցած երրորդ (1993 թ. ապրիլի 10-ին) և չորրորդ (1995 թ.)[418] *կոնֆերանսներում խիստ զգացվեց նրա թուլությունը և նրա առաջնորդների պառակտվածությունը:*

«Շարժման հարազատները շատ շուտով դարձան Շարժման խորթ զավակներ, գրեթե բոլոր նրանք, ովքեր ստացան իրենց համապատասխան աթոռները, այդ օրվանից դուրս եկան Շարժման անդամությունից, սկսեցին ակտիվորեն գործել հակառակ Շարժման գաղափարախոսությանը՝ արտահայտելով, որ մեզ հարկավոր չի ոչ մի շարժում...»[419]*: Շարժման լիդերների մեծ մասը «...անմիջապես մոռանալով Շարժումը, սկսեցին տեղ զբաղեցնել իրենց մասնագիտությանն ու գիտակցությանը ոչ համապատասխան պաշտոններում, որն էլ մեկ տարվա ընթացքում ողբերգականորեն անդրադարձավ Շարժման ճակատագրի վրա»*[420]*:*

Շատ գործիչներ թողեցին ՋԺՇ-ը՝ չտեսնելով այնտեղ հեռանկար իրենց հետագա քաղաքական կարիերայի համար և ընտրեցին այլ ճանապարհներ՝ մեկնում Ռուսաստան և այլ վայրեր, մասնավոր բիզնես, այլ պաշտոնների զբաղեցում և այլն: Այսպիսի մարդկանց մեջ քիչ չէին նաև բարձր ինտելեկտ ունեցող գործիչներ, որոնք այնքան անհրաժեշտ էին Ջավախքի հետագա ճակատագրի որոշման գործում: Ավելին, ՋԺՇ-ը անընդհատ բարձրացնելով սոցիալ-տնտեսական, Վրաստանի կողմից վարվող հակահայ քաղաքականության, ծանր էներգետիկ ճգնաժամին վերաբերող բազմապիսի հարցեր, դրանց շատ անգամ տա-

---

[418] «Ջավախք», թիվ 1 (38), փետրվար, 1997:

[419] «Ջավախք» ժողովրդական շարժման երրորդ կոնֆերանսի մասնակիցներից մեկի ելույթից, 10.04.1993 թ , ք Ախալքալաք:

[420] Նույն տեղում

լիս էր հուզական բնույթ, այլ ոչ թե մշակված կոնկրետ պահանջների տեսք: ՀԺՇ-ի մնացյալ լիդերներն իրենց ծրագրերում և առաջ քաշվող ինքնավարության պահանջներում[421] կոնկրետ պատկերացում անգամ չունեին Ջավախքի տարածքային ընդգրկվածության մասին: Դա պարզ երևում է նրանց ծրագրերի մեջ, երբ Ջավախքը մեկ նույնացվում է Ախալքալաքի, Բոգդանովկայի, որոշ դեպքերում նաև Ասպինձայի շրջանների հետ, իսկ շատ անգամ առաջ քաշվող պահանջներում «Ջավախք» հասկացության տակ «ավելանում են» նաև Ախալցխան, Ադիգենը, շատ անգամ նաև Ծալկան[422]:

ՀԺՇ-ի «Գաղափարաքաղաքական և արտաքին հարաբերությունների» հանձնաժողովի ներկայացրած «Ջավախքի ինքնավարության ստեղծման հիմնական խնդիրներն ու նպատակները» ծրագրային նախագծում[423], որի մեջ բացակայում էր «պահանջվող» ինքնավարության վարչատարածքային ընդգրկվածությունը, հայտնի չէր թե ի՞նչ կարգավիճակ էր ունենալու այդ ինքնավարությունը, ի՞նչ հիմքերի վրա էր պահանջվում այդ ինքնավարությունը և այլն: Հաջորդը. նույն հանձնախմբի աշխատանքային ծրագրում[424] նախատեսված էին իրականացնել միջոցառումներ, որոնք մի քանի անգամ վեր էին ՀԺՇ-ի փաստացի ուժերից: Նախատեսվող արտասահմանյան հայկական գաղթօջախների հետ կապերի սերտացման համար (ԱՄՆ, Կանադա, Պարսկաստան, Գերմանիա, Սիրիա, Լիբանան, Ֆրանսիա և այլն), ՀԺՇ-ը

---

[421] «Ազգ», 02 08.1995

[422] Տես «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության խորհրդի «Գաղափարա-քաղաքական և արտաքին հարաբերությունների» հանձնախմբի ծրագրային դրույթներ, հաստատված ՀԺՇ-ի նախագահության նիստի կողմից 13-14 հուլիսի, 1994 թ., ք Ախալքալաք.

[423] Նույն տեղում.

[424] «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության խորհրդի «Գաղափարա-քաղաքական և արտաքին հարաբերությունների» հանձնախմբի աշխատանքային ծրագիր (1994 թ հուլիս–1995 թ.հուլիս), (հաստատված է ՀԺՇ-ն խորհրդի թիվ 2 նիստում, 21 06 1994 թ., ք Ախալքալաք).

չուներ համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսների բազա: Հետևաբար, շատ որոշումներ ու ծրագրեր դառնում էին սոսկ թղթի վրա մնացող բարի ցանկություններ: ՋԺՇ-ի կողմից - կոչ էր արվում ժողովրդին նաև «անտարբեր չմնալ Հայոց Համազգային Շարժման նկատմամբ»[425], որն այնքան էլ իրատեսական չէր, քանի որ ՀՀՇ-ն արդեն վաղուց դադարել էր «Համազգային» լինելուց՝ դառնալով մի քանի անձանց ձեռքում գտնվող կուսակցություն:

Այսպիսի իրավիճակում, երբ Վրաստանի կողմից դեպի Սամցխե-Ջավախք էին ուղղվում տեղի հայության շահերին հարվածող նորանոր օրենքներ, Ջավախքում և Սամցխեում չկար դիմակայող ուժ: Դա չէին կարող անել նաև տարածաշրջանում առկա փոքր ու մեծ հասարակական կազմակերպությունները. «Դեմոկրատների Միություն»ը, «Սուրբ խաչը», «Կանաչների Միություն»ը, ինչպես նաև «Օղա», «Ջայն Ջավախքի», «Արշալույս», «Ժողովրդավարական Միություն», «Վրաստանի քաղաքացիների համերաշխության միություն» կազմակերպությունները, որոնք գործում էին Ախալքալաքում և Բոգդանովկայում[426]:

---

[425] ՋԺՇ-ն նախագահության կոչի բովանդակությունից, 20.02.1994 թ, ք Ախալքալաք.

[426] «Վրաստան», 19 08.1995: Ավելացնենք նաև, որ 1995 թ. հուլիսին «Ջավախք» ժողովրդական շարժումը դիմեց վերոնշյալ կազմակերպություններին վերջիններիս կոչ անելով համախմբվել և ստեղծել մեկ ընդհանուր կենտրոնացված ղեկավար օրգան (կոորդինացնող խորհուրդ)

Կոորդինացիոն խորհուրդը կյանքի կոչվեց նույն 1995 թ հուլիս ամսին: Ղեկավար այս մարմինը միավորում էր քաղաքական աշխատանքի բավարար փորձ ունեցող, շրջանում լայն հեղինակություն վայելող 21 ակտիվիստների Կոորդինացիոն խորհրդի նախագահ ընտրվեց Ի Աբրահամյանը, տեղակալներ Յու Թառլամազյանը, Ս Պետրոսյանը, Ն Մարաբյանը, քարտուղար Մ Խաչատրյանը. Տես «Ջավախք», հուլիս, 1995, N 6 (12), նույն տեղում, հուլիս 1995, N 7 (13). Այսուհետև շատ դիմումներ, որոշումներ և այլ փաստաթղթեր ընդունվում էին հենց այս խորհրդի անունից.

Նման պայմաններում Ջավախքցիների ցանկացած նախաձեռնություն ունենում էր խիստ մշուշոտ ապագա: Դա դրսևորվեց նաև Ջավախքում 1995 թ. հուլիս ամսին կազմակերպված ստորագրահավաքի ժամանակ, երբ դեռևս չէր ընդունվել երկրի հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Ստորագրահավաքն իրականում Ջավախքին ինքնավարություն տալու Վրաստանին ներկայացվող պահանջի հիմնավորում չէր: Այն կրում էր ավելի շուտ սոցհարցման բնույթ, որով փորձ էր արվում իմանալ ժողովրդի կարծիքը՝ ապագա ֆեդերատիվ Վրաստանի կազմում Ջավախքի՝ որպես քաղաքականապես ինքնակառավարվող վարչական միավոր տեսնելու խնդրում (սահմանադրական իրավունքով)[427]:

Սակայն, հավաքված շուրջ 13.000 ստորագրությունները ոչինչ չպիտի փոխեին Վրաստանի սահմանադրության մեջ[428], Ջավախքի կարգավիճակի հարցում :

Բարձրացնելով կենսական հարցեր (տարածաշրջանի դեմոգրաֆիկ կազմի փոփոխություն՝ արհեստական ձևով, տնտեսական զարգացման խոչընդոտ, Ջավախքի վարչական ամբողջ կառույցի տեղափոխում Ախալցխա, վարչական շատ հիմնարկների լուծարում կամ դարձյալ տեղափոխում Ախալցխա, բնակչության և վարչական կառավարող օղակների միջև կապի արհեստականորեն խիստ վատացում[429], որոնք ստեղծվել էին Է. Շևարդնաձեի կողմից թիվ 237 հրամանագիրը ստորագրելուց հետո և կոպիտ ձևով փնովելով այն ու կոչ անելով չենթարկվելու նահանգապե-

---

[427] См - Листок опроса, общественного мнения о статусе Джавахетского региона для внесения в проект новой Конституции Республики Грузия Հմմտ «Ջավախք», հուլիս, 1995, N 7 (13)·

[428] «Ազգ», 02.09 1995

[429] Ախալցխան Ախալքալաքից հեռու է մոտ 70 կմ խիստ դժվարանցանելի, քայքայված ճանապարհով, չհաշված Ախալքալաքի հեռու-հեռավոր գյուղերը և այլն , (տես «Ջավախք», պաշտոնաթերթ «Ջավախք» ժողովրդական շարժման, N1(7), փետրվար, 1995)

տին[430], ՀԺՇ-ի ներկայացուցիչները և Ախալքալաքի ու Բոգդանովկայի շրջանների ակտիվի հավաքի մասնակիցները չուներին ինքնավարության վերաբերյալ կամ Է. Շևարդնաձեի կազմավորած նահանգին հակադրող այլ մոդել: Նշենք, որ 1994 թ. օգոստոսի 10-ին, Բոգդանովկայում հրավիրվել էր «Օդա» բարեգործական ընկերության ընդլայնված նիստ, որտեղ քննարկելով թիվ 237 հրամանագիրը խստորեն դատապարտվեց Է. Շևարդնաձեի այս որոշումը և ընդունվեց նրան ուղղված դիմում, որում մասնավորապես նշվում էր. «...Շրջանային նոր բաժանումը պետք է հստակ ունենա իր անվանումը, որը ամրագրվում է սահմանադրությամբ: Օրենքների փաթեթով հստակեցվում են տեղական ինքնակառավարման լիազորությունները, հարաբերությունները կենտրոնական իշխանությունների հետ, բայց ձեր հրամանագրով անորոշ անվանում է տրված շրջանային նոր բաժանմանը և անսահմանափակ լիազորություններ պետության ղեկավարի անձնական լիազորին, որ լիազորին հնարավորություն է տալիս մանևրելու և տարբեր պատրվակներով փոխելու շրջանում գոյություն ունեցող դեմոգրաֆիկ իրավիճակը:

Ստեղծված տարածաշրջանային ղեկավարման օրգանն իրեն չի արդարացնում նաև տնտեսական տեսակետից, քանի որ շրջանային ղեկավարները կտրվում են անմիջապես կենտրոնական իշխանություններից և հնարավորություն չեն ունենում ինքնուրույն տնտեսություն վարելու, որը նպատակահարմար չէ Վրաստանի Հանրապետությանը տնտեսական այս ծանր պայմաններում:

Սույն հրամանագրով ազգային փոքրամասնությունների համամասնական քանակ ապահովված չէ տարածաշրջանային օրգանի ղեկավարման գործում»[431]: Հստակեցված չէր նաև Ախալ-

---

430 Նույն տեղում:

431 «Ազատամարտ», թիվ 43, սեպտեմբեր, 1994. Հմմտ «Ջավախք», սեպտեմբեր, 1994, N 2(4): Լրացուցիչ նշենք, որ «Ջավախք» ժողովրդական շարժման ներկայացուցիչների, Կոորդինացիոն խորհրդի

ցրխայի կարգավիճակի հարցը: Հայկական Սամցխե գավառի տարածքն ընդգրկվող և Ջավախքի մեջ չմտնող այս շրջանները՝ Ադիգենը, Ախալցխան, մասամբ նաև՝ Ասպինձան, շատ անգամ թյուրիմացաբար մտցվում էին «Ջավախք» հասկացողության տակ և պահանջվում նրանց տալ ինքնավարություն: Իսկ այսպիսի տարածքում ինքնավարությանը համապատասխանում էր Է. Շևարդնաձեի ստեղծած նահանգին (բացառությամբ Բորժոմի շրջանի, այն էլ որոշ վերապահումներով): Ստեղծվում էր այնպիսի տպավորություն, որ չընդունելով վրացականը, ջավախքցիները պահանջում էին իրենց համար ընդունելի չափորոշիչներով ինքնավարության տարբերակ, որն իրականում նույնն էր, ինչ վրացականը. երկրամասում մշակված հայեցակարգի բացակայության պայմաններում՝ իշխանությունների կողմից Ջավախքի առաջնորդների պահանջները մերժելը դառնում էր դյուրին խնդիր:

շրջանային վարչական այլ աշխատակիցների կողմից Վրաստանի պետության գլխավոր է Շևարդնաձեին և երկրի խորհրդարանին են ներկայացվել բազմապիսի և բազմաբնույթ այսպիսի նամակներ, խնդրագրեր ու պահանջագրեր, որտեղ դարձյալ ու դարձյալ ոչ էր ասվում պետության ղեկավարի նահանգային կառուցվածքի վերաբերյալ այսպիսի նախաձեռնությանը· Ջավախքում բազմաթիվ ակտիվների հավաքներում նույնպես մշտապես օրակարգի հրատապ կետ է եղել այս պետության ղեկավարի թիվ 237 հրամանագիրը· Միաժամանակ Ջավախքի քաղաքական ակտիվիստների կողմից ժամանակ առ ժամանակ հրապարակվում էին հոդվածներ, որտեղ մանրամասն ներկայացվում էր Ջավախքին ինքնավարություն տալու հարցի կարևորությունը Այս ամենի մասին կարելի է տեսնել տեղական մամուլում Տես «Ջավախք», սեպտեմբեր, 1994, N 2 (4), նույն տեղում, հոկտեմբեր 1994, N 3 (5), նույն տեղում, նոյեմբեր, 1994, N 4 (6), նույն տեղում, հուլիս 1955, N 6 (12), նույն տեղում, հուլիս, 1995, N 7 (13), նույն տեղում, օգոստոս, 1995, N 8 (14), նույն տեղում, սեպտեմբեր, 1995, N 9 (15), տես նաև «Ջավախք», Ախալքալաքի շրջանի «Արշալույս» կրթամշակութային և բարեգործական կազմակերպության պաշտոնաթերթ, օգոստոս, 1994, N 1.

Պարզ չէր նաև, թե տվյալ ժամանակաշրջանում Ախալցխայի ներառումը ինքնավարության պահանջների մեջ արդյո՞ք բխում էր Ռուսաստանի շահերից: Մեր կարծիքով՝ այնքան էլ ոչ, քանի որ Ախալցխան դառնում էր ռուս-թուրքական տարանցիկ առևտրի կարևորագույն հանգույց: Ավելին, դեռ այն ժամանակ ծրագրեր կային կառուցելու Կարս-Վալե երկաթուղագիծը, գազատարը, ինչպես նաև հետագայում այստեղով պետք է անցներ Ռուսաստանը Թուրքիային կապող նավթատարը: Նման ծրագրերը, որոնք դեռ այն ժամանակ բացառում էին Միջին-Ասիա-Թուրքիա հորիզոնական կապը և էներգակիրները տեղափոխում էին Միջին Ասիա-Ղազախստան-Ռուսաստան-Թուրքիա կամ ուղղակի՝ Ռուսաստան-Թուրքիա գծով, ձեռնտու էր Ռուսաստանին և պարզ չէր, թե այս պայմաններում ձեռնտո՞ւ էր Ռուսաստանին թողնել այդ կարևոր հանգույցը որպես Վրաստանի տարածքով անցնող միագիծ հաղորդակցության կետ, թե՞ ոչ:

Այնուամենայնիվ, Վրաստանը չդարձավ ֆեդերացիա, չլուծված մնացին բազմաթիվ խնդիրներ, Սամցխե-Ջավախքի խնդիրը «լուծվեց» վրացական տարբերակով. նահանգն իր վեց շրջաններով (Ադիգեն, Ախալցխա, Ասպինձա, Ախալքալաք, Բորժոմ և Նինոծմինդա [Բոգդանովկա]) գոյություն ունի մինչ օրս՝ Վրաստանի գեկավարի այստեղ նշանակած անձնական լիազոր-ներկայացուցչի լայն լիազորություններով:

Ջավախքը (Ախալքալաք, Բոգդանովկա) փաստորեն սրանով կորցրեց իր հարյուրքսանամյա վարչական ինքնուրույնությունը, որը նրան տրվել էր դեռ 1874 թ. նոյեմբերի 3-ի ռուսական Պետական խորհրդի հրամանագրով, ըստ որի՝ Թիֆլիսի նահանգի կազմում ստեղծվում էին՝ Ախալքալաքի և Թիանեթիի գավառները[432]:

---

[432] Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե , 2003, էջ 205

Վրաստանի անկայուն քաոսային իրավիճակն իր կնիքն էր դնում Ջավախքի ընկերային-տնտեսական, իրավական և այլ ոլորտների վրա: Մեծացել էր հանցագործությունների, անօրինականությունների թիվը, շրջաններում լայնորեն տարածվել էր կոռուպցիան:

Ախալքալաքի շրջանում 1992 թ. 9 ամիսների ընթացքում գրանցվել էր 42 հանցագործություն (որից 5-ը՝ ծանր), 1993 թ. 9 ամիսների ընթացքում՝ 37 հանցագործություն, որից 9-ը՝ ծանր[433]*:*

Շրջաններում շարունակվում էին գողությունները, ավազակությունները և զինծառայողների սեփականության նկատմամբ ոտնձգությունները: Ախալքալաքի ռուսական ռազմական բազաներից շարունակվում էին զենքի և զինամթերքի անօրինական հափշտակումները՝ հանցագործ խմբավորումների կողմից: Այդ առիթով զորամասի զինվորական ղեկավարության կողմից բողոքի նոտաներ էին հղվել Ախալքալաքի ղեկավարությանը[434]*:*

Իրավիճակը որոշակիորեն կայունացավ 1994-1995 թթ., երբ իրավապահ մարմիններին հաջողվեց ինչ-որ չափով կարգավորել իրավական դաշտը: Նկատելիորեն բարելավվել էր հետաքննչությունը: Եթե 1994 թ. առաջին եռամսյակում Ախալքալաքի շրջանում գրանցված 9 հանցագործության դեպքերից բացահայտվել էին ընդամենը 4-ը, որը կազմում էր 40 %, ապա 1995 թ.

---

[433] «Հայաստանի Հանրապետություն», 19 10.1993.

[434] См.- информационное письмо N 504, Председателю администрации Ахалкалакского района, господину Степаняну С.Р., командиру войсковой части Пп 01237 полковнику тов Коврову В.А , 30.11.1994г., г. Ахалкалаки. Հմմտ Обращение N 118, префекту Ахалкалакского рахона, начальнику полиции Ахалкалакского района, военному прокурору горнизона, начальнику отдела Ф С К, 30 03.1995г , г. Ахалкалаки

առաջին եռամսյակում գրանցված բոլոր 6 հանցագործություններն էլ բացահայտվել էին 100 %-ով[435]:

1995 թ. ըստ պաշտոնական տվյալների՝ ընդհանրապես տեղի չէին ունեցել այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք եղել էին 1994 թ. և հատկապես՝ պետական և անձնական ունեցվածքի հափշտակման, կողոպուտի և թալանի դեպքեր և այլն[436]:

Այս ամենով հանդերձ շրջաններում չէր գործում անչափահասների հարցերով հանձնաժողովը: Զափազանց բացասաբար էր անդրադառնում անչափահասների վրա ճամբարների, սպորտային խմբակների և նմանատիպ այլ կառույցների բացակայությունը: Շատ դպրոցահասակ երեխաներ, ելնելով սոցիալ-տնտեսական պայմաններից, փոխանակ դպրոց հաճախեին, ծնողների հետ տոնավաճառներում առևտուր էին անում:

Շրջաններում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական, էներգետիկ ճգնաժամը մեծապես դժվարացնում էր նաև իրավապահ մարմինների գործունեությունը, մասնավորապես.

– ոստիկանական մեքենաները շահագործելու համար չկար անհրաժեշտ բենզին և այլ վառելանյութ,

– չէր գործում հեռախոսային կապը՝ շրջանում էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով,

– չէին աշխատում օբյեկտների ազդանշանները (նույն պատճառով),

– ոստիկանության աշխատակազմն արդեն 4 տարի է, ինչ չէր ստանում համազգեստներ,

– շրջաններում եղած փոքրաթիվ հասարակական կազմակերպությունները չէին կարող օգտակար լինել իրավապահ մարմիններին,

---

[435] См.-Докладная записка, N1/475, председателю правления Ахалкалакского района, Степаняну С Б , О работе Ахалкалакского РОВД за 1 квартал 1995 года, 05 04.1995г., г. Ахалкалаки

[436] Նույն տեղում

– Նորմալ ճանապարհների, ճանապարհային նշանների, փողոցների լուսավորության բացակայության պատճառով մեծ խնդիրներ էին առաջացնում ճանապարհային շարժման ապահովման գծում,

– Ախալքալաքում, Բոգդանովկայում և հատկապես գյուղական վայրերում շատ օբյեկտներ համարյա չէին պաշտպանվում, որը հանգեցնում էր հաղորդալարերի, անասունների և այլնի գողության[437]:

Այս ընթացքում (1993 թ.) Աշոցք-Նինոծմինդա ճանապարհին, Հայաստան Վրաստան սահմանային կետում տեղադրվեցին մաքսային և ոստիկանական-անձնագրային ստուգման կետեր[438]: Եվ որքան էլ զարմանալի է, այս գործընթացում առաջին նախաձեռնող կողմը հանդես եկավ Հայաստանը՝ Բավրայի սահմանային կետում տեղադրելով մաքսային և անձնագրային ստուգման կետերը: Շուրջ 8 ամիս անց դրան հետևեցին Վրաստանի կողմից արված «համապատասխան» քայլերը: Սա ինչ-որ տեղ դժվարացրեց Ջավախքցիների հաղորդակցությունը ՀՀ-ի հետ: Վերոհիշյալ կառույցների աշխատակիցների կողմից թույլ էին տրվում բազմաթիվ օրինախախտումներ, կաշառակերության դեպքեր, որոնց հետևանքով արհեստականորեն դժվարացավ բեռնափոխադրումների իրականացումը Ջավախք-Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ[439]:

Ստեղծված դժվարությունների շուրջ եղան բողոքներ, այդ առթիվ Ախալքալաքում ՀՀ մաքսային վարչության պետ Երջանիկ Աբգարյանը և Աշոցքի մաքսատան վարչության պետի պաշտոնակատար Շ. Զորօղլյանը հանդիպեցին Ախալքալաքի շրջանային ղեկավարների հետ, խոստացան կարգավորել հարցը և Ջավախքցու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից Ջավախք մտնող գյուղմթերքի համար վերացնել բոլոր տեսակի

---

[437] Նույն տեղում·
[438] «Ազգ», 02 09 1995.
[439] Նույն տեղում, 03 12.1994·

մաքսերը, սակայն ամեն ինչ մնաց որպես «ձայն բարբառո հանապատի»[440]:

Թալանվեցին նաև Մարաբդա-Ախալքալաք մայրուղու մետաղե հաղորդալարերը. երկաթուղին դադարեց գործելուց[441]:

Ճգնաժամը խորացավ այն ժամանակ, երբ Ջավախքը մտցվեց նորաստեղծ Սամցխե-Ջավախք նահանգի մեջ. Ախալցխային շատ կազմակերպությունների և ձեռնարկությունների՝ ենթարկումը թույլ էր տալիս հարկային քաղաքականությունը վարել ի վնաս Ջավախքի:

Բացարձակ արժեզրկված, գործածությունից դուրս եկած կուպոնը ստիպում էր մարդկանց առևտուրի մեծամասնությունը, գնումները կատարել բնամթերային տարբերակով[442]. այս տարբերակն էր կիրառվում նույնիսկ որոշ վարձատրությունների պարագայում[443]:

Ջավախքում ստեղծված ծանր էներգետիկ ճգնաժամն իրեն զգացնել էր տալիս կյանքի ամեն մի ոլորտում: Ծալկայի և Ախալցիխեի շրջաններում գտնվող Խրամի և Զիտախևի հեկերը կարող էին ինչ-որ չափով մեղմել էլեկտրաէներգիայի ճգնաժամը[444]: Գետառատ Ջավախքում չէր գործում և ոչ մի հեկ: Ջմռանը վառելիք ունենալու համար շարունակվում էր կտրտվել տարիներով աճեցրած անտառները[445]:

---

[440] Նույն տեղում: Հմմտ «Ջավախք», հոկտեմբեր, 1994, N 3 (5):
[441] "Свободная Грузия", 13.12 1994, հմմտ «Ազգ», 03.12.1994:
[442] "Свободная Грузия", 13 12.1994.
[443] «Ազգ», 03.12.1994:
[444] Նույն տեղում, 03.12 1994, հմմտ. «Հայաստանի Հանրապետություն», 04.12.1993:
[445] Հավելենք, որ երկրամասում այս տարիներին իրականացրած զանգվածային ծառահատումները արդյունք էին ոչ միայն վառելիքի այլ միջոցների և էլեկտրական հոսանքի բացակայության, այլև շրջանային վարչությունների, նրանց առընթեր ստեղծված բնապահպանական հանձնաժողովների ղեկավարների ու աշխատակիցների կողմից թույլ տրված չարաշահումների, անասելի չափերի հասած դրամաշորթումների, անվերահսկելի դարձած գործողությունների և կոռուպցիոն այլ

Այս տարիներին վատթարագույն վիճակի մեջ էր Ջավախքի և ՀՀ-ի միջև եղած հեռախոսային կապը: Կաբելների վնասվածքի պատճառով Ջավախքը Հայաստանի Հանրապետության հետ «խոսում էր» Թբիլիսիի միջոցով: Ախալքալաքի կապի հանգույցից Հայաստանի կապի նախարարությանն՝ ուղված օգնության խնդրանքները մնում էին անպատասխան[446]*:*

Վակուում էր տեղեկատվական դաշտը «Փարոս» և «Արշալույս» շրջանային թերթերը լույս էին տեսնում մեծ դժվարությամբ՝ ամիսը մեկ անգամ: ՋԺՇ-ի պաշտոնաթերթ «Ջավախքն» էլ տպագրվում էր ընդհատումներով: Թբիլիսում հրատարակվող «Վրաստան» հայատառ թերթն էլ Ջավախք էր հասնում մեծ ուշացումներով, իսկ Հայաստանից թերթեր էին գալիս մի քանի ամիսը մեկ[447]*:*

ՈՒսումնասիրելով եղած նյութերը՝ պարզ է դառնում, որ ՀՀ-ից Ջավախք ուղարկվող մամուլի բնականոն տարածումը դժվարացվում էր այդ ոլորտում աշխատող առանձին պաշտոնյաների կողմից: Փաստորեն, խնդիրն ուներ սուբյեկտիվ պատճառներ[448]*:*

Էլեկտրաէներգիայի բացակայության պատճառով չէին գործում նաև տեղական «Ջավախք» և «Փարվանա» հեռուստաֆիրմաները[149]*. 1991 թ. հիմնադրված «Ջավախք» հեռուստաֆիրման*

երևույթների դրսևորման: Այդ ճանապարհով ապօրինի ծառահատվեց շուրջ 70 տարի առաջ անտառածածկված Ախալքալաքին մերձակա բլուրը Տավշանկան, ինչպես նաև Դիլիսկա, Կիրովական գյուղերի դաշտապաշտպան անտառաշերտերի մի զգալի մասն ու Վաչիան–Սուլդա ծգվող անտառաշերտերի մի հատվածը: Այս աղետալի վիճակի մասին իր ժամանակին շրջանային «Ջավախք» թերթը հանդես եկավ դատապարտող հոդվածով. Տես «Ջավախք», Ախալքալաքի շրջանի «Արշալույս» բարեգործական կազմակերպության պաշտոնա-թերթ, N 1, սեպտեմբեր 1993

[446] «Ազգ», 03 12 1994

[447] Նույն տեղում, 24 11 1994.

[448] Նույն տեղում, 08.03 1994, հմմտ նույն տեղում,17 03 1994:

[449] Նույն տեղում, 24 11.1994:

չէր գործում նաև համապատասխան ֆինանսավորում չլինելու պատճառով[450]: Որքան էլ ցավալի էր, փակվել էին Ախալցխայի և Ծալկայի շրջանային թերթերի հայկական էջերը[451]:

Ջավախքի կրթական համակարգն ուներ նույն այն հիմնախնդիրները (որոնցից շատերը, ինչպես նշել ենք, ստեղծվել էր արհեստականորեն՝ Վրաստանի կողմից), որոնք կային 1990-ական թթ. սկզբին: Դրանց ավելացել էին միայն ժամանակի ընթացքում ստեղծված դժվարությունները: Ջմռան ցրտի պատճառով դպրոցական պարապմունքները ընդհատվում էին երկար ժամանակով: Կուպոնի արժեզրկման պատճառով առանց այն էլ չնչին աշխատավարձ ստացող մանկավարժներն աշխատում էին գրեթե անվճար, կամ ինչպես ընդունված է ասել՝ «վասն հայրենյաց»[452]:

Լճերով հարուստ Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանները, ուր 1990 թ. տվյալներով ստացվում էր 5000 տոննա ձուկ,

---

[450] «Ազատամարտ», թիվ 48, նոյեմբեր, 1992

[451] «Ազգ», 24 11 1994·

[452] Ուսումնասիրողների բերած տվյալներով 1994 թ օգոստոսի դրությամբ միայն Ախալքալաքի շրջանում դպրոցը թողել և արտագնա աշխատանքի էին մեկնել հիմնականում արական սեռի շուրջ 280 մանկավարժներ· Դպրոցներից հեռացած մասնագետ-մանկավարժներին փոխարինել էին միջնակարգ կրթությամբ ոչ մասնագետ անձինք: Այդ առթիվ իրենց մտահոգությունն են հայտնել շրջանի մտավորականներից իրավաբան Ի Աբրահամյանն ու պատմաբան Ե Շիրինյանը «Զայրացուցիչն այն է, որ մինչև օրս չվճռվեց հայկական դպրոցներում հայ ժողովրդի պատմության դասավանդման գործը: Կարծում ենք, որ Վրաստանի լուսավորության նախարարությունն այդ հարցում կշարունակի իր համառությունը: Դրա համար անհրաժեշտ ենք համարում ժողկրթբաժնի հետ համատեղ հրավիրել բոլոր դպրոցների տնօրեններին ու պատմության ուսուցիչներին և պարտադրել, որ նրանք կատարեն 1989 թ շրջխորհրդի նստաշրջանի ընդունած որոշումը, այսինքն շրջանի բոլոր հայկական դպրոցներում պարտադիր կարգով դասավանդել հայ ժողովրդի պատմություն այն մտցնելով կայուն դասացուցակի մեջ, որպես պարտադիր և հիմնական առարկա»: Տես «Ջավախք», Ախալքալաքի շրջանի «Արշալույս» կրթամշակութային և բարեգործական կազմակերպության պաշտոնաթերթ, N 1, օգոստոս, 1994·

1995 թ. օգոստոսի տվյալներով այդ ցուցանիշը հասցված էր ...զրոյի[453]*:*

Պարբերաբար ուշացվում էին ֆինանսների նախարարությանը տրվող հաշվետվությունները. ինչը խոսում էր տարածաշրջանի տնտեսական մեկուսացվածության մասին: Այսպես 1995 թ. առաջին եռամսյակում Ախալքալաքի շրջանի բյուջեն 200-ի փոխարեն կատարվեց ընդամենը 30 մլրդ կուպոնով, այսինքն բյուջեի դեֆիցիտը կազմեց 81 %[454]*:*

Դեռևս 1994 թ. Ախալքալաքի շրջանի գյուղատնտեսական ձեռնարկությունները պետբանկից ստացել էին ավելի քան 3,6 միլիարդ կուպոնի վարկ: Անվճարունակության պատճառով վարկը գրեթե տասնապատիկ մեծացավ: 1995 թ. օգոստոսին շրջանի պետական ու կոլեկտիվ գյուղատնտեսական ձեռնարկությունների պարտքերը հասնում էին մոտ 400 միլիարդ կուպոնի:

Շրջանի պետական ու կոլեկտիվ տնտեսություններին մեծ պարտքեր ունեին մթերող կազմակերպությունները, որոնք մթերքը գնում էին ինքնարժեքից ցածր գներով, իսկ ապա անվարունակ լինելով դառնում էին կարգազանց: Այսպես՝ շրջանի յուղպանրագործարանը 1995 թ. օգոստոսի 1-ի դրությամբ տնտեսություններին պարտք էր 108 միլիարդ կուպոն: Մի կոմբինատը դեռևս 1993 թ., երբ կուպոնի և ռուսական ռուբլու հարաբերակցությունը հավասար էր, շրջանի պետական ու կոլեկտիվ տնտեսություններին պարտք էր մնացել 160 միլիոն կուպոն[455]*:*

Իհարկե այս ամենի մեջ իրենց մեղքի մեծ բաժինն ունեին նաև շրջանների ղեկավար համակարգի վրաց իշխանություն-ների կողմից դրածո, կոռումպացված աշխատակիցները[456]*:*

---

[453] «Վրաստան», 19 08 1995:
[454] Նույն տեղում·
[455] «Ջավախք», օգոստոս, 1995, N 8 (14)·
[456] Նույն տեղում.

Վերոհիշյալ հիմնախնդիրների քննարկման համար 1994 թ. հունվարի 15-ին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ հանդիպեց Ախալքալաքի շրջանի վարչության նախագահ Ս. Ստեփանյանը[457].

Իհարկե, շրջաններում ստեղծված այսպիսի կացության համար իրենց մեծ մեղքի բաժինն ունեին (Ախալքալաքի և Նինոծմինդայի) շրջանների ղեկավարները, որոնց կողմից թույլ էին տրվում կոռուպցիայի դեպքեր՝ նպաստելով քառասային իրադրության մեջ համընդհանուր բնույթ ստացած թալանի և անօրինականության էլ առավել մեծացմանը: Ջավախքի բնակչությունը բազմիցս բողոքներ է ներկայացրել շրջանների ղեկավարների հասցեին՝ պահանջելով նաև նրանց հրաժարականները[458]:

Ջավախքում ստեղծված բազմապիսի հարցերի քննարկմանն էր նվիրված 1995 թ. օգոստոսին Ախալքալաքում հրավիրված Վրաստանի մարդու իրավունքների և ազգամիջյան հարաբերությունների կոմիտեի արտագնա նիստը, որին մասնակցում էին կոմիտեի նախագահ Ս. Կավսաձեն, նրա տեղակալ Թ. Շարմանաշվիլին, կոմիտեի կոլեգիայի անդամներ, Վրաստանի գիտությունների ակադեմիայի ազգամիջյան հարաբերությունների ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Գ. Ժորժոլիանին, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զ. Փորակիշվիլին, Աբխազիայի մարդու իրավունքների և ազգամիջյան հարաբերությունների կոմիտեի նախագահ Է. Աստամիրովան, պետության ղեկավարի անձնակազմի ղեկավարի տեղակալ Գ. Շուգարդվը, Թբիլիսիի Սուլխան Սաբա Օրբելիանու անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր Վ. Սարթանիան, «Վրաստան» թերթի խմբագիր Վ. Բայբուրդյանը, Վրաստանի հայկական մշակութային բարեգործական ընկերության նախագահ Հ.

---

[457] «Հայաստանի Հանրապետություն», 18 01 1994:

[458] «Հայաստանի Հանրապետություն», 04 12 1993, հմմտ «Ազատամարտ», թիվ 31, օգոստոս, 1994:

Մուրադյանը, Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների վարչությունների նախագահներ Ս. Դարբինյանն ու Ռ. Արզումանյանը, երկու շրջանների արտադրական, գյուղատնտեսական ձեռնարկությունների, մտավորականության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ[459]*: Ինչպես երևում է եղած նյութերից, հանդիպումն անցել էր լարված մթնոլորտում. Ջավախքյան կողմի շատ ներկայացուցիչներ (ոչ ղեկավարները) սուր քննադատության են ենթարկել Վրաստանի կողմից վարվող քաղաքական ուղղվածությունը: Իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար կոլեգիայի անդամները անմիջականորեն տեղում հանդիպումներ ունեցան Ջավախքի Գումբուրդո, Խուլգումո, Արագվա, Կոթելիա, Կոկիա և այլ գյուղերի բնակիչների հետ: Տեղի բնակչության հետ հանդիպումների, կայացած զրույցների արդյունքում մարդու իրավունքների և ազգամիջյան հարաբերությունների կոմիտեն արտագնա նիստում որոշում ընդունեց, որտեղ նշված էր. «Չնայած կատարած որոշակի աշխատանքին, Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում դեռևս պահպանվում է սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ իրավիճակ: Դանդաղ է ընթանում տնտեսվարման նոր հարաբերությունների հաստատման, սեփականաշնորհման գործընթացը: Միջոցներ չեն ձեռնարկվել տարածաշրջանի արտադրական ձեռնարկությունների գործարկման, աշխատունակ բնակչությանը աշխատանքով ապահովելու համար: Այս ամենն իր արտացոլումն է գտել տարածաշրջանում տարվող գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի խախտման, անասնագլխաքանակի կտրուկ նվազեցման մեջ:*

---

[459] «Վրաստան», 19 08 1995· Հմմտ «Ջավախք», օգոստոս, 1995, N 8 (14) Մոտավորապես նույն կազմով մեկ տարի առաջ ևս (1994 թվականին) պետական այրերի այդ խումբը հյուրընկալվել էր Ջավախքում մեկնելով այնտեղից բազմաթիվ խոստումներով: Արդյունքում խաբկանքից բացի այլ շահեկան նպաստ չէր ստացել երկրամասը Տես «Ջավախք», օգոստոս, 1995, N 8(14)

Ստեղծված իրավիճակը լուրջ նախադրյալ է ստեղծում մարդու իրավունքների խախտման համար: Հատկանշական է այն փաստը, որ վերոհիշյալ շրջաններում բացակայում է մարդու իրավունքների պաշտպանության և ազգամիջյան հարաբերությունների կարգավորման ծառայությունը: Լուրջ մտահոգություն են պատճառում տարածաշրջանի լուսավորությունը և կրթության բաժնում տեղ գտած թերությունները»[460]:

Ի գիտություն ընդունելով պետության ղեկավարի 1995 թ. մարտի 28-ի թիվ 42 հրամանագիրը և Հանրապետության նախարարների կաբինետի 1995 թ. մայիսի 16-ի թիվ 265՝ «Սամցխե-Ջավախեթիի տնտեսական և սոցիալական զարգացման լրացուցիչ միջոցառումների մասին» որոշումը[461], բացահայտված թերությունների և բացթողումների վերացման նպատակով, կոլեգիան դիմում էր Հանրապետության շուրջ հինգ նախարարություններին և Հանրապետության զինվորական կոմիսարիատին, որպեսզի վերջիններս շուտափույթ քայլեր ձեռնարկեն ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար[462]: Ինչպես կտեսնենք հետագայում, այս դիմումների մեծ մասը գրեթե մնում է թղթի վրա:

Այս ժամանակամիջոցում Վրաստանի կողմից արված միակ «զիջումը»՝ Վրաստանի պետության ղեկավար Է. Շեւարդնաձեի «Վրացական պետության ղեկավարի 1993թ. օգոստոսի 2-ի թիվ 93 հրամանագրով հաստատված «Վրաստանի Հանրապետության շրջանի, քաղաքի պետական իշխանության և կառավարման տեղական մարմինների մասին» ժամանակավոր կանոնադրության 2-րդ հոդվածի մասին» 1995 թ. օգոստոսի 12-ին ստորագրած փաստաթուղթն էր, որի երկրորդ կետով նշվում էր. «Վրաստանի Հանրապետության շրջանների, քաղաքների և գյուղերի պետական մարմիններում, կազմակերպություններում և հիմնարկ-

---

[460] «Վրաստան», 19.08.1995
[461] Նույն տեղում:
[462] Նույն տեղում:

ներում թույլ է տրվում այն լեզուների ազատ կիրառումը, որոնցից օգտվում է բնակչությունը»[463]:

Մինչդեռ, Սամցխե-Ջավախք-Թուրքիայի ինքնավարության խնդիրն արծարծման այս փուլում չստանալով ոչ մի արձագանք, մնաց սոսկ Վրաստանի ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին՝ Վրաստանի մարդու իրավունքների պաշտպանության և ազգամիջյան հարաբերությունների կոմիտեի և Վրաստանի գիտությունների ակադեմիայի ազգամիջյան հարաբերությունների կենտրոնի հետ համատեղ մշակած, կառավարության հավանությանն արժանացած և խորհրդարանի հաստատմանը ներկայացված օրինագծի հույսին: Այն մշակվել էր ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի, ԱՊՀ անդամ երկրների, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների հետ՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Վրաստանի սերտ համագործակցության հիմքի վրա[464]: Չնայած միջազգային չափորոշիչներին համապատասխանող մշակված հոդվածներին, այնուամենայնիվ, օրենքի շատ դրույթներ մնացին սոսկ «բարի ցանկություններ»: Ավելին, Վրաստանի կողմից արված (և դրանից հետո արվող) շատ քայլեր արմատապես հակասում էին վերոհիշյալ օրինագծի շատ կետերի:

Այսպես, բերենք այս եզրակացությունը հաստատող մի օրինակ. օրինագծի հոդված 17-ում նշվում էր «Երկրի սոցիալ-տնտեսական պլանավորման և վարչատարածքային կառուցվածքի հարցերը լուծելիս պարտադիր կարգով պետք է հաշվի առնել փոքրամասնության (ազգային - Վ.Ս.) շահերը և պահանջմունքները, եթե դրանք չեն սահմանափակում Վրաստանի Հանրապետության հանրապետական շահերը, մնացած բնակչության իրավունքներն ու ազատությունները»[465]: Այնինչ, Վրաստանի նախագահի կողմից ստեղծված Սամցխե-Ջավախք նահանգը և

---

[463] Նույն տեղում, 19.08 1995·
[464] Նույն տեղում, 09 09 1995:
[465] Նույն տեղում·

Բորժոմի՝ այս սկզբունքներին չհամապատասխանող շրջանի արհեստական կցումը (ինչպես նաև Թռեղքի (Ծալկայի շրջան) անջատումը այս երկրամասից), բոլոր առումներով բացարձակորեն հակասում էր օրինագծի այս կետի պահանջներին:

Այսպիսի օրինակներ՝ կապված այս օրինագծի շուրջ առաջացած նման հարցադրումների հետ, կարելի է բերել գրեթե յուրաքանչյուր հոդվածի պարագայում:

Ուշացած այս օրենքները սոսկ մի կաթիլ դեղ էին Ջավախքյան հիմնախնդիրների ծով վերքերի համար, որոնց ցիտումով էլ փակենք Սամցխե-Ջավախք-Թռեղք տարածաշրջանի 1990-ական թթ. առաջին կեսի իրադարձությունների պատմության այս տխուր էջը՝ ընթերցողին հնարավորություն տալով մի փոքր մտորելու այս ամենի շուրջ:

Վերջում ավելացնենք, որ Հայրենանվեր Ջավախքցին երբեք չէր կորցնում հայ մնալու, իր պատմական տարածքում ապրելու և հզորանալու հավատամքը. 1994 թ. հոկտեմբերի 24-ին Ախալքալաք քաղաքում բացվեց հայոց մեծերից մեկի՝ Մես-րոպ Մաշտոցի հուշարձանը, որի քանդակագործն էր Ջավախքի Սամսար գյուղից Բ. Սարգսյանը[466]. Վ. Ի. Լենինի անվան հրապարակը, որտեղ տեղադրվեց հուշարձանը, անվանակոչեց Մ. Մաշտոցի անվամբ:

Վրաստանի իշխանությունները դժկամությամբ, եթե չասենք, սրտի մեծ ցավով ընդունեցին այս լուրը...

---

[466] «Ազգ», 25 10 1994:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՌԵՂՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

1995 թ.-նոր դարաշրջան

1995 թ. օգոստոսի 24-ը՝ նոր սահմանադրության ընդունումը կարելի է պայմանականորեն համարել նորանկախ Վրաստանի պատմության մի նոր փուլի սկիզբը:

Է. Շևարդնաձեի վարչակարգի կառավարման հետագա ութ տարիները (1995-2003 թթ.), որոշ քաղաքական վերլուծաբանների կողմից բաժանվում է երեք փուլերի. առաջին փուլը՝ 1995-1998 թթ., երբ երկիրը իր օրենքները և օրենսդրական դաշտը փորձում էր կառավարել սահմանադրորեն, արտաքին քաղաքականության մեջ Վրաստանը հստակորեն ընտրեց արևմտյան ուղին, կյանքի կոչվեցին այնպիսի դեմոկրատական կառույցներ, ինչպիսիք էին Սահմանադրական դատարանը, Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը և այլն: Այս փուլում Վրաստանը Հարավային Կովկասի երկրների մեջ առաջինը ճանաչվեց որպես Եվրոպական խորհրդի անդամ երկիր (1999 թ.): Ընդհանուր առմամբ Վրաստանի պատմության այս փուլը անվանվում է անցումային[467]:

---

[467] Хаиндрава И., Политические процессы в пост советской Грузии, /Диаспора, нефть и розы.../, Фонд г.Белия и КИСМИ с 137-138.

Հաջորդ փուլը՝ 1998-2001 թթ., Վրաստանի քաղաքական զարգացումները գնացին դեպի համընդհանուր լճացում, ահռելի չափերի հասավ կոռուպցիան, երկրում չձևավորվեց քաղաքացիական հասարակություն. ժողովուրդը ապրեց մեծ հիասթափություն և մեծապես օտարվեց իշխանությունից: Եվ վերջապես 2001-2003 թթ. Է.Շևարդնաձեի քաղաքական ռեժիմի նեխման տարիներն էին, երբ երկիրը, չնայած իր ահռելի բնական և էներգետիկ ռեսուրսներին, կանգնել էր ծանր ճգնաժամի առաջ, որն էլ պսակվեց նրա նախագահության վաղաժամ ընդհատումով[468]:

Վրաստանում պառլամենտական և նախագահական հերթական ընտրությունները կայացան 1995 թ. նոյեմբերի 5-ին:

Որպես նախագահի թեկնածու ընտրություններին իրենց մասնակցությունը բերեցին Է. Շևարդնաձեն, Ջումբեր Պատիաշվիլին (Վրաստանի կոմկուսի Կենտկոմի վերջին առաջին քարտուղարը), Պանտելեյմոն Գեորգաձեն (Պետանվտանգության նախագահ Իգոր Գեորգաձեի հայրը և ուղղափառ կոմունիստների առաջնորդը), Ակակի Բաքրաձեն (Իլյա Ճավճավաձե ընկերությունից), Ռոին Լիպարտելիանին (Ագրարային կուսակցությունից), Կ.Ղարիբաշվիլին (փաստաբան և պատգամավոր): Ձայների շուրջ 75 %-ը ստացավ Է. Շևարդնաձեն, իսկ ընտրողների 17 %-ը պաշտպանեց Ջումբեր Պատիաշվիլուն[469]:

Ընտրությունների այսպիսի արդյունքները այն բանի հետևանք էին, որ Է. Շևարդնաձեն դեռ ընտրությունների նախօրյակին փորձ էր արել «շարքից հանել» նախագահության իր գլխավոր հակառակորդ-հավակնորդներին: Այն ժամանակ, երբ օգոստոսի 29-ին Է. Շևարդնաձեի դեմ կատարվեց մահափորձ (որը անցած երկու տարիների ընթացքում հանրապետությունում կատարված 16-րդ ահաբեկչությունն էր, ընթացիկ տարում՝ 7-րդ-

---

[468] Նույն տեղում:

[469] Скаков А. Ю , Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с. 278.

ը), վերջինս այդ ակցիայի մեղավորներին սկսեց փնտրել հենց իր քաղաքական հակառակորդների շրջանում. մեղադրվեցին այնպիսի մարդիկ, ինչպիսին էր օրինակ «Մխեդրիոնի»-ի առաջնորդ Ջաբա Իոսելիանին (որը որպես նախագահի թեկնածու էր գրանցվել «Ընտրություններ» միավորումից, սակայն ընտրությունների նախօրեին հանեց իր թեկնածությունը), վերջինս մեղադրվում էր ապօրինի զենք ու զինամթերք պահելու մեջ: «Մխեդրիոնի» կառույցը, որը Ջ. Իոսելիանու քաղաքական հենարանն էր, հասավ նրան, որ ստացավ թույլտվություն՝ մասնակցելու խորհրդարանական և նախագահական ընտրություններին: Սակայն Է. Շեւարդնաձեն ճարպկորեն գտավ ելքը. վերջինիս կողմից նոր սահմանադրության նախագիծ առաջ քաշվեց, որով որպես ռազմական կազմակերպություն, մխեդրիոնականները զրկվում էին մասնակցելու ընտրություններին: Մխեդրիոնականները ասպարեզից վերջնականապես հեռացվեցին 1995 թ. վերջին[470]: Հաջորդ «մեղադրյալը», որը չուտով հրաժարվեց իր պաշտոնից (օգոստոսի 29-ի մահափորձից հետո), դա Վրաստանի պետանվտանգության նախագահ Իգոր Գեորգաձեն էր, որը չէր թաքցնում իր ռուսամետ կողմնորոշումը նրան կասկածում էին ազգային-ժողովրդավարական կուսակցության առաջնորդ Գեորգի Ճանթարիայի, պաշտպանության փոխնախարար Նիկո Կիկլիձեի, Շեւարդնաձեի մերձոցները տնօրինող, «Ժողովրդավարություն և Վրաստանի վերածնունդ» հիմնադրամի նախագահ Սոլիկո Խաբեիշվիլու սպանություններին մասնակցելու, պաշտպանության նախկին նախարար Գեորգի Ղարդարաշվիլու դեմ մահափորձ կազմակերպելու մեջ: Ենթադրվում էր, որ նա ահաբեկչությունը օգտագործելու էր պատրվակ՝ երկրում մտցնելու արտակարգ իրադրություն և իշխանությունը զավթելու: Նրա հրաժարականը նվազեցրեց իր հոր՝ Պանտելեյմոն Գեորգաձեի և Ջումբեր Պատիաշվիլու ղեկավարած ազդեցիկ կոմունիստական

---

[470]«Հայաստանի Հանրապետություն», 11 09 1995, հմմտ «Ազգ», 25 10 1995

կուսակցությունների նախընտրական հնարավորությունները: Վերջիններիս հետ համերաշխ էր ընդդիմության մեծամասնությունը: Հետապնդվողների շարքում էր նաև Աջարիայի առաջնորդ Ասլան Աբաշիձեն, որի նկատմամբ կասկածանքները ուժեղանում էին նաև ելնելով այն հանգամանքից, որ Ջ. Իոսելիանիի և Ջ. Պատիաշվիլու խաղից դուրս մնալուց հետո, երկրի նախագահական ընտրություններից հետո վերջինս մնում էր Է. Շևարդնաձեի միակ իրական խոշոր մրցակիցը: Ա. Աբաշիձեին կար «մեղադրելու» ևս մեկ ուրիշ «պատճառ». դա կասպիական նավթը Վրաստանի տարածքով դեպի Եվրոպա արտահանելու հնարավոր տարբերակն էր, երբ Է. Շևարդնաձեն հակված էր վերջինս անցկացնելու Փոթի նավահանգստով, իսկ Ա. Աբաշիձեն պնդում էր նավահանգստային ենթակառուցվածքների առումով Փոթիի նկատմամբ անհամեմատ առավելություններ ունեցող Բաթում նավահանգստի վրա[471]*:*

Այսպիսով, օգոստոսի 29-ի իր մահափորձից հետո Է. Շևարդնաձեն գործնականում կարողացավ ազատվել Պակ-ի նախագահից, որ կապված էր Մոսկվայի հետ, վերջնականապես մասնատեց «Միխեդրիոնի»-ին: Որպես ընդդիմություն «թույլատրվեց» միայն ավանդապահների կուսակցության գոյությունը, Ակակի Ասաթիանու գլխավորությամբ (վերջինս Գամսախուրդիայի ժամանակ զբաղեցնում էր Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնը):

Խորհրդարանում կուսակցական ցուցակներով տեղ գրավեցին 150 պատգամավորներ, 85 պատգամավորներ խորհրդարան եկան՝ մեծամասնական ընտրատարածքներից: Չկարողանալով հաղթահարել 5 %-ի սահմանագիծը, շուրջ 54 կուսակ- ցություններից և խմբավորումներից խորհրդարան մտան միայն 3-ը՝ Վրաստանի ազգային դեմոկրատական կուսակցությունը (ստան-

---

[471] «Հայաստանի Հանրապետություն», 11.09.1995

ալով շուրջ 90 մանդատ), Վրաստանի ազգային դեմոկրատական կուսակցությունը (շուրջ 31 մանդատ), Վրաստանի վերածննդի Միությունը (25 մանդատ): Չկարողանալով հաղթահարել 5 %-ի շեմը (հավաքեցին 4,49 %), խորհրդարան չեկան կոմունիստները:

Է. Շևարդնաձեն այս ընթացքում իր կադրային քաղաքականության մեջ խուսափում էր Վրաստանի քաղաքացիների միության վրա միանշանակ հիմնվելուց, ամբողջությամբ օգտագործելով Ժվանիա-Սահակաշվիլի և «ամուր տնտեսավարողների» միջև եղած հակասությունները: Դրանով հանդերձ, Զ.Ժվանիայի խաղաքարտը, որը մեծ թշնամանք էր առաջացնում վրացական քաղաքական էլիտայի մոտ, խիստ ձեռնտու էր Է Շևարդնաձեին:

1997 թ. Է.Շևարդնաձեն հայտարարեց «կոռուպցիայի դեմ պատերազմի տարի»[472]: Իսկ 1998 թ. Զ.Ժվանիան հայտարարեց, որ «Հանձին կոռուպցիայի կա այն գլխավոր հիմնախնդիրը, որը ինձ վախեցնում է որպես իշխանության ներկայացուցիչ: Նրա արմատախիլ անելը ժողովրդավարության զարգացման և ազատ տնտեսվարման հիմքերի հիմքն է»[173]:

Վրաստանի նոր Սահմանադրությամբ 1995 թ.վերջին կազմավորվեց Պետական գրասենյակը և մտցվեց պետական նախարարի պաշտոնը, որոնք լրացնում էին Նախարարների դահլիճի ղեկավարի գործառույթները: Պետգրասենյակի ղեկավար նշանակվեց Է.Շևարդնաձեի մերձավորներից, նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Պ.Մամրաձեն (ավելի ուշ պետնախարարի առաջին տեղակալ): Արդյունքում Պետգրասենյակը իր նշանակությամբ և գործառույթներով մոտիկանում էր նախագահի աշխատակազմին: Իսկ պետնախարար դարձավ Թբիլիսիի նախկին քաղաքապետ Ն.Լեկիշվիլին[474]:

---

[472] Скаков А Ю , Внутриполитическая ситуация в Грузии, / Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с 279.
[473] Նույն տեղում
[474] Նույն տեղում, էջ 282

Վարչապետի գործառույթները Է.Շևարդնաձեն փաստացի թողեց իրեն, իսկ պետնախարարական ինստիտուտը, որի ներկայացուցիչը հանրապետությունում փաստացի երկրորդ դեմքն էր, դարձավ ոչ ինքնուրույն և առվել ներկայացուցչական:

Այս ամենով հանդերձ Է.Շևարդնաձեն իր վարած քաղաքականության մեջ որդեգրեց քաղաքական դաշտում կադրային հաճախակի փոփոխությունների մեխանիզմը, որը նրան հնարավորություն էր տալիս հեշտորեն չեզոքացնելու ցանկացած «վտանգավոր» քաղաքական գործչի: Այդ առումով բերենք մի քանի օրինակներ:

Զգուշանալով պետնախարարի շրջապատի՝ Վրաստանի քաղաքական վերնախավում աճող դերից, 1997 թ.ամռանը ակտիվ քարոզարշավ սկսվեց նրա դեմ՝ մեղադրելով Ն.Լեկիշվիլուն և նրա մերձավորներին կոռուպցիայի մեջ: Քննարկվում էր անգամ նրան շուտով պաշտոնաթող ունենալու և նրա դեմ քրեական գործ հարուցելու հարցը:

Ակտիվ քարոզարշավ սկսվեց նաև Է. Շևարդնաձեի վարչակարգի մյուս պաշտոնյաների դեմ, որոնք աչքի էին ընկնում որակական բարձր հատկանիշներով: Պաշտպանության նախարար Վ.Նադիբաիձեն մեղադրվեց ռուսական գեներալներից կախում ունենալու և ռուսական զենքի անօրինական առևտրի մեջ մասնակցություն ունենալու համար: Ներքին գործերի նախարար Կ. Թարգամաձեն, որը այդ պաշտոնը ստացել էր 1995 թ. Շևարդնաձեի դեմ կատարված մահափորձի գործի բացահայտման դիմաց, համարվեց պրոֆեսիոնալ կոռումպացված քաղաքական գործիչ: Որոշակի մեղադրանքներով 1997 թ. հուլիսին պաշտոնաթող եղավ նաև Պետանվտանգության նախարար Շ. Կվիրայան:

1997-1998 թթ.քաղաքական կյանքում փայլող անձնավորություն դարձավ Մ. Ճկուասելին, որը, լինելով նախկինում մեծ բիզնեսմեն, Գուրիայի նահանգապետ, Վրաստանի խոշոր բանկերից մեկի նախագահ, դարձավ ֆինանսների նախարար: Վերջին համարվում էր Զ. Ժվանիայի հովանավորյալը: Մյուս ուժեղ

քաղաքական գործիչը, որը ամբողջովին նվիրված էր նախագահին, դա արտգործնախարար Իրակլի Մենաղարիշվիլին էր, Է.Շևարդնաձեի բարեկամներից[475]:

Այս տարիներին շարունակեցին խորանալ դեռ անկախության շրջանում հաստատված հայ-վրացական կապերը: Այս շրջանի հարաբերությունները համեմատելով 1990-ական թթ.առաջին կեսին հաստատված հարաբերությունների հետ, պարզորոշ երևում է դրանց բարելավումները՝ մի քանի առումներով, և առաջին հերթին նրանով, որ Վրաստանում հաստատված համեմատական կայունության պայմաններում քիչ-թե շատ կարգավորվել էին հայկական բեռնափոխադրումների, գազամատակարարման, տրանզիտային և շատ այլ հարցեր: Եվ այս հանգամանքը ստիպում էր կողմերին ուշադրություն դարձնել նորանոր այլևայլ հարցերի:

Դեռ 1996 թ.հունվարի 15-ին Հայաստան ժամանեց Վրաստանի նորընտիր խորհրդարանի պատվիրակությունը՝ Զ.Ժվանիայի գլխավորությամբ[476]: Մի շարք հանդիպումներում քննարկվեցին տարբեր ոլորտներին առնչվող հարցեր

«Վրաստան» հայատառ թերթի 75 ամյակի առթիվ մայիսի 7-ին Վրաստանում էր գտնվում ՀՀ պատվիրակությունը՝ տեղեկատվության նախարար Հր.Թամրազյանի գլխավորությամբ[477].

Երկու երկրների առևտրատնտեսական հարաբերությունների հետագա զարգացման շուրջ բանակցություններ վարելու նպատակով 1996 թ.փետրվարի 5-6-ը Վրաստանում էր գտնվում ԱՊՀ, Եվրամիության, միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ կապերի գծով ՀՀ նախարար Գագիկ Շահբազյանը[178]:

---

[475] Նույն տեղում, էջ 283
[476] «Հայաստանի Հանրապետություն», 16.01.1996
[477] Նույն տեղում, 09 05 1996·
[478] Նույն տեղում, 09 02 1996

Հայ-վրացական հարաբերությունների նոր առաջընթաց գրանցվեց 1996 թ.հունիսին, երբ Վրաստան ժամանեց ՀՀ պատվիրակությունը՝ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ[479]: Այցի շրջանակներում քննարկվել են լայն համագործակցության, ինչպես նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող միջազգային և տարածաշրջանային մի շարք խնդիրներ: Ստորագրվել են շուրջ 9 փաստաթղթեր, որոնցից 4-ը առընչվում էին քրեական և քաղաքացիական գործերի իրավական փոխօգնության կարգավորման հարցերին[480]:

Մոռանալով առկա բազմապիսի հիմնախնդիրների և տարաձայնությունների մասին, կողմերը հնարավոր համարեցին անգամ Անդրկովկասի 3 երկրների միացումը՝ Բենիլյուքսի (Բելգիա, Նիդերլանդներ, Լյուքսեմբուրգ) երկրների օրինակով[481]:

Այդ տարաձայնություններն ու հիմնախնդիրները ջրի երես դուրս եկան, երբ երկու երկրների նախագահները հանդիպման շրջանակներում այցելեցին խնդրո առարկա տարածաշրջան՝ Ջավախք, երբ տեղի կազմակերպությունների, բնակչության ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ բարձրացվեցին մի շարք սուր, ցավոտ հիմնախնդիրներ, ««Ջավախք» ժողովրդական շարժման նախագահ Ս.Հակոբյանի կողմից անգամ հարց բարձրացվեց երկրամասի հյուսիսային մի քանի գյուղերի (Մոլիթ, Տաբաձղուրի, Ջխարոլա) արհեստական, բռնի միացումը վրացաբնակ Բորժոմի շրջանին, որին հետագայում լկտի հայհոյանքներով անդրադարձան վրաց հասարակական շրջանակներում[482]:

Հանդիպման ընթացքում լսվեցին նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք էին օրինակ, շուրջ 70 % հայ բնակչություն ունեցող

---

[479] Նույն տեղում, 05.06 1996·

[480] «Ազգ», 05 06.1996.

[481] Նույն տեղում, 06.06.1996.

[482] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე), გვ 182

նահանգի կառավարական շրջանակներում ընդամենը 2 % հայազգի ներկայացուցիչներ ունենալը, Ախալքալաք-Թուրքիա երկաթգծի կառուցման աննպատակահարմարությունը, տնտեսական արտադրանքի իրացման շուկայի բացակայությունը, Ջավախք-Հայաստան ճանապարհի անանցանելի լինելը և այլն: Խնդիրներ բարձրացվեցին նաև կրթական, էներգետիկայի և այլ ոլորտների հետ կապված[483]:

Երկու երկրների նախագահները, ինչպես միշտ, լուծելի համարելով բոլոր տեսակի հարցերը, առաջնայինը համարեցին «Հայ-վրացական դարավոր բարեկամությունը», որտեղ մեծ դեր էր վերապահվում տարածաշրջանի հայությանը:

Հարկ ենք համարում նշել, որ երկու նախագահների այցը Ջավախքի տարածաշրջան, ուներ լուրջ պատճառներ և սոսկ այնտեղ առկա հիմնախնդիրների արծարծումը չէր նպատակը՝ ո՛չ Վրաստանի նախագահի, և իր հայրենակիցներին տեսնելու անսահման փափագը՝ Հայաստանի նախագահի: Խնդիրը իրականում այն էր, որ որոշ վրացի դիտորդների կարծիքով Թբիլիսիի իրասությունները այս տարածաշրջանում փաստացի չէին տարածվում[484]: Ավելին, Վրաստանի խորհրդարանում շուտով ընթերցվեց Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում սոցիալ-քաղաքական իրավիճակի ուսումնասիրման համար Ախալցխա գործուղված խորհրդարանականների զեկուցագիրը:

Փաստաթղթում վիճակը բնութագրվում էր իբրև անբավարար: Մասնավորապես նշվում էր, որ տարածաշրջանում չէր գործում Վրաստանի պետական լեզուն, ազգային արժույթը՝ լարին[485] գործնականում չկար շրջանառության մեջ, չեն հեռար-

---

[483] «Ազգ», 06 06 1996

[484] Նույն տեղում

[485] Ազգային արժույթը Վրաստանում շրջանառության մեջ էր դրվել 1995 թ.սեպտեմբերի 25-ից, իսկ նույն թվականի հոկտեմբերի 2-ից այն Վրաստանի սահմաններում հայտարարվել էր որպես վճարման միակ միջոց (տես "Свободная Грузия", 05 10.1996)

ձակվում Վրաստանի հեռուստատեսության ծրագրերը[486]: Ահա սա էր «գլխավոր հիմնախնդիրը», որի այս կամ այն ձևով լուծման գործում շատ մեծ էր պաշտոնական Երևանի դերակատարությունը: Եվ այս հիմնախնդրի՝ հօգուտ Վրաստանի լուծման նպատակով Է.Շևարդնաձեի կողմից մեծապես կարևորվեց Հայաստանի հետ կայուն հարաբերությունների հաստատումը, իր հերթին, փայլուն գիտակցելով Ջավախքի հիմնախնդիրների հօգուտ Վրաստանի լուծման գործում իր «հաշտարարի» դերը, Լ.Տեր-Պետրոսյանը ձգտեց սրա դիմաց Վրաստանից ստանալ ավելին. քաղաքական այս առևտրից Ջավախքի իրադրությունը հետագայում է՛լ ավելի ծանրացավ, շատ ու շատ ազգային-ռազմավարական ու սոցիալ-տնտեսական հարցեր մնացին չլուծված:

1997 թ.հունվարի 14-ին, իր երկրորդ պաշտոնական այցը կատարեց Հայաստան (առաջինը տեղի էր ունեցել մեկ տարի առաջ՝ 1996 թ.հունվարի 5-ին) Վրաստանի արտգործնախարար Իրակլի Մենաղարիշվիլին[487]: Ստորագրվեցին միջկառավարական հարկային 2 համաձայնագրեր: Ընդհանրապես, հայ-վրացական հետագա բարձրաստիճան հանդիպումներում նկատվում էր մի հետաքրքրական փոփոխություն. կողմերի հանդիպումների ժամանակ Հայաստանի կողմից ավելի հաճախակի դարձան Հայաստանի՝ Վրաստանի հանդեպ տարածքային պահանջներ չունենալու մասին հայտարարությունները: Այդպիսի մի հայտարարությունով հանդես եկավ նաև ՀՀ ԱԺ նախագահ Բ. Արարքցյանը իր՝ փետրվարի 21-22-ը Վրաստան կատարած այցի շրջանակներում[488]:

Դա նաև արվեց այն բանից հետո, երբ Վրաստանի Հանրապետության նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Ա. Գեգեշիձեն հայտարարել էր, որ Ջավախքում ան-

---

[486] «Ազգ», 22 08 1996
[487] Նույն տեղում, 15 01 1997
[488] Նույն տեղում, 25 02 1997

կայունության ստեղծումը Հայաստանյան ընդդիմադիր որոշ ուժերի գործն է[489]:

Նախագահների մակարդակով Հայ-վրացական հերթական հանդիպումը տեղի ունեցավ 1997 թ.մայիսի 1-ին՝ Երևանում: Կողմերը համատեղ հրապարակեցին հուշագիր, ստորագրեցին շուրջ 11 փաստաթուղթ՝ չմոռանալով կրկին հավաստիացնել իրենց հավատարմությունը՝ միմյանց պետական անկախության և տարածքային ամբողջականության սկզբունքներին հավատարիմ լինելու կարևորության մասին[490]:

Հայ-վրացական երկկողմ հանդիպումներ էին տեղի ունենում նաև իշխող կուսակցությունների մակարդակով. 1997 թ. ապրիլին Երևանում, իսկ հոկտեմբերի 9-11-ը՝ Թբիլիսիում տեղի ունեցան հանդիպումներ Վրաստանի Քաղաքացիների միության և Հայոց համազգային շարժման ներկայացուցիչների միջև[491]:

1997 թ.նոյեմբերի 18-ին երկօրյա պաշտոնական այցով Վրաստան մեկնեց ՀՀ վարչապետ Ռ.Քոչարյանը (սա վարչապետի առաջին պաշտոնական այցն էր ՀՀ-ից դուրս)[492]: *«Չնայած մինչ այժմ ստորագրված Հայ-վրացական ավելի քան 50 պայմանագրերին, հարկավոր է համագործակցությունը այս իրավական հիմքի վրա տեղափոխել ավելի գործնական դաշտ»,- իր խոսքում նշեց ՀՀ վարչապետը*[493]: *Թբիլիսիի՝ հայկական պետական դրամատիկական թատրոնում Հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում ներկա էին նաև Ջավախքի ներկայացուցիչները, որոնցից մեկի՝ Ախալքալաքի ժողկրթբաժնի վարիչ Կամո Մնխչյանի կողմից բարձրացվեցին կրթական ոլորտին վերաբերող բազմաթիվ սուր հիմնահարցեր*[491]:

---

[489] Նույն տեղում
[490] Նույն տեղում, 06 05.1997
[491] «Վրաստան», 18 10 1997
[492] «Ազգ», 19 11 1997.
[493] Նույն տեղում:
[494] «Վրաստան», 22 11 1997

Հետաքրքրական է, որ ՀՀ վարչապետի այցից անմիջապես հետո՝ նոյեմբերի 20-ին, նախագահ Է.Շևարդնաձեի կողմից հրավիրվեց կառավարության հերթական նիստ, որի ընթացքում տեղի ունեցավ «Սամցխե-Ջավախեթիի երկրամասի սոցիալ-տնտեսական իրադրության բարելավման մի շարք անհետաձգելի միջոցառումների մասին» Վրաստանի նախագահի 1996 թ.դեկտեմբերի 25-ի թիվ 840 հրամանագրի կենսագործման քննարկումը[495]: Քննարկման ներկա էին Սամցխե-Ջավախքում նախագահի լիազոր Գիգլա Բարամիձեն, Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների վարչությունների նախագահներ Ս.Դարբինյանը և Ռ. Արզումանյանը: Համատեղ քննարկումից պարզ էր դառնում, որ նախագահի հրամանագրից (1996 թ.դեկտեմբերից) հետո տարածաշրջանում շատ քիչ բան էր փոխվել դեպի լավը: Կատարված միջոցառումներից միայն կարելի էր առանձնացնել Մարաբդա-Ախալքալաք երկաթուղային գնացքի երթևեկության քիչ թե շատ կարգավորված լինելը, մնացած հարցերում, չնայած «կատարված լուրջ դրական տեղաշարժերին»[496], Ջավախքում չկար և ո՛չ մի փոփոխություն. երկրամասը գտնվում էր նույն էներգետիկ ճգնաժամի մեջ, առաջվա նման չէին վճարվում կենսաթոշակները, ուսուցիչների աշխատա-վարձերը:

Այս ամենի փոխարեն վրացական համապատասխան գերատեսչությունների կողմից մշակվել էր նոր ծրագիր, ըստ որի նախատեսվում էր 1997 թ.կատարել 1,1 մլն լարիի (իսկ տարվա ավարտին մնում էին շատ քիչ օրեր), իսկ 1998 թ.՝ 1,5 մլն լարիի ներդրումներ՝ ճանապարհաշինարարության համար[497]: Միաժամանակ Է.Շևարդնաձեի կողմից այս նիստում վրացական շուրջ 14 նախարարությունների և գերատեսչությունների տրվեցին հանձնարարականներ՝ Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում առկա բոլոր ոլորտներին առընչվող, առաջնահերթ նշանակու-

---

[495] Նույն տեղում, 22.11.1997·
[496] Նույն տեղում, 29 11 4997·
[497] Նույն տեղում·

թյուն ունեցող հարցերի կարգավորման համար[498]: Այդուհանդերձ բազմաթիվ այս ծրագրերից իրականացվեցին մի քանիսը միայն. վերոնշյալների մեծ մասը մնաց թղթի վրա:

Հայաստանում իշխանափոխությունից, Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած ՀՀՇ վարչախմբի հեռացումից հետո հայ-վրացական հարաբերությունները ստացան նոր որակ: Դեռ նախընտրական շրջանում, հայաստանաբնակ վիրահայերը, որոնք համախմբված են տարբեր հայրենակցական միություններում («Ախալցխա», «Բոլնիս-Խաչեն», «Թբիլիսի», «Դաղեթ-Խաչեն», «Համշենահայեր», «Շուլավեր», «Ջավախք» և ուրիշներ), մարտի 7-ին կայացած հանդիպման ժամանակ պաշտպանեցին ՀՀ վարչապետ Ռ.Քոչարյանի թեկնածությունը[499]:

Նշենք նաև, որ Հայաստանում գործող և Ջավախքին քիչ թե շատ սատարող «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միությունը[500] միացավ և քաղաքական դաշինք կազմեց այս

---

[498] Նույն տեղում, 13 12 1997

[499] Նույն տեղում, 14 13 1998: Նշենք, որ 1996 թ ՀՀ նախագահական ընտրությունների ժամանակ ջավախքահայերը պաշտպանել էին Լ Տեր-Պետրոսյանի թեկնածությունը և իրենց հայաստանաբնակ բարեկամներին կոչ էին արել քվեարկելու վերջինիս օգտին «Հայաստանի Հանրապետություն», 18 06 1996, հմմտ նույն տեղում, 13 09 1996

[500] «Ջավախք» հայրենակցական բարեգործական միությունը հիմնադրվել է 1990 թ հունվարին, Երևանում ԽՍՀՄ սահմանադրության 51-րդ և ՀԽՍՀ սահմանադրության 49-րդ հոդվածների և իր կանոնադրության հիման վրա Վերջինիս նպատակն է միավորել հայ, վրացի և մյուս ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, Վրաստանի Սամցխե – Ջավախք – Ծալկայի և մերձակա վայրերի հայաստանաբնակ հայության ազգապահպանությանը, մշակութա-կենցաղային և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանն ուղղված հայաստանաբնակ հայրենակիցների ջանքերը Վերջինս ժամանակի ընթացքում Երևանից տարածվեց նաև ՀՀ-ի այլ մարզերը ևս (տես Կանոնադրություն «Ջավախք» հայրենակցական բարեգործական միության, ընդունված «Ջավախք» հայրենակցական բարեգործական միության համայնքային ներկայացուցիչների հիմնադիր ժողովում, 20 01 1990 թ, ք Երևան) Վերջինիս կողմից հիմնադրվել և հրատարկվում ու ոչ մեծ չափերով Ջավախքում է բաժանվում «Ասպնջակ» թերթը:

ընթացքում ՀՀ-ում հիմնադրված «Հզոր Հայրենիք» կուսակցության հետ (վերջինիս ստեղծմանը մեծապես նպաստել էր նաև «Ջավախք» հայրենակցական միությունը, որի շատ անդամներ մտել էին «Հզոր Հայրենիք» կուսակցության մեջ.դառնալով նրա հիմնադիրներից) և նրա հետագա գործունեությունը մեծապես պայմանավորվեց վերոնշյալ կուսակցության քաղաքական հայացքների հետ[501]:

Ինչևէ: 1998 թ.ընթացքում տեղի ունեցած հայ-վրացական հանդիպումներում ՀՀ նորընտիր նախագահ Ռ.Քոչարյանի վարչակազմի անդամները մեծապես կարևորելով հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների պահպանումը, դարձյալ փորձ չին անում շրջանցել կամ «խիստ քաղաքավարի» վերաբերվել բազմաթիվ կնճռոտ հարցերին: Մասնավորաբար, 1998 թ մայիսի 2-3-ը՝ ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության Թբիլիսյան[502], հունիսի 15-ին՝ ՎՀ արտգործնախարարի Երևանյան[503], ինչպես նաև բազմաթիվ այլ գերատեսչությունների (Սահմանադրական դատարան, տարբեր նախարարություններ և այլն)[504] ղեկավարների մի շարք հանդիպումների ընթացքում ոչ մի անդրադարձ տեղի չունեցավ կապված Ջավախքի խնդրի հետ: Նույնը կարելի է ասել սեպտեմբերի 25-26-ը երկու երկրների վարչապետների երևանյան հանդիպման մասին, երբ ստորագրվեց 8 կետից բաղկացած ընդարձակ մի կոմյունիկե[505]: Որքան էլ ցավալի է, մինչ այս երկու երկրների միջև տարբեր ֆինանսատնտեսական բնագավառներում ստորագրված ավելի քան 60 պայմանագրերից և համաձայնագրերից գրեթե ոչ մեկը չէր ուղղված Ջավախքի՝ Հայաստանի համար այդ կարևոր ազգային-ռազմավարական նշանակություն ունեցող երկրամասի տնտեսական վիճակի բարե-

---

501 «Հզոր Հայրենիք», թիվ 13, 23 04 1999·
502 «Վրաստան», 02 05 1998, հմմտ «Երկիր», 06 05 1998
503 «Երկիր», 16 06 1998
504 Նույն տեղում, 05 05 1998
505 «Վրաստան», 03 10 1998

լավմանը: Դրանում կար և՛ ՀՀ-ի՝ այս խնդրի նկատմամբ բավարար չափով ուշադրության պակասը, և՛ Վրաստանի «հասկանալի» պատճառներով անուշադրությունը:

1998 թ.ընթացքում երկու երկրների նախագահները հանդիպեցին երկու անգամ: Առաջինը տեղի ունեցավ Մոսկվայում՝ ապրիլի 28-ին[506], երկրորդը՝ նոյեմբերի 20-21-ը՝ Թբիլիսիում:

Բարձր մակարդակի հանդիպման ընթացքում կողմերի միջև ստորագրվեց «Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների համագործակցության հետագա խորացման մասին» 17 կետից բաղկացած հռչակագիրը, որի 5-րդ կետի մեջ ասվում էր. «Հայկական կողմը ողջունում է Վրաստանի ղեկավարության ջանքերը՝ ուղղված Վրաստանի հայազգի քաղաքացիների, այդ թվում նրա հոծ բնակության վայրերում, սոցիալ-տնտեսական հարցերի լուծմանը նպաստող և ազգային-մշակութային պահանջմունքների իրագործման համար լավագույն պայմանների ստեղծմանը»[507]:

Այս ընթացքում տեղի ունեցան նաև երկու երկրներում արտակարգ և լիազոր դեսպանների նոր նշանակումներ. 1998 թ. հունիսի 25-ին Վրաստանում ՀՀ դեսպան նշանակվեց Գեորգի Խոսրովը,[508] որը փոխարինեց այդ երկրում ՀՀ առաջին հավատարմատար (1993-1996 թթ.) և առաջին դեսպան (1996 թ. հունվարի 22-ից) Լևոն Խաչատրյանին[509]: Իր հերթին, 1998 թ. մայիսի 15-ին, Հայաստանում Վրաստանի նորանշանակ դեսպան

---

[506] Նույն տեղում, 02.05.1998:

[507] Նույն տեղում, 28 11.1998.

[508] «Ազգ», 26.06 1998·

[509] Անկախության շրջանում պաշտոնավարած այս երկու դեսպաններն էլ իրենց գործունեության բնագավառում գտնվեցին խիստ ապաշնորհ· Վերջիններիս Սամցխե - Ջավախք – Ծալկայի հայության խնդիրներով չզբաղվելը և այս տարածաշրջանի հետ ընդհանրապես կապ չպահպանելն է ապացուցում այն հանգամանքը, որ երկրամասի հայությունն ընդհանրապես տեղյակ չէր դեսպանների գործունեության, եթե չասենք նրանց իսկ գոյության մասին.

Նիկոլ Նիկոլոզիշվիլին Հայաստանի նախագահ Ռ.Քոչարյանին հանձնեց իր հավատարմագրերը[510]: Վերջինս իր պաշտոնավարության ավարտից հետո, 2003 թ.փետրվարին նշանակվեց Սամցխե-Ջավախքի երկրամասում Վրաստանի նախագահ Մ. Սաակաշվիլու լիազոր ներկայացուցիչ[511].սա երկրորդ դեպքն էր, երբ Հայաստանում Վրաստանի դեսպանն իր առաքելությունն ավարտելուց հետո նշանակվում էր նախագահի լիազոր Սամցխե-Ջավախք երկրամասում: Առաջինը Երևանում Վրաստանի առաջին դեսպան Գիգլա Բարամիձեն էր, հայտնի իր ընդգծված հակահայ տրամադրություններով, որին բազմաթիվ փորձագետներ և քաղաքագետներ անվանել են պաշտոնական Թբիլիսիի քաղաքականության գլխավոր ճարտարապետը տարածաշրջանում[512] (նշենք, որ դեռ Է.Շևարդնաձեի օրոք տեղեկություններ տարածվեցին, թե Գ.Բարամիձեն թմրանյութերի օգտագործման մշտական հակում ունի: Շուտով, Մ.Սաակաշվիլու իշխանության գալուց հետո, Գ.Բարամիձեի դեմ քրեական գործ հարուցվեց մի քանի հոդվածներով, այդ թվում իշխանության չարաշահում և այլն.այդ հանցագործությունների համար նրա նկատմամբ հայտարարվեց քրեական հետախուզում: Ահա այդպիսի մարդկանցից էր կախված Ջավախքի հայ բնակչության ճակատագիրը): Առաջ անցնելով նշենք, որ Վրաստանում «վարդյա» հեղափոխությունից հետո Ն.Նիկոլոզիշվիլին դարձավ Սամցխե Ջավախքում նախագահի երկրորդ լիազորը: Նախկին լիազոր Նուգզար Պարունաշվիլին ընտրվել էր պատգամավոր և նախընտրել օրենսդրական գործունեությունը: Մինչ Ն.Նիկոլոզիշվիլին և Ն.Պարունաշվիլին, Սամցխե-Ջավախքում լիազորներ են եղել Գե-

---

[510] «Վրաստան», 23 05 1998

[511] http://www.a-info.org/arm/full.php?id=396

[512] «Երկիր», 19.11 2004

լա Կվարացխելիան[513] (նախկին Աբխազիայի բնակիչ), Թեյ-մուրազ Մոսիաշվիլին և Գիգլա Բարամիձեն (1995-2002 թթ.):

Այս ամենով հանդերձ, չնայած այս ժամանակահատվածի հայ-վրացական հարաբերություններում տեղ գտած առանձնակի ջերմությանը, «լուծելի» թվացող բոլոր հարցերին, խնդրո առարկա երկրամասում անլուծելի էին մնացել բազմաթիվ հարցեր: Մասնավորապես Ջավախքահայության շրջանում մեծ դժգոհություն առաջացրեց այս ընթացքում ծրագրված Կարս-Ախալքալաք երկաթգծային մայրուղու կառուցման մասին լուրերը[514], որը բնականաբար չէր բխում Հայաստանի շահերից:

Միաժամանակ, այս ընթացքում էլ ավելի սուր բնույթ ընդունեցին վրացական մամուլում առանց այն էլ ոչ քիչ թիվ կազմող հակահայ, հակաջավախքյան հոդվածները: Ընդհանրապես Ռ.Քոչարյանի իշխանության պլուց և ՀՅԴ-ն Դաշնակցություն կուսակցության գործունեությունը Հայաստանում վերսկսելուց հետո, վրացական մամուլում (այդպիսիք էին «Դիլիս» գազեթի» [Առավոտյան թերթ], «Շվիդի դղե» [Յոթ օր], «Ռեզոնանսի», «Սաքարթվելո» [Վրաստան] թերթերը և այլն) մեծ թիվ կազմեցին Ջավախքը կորցնելու խուճապով համակված հոդվածներ, հակահայ տրամադրություններին ավելացավ նաև Աբխազիայում առկա «Մ.Բաղրամյան» գումարտակի գործունեության «վերաբացումը»: Վրաստանը, որպես հայերի դեմ ուղղված հաղթաթուղթ, սկսեց օգտագործել թուրքական գործոնը: Իսկ Դաշնակցություն կուսակցության ազգային բնույթի գործունեությունը, որի ազդեցությունը, բնականաբար, տարածվում էր նաև Ջավախքի շրջանում, բնականաբար դուր չէր գալու վրացական շրջանակներին, որոնք փորձում էին «Ջավախք» ժողովրդական շարժումը կապել ՀՅԴ-ի հետ, այդ իմաստով

---

[513] Վերջինս ապօրինի զենք կրելու և այն օգտագործելու մեղադրանքով ևս ձերբակալվեց 2006 թ.ապրիլին, իր բնակության վայրում Ռուսթավի քաղաքում (տես «Վրաստան», 21.04.2006):

[514] «Երկիր», 06 11 1998.

հետաքրքրական է մեջ բերել «Շվիդի դղե» թերթում տպագրված հոդվածից որոշ հատվածներ «Կասկած չկա, որ «Ջավախք» կազմակերպությունը արմատականորեն տրամադրված կուսակցություններից (Դաշնակցական) մեկի թևն է և նրա հետ գաղափարական սերտ կապեր ունի: ...Վրաստանի նկատմամբ չարակամորեն տրամադրված «Դաշնակցականները» իրենց օրակարգում Ջավախեթիայի հարցն են դրել»[515]:

Այդպիսի շովինիստական ոճով մեկ այլ հոդված է տպագրել նաև «Սաքարթվելու» (Վրաստան) թերթը, «....Եթե ամեն ինչ մի կողմ դնենք, «Ջավախքի» առաջնորդի հարցազրույցում առանձնահատուկ ուշադրություն է գրավում մեկ արտահայտություն. «Հայերը Ախալքալաքում ապրում են հին ժամանակներից»:

Զարմանալի է, բայց փաստ, որ բոլոր մոլորվածները հենց Վրաստանում ցանկացան ինքնորոշվել և սեփական պետություն ստեղծել, իսկ մենք դեռևս համապատասխան չափով չզգաստացանք: «Ջավախքի» առաջնորդներին նույնիսկ ոչ ոք չի ասում, որ հայերը Երևանում էլ անհիշելի ժամանակներից չեն ապրել, իսկ Ախալքալաքում (և ընդհանրապես՝ Ջավախեթիում)՝ նամանավանդ, նրանց ոչ-ոք չի հիշեցնում, որ 19-րդ դարի 1829-1830-ական թթ., ռուս գեներալ Պասկևիչի շնորհիվ գաղթածների ժառանգներն են և վրացիներին շնորհակալությունից ավել ոչինչ չպետք է ասեն»[516].

Առանձնակի չխորանալով այսպիսի, մեղմ ասած, անվայելուչ արտահայտություններով լի բազմապիսի հոդվածների մեջ, միայն նշենք այն փաստը, որ հայկական կողմի ցանկացած փորձ, որն ուղղված էր Ջավախքի հայ բնակչության շահերի պաշտպանությանը, վրացական շրջանակներում որակվում էր որպես «դավադրություն»՝ վրաց պետականության դեմ: Դրա փոխարեն, դեռ 1990-ական թթ. սկզբներին Թբիլիսիում ստեղծվել էր

---

[515] «Երկիր», 08 09 1998
[516] «Երկիր», 22 10 1998

«Ջավախեթի» անունով ոչ փոքր մի կազմակերպություն, որն իրը պետք է զբաղվեր Ջավախքում ապրող վրացիների (որոնք կազմում են աննշան տոկոս) «բազմապիսի խնդիրների» լուծմամբ[517]:

Խնդրո առարկա երկրամասի հայաբնակ մեկ այլ շրջանի՝ Ծալկայի վերաբերյալ մեկ այլ զրպարտչական բնույթի հոդվածով էր հանդես եկել վրացական «Ալիա» թերթը՝ շրջանի վարչության նախագահին մեղադրելով այն բանում, որ վերջինս շրջանի հայաբնակ վայրերում գյուղական վարչության նախագահներ է նշանակում տեղացի հայերին: Դա նշանակում էր, որ վերջինս «ծախում է» Վրաստանը, նշանակում էր, որ հայերն ինքնավարություն են ստեղծում[518]: Թբիլիսիում կայացած մամլո ասուլիսում, Ծալկայի շրջանային վարչության նախագահ Գիա Կվալիաշվիլին «հերքելով» այս «մեղադրանքները», անդրադարձ կատարեց ստեղծված իրավիճակին, նշեց, որ շրջանին չի տրվում էլեկտրաէներգիա, և պատճառներից ամենամեծը այս շրջանի ոչ վրացաբնակ լինելն է: Խոսք գնաց նաև ոստիկանության ու մաքսային ծառայությունների կողմից Ծալկայի համարանիշներով մեքենաների նկատմամբ թալանի քաղաքականություն տանելու մասին[519]:

Իսկ այս ընթացքում Ջավախքի, ինչպես նաև նրա հարևան Սամցխեի և Թռեղքի (Ծալկա) շուրջ ստեղծվել էր աշխարհաքաղաքական նոր իրադրություն: Կապված տարանցիկ ուղիների հետ (նավթամուղ, գազամուղ), այստեղ սկսել էին հատվել ու բախվել մի կողմից Վրաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի ու ԱՄՆ-ի, մյուս կողմից՝ Հայաստանի, Ռուսաստանի, ինչպես նաև Իրանի շահերը: Բացի այդ, ցանկանալով իր ազդեցությունները է՛լ ավելի մե-ծացնել տարածաշրջանում, ինչպես նաև վերահսկողություն սահմանել Վրաստանով անցնելիք նավթամուղի և

---

517 «Ջավախք», թիվ 1, փետրվար, 1997.
518 «Ազգ», 26 02.1997.
519 Նույն տեղում:

գազամուղի վրա, Ռուսաստանը դեմ չէր նաև Սամցխե-Ջավախքի քաղաքական ինքնավարությունը կապել Աջարիայում իր ունեցած շահերի հետ: Այդ կերպ կարելի է բացատրել (ինչպես-նաև սպասվող առաջիկա ընտրություններին այս երկրամասում մեծ թվով ընտրազանգված ապահովելու նպատակով) Աջարիայի այս ընթացքում ցուցաբերած մեծ ակտիվությունը Սամցխե-Ջավախքի շրջանում:

Ջավախքի, ինչպես նաև «Ջավախք» ժողովրդական շարժման առաջնորդների ու Աջարիայի այս շրջանում եղած հարաբերությունների մասին ակտիվորեն լուսաբանել են մի շարք վրացական թերթեր, որոնց մեջ եղած (չնայած բազմաթիվ ստահոդ լուրերին ու անհիմն վերլուծություններին) որոշակի նյութերից պարզ է դառնում, որ Աջարիայի՝ Ջավախքի հանդեպ ունեցած հետաքրքրությունները այնքան էլ անհիմն չէին: Նախ՝ ձգտելով ուժեղացնել իր ազդեցություններն այս տարածաշրջանում, Ա. Աբաշիձեն այդ ընթացքում Ջավախքում բացեց իր կուսակցության («Ազորձիներա» [(Վերածննդի Միություն]) տարածքային գրասենյակը[520]: Շուտով Ջավախք ուղարկվեց նաև մի քանի բեռնատար մեքենաներով ալյուր: Շատացան Ա. Աբաշնիձեի կողմից արված հայտարարություն-ներն այն մասին, որ Թբիլիսին բավարար չափով ուշադրություն չի դարձնում Ջավախքում բնակվող աջարներին (որոնք Ջավախք էին բերվել 1989 թ. տարերային աղետից հետո)[521], դրանով փաստորեն Աբաշիձեն իրեն իրավունք էր վերապահում «իր հայրենակիցներին օգնելու» քողի տակ մտնել Ջավախքի խնդիրների մեջ: Շուտով, 1998 թ. նոյեմբերին, Ա. Աբաշիձեն հանդես եկավ բացահայտ հայտարարությամբ, որի մեջ նշվում էր Ջավախքը Աջարիային միացնելու է. Շևարդնաձեի առաջարկության մասին-

---

[520] Ըստ որոշ տեղեկությունների Աբաշիձեն այդ գրասենյակին էր հատկացրել մոտ 100 հազար դոլար

[521] «Երկիր», 16.10 1998:

[522]: Իսկ առանձին վրացական շրջանակներ նշում էին այն մասին, որ այս (Ջավախքը Վրաստանից անջատելու և Ադարիային միացնելու) ծրագիրը կազմվել է Մոսկվայում՝ Զատուլինի և Միհրանյանի կողմից: Վրացական «Ախալի թաոբա» (Նոր սերունդ) թերթում առկա մի վերլուծական հոդվածում ցույց է տրված այս ծրագրի հեռահար նպատակները, որոնցով առաջին հայացքից թվում է թե, պետք է շահագրգռ-ված լիներ առաջին հերթին Հայաստանը. «Երկու տարածա-շրջանների (Ադարիայի և Սամցխե-Ջավախքի – Վ.Ս.) միացման նախագիծը նախատեսված է ռուսամետ Հայաստանին դեպի Սև ծով տանող միջանցք շնորհելու համար. ավտոմոբիլային ճանապարհով Երևանը կկապվի Բաթումի նավահանգստի հետ: Նախագծի համաձայն, Ռուսաստանը կվերահսկի Թուրքիային հարող սահմանը՝ սկսած Հայաստանից, ավարտված Ադարիա-Ջավախեթիայով: Համապատասխանաբար՝ Անդրկովկասում կմեծանա և Հայաստանի դերը, դրա հետ նաև՝ Աբաշիձեի իշխանու-թյունը»[523]: Որոշ ժամանակ անց, Ա.Աբաշիձեն հանդես եկավ նոր հայտարարությամբ, որով Ադարիայի ղեկավարը հաստատեց իր պատրաստակամությունը՝ համագործակցելու Վրաստանի Սամ-ցըխե-Ջավախք հայաբնակ տարածաշրջանը Ադարիայի ԻՀ կազմի մեջ ներառելուն: Նրա խոսքով, այդ որոշումը կայացվել է Բաթումում Վրաստանի նախագահ Է.Շևարդնաձեի հետ բանակցություններում, երբ վերջինս աջարական ղեկավարությանն առաջարկել է այդ ինքնավարության մեջ ներառել Վրաստանի շրջաններից մեկը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ջավախքը երբևէ եղել է Ադարիայի կազմում, ինչպես նաև ստանալով Ջավախքի առաջնորդների համաձայնությունը, Ա.Աբաշիձեն առաջարկել է Վրաստանի նախագահին կատարել իր խոստումը և Սամցխե-Ջավախեթյան տարածաշրջանը ներառել Ադարիայի ինքնավարության մեջ: «Մենք պատրաստ ենք լուծել այդ տարածաշրջանի

---

[522] Նույն տեղում, 27 11 1998
[523] Նույն տեղում, 15 10.1998

սոցիալ-տնտեսական հիմնախնդիր-ները»[524], նշել է Աբաշիձեն, ընդգծելով, որ «պաշտոնական Թբիլիսիի ներկայացուցիչների հայտարարություններն այն մասին, թե Ջավախքը Աջարիայի կազմի մեջ ներառելու գաղափարը դրդվել է Հայաստանի, Ռուսաստանի և Բաթումի կողմից, բոլոր-ովին անհիմն են»[525]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ և ոչ մի հայտարարություն առանց հիմքերի չէր արվի Ա.Աբաշիձեի կողմից, միաժամանակ չունենալով հավաստի տեղեկությունների դրանց հավաստի լինելու մասին, նշենք, որ պաշտոնական Հայաստանը (վարչապետ Ա.Դարբինյանը) հայտարարել է, որ «Ջավախքի հիմնախնդիր գոյություն չունի: Այդ ֆոնի վրա զարմանալի է Աջարիայի ղեկավարության աջակցությունը Ջավախքի ինքնավարության գաղափարին»[526]:

Իրոք, առաջին հայացքից «շատ իրատեսական» այս գաղափարի իրականացումը, որը մի կրակոցով սպանում էր մի քանի նապաստակ (Սամցխե-Ջավախքի ինքնավարության ձեռքբերում, Հայաստանի դեպի ծով դուրս գալու «դարավոր երազանքի» իրականացում, Իրան-Հայաստան-Ջավախք-Աջարիա-Ռուսաստան ուղիղ կապի ստեղծում և այլն), այնքան էլ այդպես չէր: Նախ, դրանով Ջավախքը չէր «անկախանում», այլ հայտնվելով Աջարիայի ղեկավարի տրամադրության տակ, ձեռք էր բերում անորոշ ապագա և Ա.Աբաշիձեի այդպիսի «հոգատար» վերաբերմունքը այնքան էլ անկեղծ չէր: Երկրորդը, որ Հայաստանը, խզելով իր հարաբերությունները Վրաստանի հետ, իր համար փակ դարձնելով բոլոր ճանապարհները, գործնականում հայտնվում էր Ա.Աբաշիձեի քմահաճույքի, նրա թելադրանքի տակ և երաշխիք չկար, որ թուրքամետ Աբաշիձեն թույլ կտար Հայաստանին օգտվելու տարանցիկ ուղուց: Իսկ «Ջավախքի» առաջնորդները դիմել էին այս ճանապարհով ինքնավարություն

---

[524] «Հզոր Հայրենիք», թիվ 9, 20 03 1999
[525] Նույն տեղում
[526] «Երկիր», 15 10.1998

ձեռք բերելու քայլին՝ սեփական ուժերով չկարողանալով հասնել որևէ արդյունքի: Երրորդը, որ անգամ սկսվեր այս՝ Սամցխե-Ջավախքի միացումը Աջարիային, գործնականում հնարավոր չէր այն հասցնել ավարտին, քանի որ այն ի վերջո բերելու էր Ռուսաստան-ԱՄՆ հարաբերությունների սրմանը, ելնելով այն հանգամանքից, որ դեռ 1997 թ. նոյեմբերին ԱՄՆ-ի ակտիվ նախաձեռնությամբ կյանքի էր կոչվել ՎՈՒԱՄ կազմակերպությունը (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա, որին հետագայում միացավ նաև Ուզբեկստանը)[527], որն ամեն կերպ ձգտում էր հակադրվել ԱՊՀ-ի տարածքում գործող մեկ այլ խոշոր կազմակերպության՝ Հավաքական անվտանգության պայմանագրին, ինչպես նաև թուլացնել Ռուսաստանի ազդեցությունները Անդրկովկասում:

Վրացական մամուլում հակահայ հիստերիայի հերթական հուժկու ալիքը բարձրացավ 1998 թ. օգոստոսի 12-ի հայտնի դեպքերից հետո, երբ այդ օրը «Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպության շուրջ 20 անդամներ Ախալքալաքից մեկ կմ հեռավորության վրա կանգնեցրեցին վրացական մի մեծ զորամիավորման շարժակազմի երթը, որը պատրաստվում էր իբր թե ռուսական զորքի հետ Աբուլ լեռան ստորոտում զորավարժություններ անցկացնելու[528]:

ՋԺՇ-ի պատվիրակությունն իր ձեռքին ուներ գրավոր մի փաստաթուղթ, ըստ որի՝ Վրաստանի, Ռուսաստանի պաշտպանության նախարարությունների և Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների համադրող խորհրդի միջև ստորագրվել է եռակողմ համաձայնագիր, որը բացառում էր որևէ զորատեսակի մուտքը, տեղաշարժը կամ կայացումը տարածաշրջանում[529]: Վրացական «Դիլիս գազեթի» թերթն անգամ հավաստում է, որ այդ մասին տեղյակ չի եղել շրջանային

---

[527] «Ազգ», 27 11 1997.
[528] «Հզոր Հայրենիք», թիվ 8, 20 08 1998.
[529] «Երկիր», 15 09 1998:

վարչության նախագահ Հ.Մուրադյանը (որն այդ պաշտոնում փոխարինել էր Ս.Դարբինյանին)[530]: Այս մասին հայտնվում է, որ Վրաստանի և Ռուսաստանի զինված ուժերն իբր թե համաձայնեցրել են զինավարժությունների օրը և տեղը: Բայց զարմանալի էր, որ ռուսական կողմը ոչ միայն չի դիմավորել վրացական զորքին, այլև անգամ պատրաստ չի եղել զորավարժություններին և նույնիսկ չի պատասխանել վրացական հեռախոսազանգերին: Մոտ երկու ժամ կանգնելուց հետո, վրացական զորաբանակը հետ է վերադառնում Ախալցխա: Նույն գիշերը «անհայտ» անձինք պայթեցնում են Ախալքալաքի շրջանային վարչության շենքի մի քանի սենյակներ[531]:

Դեպքի հաջորդ օրը սկսեցին սադրանքներով լի տեղեկությունների հրապարակումները՝ Ըստ Սամցխե-Ջավախքում նախագահի լիազոր Գիգլա Բարամիձեի՝ պարզվում էր, որ զորքին կանգնեցրել են «28-30 զինված մարդիկ (իրականում դրանք ՋԺՇ-ն շուրջ 20 անգեն անդամներ են եղել – Վ.Ս.)[532], որոնցից 14-ը Ախալքալաքում ապրող ոչ Վրաստանի քաղաքացիներ են, որոնք ֆինանսավորվում են այլ պետության կողմից և հատուկ ծրագիր են իրականացնում: Դրանք ռուսներ չեն, որովհետև լիազոր-նահանգապետը վստահ նշում է, որ զգեստափոխված ռուս զինվորականները եղել են մյուս՝ 14-16 հոգու մեջ»[533]: Սրանով, փաստորեն, մեղադրանք էր ներկայացվում և՛ Հայաստանին (քանի որ վրացական մամուլի մի շարք էջերում [«Շանսի+», «Ախալի թառբա», «Սաքարթվելո» և այլն] այդ «անհայտ» 14 անձանց տակ մատնանշում էր Հայաստանի քաղաքացիներին), և ռուս զինվորներին, հետևաբար նաև՝ Ռուսաստանին: Իր հերթին՝ ռուսական մամուլը ցավով է անդրադառնում վրացական շրջանակների այս և այլ զրպարտանք-

---

[530] Նույն տեղում·
[531] Նույն տեղում·
[532] «Ջավախք», թիվ 2, օգոստոս, 1998
[533] «Վրաստան», թիվ 65-66, 15 08 1998

ներին. ռուսական «Կրասնայա զվեզդա» թերթը գրում է. «Ավաղ, սա առաջին դեպքը չէ, երբ հանրապետությունում փորձում են իգուր տեղը մեղադրել ռուս զինվորականներին: Բավական է հիշել Է.Շևարդնաձեի նկատմամբ փետրվարյան մահափորձը, որին հաջորդեցին ռուսական ռազմական հենակայանները շրջափակելու կոչերը»[534]:

Ջավախքում իրադրությունը սրելուն ուղղված երկրամաս վրացական զորք մտցնելու այս փորձը շատ բացասական ազդեցություն կունենար տեղի բնակչության վրա: Բնակչությունն առաջին հերթին մեծ հոգեբանական ապրումներ կունենար կասկածելի, այդպես էլ չբացահայտված նպատակներով իր ներսում հայտնված վրացական այս զորամասի «խաղերի» հետևանքով: Մյուս կողմից, ինչպես ճիշտ են անդրադարձել որոշ վերլուծաբաններ, Վրաստանում սպասվող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների (1998 թ.նոյեմբեր), ինչպես նաև 1999թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին՝ Հայաստանի հետ հարաբերությունները վատացնելու, Ջավախքում իրավիճակը դրանով սրելու և այս ամենով առանձին վրաց ազգայնականների «ազգային ոգին» բարձրացնելու և նրանց իրենց կողմը գրավելու վրացական ընդդիմության հերթական սցենարն էր: Դրանով էր պայմանավորված Հայաստանի (Վ.Օսկանյանի) կողմից այս միջադեպը «չկազմակերպված միջադեպ» անվանելը վրացական միջավայրում շատ տհաճ ձևով ընդունելը[535]: Եթե այնուամենայնիվ Է.Շևարդնաձեն տեղյակ էր այս ամեն ինչին, ապա գոնե սրանից մեծ չափով փորձեց օգտվել վրաց ընդդիմադիր-ազգայնականների մի ստվար զանգված (Զ. Վաչակամաձեի և այլոց ղեկավար-առաջնորդությամբ), որոնց միջոցով ծայր առան վերոնշյալ հակահայկական, հակառուսական նոր տրամադրությունները:

---

[534] «Երկիր», 29 08.1998

[535] Նույն տեղում, 15.09 1998.

Այդ կերպ կարելի էր բացատրել նաև Սամցխե-Ջավախքում 1996 թ. ոստիկանության վարչության պետ նշանակված և 1998թ. իր աշխատանքից հեռացված Վլ.Ախալկացու այն հայտարարությունը, թե «Գ.Բարամիձեն իրեն հանձնարարել էր վերացնել «Ջավախք» կազմակերպության 2 անդամի, և թե այդ առաջադրանքն ինքն ստացել էր անմիջականորեն երկրի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Նուգզար Սաջայայից և համաձայնեցված էր Է.Շևարդնաձեի հետ»[536]. Վերջինս իրեն համարում էր վրացացած մահմեդական և այդ ժամանակ նշանակվել էր Աջարիայի ներքին գործերի փոխնախարար: Հերթական այս քաղաքական գզվռտոցից բերենք միայն Գ. Բարամիձեի այն հայտարարությունը, թե դա սադրանք էր՝ հայերի և վրացիների միջև եղած անդորրը խախտելու նպատակով, «...և դա արվում է տեղական ինքնակառավարման մարմինների առաջիկա ընտրութ-յունների և արդեն մոտ խորհրդարանական ընտրությունների «նշանառությամբ», երբ ոմանք նույնիսկ Թբիլիսիից խոստանում էին Ջավախեթիի բնակչությանը ինքնավարություն տալ, միայն թե ընտրությունների ժամանակ անհրաժեշտ ձայներ հավաքեին»[537]:

Սամցխե-Ջավախքում այս ժամանակահատվածում իշխող նահանգային, առանձին շրջանների վարչախմբերի, ինչպես նաև նրանց հետ սերտաճած կլանների գործունեության որոշ պատկերը պարզ դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում վկայակոչել «Խիստ գաղտնի» մակագրությամբ մի փաստաթուղթ, որը Սամցխե-Ջավախքի շրջանում անցկացրած ուսումնասիրությունների արդյունքում մանրակրկիտ ձևով կազմել և 1997թ. մարտի 31-ին Վրաստանի Քաղաքացիների միության նախագահին է ներկայացրել նույն միության փոխնախագահ Կոնտրատե

---

[536]«Ազգ», 26 06 1999.

[537] Նույն տեղում, հմմտ «Երկիր», 18 08.1998

Բաբունաշվիլին[538]*. «Գալիք հինգշաբթի օրը Սամցխե-Ջավախեթիի շուրջը ծավալվելիք խոսակցության և սպասվելիք քննարկման հետ կապված ինձ վրա պարտավորություն եմ վերցնում Ձեզ ներկայացնել փաստեր, որոնց հիման վրա արեցի իմ եզրակացությունը իմ կողմից պատրաստված փաստաթղթում, որը վեճ առաջացրեց ՎՔՄ քարտուղարության ներկայացուցչության կողմից:*

Նյութերը գաղտնի կմնան եթե դուք այդ ցանկանաք Հնարավոր է նյութը տարածվի նիստի մասնակիցներին, սա էլ իմ կարծիքով տեղի կունենա ըստ Ձեր որոշման:

...ՎՔՄ Խորհրդի նիստին կոնստրուկտիվ զրույց վարելու համար հարկավոր է մինիմում երեք ուղղությամբ քննարկում՝ Սամցխե-Ջավախքի հետ կապված, ինչը վերաբերվում է տեղական վարչակազմի հետ կապված գործընթացներին.

1. Սամցխե-Ջավախեթիում ի՞նչ է արվում լարին միակ առևտրի միջոցը դարձնելու համար.

2 Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանում ի՞նչ է արվում հողերի և պետական գույքի սեփականաշնորհման համար (մասսայական տեսակետից, այլ ոչ թե մեկ-երկու կլանի օգտին).

3. Ինչպե՞ս է վերաբերում տեղական ադմինիստրացիան (վարչակազմը)՝ Սամցխե-Ջավախեթի շրջանային կենտրոնի Ախալքալաք տեղափոխության հարցին, իր ամբողջ կառուցվածքներով:

...Սամցխե-Ջավախեթիում գործող կազմակերպված կոռումպացված խմբերի անհատական սխեման՝ 1997 թ.մարտի 31-ի դրությամբ.

---

[538] სმკ, სათათბიროს ვიცე-სპიკერი, საქართველოს მოქალაქეთა კავშირის სათათბიროს სპიკერს ბატონ გურამ თევზაძეს, 31 მარტი, 1997 წელი, ქ. თბილისი. (Նպատակահարմար չհամարելով հրապարակել փաստաթղթից կրճատել ենք էական նշանակություն չունեցող որոշ մասեր, որը չի խանգարում ընթերցողին պատկերացում կազմելու ընդհանուր համակարգի վերաբերյալ)

– Գիգլա Բարամիձե - լիագոր,
– Ջումբեր Բարամիձե - միջնորդ բոլոր տեսակի գործերում,
– Վաժա Կելեուրիձե - տարածքային դատախազ,
– Շոթա Զիլինգարաշվիլի - Ախալցիխեի դատախազ,
– Սոսո Սխվիտարիձե - տարածքային միլիցիայի ավագ,
– Մալխազ Խոշտարիա - տարածքային անվտանգության ավագ,
– Զուրաբ Խուցիշվիլի – նավթամթերագործ,
– Սերգեյ Դարբինյան - Ախալքալաքի վարչության նախագահ,
– Կառլոս Ռախսյան - գազի, Ռուսաստանի հետ բիզնեսի ներկայացուցիչ, Հայաստանի ճանապարհով դեպի Իրան տարվող ապրանքի միջնորդ,
– Գագիկ Ռախսյան - Ախալքալաքի դատախազ,
– Մելիք Ռախսյան – Վրաստանի պառլամենտի պատգամավոր Ախալքալաքից, Վրաստանի Քաղաքացիների Միության Ախալքալաքի շրջանային կազմակերպության նախագահ,
– Թութունջյան - Ախալքալաքի միլիցիայի ավագ, Ռախսյանի «խելիսբիջի»-ն (թարգմանաբար՝ «ձեռքի տղան» – Վ.Ս.),
– Գիվի Շուգարով – Վրաստանի պառլամենտի պատգամավոր,
– Վլադիմիր Ալելիշվիլի – տարածքային աշխատանքների շրջանային կազմակերպիչ:

Այս կամ այն հարցի շուրջը տեղեկացվող ինֆորմացիայի մակարդակը ի նկատի ունենալով անձնական ցուցմունքներով (սեփական կամքով) կարող են հաստատել ... (նշվում է մի շարք հայ և վրացի նախկին ու ներկա պաշտոնյաների անուններ

Վ.Ս.), ... Հարկ եղած դեպքում կարելի է լսել Սամցխե-Ջավախեթիի բնակիչներին, որոնք փաստերով կապացուցեն որոշ կարևոր դետալներ:

Կապեր.

– Ջումբեր Բարամիձե - Գիգլա Բարամիձեի հորեղբոր տղան, բիզնեսմեն, սև աշխարհի սովորույթների սերտ կապերով գործում էր գողերի «Ֆայոռա» և «Զիքովանի» կազմակերպությունների հովանավորության ներքո և նրան է պատկանում Նավթլուղի (Թիֆլիսի առևտրական հին շուկաներից մեկը - Վ.Ս.) շուկայի շրջակայքում գործող առևտրի և Մոսկովյան հրապարակի առևտրական գործունեությունները: Գիգլա Բարամիձեն բոլոր գումարները նրանից է ստանում. Սամցխե-Ջավախքում նրա բիզնեսը փայտանյութերի առք ու վաճառքի մեջ է, զբաղվում է նաև այլ բիզնեսով:

– Վաժա Կելեուրիձե - այս անձին բերել է Գիգլա Բարամիձեն, որը Ջումբեր Բարամիձեի «ախպեր տղան է»:

– Մալխաս Խոշտարիա - Ջումբեր Բարամիձեի փեսան, որը ղեկավարում է անվտանգության «Զեզոքություն» կոչվող կազմակերպությունը, հետևում տարածաշրջանի անցուդարձին, այնտեղ կատարվող պրոցեսներին:

– Սոսո Սխվիտարիձե - իր ժամանակին աշխատել է Զեյկիձեի տեղակալ քաղաքային վարչության ծառայությունում և Խաչիշվիլին նրան տարել է ոստիկանություն: Նա սերտ կապեր ուներ «Մխեդրիոնի»-ի ծառայողների հետ և աշխատել է Մցխետայի ոստիկանության պետ:

– Շոթա Զիլինգարաշվիլի - աշխատում էր Ախալցիխեի հետաքննությունների բյուրոյի պետ, և որը Ջամլետ Բեբիաշվիլու խմբից է, նրա ֆունկցիաներն են հին գործերի անբացահայտ թողնելը: Վերջինս քանի որ ավագ լեյտենանտ է, այս գործերի վրա կաշառքներ է վերցնում և վերահսկում տեղացիներին, որ նրանք չխառնվեն մեծ գործերի մեջ և չխանգարեն Ջումբեր

Բարամիձեի գործող խմբերին՝ ապրանքներ տեղափոխելու ժամանակ:

– Զուրաբ Խուցիշվիլի - ներկրում է նավթային մթերքներ, վերջինս Նուգզար Շևարդնաձեի «ախպեր տղան է»:

– Մելիք Ռախյան - «Ռախյանների» պառլամենտական ներկայացուցիչը:

Փաստեր.

– Ս.Դարբինյանը (Ախալքալաքի շրջանային վարչության նախագահ 1997-1998 թթ., պաշտոնից ազատվելուց հետո նշանակվեց Կարգախի սահմանային մաքսատան պետ – Վ.Ս.) մորթել տվեց 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն և 1 կգ-ը 0,60 թեթրիով հանձնեց:

– Նինոծմինդայի շրջանային վարչության նախագահ Ռ. Արզումանյանը 6 հարյուր մլն ռուբլի կաշառք վերցրեց, որպեսզի թույլ տա չորս շրջանների լճերի ձուկը արտահանել Հայաստան:

– Նինոծմինդայի և Ախալքալաքի շրջանային վարչությունների նախագահները «աշխատած» փողի առյուծի բաժինը հանձնում են Գիգլա Բարամիձեին (ընդգծումը մերն է – Վ.Ս.).

– Գիգլա Բարամիձեն անձնական զրույցի ժամանակ հաստատեց, որ Ս.Դարբինյանը իր պահարանի մեջ դրեց 5.000 դոլար, և ինքը հիմար չէր, որ ետ տար: Գ.Բարամիձեն ժողովրդի մեծ զանգվածի մեջ հայտարարում է, որ ինքը պետք է դառնա պրեզիդենտ: Անձնական զրույցի ժամանակ նա հայտարարեց «Ես այստեղ ծերանալու միտք չունեմ և այդքան էլ հիմար չեմ: Սամցխե-Ջավախեթիում պետք է թողնեմ ընդամենը երկու կլան, որոնք հետագայում կֆինանսավորեն պրեզիդենտական կամպանիային. այս ճանապարհով են Ռեյգանն ու Քլինտոնը դարձել պրեզիդենտներ»: Գ.Բարամիձեն թղթախաղի ժամանակ տանուլ է տվել Թուխունջյանին փոխգնդապետի աստիճանը (այսինքն,

Թուքունջյանը այդ աստիճանը ստացել է Գ.Բարամիձեին թղթախաղով պարտության մատնելու հետևանքով):

Երբ Գ.Բարամիձեն գալիս է Ախալքալաքի շրջան, նա զբաղվում է իր պրեզիդենտության հեռանկարների մասին և զբաղվում է հարբեցողությամբ:

Ախալքալաքի դիվիզիայի տերիտորիան հայտարարված է տնտեսական գոտի: Դիվիզիայի տարածքի վրա եղած հատուկ օբյեկտը կօգտագործվի որպես կոմերցիոն գործարքների կնքման վայր, այդ թվում՝ նարկոբիզնեսի համար: Գիգլա Բարամիձեն իր ծառայությունը սկսել է Ադիգենի շրջանի ղեկավարի՝ Թումանիշվիլու բանտարկությամբ, ոչ օֆիցիալ մեղադրանքներով (վերջինս մղադրվում էր Գ.Բատիաշվիլու ընտրությունների օրինախախտման մեջ):

Անտառտնտեսության ղեկավար Լոմիձեին և կոոպերատիվների ղեկավար Սիսվաձեին առանց դատավարության 8 ամիս պահել են բանտում և բաց թողին միայն Ախալցիխեի ոստիկանության պետի խնդրանքով: Բանտարկության պատճառն էր մեծ քանակությամբ անտառանյութը անօրինական վաճառքի տանելը:

Գ.Բարամիձեն կապված է ներքին գործերի մինիստրի տեղակալ ոմն Բաճաղուայի հետ, որը ըստ տեղեկությունների «Ռեվազովիչին» ապահովում է կանանցով:

...Ջավախեթիից մեծ քանակի փայտանյութ է անցնում Հայաստան և Իրան: Գ.Բարամիձեն ունի մեծ քանակի զինամթերք, որի մի մասը բաժանել է իր թիկնապահներին (անօրինական): Հատուկ նշանակության ջոկատի աշխատողները ձերբակալել են Թբիլիսիում Գ.Բարամիձեի մարդկանց, որից հետո Ն.Սաճայայի (Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար-Վ.Ս.) միջամտությամբ Դ.Մքաձեն ազատեց Գ.Բարամիձեի մարդկանց՝ նրանց տալով նոր պաշտոններ (վերջիններս Գ.Բարամիձեի հորեղբորտղայի՝ Ջ.Բարամիձեի մոտիկ մարդիկ էին):

Ախալքալաքի ղեկավարի տղան, որը ծառայում է բանակում և Ախալքալաքի նավթաբազայի տնօրենն է, զինված խմբով հարձակվել է իր ազգականների վրա (այս փաստը ունի ...ը):

Ախալցիխեում իսկական նարկոմանների բույն է, որտեղ պատրաստվում են մեծ քանակի նարկոտիկներ: Տեղական ոստիկանությունն ուզեց իրականացնել հակաթմրանյութային օպերացիա՝ Վ. Ախալկացիի (1996-1998 թթ. Սամցխե-Ջավախքում ոստիկանության վարչության պետ - Վ.Ս.) նախաձեռնությամբ: Բայց Գ. Բարամիձեն նախապես զգուշացրել էր այդ օպերացիայի մասին՝ Նոզաձեի միջոցով: Գ.Բարամիձեն իր պահակախմբի ղեկավար Նոզաձեի միջոցով արգելեց հակաթմրանյութային օպերացիայի գործողությունները: Գ.Բարամիձեն և Նոզաձեն նույնպես նարկոտիկ օգտագործողներ են. Հիմա Նոզաձեին տեղափոխել են այլ աշխատանքի, նա այժմ Ախալքալաքի արդարադատության պետն է:

Գ.Բարամիձեն մի շաբաթ ժամանակ է տվել Վ.Ախալկացուն, որպեսզի սպանեն Ս.Պետրոսյանին և Դ.Վեքիլյանին: Այս փաստը Ախալկացին հայտնեց պառլամենտի նիստի ժամանակ, որը պետք է ի կատար ածվեր Ռ.Տոլիկաձեի ղեկավարությամբ: Ախալցիխեից մեծամասնական հիմունքներով ընտրված պատգամավոր Նաթենաձեին Գ.Բարամիձեն իր անվտանգության աշխատողների միջոցով ծեծի է ենթարկել, քանի որ վերջինս միշտ հակասություններ մեջ էր Գ.Բարամիձեի հետ և ապրիլ ամսին պետք է ելույթ ունենար «Ախալցիխեի և Սամցխե-Ջավախեթիի մասին» իր զեկուցումով: Նաթենաձեն վախեցած էր, որ մինչև իր ելույթը՝ իրեն չենթարկեն պրովոկացիայի: Հարցն այն էր, որ Թամար Թագուհու հուշարձանի բացման համար ծախսվել է 500-600 հազար լարի (այն ժամանակվա փոխարժեքով դա կազմում էր շուրջ 400-460 հազար դոլար–Վ.Ս.), իսկ Ախալցիխեի բնակիչները ոչ ջուր ունեն, ոչ լույս և ոչ էլ նորմալ կոյուղային ցանց:

Ախալքալաքում և Նինոծմինդայում տպվել են հանրաքվեի թերթիկներ»:

Անվերապահորեն չընդունելով եւ չմեկնաբանելով այս փաստաթղթի պարունակած նյութը, նշենք այն ցավալի փաստը, որ Սամցխե-Ջավախքի ժողովրդի ճակատագիրը տնօրինում էին նաեւ այնպիսի մարդիկ, որոնք, տարված սեփական բիզնեսով և անձնական հաճույքներով, բոլորովին անտեսում էին երկրամասի զարգացման կարևոր ռազմավարական նշանակությունը և՛ Վրաստանի, և՛ Հայաստանի համար:

Տալով երկրամասի քաղաքական իրադրության շուրջ ստեղծված հետագա զարգացումների շարադրանքը, նշենք, որ 1999 թ.հունվարի 31-ին Ջավախքում ծնունդ առավ համավրաստանյան «Վիրք» կուսակցությունը[539]: Թեև վերջինս ծնունդ էր առել Ջավախքում, սակայն այն իր բնույթով համավրաստանյան էր և վերջինիս անդամ կարող էր դառնալ ընտրության իրավունք ունեցող ցանկացած քաղաքացի, անկախ ազգային պատկանելությունից, ովքեր ընդունում էին կուսակցության կանոնադրությունը, մասնակցում նրա աշխատանքներին, վճարում անդամավճար և չէին պատկանում որևիցե այլ կուսակցության[540].

Կուսակցության սկզբունքային նպատակներից էր ինչպես Վրաստանի ազատ ու անկախ զարգացմանը, պետության կայացմանն ու հզորացմանը սատարելը, այնպես էլ ազգային փոքրամասնությունների լեզվի, հոգևոր մշակութային արժեքների, ազգային ու կրոնական սովորույթների զարգացմանը նպաստելը[541]. Սակայն, ինչպես և սպասվում էր, կուսակցությունը այդ ձևով չընկալվեց Վրաստանի իշխանությունների կողմից Վերջիններս փորձեցին դրա տակ տեսնել «անջատողական» ինչ-ինչ

---

[539] «Հզոր Հայրենիք», թիվ 4, 4-10 փետրվար, 1999.

[540] См.- Устав – всегрузинской партии "Вирк", пункт 4 /4 1/

[541] Նույն տեղում, կետ 2, հմմտ «Հզոր Հայրենիք», թիվ 4, 04.02 1999:

ուժերի և սկզբից ևեթ այն չգրանցեցին արդարադատության նախարարությունում:

«Վիրք» կուսակցությունը՝ ազգային, կրոնական կամ տեղական սկզբունքներով կուսակցությունների ստեղծման անթույլատրելիության պատճառաբանությամբ[542], մինչ այսօր չի գրանցված Վրաստանի արդարադատության նախարարությունում: Թերևս իսկական պատճառը այդ կուսակցության Ջավախքի հայության շրջանում համամասնական ընտրաձևով անհամեմատ շատ ձայներ հավաքելու և Վրաստանի խորհրդարանում լրացուցիչ հայազգի պատգամավորներ ունենալու վերաբերյալ վրացական իշխանությունների վախի զգացողությունն է:

Իսկ այս ժամանակահատվածում, ինչպես արդեն պարզ դարձավ Ջավախքի շուրջ կատարված իրադարձությունների քննման համատեքստից, Ջավախքի քաղաքական կյանքում աննախադեպ ձևով (թերևս վերջին անգամ) ակտիվացել էր «Ջավախք ժողովրդական շարժում» կազմակերպությունը: Նրա կողմից ներկայացվող պահանջները գրեթե նույնն էին. Ջավախքը դուրս բերել Ախալցխայի «լծի» տակից, Վրաստանի սահմանադրության՝ Վրաստանի վարչատարածքային կառուցվածքի մասին գլխի քննարկման և որոշման շրջանակներում Ջավախքին տալ քաղաքական ինքնավարություն, Ջավախքի սոցիալ-տնտեսական, էներգետիկ, կրթական և այլ ոլորտների բարելավում և այլն:

Նշենք, որ այս շրջանում ՋԺՇ-ը լրջորեն հակադրվում էր նաև Ջավախքի կառավարող ուժերի նկատմամբ՝ խիստ ձևով քննադատության արժանացնելով նրանց, որոնք, ինչպես տեսանք, կոպիտ ձևով անտեսում էին հասարակ ժողովրդի շահերը. Ջավախքի հարցի հետագա արդարացի լուծումը պահանջում էր միասնաբար, առկա բոլոր ուժերի մասնակցությամբ

---

[542] «Առավոտ», 30 05.2006

մշակված մի հայեցակարգ, որի նկատմամբ կցուցաբերվեր լուրջ հետևողականություն, ինչը, ցավոք, բացակայում էր:

1996 թ.մարտի 9-ին տեղի ունեցավ ՋԺՇ-ն հերթական 5-րդ կոնֆերանսը, որտեղ որոշվեց Շարժման հետագա մարտավարությունը: Շարժման նախագահ ընտրվեց Ջավախքի Խանդո գյուղի բնակիչ Ս.Հակոբյանը (վերջինս նախագահ էր ընտրվել նաև ՋԺՇ-ն երկրորդ կոնֆերանսում, իսկ երրորդ և չորրորդ կոնֆերանսներում ընտրված Շարժման նախագահներն էին համապատասխանաբար՝ Խ.Մամիկոնյանը և Ն.Տեփոյանը):

Կոնֆերանսից հետո ՋԺՇ-ը հանդես եկավ ժողովրդին ու կառավարությանն ուղղված կոչերով, նամակներով, դիմումներով: Այդպիսի կոչերից մեկում ասվում էր. «Վրաստանի խորհրդարանը մոտ օրերս քննարկելու է Վրաստանի վարչատերիտորիալ բաժանման հարցը (նշենք, որ Վրաստանը դեռ մինչև այսօր «քննարկում է» այդ հարցը և դրան ոչ մի լուծում չի տրված–Վ.Ս.), թե Ջավախքը վերջապես կարգավիճակ պիտի ստանա թե ոչ: Այդ կարևոր հարցի դրական լուծումը հիմնականում կախված է մեզնից՝ Ջավախքցիներից: Ոչ մի Ջավախքցի չպիտի անտարբեր մնա այս հարցի կապակցությամբ՝ անկախ դիրքից, զբաղեցրած պաշտոնից, սեռից, կրթությունից, տարիքից, աշխատանքի բնույթից, բոլոր Ջավախքցիները պիտի պայքարեն կարգավիճակ ստանալու համար»[513]: Նույն պահանջն ուներ նաև Է.Շևարդնաձեին, Զ.Ժվանիային ու Սահմանադրական խորհրդին ուղղված մեկ այլ նամակ-հայտարարություն, որում մասնավորապես հայտնվում էր.«Մի քանի ամիսների ընթացքում ոչ մեկ անգամ Ձեր կողմից ուղարկվել է մեր տարածաշրջան պատվիրակություն՝ Ս.Կավաձեի, Տ.Պիրիայի և այլոց գլխավորությամբ, որոնք ծանոթացել են մեր բնակչության խնդրանքին, որտեղ հիմնավորվում էր մեր տարածաշրջանին քաղաքական ինքնավարություն տալու նպատակահարմարությունը: Միաժա-

---

[543] ՋԺՇ-ի նախագահության 1996 թ.ապրիլի 17-ին արված կոչի բովանդակությունից:

մանակ, Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում այն հանգամանքը, որ բոլոր պատվիրակությունները, տեղում ծանոթանալով խնդրին, խոստացել են անպայման Ձեզ ծանոթացնել մեր պահանջների հետ և մեր տարածաշրջան ուղարկել սահմանադրական հանձնաժողովի մի խումբ, որպեսի տեղում քննեն մեր տարածաշրջանին քաղաքական ինքնավարություն տալու հարցը: Սակայն մինչ օրս չենք ստացել ոչ մի պատասխան ո՛չ սահմանադրական հանձնաժողովի գալու մասին, և ո՛չ մեզ քաղաքական ինքնավարություն տալու հիմնահարցի մասին»[544]:

Որոշ ժամանակ անց, 1996 թ.մայիսի 5-ին, «Ջավախք» ժողովրդական շարժման նախաձեռնությամբ Ախալքալաք քաղաքում տեղի ունեցավ Ջավախքի բնակչության ներկայացուցիչների բազմահազարանոց ժողով, որի ժամանակ ընդունվեց բանաձև՝ Ջավախքին քաղաքական ինքնակառավարում տալու և Թբիլիս-Ախալքալաք-Թուրքիա երկաթգծի մագիստրալի անցկացման անթույլատրելության հարցի վերաբերյալ: Բանաձևն ուղարկվեց Է.Շևարդնաձեին, որտեղ հիշատակություն էր արվում մոտ ժամանակներս պետության պառլամենտի կողմից երկրի վարչատարածքային բաժանման վերաբերյալ հարցի քննարկման մասին և նշվում. «Այսօր մենք ուզում ենք ազատ զարգացնել մեր ազգային ավանդույթները, մշակույթը, սովորել հայոց լեզուն և պատմությունը, ինքնուրույն ընդունել այն որոշումները, որոնք անհրաժեշտ են և կենսական նշանակություն ունեն մեր տարածաշրջանի բնակչության համար, այսինքն, մենք ուզում ենք տարածաշրջանում ստեղծել համապատասխան

---

544 См -Заявление, Координационного совета общественно-политических организаций и движений Джавахетского региона – президенту Рсспублики Грузия гос Шеварднадзе Э А , председателю парламента гос Жвания, Конституционную комиссию

քաղաքական ինքնակառավարման ձև, որը կամրագրվի սահմանադրությամբ»[515]:

Նույն հավաքի ժամանակ ընդունված որոշումից նաև կազմվել և Հայաստանի ու Վրաստանի ղեկավարներին էր ուղարկվել համատեղ մի նամակ, որտեղ առաջարկ էր արվել Ջավախքի խնդիրներին լուծում տալու համար Ախալքալաքում հանդիպել և ստորագրել Ջավախքի զարգացմանը խոչընդոտող բոլոր արգելքների վերացմանն ուղղված մի համալիր պայմանագիր՝ Ջավախքը դարձնելով երկու երկրների միջև ընդհանուր տնտեսական տարածք[546]:

Հետաքրքրական է, որ վերոնշյալ հանրահավաքը չի թույլատրվել Ախալքալաքի շրջանի ղեկավար Ս.Դարբինյանի կողմից, որը նույնիսկ սպառնացել է հանրահավաքի կազմակերպիչներին՝ ցույցը չցրելու դեպքում դիմել այլ միջոցների: Այդ պատճառով «Ջավախք» ժողովրդական շարժման ղեկավարների կողմից հայտարարություն էր ուղարկվել Ախալքալաքի իրավապահ մարմիններին՝ բողոքելով այս ամենի դեմ[547]: Պարզ էր, որ շրջանի ղեկավարը կատարում էր Թբիլիսիի հրահանգները: Նրա Թիֆլիսի հակահայկական ուժերին ծառայելու հանգամանքն էր ապացուցում նաև Ախալքալաքում գործող «Ջավախք» հեռուստաֆիրմայի վրա վերջինիս կողմից վերահսկողություն սահմանելը: Փաստորեն «Ջավախք» հեռուստաֆիրման (որն առանց այն էլ գործում էր անարդյունավետ) այլևս չէր կարող անել ոչ

---

[545] Народное Движение "Джавахк", Резолюция, президенту Грузии госп Шеварднадзе Э А , председателю парламенти Республики Грузии госп Жвания З , 05 05 1996 г , г Ахалкалаки

[546] Народное Движение Джавахк, Обращение, президенту Республики Армении госп Тер-Петросяну Л.А , президенту Грузии госп Шеварднадзе Э А , 05 мая 1996 г , г Ахалкалаки

[547] Народное Движение Джавахк, Заявление N 3, начальнику государственной безопасности Ахалкалакского района госп Грделидзе Г., прокурору Ахалкалакского района госп Райисяну Г , начальнику Ахалкалакской районной полиции госп Тутунджяну С., 03 мая, 1996 г , г Ахалкалак

մի հայտարարություն առանց շրջանի վարչության նախագահի գրավոր թույլտվության, ինչը ՋԺՇ-ին և հասարակական կազմակերպությունների կոորդինացիոն խորհրդին դրկում էր այդ հեռուստատեսությամբ հայտարարություններով հանդես գալու հնարավորությունից:

Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդն այս անարդարության դեմ հանդես եկավ բողոքով[548]:

ՋԺՇ-ն նախագահությունը Ախալքալաքի շրջանային վարչության նախագահի և Վրաստանի խորհրդարանում շրջանային պատգամավոր Մ. Ռախիսյանի հետ ունեցած սուր տարաձայնությունները հարթելու և շրջանում դրա հետևանքով ստեղծվելիք ապակայուն վիճակը կանխելու նպատակով բողոքի դիմումով հանդես եկավ՝ ուղղված երկրի պետանվտանգության նախարարին[549]: Փաստորեն, այս ընթացքում Ջավախքում ստեղծված լարված իրավիճակը հետևանք էր նաև «հայ-հայկական» հակասությունների (ստեղծված՝ ՋԺՇ-ն և Ս.Դարբինյանի ու Մ. Ռախիսյանի իշխանամետ վարչախմբերի միջև), որը խիստ ձեռնտու էր վրացական իշխանություններին. դրանով զգալիորեն ջլատվում էր ինքնավարության ձգտող առանց այն էլ ամուր հիմքեր չունեցող ՋԺՇ-ը, որն ստիպված էր վրացական իշխանությունների հետ միասին «պայքարել» նաև տեղական իշխանությունների դեմ:

Մինչ կայանալիք հանրաքվեի՝ Ջավախքի համար այդ կարևոր իրադարձության նախապատրաստական աշխատանքների քննությանն անցնելը, մեջբերենք ևս մեկ բաց նամակ, որն

---

[548] Координационный совет общественно-политических организации Джавахка, Обращение, председателю правления Ахалкалакского района гос Дарбиняну С Т , копия зам. начальнику регионального района гос Райсяну Г.К., копия начальнику полиции Ахалкалакского района гос. Тутунджяну С А., г.Ахалкалаки

[549] Обращение – министру госбезопасности Грузии, от президиума народного движения Джавахк

ընդունվել էր ՋԺՇ-ն ակտիվի նիստի կողմից և ուղղվել հանրապետության նախագահին և պետանվտանգության նախարարին[550] նամակում մանրամասն նախ բացատրվում էր ՋԺՇ-ն առաքելությունը՝ սկսած իր հիմնադրման օրից, այնուհետև նշվում էր Ջավախքին ինքնավարություն տալու անհրաժեշտության հիմնարար պատճառների մասին: Նաև քննադատվում էր Վրաստանի պետանվտանգության նախարար Շ.Կվիրայայի այն հայտարարությունը, ըստ որի Ջավախքահայերը պահանջում են իրենց երկրամասին տալ ինքնավարության ստատուս՝ հետագայում անջատվելու համար «Ինչու՞ ենք մենք պահանջել այդ ստատուսը (կարգավիճակը): Պատասխանում ենք՝ այսօր տարածաշրջանում տեղի են ունենում բազմաթիվ բացասական գործընթացներ: Թերթերում նշվում է, որ հանցագործություններ են բացահայտվում, այսինքն՝ սպանությունները, գողությունները և բանդիտիզմը կազմում է 85 %: Մեր տարածաշրջանում այդ չի զգացվում, սակայն զգացվում է աճ՝ կաշառակերության, անօրեն գործարքների, թմրաբիզնեսի ոլորտում, ինչպես նաև անձնական շահերի համար պետական միջոցների օգտագործում. Իսկ կենտրոնի կողմից քայլեր չեն ձեռնարկվում այդ բացասական երևույթների վերացման համար Ավելին՝ մեկ անգամ չէ, որ վերոհիշյալ հարցերը դրել ենք պետության առաջ և ստաջարկել մեր օգնությունը, սակայն մեր գործողությունները ստացել են բացասական գնահատական»[551]:

Այսպիսով, Ջավախքում լրջորեն սկիզբ առավ «հանրարվև» կոչվող մի գործընթաց, որը ճակատագրական նշանակություն էր ունենալու երկրամասի հետագա զարգացման համար:

ՋԺՇ-ն կողմից սկսվեց բնակչության շրջանում ստորագրություններ հավաքելու գործընթացը: Այդ առթիվ նաև նամակ

---

[550] Открытое письмо президенту Грузии госп. Шеварнадзе Э.А., министру безопасности Грузии госп Квирая Ш.О., принято на заседании актива НДД, от 5 августа, 1996 г., г.Ахалкалаки.
[551] Նույն տեղում.

ուղարկվեց Է. Շևարդնաձեի և Զ.Ժվանիայի անուն-ներով[552], որտեղ մանրակրկիտ ձևով հիմնավորվում էր Ջավախքը Ախալցխայի վարչական տնօրինության տակ դնելու բոլոր բացասական հետևանքները, նշվում էր նաև Ախալքալաքը, Նինոծմինդան և Ասպինձան դուրս բերելու Ախալցխայի ենթակայությունից և մեկ տնտեսական գոտու մեջ ներառելու նպատակահարմարությունը: Պահանջվում էր նաև այդ երեք շրջաններում մտցնել վարչական կառավարման հատուկ ձև: «Այդ նպատակով, վերոնշյալի հաստատման համար, համաձայն Վրաստանի Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետի (.. ոչ քիչ, քան 30 հազար ընտրողներն իրավունք ունեն օրենսդրական նախաձեռնության), Ջավախքի հասարակական-քաղաքա-կան կազմակերպությունների կոորդինացիոն խորհրդի անդամները, այդ շրջանների բնակչության նախաձեռնությամբ, հավաքում են ստորագրություններ»[553] (Նշենք, որ Ախալցխայի վարչական ենթակայությունից Ջավախքը դուրս բերելու վերաբերյալ շուրջ 15 000 ստորագրություն էր հավաքվել դեռ 1995 թ. հունիսին, որոնք ներկայացվել էր Է.Շևարդնաձեին՝ նրա և Լ. Տեր-Պետրոսյանի 1996 թ.Ջավախքում հանդիպման ժամանակ, սակայն վերջինս «այդ ստորագրությունների վրա անգամ չնայեց»)[554]:

Իսկ 1997թ. հուլիս-օգոստոսին հավաքվող ստորագրությունների թերթիկն ուներ հետևյալ բովանդակությունը (ռուսերեն). «Հարգելի Ջավախքցիներ Ձեր նախաձեռնությամբ, Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդը, համաձայն Վրաստանի սահմանադրության 67-րդ հոդվածի առաջին կետի (...30.000 ոչ քիչ ընտ-

---

[552] Обращение – Координационного Совета общественно-политических организаций Джавахка президенту Грузии г-ну Э А Щеварднадзе, председателю парламента г-ну З Жвания, г Ахалкалаки

[553] Նույն տեղում

[554] «Ջավախք», թիվ 1, փետրվար, 1997, հմմտ նույն տեղում, թիվ 1, օգոստոս 1998

րողներն իրավունք ունեն հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ), նախաձեռնում է ստորագրահավաք՝ երկրի պառլամենտում հետևյալ հարցերը քննարկելու համար.

1 Ոչ սահմանադրական Սամցխե-Ջավախք երկրամասի կազմավորման գործընթացի դադարեցում.

2 Երկրի պետական-տերիտորիալ կառուցվածքի մասին սահմանադրության գլխի ընդունման ժամանակ, Ջավախքին տալ համապատասխան վարչա-տերիտորիալ միավորի կարգավիճակ՝ Վրաստանի սահմանադրության շրջաններում»:

Հավաքված բազմահազար ստորագրություններին հետևելու էր հանրաքվեն: «Ջավախք» ժողովրդական շարժման շուրջ համախմբված Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացիոն խորհուրդը մեծ ակտիվությամբ էր նախապատրաստվում 1998թ. փետրվարին անցկացվելիք համընդհանուր հանրաքվեին: Այդ առթիվ դիմում հղվեց նաև Հայաստանի և Վրաստանի խորհրդարանական պատվիրակություններին[555]*, որում մանրամասն նշվում էին Ջավախքի առջև ծառացած սոցիալ-տնտեսական, կուլտուր-լուսավորչական և քաղաքական բնույթի խնդիրները, որոնք գոյություն են ունեցել տասնամյակներ շարունակ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ միջոցը Ջավախքի բնակչությունը, ըստ դիմումի տեսնում էր հետևյալ կոնկրետ հարցի մասին հանրաքվեի անցկացման մեջ. «Համաձա՞յն էք դուք նրա հետ, որ Ջավախքի տարածաշրջանը Վրաստանի կազմում ունենա վարչա-տարածքային միավոր»*[556]*:*

ՋԺՇ-ն կողմից կողմից 1997 թ.փետրվարին «Ջավախք» թերթի թիվ 1 (18)-ում տպագրվեց նաև մի մեծ կոչ՝ ուղղված

---

[555] Кординационный Совет общественно-политических организации Джавахка, Обращение-парламентским делегациям Армении и Геузии, 7 апреля, 1997 г., г. Ахалкалаки

[556] Նույն տեղում.

ջավախքցիներին[557]: Կոչում նույնպես բարձրացվում էին Ջավախքում առկա բոլոր հիմնախնդիրները, մանրամասն քննադատության էր ենթարկվում Վրաստանի կողմից վարվող քաղաքականությունը, քննադատվում էին նաև շրջանի ղեկավարները. «Պատվարժան ջավախքցինե՛ր, ստացվում է, որ մարդիկ, ովքեր պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում, չեն ցանկանում Ջավախքը Ախալցխայի ենթակայությունից դուրս բերել: Ախր նրանք մերն են, մեր Ջավախքից են, բայց ա՜րի ու տես, որ հանուն պաշտոնի մեր տարածքն ու նրա ժողովրդին առ ու ծախի են ենթարկում, ոտնահարում մեր արժանապատվությունը, նպաստում մեր ազգային դիմագծի կորստյանը: Նման վարվելակերպով ի՞նչ պատասխան պիտի տան նրանք մեր ժողովրդին, գալիք սերունդներին»[558]:

Իրոք, Ախալքալաքի շրջանի ղեկավարությունը բացահայտորեն դեմ էր և ամեն կերպ խոչընդոտում էր հանրաքվեի անցկացմանը: Դա է վկայում այն փաստը, որ 1997թ. փետրվարի 5-ին, գյուղական վարչությունների, կոլտնտեսությունների նախագահների և սովխոզների տնօրենների ընդլայնված նիստի ժամանակ, որտեղ լայնորեն քննարկման էր առնվել Կոորդինացիոն խորհրդի առաջ քաշած հանրաքվեի վերաբերյալ հարցը, Ախալքալաքի շրջանային վարչության նախագահ (պրեֆեկտ) Ս.Դարբինյանը կատեգորիկ ձևով արգելել էր (ընդհուպ մինչև պաշտոնից ազատելու սպառնալիքով) մասնակցելու այդ ընտրություններին և թույլ չէր տվել վավերացնելու նիստի արձանագրությունը: Կոորդինացիոն խորհրդի անդամների կողմից այս առթիվ բաց նամակ է հրապարակվում՝ ուղղված Ս.Դարբինյանին և նշվում, որ նման ձևով շարունակելու դեպքում վերջինիս նկատմամբ կկիրառվեն ադեկվատ միջոցներ[559]:

---

[557] «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997

[558] Նույն տեղում.

[559] Кординационный Совет общественно-политических организаций и движении Джавахети, Открытое письмо – председателю

Այսուհանդերձ, չնայած բազմաթիվ խոչընդոտներին, կոորդինացիոն խորհուրդը (որի մեջ, բացի «Ջավախք» ժողովրդական շարժումից, մտնում էին նաև ինչպես Ախալքալաքում, այնպես էլ Բոգդանովկայում գործող «Արշալույս», «Զարթոնք», «Վետերանների միություն», «Ժողովրդավարների միություն», տեղական հասարակական քաղաքական կազմավորումները)[560]: Կոորդինացիոն խորհուրդը Ջավախքի հարցի լուծումը տեսնում էր հանրաքվե անցկացնելու մեջ. «Մեր կատարած բոլոր քայլերը ցանկալի արդյունքի դեռ չեն հասցրել, դրա համար էլ կոորդինացիոն խորհուրդը անում է հաջորդ վճռական քայլը. դա Ջավախքում համաժողովրդական հան-րաքվե ռեֆերենդում անցկացնելու քայլն է»[561]: Վերջինս կոչ էր անում Ջավախքի ողջ բնակչությանը, երկու շրջանների վարչությունների նախագահներին, ձեռնարկությունների տնօրեն-ներին, գյուղական վարչություններին, բուժաշխատողներին, ու-սուցիչներին «հրաժարվել բոլոր տեսակի պասիվությունից ու անտարբերությունից, տեղերում ակտիվորեն մասնակցել հանրաքվեի անցկացման նախապատրաստական աշխատանքներին ու հանրաքվեի օրը «Վրաստանի կազմում Ջավախքի առանձին քաղաքական ինքնակառավարման միավոր» ստեղծելուն ասել՝ «ԱՅՈ»[562]:

Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացնող խորհրդի կողմից 1997թ. ապրիլին մշակվել էր նաև Ջավախքի հիմնահարցի լուծման մարտավարության մի նախագիծ[563], որտեղ Ջավախքի հիմնահարցի լուծ-

---

Ахалкалакского районного правления господину Дарбиняну С Т , 12 марта, 1997 г , г Ахалкалаки

[560] «Հայաստանի Հանրապետություն», 04 02 1999

[561] «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997

[562] Նույն տեղում

[563] Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացնող խորհուրդ, Ջավախքի հիմնահարցի լուծման մարտավարություն (նախագիծ), 25 04 1997, ք Ախալքալաք՝

ման պայքարի քաղաքակիրթ, քաղաքական հանգրվանային ձևերի մի շարք կետերից ուշագրավ էին հետևյալները. «...գ) Վրաստանի կազմում Ջավախքի վարչա-տարածքային ազգային միավորի ստեղծում,

դ) Վրաստանի կազմում Ջավախքի ինքնավարության ձեռքբերումը որպես դաշնային միավոր (եթե Վրաստանը գնալու է դաշնային պետություն դառնալու ճանապարհով),

ե) Ջավախքի հիմնահարցի միջազգայնացում՝ որպես օժանդակ միջոց»[564] *Իսկ այս ամենին, ինչպես նաև մի շարք այլ հիմնախնդիրների լուծմանն ուղղվելիք միջոցառումների համապարփակ ազգային ծրագրային դրույթներից հետաքրքիր էր հետևյալ կետը. «... է) երկրամասում Վրաստանի ազդեցության լծակների թուլացում և Ախալցխայի, Ծալկայի, Բորժոմի և Ասպինձայի շրջանների հայության ուժեղացում, որոնք Ջավախքի էթնիկական պատնեշն են հանդիսանում»*[565] *(թե ինչու անհրաժեշտ համարեցինք մեջբերել այս կետը, պարզ կդառնա քիչ հետո):*

Այնուամենայնիվ, այսքանից հետո, Ջավախքում հանրաքվե չանցկացվեց.... Ի՞նչն էր պատճառը: Նախ՝ «Ջավախք» ժողովրդական շարժման նախագահ Ս. Հակոբյանը այդ առթիվ տալիս է հետևյալ պատասխանը. «Պատրաստ էին քվեաթերթիկները, կազմել էինք կոորդինացիոն խորհուրդ (այդ խորհրդի մեջ էին մտնում այդ շրջանում Ջավախքի քաղաքական ակտիվիստներից՝ Դ.Վեքիլյանը, Դ.Ռստակյանը, Ս.Պետրոսյանը, Ս.Հակոբյանը, Տ.Կարախանյանը, Ն.Կարապետյանը, Մ.Աբրահամյանը, Խ.Այվազյանը, Ռ.Սահակյանը, Պ.Ստամբոլցյանը, Ժ.Ալվարյանը–Վ.Ս.)[566]*: Դիմեցինք Վրաստանի կառավարությանը՝ թույլատրել անցկացնելու հանրաքվե: Պատասխան չեղավ: ...Հանրաքվե չանցկացվեց, բայց ընդունվեց և տեղական «Ջավախք» թերթում հրա-*

---

[564] Նույն տեղում

[565] Նույն տեղում.

[566] «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997:

պարակվեց «Ջավախքի ինքնավար Հանրապետության» Սահմանադրության նախագիծը: Դա սոսկ առանձին մարդկանց մտահղացումն էր, կարծիքը»[567]: Մեր կողմից ավելացնենք, որ այդ Սահմանադրությունն էլ «Ջավախք» թերթում տպագրվել էր բավականին ուշ՝ 1998թ. օգոստոսյան համարներից մեկում[568] Հետաքրքրական է, եթե Ջավախքի բնակչությունը մինչ այդ, ինչպես տեսանք իր ստորագրություններով կողմ էր արտահայտվել հանրաքվեին, իսկ Վրաստանի Սահմանադրության 67-րդ հոդվածի առաջին կետով նրան իրավունք էր վերապահվում կայացնելու օրենսդրական նախաձեռնություններ՝ 30.000-ից ոչ քիչ բնակչություն լինելու դեպքում, իսկ Ջավախքի (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների) բնակչությունը այդ թվականին, ըստ պաշտոնական տվյալների, շուրջ 97.511 էր[569], ապա ո՞րն էր պատճառը Թբիլիսիին դիմելու: Կամ միթե՞ պարզ չէր, որ Թբիլիսին, այսպես, թե այնպես թույլ չի տալու այդ հանրաքվեն դա առնվազն պարզ պետք է լիներ Թբիլիսիի կողմից նշանակված շրջանային վարչության նախագահների՝ այս խնդրի վերաբերյալ ունեցած կարծր, անզիջող դիրքորոշումներից: Հաջորդը, եթե Կոորդինացիոն խորհուրդը պետք է հանրաքվեն անցկացներ Թբիլիսիի թույլատրությամբ, իսկ այդ ընթացքում չունենալով այն, ինչո՞ւ էր այդքան նախապատրաստվել, նախապատրաստել նաև ժողովրդին, համընդհանուր աղմուկ բարձրացրել, գրգռել իր դեմ վրացական մամուլին: Իհարկե, սրանք այս գործընթացի կասեցման պատճառների մի փոքր մասն են միայն: Իրականում ամենամեծ պատճառներից մեկը Կոոր-դինացիոն խորհրդի, ինչպես նաև ՀԺՇ-ն անդամների՝ այս հարցի շուրջ առաջացած տարաձայնություններն էին, որոնց պատճառով շուտով Կոորդինացիոն խորհուրդն ու նրա կորիզը

---

[567] «Հայաստանի Հանրապետություն», 04 02 1999·

[568] «Ջավախք», թիվ 2 (20), օգոստոս, 1998.

[569] **http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml** հմմտ. "Конфликты и переговоры", N 3-4, Тбилиси, 1997.

կազմող ՋԺՇ-ը անհամեմատ թուլացան և գրեթե դադարեցին գոյություն ունենալուց: Ջավախքի ճակատագրի որոշման կարևոր դերը ստանձնած Կոորդինացիոն խորհրդի և ՋԺՇ-ն ղեկավար անդամների մոտ խիստ կերպով զգացվում էր միասնաբար մշակված հայեցակարգի, քաղաքական ուղու բացակայությունը:

Մյուս կարևոր պատճառներից էին դարձյալ, ինչպես նշել ենք աշխատության նախորդ գլխում, Ջավախքի ինքնավարությունն ընդգրկող աշխարհագրական սահմանների, ինչպես նաև քաղաքական շրջանակների ոչ ճիշտ պատկերացումները, հետևաբար նաև այստեղից բխող Վրաստանին ներկայացվող պահանջների միմյանց խիստ հակասական լինելը:

Նախ, եթե հանրաքվեից առաջ ստորագրահավաքի ժամանակ Կոորդինացիոն խորհրդի անդամների՝ Է.Շևարդնաձեին և Զ.Ժվանիային ուղղված դիմումում «նպատակահարմար էր համարվում նախագահի անձնական լիազոր ներկայացուցչի պաշտոն մտցնել Ախալքալաքի, Նինոծմինդայի և Ասպինձայի շրջանների վրա՝ համապատասխան նոր կազմակերպական-տնտեսական համակարգի տարածքային վարչության և տնտեսավարման մշակումով»[570], ապա համարյա բոլոր տեղերում պահանջների մեջ միայն նշվում է «Ջավախք» տարածաշրջանի մասին, որը պետք է դուրս բերվեր Ախալցխայի վարչական կառավարման համակարգից, այսինքն, այս պահանջներից դուրս էր մնում Ասպինձայի շրջանը. Դա է վկայում նաև Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացնող խորհրդի 1997 թ.ապրիլին մշակված վերոնշյալ Ջավախքի հիմնահարցի լուծման մարտավարության նախագիծը, որով նախատեսվող միջոցառումների ծրագրային «է» կետով Ջավախքի էթնիկական պատնեշ են համարվում Ախալցխայի, Ծալկայի, Բորժոմի և Աս-

---

[570] Обращение - Кординационного Совет общественно-политических организаций Джавахка,президенту Грузии г-ну Э А Шеварднадзе, председателю парламента г-ну З Жвания, г Ахалкалаки

պինձայի շրջանները, որոնց շրջանում «պետք էր թուլացնել Վրաստանի ազդեցության լծակները և ուժեղացնել հայերին»[571]*. Ավելին, հանրաքվեն նույնպես նախատեսված էր անցկացնել միայն Ջավախքում (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում):*

Այս բոլորից բացի խիստ անորոշ էր նաև նախատեսվող հանրաքվեի ժամանակ դրված պահանջը. «Համաձա՞յն եք որպեսզի Վրաստանի սահմանադրության շրջանակներում Ջավախքի տարածքը Ախալքալաք կենտրոնով ունենա իր վարչա-տերիտորիալ միավորը միասնական Վրաստանի կազմում - ԱՅՈ, ՈՉ»[572]*. Այստեղից կարելի է եզրակացնել, որ հանրաքվեն վերաբերում էր ոչ թե Ջավախքի ինքնավարության կարգավիճակ ստանալուն, այլ փաստորեն պայքարը գնում էր Ջավախքը Ախալցխայի վարչական ինքնակառավարման ենթակայությունից դուրս բերելու համար, իսկ թե ինչպիսի՞ կարգավիճակով, դա չէր նշվում: «Ախալքալաք կենտրոնով վարչա-տերիտորիալ միավոր» ձևակերպումը խիստ անորոշ հասկացողություն էր և դրա տակ անհնար էր ինչ-որ բան հասկանալ ինքնավարության մասին· Իսկ եթե նույնիսկ Վրաստանը «հասկանար» հայերի այս պահանջը և Ջավախքը Ախալցխայի ենթակայությունից դուրս բերելուց բացի նրան տար նաև ինքնավարություն, ապա մեր կարծիքով խիստ անարդարացի կլիներ Ախալցխայի՝ պաշտոնա-կան տվյալներով շուրջ 43 % (23.644 մարդ, այն դեպքում, երբ վրացիների թիվը ավելի էր ընդամենը 2044-ով (25.688 մարդ)*[573] *հայություն կազմող և Ծալկայի բացարձակ հայերի մեծամասնությամբ բնակեցված շրջանները թողնել մեղմ ասած՝ «բախտի քմահաճույքին». Մյուս կողմից, արդեն թուլացած ՋԺՇ-ը, ճիգեր գործադրելով*

---

[571] Ջավախքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կոորդինացնող խորհուրդ, Ջավախքի հիմնահարցի լուծման մարտավարության նախագիծ, 25.04.1997, ք.Ախալքալաք.

[572] «Ջավախք», թիվ 1 (18), փետրվար, 1997

[573] "Конфликты и переговоры", N 3-4, Тбилиси, 1997.

նորից «վերակենդանանալու», 1998 թ. օգոստոսին (Հանրաքվեի տապալումից շուրջ կես տարի անց), «Ջավախք» թերթում շարունակելով կոչ անել ժողովրդին պայքարի ելնել՝ դուրս գալու Ախալցխայի ենթակայությունից[574], միաժամանակ վերոհիշյալ թերթի նույն ամսում լույս տեսած հերթական համարում տպագրվում է «Ջավախքի ինքնավար Հանրապետության ապագա սահմանադրության հիմնադրույթները» վերտառությամբ մի ստվարածավալ հոդված, որտեղ Ջավախքի ապագա ինքնավար Հանրապետությունն «ընդգրկում էր իր մեջ Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ասպինձայի, Ախալցխայի և Ծալկայի շրջանները, իրենց այժմյան սահմաններով, ինչպես նաև Բորժոմի շրջանին բռնակցված Զխարոլա, Մոլիթ, Ղզլքիլիսա (Տաքածղուրի) հայկական գյուղերը»[575]: Բնականաբար այստեղից հարց է առաջանում, եթե Կոորդինացիոն խորհրդի (կամ ՋԺՇ-ն) անդամների կողմից նախատեսվում էր Ջավախքի ինքնավար Հանրապետությունն ստեղծել նշված Սահմանադրության 1-ին կետով նախատեսվող (Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ասպինձայի, Ախալցխայի, Ծալկայի շրջաններ և Բորժոմի շրջանի հարավային հայկական գյուղեր) սահմաններում, ապա էլ ինչո՞ւ էին նրանք ձգտում Ջավախքի դուրս բերումը Ախալցխայի ենթակայությունից: Նշենք տարբերությունը Սամցխե-Ջավախք նահանգի և այն ինքնավար Հանրապետության միջև եղած, որը ուզում էին ստեղծել ՋԺՇ-ն ներկայացուցիչները. նահանգում կար Բորժոմի շրջանը, ինքնավար Հանրապետության Սահմանադրության մեջ կար միայն նրա հարավային հայկական գյուղերը, նահանգում չկա Ծալկայի շրջանը, Սահմանադրության մեջ այն մտնում էր որպես ինքնավար Հանրապետության մասնիկ: Միաժամանակ նահանգում կա Ադիգենի՝ Աջարիային սահմանակից շրջանը, որը չէր նախատեսվում մտցնել ինքնավար Հանրապետության մեջ: Մյուս էական տարբերությունն այն էր,

---

[574] «Ջավախք», թիվ 1 (19), օգոստոս, 1998
[575] Նույն տեղում, թիվ 2 (20), օգոստոս, 1998

որ նահանգում՝ նահանգային կենտրոնը Ախալցխա քաղաքն է, սահմանադրությունով նախատեսվում էր. «Ջավախքի վարչական կենտրոնը (մայրաքաղաքը) Ախալքալաք քաղաքն է» (Սահմանադրության 2-րդ կետ)[576]: Մյուսը, եթե այժմ նահանգի անունը Սամցխե-Ջավախեթի է, ապա Սահմանադրությունն առաջարկում էր «Ջավախք» անունը (Ջավախքի ինքնավար հանրապետություն, կրճատ՝ Ջավախք (Սահմանադրության 4-րդ կետ)[577]:

Ինչպես տեսնում ենք, կառուցվածքային առումով այնքան էլ մեծ չէր տարբերությունը՝ ՋԺՇ-ն առաջ քաշած սահմանադրությամբ նախատեսվող և Վրաստանի՝ «1994 թ. հուլիսի 31-ից առաջարկվող» տարածքային-վարչական միավորների միջև (եթե հաշվի չառնենք այնտեղի օրենսդրության և կառավարման ձևերի և այլնի միջև եղած տարբերությունները), հետևաբար, ավելի ճիշտ չէ՞ր լինի, որ վերջիններս ի սկզբանե պայքարեին կենտրոնը Ախալցխայից Ախալքալաք բերելու, վարչատարածքային և օրենսդրական-կառավարական տարբերությունները վերացնելու ուղղությամբ (այսինքն, հասնեին նահանգային ինքնավարության, ինչը նախատեսվում էր իրենց ավելի ուշ առաջ քաշած Սահմանադրության մեջ), այլ ոչ թե տարիներ շարունակ պայքար ծավալվեր մեկուսանալու և օտարվելու Ախալցխայի շրջանից:

Երկրամասի շրջանում այս և հետագա ընթացքում ինքնավարության պահանջների համեմատական «մեղմացումը» և այլևս կտրուկ միջոցների չդիմելը ինչ-որ չափով հետևանք էր նաև Վրաստանի պետության կառուցվածքային հարցի լուծման անընդհատ ձգձգման, երբ մինչև օրս էլ չի որոշված այդ պետության կառուցվածքի ձևի ինչպիսին լինելը (ունիտար, դաշնային (ֆեդերատիվ), համադաշնային (կոնֆեդերատիվ) և այլն): Դա հետևանք էր երկրում առկա ազգամիջյան հարաբերությունների մշտական լարված լինելուն և Աբխազիայի ու

---

[576] Նույն տեղում·

[577] «Ջավախք», թիվ 2, (20), օգոստոս, 1998

Հարավային Օսեթիայի հարցերի չկարգավորված լինելուն[578]*: Իսկ այս շրջանում Վրաստանը լիովին կողմ էր պետության դաշնային կառուցվածքին, սակայն դրան բացարձակ կողմնակից չէր, օրինակ, Աբխազիան. «Վրաստանը ունիտար պետություն էր, դառնում է դաշնային: Մենք աբխազներին առաջարկում ենք ամենալայն ինքնավարություն, ավելին, քան ունի Թաթարստանը Ռուսաստանի կազմում: Իսկ աբխազները փորձում են մեզ հետ խոսել անկախ պետության դիրքերից»,- նշում էր Մոսկվայում Վրաստանի դեսպան Վաժա Լորթքիփանիձեն*[579]*: Հետևաբար, Վրաստանը մինչև չկարգավորեր իր հարցերը այս կոնֆլիկտային շրջանների հետ, անհնար էր խոսել պետության կառուցվածքային հարցի որոշման շուրջ, իսկ քանի դեռ չէր որոշվել (ու մինչ օրս չի որոշված) պետության կառուցվածքային ձևը, Վրաստանի կողմից անհնար էր սպասելը իր երկրի կազմում նոր տարածքային միավորի (տվյալ դեպքում Սամցխե–Ջավախք–Թռեղքի) ստեղծման թույլտվությունը, քանի որ բացի հայկականից, սրա հարևանությամբ կար նաև ադրբեջանական հարցը: Հետևաբար ՋԺՇ-ը և նրանից հետո եկած կազմակերպությունները իրենց գործողությունների մեջ մի յուրահատուկ «սպասողական» դրության մեջ են մինչ այսօր:*

---

[578] Այդ մասին նշում էր նաև Վրաստանի պետական գրասենյակի տեղական կառավարման և տարածաշրջանային քաղաքականության կոորդինացման ծառայության պետ, Վրաստանի անվտանգության խորհրդի անդամ Բադրի Խատիձեն, որը 1996 թ. դեկտեմբերին, հերթական անգամ այցելել էր Սամցխե-Ջավախք տարածաշրջան. «Վրաստան» թերթին տված հարցազրույցում վերջինս նշել էր «Ինչ վերաբերում է ապագային, ապա երկրի առաջնահերթ խնդիրը Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հիմնահարցերի լուծումն է, և դրանից հետո միայն Վրաստանի տարածքային բաժանման սկզբունքների կատարելագործմանը, տարածքների կենտրոնների հաստատման հարցերի կարգավորմանը ձեռնամուխ լինելը (տես «Փարոս», (Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի շրջանային թերթ), 11 12 1996

[579] «Ազգ», 12.03.1997·

Վերադառնալով խնդրին, նշենք, որ այսպիսով՝ մշակված, կոնկրետ ու հստակ պահանջների բացակայության պայմաններում, Վրաստանին այլ ելք չէր մնում, քան հաշվի չնստել այս ամենի հետ և դրա փոխարեն, հայության աչքերին «թոզ փչող» ծրագրերի կիսատ-պռատ իրականացնելու միջոցով, փորձում «լուծված» համարել այստեղի բազմապիսի հիմնախնդիրները:

Իսկ «Ջավախք» ժողովրդական շարժումն այս ընթացքում դարձյալ հանդես էր գալիս բազմապիսի հռետորական կոչերով[580] փորձելով վերստին իր շուրջը համախմբելու Ջավախքի բնակչությանը: Վերջինիս կողմից մեծ աղմուկ բարձրացվեց «Մետաքսի ճանապարհի» վերագործարկման և դրա շրջանակներում Մարաբդա-Ախալքալաք երկաթգծի շարունակությունը հանդիսացող Ախալքալաք-Կարս երկաթուղու շինարարության շուրջ վրացական շրջանակներում ակտիվորեն քննարկվող լուրերի կապակցությամբ: ՋԺՇ-ի ակտիվիստ-առաջնորդներից մեկի՝ Ե.Շիրինյանի կողմից «Ջավախք» թերթում տպագրվեց նաև «Ո՞ր է մեզ տանում «Մետաքսի ճանապարհը»» վերտառությամբ մի վերլուծական հոդված[581], որտեղ հիմնավորվում էր կառուցվելիք երկաթուղու աղետալի հետևանքները Ջավախքի և Հայաստանի Հանրապետության համար: Լրացուցիչ կերպով հարկ է նշել, որ 1998 թ.հունիսի 23-ին ԱՄՆ Սենատի միջազգային հարաբերությունների կոմիտեն ընդունել էր S-1344 օրինագիծը, որը հայտնի էր որպես «Մետաքսի ուղու մասին» ակտ[582]: Կոնգրեսական Բրեդ Շերմանի այս նախագիծը փաստորեն Վաշինգտոնի վարչակազմին հնարավորություն էր տալիս շրջանցել «Ազատության աջակցության» 907-րդ հոդվածը, որն արգելում

---

[580] «Ջավախք», թիվ 1 (19), օգոստոս, 1998, հմմտ նույն տեղում, թիվ 2 (20), օգոստոս, 1998, հմմտ տես Կոչ, ՋԺՇ-ի նախագահության, 29.07.1998 թ , ք.Ախալքալաք

[581] «Ջավախք», թիվ 1 (19), օգոստոս, 1998

[582] «Ազգ», 25.06 1998:

էր ուղղակի ամերիկյան օգնության տրամադրումը Ադրբեջանի կառավարությանը՝ պաշտոնական Բաքվի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանցավոր շրջափակման պատճառով: Նշենք նաև, որ այս նախագծի քննարկումը մեծ դժգոհություն էր առաջացրել Ամերիկայի Հայկական համագումարի, ինչպես նաև ԱՄՆ սենատորների շրջանում. «Հայաստանի համար ելքի միակ ուղին մնում է Իրանը, և Մետաքսի ուղու ակտի թիվ 1344 բաժինը հենց այս ուղու խափանումն է ակնկալում», նշվել էր սենատոր Փոլ Սարվենսի կողմից[583]:

Ինչևէ, Վրաստանում արդեն անցկացվելիք տեղական ինքնակառավարման մարմինների (անցկացվեցին 1998թ. նոյեմբերի 16-ին), խորհրդարանական (անցկացվեցին 1999թ. հոկտեմբերի 31-ին) և նախագահական (անցկացվեցին 2000թ. ապրիլի 9-ին: Նշենք, որ այս ընտրությունների ժամանակ Սամցխե-Ջավախքի ընտրազանգվածը իրենց ձայների 84 %-ը տվեց «Վրաստանի Քաղաքացիների միություն» կուսակցության թեկնածու Է.Շևարդնաձեի օգտին, միայն Նինոծմինդայի շրջանում, օրինակ, Է.Շևարդնաձեն հավաքեց ձայների 95 %-ը)[584] ընտրությունների ժամանակ արդեն պառակտված ՋԺՇ-ը չէր դադարում հանդես գալ ինքնավարության կոչերով: Վրացական «Կավկազպրես» գործակալությանը տված հարցազրույցում ՋԺՇ-ն առաջնորդներից Ե.Շիրինյանը այդ առթիվ նշել է «Այն դեպքում, երբ Վրաստանի իշխանությունները կհրաժարվեն մեզ կարգավիճակ տրամադրել, մենք կանցկացնենք տեղական ժողովներ, որից հետո յուրաքանչյուր գյուղից լիազորները կհավաքվեն Ախալքալաքում և որոշում կընդունեն դարձյալ դի-

---

583 Նույն տեղում

584 Новикова Г., Дашко В., Самцхе-Джавахети в эпицентре интересов, /Грузия. проблемы и перспективы развития/, РИСИ, с 240

մել Վրաստանի իշխանություններին, եթե մեզ չլսեն, ապա մենք ինքնուրույն իշխանությունը կվերցնենք մեր ձեռքը»[585]:

Հետաքրքրական է, որ արդեն մինչ այդ ՀԺՇ-ն ներկայացուցիչները տարիներ շարունակ դիմել էին վրացական իշխանություններին՝ վերոնշյալ պահանջով, և ամեն անգամ մերժվել: Հարց է առաջանում՝ ինչու՞ ՀԺՇ-ն անդամները մինչ այդ չէին դիմում նշված քայլին: Մյուս կողմից երբ ՀԺՇ-ն անդամների մեջ կար նաև այն մտածողությունը, որ պետք է գրանցել «Ջավախք» ժողովրդական շարժումը որպես կուսակցություն, ապա ինչպե՞ս հասկանալ շարժման ակտիվիստների կողմից «Վիրք» կուսակցության ստեղծումը, որն ի սկզբանե նույնպես ունեցավ գրանցման պրոբլեմ:

1999 թ.հունվարի 17-ին Ախալքալաքի շրջանի Բարալեթ գյուղում տեղի ունեցավ «Ջավախք» ժողովրդական շարժման հերթական 6-րդ կոնֆերանսը[586]: Ելույթ ունեցողները մեկ անգամ ևս բնութագրեցին երկրամասում առկա իրավիճակը՝ գնահատելով այն ճգնաժամային, «որտեղ իրենց մեղքն ունեին նաև տեղական իշխանության մարմինները, շրջանում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունները, չի բացառվում նաև ժողովրդական շարժման (խոսքը վերաբերում է «Ջավախք» ժողովրդական շարժմանը – Վ.Ս.) ոչ ճիշտ դիրքորոշումը որոշ հարցերում»[587]: Կոնֆերանսն ընտրեց 17 հոգուց բաղկացած խորհուրդ՝ Ս.Հակոբյանի նախագահությամբ[588]: Այնուամենայնիվ կարելի է ասել, որ սա վերջին փորձն էր ՀԺՇ-ի՝ հասարակությանն իր շուրջը համախմբելու և ակտիվ գործունեություն ծավալելու, որովհետև արդեն «ոմանք «Շարժումն» օգտագործում էին իրենց նպատակների համար: Մեծ ու

---

585 «Երկիր», 25 08 1998

586 «Հզոր Հայրենիք», 20-27 հունվար, 1999, հմմտ. «Հայաստանի Հանրապետություն», 04 02 1999

587 «Ջավախք» ժողովրդական շարժման նախագահ Ս Հակոբյանի ելույթից ընթերցված կոնֆերանսի ժամանակ

588 «Հզոր Հայրենիք», 20-27 հունվար, 1999·

փոքր պաշտոններ ձեռք գցելով, երբեմնի «խանդավառ» ընկերները թողել են Շարժման շարքերը»[589]:

Ի՞նչ եղավ «Ջավախք» ժողովրդական շարժման հետագա ճակատագիրը.2002 թ.մարտին տեղի ունեցած «Ջավախք» ժողովրդական շարժման հերթական՝ 7-րդ համագումարից և Ն.Կարապետյանի շարժման նոր նախագահ ընտրվելուց հետո, կազմակերպությունը պառակտվեց երկու մասի[590]: *Շուրջ մեկ տարի անց՝ 2003 թ.հունիսի 18-ին, «Ջավախք»-ի պառակտված անդամների մի մասը, հավաքվելով ստեղծեցին նոր ձևի ու անվամբ մի կառույց՝ «Ջավախք» հասարակական կազմակերպությունը*[591]:

«Ջավախք» ժողովրդական շարժումը՝ բաղկացած նախկին անդամներից, այսօր գրեթե չի գործում:

2004 թ.ապրիլի 2-ին Ախալքալաքի շրջանային մշակույթի տանը տեղի ունեցավ «Ջավախք» հասարակական կազմակերպության 2-րդ համագումարը[592]: *Համագումարը վերահաստատեց կազմակերպության կանոնադրությունը, ընդունեց առաջիկա գործունեության ծրագիր*[593]:

Չնայած այս ամենին, այս հասարակական կազմակերպության գործունեությունը երկրամասում գրեթե չի զգացվում. Ելնելով վերջինիս՝ պետական այրերին, ժողովրդին ուղղված դիմումներից[594], *նամակներից ու կոչերից, կարելի է նշել, որ կազմակերպության ղեկավարները դժգոհ են Ռ.Քոչարյանի՝ Ջավախքի հանդեպ վարած քաղաքականությունից:*

---

[589] «Հայաստանի Հանրապետություն», 04 02 1999

[590] **http://www.a-info.org/arm/full.php?id=744**

[591] См - Протокол N 5, общего собрания заседания союза "Народное Движение – Джавахк" 18 июня, 2003 г г Ахалкалаки

[592] **http://www.a-info.org/arm/full.php?id=504**

[593] Տե՛ս Կանոնադրություն, «Ջավախք» հասարակական կազմակերպություն, Ախալքալաք, 2004

[594] Общественная организация "Джавахк", Обращение – президенту Республики Армения г-ну Кочаряну Р.С , 08 04.2004 г , г. Ахалкалаки

Վերջիններս 2003 թ.Հայաստանի նախագահական ընտրությունների ժամանակ հայաստանաբնակ իրենց հայրենակիցներին կոչ էին արել քվեարկելու Ս.Դեմիրճյանի օգտին[595]: Այնուամենայնիվ, այսպիսի դիմում-բողոքները, նամակ-շնորհավորագրերը[596] խոսում են «Ջավախք» հասարակական կազմակերպության սոսկ գոյության, այլ ոչ թե գործունեության մասին:

Վերադառնալով երկրամասի այս ժամանակահատվածում ստեղծված սոցիալ-տնտեսական կացությանը՝ այն կարելի է բնորոշել ծանր: Այդուհանդերձ, կապված «Ջավախք» ժողովրդական շարժման, Կոորդինացիոն խորհրդի՝ այս շրջանի ակտիվության հետ, Է.Շևարդնաձեի կողմից արվեցին որոշակի աննշան քայլեր՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման ուղղությամբ, որոնք իրականում, ինչպես նշեցինք, հետապնդում էին երկրամասի բնակչության շրջանում հուզումները մեղմելու նպատակ:

Դեռ 1997 թ. մարտի մեկին Հայաստանի և Վրաստանի նախագահներին ուղղված դիմումում Կոորդինացիոն խորհուրդը բողոքի ձայն բարձրացրեց՝ կապված Վրաստանի սահմանապահ զորքերի շտաբի պետ, գեներալ Էպիտաշվիլու Ախալքալաք այցելության հետ[597], երբ պարզվեց, որ Վրաստանը նպատակ ունի Հայաստան-Վրաստան սահմանի վրա տեղակայել մեծաթիվ զորք:

Այնուամենայնիվ, նշենք նաև այն մի քանի միջոցառումները, որոնք կատարվեցին այս ընթացքում երկրամասի բնակչության շրջանում և դժգոհություն չառաջացրին վերջիններիս մեջ. 1998թ. մայիսին, հերթական անգամ Ջավախքի տարածա-

---

[595] Տես Կոչ «Ջավախք» հասարակական կազմակերպության նախագահության, 23 02 2003, ք Ախալքալաք:

[596] Общественная организация "Джавахк", Письмо N 39, командиру 62-ой Российской военной базы, полковнику Ачалов Е А , 23 02.2004 г., г. Ахалкалаки

[597] Обращение - Кординационного Совета общественно-политических организации Джавахка, 01.03 1997 г. г Ахалкалаки

շրջան այցելեցին Վրաստանի նախագահի ազգամիջյան հարաբերությունների հարցերով օգնական Ա.Գերասիմովը և նրան ուղեկցող անձինք՝ պետական գրասենյակի ազգամիջյան հարաբերությունների բաժնի վարիչ Թ.Ճանտուրիաշվիլին և տարածաշրջանային քաղաքականության և կառավարման ծառայության կոորդինատոր Վ.Ալելիշվիլին[598]: Բնակչության շրջանում հանդիպման ընթացքում վերջիններս լսեցին էլեկտրաէներգիայի բացակայության, աշխատավարձերի և թոշակների չվճարման և այլ հիմնախնդիրների մասին:

1998թ. նոյեմբերի 3-ին Ախալքալաքի շրջանի Խանդո գյուղում գործարկվեց 17 կիլոմետր ընդհանուր երկարությամբ ջրատարը, որի շինարարության համար հատկացված 200.000 լարիից շուրջ 26.000-ը տրամադրվել էր շրջանի բյուջեից[599]: Այս շրջանում վերագործարկվեց նաև տարերային աղետից տուժած Ծալկայի շրջանի Թաքքիլիսա գյուղը շրջկենտրոնին միացնող կամուրջը[600]:

Այս ամենով հանդերձ, թեև խիստ սահմանափակ, սակայն զգալի էր նաև ՀՀ կողմից անցկացրած միջոցառումները. ՀՀ կառավարությանն առընթեր հատուկ ծրագրերի վարչությունն իրականացրեց 1996թ փետրվարին հրդեհված Ախալքալաքի Թումանյանի անվան դպրոցի շենքի վերանորոգումը[601]: ՀՀ կողմից երկրամասի դպրոցներին հատկացվում էին նաև որոշակի քանակությամբ դասագրքեր, իսկ 1999թ., օրինակ, ՀՀ կառավարությանն առընթեր տարածաշրջանային ինտեգրացման վարչությունը Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների դպրոցներին տրամադրեց 500 կգ կավիճ, նույն բեռնատարով նաև «Գուրգեն Մելիքյան» բազմազավակ ընտանիքների օգնության

---

598 «Վրաստան», 23 05 1998·
599 Նույն տեղում, 07 11 1998
600 Նույն տեղում
601 «Հայաստանի Հանրապետություն», 06 09 1996·

ֆոնդը օգնության կարգով Ջավախքին տրամադրեց շուրջ 10 - տեսակի ապրանքատեսակների[602].

Ջավախքում խոշոր իրադարձություն էր 1998թ. հոկտեմբերի 16-ին Ախալքալաք-Նինոծմինդա շուրջ 20 կիլոմետր երկարություն ունեցող նոր, ասֆալտապատ ճանապարհի գործարկումը, որի համար ծախսվել էր շուրջ 4,5 մլն լարի[603]: *Մինչ այդ գրեթե անանցանելի դարձած ավտոճանապարհի բացման առթիվ տարածաշրջան այցելեց նաև երկրի նախագահ Է.Շևարդնաձեն: Հետաքրքրական էր, որ վրացական իշխանություններն այդ առթիվ «ստիպված էին» վերանորոգել նաև Թբիլիսի–Ծալկա 90 կիլոմետրանոց հատվածը, քանի որ երկրի նախագահը տարածաշրջան եկավ հենց այդ ճանապարհով, և եթե մինչ այդ նշված հեռավորությունը բնակիչներն անցնում էին 3,5–4 ժամում, ապա նախագահն այդ ճանապարհն անցավ ոչ ավելի, քան մեկ ժամում: Նախագահի հետ հանդիպման ժամանակ և՛ Ծալկայի, և՛ Նինոծմինդայի, և՛ Ախալքալաքի շրջանների բնակիչները բարձրացրեցին բազմապիսի սուր հարցեր. Է.Շևարդնաձեն, փորձելով հայ-վրացական բարեկամության քողի տակ շրջանցել բոլոր տիպի հարցերը, իր այցելության կապակցությամբ նշեց. «Լուրջ հիմնախնդիրներ չկան, կան հարցեր, որոնք պետք է լուծել»*[604]:

Իսկ իրականում դարձյալ շարունակվում էին ոտնահարվել Ջավախքցիների իրավունքները 1998թ. դրությամբ, արդեն չորս տարի էր ինչ կար որոշում, որով Ախալքալաքում պետք է ստեղծվեր ի թիվս այլ վարչությունների, նաև անձնագրային բաժին, սակայն բնակչությունը շարունակում էր արտասահման գնալու համար անհրաժեշտ անձնագիրը ստանալ հեռավոր Ախալցխայից,

---

[602] ՀՀ կառավարությանն առընթեր տարածաշրջանային ինտեգրացման վարչություն, Տեղեկանք- ԱԱ - 103, 23 11 1999թ , ք Երևան

[603] «Վրաստան», 24 10.1998

[604] Նույն տեղում:

իսկ Ախալքալաքում միայն տրվում էին տեղական անձնագրեր[605]: Իսկ այս կապակցությամբ Ախալքալաքի անձնագրային բաժնի աշխատակիցները «մշակել էին» «ժողովրդի վիճակը թեթևացնելուն» ուղղված մի մեխանիզմ. վերցնելով բնակիչներից մոտ 120-150 դոլար (այն դեպքում, երբ անձնագրի արժեքը մոտ 35 դոլար էր), վերջիններիս անձնագրերը Ախալցխայից շտապ կերպով հասցնում էին Ախալքալաք:

Անդրադառնանք ևս մեկ խնդրի, որը նույնպես կարելի է դասել խնդրո առարկա երկրամասի հիմնախնդիրների շարքին. 1998թ. հունիսի 25-ին Վրաստանի նախագահի կողմից ստորագրվեց «Ժողովների տեղական ներկայացուցչական օրգանների ընտրությունների մասին» օրենքը[606]: Այդ օրենքով, Վրաստանի Սահմանադրության 2-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան, մինչև Վրաստանի տարածքային պետական կառուցվածքի մասին Սահմանադրական օրենքի ընդունումը (որը, ինչպես բազմիցս նշել ենք, մինչև այսօր էլ չի ընդունված), սահմանում է տեղական ինքնակառավարման և կառավարման մարմինների ստեղծման և գործունեության հիմունքները[607]: Այս օրենքով պետք է անցկացվեին ինչպես հետագայի, այնպես էլ շուտով՝ 1998թ. նոյեմբերի 16-ին կայանալիք, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Նշենք նաև, որ մինչ այս ընտրությունները, սկսած 1995թ. Սահմանադրության ընդունումից, երկրամասում փաստացի դադարեցված էին 1991թ. Զ. Գամսախուրդիայի օրոք ընդունված «Վրաստանի Հանրապետության Ժողովների՝ տեղական իշխանությունների օրգանների ընտրությունների մասին» օրենքի լիազորությունները (իրավաբանորեն 1991թ. ընդունված այս օրենքը ուժը կորցրած

---

[605] «Երկիր», 02 09 1998·

[606] Закон Грузии, О выборах местных представительных органов – Собраний, N1476- I I с, 1998 г , г. Тбилиси

[607] «Վրաստան», 07.03.1998

ճանաչվեց միայն 1998թ. հունիսի 25-ի օրենքով)[608], իսկ նորի ընդունման ձգձգման պատճառով մի քանի տարի տեղում չէր կարգավորված ժողովրդական լայն մասսաների՝ տեղական ներկայացուցչական մարմինների մաս կազմելու գործընթացը, որն էլ իր հերթին երկրամասում առաջացնում էր բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ:

Իսկ ի՞նչ էր նախատեսվում 1998 թ. վերոնշյալ օրենքով. դիտենք այն ըստ հոդվածների. «Տեղական ներկայացուցչական օրգանների ժողովների ընտրություններն անցկացվում են բազմամանդատային ընտրական շրջաններում՝ համամասնական ընտրակարգի հիման վրա, եթե համապատասխան «ժողովի» տարածքում ընտրողների թիվը գերազանցում է 2000-ը»[609]: «Տեղական ներկայացուցչական օրգանների՝ ժողովների ընտրություններն անցկացվում են բազմամանդատային ընտրական շրջաններում՝ մեծամասնական ընտրակարգի հիման վրա, եթե համապատասխան «ժողովի» տարածքում ընտրողների թիվը չի գերազանցում 2000-ը»[610]: Ի՞նչ էր ստացվում: Փաստորեն, եթե տվյալ բնակավայրում ընտրողների թիվը անցնում է 2000-ից, և այդտեղ առաջադրվող թեկնածուն չէր պատկանում որևէ կուսակցության, իրավունք չուներ առաջադրվելու: Այստեղ առկա էր քաղաքացու և՛ ընտրելու, և՛ ընտրվելու իրավունքի խախտում: Սա՝ մի կողմից: Մյուս կողմից, օրենքով խախտվում էր արդարությունը Սամցխե-Ջավախք-Թուեղքի (Ծալկա) հայաբնակ շրջաններում: Բանն այն էր, որ նախ և առաջ այս շրջաններում մերժել էին գրանցել հայկական ոչ մի կուսակցություն, և ընտրությունների ժամանակ այստեղ իրենց գործն էին տեսնելու վրացական կուսակցությունները (Հատկանշական է, որ 1998 թ.նոյեմբերի ընտրություններին Նինոծմինդայի շրջանում տե-

---

[608] Закон Грузии, О выборах местных представительных органов – Собраний, глава XI, статья 40, п 1

[609] Նույն տեղում, հոդված 1, կետ 2·

[610] Նույն տեղում, հոդված 1, կետ 3

ական ինքնակառավարման մարմինների պատգամավորներին հատկաց-ված 123 տեղերի համար պայքարող 338 թեկնածուներից 224-ը ներկայացնում էին Վրաստանի Քաղաքացիների Միությունը, 94-ը՝ քաղաքական վրացական «Լեմի» կազմակերպությունը, և միայն 12-ն էին անկախ թեկնածուներ)[611], *իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրելու և ընտրվելու հնարավորությունից օգտվելիս առաջ էր գալիս ևս մեկ օրինախախտում, որը պարզապես անհնար էր դարձնում մեծամասնական ընտրակարգով ընտրելու և ընտրվելու հնարավորությունը: Դա կապված էր այն բանի հետ, որ այս շրջաններում «ժողովներն» իրենց կազմում պարտավոր էին ընդգրկելու մի քանի գյուղեր, որն էլ իր հերթին «ապահովում էր» ձայների 2000-ից ավելի լինելը, իսկ մեկ «ժողովը»*[612] *համարվում էր մեկ ընտրատարածք:*

Ելնելով այս ամենից հարկ է նշել, որ օրինակ Ջավախքի բոլոր վրացական գյուղերը (Հոկում՝ 443 ընտրող, Ջունչխա՝ 243, Պրտենա՝ 216, Գոգաշեն՝ 299, Կոթելխա՝ 315 և այլն) ունեն առանձին գյուղական ժողովներ, այն դեպքում, երբ հայկական գյուղերի «ժողով»ներում ընդգրկված գյուղերից յուրաքանչյուրն առանձին վերցրած ավելի շատ ընտրող ունի, քան նշված վրացական գյուղերը: Այս անարդարությունը բերում է նրան, որ օրինակ, Ախալքալաքի շրջանային սակրեբուլոյում հավասար ձայներով են ներկայացված 10.000 բնակիչ ունեցող Ախալքալաք քաղաքը, 6.000 բնակիչ ունեցող Կարտիկամ գյուղական սակրեբուլոն և 400 բնակիչ ունեցող վրացական Ջունչխա գյուղը[613]. *Արդյունքում ստացվում է այնպես, որ 96 % հայերով բնակեցված Ախալքալաքի շրջանի սակրեբուլոյի 22 տեղից 5-ը ազգությամբ վրացիներ են զբաղեցնում, մինչդեռ ըստ համամաս-*

---

[611] «Վրաստան», 07 11 1998

[612] «ժողով»-ը վրացերենում ընդունված է անվանել «Սակրեբուլո»

[613] Ստեփանյան Խ., Ջավախքի ինքնավարությունը որպես նրա զարգացման նախապայման, (Ջավախքը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ, խորհրդաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2006, էջ 21

նության, Ախալքալաքի շրջանի վրացական համայնքը շրջանային սակրեբուլոյում պետք է ունենար մեկ ներկայացուցիչ[614]*:*

1999թ. շահագործման էր հանձնվելու Հայաստանի միջոցներով կառուցված էլեկտրաէներգիայի հաղորդման 110 կմ երկարություն ունեցող մի նոր գիծ, որը սկիզբ առնելով «Ալավերդի» ենթակայանից, անցնելով Հայաստանի հյուսիսային տարածքներով, էլեկտրական հոսանք էր մատակարարելու Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններին[615]*: Սակայն գնային անհամաձայնության և այլ շինծու պատճառներով Վրաստանը թույլ չտվեց էլեկտրաէներգիայի մատակարարումը Ջավախք՝ նշված գծով, իսկ Վրաստանից մատակարարվող հոսանքի բացակայության պատճառով Ջավախքում շարունակվեց էներգետիկ ճգնաժամը. Աշոցք-Նինոծմինդա բարձրավոլտ գծերի 2001թ. շինարարությամբ երկար ժամանակ հոսանք էր տրվում միայն Նինոծմինդայի շրջանին, իսկ վերոնշյալ հոսանքն Ախալքալաքի շրջան, ինչ-ինչ «անհասկանալի» պատճառներով, չէր հասնում:*

Ինչևիցե, չնայած բոլոր տնտեսական դժվարություններին, 2001թ. դրությամբ, Ջավախքում հավաքվել էր Վրաստանի կարտոֆիլի ամբողջ արտադրության մոտ 40,2%-ը, հեկտարից 15,3 տոննա՝ առավել մեծ միջին ցուցանիշով, ինչպես նաև բանջարեղենի 5,1 և հացահատիկի 4,5%-ը: Բացի դրանից, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը Ջավախքում հանրապետության մասշտաբով կազմել է 8,4%, խոզերինը՝ 1,8%, ոչխարներինը և այծերինը՝ 13,7%, մեղվաընտանիքներինը՝ 12,3%, ընտանի թռչուններինը՝ 5,4%: Ջավախքում արտադրվել է ամբողջ հանրապետության մսի 8,7, կաթի՝ 10,2, ձվի՝ 4,2, բրդի՝ 21,4, մեղրի՝ 13,8 տոկոսը[616]*:*

---

[614] Ստեփանյան Խ , Ջավախքը մեկ տարում, «Դրոշակ», թիվ 4, հոկտեմեր, 2002, էջ 56

[615] «Վրաստան», 05.06 1999.

[616] Տվյալները վերցված են «Երկիր» թերթի 24 12 2004 համարից

Սրանով հանդերձ, շարունակվում էր ծանր մնալ այն մարդկանց վիճակը, որոնք իրենց ապրուստը հայթայթում էին պետության բյուջեից ստացվող աշխատավարձերի (թոշակների) հաշվին: Միայն Ախալքալաքի շրջանին 2000թ. տվյալներով պետական բյուջեի պարտքը կազմում էր շուրջ 1 մլն լարի (0,5 մլն դոլար)[617]:

2001 թ.հոկտեմբերի 23-ին, Երևանում, ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի և Վրաստանի նախագահ Է.Շևարդնաձեի հերթական հանդիպման ժամանակ քննարկվեց նաև Սամցխե-Ջավախքի հարցը: Ռ.Քոչարյանը Վրաստանին վերստին հայտնեց Սամցխե-Ջավախքի հիմնախնդիրների լուծման գործում իր պատրաստակամության մասին[618]:

...Իսկ Ջավախքը 20-րդ դարի նախավերջին տարին՝ 1999 թվականը դիմավորեց ոչ թե էլեկտրական, այլ կերոսինի լամպի լույսի ներքո: Ճիշտ այնպես, ինչպես դիմավորել էր 1899 թվականը[619]:

---

[617] Новикова Г В., Дашко В. И., Самцхе-Джавахети в эпицентре интересое,/Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с 243.
[618] «Հայաստանի Հանրապետություն», 23 10.2001.
[619] «Հզոր Հայրենիք»,13-20 հունվար, 1990

ՍԱՄՑԽԵ – ՋԱՎԱԽՔ – ԹՌԵՂՔԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ա) Ընդհանուր մարտահրավերներ

Ջավախքի, ինչպես նաև Սամցխեի ու Ծալկայի առջև 21-րդ դարի առաջին տարիներին կանգնեցին նոր մարտահրավերներ: Նախորդ շրջանում իրենց լուծումները չգտած բազմաթիվ հիմնախնդիրներ նորովի և էլ ավելի խտացված ձևով կանգնեցին ժողովրդի առջև: Այս ամենին գումարվում են տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական նոր փոփոխությունները, որոնք այս կամ այն ձևով իրենց ազդեցությունն են թողնում նաև այս տարածաշրջանի վրա: Եվ՝ կովկասյան փոքր պետությունների, և՝ խոշոր գերտերությունների յուրաքանչյուրի ազդեցության մեծացումը այս տարածաշրջանում՝ ուղիղ համեմատական է նրա ազդեցության ընդլայնմանը և՝ Կովկասում, և՝ արևելք-արևմուտք տարանցիկ ուղիների վրա: Աշխարհաքաղաքական իրադրությունների նորովի դասավոր-ման հետևանքով գնալով աճում է երկրամասի դերը ՀՀ-յան համար: Ելնելով սրանից կարելի է ասել, որ երկրամասի հայաթափումը հավասարազոր է ՀՀ-յան 100 տոկոսով թուրքական ծովի մեջ հայտնըվելուն, ինչն ի վերջո տանելու է վերջինիս շրջափակմանը: Հետևաբար Սամցխե–Ջավախք–Թռեղքի հայա-պահպանումը ՀՀ ազգային-պետական անվտանգության խնդիրն է նաև: Իսկ վերջին ժողովրդագրական տվյալները վկայում են այդ վտանգի մեծացման մասին:

Մինչ երկրամասի ժողովրդագրության վերջին շրջանի համեմատական վերլուծությանն անցնելը հարկ ենք համարում տալ

ընդհանուր Վրաստանի մարդահամարի տվյալները[620], *համեմատության մեջ դնելով 1989 և 2002 թվականների ցուցանիշները, որից երևում է, որ վերջին 13 տարում կտրուկ նվազել է երկրում ապրող ազգային փոքրամասնությունների թվաքանակը՝ 29,9%-ից հասնելով 16,3%-ի: Կտրուկ ընկել է հայերի թիվը և չնայած սրան, հայերը Վրաստանում իրենց թվաքանակով դարձյալ առաջին տեղում են, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 2002թ. մարդահամարը չի անցկացվել ինչպես Աբխազիայում*[621], *այնպես էլ Հարավային Օսեթիայում: Իսկ Աբխազիայում, ինչպես հայտնի է նույնպես ապրում են մեծ թվով հայեր, որոնք չեն զիջում նույնիսկ աբխազներին: Օրինակ, 1995թ. տվյալներով (պատերազմի ավարտից հետո), Աբխազիայում բնակվում էր 91,16 հազար աբխազ, 89,9 հազար վրացի, 61,96 հազար հայ, 51,56 հազար ռուս, 3,5 հազար հույն*[622]:

Հայերի որոշ թվաքանակ ապրում է նաև Հարավային Օսեթիայում, որտեղ նույնպես, ինչպես նշեցինք, չի անցկացվել 2002թ. մարդահամարը:

---

[620] **http://www.statistics.ge/_files/english/census/2002/Ethnic%20groups.pdf.**

[621] Աբխազիայի ինքնավար հանրապետության տարածքում մարդահամար անցկացվել է միայն Կոդորի կիրճում (որի վրա տարածվում են Թբիլիսիի իրավասությունները)· Ըստ այդ տվյալների կիրճում ընդհանուր առմամբ բնակվում է 1956 մարդ, որից վրացիներ 1912, աբխազներ 9, օսեր 2, հայեր 1, ռուսներ 23, ադրբեջանցիներ 6, ուկրաինացիներ 2 Տես **http://www.statistics.ge/_files/english/census/2002/Ethnic%20groups.pdf.**

[622] Скаков А., Абхазия Социально-демографические проблемы, Экономика, политика, /Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с. 132

Վրաստանի բնակչության ազգային կազմը և թվաքանակը 2002 թ.մարդահամարի տվյալներով (զուգահեռ բերված են նաև 1989 թ.տվյալները).

Ազգությունը	1989թ թվաքանակը (հազ մարդ)	2002 թ թվաքանակը (հազ մարդ)	1989 թ ընդհանուր բնակչության հարաբերակցությունը (%)	2002թ ընդհանուր բնակչության հարաբերակցությունը (%)
Վրացիներ	3787,4	3 661,1	70,1	83,7
Հայեր	437,2	248,9	8,1	5,7
Ադրբեջանցիներ	307,6	284,8	5,7	6,5
Ռուսներ	341,2	32,6	6,3	0,75
Օսեր	164,1	38,0	3,0	0,87
Հույներ	100,3	15,1	1,9	0,35
Աբխազներ	95,9	3,5	1,8	0,008
Ուկրաինացիներ	52,4	7,0	1,0	0,0016
Ընդամենը	5400,8	4371 5	100	100

Ինչպես երևում է աղյուսակից, 13 տարվա ընթացքում ամբողջ Վրաստանի տարածքում հայերի թիվը նվազել է 188.300-ով, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ ավելի քան 60-70 հազար հայեր 2002 թ. չեն հաշվառվել Աբխազիայի և Հարավային Օսեթիայի տարածքում, ապա դարձյալ նվազած հայերի թվաքանակը կկազմի շուրջ 120 հազար, որը այնքան էլ փոքր թիվ չէ:

Վրաստանում ապրող հայերի շուրջ կեսից ավելին ապրում են Սամցխե–Ջավախք–Թբեղք (Ծալկա) տարածաշրջանում: Ջնա-

յած Վրաստանի նախագահի 1994 թ.Հուլիսի 31-ի հրամանագրով ստեղծված արհեստական նահանգային վարչամիավորներին, երբ այս երկրամասին կցվեց մեծամասամբ վրացիներով բնակեցված Բորժոմի շրջանը և ընդհակառակը, երկրամասից դուրս հանվեց մեծամասամբ հայաբնակ Ծալկան, այնուամենայնիվ երկրամասում միշտ էլ բացարձակ մեծամասնություն են կազմել հայերը:

Մինչ ժողովրդագրական տենդենցներին անդրադառնալը տեսնենք ստորև բերվող 3 աղյուսակների տվյալները, որոնցում բերված են երկրամասի 1989, 1997 և 2002 թվականների բնակչության թիվը և ազգային կազմի փոխադարձ տոկոսային հարաբերակցությունը:

1 Սամցխե-Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1989 թ.դրությամբ[623]

Շրջան	Վրացիներ	Հայեր	Ռուսներ	Ընդամենը
Ախալցիխեի	25 648 (46,8%)	23 469 (42,8 %)	3426 (6,2 %)	54822
Ադիգենի	19 491 (91,6%)	1237 (5,8 %)	294 (1,4 %)	21282
Ասպինձայի	10 753 (80,1%)	2565 (19,1 %)	45 (0,3 %)	13432
Ախալքալաքի	3005 (4,3%)	63092 (91,3 %)	1737 (2,5 %)	69108
Նինոծմինդայի	454 (1,2%)	33 964 (89,6 %)	3161 (8,3 %)	37895
Ընդամենը	59 351 (30,2%)	124.327 (63,3 %)	8663 (4,4 %)	196539

[623] Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004, p. 59.

2.Սամցխե-Ջավախք երկրամասի հայ և վրացի բնակչություն-ների թվաքանակը և ազգային կազմի տոկոսային հարաբերակցությունը՝ 1997 թ.դրությամբ[624]

Շրջան	Հայեր	Վրացիներ	Ընդամենը
Ադիգեն	1 407 (5,8 %)	22 222 (91,6 %)	23629
Ասպինձայի	2780 (19,1 %)	11 660 (80,1 %)	14440
Բորժոմի	3816 (10,0 %)	29 518 (77,6 %)	33334
Ախալցխա	23 644 (42,8 %)	25 688 (46,8 %)	49332
Ախալքալաք	62 814 (91,3 %)	3 027 (4,4 %)	65841
Նինոծմինդա	34 697 (89,6 %)	451 (1,2 %)	35148
Ընդամենը	129 158 (58,25 %)	92 566 (41,75 %)	221 724

Ինչպես տեսնում ենք, հայերի թիվը այս ընթացքում աճել է չնչին տոկոսով, եթե առանց Բորժոմի շրջանի հաշվառման 1989 թ.հայերի թիվը կազմում էր 124327 կամ 63,3 %, ապա 1997 թ. արդեն Բորժոմի շրջանի հայերով հանդերձ տարածաշրջանի բնակչության թիվը կազմում էր ընդամենը 129.158 կամ 58,25 %, այն դեպքում, երբ այս ընթացքում վրացիների թիվը, Բորժոմի շրջանի արհեստական կցումով գրանցել է ահռելի աճ՝ 59©351 (30,2 %)-ից դառնալով 92566 կամ 41,75 %:

Բոլորովին այլ պատկեր է ուրվագծվում մեր առջև, եթե այժմ դիտենք 2002 թ.տվյալները.

---

[624] **http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml** Հմմտ "Конфликты и переговоры", N 3-4, 1997. (Տվյալները հրապարակվել է Վրաստանի նախկին նախագահի Սամցխե-Ջավախքի լիազոր-խորհրդական Մ Գագեչիլաձեի կողմից):

3.Սամցխե-Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 2002 թ.մարդահամարի տվյալներով[625]

Շրջան	ընդհ բնակչ	վրացի-ներ	հայեր	ռուս ներ	ադրբեջա նցիներ	ուկրա ինացի ներ	հույ ներ	եզդի ներ
Ադիգենի	20,752	19,860	698	101	17	20	7	-
Ասպինձայի	13,010	10,671	2,273	34	-	5	8	-
Ախալքաքաքի	60,975	3,214	57,516	157	3	14	51	-
Ախալցխայի	46,134	28,473	16,879	410	13	42	129	-
Բորժոմի	32,422	27,301	3,124	585	24	75	540	1
Նինոծմինդայի	34,305	476	32,857	943	2	6	5	-
Ընդհանուրը	207,598	89,995	113,347	2,230	59	162	740	1

Ինչպես տեսնում ենք, 1997 թ. հետ համեմատած, ամբողջ նահանգում եթե վրացիները կրճատվել են ընդամենը 2571-ով, ապա հայերի մոտ տարբերության այդ թիվը հասնում է շուրջ 15811-ի, որն ըստ ուսումնասիրությունների ունի է՛լ ավելի աճելու միտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրամասից հայ բնակչության արտահոսքը գնալով հասնում է մեծ չափերի:

Նշենք, որ արտագաղթի միջազգային կազմակերպության (International Organization for Migration (IOM) անցկացրած հարցումների համաձայն, 2002 թ. վերջին Ախալքալաքի շրջանում հարցման ենթարկված ընտանիքների 42,7 %-ը ունեցել է արտասահմանում ապրող ընտանիքի անդամ (գյուղերում՝ 44,5

[625] http://www.statistics.ge/_files/english/census/2002/Ethnic%20groups.pdf. Հմմտ.՝ სამცხე-ჯავახეთის პოლიეთნიკური საზოგადოების პრობლემები, ახალციხე, 2005, გვ. 2.

%-ը): Նույնը կարելի է ասել նաև Նինոծմինդայի շրջանի համար: Իսկ Ախալցխայի շրջանում, օրինակ, հարցված ընտանիքների միայն 17 %-ն է ունեցել արտասահմանում մշտապես բնակվող ընտանիքի անդամ (գյուղերում՝ 20,2 %): Ընդ որում Ախալքալաքի շրջանից արտագաղթողների 82 %-ը և Ախալցխայի շրջանից 80,4 %-ը արտագաղթել են աշխատանք որոնելու նպատակով[626]: Էլ ավելի մտահոգիչ է այն փաստը, որ Ախալքալաքի շրջանում հարցվածների մոտ 62,3 %-ը և Ախալցխայի շրջանում միայն 37,3 %-ը ցանկություն կամ մտադրություն ունի արտագաղթելու[627]: Նույն Ախալքալաքի շրջանի պատկերն ունի նաև Նինոծմինդայի շրջանը: Գործազրկության մակարդակը Ախալքալաքի շրջանում կազմում է մոտ 51,3 % (որն իրականում ավելի մեծ է), իսկ Ախալցխայի շրջանում՝ 33,4 %: Միաժամանակ, Ախալքալաքի շրջանի բնակչության կախվածությունը գյուղատնտեսությունից՝ որպես եկամտի հիմնական աղբյուրից, կազմում է 48,2 %, (քաղաքում՝ 13 %), իսկ Ախալցխայի շրջանում այդ թիվը կազմում է ընդամենը 25,1 % (քաղաքում՝ 1,4 %)[628]:

Ջավախքում շարունակում է քայքայված մնալ ավտոճանապարհային վիճակը: Ախալքալաքի շրջանում ներշրջանային գյուղական ճանապարհների երկարությունը հասնում է 273 կմ[629], այստեղից համեմատաբար «գործուն են» 268 կմ, իսկ մոտավորապես 5 կմ ճանապարհ գրեթե անանցանելի է: Նշվածից ասֆալտապատ է միայն Ախալքալաք-Նինոծմինդա շրջկենտրոնները միացնող շուրջ 20 կմ-ոց հատվածը: Բավականին երկար ժամանակ ընդհանրապես չեն վերանորոգվել ինչպես գլխավոր, այնպես էլ գյուղական նշանակության ճանապարհները: Քայ-

---

[626] «Երկիր», 05.02 2005:
[627] Նույն տեղում.
[628] Նույն տեղում
[629] თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე). გვ 231.

քայված վիճակում են երկրամաս մտնող բոլոր չորս գլխավոր ճանապարհները, և՛ միջազգային Ախալցխա-Ախալքալաք-Նինոծմինդա-Հայաստան NC-12 110 կմ-ոց մայրուղին, և՛ Ախալքալաք-Ասպինձա-Ախալցխա-Բորժոմ ուղղությամբ ճանապարհը, և՛ Թիֆլիս-Ծալկա 90 կմ-ոց ճանապարհը: Գրեթե անանցանելի է նաև երկրամաս մտնող 4-րդ ճանապարհը՝ Ցխրաձղարոյի լեռնանցքով Բորժոմ-Բակուրիան- Ախալքալաք մայրուղին, որտեղից հիմնականում բնակչությունն ապահովվում է վառելափայտով: Բացառություն կարելի է համարել միայն 1998թ. Վրաստանի կողմից վերանորոգված երկու շրջկենտրոններն իրար միացնող Ախալքալաք-Նինոծմինդա ավտոճանապարհը: Հարկ է նշել, որ Ջավախքի հյուսիսային շրջանների մի քանի գյուղերի (որոնք մտնում են հիմնականում Բորժոմի շրջանի մեջ) ճանապարհները քիչ թե շատ վերանորոգվեցին Բաքու-Ջեյհան նավթամուղի այդ շրջաններով անցնող հատվածի աշխատանքները հեշտացնելու նպատակով, սակայն մշտական խնամքի բացակայության պատճառով առանց այն էլ ոչ հիմնովին վերանորոգված ճանապարհները նորից քայքայվեցին.

Վերջին շրջանում UNDP-ի միջոցով բավականին մեծ ուշադրություն է դարձվում Սամցխե-Ջավախքի ճանապարհների վերակառուցման ուղղությամբ: Սակայն այստեղ էլ նորից ի հայտ են գալիս խորական դրսևորումներ, եթե նայենք գյուղական շրջանների գյուղատնտեսական արտադրանքի ծավալներին, ապա Ջավախքում դրանք անհամեմատ մեծ են, քան ասենք Ախալցխայի, Ադիգենի կամ Ասպինձայի շրջաններում, սակայն վերոհիշյալ ծրագրով նախատեսված գումարները ծախսվել են խիստ անհավասարաչափ և անհամամասնորեն, դա հատկապես երևում է ստորև բերվող աղյուսակից[630]:

UNDP-ի կողմից տրված գումարների չափերը, որոնք ծախսվել են Սամցխե-Ջավախքի տարածաշրջանի բարձր լեռնային ա-

---

[630] **Samtskhe – Javakheti: Realities and Rerspectives. UNDP: Tbilisi, 2004, p. 35-46.**

ռոտավայրային շրջանների ճանապարհների շինարարության համար.

Ծախսված գումարներն ըստ շրջանների	*գումարների (ԱՄՆ դոլարով) չափերը*
Ախալցխայի շրջան	*315 000*
Ախալքալաքի շրջան	*265.000*
Ադիգենի շրջան	*248.000*
Ասպինձայի շրջան	*236 000*
Բորժոմի շրջան	*115 000*
Նինոծմինդայի շրջան	*60.000*
Ընդամենը	*1 239.000*

Ընդհանրապես Ջավախքի սոցիալ-տնտեսական, ենթակառուցվածքների, կրթական համակարգի և այլ ոլորտների զարգացման առումով խիստ կարևորվում է տարածաշրջանում խթանել ինտենսիվ գործունեություն ծավալող ոչ կառավարական և հասարակական կազմակերպությունների քանակի ավելացումը և դերի բարձրացումը: Նշենք, որ UNDP-ի տվյալներով 2004 թ. դրությամբ ամբողջ Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում գրանցված էին 236 ոչ կառավարական կազմակերպություններ, որոնցից 96-ը Ախալցխայի շրջանում, 34-ը Ադիգենի շրջանում, 21-ը Ասպինձայի շրջանում, 42-ը Բորժոմի շրջանում, 32-ը Ախալքալաքի շրջանում և 11-ը Նինոծմինդայի շրջանում[631]*. Ջավախքում առկա առանց այն էլ թույլ զարգացած և բավականին երիտասարդ ոլորտը հիմնականում ֆինանսավորվում են խոշոր միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, Սորոսի հիմնադրամ [Բաց հասարակության ինստիտուտ (Open Society Georgia Foundation – OSGF)] և այլն) կողմից: Կան նաև առանձին գործող և տարածաշրջանի սոցիալ-*

[631] **Samtskhe – Javakheti: Realities and Rerspectives. UNDP: Thilisi, 2004, p. 53.**

տնտեսական ու քաղաքական հարցերի ուսումնասիրմամբ զբաղվող առանձին վրացական ոկկ-ներ: Եվրամիության և Ֆինլանդիայի կառավարության ֆինանսավորմամբ անգլիական «Պատերազմ և խաղաղություն» ինստիտուտի (Institute for War and Peace Reporting [IWPR]) կողմից երկրամասում հրատարակվում է «Հարավային դարբաս» թերթը:

Նինոծմինդայում և Ախալքալաքում գործող «Փարվանա-TV» (որը վերականգնեցին Օ.Գինոսյանն ու Ա.Սմիթը) և «ATV-12» հեռուստակայանները 2003 թ. ԵԱՀԿ-ի Conflict Prevention and Integration Programme ծրագրի շրջանակներում և Internews լրատվական գործակալության հետ համագործակցելով իրականացնում են երկու վրացական հեռուստաընկերությունների լրատվական ծրագրերի (առաջին պիքի «Մոամբե» և «Ռուսթավի-2» հեռուստատեսության «Քիրիերի» լրատվական ծրագրեր) համաժամանակյա հայերեն թարգմանությունները:

Ջավախքում կան նաև հասարակական նախաձեռնող խմբերի տեսքով հանդես եկող առանձին փոքր կազմակերպություններ, որոնք բացի Ախալքալաք և Նինոծմինդա քաղաքներից, գործում են նաև մի շարք գյուղերում, որոնց թվում կան և՛ գրանցված, և՛ չգրանցված խմբեր: Խոսպիա, Բարալեթ, Աբուլ, Օլավերդ, Ափնիա, Գոգաչեն գյուղերում գործող խմբերը զբաղված են փոքր դրամաշնորհների ձեռքբերումով (հիմնականում OSGF-ի ծրագրով գործող «Հորիզոն» հիմնադրամի միջոցով) և դրանք գյուղական մանր տիպի հիմնախնդիրների լուծմանն ուղղելով: Կան նաև գյուղական սակրեբուլոներում և դրանց շրջանակներից դուրս գործող առանձին չգրանցված նախաձեռնող խմբեր:

Ինչպես տեսնում ենք տարածաշրջանում գործող բոլոր կազմակերպությունների գործունեությունը քիչ թե շատ ուղղված է սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը, ազգային փոքրամասնություններին երկրի հասարակական կյանքին ինտեգրմանը, ինչպես նաև ազգամիջյան զանազան հարցերի

արծարծմանը, սակայն իսպառ բացակայում են դրանց մեջ բազմահազար հայության մշակութային կյանքը ակտիվացնելու, կրթական ոլորտը ազգային հողի վրա զարգացնելու, ժողովրդի էթնիկ ինքնագիտակցությունը խորացնելու համար ստեղծված կազմակերպությունները:

Ավելին, այս ոկկ-ներին և նախաձեռնող խմբերին միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցների բաժանումը կատարվում խտրական ձևով: Նշենք, օրինակ, որ 2000-2003 թթ. ընթացքում միջազգային կազմակերպությունների կողմից Սամցխե-Ջավախքում կատարված ֆինանսական ներդրումների չափը հասնում է մոտ 4,5 մլն դոլարի: Այս գումարից, ըստ որոշ տվյալների, 1,5 մլն դոլարը տրամադրվել է Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններին[632]. այսինքն՝ երկրամասի բնակչության շուրջ 45 % բնակչությանը (հիմնականում՝ հայեր) տրամադրվել է 1/3-րդ մասը:

Փաստորեն, այստեղ բացակայում է վերահսկողական (մոնիթորինգային) դաշտը: Այսպիսի գործունեությունը որոշ իմաստով ունենում է նաև բացասական հետևանքներ՝ այն իմաստով, որ դրա հետևանքով տարածաշրջանում զարգանում է կոռուպցիան և ի հայտ են գալիս լարվածություն ծնող երևույթներ:

ՀՀ և սփյուռքի կողմից ֆինանսավորվող միակ կառույցը Հայ օգնության միությունն է ([ՀՕՄ], վերջինս ՄԱԿ-ում գրանցված համահայկական խոշոր տիպի մի կառույց է, որին այժմ անդամակցում են շուրջ 50 հազար կանայք) Ջավախքի օգնության ծրագրերի հանձնախումբն է, որը հիմնադրվել է 2001 թ., իրականացնում է առողջապահական, կրթական, մշակութային և սոցիալ-տնտեսական միջոցառումներ:

2000 թ. դեկտեմբերի 5-ից Ռուսաստանի և Վրաստանի միջև այցագրային կարգին անցնելը է՛լ ավելի ծանրացրեց իրավիճակը ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Սամցխե-Ջավախք-թռեղքում (Ծալկա): Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ

---

[632] «Երկիր», 17 05 2003.

այս երկրամասի բնակչության շրջանում մեծ թիվ են կազմում այն ընտանիքները, որոնք իրենց գոյությունը պահպանում են դեպի Ռուսաստան սեզոնային աշխատանքային այցելության միջոցով, ապա պարզ կդառնա, թե ինչ դժվարության առաջ է կանգնել տվյալ ընտանիքը, որն այժմ ստիպված է մեկ տարի ժամկետով այցագիր ձեռք բերելու համար սպասել մի քանի ամիս և լրացուցիչ վճարել 300-400 դոլար: Իսկ ռուս-վրացական լարված հարաբերությունների պատճառով Ռուսաստան մեկնած բնակչությունն աշխատում է ռուս ոստիկանների խիստ վերահսկողության տակ[633]:

բ) Մարաբդա-Ախալքալաք-Կարս երկաթուղու հնարավոր շինարարությունը որպես Ջավախքի, ինչպես նաև ՀՀ առջև ծառացած լուրջ մարտահրավեր

Այս առթիվ, ինչպես արդեն նշել ենք, Ջավախքի բնակչությունը դեռևս 1990-ականների վերջին արտահայտել է իր դիրքորոշումը. ամբողջ երկրամասի հայ բնակիչները կտրականապես դեմ են «Մետաքսի ճանապարհի» բաղկացուցիչ մասը կազմող այս նախագծի իրականացմանը:

Իրոք, այստեղ արդեն բախվում են միմյանց ոչ միայն տեղի ժողովուրդների, այլև՝ շրջանային ուժերի, ինչպես նաև տարածաշրջանի նկատմամբ շահագրգիր պետությունների

---

633 Ռուսաստանում Վ.Պուտինի իշխանության գալուց հետո ռուս-վրացական հարաբերությունների համեմատական ջերմությունը (որն առաջացել էր վրաց-աբխազական պատերազմից հետո, երբ Վրաստանն անդամակցեց ԱՊՀ-ին) տեղափոխվեց Ռուսաստան-Աբխազիա և Ռուսաստան–Հարավային Օսեթիա հարաբերությունների դաշտ Դա կապված էր այն բանի հետ, որ երկրորդ ռուս-չեչենական պատերազմի ընթացքում Վրաստանը սերտորեն համագործակցում էր Չեչնիայի հետ և վարում ընդգծված հակառուսական քաղաքականություն·
Արդյունքում, երբ 2000-2001 թթ Ռուսաստանի և Վրաստանի միջև մտավ վիզայի ռեժիմը, վերջինս չտարածվեց Աբխազիայի և Հարավային Օսեթիայի վրա

մոտեցումները: Այս երկաթուղու Կարզախ (վրաց-թուրքական սահման) - Ախալքալաք հատվածի կառուցման համար (որի երկարությունը 20 կմ է) նախատեսված է 60 մլն դոլար: Կա նաև Ախալքալաք-Մարաբդա հատվածի վերանորոգման ծրագիր: Ըստ որոշ տեղեկությունների՝ Ախալքալաք-Կարս երկաթուղու շինարարության համար թուրքական կողմից Վրաստանի երկաթուղային ճանապարհների դեպարտամենտին է փոխանցվել 110 մլն դոլար[634]:

Ինչպես տեսնում ենք, Թուրքիան մեծապես շահագրգռված է այս երկաթուղու կառուցմամբ, որը նրա համար տնտեսական օգուտներից բացի, ունի նաև քաղաքական ու ռազմաստրատեգիական հսկա նշանակություն, քանի որ ի վերջո Կարս-Ախալքալաք-Մարաբդա մագիստրալը նրան շարունակաբար տանելու է դեպի Ադրբեջան, ինչը կբերի (բացի Ջավախքի համար կործանարար ազդեցություն ունենալուց) ՀՀ շրջափակմանը և Ռուսաստանի հետ վերջինիս հաղորդակցական կապերի թուլացմանը:

Հետաքրքրական է, որ թուրքական «Ջանգիզ Հոլդինգ» և «Օքան Հոլդինգ» ընկերություններն իրենց բարեկամ Վրաստանին «օգնելու» նպատակով առաջարկում են նույնիսկ վերանորոգել և բարեկեցիկ դարձնել Կարծախ-Ախալքալաք-Ախալցխա-Խաշուրի ավտոճանապարհը՝ 150 մլն դոլար արժողությամբ մի նախագիծ՝ որպես ֆինանսավորման ալբյուր ներկայացնելով թուրքական «Էքսիմբանկին»[635]:

---

[634] "Свободная Грузия", 30 08 1998; նույն տեղում, 04 09.1998

[635] Նույն տեղում, 20 08 1998. Վերջերս ՀՀ-ում տված իր հարցազրույցի ժամանակ՝ ՀՀ-ում Վրաստանի դեսպան Ռ Գաչեչիլաձեն Կարս–Ախալքալաքի–Թբիլիսի երկաթուղու հնարավոր շինարարության մասին խոսելիս նշեց. «Մենք շատ ավելի շահագրգռված կլինեինք, եթե չծագեր Կարս–Ախալքալաք–Թբիլիսի–Բաքու երկաթուղու շինարարության հարցը Վերոնշյալ շինարարությունը բավականին աշխատատար է և տնտեսապես ոչ այնքան շահավետ Շատ ավելի հարմար կլիներ Կարս–Գյումրի–Թբիլիսի հաղորդակցության վերականգնումը. Իսկ եթե կառուցվի Կարս–Ախալքալաքի–Թբիլիսի երկաթուղին, ապա այդ ուղղված չի լինի Հայաստանի դեմ Այդ երկաթուղու հիմնական

դ) Բաքու–Ջեյհան նավթամուղի հնարավոր ազդեցությունները որպես Սամցխե–Ջավախք–Թուրքիայի և ՀՀ-ի առջև նետված լուրջ մարտահրավեր

Եթե Կարս–Ախալքալաք–Մարաբդա երկաթուղին գտնվում է դեռևս իր լույս աշխարհ գալու նախնական փուլում, ապա արդեն իրականություն է դարձել տարածաշրջանում Սամցխե–Ջավախք–Թուրքիայի հայության ու ՀՀ շահերի ու ազգային անվտանգության խնդիրների հետ մեծ առնչություն ունեցող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղն ու դրան զուգահեռ արդեն անցկացվող Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շինարարությունը: Այս վառ արտահայտված քաղաքական նախագծի իրականացումը ունի տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրադրության վրա ներազդելու հսկա ներուժ և հանդիսանում է այն լարը, որի վրա խաղալով ԱՄՆ, Թուրքիան, Ադրբեջանն ու սրանց հարող մյուս երկրները տարածաշրջանում կդառնան թելադրող կողմ: Ահա թե ինչու 2002 թ. սեպտեմբերի 17-ին հանդիպելով Բաքվում և հաջորդ օրը Սանգաչալայի նավթի տերմինալում ներկա լինելով Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի հիմնադրան արարողությանը, Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջեթ Սեզերը, Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեն և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը այդ օրն անվանեցին պատմական օր[636]: Իր հերթին Հ.Ալիևը նշեց, որ այս նախագիծը ծնունդ առավ 1994 թ.սեպտեմբերի 20-ին, երբ Բաքվում ստորագրվեց փաստաթուղթ՝ Կասպից ծովի էներգետիկ ռեսուրսների վերաբերյալ[637]:

նշանակությունը կլինի Պեկինից Փարիզ բեռների փոխադրման ապահովումը», տես «Վրաստան», 25.03 2006·

[636] «Վրաստան», 21 09 2002

[637] Նույն տեղում:

Նավթամուղի ընդհանուր երկարությունը 1752 կմ է, որից ադրբեջանական տեղամասը՝ 449 կմ, վրացականը՝ 244 կմ, թուրքականը՝ 1059 կմ: Նավթամուղի տրամագիծը 1067 մմ է: Այն Վրաստանի տարածքով անցնելով թուրքաբնակ շրջաններով, հատում է Թռեղքը (Մալկա), օղակում է Ջավախքը[638]՝ անցնելով Թրիալեթի (Թռեղք) լեռներով, Ախալցխայի շրջանով մտնում Թուրքիայի Հանրապետության տարածք: Անցնելով հայաբնակ այս շրջաններով այն մեծ խնդիրներ առաջացրեց նաև այս տարածքներում. 2002 թ.հուլիսին Մալկայի շրջանում սկսվեց ստորագրահավաք՝ ընդդեմ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի կառուցման, որն անցնում էր հայաբնակ գյուղերի միջով: Բողոքի պատճառն էր խողովակաշարի՝ բերրի հողերին պատճառած վնասը[639]:

Բաքու–Ջեյհան նավթամուղի կառուցումը մեծ հարված հասցրեց նաև Ռուսաստանի ծրագրերին, որը նախատեսում էր ղազախական և ադրբեջանական նավթը հասցնել Նովոռոսիյսկ, իսկ այնտեղից արտահանել Թուրքիայի նեղուցներով: Բացի այդ, մեծ հարված հասցվեց նաև Ռուսաստանի՝ Կովկասում ունեցած ազդեցությանը. Բաքու-Ջեյհան նավթամուղը Ռուսաստանին տարածաշրջանից վտարելու՝ ԱՄՆ-ի կողմից արված հաջողակ քայլն էր: Խողովակաշարի կառուցման քաղաքական նշանակությունը ահռելի է և այն այսպես թե այնպես կառուցվելու էր, եթե անգամ այդ խողովակներով նավթ չհոսեր, դրա փոխարեն այնտեղով «հոսելու է» այդքան կարևոր քաղաքականությունը[640]: Հատկանշական է, որ մասնագետների կարծիքով ադբր-

---

[638] Տես Վրաստանի նախագահ է Շեւարդնաձեի նամակը ուղղված Համաշխարհային բանկի նախագահին, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի նախագահին եւ Միջազգային ֆինանսական կորպորացիայի փոխ-նախագահին.

[639] «Երկիր», 12-18 հուլիս, 2002 N 25

[640] Այս առթիվ ԱՄՆ-ի նախկին նախագահ Բիլ Քլինթոնի խորհրդականը հայտարարել էր, որ Բաքու–Սուպսա-Ջեյհան նավթամուղը «ավելին է, քան խողովակ այն ներդրում է Եվրասիայում նոր ռազմավարական

բեջանական Ազերի, Գյունեշլի և Շիրագ հանքավայրերի նավթային պաշարներն այնքան էլ չունեին այն չափի նավթ, որ դա հիմք տար վերոնշյալ խողովակաշարի անցկացմանը, և միայն ղազախական և թուրքմենական նավթի՝ այս ճանապարհով տեղափոխման դեպքում Բաքու-Ջեյհանը կդառնար նպատակահարմար:

Սակայն այստեղ պետք է հաշվի առնել Միջինասիական այս երկրների վրա Իրանի լուրջ ազդեցությունը (Ղազախստանն անգամ պայմանագիր ունի կնքած Իրանի հետ՝ իր նավթն ավելի կարճ ճանապարհով (Պարսից ծոցով) անցկացնելու վերաբերյալ): Այստեղ առկա են նաև Կասպից ծովում Ադրբեջանի և Թուրքմենիայի միջև ունեցած լուրջ հակասությունները, ինչն այնքան էլ չի ստիպում մտածել, որ Թուրքմենիան կներգրավվի այս ծրագրի մեջ (անկախ ԱՄՆ-ի կողմից վարած ճնշումներին):

2003 թ. հուլիսին ԱՄՆ-ում Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը նույնպես արշավ էր ձեռնարկել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի նախագծի ֆինանսավորումը թույլ չտալու նպատակով: Հանձնախումբն առաջարկում էր ամերիկացիներին ստորագրել ԱՄՆ գանձապետարանի քարտուղար Ջոն Սնոուին ուղղված կոչի ներքո, որում կոչ էր արվում ճնշում գործադրել Համաշխարհային դրամատան վրա և թույլ չտալ վերջինիս վարկ ապրամադրել «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերությանը նավթամուղը կառուցելու համար: Կոմիտեն նշում էր, որ նավթամուղի մի-

---

կարգի մեջ». Իր հերթին, Թուրքիայի արտգործնախարար Իսմաիլ Ջեմը ընդգծել էր, որ «Բաքու–Ջեյհան նահագիծը կարևոր է և ռազմավարական, և անվտանգության տեսանկյուններից». Իսկ 2001 թ օգոստոսի 21-ին՝ Թուրքիայում կայացած անվտանգության խորհրդի նիստում նշվել էր, որ Բաքու–Ջեյհան նախագիծը, որպես «ոսկե գիծ» թուրքական պետությունների միջև, պետք է իրականանա ամեն գնով (տես Ղազարեան է , Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան փոխ յարաբերութիւնների հեռանկարի հարցի շուրջ, Հայրենի Ջաւախք, էջ 425).

ջոցով միմյանց կապվող Թուրքիան ու Ադրբեջանը Հայաստանը ենթարկում են տնտեսական շրջափակման[641]:

Հետաքրքրական է, որ Բաքու–Ջեյհան նախագծի դեմ մեծ աղմուկ բարձրացրեց նաև Մախաչկալայում գործող համաեզգիական «Սադվալ» ազգային շարժումը. «Եթե Ադրբեջանի շուրջ 800 հազարանոց լեզգիական բնակչության շահերը հաշվի չառնվեն, «Սադվալը» դիմելու է ամենակտրուկ քայլերի՝ նախագիծը տապալելու նպատակով», նշել էր այդ առթիվ «Սադվալի» ակտիվիստներից Դաուդ Իսրաֆիլովը[642]:

2003 թ. ԱՄՆ կոնգրեսական Ջոզեֆ Քրոուլին (դեմոկրատական, Նյու-Յորք) ներկայացուցիչների պալատի միջազգային հարաբերությունների հանձնախմբի նիստի ընթացքում խստորեն քննադատել է Բաքու–Ջեյհան նավթամուղի կառուցման՝ Հայաստանը շրջանցելու գաղափարը: Քննարկման ընթացքում Ջ Քրոուլին ասել է. «Ամերիկացի հարկատուներից պահանջվում է հարյուր միլիոնավոր դոլարներով օժանդակել նշված խողովակաշարի կառուցմանը, որը շրջանցելու է տնտեսա-պես ավելի շահավետ ու նպատակահարմար Հայաստանով անցնող երթուղին: Իմ կարծիքով, եթե Կովկասը առաջադիմելու է, պետք է վստահ լինենք, որ տարածաշրջանի բոլոր երկրները զարգանալու են միաժամանակ: Նախապատվությունների շնորհումը չի կարող քաջալերել Կովկասի կայունությունը, տնտեսական ինտեգրումը և խաղաղությունը[643]:

Այսպես թե այնպես այսօր կանգնել ենք կատարված իրողության առջև: Այսօր մեծապես կարևորվում է մեկ այլ հարց՝ ո՞վ է վերահսկելու նավթամուղի անվտանգությունը: Եթե նախկինում նույնիսկ կար այն հույսը, որ նավթամուղի անվտանգության որոշ մասը կընկնի տարածաշրջանում առկա

---

[641] Մուրադյան Ի, Թուրք-ամերիկյան հարաբերությունների տարածաշրջանային հիմնախնդիրները, Երևան, 2004, էջ 19

[642] «Երրորդ ուժ», 9-16 հուլիս, 2004

[643] «Երկիր», 10-16 հոկտեմբեր, 2003

ռուսական ռազմաքաղաքի վրա, ապա այսօր ռազմաքաղաքների դուրս բերումով լուրջ հիմքեր կան մտածելու, որ տարածաշրջանում իրենց մանյովրներն են սկսելու թուրքական գործերը. Բաքու-Ջեյհան նավթամուղի անվտանգության ապահովումը փայլուն պատրվակ է Սամցխե-Ջավախքում-Թռեղքում թուրքական ռազմական ուժերի տեղակայման համար:

Այս ամենն առիթ են տալիս եզրակացնելու, որ Սամցխե-Ջավախք-Թռեղքի հայությունը սրանով մտնում է իր կյանքի փոթորկուն ժամանակահատվածի ամենադժվարին փուլերից մեկը:

դ) Թուրք – մեսխեթցիների վերադարձի խնդիրը որպես Սամցխե–Ջավախք–Թռեղք երկրամասի հայության առջև կանգնած ծանրագույն հիմնախնդիր

Խնդրին առարկայական մոտեցում ցուցաբերելու համար անտրաժեշտ է նախ և առաջ մի փոքր քննել մեսխեթցի-թուրքերի մասին առկա պատմա-ժողովրդագրական փաստերը, որոնք սերտորեն կապված են այսօրվա իրողությունների հետ:

Հետաքրքրական է նախ այն հարցադրումը, թե իրականում ովքե՞ր են «թուրք–մեսխեթցիներ» առաջին հայացքից անորոշ արտահայտությամբ անվանվող այս մարդիկ: Այս հարցին մինչ օրս տարբեր ուսումնասիրողների կողմից տրված են տարբեր պատասխաններ, ընդ որում եզրակացությունների մեջ գերակշռող են ենթակայական (սուբյեկտիվ) մոտեցումները: Հարցը դեռևս վերջնականապես չունի իր ճշգրիտ, հիմնավորված պատասխանը և այն մեծապես ունի պատմաբանների, ազգագրագետների, մարդաբանների ուսումնասիրող լայն շրջանակների կարիք: Հարկ է նշել, որ «Մեսխեթ» (պատմական Սամցխե գավառ) աշխարհագրական անունն այժմ տարածվելով այնտեղ ապրած այս ժողովրդի վրա, արդեն դարձել է էթնիկական անվանում՝ տվյալ

ժողովրդի մուսուլմանական հավատ ունենալը մատնանշող «թուրք» էթնիկ տերմինի գուգակցումով:

Ըստ հայ պատմաբանների մի մասի տեսակետի՝ միջնադարյան աղբյուրներում մեսխեթ և մեսխեթցիներ հասկացություններն էթնիկական իմաստ չունեին: Մեսխեթում ապրում էին վրացիներ և Վրաստանի հզորացման շրջանում քաղկեդոնականություն ընդունած հայեր, որոնք փոխել էին իրենց հավատը, բայց պահպանել էին լեզուն: Օսմանցիների տիրապետության շրջանում Ախալցխայի էյալեթի ուղղափառ հայերը և վրացիների նշանակալից մասը բռնի կերպով մահմեդականացվեցին[644]: Դրանից հետո նրանք դեռ երկար ժամանակ պահպանում էին իրենց ժողովուրդներին բնորոշ առանձնահատկությունները կենցաղում և լեզվի մեջ, բայց աստիճանաբար յուրացնելով թուրքերենը, վերածվում էին մի յուրահատուկ էթնոկրոնական խմբի, որը հետագայում միաձուլվելով մահմեդական այլ ցեղերի հետ, ձեռք բերեց թուրք–մեսխեթցիներ անունը[645]: Ինչպես տեսնում ենք, հայ որոշ պատմաբանների տեսակետը ներկայացնում է այս ժողովրդին որպես հայ-վրացական միաձուլման և բռնի մահմեդականացման արդյունք. Բոլորովին այլ բան են ասում վրացական շրջանակների ներկայացուցիչները՝ ներկայացնելով վերջիններիս որպես «վրացական ազգի նախահայրեր, որոնք, ընկնելով թուրքական տիրապետության տակ, բռնի մուսուլ-մանանում են, Վրաստանի՝ ռուսական իմպերիայի ազդեցության տակ գտնվելու ժամանակ նրանք փոխվում են թուրքերի, խորհրդային իշխանության տարիներին՝ «ադրբեջանցիների», Մեծ Հայրենականի ժամանակ՝ նորից որպես «թուրքեր», առանց պատճառի ՝աքսորվում են»[646]. Վերլուծության մեջ անգամ բերվում է Բրոկհաուզ-Եֆրոնի հանրագիտարանային տվյալները, ըստ որի՝ «Մեսխերը քարթվերական ցեղի հին ազգ

---

[644] Մելքոնյան Ա , նշվ.աշխ , էջ
[645] «Ազատամարտ», թիվ 23, յունիս, 1994
[646] “Свободная Грузия”, 24.10 1992

են, որոնք ապրում են Թիֆլիսի նահանգի Ախալցխա գավառում»[647]:

Աքսորված մեսխերը 1965 թ. պաշտոնապես դիմել են ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտ՝ այն հարցով, թե ովքե՞ր են իրենք՝ մեսխեթ-թուրքերը: Իր պաշտոնական պատասխանում՝ 1965 թ. Հունիսի 30-ին պատմաբան, մարդաբան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Ֆ.Դեբեցը գրել է. «Այսպես կոչված թուրք-մեսխեթցիները մուսուլմանացված և զգալի թուրքացված լեզվով վրացիներ (մեսխեր) են» (ԽՍՀՄ ԳԱ-ի 1965 թ. Հունիսի 30-ի պաշտոնական փաստաթուղթ N 30 / 046-228)[648]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, վրացական և այլազգի պատմաբանների տեսակետներով մեսխեթցի-թուրքերի կազմավորման գործընթացում հայկական տարրի մասնակցությունը բացառվում է: Փաստորեն վրացիների նախահայրերը այժմ ապրում են ԱՊՀ-ի տարբեր երկրներում և այժմ Վրաստանի խնդիրն է նրանց վերադարձնել իրենց պատմական հայրենիքը՝ «չմոռանալով» նրանց գիտակցության մեջ մտցնել վերջիններիս նախահայր լինելու կոչումը: Իսկ թե ինչու են մեսխերը մինչև թուրքանալը՝ 16-18-րդ դարերը, ապրել վրացիների կողքին «որպես նախահայր»՝ դա անհայտ է:

Ինչևիցե, մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս համարելով մեսխերի ծագումնաբանական և պատմական զարգացումների թեմատիկան, նշենք միայն որ վերջիններս հավատով մուսուլման և անունով մեսխեթցի-թուրքեր մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը ապրել են Սամցխե-Ջավախք տարածաշրջանում և 1920 թ. դրությամբ բոլոր մահմեդական-

---

[647] Նույն տեղում:
[648] Նույն տեղում

ներով հանդերձ կազմել են ամբողջ նահանգի բնակչության շուրջ 28,5 %-ը (57079 մարդ)[649]:

Համեմատության կարգով նշենք, որ հայերը ամբողջ երկրամասում կազմել են 54,8 % (շուրջ 109.748 մարդ), վրացիները 9,2 % (շուրջ 18536 մարդ), այլ ազգիներ՝ 7,5 % (շուրջ 15.040 մարդ)[650]:

Իսկ Ջավախքում (Ախալքալաքի գավառում) մահմեդականները կազմել են բացարձակ փոքրամասնություն՝ կազմելով 1914 թ. դրությամբ շուրջ 3 % (3036 մարդ)[651]:

1939 թ., պատերազմի նախօրեին, Սամցխե-Ջավախք տարածաշրջանի ժողովրդական պատկերը, ըստ վրացական առանձին ուսումնասիրողների (բերվող տվյալները հիմնված են Վ. Լորթ-քիփանիձեի «Սամցխե-Ջավախքը 19-20-րդ դդ. ժողովրդական զարգացման հիմնախնդիրներ» աշխատության վրա) հետևյալն էր[652]:

Շրջան	վրացիներ	հայեր	թուրքեր	ռուսները	քրդեր	ընդամենը
Ադիգենի	5466 (13,2 %)	942 (2,3 %)	32 928 (79,7 %)	1281 (3,1 %)	69 (0,2 %)	41 314
Ախալցխայի	5836 (10,5 %	16454 (29,7 %)	28428 (51,2 %)	1538 (2,8 %)	1423 (2,6 %)	55 490
Ասպինձայի	6500 (19,9 %)	1741 (5,3 %)	21612 (66,2 %)	293 (0,9 %)	1980 (6,1 %)	32 644
Ախալքալաքի	4857 (7,5 %)	54081 (83,6 %)	4015 (6,2 %)	1102 (1,7 %)	309 (0,5 %)	64 655

[649] Սահակյան Տ Ղ, Մեծ Հայաստանի Գուգարք-Գոդերձական տարածաշրջանի քաղաքական և հոգևոր-մշակութային ճակատագիրն ի սկզբանե մինչև 1980-ական թթ, Ե, 2004, էջ 362:
[650] Նույն տեղում·
[651] Մելքոնյան Ա, նշվ աշխ, էջ 230-231
[652] **Samtskhe-Javakheti: Realities and Perspectives: UNDP: Tbilisi, 2004, p. 59.**

Նինո-ծմինդայի	93 (0,3 %)	27376 (79,2 %)	1009 (2,9 %)	5862 (17,0 %)	77 (0,2 %)	34575
Ընդամենը	22752 (9,9 %)	100591 (44,0 %)	87992 (38,5 %)	10 076 (4,4 %)	3858 (1,7 %)	228678

Ինչպես երևում է բերվող տվյալներից թուրքերը ամբողջ նահանգում քրդերի հետ միասին վերաբնակեցման նախօրեին կազմել են 91.850 մարդ կամ ընդհանուր բնակչության 40,2 %-ը: Դրան հակառակ, չնչին թիվ են կազմել վրացիները՝ ամբողջ նահանգում լինելով միայն 22.752 մարդ (9,9 %) :

Խորհրդային իշխանության առաջին տարիներին (1923 թվականին) Կավբյուրոյի որոշմամբ փորձ արվեց մեսխեթցի-թուրքերին դասել ադրբեջանցիների շարքը: Այդ առթիվ սկսեցին մեսխերին տալ արհեստական ադրբեջանական ազգանուններ՝ փորձ անելով Մեսխեթին մշակութապես ենթարկել Խորհրդային Ադրբեջանին: Սա, ըստ երևույթին, մի փորձ էր ԽՍՀՄ-ի ղեկավարության կողմից՝ թուրք-մեսխեթցիներին անջատելու սահմանակից Թուրքիայից թե՛ մշակութապես, թե՛ նրանց մեջ ինքնագիտակցության տարբերություն դնելով: Դրա համար վերջիններս փորձում էին ընդհանուր եզրեր որոնել ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող ադրբեջանցիների հետ, քանի որ Ադրբեջանական ԽՍՀ-ում և Վրացական ԽՍՀ Մառնեուլի և հարակից շրջաններում ապրող ադրբեջանցիներին ևս նախկինում անվանել են թուրք-թաթարներ: Սակայն սկսած երկրորդ աշխարհամարտի տարիներին թուրք-մեսխեթցիները բացահայտորեն հակվեցին դեպի Թուրքիան, ինչը շատ վտանգավոր էր: Եվ ահա խորհրդաթուրքական սահմանախախտումները և այս շրջանում Թուրքիայի հնարավոր միջամտությունները կանխելու պատրվակով ինչ-ինչ «մեղադրանքների» հիման վրա, 1944թ. նոյեմբերի 15-18-ը Ախալցխայի, Ասպինձայի, Ադիգենի, Ախալքալաքի, Բոգդանովկայի շրջաններից և նույն թվականի նոյեմբերի 25-26-ը՝ Աջարիայից Ռիզբեկական, Ղազախական և

Կիրգիզական ՍՍՀ-ներ վերաբնակեցվեցին 92,3 հազար մարդ (ըստ տվյալների շուրջ 457-ը մահացան ճանապարհին)՝ թուրքեր, քրդեր, և համշենահայեր: ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության 1953 թ. հունվարի տվյալներով, Միջին Ասիայում հաշվվում էր 86,7 հազար վրացական վտարանդիներ, որոնցից 66,8 հազարը թուրքեր, 8,8 հազարը քրդեր և 14,0 հազարը համշենահայեր[653]:

Հետաքրքրական է, որ մինչ այս ամենը, երբ 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրով Սամցխե-Ջավախքի հարավային որոշ հատվածներ մնացին Թուրքիայի տիրապետության տակ, այնտեղ ապրող թուրքերի շրջանում 1912 թ. ստեղծվեց «Ախիսկա թուրքլյարի» (Ախիսկայի [Ախալցխայի] թուրքեր) ընկերությունը, որը գործում է մինչ այսօր: Ահա այս կազմակերպության հետ համագործակցելով էին Սամցխե-Ջավախքի թուրքերը կատարում սահմանախախտումները:

Եվ այսպես 1944 թ. վերջին Սամցխե-Ջավախքը մաքրազարդվեց մահմեդական տարրից: Ելնելով մեր կողմից քննվող խնդրի դիտանկյունից, մեծապես կարևոր է հնարավորինս ճշգրիտ ձևով պարզել, թե երկրամասի քանի գյուղերում էին ապրում նրանք և ի՞նչ ժողովրդագրական պատկեր ստացավ Սամցխե-Ջավախքը նրանց գնալուց որոշ ժամանակ անց: Այս հարցին ի պատասխան, մեսխեթցի-թուրքերի արմատական «Վաթան» կազմակերպության առաջնորդ Յուսուֆ Սարվարովը նշում է, որ «215 գյուղերից, որտեղ ապրել են թուրք-մեսխեթցիները, հիմնովին ավերված են 84-ը, իսկ պահպանված բնակատեղիների տների մեծամասնությունն այժմ նախկինի նման դատարկ է: Սամցխե-Ջավախքի խիստ բնակեցվածության մասին Թբիլիսյան խոսակցություններն անիրատեսական են, քանի որ այսօր այնտեղ բնակվում է գրեթե 20 հազար մարդ,

---

[653] Новикова Г В, Дашко В И, Самцхе-Джавахети в эпицентре интересов, /Грузия, приблемы и перспективы развития/, /РИСИ/, М., 2002, с 246

ավելի քիչ, քան 1944 թ. էր»[654]: Իհարկե, սվածը բացարձակապես հեռու է իրականությունից, քանի որ միայն Սամցխեում (Ադիգենի, Ախալցխայի և Ասպինձայի շրջաններ, որտեղից հիմնականում գաղթել են թուրք-մեսխեթցիները) այդ թիվն առնվազն մի քանի անգամ ավելի է, իսկ ինչ վերաբերում է թուրք-մեսխեթցիների բնակեցրած գյուղերին, ապա ըստ վրացական կողմի՝ դրանք 162-ն էին[655], իսկ ըստ հայ որոշ հետազոտողների ուսումնասիրությունների՝ թուրք մեսխեթցիների բնակեցրած գյուղերի թիվը եղել է 120-ը, որոնցից 115-ը գտնվում են Ադիգենի, Ախալցխայի և Ասպինձայի վարչական շրջաններում, 5-ը՝ Ջավախքում (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում):

Սամցխեում գտնվող 115 գյուղերից 65-ը բնակեցվեցին Իմերեթիայից այստեղ բերված վրացիներով (որի շնորհիվ և Ախալքալաքի պատմական գավառների միջև հայտնվեց վրացաբնակ Ասպինձայի վարչական շրջանը), մյուս 50 գյուղերը (որոնք առանց այն էլ թույլ էին զարգացած) դարձան անմարդաբնակ, որոնք շուտով ամայացան: Թուրք-մեսխեթցիների Ջավախքում թողած միայն վերոնշյալ հինգ գյուղերում բնակեցվեցին հայեր: Այդ գյուղերն են Խավերթը, Էրինջան, Դավնիան, Քարսեպը (Ախալքալաքի շրջանում) և Սաղամոն (Բոգդանովկայի շրջանում)[656]:

Հետևաբար, երբ այսօր խոսք է լինում մեսխեթցի-թուրքերի վերադարձի մասին, նրանց բնակեցման հարցում պետք է կենտրոնանալ վերոնշյալ 115 գյուղերի վրա (65 վրացաբնակ և 50 ամայացած), իսկ 5 գյուղերը, որոնք գտնվում են Ջավախքում և բնակեցված են հայերով, մեծ նշանակություն չունեն:

ԽՍՀՄ-ի, ինչպես նաև Վրաստանի ղեկավար շրջանակների Սամցխե-Ջավախքում կատարած այս տեղահանությունների և

---

[654] Նույն տեղում, էջ 251·
[655] "Свободная Грузия", 24 10.1992.
[656] Սահակյան Տ.Ղ , Նշվ աշխ , էջ 363

վերաբնակեցման հետևանքով ամբողջովին փոխվեց երկրամասի ժողովրդագրական պատկերը, և եթե վրացիները կազմում էին շատ փոքր թիվ, ապա այս ընթացքում թվային հարաբերակցությամբ հայերից հետո բռնեցին երկրորդ տեղը: 1959 թ. դրությամբ Սամցխե-Ջավախքի ժողովրդագրական պատկերը ուներ հետևյալ տեսքը[657]:

Շրջան	վրացիներ	հայեր	ռուսներ	այլ ազգիներ	ընդամենը
Ադիգենի	18878 (37,4 %)	25753 (51,1 %)	3684 (7,3 %)	2115 (4,2 %)	50430
Ախալցխայի	16187 (8,6 %)	1627 (8,3 %)	1276 (6,5 %)	508 (2,6 %)	19598
Ասպինձայի	9081 (80,6 %)	2068 (18,4 %)	60 (0,5 %)	56 (0,5 %)	11 265
Ախալքալաքի	3566 (5,7 %)	57209 (90,8 %)	1647 (2,6 %)	555 (0,9 %)	62977
Նինոծմինդայի	50 (0,2 %)	27090 (84,5 %)	4616 (14,4 %)	308 (1,0 %)	32064
Ընդամենը	47762 (21,1 %)	113747 (64,5 %)	11283 (6,4 %)	3542 (2,0 %)	176334

Ինչպես երևում է բերված աղյուսակից, 20 տարում վրացիների թիվը արհեստականորեն ավելացել է շուրջ 25.010-ով կամ 11.2 %-ով, իսկ հայերի թիվը միայն բնական աճի շնորհիվ ավելացել է 13.153-ով (այս թիվը (ավելացված նաև Բորժոմի շրջանի հայությունը) հավասար է նահանգի հայության 2002 թ. տվյալներին):

Ինչևէ, անդրադառնալով մեսխեթցի-թուրքերի խնդրին, նըշենք, որ նրանց շրջանում Միջին Ասիայում ձևավորվեցին գաղափարաբանական մի քանի ուղղություններ, որոնք էլ

[57] Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004, p. 59.

առաջնորդող դերակատարություն ունեն այսօր՝ կապված նրանց վերադարձի կամ այլ խնդիրների հետ:[658]

1964 թ. Ֆրունզեում (Կիրգիզիա, Ղրղզստան) ստեղծվեց Ազատագրական կազմակերպական ժամանակավոր կոմիտե, որի նպատակն էր ոչ միայն «Հայրենիք» (Սամցխե-Ջավախք) վերադառնալը, այլ թուրքական ինքնավարության ստեղծումը: 1988 թ. այս կոմիտեի հիմքում Յուսուֆ Սարվարովի նախագահությամբ ստեղծվեց «Վաթան» (Հայրենիք) միությունը, որն այժմ գրասենյակ ունի Մոսկվայում և մի շարք ԱՊՀ երկրներում[659]:

Երկրորդ խումբն իրեն համարում է էթնիկ վրացի՝ մուսուլմանական հավատքով: Ի տարբերություն առաջին խմբի՝ սրանք իրենց համարում են «մեսխեր» և պատրաստ են բնակվել Վրաստանի ցանկացած վայրում: Վերջիններս միավորված են «Խսնա» (վրացերեն՝ «փրկություն», պաշտոնական կարգավիճակը՝ «Սամցխե-Ջավախքի վրացիների և նրանց հետնորդների 1944թ. աքսորյալների ընկերություն», ունի գրասենյակներ Թիֆլիսում և Նալչիկում), Վրաստանի մեսխերի վտարանդիների և հայրենադարձների «Մեսխեթի» երիտասարդական, վրաց հայրենադարձների (ստեղծվել է 1995 թ., գրասենյակը գտնվում է Թիֆլիսում) միություններում և ընկերություններում, ինչպես նաև Լատիֆշախ Բարաթաշվիլու ֆոնդում[660]:

---

[658] **ECMI Working Papers #21: Pentikaen, Oskari and Tom Trier: Between Integration and Resettlement: The Meskhetian Turks August 2004, 54 pp., http://www.ecmi.de/download/working_paper_21b.pdf; ECMI Рабочие доклады №21: Пентикяйнен, Оскари и Триер, Том: Между интеграцией и переселением: турки-месхетинцы. Август 2004, 38 стр., приложение http://www.ecmigeorgia.org/rus/works_rus/working_paper_21_rus.pdf**

[659] Новикова Г В, Дашко В И, Самцхе-Джавахети, в эпицентре интересов, /Грузия проблемы и перспективы развития, РИСИ, с 247

[660] Նույն տեղում

Մինչև Ռուսաստանյան Ֆեդերացիայում 1991 թ. և Վրաստանում 1992 թ. պաշտոնական գրանցումը, «Խսնայի» անդամները միավորվել էին «Մեսխեր-վրացիներ» անլեգալ միության մեջ և ակտիվորեն հակադրվում էին «Վաթան»-ին: Վերջիններս դեռ ԽՍՀՄ-ի տարիներին իրենց դիրքորոշումն արտահայտել են 1979 թ. հունվարի 14-ի Մոսկովյան Հելսինկյան խմբի «Մեսխերի կարգավիճակի մասին» N 18 փաստաթղթում, որով նրանք պահանջում էին վերաբնակեցում Վրաս-տանում և որի տակ ստորագրել էր շուրջ 7,5 հազար մարդ[661]:

Նշենք նաև 3-րդ խումբը, որի հետևորդներն արդեն կորցրել են Վրաստան վերադառնալու հույսը և ձգտում են վերաբնակվել Թուրքիա: Այս խմբում առավել ազդեցիկ են «ՈՒմիդ» (հույս) միությունը՝ Կրասնոդարի երկրամասում և Ղրղզստանի «Աս–Թուրք» ընկերությունը:

Ահա այսպիսին էր մեսխեթցի թուրքերի մոտ ընդհանուր իրադրությունը, երբ 1989 թ. մայիս-հունիս ամիսներին Ֆերգա-նայի, 1990 թ. փետրվար-մարտ ամիսներին ՈՒզբեկստանի Բուկինյան և Պարկենտյան շրջաններում տեղի ունեցան ար-յունալի ընդհարումներ, որոնց հետևանքով զոհվեցին 116 (որոնցից 66-ը՝ թուրքեր) և վիրավորվեցին 2 հազար մարդ. սրա հետևանքով 74 հազար թուրքեր հարկադրված թողեցին ՈՒզբե-կական ՍՍՀ-ը: Ընդ որում 17,5 հազար թուրք-մեսխեթցիներ ապրում էին Կազախստանում, 16 հազարը՝ Ռուսաստանում, ավելի քան 40 հազարը՝ Ադրբեջանում:

1998 թ. տվյալներով, ԱՊՀ-ի տարածքում թուրք-մեսխեթցիների թիվը հասնում էր 320-380 հազար մարդու. (Ա-դրբեջանում՝ 100-135, Ռուսաստանում՝ 65-70, Ղազախ-ստանում՝ 30-35, ՈՒզբեկստանում՝ 7-10 հազարական մարդ): Թուրք-մեսխեթցիների մի ոչ նշանակալի մասն էլ ապրում է նախկին ԽՍՀՄ-ի այլ երկրներում[662]:

---

[661] Նույն տեղում, էջ 248
[662] Նույն տեղում, էջ 246

Իսկ ի՞նչ տրամադրվածություն ունի Վրաստանը թուրք-մեսխեթցիների վերադարձի խնդրում: Այդ առումով նշենք, որ եթե 1980-ականների ընթացքում ընդհանուր տրամադրվածությունը «պատմական արդարությունը վերականգնելու» օգտին էր, ապա 1980-ականների վերջին և Զ.Գամսախուրդիայի օրոք վրաց ազգայնականների շրջանում այն կտրուկ փոխվեց և դիրքորոշումը մեկն էր. Վրաստանը չունի ոչ միջոցներ և ոչ էլ ցանկություն՝ ընդունելու թշնամաբար տրամադրված կես միլիոնանոց մասային: Իսկ Է.Շևարդնաձեի իշխանության գալով ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք պետք է կարգավորեին թուրք-մեսխեթցիների վերադարձի խնդիրը. Է.Շևարդնաձեի 1993 թ.մայիսի 18-ի հրամանագրով Թբիլիսիում (Գլդանիում) բացվել էր բռնագաղթված մեսխերի ադապտացիոն կենտրոն, որտեղ սովորում էին 14-20 տարեկան հարյուր երիտասարդ մեսխեր, 1994 թ. Վրաստանի կառավարությանը կից ստեղծվեց Հայրենադարձների ծառայություն, 1996 թ. դեկտեմբերին ընդունվեց օրենք «Վրաստանում բռնագաղթված և հայրենադարձված մեսխերի իրավական և սոցիալական խնդիրների լուծման պետական ծրագրի հաստատման մասին»[663]:

Հատկանշական է, որ Վրաստանը տրամադրված էր վերաբնակեցնելու «Խանա» կազմակերպության գաղափարաբանական հետևորդներին, որոնք, ինչպես նշեցինք ունեին ոչ արմատական հայացքներ և կարող էին ինչպես բնակվել Վրաստանի ցանկացած վայրում, այնպես էլ հեշտորեն ասիմիլացվել. Վրաստանը սրանով նաև լուծում էր իր բնակչության աճին զարկ տալու խնդիրը: Եվ ահա այս բոլոր առումներով ամենահարմար վայրը Հունաբնակ-Հայաբնակ Թռեղքն էր (Ծալկայի շրջան), որտեղ 1989 թ. դրությամբ 61,2 %-ը հույներ էին, 28,5 %-ը՝ հայեր 5,1 %-ը ադրբեջանցիներ, 3,6 %-ը վրացիներ և 1 %-ը այլ ազգություններ[664]: Հույների զանգվածային արտագաղթից հետո վրաց

---

[663] Նույն տեղում, էջ 250; Հմմտ «Ազատամարտ», թիվ 23, յունիս, 1994·
[664] «Ազատամարտ», թիվ 23, յունիս, 1994

կառավարությունը Հայության տեսակարար կշիռը այս շրջանում մեծանալու մտավախությամբ ձեռնամուխ եղավ 1990-ականների կեսերին մոտ 400 ընտանիքներ վերաբնակեցնելու այս շրջանում, որոնց շարքը հետագայում շարունակեցին սվանները և աջարները:

Վերաբնակեցման ուղղությամբ տարվող աշխատանքների հետ մեկտեղ, վրաց իշխանությունները նախկինում և այսօր ամեն ինչ անում են մեսխեթցի-թուրքերի շրջանում քարոզելու այն գաղափարը, որ վերջիններս վրացիներ են եղել, և ներկայումս շատ կարևոր է մեսխեթցի-թուրքերի սերունդներին վերադարձնել իրենց ակունքներին: Այդ առումով բավականին հեշտ է աշխատելը «Խսնայի» հետևորդների հետ, և մինչև այժմ վերաբնակեցվածները, որոնք հեշտությամբ բնակվում են Վրաստանի այլ շրջաններում (ոչ Սամցխե-Ջավախքում), գրեթե այս կազմակերպությանը հետևողներն են: Այդ առումով հետաքրքրական է Արևմտյան Վրաստանում՝ Սամտրեդիային մոտակա «Իանետիի իներորդ թաղամաս» կոչվող բնակատեղիի շուրջ 26 տուն թուրք-մեսխեթցիների կյանքն ու կենցաղը, որոնց մեծ մասն այստեղ է հաստատվել 1975 թ.՝ Ադրբեջանից և Ուզբեկստանից: Այստեղ ստեղծվել են բոլոր նպաստավոր պայմանները, որպիսի վերջիններս ձուլվեն վրացական շրջաններին. Է.Շևարդնաձեի անվան դպրոց, որտեղ սովորում են վրաց լեզուն և Վրաստանի պատմությունը, վրացական լեզվով հեռուստասերիալներ և այլն[665]: Արդյունքներն ակնհայտ են, և արդեն սերունդների մեջ կամաց-կամաց արմատավորվում է վրացերենը. «Մենք եղբայրներով գաղտնի զրուցում ենք վրացերենով, իսկ մեր ծնողները ոչինչ չեն հասկանում», նշում է Իանեթիայի 13ամյա բնակիչ

---

[665] Герзмава Н , Грузинские Месхетинцы, обустраивая новую жизнь, /Institute for war and Peace reporting/ /IWPR/, Ковказский информационный еженедельник, вып N 199, 09 10 2003, с. 16 -18

Մուզաֆա Ինոն (որը վրացերենով արդեն դարձել էր Զուրա Ջինչարաձե»[666]:

Թուրքիան առաջին անգամ ԽՍՀՄ դեկավարության առջև հարց բարձրացրեց 1991 թ.մարտին, երբ վերջինս արդեն փլուզման շեմին էր: Այս օրերին Մոսկվա այցելած Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը թուրք-մեսխեթցիներից ստացավ Թուրքիայում վերաբնակվելու խնդրանքով վերջիններիս նամակը: Դիմումի արձագանքը եղավ թուրքական մեջլիսի կողմից 1992 թ.հուլիսի 2-ի N 3835 օրենքի ընդունումը՝ «Ախիսկայի թուրքերի ընդունման և բնակեցման մասին», որն անմիջապես ուժի մեջ մտավ[667]: Սրանով նախատեսվում էր երկու տարվա ընթացքում Թուրքիայի կառավարության կողմից սահմանված քվոտաների հիման վրա թուրք-մեսխեթցիների 500 ընտանիքների փուլային վերաբնակեցում: Արդյունքում 1994 թ. դրությամբ արդեն Իգդիր և Էրզրում քաղաքների շրջանում վերաբնակեցված էին շուրջ 750 մարդ (179 ընտանիք)՝ Ադրբեջանից, Ղազախստանից, Ղրղզստանից, Ուզբեկստանից և Ռուսաստանից: Բացի այդ, ավելի քան 20 հազար թուրք-մեսխեթցիներ հիմնականում Ադրբեջանից և Ղազախստանից եկան Թուրքիա՝ որպես անլեգալ գաղթականներ[668]:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ Թուրքիայի դիրքորոշումը (ըստ որի՝ թուրք-մեսխեթցիները պետք է հայրենադարձվեն իրենց պատմական հայրենիք՝ Վրաստան, առանց նախապայմանների և ազգության փոփոխման) լիովին համընկնում է «Վաթան» կազմակերպության գաղափարներին, որի լիդեր Յուսուֆ Սարվատովը բազմիցս հայտարարել է. «Եթե Վրաստանը չհամաձայնվի ընդունել մեզ, մենք կուղևորվենք

---

[666] Նույն տեղում

[667] Новикова Г. В , Дашко В.И , Самцхе-Джавохети в эпицентре интересов /Грузия проблемы и перспективы развития/, РИСИ, с. 251

[668] Նույն տեղում:

Թուրքիա և կսպասենք այնտեղ, մինչև կստեղծվի հարմար իրադրություն»[669]:

Եթե 1990-ականներին մեսխեթցի-թուրքերի հարցերով զբաղվում էր ՄԱԿ-ի՝ փախստականների հարեցրով գերագույն կոմիսարը, որը իր պարտավորություններն իրականացնում էր Վրաստանի հատուկ հանձնաժողովների հետ համատեղ, ապա Եվրախորհուրդ մտնելուց (1999 թ.) հետո Վրաստանի առջև դրվեցին նոր պարտավորություններ: Երկու տարվա ընթացքում (մինչև 2001 թ.ապրիլը) Վրաստանը պետք է ստեղծեր իրավական դաշտ՝ ավելի քան 300 հազար մարդու հայրենադարձության համար, որը պետք է իրականացվեր հետագա 10 տարիների ընթացքում: Սակայն եղած ճգնաժամային իրավիճակը ստիպում էր Վրաստանին Եվրոխորհրդին ներկայանալ այդ ժամկետը երկարաձգելու խնդրանքով:

Մեսխեթցի-թուրքերին վերադարձնելու գործընթացն այսօր նոր թափ է ստանում: Դրա վրա պնդում են իրենք՝ թուրք-մեսխեթցիների այս կամ այն կազմակերպությունների ներկայացուցիչները: Դրա վրա պնդում է Եվրոխորհուրդը: Դրան ակտիվորեն աջակցում են Թուրքիան եւ Ռուսաստանը: Վրաստանի պարագան այս գործընթացում մի փոքր այլ է: Վրաստանը շահագրգռված է նրանց վերադարձին, սակայն այնքան էլ չի ողջունում նրանց որոշ կազմակերպությունների հետևորդների (հատկապես «Վաթանի») կոմպակտ խմբերով վերաբնակեցմանը Թուրքիային սահմանամերձ շրջաններում: Դրա պատճառը պարզ է այս շրջաններում կստեղծվեն անջատողական ձգտումների նոր օջախներ: Վրաստանը ավելի շատ հակված է նրանց բնակեցնելու երկրի տարբեր վայրերում (և հատկապես այլազգիներով բնակեցված շրջաններում) և ձեռնամուխ լինել նրանց վրացականացման գործընթացին[670]: Սակայն ի նկատի ունենալով,

---

[669] Նույն տեղում, էջ 252:

[670] 2006 թ.ապրիլի 27-29-ին Թբիլիսիում «Հարավային Վրաստանից բռնագաղթված բնակչություն. վերաբնակեցումն սկսվում է» թեմայով

որ Վրաստանի դերակատարությունը այս կամ այն հարցում այնքան էլ էական չէ (շատ անգամներ Վրաստանը ստիպված է կատարելու դրսի ուժերի թելադրանքը), կարելի է ասել, որ այսօր Սամցխե-Ջավախք երկրամասին լրջորեն սպառնում է թուրք-մեսխեթցիների վերադարձի վտանգը: Ինչո՞վ է «վտանգավոր» այն: Նախ նկատի ունենալով, որ վերջիններիս գնալուց հետո նրանց տեղերը դատարկ չեն մնացել, այլ բնակեցվել են հոծ խմբերով վրացիներով, որոնք իրենց հերթին շատանալով, հայերի հետ միասին այսօր տարածաշրջանում մեծ թիվ են կազմում: Հետևաբար, Սամցխե-Ջավախքի բնակեցման այդ «բացը» լիովին լրացված կարելի է համարել և թուրք-մեսխեթցիների վերադարձով կարող է առաջանալ բնակֆոնդի հսկայական պակասորդ (այդ մասին բազմիցս նշել են նաև վրաց ղեկավար անձինք): Գումարած այս ամենին, մեսխեթցի-թուրքերը իրենք ևս, ունենալով բնական արագ աճ, աքսորվելուց հետո գրեթե քառապատկվել,

---

կազմակերպված խորհրդաժողովում (որին մասնակցում էին Վրաստանի համապատասխան հարցերով զբաղվող գերատեսչությունների, միջազգային կառույցների Վրաստանյան ներկայացուցիչներ) նույնպես շոշափվեցին վերաբնակեցումը փուլ առ փուլ և, ամենագլխավորը Վրաստանի ողջ տարածքում իրականացնելու հարցերը Մասնավորապես, Վրաստանի հակամարտությունների կարգավորման հարցերով պետական նախարար, 1944 թ-ին հարավային Վրաստանից բռնագաղթվածների հարցերով պետական հանձնաժողովի նախագահ Գիորգի Խաինդրավայի կողմից նշվեց, որ վերաբնակեցման գործառույթի ժամանակային տևողությունը նախ հնարավորություն կտա շատ ավելի լավ նախապատրաստել դրա իրականացումը, երկրորդը, կնպաստի տեղի բնակչության շրջանում վերաբնակեցվածների ներծուլման գործընթացին

Վրացական շահագրգիռ կողմերի հավաստմամբ, վերաբնակեցման խնդրում առաջադրված է ևս մեկ կարևոր նախապայման տարբեր երկրներում ապրող մեսխեթցիների հետ հանդիպումները, ըստ Գ Խաինդրավայի, խոսում են այն մասին, որ նրանց մի մասը ոչ միայն կտրված է վրացական միջավայրից, այլև իրենց վրացիներ չեն համարում Բնականաբար «Վրաստան կվերադառնան միայն նրանք, ովքեր այն համարում են իրենց հայրենիքը (այսինքն իրենց կհամարեն էթնիկ վրացիներ – Վ Ս)» (Տես «Վրաստան», 06 05 2006)

հնգապատկվել են (հասնելով գրեթե 400 հազարի), և Սամցխե-Ջավախքի նույնիսկ (ներառյալ նաև Բորժոմը) 200.000-անոց բնակչությունը պարզապես անկարող է տեղավորել ժողովրդական այդ մասասներին: Սա հարցի լուծման միայն տեխնիկական անհնարինության կողմն է: Մյուս կողմից, շուրջ 115.000 հայերով բնակեցված նահանգում վերջիններիս վերադարձով կստեղծվի ծանր բարոյահոգեբանական, կոնֆլիկտային մթնոլորտ: Դա չեն բացառում նաև իրենք՝ հայերի նկատմամբ ոչ այնքան բարյացակամորեն տրամադրված թուրք-մեսխեթցիները: Նշենք օրինակ, որ 2003 թ. Արևմտյան Վրաստանում ապրող մեսխեթցի թուրքերի մի քանի կազմակերպություններ Սամցխեում վերաբնակվելու կապակցությամբ սոցիոլոգիական հարցում են անցկացրել իրենց հայրենակիցների շրջանում: Հարցմանը ենթարկված 70 ընտանիքներից վերաբնակվելու ցանկություն ուներ 63-ը, 6 ընտանիք չուներ տեղափոխվելու տրամադրություն, իսկ 2 ընտանիք դեռ չէր կողմնորոշվել[671]: Հատկանշական էր նաև այն հարցումը, թե մեսխեթցիները ում հետ կարող են հավանական կոնֆլիկտ ունենալ: 41 ընտանիք ենթադրում էր, որ կոնֆլիկտ կունենա հայերի հետ, 16 ընտանիք՝ ադիգների հետ, 5-ը՝ վրացիների: Հավանական կոնֆլիկտի պատճառների մասին հարցմանը պատասխանելիս 26 ընտանիք կարծում էր, որ կոնֆլիկտները կլինեն հողային բնույթի, 17-ը՝ դրանք կլինեն կրոնական բնույթի: Կենցաղային բնույթի կոնֆլիկտ են կանխատեսում 15 ընտանիք, էթնիկական՝ 8, լեզվական՝ 4, իրավական՝ 2, ընտանիքներ[672]:

Իհարկե, կոնֆլիկտածին երևույթները կստիպեն երկրամասի հայերին էլ ավելի արագորեն հեռանալու երկրամասից: Իսկ երկրամասի հայաթափումը (և նույնն է՝ թուրքացումը) հղի է էլ ավելի մեծ վտանգներով, և առաջին հերթին հենց՝ ՀՀ համար: Ի նկատի ունենալով, որ Սամցխե-Ջավախքին

---

[671] «Երկիր» 31 հունվար – 6 փետրվար, 2003
[672] Նույն տեղում

հարակից Դմանիսի, Մառնեուլի (մինչև Ադրբեջանի սահմանը) շրջանները հոծ խմբերով ադրբեջանաբնակ են, ապա Սամցխե-Ջավախքի թուրքանալով ՀՀ կշրջափակվի 100 %-ոց թուրքական օղակով, ինչը մեկնաբանման կարիք չունի: Միայն սա բավական է (անգամ չհաշված Սամցխե-Ջավախք թռեղք հայրենական տարածքների կորուստը), որպիսի մեծ ուշադրություն դարձվի հայերի տեղերում ամրապնդման խնդրին և թուրք-մեսխեթցիների վերադարձի խնդիրը դիտարկել որպես ՀՀ ազգային անվտանգության խնդրին սերտորեն առնչվող գործընթացներից մեկը:

ե) Ռուս-դուխոբորների արտագաղթի խնդիրը և դրանից հետո ստեղծվող իրավիճակը որպես Սամցխե-Ջավախքի կարևորագույն հիմնախնդիր:

Ջավախքի անցյալի ու ներկայի մասին խոսելիս չի կարելի շրջանցել ռուս դուխոբորներին, որոնք շուրջ մեկ ու կես դարից ավել է, ինչ բնակվում են Ջավախքում (Նինոծմինդայի շրջանում):

Նախ ովքե՞ր են նրանք, և ինչու՞ հայտնվեցին Ջավախքում: Եթե մեսխեթցի-թուրքերի պարագայում մեծ դժվարություն էր առաջանում այս հարցին պատասխանելու առումով, ապա ռուս-դուխոբորների պարագան մի փոքր այլ է և կարելի է հստակ նշել. վերջիններս ռուսներ են, պատկանում են որոշակի կրոնական աղանդավորական հոսանքի: Դուխոբորների (հոգեմարտիկներ) աղանդը առաջացել է Ռուսաստանում, Վորոնեժի նահանգի պետական գյուղացիների շրջանում 18-րդ դարի երկրորդ կեսին՝ որպես բողոք ընդդեմ ավատական ճորտատի-

ական կարգերի· Աղանդի հետևորդներն իրենց համարում էին «մարտնչողներ հանուն հոգու», այստեղից էլ աղանդի անվան ծագումը: Դուխոբորները չեն ճանաչում հոգևորականության, տաճարները, սրբապատկերները, խորհուրդները, պասերը, վանականության: Աստված ընկալվում է որպես աշխարհում գոյություն ունեցող «գերիմաստություն», «բարիք», «սեր» և հենց այդ հատկությամբ էլ առկա է հավատացյալ մարդու մեջ: Դուխոբորների դավանանքի սկզբնաղբյուր էր հանդիսանում այսպես կոչված «կենդանական գիրքը» (կյանքի գիրքը), այսինքն՝ բերնեբերան հաղորդվող ավանդույթները: Այն բաղկացած էր հարցերից ու պատասխաններից, սաղմոսներից, փոքրիկ ոտանավորներից, իմաստախոսություններից ու նզովքներից: Դուխոբորները ընդունում են տասը պատվիրանները, հավատում են հոգու անմահությանը, ժխտում դրախտը և դժոխքը: Այժմ նախկին Խորհրդային Միության երկրներից որոշներում գոյություն ունեն դուխոբորների աննշան խմբեր[673]:

18-րդ դարի 60-ական թվականներից մինչև 19-րդ դարի սկիզբը, դուխոբորությունը լայն մասշտաբով տարածում գտավ պետական գյուղացիության մեջ: Վերջիններս հազարավոր համախոհներ գտան Վորոնեժի, Տամբովի, Եկատերինոսլավի, Խարկովի, Տավրիկյան, Աստրախանի, Սամարայի, Պենզայի, Ռյազանի նահանգներում: Դուխոբորների և մոլոկանների աշխարհայացքի հիմքում ընկած էր «Հոգու և ճշմարտության մասին հասկացությունը, որը հակադրվում էր ուղղափառությանը: Դուխոբորները չէին ընդունում ճորտատիրական հարաբերությունների անհրաժեշտությունը: Նրանք առաջնորդվում էին քրիստոնեության հայտնի «Մարդը մարդու բարեկամն է» թեզով: Ըստ նրանց՝ մարդիկ եղբայրներ են, նրանց պատկանող ունեցվածքը ընդհանուր է: Դուխոբորներն իրենց գաղափարախոսության մեջ բավականին սոցիալական մոտիվներ էին շոշափում:

---

[673] Клибанов А И , Из мира Религиозного сектантства, М . 1974, с 134

Ի տարբերություն դուխոբորների, մոլոկանները չեն մերժում եկեղեցական խորհրդատվության ուսմունքը: Նրանք պահպանել են մեռածների համար աղոթքը և ի հակադրություն դուխոբորների, իրենց գաղափարախոսությունը հիմնավորում են ոչ թե «ներքին հայտնության», այլ Աստվածաշնչի վրա:

Խլիստների (քրիստոնեահավատներ, աղանդը առաջացել է Ռուսաստանում բահրատու գյուղացիների շրջանում 17-րդ դարի երկրորդ կեսին: Այդ աղանդի բնորոշ գծերն են. ուղղափառության «հոգևոր» ընկալումը, նրա արտաքին ծիսակատարություններից հրաժարման հետ մեկտեղ եկեղեցու ձևական ըմբռնումը և ժամերգության հաճախումը, աստծո հետ հավատացյալի միստիկական միավորման հավատը, մարդու կողմից այնպիսի կատարելության հասնելու հնարավորության հավատը, երբ նա դառնում է «Քրիստոս»)[674] ու դուխոբորների նման մոլոկանները ելնում են «Աստծո որդիների՝» մարդկանց հնարավորությունից: Նրանք բարի գործ կատարելու և երկրի վրա «աստծո թագավորություն» ստեղծելու կողմնակիցներ էին: Ի հակադրություն դուխոբորների, մոլոկանները իրենց գաղափարախոսության մեջ ավելի քիչ սոցիալական մոտիվներ են շոշափում. Նրանք եկեղեցու դեմ պայքարում հիմնվում էին վաղ քրիստոնեության ժամանակաշրջանի նախնական դոգմաների վրա:

Մոլոկանությունը ևս ռուսական հին աղանդներից մեկն է, որի ձևավորումը տեղի է ունեցել 18-րդ դարում: Աղանդի ծագման, նրա անվան վերաբերյալ կան երեք կարծիքներ: Ըստ ոմանց՝ մոլոկաններն այդպես են կոչվում, որովհետև իրենց ուսմունքը համարում են «МОЛОКОМ ДУХОВНЫМ» («Հոգևոր սնունդ»): Մյուսների կարծիքով, մոլոկաններն իրենց անվանումն ստացել են Մոլոչնայա գետի (Նովոռոսիյսկի նահանգի Մարիուպոլի գավառ) երկայնքով բնակություն հաստատելուց հետո: Երրորդ կարծիքի համաձայն՝ աղանդավորները մոլոկան-

[674] Նույն տեղում, էջ 134.

ներ կոչվեցին այն ժամանակից, երբ պատուց օրերին՝ չորեքշաբթի և ուրբաթ, սկսեցին կաթ խմել:

Որոշ ուսումնասիրողներ վերջին կարծիքն ավելի հավանական են համարում, քանի որ իրենց ուսմունքը հոգևոր սնունդ էին համարում նաև այլ ազանդի ներկայացուցիչներ: Մյուս կողմից «մոլոկաններ» անվանումն ավելի շուտ է հանդես եկել, քան մոլոկանները վերաբնակվել են Մոլոչնայա գետի երկայնքով[676]:

Ահա այսպիսին էր այս ազանդների ընդհանուր բնութագիրը, երբ վերջիններիս որոշ ներկայացուցիչներ 19-րդ դարի կեսերին (1941-1943 թթ.) Ռուսաստանի Տավրիկյան և այլ նահանգներից վերաբնակեցվեցին Կովկաս, ուր նրանց մի մասը տեղ գտավ ներկայիս Նինոծմինդայի (Բոգդանովկա) շրջանի տարածքում: Խորհրդային տարիներին Ախալցխայի և Ախալքալաքի գավառները Վրաստանի կազմում մնալուց հետո նորաստեղծ հայ-վրացական սահմանին մերձակա Բոգդանովկայի շրջանում բնակվող ռուս-դուխոբորները ինքնաբերաբար դարձան սահմանաբաժան շղթա՝ հայաբնակ Ջավախքի և Հայկական ԽՍՀ-ի միջև:

ԽՍՀՄ փլուզման տարիներին վրացական ղեկավարությունը վրաց ազգայնականների ակտիվ ներգործությամբ այս տարածքում սկսեց ծրագրել ու իրականացնել մի շարք միջոցառումներ: Ինչպես արդեն այդ մասին բազմիցս խոսել ենք մեր աշխատանքի առաջին գլուխներում, ստեղծվեց Մ.Կոստավայի հիմնադրամը, որը սկսեց տներ առնել ռուս-դուխոբորների գյուղերից և տրամադրել այստեղ վերաբնակեցվող վրացիներին: Այս միջոցառումն իրականացվում էր ռուս-դուխոբորների 1989-1991 թթ. առաջին զանգվածային արտագաղթին զուգահեռ, երբ այս ժամանակահատվածում Զ.Գամսախուրդիայի վարած ազգայնամոլական քաղաքականության արդյունքում ռուս-դուխոբորների 7000-ոց համայնքի շուրջ կեսը լքեցին իրենց բնակատեղիները:

---

[675] Հայթյան Ա.Խ , Հայաստանի ռուս վերաբնակները, Ե., 1989, էջ 29:

Մ.Կոստավայի հիմնադրամի միջոցով գնվեց շուրջ 200 տուն, բերվեցին վրացիներ՝ տարբեր վայրերից: Սակայն կարճ ժամանակ անց, չդիմանալով բնակլիմայական դաժան պայմաններին, վերջիններս հեռացան այնպես, ինչպես եկել էին:

Պետական սահմանի երկայնքով վրացական հոծ զանգված տեղակայելու՝ Վրաստանի իշխանությունների հետագայի ծրագրերը ևս չտվեցին արդյունք. վրացիներ չեկան այստեղ և՛ շրջանը աքսորի գոտի հայտարարելուց հետո, և՛ ժամանակավոր արտակարգ շտաբի միջոցով այստեղ տարերային աղետներից տուժածներ վերաբնակեցնելու վերաբերյալ ծրագրեր կազմելուց հետո (այս մասին ևս մանրամասն խոսել ենք մեր նախորդ գլուխներում): Պատճառը հիմնականում բնակլիմայական խիստ ծանր պայմաններն են, մյուս կողմից կար նաև տեղի բնակչության (հիմնականում հայերի) դիմադրությունը ուղղված ընդդեմ վրացական այս անօրինականությունների. Հայտնի է, օրինակ, որ դեռ այն ժամանակ, երբ Մ.Կոստավայի հիմնադրամի միջոցով այստեղ սկսվել էր տների առքը, «Ջավախք» ժողովրդագրական շարժում կազմակերպությունը նույնպես ձեռնամուխ եղավ տներ գնելուն, որոնք տրամադրվում էին Արցախյան պատերազմին մասնակցած, 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժից տուժած հայերին[676]:

Ռուս-դուխոբորների Բոգդանովկայի շրջանից արտագաղթելու երկրորդ փուլը տեղի ունեցավ 1999 թ., երբ այս առթիվ ՌԴ վարչապետ Եվգենի Պրիմակովը ստորագրեց հատուկ հրաման, հատուկ որոշումով հանդես եկավ Պետական Դուման: Վերաբնակեցմանն օգնեց նաև Միգրացիայի Միջազգային կազմակերպությունը (International Organization for Migration [IOM]) և ռուսաստանյան արտակարգ իրավիճակների վարչության տրամադրած ավտոբուսներով 1999 թ. հունվարի 29-ին դու-

---

[676] Григорян М., Последние дни духоборов в Грузии./Institute for War and Peace Reporting (IWPR)/, Кавказский информационный еженедельник NN253, 254, сентябрь, 2004, с 17-18.

խոբորները, համայնքի առաջնորդ Լյուբա Գոնչարովայի գլխավորությամբ ճանապարհ ընկան դեպի իրենց հայրենիք, որի վերջնական վայրը Բրյանսկի շրջանն էր[677]:

Ներկայումս ռուս-դուխոբորների համայնքի առաջնորդ Զումաևայի խոսքերով, «Գորելովկայում (ռուս-դուխոբորական գյուղ Նինոծմինդայի շրջանում, Աշոցք-Նինոծմինդա ճանապարհի վրա – Վ.Ս.) և հարևան գյուղերում մնացել են 700-ից պակաս ռուս-դուխոբորներ. Նրանցից շատերը ևս ցանկանում են հեռանալ: Նրանք դիմել են Ռուսաստանի դեսպանատուն՝ հեռանալու հարցում իրենց օգնելու համար»[678]:

Ռուս-դուխոբորների խնդրի մեջ հետաքրքրող կողմն այն է, որ, չկարողանալով այս շրջանը բնակեցնել ոչ հայ բնակիչներով Վրաստանի կառավարությունը հետագայում ձգտում էր այս գոտում ամրապնդել գոնե ռուսներին և վերջիններիս համար բնավ էլ ցանկալի չէր ռուս-դուխոբորների հեռանալը այս վայրերից: Եվ ահա վրաց գիտական–հասարակական և քաղաքական լայն շրջանակներ ռուս-դուխոբորների այս վայրերից հեռանալու պատճառները սկսեցին որոնել տեղի հայերի հետ ունեցած կոնֆլիկտների, հակասությունների մեջ: Բանն այն էր, որ շատ հայեր, ինչպես իննսունականներին, այնպես էլ այժմ, Նինոծմինդայի շրջանի՝ շրջկենտրոնից հեռու գտնվող և ձրմռանն անանցանելի դառնող գյուղերից (օրինակ՝ Փոկայից) եկան և բնակություն հաստատեցին ճանապարհին մոտիկ գտնվող գյուղերում, որտեղ հիմնականում ապրում էին ռուս-դուխոբորներ: Բնականաբար, գործունյա հայերի այս գյուղերում հաստատվելու ընթացքում կծագեին որոշակի խնդիրներ, բայց, մեր կարծիքով, ոչ այնպիսիք, որոնք կստիպեին ռուսներին թողնել ու հեռանալ իրենց բնակատեղիներից: Հայերի և ռուսների միջև եղած այսպես կոչված «հակասություններն» ունեին մեկ այլ՝ հոգեբանական պատճառ: Ինչպես գիտենք պատ-

---

[677] Նույն տեղում, էջ 19
[678] Նույն տեղում·

մությունից, ռուս-դուխոբորներն իրենց գաղափարակից-եղբայրակիցներն ունեն նաև Հեռավոր Կանադայում, որոնք 19րդ դարի վերջին, դեռևս Ռուսաստանում գտնվելու ժամանակ, ծանոթանալով ռուս գրող Լև Տոլստոյի գաղափարներին, հրաժարվեցին ծառայելու ցարական բանակում. Եվ այս պատճառով նրանցից շատերը աքսորվեցին Սիբիր, իսկ մի մասն էլ Լև Տոլստոյի ջանքերով և անգլիացիների օգնությամբ հայտնվեց Կանադայում[679]: Ահա այս մարդիկ են, որ ներկայումս օգնում են իրենց ջավախքաբնակ գաղափարակիցներին: Իսկ սոցիալական ծանր պայմանում ապրող և իր չարքաշ աշխատանքով փող վաստակող հայ գյուղացին բնականաբար ինչ-որ տեղ կարող է «ըստ հարգի» չվերաբերվել «կողքից հենց այնպես գումար ստացող» ռուս-դուխոբորին.

Դեռևս Է. Շևարդնաձեի տարիներին վրաց առանձին ազգագրագետներ հանդես եկան հայերի նկատմամբ անհիմն մեղադրանքներով[680]: Այդ մեղադրանքները վրաց առանձին քաղաքական շրջանակներ շարունակում են նաև այսօր. Փախստականների և վերաբնակեցման գործերով Վրաստանի նախարար Էթեր Աստեմիրովան այդ առթիվ նշում էր. «Գլխավոր պատճառը, որ նրանք (ռուս-դուխոբորները – Վ.Ս.) հեռանում են, որքան իրենց Հայտնի է, տեղացի հայ բնակչության հետ խնդիրներ ունենալու մեջ է: Ինչ վերաբերում է նրանց մտահոգություններին՝ վրացերեն լեզվի ու դպրոցի վերաբերյալ, այստեղ նրանք ոչ մի հիմք չունեն: ...Այս հարցում կառավարությունը ամբողջովին չեզոք դիրք է գրավում: Դուխոբորներին չեն օգնում՝ ո՛չ հեռանալու, ո՛չ մնալու: Եթե ինչ-որ խնդիր կա, մենք կփորձենք լուծել այն, իսկ այժմ դեռ չգիտեմ, դուխոբորների մասին մեզ մոտ ոչ մի տեղեկություն չու-

---

[679] Աբեղեան Ա, Մենք եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականութեան խնդիրներ), Հայրենիք, Բոստոն, թիվ 2, դեկտեմբեր, 1928, էջ 117.

[680] «Հզոր Հայրենիք», 14 04 1999·

նենք»[681]: Որքան էլ զարմանալի է, որ նախարարը ոչ մի տեղեկություն չունենալով հանդերձ՝ փորձում է հիմնավորել հայերի մեղսակցությունը դուխոբորների արտագաղթի գործում, այնուամենայնիվ իր խոսքի մեջ նշում է նրանց արտագաղթի «իրական» պատճառներից մեկը:

«Մ.Սահակաշվիլու իշխանության գալը բոլորիս վախեցնում է, բոլորը խուճապի մեջ են: Մարդիկ տեսնում են, թե ինչ է կատարվում Օսեթիայում և վախենում են: Ահա այժմ բարձրացվում է այն հարցը, որ դպրոցները պիտի դառնան վրացերեն լեզվով, և դա վախեցնում է: Խուճապ կա, որ սկսած 2006 թ. հիմնական առարկաները դասավանդվելու են վրացերեն լեզվով, և մեր երեխաները չեն կարողանա սովորել», մտահոգված նշում է ռուս-դուխոբորների համայնքի առաջնորդ Տատյանա Զումաեվան[682]:

Ահա այսպիսի իրավիճակ է այսօր ստեղծվել ռուս-դուխոբորների խնդրի շուրջ: Իսկ Վրաստանը չի դադարում իրականացնել Նինոծմինդայի շրջանը ոչ հայ ազգաբնակչությամբ բնակեցնելու իր վաղեմի ծրագրերը: Նոր դարասկզբին այս ծրագրերը նոր թափ ստացան: 2002 թ. սեպտեմբերին Վրաստանի կառավարության փախստականների հիմնադրամի հաշվին Նինոծմինդայի Սպասովկա գյուղում 12 տուն գնվեց՝ այս անգամ աջարների համար, որտեղ տեղավորվեցին 24 երիտասարդ ընտանիքներ: Նշենք նաև, որ 1994 թ. Սպասովկայում վերաբնակեցված 45 աջարների թիվը մինչև 2002 թ. սեպտեմբերը հասել էր արդեն 94-ի[683]:

Այս գործընթացն այսօր՝ և՛ Ջավախք-Հայաստան արգելապատնեշ ստեղծվելու առումով, և՛ երկրամասի էթնոժողովրդագրա-

---

[681] Григорян М , Последние дни духоборов в Грузии, IWPR, с 19

[682] Նույն տեղում·

[683] Ստեփանյան Խ , Ջավախքը մեկ տարում, «Դրոշակ», թիվ 4, հոկտեմբեր, 2002, էջ 56

բական պատկերը փոխելու առումով, Ջավախքի առջև նետված մարտահրավերներից մեկն է

զ) Ռուսական ռազմաբազաների դուրս բերումից հետո ստեղծվելիք իրավիճակը որպես Սամցխե–Ջավախք–Թուեղքի և ՀՀ-ի դեմ նետված լուրջ մարտահրավեր

Ամփոփ ձևով անդրադառնանք նաև մեկ ծանրագույն հիմնախնդրի, որն առաջանում է Ջավախքում՝ ռուսական ռազմաբազաները դուրս բերելուց հետո: Կանգ չառնելով այս ռազմաբազայում աշխատող հարյուրավոր հայ ընտանիքների խնդրին, որոնք կամ դառնում են գործազուրկ կամ տեղափոխվում են Ռուսաստան (երկու դեպքում էլ հարցը խիստ մտահոգիչ է), հարկ է նշել այստեղ առաջացող բարոյահոգեբանական մթնոլորտի մասին. ի՞նչ է լինելու ռազմաբազաների դուրս բերելուց հետո այդ զինվորական ավանների ճակատագիրը, ո՞վ է դառնալու Ջավախքի (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների) շուրջ 90 հազար հայության անվտանգության երաշխավորը Սրանք հարցեր են, որոնց դեռևս չկան պատասխաններ: Իսկ ապագայի այդ անորոշ իրավիճակը կարող է խիստ ծանր անդրադառնալ Ջավախքի (ինչու չէ նաև Սամցխեի և Թուեղքի) Հայության հոգեբանական ապրումների վրա: Այս ամենն ավելի մտահոգիչ են դառնում, երբ արդեն Վրաստան-ՆԱՏՕ ակտիվացող հարաբերություններում հետզհետե պարզորոշ ուրվագծվում է Թուրքիայի հնարավոր ռազմական ներկայությունը Վրաստանում: Վրաստանի կախումը (ռազմական օգնության առումով) ՆԱՏՕ-ից (հետևաբար նաև՝ Թուրքիայից) առավել պարզորոշ է դառնում՝ ելնելով այն հանգամանքից, որ Վրաստանը իր ունեցած ռազմական ստորաբաժանումներով և իր բյուջեից զինված ուժերին հատկացվելիք գումարով բացարձակապես ի զորու

չէ պահելու սեփական երկրի անվտանգությունը[684]*: Դա երևում է հատկապես ստորև բերվող համեմատությունից. «դեպի ՆԱՏՕ ձգտող Վրաստանը պետք է նաև բացի քաղաքական կամքից, նատոյական չափանիշներին համապատասխանեցնի և իր զինված ուժերը» (ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ռ.Կոենի խոսքերը)*[685]*, սակայն այդ չափանիշներով վարձատրվող բանակ ունենալու համար (միայն Վրաստանի մոտավոր թվով նախատեսվող մոտ 42.000 զինվորներին վարձատրելու համար) Վրաստանից կպահանջվի 7,2 մլրդ դոլարի ռազմական բյուջե՝ որպիսի համապատասխանի ամերիկյան չափանիշներին, 6 մլրդ ռազմական բյուջե՝ անգլիական չափանիշների համար, 4 մլրդ՝ ֆրանսիականի և գերմանականի, 600 մլն դոլար՝ թուրքական չափանիշների համար*[686]*: 2002 թ. նախատեսվող քանակով (մոտ 42.000) զինվորներին վարձատրելու համար Վրաստանի բյուջեն թույլ էր տալիս իր յուրաքանչյուր զինվորին վարձատրել տարեկան մոտ 1000 դոլար, այն դեպքում, երբ ԱՄՆ-ն իր յուրաքանչ-*

---

[684] Վրաստանի դուրս գալով Հավաքական անվտանգության և ԱՊՀ-ի արտաքին սահմանների համատեղ պահպանության պայմանագրերից (Վրաստանն այդ առթիվ պատճառաբանում էր, որ այդ պայմանագրերը չեն համապատասխանում նոր աշխարհաքաղաքական իրողություններին) էլ առավել լայն դաշտ բացվեց ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և Թուրքիայի առջև հանձինս Վրաստանի: Հատկանշական է, որ 1998-2002 թթ ընթացքում Թուրքիան շուրջ 15 միլիոն դոլար էր տրամադրել վրացական բանակի կարիքների համար (տես Ղազարեան Է , Թուրքիա- Վրաստան-Ադրբեջան փոխ յարաբերութիւնների հեռանկարի հարցի շուրջ, Հայրենի Ջաւախք, էջ 424) Իսկ գրեթե նույն ժամանակահատվածում Վրաստանի սահմանների խսկողության ապահովման համար ԱՄՆ-ն ընդհանուր առմամբ հատկացրել է շուրջ 72 միլիոն դոլար: Վրաստանի համար այս գումարների ահռելի չափը առավել ցայտուն ընդգծելու համար հավելենք, որ Վրաստանի ռազմական բյուջեն 1998 թ. կազմել է ընդամենը 11 միլիոն դոլար, իսկ 1999 թ 24 միլիոն (տես Միխայլով Ս Ա , Վրաստանի և ԱՄՆ-ի յարաբերութիւնները, Հայերնի Ջաւախք, էջ 439

[685] Захаров В М , Вооружение силы Грузии, /Грузия Проблемы и перспективы развития/, /РИСИ/, с 38

[686] Նույն տեղում, էջ 36

յուր զինվորին վարձատրում է տարեկան մոտ 180 000 դոլար, Անգլիան՝ 150.000, Ֆրանսիան և Գերմանիան՝ 100-ական հազար, Թուրքիան՝ 15.000 դոլար[687]: Դժվար չէ հաշվարկել, որ եթե Վրաստանն ուզենա իր զինվորներին վարձատրել ու կրթել ՆԱՏՕ-ի չափանիշների համապատասխան, ապա կկարողանա իրեն թույլ տալ ունենալու բանակ՝ բաղկացած շուրջ ... 200 զինվորից: Մեծ չի լինի այս ամենի տարբերությունը, եթէ նկատի ունենանք, որ 2002 թ-ի համեմատ (իշխանափոխությունից հետո) Վրաստանի բյուջեն ավելացել է մի քանի անգամ[688]: Այստեղից պարզ է դառնում ռազմական հարցերում Վրաստանի՝ որևիցե մի երկրի ապավինելու անխուսափելիությունը, իսկ այդ երկրներից ամենահավանականը Թուրքիայի տարբերակն է, որը կազմ ու պատրաստ կանգնած է Վրաստանին օժանդակելու ոչ միայն տնտեսապես ու ֆինանսապես, այլև ռազմական առումով. Նշենք նաև, որ Թուրքիան ունի Վրաստանում ռազմական ներկայություն ունենալու ևս մեկ այլ նախադրյալ. դա Բաքու-Ջեյհան նավթամուղի անվտանգությունն ապահովելուն ուղղված գործողություններն ի կատար ածելն է, երբ դրա պատրվակի տակ Սամցխե-Ջավախք-Թռեղքում կարող է սկսվել թուրքական զորքերի անարգել մանյովրը, ինչը կարող է իրավիճակի կտրուկ սրման պատճառ դառնալ:

Վերջում ավելացնենք, որ Ջավախքի ժողովուրդը, արդեն համարյա շուրջ 200 տարի իր կողքին ունենալով ռուսական այս

---

[687] Նույն տեղում

[688] Վրաստանի պաշտպանության նախարար Ի Օքրուաշվիլու հավաստմամբ, այսօր մեկ զորակոչիկի տարեկան աշխատավարձը կազմում է 129 6 լարի (72 դոլար), իսկ պայմանագրով ծառայողինը 5 688.0 լարի (3160 դոլար)· Ընդհանուր առմամբ, ժամկետավոր ծառայության զինծառայողին պահելու համար այսօր Վրաստանը տարեկան ծախսում է 1803,22 լարի (1001 դոլար), իսկ պայմանագրայինի համար 7606,48 լարի (4226 դոլար). Ավելացնենք նաև, որ մինչև 2009 թ վերջը նախատեսված է վրացական բանակը փոխադրել պայմանագրային ծառայության զորակոչը համարելով խորհրդային վերապրուկ (տես «Վրաստան», 06 05 2006)·

ռազմաբազաների ներկայությունը, ի սկզբանե կտրականապես դեմ է եղել վերջիններիս դուրս բերմանը իր բնօրրանից, դա Ջավախքցիները արտահայտել են բազմահազարանոց միտինգների, դիմումների, նամակների, բողոքների ու կոչերի տեսքով[689]*: 1918-1921 թթ.ողբերգական իրադարձությունները Ջավախքի ժողովրդին լիովին հիմք են տալիս հանդես գալու նման պահանջներով...*

է) Հայ երիտասարդությունը և Ջավախքի հիմնախնդիրները[690]

Կարելի է ամբողջ ժամանակ խաբել ազգի որոշ հատվածի, կարելի է որոշ ժամանակ խաբել ամբողջ ազգին, բայց անհնար է խաբել ողջ ազգին ամբողջ ժամանակ:

Ա.Լինքոլն

Հայաստանից դուրս, աշխարհով մեկ սփռված հայությունն ունի որպես առաջնահերթություն հայապահպանության հիմնախնդիր: Իսկ դրա լուծման եզակի միջոցներն են ամուր պահել կապը մայր հայրենիքի հետ և սերունդներին կրթել ու դաստիարակել հայկական մտածողությամբ:

Ջավախքում (Ախալքալաք, Նինոծմինդա), Սամցխեում (Ախալցխայի գավառ) և Ծալկայում (Թռեղք գավառ) իրավիճակը մի փոքր այլ է: Այստեղ կան միաժամանակ և՛ հայապահպանության, և հայրենապահպանության խնդիրներ: Հետևաբար, առաջնահերթ խնդիր է այս երկրամասում դառնում հայ նոր սե-

---

[689] Обращение, от имени участников многотысячнего митинга жителей Джавахка, состоявшейся 12 сентября 2002 г. Президенту России госп. В В.Путину, президенту Грузии госп Э.А Шеварднадзе, президенту Армении госп Р С.Кочарян, 12 09 2002 г , г. Ахалкалаки.

[690] Հոդվածը տպագրվել է «Ջավախքը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ», Ե , 2006, խորհրդաժողովի նյութերի ժողովածուում Այն մեջ ենք բերում մասնակի լրացումներով.

րոնդի հայեցի դաստիարակությունը և այդ հողի վրա ամուր պահելը:

Նախ, ի՞նչ հիմնախնդիրներ ունի այսօր Սամցխե-Ջավախքում ապրող նոր սերունդը: Այս երկրամասում (և հատկապես գյուղերում) իսպառ բացակայում են մանկապարտեզները: 2004 թ. դրությամբ ամբողջ Սամցխե-Ջավախքում գործում է 253 դպրոց (47 տարրական, 63 թերի միջնակարգ, 143 միջնակարգ) 36295 աշակերտներով և 4569 ուսուցիչներով:

Դպրոցներից 132-ը վրացական են (15963), 104-ը՝ հայկական (17147 աշակերտ), 4-ը՝ ռուսական (1264 աշակերտ), 6-ը՝ վրաց-հայկական (629 աշակերտ), 4-ը՝ վրաց-ռուսական (1192 աշակերտ), 2-ը՝ ռուս-հայկական (62 աշակերտ), 41-ը՝ վրաց-ռուս-հայկական (40 աշակերտ): Ադիգենի շրջանում կա 44 վրացական, 1 վրաց-հայկական, Ասպինձայում՝ 21 վրացական, 1 հայկական, Ախալքալաքում՝ 8 վրացական, 56 հայկական, 1 ռուսական, 3 վրաց-հայկական, Ախալցխայում՝ 28 վրացական, 15 հայկական, 1 վրաց-հայկական, 2 վրաց-ռուսական, Նինոծմինդայում՝ 4 վրացական, 29 հայկական, 3 ռուսական, 2 ռուս-հայկական, 1 ռուս-հայ-վրացական դպրոց[691]*:*

Ըստ վիճակագրական տվյալների, Սամցխե-Ջավախքի դպրոցների առաջին դասարանցիների թիվը տարեցտարի նվազում է: Իսկ մի քանի դպրոցներ չունեն առանձին դասարաններ: Որպես օրինակ արձանագրենք հետևյալ փաստը. 1994 թ. նոր ուս.տարում Ախալքալաքի շրջանում դպրոց են հաճախել 1880 առաջին դասարանցիներ, 2003 թ.՝ 1098, 2004 թ.՝ 943: Ինչպես տեսնում ենք, վերջին 10 տարվա ընթացքում առաջին դասարանցիների թիվը նվազել է ավելի քան 900-ով, ընդ որում 155-ը՝ վերջին մեկ տարվա ընթացքում[692]*: Հարկ է նշել, որ*

---

[691] **Մելքոնյան Ա**, Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար 20-րդ դարի սկիզբ), Ե , 2005, էջ 96:
[692] **http://www.a-info.org/arm/full.php?id=753**

վրացական իշխանությունների կողմից բազմիցս փորձ է արվել այստեղի դպրոցներում ուսուցումը դարձնել վրացերեն, և միայն տեղի հայության դիմում-բողոքների արդյունքում են կասեցվել դրանք[693]: Իսկ 2004 թ. Վրաստանի խորհրդարանում նախագծի տեսքով հայտնված և արդեն 2005 թ.նոր ուս.տարում կիրառված կրթական համակարգի մասին օրենքը (որով, ի դեպ, ուսուցման գործընթացը դառնում է 12 տարի, որից վեց տարին նախնական, 3 տարի բազային, 3 տարին միջնակարգ կրթության համար) ունի բազմաթիվ մտահոգիչ կետեր: Օրինակ, 3-րդ հոդվածի 5-րդ կետը, ըստ որի ընդհանուր կրթական հաստատություններում (դպրոցներում) ուսուցման լեզուն լինելու է վրացերենը (Աբխազիայում նաև աբխազերենը): Միակ սփոփանքը կարող է լինել օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ կետը, ըստ որի, եթե դպրոցում սովորողի մայրենի լեզուն չի համարվում դպրոցի ուսուցման լեզուն՝ վրացերենը կամ աբխազերենը, ապա հոգաբարձուների խորհուրդը իրավասու է համապատասխան ֆինանսավորման դեպքում ուսումնական պլան մտցնել մայրենի լեզվի ուսուցման ծրագիր[694]: Մայրենի լեզու և պատմություն դասավանդելու թույլտվություն մինչ օրս չունի ոչ մի դպրոց. վերոհիշյալ առարկաները դասավանդվում են ֆակուլտատիվ: Տեղի կրթության ղեկավարների այս առթիվ եղած բողոքները ևս մերժվել են[695]: Իսկ Վրաստանի կրթության նախարարության որոշմամբ 2004-2005 թթ. ուս.տարվանից դպրոցական ծրագրերից հանված են ֆակուլտատիվ դասաժամերը: Ջավախքի դպրոցները ցավով ընդունեցին այս որոշումը: Փաստորեն ֆակուլտատիվ դասաժամերի վերացումով հայ դպրոցականները զրկվել են սեփական ժողովրդի պատմությունը սովորելու վերջին հնարավորությունից[696]:

---

[693] «Ակունք», անկախ պարբերական, թիվ 7 հուլիս-օգոստոս, 2004.
[694] **http://www.a-info.org/arm/full.php?id=773**
[695] «Երկիր», 16 սեպտեմբեր, 1998·
[696] **http://www.a-info.org/arm/full.php?id=756**

Սամցխե-Ջավախքի տարածքում գործում են երեք պետական և մի քանի ոչ պետական բուհեր, ավելի ճիշտ՝ ոչ պետական բուհերի մասնաճյուղեր (ՀՀ-ում գործող ԵՏԻ, «Գալիք», «Մովսես Խորենացի» և այլ համալսարանների մասնաճյուղերը) և տեղական մեկ-երկու ոչ պետական բուհեր: Հարկ է նշել, որ վերոնշյալները չեն ապահովում նորմալ բարձրագույն կրթություն: 2002 թ.փետրվարի 7-ին Թբիլիսիի Իվ.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ռեկտոր Ռ.Մետրեվելու հրամանով Ախալքալաքում բացվեց այդ համալսարանի մասնաճյուղը: Ներկայումս այնտեղ սովորում է մոտ 300 ուսանող: Քանի որ ուսուցումը բացարձակապես վրացերեն է, ապա, բնականաբար, տեղացիները զրկված են այնտեղ սովորելու հնարավորությունից: Որպես փաստ նշենք, որ 2005-2006 ուս. տարում նախատեսված 80 տեղերից միայն չորսում են ընդունվել Ջավախքցիներ, ընդ որում 2-ը՝ վրացիներ[697].

Չխորանալով այս հարցերի մեջ՝ պարզապես նշենք, որ այս բուհի ստեղծումն ունի ոչ թե տնտեսական-կրթական, երկրամասի երիտասարդությանը երկրի հասարակական կյանքին ինտեգրելու, այլ բացարձակապես քաղաքական նպատակ Նկատի ունենալով, որ այստեղ մեծ արտոնություններով սովորող ուսանողները, մասնագիտանալով նշանակվելու են տեղում աշխատանքի, ապա պարզ է դառնում, որ այն եկել է փոխելու Ջավախքի էթնիկ-ժողովրդագրական պատկերը[698]:

Իսկ ՀՀ-ի կողմից առաջարկվող հայ-վրացական համատեղ համալսարանի ստեղծումը վրացական կողմի անհամաձայնության պատճառով, ձախողվեց[699]: Ազգամիջյան հարաբերություն-

---

[697] Նույն տեղում

[698] «Երկիր», 10 դեկտեմբեր, 2004 , N 46 /1820.

[699] «Դրոշակ», թիվ 4, հոկտեմբեր, 2002, էջ 51 Ջավախքում Թբիլիսիի, ինչպես նաև Երևանի բուհերի մասնաճյուղեր բացելու մասին հայ-վրացական կողմերի միջև պայմանավորվածություն էր ձեռք բերվել դեռևս երկու երկրների նախագահների 1996 թվականի հունիսին Ախալքալաքում կայացած հանդիպման ժամանակ (տես «Ազգ»

ների լարվածություն է ծնում նաև այն հանգամանքը, որ արդեն մի քանի տարի է, ինչ վրացերեն լեզվի ուսուցիչներն ինչպես նախագահական հիմնադրամի, այնպես էլ Ջավախքում միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերով ստանում են եռապատիկ, քառապատիկ անգամ շատ աշխատավարձ քան մյուսները[700]: Իրենց ուսումն ապահովելու նպատակով ջավախքահայ երիտասարդները շարունակում են մեկնել ՀՀ, Ռուսաստան: Նշենք, որ նրանցից շատ քիչ մասն է վերադառնում հայրենի երկրամաս: Կործանման եզրին կանգնած կրթական համակարգից բացի, կաթվածահար վիճակում է շարունակում մնալ Ջավախքի մշակութային կյանքը: Չի գործում ոչ մի թատրոն, կինո, արվեստի և մշակույթի այլ կենտրոն: Քաղաքներում գործող մեկ-երկու մշակութային կառույցները բացարձակ անբավարար են երկրամասի բնակչության պահանջների համար: Անբավարար մակարդակի է տեղեկատվական դաշտը: Խիստ սահմանափակ է հայալեզու մամուլը: Ջավախքում լույս են տեսնում «Ակունք» (1000 օրինակ, Ախալքալաք), «Արշալույս» (1000 օրինակ, Նինոծմինդա), 2004 թ.՝ «Հարավային դարպաս» թերթերը (վերջինս հրատարակվում է անգլիական IWPR (Institute for War and Peace Reporting) կազմակերպության կողմից՝ Եվրամիության և Ֆինլանդիայի կառավարության ֆինանսավորմամբ)[701]: Ջավախքում տարածվում է նաև Թբիլիսում լույս տեսնող «Վրաստան» հայալեզու թերթը: Երկրամասի

---

07 06 1996) Սակայն, ինչպես տեսնում ենք, պայմանավորվածությունը կատարվեց միակողմանի երկրամասում այդպես էլ չբացվեցին Երևանի պետական բուհերից և ոչ մեկի մասնաճյուղերը Առանձին ոչ պետական բուհերի մասնաճյուղերի բացումը (որոնք, ինչպես նշել ենք, հեռու են որակական բարձր հատկանիշներից) սոսկ մասնավոր մարդկանց (այդ բուհերի ղեկավարների) Ջավախքում ունեցած ծանոթության հիմքի վրա բացված հաստատություններ են, որոնցում ուսուցումն իրականացվում է հիմնականում հեռակա ձևով:

[700] «Երկիր», 10 դեկտեմբեր, 2004 , N 46 /1820

[701] **http://www.a-info.org/arm/full.php?id=607**

շուրջ 115000 հայության[702] համար մամուլի այս քանակը անշուշտ անբավարար է:

Երիտասարդությանը գրավող, նրան հայեցի դաստիրակության տանող, ազգային ինքնագիտակցությունը վառ պահող ոչ մի միջոց չկա Սամցխե-Ջավախքում:

Երիտասարդության ապագայի շուրջ էլ ավելի անորոշ վիճակ է ստեղծվում զինծառայության վերաբերյալ անընդհատ փոփոխվող և այդպես էլ չկարգավորված պայմաններում: Խորհրդային Միության փլուզումից ի վեր Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայաբնակ շրջաններում երիտասարդությունն ավելի քան 95 %-ով չի մեկնել զինծառայության: Ըստ վրաց պետական այրերի՝ պատճառն ավելորդ, միգուցե, ազգամիջյան ընդհարումներից խուսափելն է[703]: Նշենք, որ զինծառայության մասին Վրաստանի օրենքը փոփոխվել է բազմաթիվ անգամ՝ զինծառայությունը դարձնելով 1 տարի 8 ամիս, 1,5 տարի, 1 տարի: Այն նաև բազմիցս խստացել ու մեղմացել է[704]:

2002 թ. Վրաստանում գործում էր բանակային ծառայության դիմաց վճարելու համակարգը, երբ 2000 լարի վճարելու դեպքում զինակոչիկն ազատվում էր 10 տարով: Սակայն 2005 թ. արդեն այդ գումարով կարելի է ազատվել միայն 1 տարով[705]:

Իսկ ի՞նչ հարաբերությունների մեջ է գտնվում հայ զինակոչիկը վրաց բանակի հետ: Մի՞թե վերջիններս զլանում են զինծառայության անցնել այն երկրում, որի քաղաքացիներն են իրենք: Կան բազմաթիվ գործոններ, որոնք, այո, ոչ միայն ազատում են այդ պարտականությունից, այլև այն (զինծառայությունը) դարձնում պարզապես անհնարին: Դրանք են.

---

[702] სამცხე-ჯავახეთის პოლიეთნიკური საზოგადოების პრობლემები, ახალციხე, 2005, გვ. 2.

[703] http://www.a-info.org/arm/full.php?id=744

[704] «Ակունք», սեպտեմբեր, 2004, թիվ 8-9

[705] «Ակունք», սեպտեմբեր, 2005, թիվ 17-18

ա. Ֆիզիկական գործոնները. վրացական բանակը, նախ, գտնվում է անմխիթար վիճակի մեջ. Չկան բավարար պայմաններ զինծառայության համար: Զինակոչիկը պետք է ծառայի տնից ուղարկված սննդով, շորերով. նա այս առումով պարզապես մի «ուսանող» է. բ. վրաց ժողովրդի ենթաէթնոսների[706] կողքին կան մեծ թվով ադրբեջանցիներ և այդ պայմաններում չկան հայ երիտասարդության անվտանգությունն երաշխիքներ. գ. հոգեբանական գործոններ. գերազանցապես հայերով բնակեցված երկրամասում ծնված և մեծացած, հայկական ազգային մտածելակերպով օժտված հայ երիտասարդի համար պարզապես անհնարին է ծառայել վրացական մթնոլորտում: Պատահական չէ, որ մինչև այժմ ծառայել ցանկացող հայ երիտասարդները ծառայություն են անցել Սամցխե-Ջավախքի տարածքում, որտեղ հայ զինվորներին չէր պարտադրվում լիարժեքորեն տիրապետել վրացերեն լեզվին[707]: Մյուս կողմից, Ջավախքցի հայորդու համար անհասկանալի է դառնում երդում տալ մի երկրի հավատարմորեն ծառայելու համար, որը թքած ունի իր ազգային արժանապատվության վրա[708]: Չկարգավորված միջպետական հարաբերությունների հետևանքով անորոշ իրավիճակում է հայտնվել նաև Հայաստանում սովորող Ջավախքահայ ուսանողը: Փաս-տորեն, օրենքի հերթական «խստացման» դեպքում վերջինս են-թակա է զորակոչի, քանի որ ի սկզբանե նրան չի տրվել տարեկետման իրավունք, իսկ զորակոչի հաջորդ օրը ՀՀ-ի բուհը կարող է հեռացնել նրան[709]:

Սա է Սամցխե-Ջավախքում ապրող հայ երիտասարդի ճակատագիրը. ի վերջո՝ կամ Ռուսաստան, «լավագույն դեպ-

---

[706] Տեր-Մինասյան Ռ., Հայաստանը անդրկովկասյան դաշնակցության մեջ, «Դրոշակ», 1926, թիվ 4

[707] **http://www.a-info.org/arm/full.php?id=744**

[708] «Ուսանողի ձայն», համաուսանողական պարբերական, փետրվար-մարտ», 2005, թիվ 7

[709] Երկիր», 30 ապրիլ – 6 մայիս, 2004, թիվ 16 / 1790:

քում»՝ Երևան: Այսպես է եղել դեռ սկսած 90-ական թթ. սկզբից[710]*:*

Ի՞նչ պետք է անել այս հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Հայաստանի վարած արտաքին քաղաքականությունը չպետք է տարանջատ լինի վերջինիս վարած ազգային քաղաքականությունից. արտաքին պետական քաղաքականության և ազգային քաղաքականության համադրության միջավայրում պետք է ձևավորվեն մեր արտաքին քաղաքականության հիմնատարրերը: Իսկ ընդդեմ Ջավախքի երիտասարդության մարտահրավերների պետք է հետևյալը.

– վերականգնել, բարեկարգել Ջավախքի հայկական դպրոցների շենքերը և գործածության համար դարձնել պիտանի (այս գործում շատ մեծ կարող է լինել սփյուռքի դերակատարությունը), ինչպես նաև Ջավախքն ընդգրկել Հայաստանի կրթական համալիր ծրագրերի մեջ

– Ջավախքում բացել Երևանի պետական համալսարանի մասնաճյուղ՝ մանկավարժության, տնտեսագիտության, ֆիզիկական կուլտուրայի, պատմության, բանասիրության և այլ անհրաժեշտ մասնագիտություններով: Սրա հետ մեկտեղ բուհն ապահովել որակյալ, ընդհանուր չափանիշներին համապատասխանող մասնագետներով

– պետք է երկրամասն ընդգրկել մարզամշակութային ծրագրերի մեջ, պայմաններ ստեղծել, որ երիտասարդությունը տեղում ունենա հետաքրքրություններ և չլքի հայրենիքը

– պետք է ավելի հաճախակի դառնան երգի, պարի խմբերի, արվեստագետների, հասարակագետների, ազգային-պետական գործիչների այցելությունները երկրամաս: Կարևոր է նշել, որ մինչ օրս ՀՀ-ից երկրամաս են այցելել շատ փոքր թվով երգիչ-երգչուհիներ, որոնք ավելի շատ մտահոգված են գումար վաստակելով, քան ազգային նպատակներ հետապնդելով: Հարկ է

---

[710] «Հայաստան», 7 դեկտեմբեր, 1993:

նաև այդպիսի «արվեստագետների» մուտքը երկրամաս արգելելով՝ կանխել երիտասարդության շրջանում օտար ճաշակների ձևավորումը:

Նկատի ունենալով, որ Ջավախքի երիտասարդությունը հայ երիտասարդության մի անբաժան մասնիկն է, մեծ կարևորվում է նրա ազգային ակունքներին մոտ պահելը, ընդ որում, ընդգծում ենք՝ այստեղ առկա են հայրենապահպանության, ազգային-ռազմավարական նշանակության խնդիրներ[711]:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ նշենք, որ եթե վրաց ազգայնամոլները կոչեր են անում՝ «վրացինե՛ր, թույլ մի տվեք այդ լեռնականներին (հայերին–Վ.Ս.) դուրս մղել մեզ մեր հողից»[712], ապա մենք պարզապես արձանագրում ենք, որ Սամցխե-Ջավախքը, հայության բնօրրանը լինելով հանդերձ, ոչ թե կռվախնձոր, այլ կամուրջ պետք է դառնա նա միջպետական հարաբերություններում, որի վրայով պետք է անցնեն ու բարգավաճեն մեր վաղվա սերունդները՝ հանուն Վրաստանի կայունության և Հայաստանի հզորացման:

---

[711] «Դրօշակ», թիվ 1, հունվար, 2003, էջ 27.

[712] ბუაჩიძე კოტა, შავი ძიგნი, თბილისი, 1990, გვ. 252–253

ՎԵՐՋԱԲԱՆ

Ջավախքի, ինչպես նաև նրա հարևան Սամցխեի ու Թռեղքի (Ծալկայի շրջան) 20-րդ դարի վերջի մեկուկես տասնամյակի պատմությունն ընդգրկում է պատմական չափազանց բարդ և փոթորկուն մի ժամանակաշրջան. ԽՍՀՄ-ի տարածքում ազգային հարցի սրում, «վերակառուցման» քաղաքական ուղղության ձախողում, ԽՍՀՄ-ի փլուզում, Վրաստանի տարածքում քաղաքական իրավիճակի սրում, ազգամիջյան կոնֆլիկտների և պատերազմների սանձազերծում, վրացական իշխանությունների վարած անհեռատես քաղաքականության հետևանքով երկրում ներքաղաքական, տնտեսական, էներգետիկ խորը ճգնաժամի առաջացում, վերջապես՝ ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրական դրսևորման հետևանքով լարվածության պարբերաբար սաստկացում և այլն թվարկված հիմնախնդիրների ճնշող մասը գոյություն ունի առ այսօր:

Նախկին ԽՍՀՄ-ի տարածաքում ապրող ազգային փոքրամասնությունների օրինակով խնդրո առարկա երկրամասում նույնպես ծնունդ առավ ազգային, համաժողովրդական շարժում, որը կրեց «Ջավախք» անունը: Վերջինս, ինչպես շատ շարժումներ դառնալով առանձին անձանց, որոշ ուժերի ձեռքին գործող կազմակերպություն, աստիճանաբար դադարելով համաժողովրդական լինելուց, թուլացավ, պասիվացավ և գրեթե դադարեց գոյություն ունենալուց: Ավելին, վերջինս չունենալով հստակ հայեցակարգ, Վրաստանի առջև դրվելիք պահանջների կոնկրետ դրույթներ, երկրամասի համար վճռորոշ պահերին չունեցավ լուրջ հաջողություններ:

Սամցխե–Ջավախք–Թռեղքի վերաբերյալ հայեցակարգ մինչ օրս չի մշակվել ո՛չ Հայաստանյան, ո՛չ երկրամասի ներկայացուցիչների կողմից, ինչը հնարավորություն է տալիս Վրաստանին այս հարցն անընդհատ շրջանցելու, և ընդհակառակը, հարկ եղած դեպքում այն օգտագործելու ՀՀ-ի դեմ:

1990-ական թթ. սկզբից Վրաստանի իշխանությունների հակահայ տրամադրությունները ուժեղացան, ինչն արտահայտվեց բազմաթիվ և բազմապիսի օրենքների ընդունումով, որոնք վտանգի էին ենթարկում հայ ժողովրդի ֆիզիկական և հոգևոր ներկայությունը երկրամասի շրջաններում:

1990-1991 թվականների ընթացքում Վրաստանի Գերագույն խորհրդի ընդունած մի շարք օրենքներով (որոնցով Վրաստանը հրաժարվում էր իր՝ խորհրդային Վրաստանից ստացած ողջ ժառանգությունից և իրեն համարում էր Վրաստանի՝ 1918 թվականի պետության լիարժեք իրավահաջորդ պետություն) Սամցխե-Ջավախք-Ծալկայի՝ Վրաստանի կազմում մնալ-չմնալու հարցը պատմական և իրավական տեսանկյունից պետք է վերաբացվեր և լուծում ստանար հայ-վրացական համատեղ բանակցությունների ընթացքում: Հայաստանը, սակայն, վախենալով Վրաստանի կողմից դրսևորվելիք հնարավոր շրջափակման վտանգից, անմիջապես ճանաչեց Վրաստանի տարածքային ամբողջականությունը և ոչք փակեց (և մինչ այսօր փակում է) Սամցխե-Ջավախք-Ծալկայի խնդրի առջև:

Զ.Գամսախուրդիայի՝ իշխանությունից հեռացումով և Է.Շևարդնաձեի իշխանության գալով չփոխվեց իշխանությունների վերաբերմունքը երկրամասի հայության նկատմամբ.

1994 թ.հուլիսի 31-ի հրամանագրով երկրամասի հայության տեսակարար կշիռը արհեստականորեն իջեցնելու նպատակով վերջինիս միացվեց վրացաբնակ Բորժոմի շրջանը, դրա փոխարեն Սամցխե-Ջավախքին սահմանակից Ծալկայի շրջանը (Թռեղքի գավառ) անջատվեց հայաբնակ շրջաններից և մտցվեց մեկ այլ՝ Ռվևմո Քարթլի նահանգի մեջ: Չնայած այս ամենին, Սամցխե-Ջավախքի բնակչության շուրջ 60 %-ը միշտ էլ մնում են հայերը:

Ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային ժամանակահատվածում երկրամասը տնտեսապես և կուլտուր-լուսավորական առումով մշտապես գտնվել է բացիթողի վիճակում, որին

ավելանալով նաև էներգետիկ ճգնաժամը, պատճառ հանդիսացավ բնակչության զանգվածային արտագաղթին, որը գնալով նոր թափ է ստանում:

Երկրամասի խնդիրը հայ-վրացական հարաբերությունների համատեքստում մշտապես մղվել է երկրորդական, երրորդական պլան, ինչը վրացական իշխանություններին հնարավորություն է տվել էլ առավել «համակարգված» մոտեցում ցուցաբերել Սամցխե-Ջավախք-Թուեղքի խնդրին[713]*: Դրա մի մասն են հան-*

---

[713] 2001 թ հոկտեմբերի 23-24-ը Վրաստանի նախագահ է Շևարդնաձեի գլխավորած պատվիրակության երևանյան այցը հայ-վրացական հարաբերություններում պայմանականորեն կարելի է համարել մի յուրատեսակ ջրբաժան իրադարձություն: Այցի ընթացքում ամփոփվեցին, իմի բերվեցին անկախությունից ի վեր շուրջ 10 տարիների ընթացքում ունեցած ձեռքբերումները, դրական տեղաշարժերը, վերանայվեցին կնքված բոլոր պայմանագրերը, մշակվեցին հետագա համագործակցության եզրերը: Հանդիպման շրջանակներում հաղորդվեց, որ Հայաստանի և Վրաստանի միջև անցած 10 տարիներին ստորագրվել են գրեթե բոլոր ոլորտներում նրանց փոխհարաբերություններին վերաբերող մոտ 76 երկկողմ փաստաթղթեր. Նշենք, որ դրանցից նվազագույն մասն է վերաբերել (այն էլ ոչ ամբողջապես, և շատ դեպքերում, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, ընդհանուր Վրաստանի հայության մակարդակով) Սամցխե-Ջավախք-Ծալկայի այս կամ այն ոլորտին առնչվող հիմնախնդիրներին·

Այնուամենայնիվ այցի ընթացքում վերանայվեցին 1993-1995 թթ. կնքված բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին պայմանագրերը: Այս ամենն ավարտվեց նմանատիպ պայմանագրի կնքումով, ինչի առթիվ, ինչպես կատակով նշում էին ժամանակի վերլուծաբանները, «պարզապես Հայաստանը և Վրաստանը հերթական անգամ ստորագրեցին միմիանց վրա չհարձակվելու դաշնագիր»:

Ամփոփելով կարելի է նշել, որ քաղաքական և ռազմական հարցերում Հայաստանի և Վրաստանի միջև, ինչպես որ բոլոր 10 տարիների ամբողջ ընթացքում ընդհանուր շատ քիչ բան կար: Նույնը կարելի էր ասել նաև տնտեսական հարցերում (տնտեսական համագործակցության մակարդակն անբավարար գնահատեցին նաև իրենք է Շևարդնաձեն և Ռ Քոչարյանը)· Երկկողմ հարաբերութ-յուններում քիչ թե շատ լուրջ կապեր կային միայն տրանսպորտային և էներգետիկ

դիսացել երկրամասի վերաբնակեցմանն ուղղված մի շարք ծրագրերը, որոնցով, ոչ հայ տարրերով բնակեցնելով տարածաշրջանը, նպատակ էր հետապնդում դարձյալ արհեստականորեն իջեցնելու հայության տեսակարար կշիռը: Այդ ծրագրերի որոշ մասը չիրագործվեց, իսկ որոշ մասը այսօր իրագործման ընթացքի մեջ է:

21-րդ դարի, նոր հազարամյակի շեմին Սամցխե-Ջավախք-Թուեղք երկրամասը կանգնեց նոր մարտահրավերների առջև: Ծանր սոցիալ-տնտեսական, էներգետիկ, մշակութային ճգնաժամին, հետզհետե ահռելի չափերի հասնող արտագաղթին, Վրաստանի կողմից շարունակապես վարվող ազգային խտրական քաղաքականությանը (որը դրսևորվում է բազմապիսի օրենքների ընդունման, դրանց կիրառության և այլնի տեսքով) ավելացան ևս մի քանի գործոններ, որոնք երկրամասի նկատմամբ լուրջ մարտահրավերներ լինելով հանդերձ, ունեն ազգային-ռազմավարական նշանակություն նաև ՀՀ-ի համար. Սամցխե-Ջավախք-Թուեղքի հիմնախնդիրը ՀՀ-ի ազգային անվտանգության բաղկացուցիչ մասն է և ռազմաստրատեգիական առումով ունի կարևոր նշանակություն. Հայ ազատամարտի լեգենդար ներկայացուցիչներից մեկի՝ Դրաստամատ Կանայանի (Դրո) այն նշանավոր խոսքերը, այն է՝ «ով տիրում է Շուշիին, նա էլ տիրում է Ղարաբաղին», լիովին կիրառելի է Ջավախքի համար և առանց երկմտելու այսօր կարելի է ասել. «Ով տիրում է Ջավախքին, նա էլ տիրում է ՀՀ-ին»:

Սամցխե-Ջավախք-Թուեղքի առջև նետված նոր մարտահրավերներն են՝ ա) մեսխեթցի-թուրքերի վերադարձի խնդիրը, բ) Բաքու-Ջեյհան նավթամուղի գործարկումը, որի անվտանգության ապահովման պատրվակով տարածաշրջանում անհամեմատ ուժեղանալու է թուրքական գործոնը, գ) Կարս-Ախալքալաք-Մարաբդա երկաթուղու հնարավոր գործարկումը, դ) Ջա-

---

ոլորտներում (տես Շաքարեանց Ս., Հայ վրացական յարաբերութիւնները ժամանակակից փուլում, Հայրենի Ջաւախք, էջ 338-358:

վախքում (Նինոծմինդայի շրջանում) արդեն 160 տարի բնակվող ռուս-դուխոբորների հարցը, որն անտեղի շահարկվում է վրացական կառավարող շրջաններում՝ ջավախքցիներին մեղադրելով վերջիններիս արտագաղթի խթանման գործում, ե) Հայ երիտասարդությունը, նոր սերնդին հայեցի պահպանության համար երաշխիքների և համապատասխան միջավայրի բացակայությունը. վերջիններիս տարածաշրջանից հետզհետե էլ ավելի մեծ չափերի հեռացումը բերում է բնակչության ատոմիճանական ծերացմանը և, ի վերջո, էթնոժողովրդագրական պատկերի փոփոխմանը:

Սամցխե-Ջավախք-Թռեղք երկրամասը, որպես հայկական բնօրրան, իր պատմական մշակութային հարուստ ժառանգությամբ, իր դարավոր ուժով այսօր փորձում է դիմակայել բոլոր մարտահրավերներին, և հույս տածում, որ մի օր և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի կողմից իր նկատմամբ կցուցաբերվեն արդարացի մոտեցումներ, և հենց ինքն էլ կդառնա ապագա Հայ-վրացական իսկական բարեկամության հիմնաքարը:

Հավելված 1

ՋԱՎԱԽՔԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ՆԱԽԱԳԻԾ

Ջավախքի տարածքային ինքնավարության ստեղծման հիմնավորումը

Մեր պետությունը՝ Վրաստանը, բազմազգ երկիր է, և նրանում ազգային հարցի լուծումը հրատապ անհրաժեշտություն է՝ Նա, ելնելով ազգային հարցի լուծման բնագավառում համաշխարհային քաղաքակրթության կողմից կուտակված բազմակողմանի փորձից, պարտավոր է դեմքով շուռ գալ դեպի ազգային գերխնդիրը, նպատակ հետապնդելով հուսալիորեն ու արդարացի ձևով լուծելու այն և պահպանելու մեր երկրի տարածքային ամբողջականությունը: Ազգային հարցը անհրաժեշտ է լուծել այնպես, որպեսզի մեր պետությունում ապրող բոլոր ազգերը հուսալիորեն պահպանեն իրենց լեզուն ու մշակույթը, ազգային դիմագիծը և թվական ամբողջականությունը, խուսափելով ազգաձուլման թե հակադիր և թե արհեստական վտանգներից:

Վրաստանն իր երկրում պարտավոր է կիրառել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և խրախուսման գերխնդրի լուծման եվրոպական մի շարք երկրների փորձը՝ նրանց տարածքային ինքնավարություն շնորհելու ճանապարհով: Վրաստանի պետությունը, խրախուսելով ու պաշտպանելով Ջավախքի կամ երկրի հարավի հայ մեծամասնության իրավունքները, ստեղծելու է տարածքային ինքնավարություն՝ նախկին Ախալցխա և Ախալքալաք գավառների ու ներկայիս Ծալկայի շրջանների սահմաններում, որտեղ հիմնականում հայեր են ապրում (70 տոկոս), ապրում են նաև վրացիներ (16 տոկոս), ռուսական էթնիկական համայնքներ (մոտ 14 տոկոս):

Տարածքի այդ ինքնավարությունը կոչվելու է Ջավախք, որ որտեղ բացակայելու է ազգային փոքրամասնություն կամ մեծամասնություն հասկացությունը, քանի որ նրանում ապրող հայերի, վրացիների ու ռուսախոս համայնքների լեզուները հաստատվելու են որպես պետական լեզուներ: Ջավախքի հանրապետությունում բացառվելու են ազգային որևէ խտրականություն, մեծապետական ազգի գերիշխանությունը, ազգերի ձուլման պայմանները, որովհետև այստեղ ազգերն իրարից անկախ են ապրելու որպես ազատ, միմյանց իրավունքներն ընդունող, միմյանց ազգային արժանապատվությունը հարգող, միմյանց ազգային ամբողջականությունը պաշտպանող եղբայրներ: Վրաստանի պետությունը, առանձնակի մոտեցում պետք է ունենա իր հետ ապրող ու աշխատող հայերի թվական ամբողջականությունը պահպանելու և նրանց ազգային իրավունքների ու շահերի պաշտպանության և խրախուսման գերխնդրի նկատմամբ, որպեսզի իրականում շարունակվի ու ամրապնդվի հայերի ու վրացիների եղբայրական իսկական բարեկամությունը, գիտենալով հանդերձ, որ հայ-վրացական բարեկամության բնօրրանը Ջավախքն է:

Վրաստանի պետությունը եթե իսկապես մարդասիրական և ժողովրդավարական պետություն է, պարտավոր է ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի երկրում իսպառ վերացվեն հայերի ձուլման պայմաններն ու չկրկնվի Կախեթիի, Գորիի և Վրաստանի այլ վայրերում ապրող հայերի ճակատագիրը, որոնք արդեն կորցրել են իրենց լեզուն ու ազգային դիմագիծը: Այսպիսի երևույթը պետք է կանխարգելել Վրաստանի հայաշատ վայրերում, ինչպես օրինակ, Ջավախքում, գիտակցելով, որ այն պատիվ չի բերում ոչ վրաց ազգին և ոչ էլ պետությանը: Հակառակ պարագայում նա վերջ ի վերջո համաշխարհային հանրության, ինչպես և հայ եղբայր ժողովրդի կողմից կմեղադրվի ցեղասպանության քաղաքականություն որդեգրելու, ազգամիջյան խոովություններ հրահրելու և տարածաշրջանում քաղաքական անկայունություն, կոնֆլիկտային իրավիճակ առաջացնելու համար:

Ջավախքի հայությունը վաղուց ի վեր արժանի էր ունենալու այնպիսի կարգավիճակ, ինչպիսին շնորհված է Աբխազիային, Աջարիային: Նման զանցառումը Ջավախքի նկատմամբ, որը կիրառվել էր խորհրդային Վրաստանի կողմից, դիտվում է որպես նպատակադրված հակահայկական քաղաքականություն, որը տանում է դեպի Ջավախքի հայության ազգային ինքնության ան-

խուսափելի կորստյան, ինչի մասին ներկայումս էլ երազում են վրաց մոլեգին նեոնացիստները, որոնք ծվարել են Գիտությունների ակադեմիայում, բուհերում և մեծ ազդեցություն ունեն երկրի ղեկավարության վրա: Եթե այսօր էլ Ջավախքին չտայ լայն ինքնավարության կարգավիճակ, դա նշանակում է, որ վրաց ներկայիս պետությունը շարունակում է հայերի ձուլման հին դատապարտելի քաղաքականությունը: Այսպիսի պայմաններում Ջավախքահայությունը լրիվ իրավունք ունի դիմելու ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին ու միջազգային այլ ատյաններին (օրինակ՝ Հաագայի միջազգային դատարանին), պահանջելով նրանց միջամտությունը՝ իրեն ինքնավարություն կամ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված այլ կարգավիճակ տալու համար, որպեսզի նա պահպանի իր ազգային գոյությունը և չարժանանա այնպիսի կորստյան, ինչպիսին տեղի է ունեցել և շարունակում է տեղի ունենալ Վրաստանում ցայսօր: Վրաստանի պետությունը, վրաց ազգի առաջադեմ ժողովրդավար գործիչները պետք է բոլոր միջոցներով արգելք հանդիսանան ազգերի ձուլման, նրանց կուլ տալու վրաց ազգայնամոլների բոլոր նկրտումներին: Վրաց ժողովրդի բանականությանն ենք դիմում հայ մեծանուն դեմոկրատ-ինտերնացիոնալիստ Մ. Նալբանդյանի խոսքերով. *«Ոչ մի ազգ իրավունք չունի կուլ տալու և ոչնչացնելու մյուսին. Մարդկային սրտի համար չկա առավել տխուր բան, քան տեսնել այն, թե ինչպես մի ազգը կործանվում է մեկ այլ ազգի բռնությունից»*: Թող ամեն մի ժողովուրդ պահպանի իր ազգային դրամագիծը, թող ազատորեն ու պայծառ կերպով հողագնդի վրա ծաղկի յուրաքանչյուր ժողովուրդ, ազգ և ազգություն, միայն դա է տալիս ուժ և կյանք բոլոր ազգերի գործիչներին:

Ջավախքի հայությունը Վրաստանի կազմում ցանկանում է ունենալ ինքնավարության կարգավիճակ, միայն և միայն իր ազգային դեմքը չկորցնելու, իր թվաքանակի ամբողջականությունը պահպանելու և վրաց ազգի հետ եղբայրաբար ապրելու համար, ղեկավարվելով Մեծն Շոթայի պատգամով. *«Պիտի եղբայրը եղբոր համար չխնայի ոչ կյանք, ոչ շունչ, Սիրտը սրտին ընծա բերի, սերը դնի որպես կամուրջ»*:

Ճիշտ չեն Վրաստանի բոլոր ժամանակների, բարձրակարգ մտավորականների այն մտավախությունները, որ եթե Ջավախքը ինքնավարություն ստանա, ապա հեռանկարում կձգտի Հայաստանին միանալ: Ջավախքցիները իրենց շատ լավ են զգում

Վրաստանի կազմում, և եթե ունենան քաղաքական ինքնավարություն, չեն ձգտի այլ նպատակների· Պետք է ողջախոհ լինել, ճիշտ կանխատեսել ապագան, եթե որևէ ազգ կարողանա պահպանել իր ազգային դիմագիծը, նա երբեք չի ձգտի վնասել տվյալ պետության տերիտորիալ ամբողջականությանը· Ստացվում է, որ մի ամբողջ տարածքի ժողովուրդ նման մտավախության պատճառով մշտապես պիտի մնա իրավազուրկ վիճակում, իսկ իրավազուրկ վիճակը ոչ մի ազգ կամ ժողովուրդ չի կարող տանել, դա վերջիվերջո կհանգեցնի անցանկալի հետևանքների, այդ են ապացուցում պատմության դասերը:

Այսպիսով, ելնելով վրաց և հայ ժողովուրդների բազմակողմանի շահերից, Վրաստանի պետության տարածքային ամբողջականությունը պահպանելու նպատակից և մեր երկու ժողովուրդների բարեկամությունը հաստատ պահելու ցանկությունից, ելնելով ազգերի ինքնորոշման իրավունքի միջազգային չափանիշներից, այդ դափանիշների օգտագործման անհրաժեշտությունից, ելնելով Վրաստանի հարավում ապրող հոծ հայության և ռուսախոս բնակչության ազգային ինքնությունը պահպանելու և նրանց լեզուն ու մշակույթը անարգել զարգացնելու իրենց բնականոն իրավունքից, որը չի վնասում ոչ ազգի շահերին, ոչ էլ Վրաստանի պետության տարածքային ամբողջականությանը, տարածքում, այսինքն՝ Ջավախքում, ստեղծել տարածքային ինքնավարություն Վրաստանի կազմում, առանց կոնֆլիկտային իրավիճակ հրահրելու, ղեկավարվելով նախագահ Է.Ա.Շևարդնաձեի այն հայտնի դրույթով, որտեղ ասվում է. «Չկա մի դերխնդիր, որը կարելի չլիներ լուծել խաղաղ ու քաղաքակիրթ եղանակով»:

Ջավախքի լայն ինքնավարության հարցը բազմիցս առաջ է քաշվել Ջավախքի բնակչության հանրահավաքների ժամանակ, Ախալքալաքի Ս. Խաչ և Արագվայի Ս. Գևորգ եկեղեցիների հրապարակներում, Կարծախի, Օլավերդի, Վարևանի տարբեր ժամանակներում տեղի ունեցած բազմամարդ հանրահավաքներում, տարածքի հասարակական քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների վեհաժողովներում և նիստերում ու որոշվել է պահանջել լայն ինքնավարություն:

«Ջավախք», «Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ, թիվ 2 (20), օգոստոս, 1998 թ.:

Հավելված 2

ՋԱՎԱԽՔԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱԳԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Ջավախքի տարածքը Վրաստանի անբաժանելի մասն է, որն իր մեջ ընդգրկում է այժմյան Ախալքալաքի, Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկայի), Ասպինձայի, Ախալցխայի, Ծալկայի շրջանները, իրենց այժմյան սահմաններով, ինչպես նաև Բորժոմի շրջանին բռնակցված Զխարոլա, Մոլիթ, Ղզլքիլիսա (Տաբածղուրի) հայկական գյուղերը:

2. Ջավախքի վարչական կենտրոնը (մայրաքաղաքը) Ախալքալաք քաղաքն է:

3. Ջավախքի տարածքը վերը նշված սահմաններով ամրագրված է Վրաստանի սահմանադրությամբ, որն ունի տեղական նշանակության օրենսդրական, գործադիր կարգադրիչ և ուժային (դատական, դատախազական, ոստիկանական) լիակատար իրավասություններ:

4. Ջավախքի անվանումն է. Ջավախքի ինքնավար հանրապետություն՝ ՋԻՀ, կրճատ՝ Ջավախք:

5. Ջավախքի տերիտորիալ ամբողջականությունը փոփոխության ենթարկվել չի կարող առանց տարածքի բնակչության հանրաքվեի, որն այնուհետև հաստատվում է Վրաստանի իշխանության բարձրագույն մարմնի (խորհրդարանի կողմից):

6.Վրաստանի պետության կողմից ընդունած խորհրդանիշերը՝ դրոշը, օրհներգը և զինանշանը (գերբը) ընդունվում և հարգվում են Ջավախքի բնակչության կողմից և համարվում են իր պետական խորհրդանիշերը:

7. Ջավախքի տարածքի բնակչության պետական լեզուն վրացերենն է, հայերենը և ռուսերենը:

8. Տարածքի բոլոր ազգությունները իրավահավասար են և նրանում գոյություն չունի ազգային փոքրամասնություն կամ ազգային մեծամասնություն հասկացությունը, քանի որ հայ, վրացի և ռուսախոս բնակչության լեզուները հավասարապես գործում են որպես պետական լեզուներ, այսինքն ունեն

պետական լեզվի կարգավիճակ: Հայ, վրացի և ռուսախոս համայնքները օգտվում են իրենց լեզուն, մշակույթը, ավանդույթները և դավանանքները կիրառելու և զարգացնելու իրավահավասար պայմաններից: Բոլոր պաշտոնական որոշումներն ու փաստաթղթերը հրատարակվում են հայերեն, վրացերեն և ռուսերեն լեզուներով և ճանաչվում են հավասարազոր:

9. Ջավախքում բացառված են մի ազգ մյուսին կլանելու ամեն տեսակի փորձերն ու պայմանները, արգելվում է նրանց ազգային պատկանելիությունը փոխելու ամեն մի միտում: Փոքրաթիվ ազգությունների գոյությունը և նրանց թվական կազմի ամբողջականությունը երաշխավորվում է տարածքի իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունված հատուկ օրենքներով, որոնցով բացառվում է ասիմիլյացիայի որևէ հնարավորություն:

10. Ջավախքի բոլոր տեղական անունները ցուցանշվում են երեք լեզուներով, ըստ բնակավայրի, ազգային կազմի, ընդսմին առաջինը նշվում է տվյալ բնակավայրի ազգային մեծամասնության լեզվով: Օրինակ. «Ախալքալաք» գրում է հայերեն, վրացերեն, ռուսերեն, «Ասպինձա»՝ վրացերեն, հայերեն, ռուսերեն, «Գորելովկա»՝ ռուսերեն, հայերեն, վրացերեն, «Տամալա»՝ հայերեն, վրացերեն, ռուսերեն, «Կոթելիա» վրացերեն, հայերեն, ռուսերեն և այլն:

11. Ջավախքի բոլոր քաղաքացիները Վրաստանի պետության իրավահավասար քաղաքացիներ են, օգտվում են Վրաստանի սահմանադրությամբ նախատեսված բոլոր իրավունքներից և ազատություններից: Իհարկե, կրում են նաև պարտականություններ, բացառությամբ վրացական բանակում որպես զորակոչիկ ծառայելու պարտականությունից:

12. Ջավախքի տնտեսական հիմքը համարվում է ազատ շուկայական հարաբերություններին համապատասխանող սեփականության տարբեր ձևերը, այդ թվում՝ պետական սեփականության ձևը: Տնտեսության զարգացմանը խթանող հիմնական ուղիներն են. ազատ ձեռներեցությունը, տնտեսական այլ միավորումների, տարածքից դուրս գտնվող արդյունաբերական ու գյուղատնտեսական առաջավոր ձեռնարկությունների հետ տնտեսական ամուր կապի մեջ մտնելը, արտադրական նոր օբյեկտների ստեղծումը, տարածքի ընդերքի ուսումնասիրումը, հողի մշակման նոր մեթոդների արմատավորումը, բերքատվության և անասնապահության մթերատվության բարձրացումը, տեղական

նշանակության ճանապարհների բարեկարգումը, տրանսպորտային միջոցների հետագա զարգացումն ու շահագործումը, բնապահպանության իրականացում ըստ Վրաստանի սահմանադրության պահանջների (անտառների և անտառաշերտերի անվնաս պահպանում, ջրային պաշարների, ռուդիչ կանալների նպատակային օգտագործում, պայքար հողի էռոզիայի, անօրեն ձկնորսության, որսորդության դեմ, կենդանական աշխարհի անվնաս պահպանում և այլն):

13. Դրամա-վարկային քաղաքականությունը վարել ըստ մեր պետության սահմանադրության պահանջների:

14. Ջավախքի քաղաքական հիմքը ժողովրդավարությունն է, որը հռչակված է Վրաստանի սահմանադրությամբ, տարածքի իշխանության և կառավարման բոլոր մարմինների ընտրություն՝ վարից վեր:

15. Ջավախքի բարձրագույն օրենսդիր իշխանությունը հանդիսանում է լիազորների պատգամավորների խորհուրդը (պառլամենտը՝ խորհրդարանը), որն ընտրվում է 5 տարին մեկ անգամ, համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրությունների հիման վրա փակ, գաղտնի քվեարկությամբ: Խորհրդարանի պատգամավորներ ընտրվում են թվական կազմին համապատասխանեցրած ընտրական օկրուգներում ազգային համայնքների համամասնական, ներկայացուցչական սկզբունքով: Պատգամավորներ կարող են ընտրվել 20 տարին լրացրած անձինք. Համամասնությունը որոշում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ըստ յուրաքանչյուր ազգության թվակազմի: Շրջանային, քաղաքային և գյուղական իշխանության մարմինները ևս ընտրվում են նույն սկզբունքով՝

16. Ջավախքի խորհրդարանը փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է ազգությամբ հայ նախագահ և երկու տեղակալ՝ մեկը վրացի, մյուսը՝ ռուս:

17. Խորհրդարանին կից ստեղծվում են երեք լեզվամշակութային ընկերակցություններ՝ հայալեզու, վրացալեզու և ռուսալեզու:

Լեզվա-մշակութային ընկերակցությունները միավորում են բնակչության այն բոլոր ներկայացուցիչներին, որոնք պատկանում են միևնույն լեզվամշակութային ընկերակցությանը՝ անկախ նրանց բնակության վայրից, որոնք զբաղվում են կրթության, գիտության և սոցիալ-մշակութային հարցերի կարգավորմամբ:

Նշված ընկերակցությունները ինքնուրույնաբար մասնակցում են միջազգային մշակութային համագործակցությանը, կնքում են միջազգային համապատասխան պայմանագրեր ԱՊՀ-ի և այլ երկրների մշակութային կազմակերպությունների հետ:

Ընկերակցությունները ունեն իրենց խորհրդարանական հաստատությունը՝ ընկերակցությունների խորհուրդների ձևով, որոնք կազմվում են այդ ընկերակցությունները ներկայացնող խորհրդարանի անդամներից:

Ընկերակցության խորհուրդը իր միջից ընտրում է գործադիր մարմնի անդամներ, որոնք իրականացնում են կառավարական և վարչական պարտականություններ (ֆունկցիաներ):

18 Ջավախքում ստեղծվում է արբիտրաժային (իրավարարական, միջնորդական) դատարան, որը կոչվում է Սահմանադրական հսկողություն իրականացնել և լուծել այն կոնֆլիկտները, որոնք կարող են ծագել պետական օրենսդրության և ընկերակցությունների որոշումների (դեկրետների) միջև:

19. Ջավախքի հանրապետության՝ հանձինս նրա խորհրդարանի ու կառավարության, բացառիկ իրավասությանն են դասվում.

ա) նրա մեջ մտնող մունիցիպալիտետների (քաղաքային և գյուղական ինքնավարությունների) տարածքային սահմանների հաստատումը,

բ) ինքնակառավարման բոլոր մարմինները,

գ) լեռները, անտառահանդակները, արոտավայրերը,

դ) հողագործությունն ու անասնապահությունը,

ե) հիդրավլիկ կառույցները, ջրանցքները, գետերը, լճերը, ոռոգման համալիրները, էլեկտրակայանները,

զ) սոցիալական ապահովությունը, առողջապահությունը,

է) մշակույթը, գիտությունը, կրթությունը, պատմական ժառանգությունը, կրթական համակարգը համապատասխանեցվում է Հայաստանի կրթական համակարգին (խոսքը հայոց լեզվով ուսուցվող դպրոցների մասին է). բացառությամբ վրաց լեզվի ու Վրաստանի պատմության առարկաների,

ը) պրոֆեսիոնալ կորպորացիաները, փոխօգնության դրամարկղերը,

թ) տեղական արտադրության պլանավորում, տնտեսության զարգացում,

ժ) ներքին առևտուրը,

ի) առևտրի բիրժաները, ապրանքների ու արժեթղթերի առևտրի կենտրոնները,
լ) արդյունաբերությունը, քաղաքային և բնակարանային շինարարությունը,
խ) վիճակագրությունը,
ծ) զբոսաշրջիկությունը, սպորտը,
կ) տեսլարանային հիմնարկ-ձեռնարկությունները:

20. Խորհրդարանն իր առաջին նիստում կազմում է տարածքի կառավարությունը (նախարարների խորհուրդ) հետևյալ կազմով. վարչապետ (ազգությամբ հայ), երեք տեղակալներ (հայ, վրացի, ռուս), նախարարներ:

Վարչապետը խորհրդարանի հաստատմանն է ներկայացնում իր ծրագիրը և նախարարներին, որոնք պետք է ներկայացնեն տարածքում ապրող ազգությունների համամասնությունը: Վարչապետը, տեղակալները, նախարարները չեն կարող խորհրդարանի անդամ լինել:

21. Խորհրդարանը ընդունում է իր հանրապետության Սահմանադրությունը, որը չպետք է հակասի Վրաստանի պետության սահմանադրությանը: Սահմանադրությունը պետք է ելնի Վրաստանի տերիտորիալ ամբողջականությունը և Ջավախք երկրի ինքնավարությունը պահպանելու շահերից:

22. Ջավախքն ունի իր պետական, սեփական բյուջեն՝ մշակված իր կառավարության և հաստատված խորհրդարանի կողմից: Տարածքում կիրառվում է իր սեփական հարկային կանոնակարգը, որը չի հակասում Վրաստանի պետության սահմանադրությանը: Ջավախքում իրականացվում է Վրաստանի կառավարության դրամա-վարկային քաղաքականությունը և գործում է Վրաստանում հաստատված տարադրամային միավորը, իսկ դրամային էմիսիաները իրագործում է Վրաստանի Կենտրոնական բանկը:

23. Ջավախքում գործում են Վրաստանի պետության բոլոր օրենսգրքերը (քրեական, քրեադատավարական, քաղաքացիական, քաղաքացիադատավարական, հողային, ֆինանսական, վարչական, աշխատանքային ընտանեկան, տնտեսական և այլն):

24. Դատավարության գործում Ջավախքն օգտվում է լայն ինքնավարությամբ, դատավարությունը տարվում է պետական երեք լեզուներով, նայած մասնակիցների ազգային պատկանելության:

Դատավճիռները, վճիռներն ու որոշումները կարող են բողոքարկվել Վրաստանի Գերագույն դատարանին, պայմանով, որ Գերագույն դատարանում ստեղծվի հայերեն լեզվով տարվող քրեական ու քաղաքացիական վճռաբեկ կոլեգիաներ (ատյաններ):

25. Ջավախքի գլխավոր դատավորին նշանակում է տարածքի խորհրդարանը, որի մասին տեղյակ է պահվում Վրաստանի արդարադատության նախարարությանը:

26. Դատավորներն ընտրվում են 5 տարի ժամկետով. ըստ հաստատված ընտրական համակարգի:

27.Ջավախքի դատախազը նշանակվում է Վրաստանի գլխավոր դատախազի կողմից՝ Ջավախքի խորհրդարանի վերջնական հաստատմամբ, որը պետք է տիրապետի Ջավախքի երեք պետական լեզուներին, հինգ տարին մեկ անգամ, երկու շրջան, բացառիկ դեպքում՝ երեք շրջանից ոչ ավելի:

28. Ջավախքի ոստիկանապետը խորհրդարանի երաշխավորությամբ նշանակվում է Վրաստանի ներքին գործերի նախարարի կողմից:

29. Վրաստանի Ջավախք երկրի միացյալ սահմանները պաշտպանելու համար Վրաստանի զինված ուժերի և Ջավախք երկրի կառավարության փոխհամաձայնությամբ Ջավախքում ստեղծվում է զորաբանակ, որի հրամանատարությունը նշանակվում է նույն փոխհամաձայնությամբ: Այդ զորախումբը հիմնականում կազմվում է Ջավախքում բնակվող հայ զինապարտներից, այլ ազգի երիտասարդները կարող են այդ զորախմբի մեջ մտնել կամավոր: Հրամանատարական լեզուն հայերենն է: Զորախումբը զուտ պաշտպանական պարտականություն (ֆունկցիա) է կատարում, որը սահմանափակվում է Ջավախքի ու Թուրքիայի սահմանի երկայնքով: Ջավախքի հայ զինապարտները պիտի ծառայեն միայն այդ զորաբանակում, որը մտնում է Վրաստանի պետության զինված ուժերի մեջ և նրա բաղադրիչ մասն է կազում իր ուրույն պաշտպանական պարտականություններով՝ ուղղված նրա բնակչության անվտանգության ապահովմանը արտաքին թշնամու (Թուրքիայի) զավթողական ոտնձգություններից: Վրաստանի ազգային բանակի շարքերում Ջավախքի հայ զինապարտները կարող են ծառայել միայն կամավորական հիմունքներով:

30. Հայաստանի հայ սահմանային և մաքսային հարաբերությունների կարգավորման համար, Ջավախքի ու Հայաստանի Հանրապետության սահմանային հատվածում սահ-

մանապահ և մաքսային ծառայությունների անձնակազմերը պետք է ընտրվեն Ջավախքի ազգաբնակչությունից: Այդ ծառայությունների ղեկավարությունը նշանակվում է Ջավախքի կառավարության կողմից, որոնք գործում են պետության համապատասխան գերատեսչությունների և Ջավախքի կառավարության կողմից ընդունված երկուստեք համաձայնեցրած կանոնադրությունով:

31. Ջավախքը Հայաստանի հետ կապվում է տնտեսական, առևտրական, արտադրական, գիտական, կրթական, մշակութային, կոնֆեսիոնալ և այլ տարատեսակ փոխադարձ սերտ հարաբերություններով: Ոչ մի մարմին կամ մարմնի կողմից ընդունած որոշում չպիտի խաթարի կամ արգելակի Ջավախքի ու Հայաստանի վերը նշված սերտ հարաբերությունները:

32. Ջավախքում նշվում են ապրիլի 24-ը (եղեռնի օրը), մայիսի 28-ը (Հայաստանի առաջին հանրապետության հռչակման օրը), սեպտեմբերի 21-ը (ԽՍՀՄ-ից Հայաստանի դուրս գալու, հանրաքվեով անկախ պետություն ստեղծելու օրը):

33. Կրոնական բոլոր տոները Ջավախքահայությունը անցկացնում է հայ Առաքելական լուսավորչական եկեղեցու կրոնական տոների օրերին, Էջմիածնի Մայր Աթոռի ղեկավարությամբ:

34. Ջավախքը բազմակուսակցական համակարգի երկիր է, որտեղ ազատորեն գործում են տարբեր կուսակցություններ, շարժումներ, կազմակերպություններ միավորումներ, այդ թվում՝ իշխանություններին ընդդիմադիր ուժեր:

35. Մնացած բոլոր հարցերում, որոնք չեն նշված սույն հիմնադրույթներում, Ջավախքի հանրապետությունը առաջնորդվում է Վրաստանի Սահմանադրական դրույթներով:

Նախագիծը ներկայացրել են
ԴՐՎԱՆԴ ՇԻՐԻՆՅԱՆԸ
ԱՐՏԱՇԵՍ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ

Խնդրվում է ընթերցողներից, որ իրենց կարծիքները ներկայացնեն «Ջավախք» թերթի հաջորդ համարում լուսաբանելու համար:

«Ջավախք», «Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ, թիվ 2 (10), օգոստոս, 1998 թ :

Հավելված 3

Համախմբվում են Վրաստանի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ

ԱԽԱԼՔԱԼԱՔ, 16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2003. Ա-ԻՆՖՈ: Սամցխե Ջավախքում եւ Քվեմո Քարթլիում գործող հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհուրդը նոյեմբերի 2-ին Վրաստանում տեղի ունենալիք խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ կոչ է արել հանդես գալ միասնական ճակատով եւ հայտնել իր պատրաստակամությունը աջակցելու այն քաղաքական ուժին, որը «ներկայություն ապահովելով երկրի օրենսդիր մարմնում կբարձրացնի եւ կհետեւի Վրաստանի հայերին հուզող խնդիրների լուծմանը»:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհուրդը շուտով հրապարակի մի շարք նախընտրական հիմնադրույթներ, որոնց լուծումն ակնկալում է ապագա խորհրդարանականներից:

Ներկայացուցիչների խորհուրդը կյանքի է կոչվել երկու շրջաններում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների կողմից:

-0-

200300916-ա

ՀՈՒՇԱԳԻՐ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍԱՄՑԽԵԱՋԱՎԱԽՔ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋ

Ներկայացվել է

Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների
պարտավորությունների եւ պարտականությունների կատարման
հանձնախմբին (Մոնիտորինգի հանձնախումբ)

Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական
կազմակերպությունների
խորհրդի կողմից

Երբ պատրաստվում եք ձեր հաջորդ ժողովը գումարել Վրաստանում, մենք՝ Սամցխե-Ջավախք երկրամասի հայկական հասարակական կազմակերպությունների ղեկավարներս, խիստ կարեւորելով մեր պետության ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության պահպանումը, ցանկանում ենք ձեր ուշադրությանը հանձնել Սամցխե-Ջավախքում տիրող ծանրագույն վիճակը, որը չլուծելու դեպքում, կարող է սոսկալի հետեւանքներ թողնել երկրամասի բնակչության եւ ամբողջ Վրաստանի համար:

1999թ. Եվրոպայի Խորհրդին միանալուց, Վրաստանի պարտավորություններն ու պարտականությունները ներառել են հետեւյալները.

ա) Անդամակցելուց հետո մինչեւ մեկ տարի անց, ստորագրել եւ վավերացնել Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան եւ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան.
բ) Անդամակցելուց հետո մինչեւ երեք տարի անց, ստորագրել եւ վավերացնել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, [...] եւ մինչ այդ կիրառել այս փաստաթղթի հիմնական սկզբունքները.
գ) Անդամակցելուց հետո մինչեւ երկու տարի անց, ստեղծել ինքնավար երկրամասերի կարգավիճակի սահմանման եւ նրանց լայն ինքնավարությունը երաշխավորող իրավական դաշտ, որի ճիշտ պայմանները պետք է բանակցվեն խնդրո առարկա երկրամասերի ներկայացուցիչների հետ.
դ) Անդամկցելուց հետո մինչեւ երեք տարի անց, բարեփոխել ինքնավարության եւ տեղական կառավարման մասին օրենքը, իրավունք տալով խորհուրդների ղեկավարներին նշանակվելու փոխարեն ընտրվել:
ե) Անդամկցելուց հետո մինչեւ երկու տարի անց, որդեգրել փոքրամասնությունների մասին օրենք, հիմնված ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1201 (1993) հանձնարարականի սկզբունքների վրա:

Անդամակցելուց հինգ տարի անց, Վրաստանը տակավին քայլեր պետք է առնի վերոհիշյալ պարտավորությունների եւ պարտականությունների կատարման ուղղությամբ: Փաստորեն տապալված է Եվրախորհրդի առջեւ ստանձնած այս պարտավորությունների ամբողջական կատարումը որը, ի միջի այլոց, Սամցխե-Ջավախք երկրամասում վիճակը դարձրել է օրհասական:

Վրաստանի 1995ի սահմանադրությունը չի սահմանում երկրի վարչատարածքային կառուցվածքը եւ գործնականորեն տեղական մակարդակի ինքնակառավարումը չի համապատասխանում ժողովրդավարության չափանիշներին: ՍամցխեևՋավախքի տարածաշրջանում, խտրական օրենքների պատճառով, հայ ազգաբնակչությունը նվազ է ներկայացվել տեղական վարչական համակարգում: Շրջանային մակարդակի վրա ընտրովի մարմիններ չկան եւ նախագահական հրամանագրերով նշանակվող

լիազոր ներկայացուցիչների ինստիտուտի համար օրենսդրական հիմք չկա:

Փաստորեն խափանված է տարածքի վարչական կառավարումը: Տեղական մակարդակի վրա, աղաղակող խտրականություն է կիրառվում տեղի հայ ազգաբնակչության նկատմամբ. ի տարբերություն երկրի մնացյալ շրջանների, ՍամցխեևՋավախքի հայաբնակ շրջաններում սակրեբուլոների (ընտրված մարմիններ) մեծամասնությունում ընդգրկված են մի քանի գյուղեր, մինչդեռ յուրաքանչյուր վրացաբնակ գյուղ ունի առանձին սակրեբուլո, ինչը արհեստականորեն ավելացնում է վրացական ներկայությունը շրջանային մակարդակում:

Այս քայլերը, քաղաքականությունը եւ պրակտիկան ուղղակիորեն հակասում են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, որը Վրաստանը հանձն էր առել ստորագրել եւ վավերացնել անդամակցելուց հետո մինչեւ երեք տարի անց եւ մինչ այդ՝ կիրառել այդ փաստաթղթի հիմնական սկզբունքները:

Չեն իրականացվում բնակչության իրական շահերից բխող սոցիալ-տնտեսական զարգացման, ո՛չ կարճաժամկետ, ոչ հեռանկարային ծրագրեր: Սպառնալի չափերի է հասնում ժողովրդի աղքատությունը եւ հուսահատությունը: Անբավարար են կրթական եւ մշակութային կենսապահովման պայմանները:

Անցնող տաս ամիսների ընթացքում մենք մեր մտահոգություններն ու հանձրարականներն ենք փոխանցել Վրաստանի բարձրագույն իշխանություններին եւ (այժմ նախկին) Եվրոպայի Խորհուրդի Գլխավոր քարտուղարին, սակայն անօգուտ: Բոլորն էլ չեն հաստատել նույնիսկ մեր գրավոր հաղորդակցության ստացումը:

Օրվա հրամայական է երկրամասը երկրի պետական, քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային կյանքի մեջ լիարժեքորեն ինտեգրվելու խնդիրը: Սակայն ինտեգրումը ձուլման հոմանիշը չէ, եւ ոչ էլ ինքնավարությունը՝ անաջատողականության: Ժողովրդավարական հասարակության մեջ, ինտեգրում կարելի է իրագործել միայն մասնակցությամբ: Ձուլում հետապնդող եւ կամ արհեստական եւ բռնի միջոցներով

ժողովրդագրական իրականությունները փոխել ցանկացող քաղաքականությունն ու քայլերը միայն հակառակ արդյունքը կարող են տալ: Ինտեգրացումը պահանջում է, որ մեծամասնությունն ու փոքրամասնությունը ունենան այդ ցանկությունը եւ միմիանց նկատմամբ քայլեր ձեռնարկելու կամք:

Ինտեգրման շղարշի ներքո, վրացական իշխանությունները որդեգրել են օրենքներ, որոնք հակասում են Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիային եւ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի ոգուն ու տառին: Բացի այդ, եւ ուղղակիորեն հակառակ վերոհիշյալ Շրջանակային կոնվենցիային եւ Եվրոպական խարտիային, վրացական իշխանությունները վերջերս ներկայացրել են օրենքի նախագիծ, որը ընդունվելու դեպքում, փաստորեն խոչընդոտելու է Վրաստանի ազգային փոքրամասնություններին, ներառյալ՝ հայերին, իրենց տարածաշրջանի կամ փոքրամասնության լեզուներով կրթությունը բոլոր մակարդակների վրա:

Վրաստանի ազգային բազմազանության եւ նրա ներքին քաղաքական եւ վարչական համակարգի շուրջ երկրում չկա սոցիալ-քաղաքական լայն փոխհամաձայնություն: Քաղաքական կամ հասարակական դեմքերի հայկական ծագման հաղորդումները հաճախ նկատվում են ստորացնող: Մինչ մեծ թվով հայկական մշակութային եւ կրոնական հուշարձանների գոյությունը, ինչպես նաեւ պատմագրական արձանագրությունները վկայում են այն մասին որ հարավային Վրաստանում, ներառյալ Սամցխեև-Ջավախքը, հայերը բնիկներ են, վրացական հասարակությունը այդ տարածքներում ապրող հայերին նկատում է որպես եկվոր: Առկա են գրանցված փաստեր այս հուշարձանները «վրացականացնելու» փորձերի մասին: Վրացական իշխանությունները հակասական պատգամներ են ուղարկում, թե փոքրամասնությունները ինչպես կարող են պաշտպանել եւ ամրապնդել իրենց լեզվական եւ մշակութային իրավունքները. մինչ, մի կողմից, վրացական իշխանությունները ոտնահարում են օրինապահ ազգային փոքրամասնությունների լեզվական եւ մշակութային իրավունքները, մյուս կողմից, Վրաստանից իրենց անկախության մասին հռչակածներին մեղմելու համար, նույն իշխանությունները նրանց խոստանում են պաշտպանել եւ

ամրապնդել իրենց լեզուն ու մշակույթը, փոխարեն այդ երկրամասերում վրացական գերիշխանության վերահաստատման:

Համոզված ենք, որ եթե Վրաստանը ամբողջությամբ եւ անկեղծորեն հարգի անդամակցության իր պարտավորություններն ու պարտականությունները, հատկապես որոնք նշված են այս հուշագրի սկզբում, այն մեծապես կնպաստի Սամցխե-Ջավախքում ծանր կացությունը մեղմելուն:

Հետեւաբար, դիմում ենք ձեզ, Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների պարտավորությունների եւ պարտականությունների կատարման հանձնախմբին, ապահովելու որ Վրաստանը կհարգի Եվրոպայի Խորհրդին իր անդամակցության ժամանակ ստանձնած պարտավորությունները: Հավելյալ տեղեկությունների եւ քննարկման համար, մենք հանձնախմբի տրամադրության տակ ենք:

Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական
կազմակերպությունների խորհուրդ
ք. Ախալքալաք, 21 հոկտեմբերի 2004թ.

Բանաձեւ

Ընդունված է Սամցխե-Ջավախքի սոցիալ-տնտեսական խնդիրներին նվիրված «Ինտեգրացում-բայց ոչ ձուլում» նախաձեռնության առաջին համաժողովի կողմից
11 դեկտեմբերի 2004թ., ք. Ախալքալաք

Համաժողովը նպատակ ունենալով.

- նպաստելու Սամցխե-Ջավախքի առջեւ ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը,
- Սամցխե-Ջավախքում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման միջոցով նպաստ բերելու Վրաստանում սոցիալա-տնտեսական եւ ժողովրդագրական խնդիրների մեղմմանը եւ կարեւորելով բարեփոխումների անհրաժեշտությունն ու նրանց թե տարածքային եւ թե էթնիկ իմաստով հավասարաչափ իրականացումը,
- Սամցխե-Ջավախքում սոցիալատնտեսական բարեփոխումների միջոցով նպաստելու Վրաստանում ներքին ինտեգրացիայի օբյեկտիվ գործընթացի կայացմանը, ներքաղաքական կայունության պահպանմանն ու ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը,
- մի շարք օբյեկտիվ գործոններից /երկրամասի էթնիկ պատկերը, Հայաստանի հետ սահմանային կապը եւ այլն/ ելնելով՝ նպաստելու Սամցխե-Ջավախքում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը դիտարկելու որպես տարածաշրջանային ինտեգրացիայի կայացման եւ ժողովուրդների բարեկամության ամրապնդման լավագույն հնարավոր մոդել,
- ներդրում ունենալու Վրաստանի եւ Հարավկովկասյան տարածաշրջանի՝ եվրոպական ինտեգրացիայի իրական գործընթացում, միջազգային /եվրոպական/ հանրության առջեւ

Վրաստանի կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանն առնչվող հարցերում եւ կարեւորել յուրաքանչյուր քաղաքացու կողմից գործընթացի դրական պտուղների զգացողության խնդիրը,

Հիմք ընդունելով համաժողովում հնչած զեկույցները, քննարկումներում արտահայտված մտքերն ու տեսակետները՝ փաստում է.

- Մարդկային զարգացման ցուցանիշներով Սամցխե-Ջավախքը նշանակալիորեն զիջում է երկրի մյուս տարածքներին:
- Անասելի չափերի է հասել գործազրկությունը, տեղում աշխատատեղերի բացակայությունը պատճառ է հանդիսանում արտագաղթի: Առկա սակավաթիվ աշխատատեղերում տեղ զբաղեցնելու համար էլ ստեղծված են ոչ հավասար պայմաններ, տարածաշրջանը, հատկապես հայահոծ բնակավայրերը, չեն ընդգրկված աշխատատեղերի ստեղծման, սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ոչ մի իրականացվող ծրագրում:
- Քայքայված վիճակում է գտնվում առողջապահական համակարգը: Չեն գործում գյուղական ամբուլատորիաները: Մեկ-երկու շրջանային հիվանդանոցները տեխնիկապես շատ թույլ են եւ հեռու են բնակչության նվազագույն կարիքները գոնե բավարար չափով հոգալու հնարավորությունից:
- Ցածր մակարդակի վրա է գտնվում բնակչության սոցիալական պաշտպանվածությունը: Ուշացումներով են տրվում բյուջետային աշխատողների աշխատավարձերը եւ կենսաթոշակները, որոնք շատ հեռու են սպառողական նվազագույն զամբյուղի պահանջների բավարարումից:
- Աղքատության խորացումն ուղեկցվում է սոցիալական անհավասարության ընդարձակումով, նկատվում է բնակչության եկամուտների մակարդակի կտրուկ բեւեռացում:
- Բնակչության կենսապահովման համար չկա գործող կայուն համակարգ (վառելիքի, էներգաջեռուցման, խմելու ջրի եւ այլն): Հատկապես Ախալքալաքում եւ Նինոծմինդայում սուր խնդիր է ջեռուցում ապահովելու հարցը:

• Քանդված ու քայքայված են Թբիլիսիին, երկրի ծովափնյա եւ այլ շրջաններին ու Հայաստանին կապող ճանապարհները: Առավել վատ վիճակում են միջգյուղական եւ տեղական նշանակության ճանապարհները: Այս կացությունը անհաղթահարելի դժվարություններ է ստեղծում սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից՝ խոչընդոտելով նաեւ տնտեսական ինտեգրմանը:

• Երկրամասի վրա առանձնապես ծանր է անդրադառնում երկրում տիրող էներգետիկ ճգնաժամը. դժվարությունների բեռը անհավասարաչափ է բաշխված, եւ տուժողի դերում կրկին Ջավախքն է: Անուշադրության է մատնված նաեւ երկրամասի՝ հեռավոր եւ լեռնային տարածաշրջան լինելու հանգամանքը:

• Բացառությամբ մեկ-երկու դեպքի՝ գյուղական բնակավայրերում հեռախոսային ցանց գոյություն չունի: Վիճակը բարվոք չէ նաեւ քաղաքներում: Նույն կացությունն է էլեկտրոնային կապի եւ հեռուստաալիքների հեռարձակման ոլորտներում:

• Գյուղատնտեսությունն ու արդյունաբերական համակարգը կաթվածահար վիճակում են: Տնտեսության, հատկապես գյուղատնտեսության ոլորտում անուշադրության են մատնված զարգացման բազմաթիվ հնարավորություններ, չնայած նրան, որ Սամցխե-Ջավախքի գյուղատնտեսությունը կարեւոր դեր է խաղում Վրաստանի տնտեսության մեջ: Գրեթե ամբողջությամբ գյուղատնտեսական երկրամասը չունի մշակովի հողերի ոռոգման համակարգ: Տնտեսական ինֆրակառուցվածքի քայքայման, վառելիքաէներգետիկ միջոցների սղության կամ չգոյության պատճառով լրջորեն դժվարացել է բնական ռեսուրսների եւ գյուղատնտեսական մթերքների վերամշակումն ու իրացումը:

• Ամբողջ երկրում տիրող կոռուպցիան առավել վառ է արտահայտված երկրամասում: Երկրում հայտարարված բարեփոխումները երկրամասին դեռեւս հասանելի չեն: Արդյունքում հասարակության մեջ ձեւավորվում է կարծիք, որ կաշառակերությունը ոչ միայն չի արգելվում, այլեւ խրախուսվում է:

• Տարածաշրջանը մղվում է ժողովրդագրական արհեստական փոփոխությունների, որոնք կարող են հանգեցնել ազգամիջյան հարաբերությունների սրման եւ կայունության խախտման: Տարօրինակ է իշխանությունների կողմից այլ ազգությունների

ներկայացուցիչների ներգաղթի կազմակերպումը երկրամաս եւ սրանց սոցիալ-տնտեսական եւ այլ կարգի աջակցության ցուցաբերումը այն դեպքում, երբ բնիկները զրկված են նման ուշադրությունից.

- Ապահովված չէ ազգային փոքրամասնությունների մասնակցությունը երկրի հասարակական-քաղաքական կյանքին, սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման խնդիրներին:

Համաժողովը, մտահոգված լինելով, որ

- իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության մեջ՝ պետական շինարարության, տնտեսական, սոցիալական, ազգային փոքրամասնությունների իրավունքների եւ ժողովրդագրության ոլորտներում գոյություն ունեցող խնդիրներն ու խոցելի կողմերը կարող են վնասել Վրաստանի միջազգային հեղինակությանն ու երկրում ժողովրդավարության զարգացմանը,
- չլուծված սոցիալ-տնտեսական եւ այլ խնդիրները կարող են հարված հասցնել հասարակության մեջ ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը,
- կուտակված խնդիրների լուծման ձգձգումը կարող է ստեղծել նոր եւ անցանկալի լարվածություն,
- առանց այն էլ լարված ու պայթյունավտանգ մթնոլորտն ավելի է շիկանում մի շարք զանգվածային լրատվամիջոցների ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների հրահրած ազգայնամոլական եւ անհանդուրժողականության քարոզչությամբ,

Անհրաժեշտ է համարում.

- Աշխատատեղերի ստեղծումը, տրանսպորտային եւ այլ ենթակառուցվածքների (գազամուղ, ջրագիծ, ոռոգման ցանց, հեռահաղորդակցություն եւ այլն) զարգացումը նկատել որպես շրջանի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման առաջին ուղին՝
- Վրաստանի ծովափնյա շրջանների, Թբիլիսիի եւ Հայաստանի հետ կապող մայրուղիների, ինչպես նաեւ

միջգյուղական ճանապարհների ամբողջական վերանորոգումը, որը կարող է ապահովվել ներքին եւ արտաքին ռեսուրսների հաշվին:

- Էներգետիկ դժվարությունների բեռի հավասարաչափ բաշխումը տարբեր շրջանների միջեւ. շրջանների էներգետիկ խնդիրների լուծումը տեղական ռեսուրսների (թափարվան) օգտագործման միջոցով:

- Գյուղական շրջանների հեռախոսացանցի ընդլայնումը, որակյալ եւ մատչելի կապի ապահովումը:

- Հեռահաղորդակցության արդիական հաղորդիչ կայանի կառուցումն ու շահագործումը:

- Գյուղատնտեսական ապրանքների՝ տեղում վերամշակման ապահովումը, գյուղատնտեսական ասպարեզում նոր տեխնոլոգիաների կիրառումը եւ շրջանի ոռոգման խնդիրների շուտափույթ լուծումը:

- Խոշոր (այդ թվում՝ օտարերկրյա) բանկերի մասնաճյուղերի, ինչպես նաեւ միջազգային ֆինանսական եւ վարկային կազմակերպությունների կողմից գրասենյակների հիմնադրումը, դրանց կողմից փոքր եւ միջին գործարարության վարկավորումը:

- Առողջապահական համակարգի վերակազնումը (հիվանդանոցներ, շտապ օգնության կայաններ, գյուղական ամբուլատորիաներ):

- Ախալքալաքի օդանավակայանի վերակառուցումն ու վերագործարկումը:

- Ազգամիջյան խնդիրներում հանդուրժողականության մթնոլորտի ձեւավորմանը, ամրապնդմանն ու պահպանմանը նպաստող գործողությունների ձեռնարկումը:

- Համապատասխան քայլերի ձեռնարկումը՝ շրջանի կայունության պահպանմանը խոչընդոտող ժողովրդագրական իրավիճակի ցանկացած արհեստական փոփոխության դեմ:

- Շրջանում ընթացող միջազգային տնտեսական գործընթացներին տեղի բնակչության ակտիվ մասնակցությունը, առկա ներուժի եւ կարողությունների օգտագործումը:

- Համագործակցությունը ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ մարդկային զարգացման, ինչպես նաեւ

տնտեսական ինտեգրացիոն խնդիրներ հետապնդող միջազգային կազմակերպությունների հետ, նրանց ակտիվ մասնակցությունը Սամցխե-Ջավախքի հիմնախնդիրների լուծման գործում, միջազգային վարկային եւ դրամաշնորհային կազմակերպությունների կողմից միջոցների համաչափ բաշխումը տարբեր շրջանների միջեւ:

Համաժողովը, առաջնորդվելով վերոնշյալ հաստատումների տրամաբանությամբ եւ արված առաջարկների իրականաց-ման հրամայականով, որոշում է.

- Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդին հանձնարարել/առաջարկել ստեղծել համապատասխան մասնագիտական հանձնախումբ, որի կողմից պետք է մշակվի եւ ներկայացվի տարածաշրջանի սոցիալ-տնտեսական համալիր զարգացման ծրագիրը՝ առաջնորդվելով վերոհիշյալ հրամայականներով:
- Արտացոլված խնդիրների բազմակողմանի քննարկման եւ պետական հոգածությամբ լուծման ակնկալիքով մեկ անգամ եւս դիմել Վրաստանի կենտրոնական իշխանություններին եւ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին:
- Արտացոլված խնդիրների լրիվ կամ մասնակի լուծմանը նպաստող նպատակային ծրագրերի նախագծման եւ իրականացման ակնկալիքով դիմել միջազգային կառույցներին, դոնոր երկրներին եւ կազմակերպություններին:
- Առկա խնդիրները ուշադրության կենտրոնում պահելու, համապատասխան հասարակական կարծիք ձեւավորելու, պետական մարմինների արդյունավետ գործունեությանը նպաստելու եւ բիզնես կառույցներին ու անհատ գործարարներին խնդիրների լուծմանը մասնակից դարձնելու ակնկալիքով դիմել Վրաստանում գործող հասարակական կազմակերպություններին եւ զանգվածային լրատվամիջոցներին:
- Հիմք ընդունելով հայ-վրացական դարավոր բարեկամությունն ու միջպետական բարձր մակարդակի հարաբերությունները եւ առաջնորդվելով դրանք նորանոր գործնական քայլերով ամրապնդելու հեռանկարով՝ դիմել հայկական հասարակական կազմակերպություններին՝ առկա խնդիրների լուծման գործընթացին հայաստանյան բիզնես կառույցների, անհատ գործարարների եւ շահագրգիռ այլ կառույցների ներգրավմանը նպաստելու ակնկալիքով:

Բանաձեւ

Ընդունված է Սամցխե-Ջավախքի կրթամշակութային խնդիրներին
նվիրված *«Ինտեգրացում, բայց ոչ ձուլում»* նախաձեռնության
երկրորդ համաժողովի կողմից
2 ապրիլի 2005 թ., ք. Ախալքալաք

Համաժողովը, նպատակ ունենալով՝

- Նպաստելու Սամցխե-Ջավախքի առջեւ ծառացած լեզվական, կրթական, մշակութային եւ եկեղեցական-կրոնական խնդիրների լուծմանը,

- Սամցխե-Ջավախքում նշված խնդիրների բարելավման միջոցով նպաստ բերելու Վրաստանում ազգամիջյան փոխհարաբերություններ եւ ժողովրդագրական խնդիրների մեղմմանը եւ կարեւորելով բարեփոխումների անհրաժեշտությունն ու նրանց թե տարածքային եւ թե էթնիկ իմաստով հավասարաչափ իրականացումը,

- Սամցխե-Ջավախքում այս հարցերի բարելավման միջոցով նպաստելու Վրաստանում ներքին ինտեգրացման օբյեկտիվ գործընթացի կայացմանը, երկրում բնակվող տարբեր ազգերի միջեւ հանդուրժողականության, համակեցության, ներքաղաքական կայունության պահպանմանն ու ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը

- Մի շարք օբյեկտիվ գործոններից /երկրամասի էթնիկ պատկերը, Հայաստանի հետ սահմանային կապը եւ այլն/ ելնելով՝ Սամցխե-Ջավախքում լեզվական, կրթական, մշակութային, եկեղեցական-կրոնական խնդիրների լուծումը դիտարկելու որպես տարածաշրջանային ինտեգրացիայի կայացման եւ ժողովուրդների բարեկամության ամրապնդման կարեւոր պայմաններից մեկը,

- Ներդրում ունենալու Վրաստանի եւ Հարավկովկասյան տարածաշրջանի՝ եվրոպական ինտեգրացիայի իրական գործընթացում միջազգային /եվրոպական/ հանրության առջեւ Վրաստանի կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանն առնչվող հարցերում եւ կարեւորելու յուրաքանչյուր քաղաքացու կողմից գործընթացի դրական պտուղների զգացողության խնդիրը,

Հիմք ընդունելով համաժողովում հնչած զեկույցները, քննարկումներում արտահայտված մտքերն ու տեսակետները՝ <u>փաստում է.</u>

Կրթական ոլորտում

- Կրթական զարգացման ցուցանիշներով Սամցխե-Ջավախքը նշանակալիորեն զիջում է երկրի մյուս տարածքներին:

- Կոպտորեն խախտվում է Սամցխե-Ջավախքի հայության՝ սեփական պատմությունը, լեզուն եւ մշակույթը ուսումնասիրելու համընդհանուր ճանաչված իրավունքը */Յունեսկոյի Գլխավոր կողմից ընդունված՝ Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիան, 1960 թ.,Վրաստանի Սահմանադրություն, հդվ. 35, Օսլոյի հանձնարարականներ, կետ 14, Լունդյան հանձնարարականներ, 1999 թ., կետ18, Ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքի Հաագայի հանձնարարականներ, 1966, կետ 1, կետ 9, Տարածաշրջանային լեզուների եւ փոքրամասնությունների լեզուների Եւրոպական խարտիա, 1992 թ., Ազգային փոքրամասնությունների եւրոպական շրջանակային կոնվենցիա, 1995 թ./:*

- Կրթական խտրական քաղաքականության հետեւանքով վրացական դպրոցների ու հայկական դպրոցների վրացերեն լեզվի ուսուցիչները անհամեմատ բարձր աշխատավարձ են ստանում, քան հայ ուսուցիչները:

- Ուսումնական գործընթացի բնականոն կազմակերպման համար դպրոցները չունեն նվազագույն տարրական պայմաններ՝ լաբո-

րատորիաներ, դիդակտիկ նյութեր, օժանդակ սարքավորումներ, գույք եւ այլն:

- Տարածաշրջանի հայկական դպրոցների շենքերի մեծ մասը գտնվում է քայքայված կամ վթարային վիճակում. որոշ դպրոցներ տեղակայված են որեւէ չափանիշի չհամապատասխանող շինություններում: Այնինչ վրացական դպրոցների վիճակը շահեկանորեն տարբերվում է, ինչը եւս մի հավելյալ ապացույց է կենտրոնական իշխանությունների կողմից իրականացվող ազգային խտրական քաղաքականության:

- Վրացական դպրոցներում անգամ մեկ աշակերտի համար բացվում է առանձին դասարան, այնինչ հայկական դպրոցներում սահմանված թվից՝ 37-ից, մի քանի աշակերտ պակաս լինելու դեպքում դասարան չի բացվում, կամ միավորվում են դասարանները՝ գերազանցելով սահմանված թիվը:
- Սահմանված թվից պակաս աշակերտներ ունենալու դեպքում հայկական միջնակարգ դպրոցները վերածվում են ութնամյա դպրոցների կամ երկու-երեք բնակավայրին հատկացվում է մեկ դպրոց, այնինչ անգամ մի քանի աշակերտ ունեցող վրացական դպրոցները պահպանում են միջնակարգի կարգավիճակը:

- Սամցխե-Ջավախքում չկան հայկական բարձրագույն կրթական հաստատություններ, եւ դա այն դեպքում, երբ 95 տոկոսով հայաբնակ Ախալքալաքում վերջին տարիներին բացվեց պետական համալսարանի վրացական մասնաճյուղ:

Մշակութային ոլորտում

- Սամցխե-Ջավախքում մշակութային կյանքը գրեթե ամբողջությամբ կազմալուծված է:

- Պետության մշակութային քաղաքականությունից դուրս է մնացել տարածաշրջանի բնակչության մեծամասնությունը կազմող հայության հոգեւոր-մշակութային պահանջմունքների բավարարման հարցը /*Վրաստանի Սահմանադրություն, հդվ.38, Մշակույթի մասին Վրաստանի օրենքը, հդվ.20, Եւրպական մշակութային կոնվենցիա, 1954 թ., Միջազգային մշակութային համագործակցության սկզբունքների հռչակագիր, 1966 թ.* /:

- Ցածր աշխատավարձի պատճառով չեն գործում երբեմնի ակումբները, մշակույթի տներն ու կինոդահլիճները:

- Չկան պետության կողմից հովանավորվող մշկութային խմբեր, թատրոններ եւ այլ հաստատություններ:

- Չեն գործում մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնները: Դեռեւս գործող մեկ-երկու արվեստի դպրոցները /գեղանկարչության եւ երաժշտական/ գտնվում են նյութա-տեխնիկական անմխիթար վիճակում, որոնք անգամ այս դրությամբ հասու են շատ քչերին:

- Պետության կողմից չեն պահպանվում պատմական-ճարտարապետական հուշարձաններն ու մշակութային այլ արժեքները: Չկան թանգարաններ, պատկերասրահներ: Ախալքալաքում գործող միակ գավառագիտական թանգարանը զուրկ է պետական հոգածությունից եւ հասել է քայքայման եզրին:

Լեզվական ոլորտում

- Կրթամշակութային ոլորտում պետության ոչ հոգատար, իսկ հաճախ՝ խտրական վերաբերմունքը ուղղակի կամ անուղղակի կերպով բացասական անդրադարձ է ունենում Սամխե-Ջավախքի հայության՝ ազգային լեզվից օգտվելու եւ դրա զարգացման համար պայմաններ ապահովելու գործում:

- Օրենսդրորեն ոտնահարվում է՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ վարչական իշխանությունների հետ մայրենի լեզվով հարաբերվելու համընդհանուր ճանաչված իրավունքը */Օսլոյի հանձնարարականներ, կետ 14/:*

- Սամցխե-Ջավախքում պետությունը չի ապահովում մայրենի լեզվով բարձրագույն կրթություն ստանալու հայերի իրավունքը */Ազգային փոքրամասնությունների կրթության իրավունքի Հաագահի հանձնարարականներ, 1966 թ., կետ 1, կետ 9, Տարածաշրջանայինլեզուների եւ փոքրամասնությունների եւրոպական խարտիա, 1992 թ., հդվ. 7, հդվ. 11 եւ այլն/:*

- Նախապայմաններ չեն ստեղծվում, որպեսզի տարածաշրջանի Հայ բնակիչները տիրապետեն վրացերեն լեզվին, իսկ մի քանի տարի առաջ այս նպատակի համար ձեռնարկած կառավարության եւ միջազգային կազմակերպությունների միջոցառումներն արդյունք չտվեցին:

- Պետական լեզուն չիմանալու պատճառով Հայ պաշտոնյաներին ազատում են աշխատանքից:

- Տարածաշրջանի հայությունը զրկված է հանրային կամ պետական լրտվամիջոցներով տեղեկատվություն ստանալու իրավունքից:

Եկեղեցական-կրոնական ոլորտում

Թեեւ Սամցխե-Ջավախքում հայ եւ վրաց եկեղեցիների կրոնադավանաբանական առանձնահատկությունները երկու ժողովուրդների միջեւ տարաձայնության առիթ չեն տալիս, սակայն տարածաշրջանի մի շարք եկեղեցիների եւ սրբավայրերի պատկանելության շուրջ ծավալվող վեճերը, վրաց եկեղեցու եւ իշխանական որոշ շրջանակների չհավասարակշռված քայլերն այս ասպարեզում անցանկալի զարգացումների հող են ստեղծում:

Համաժողովը, մտահոգված լինելով, որ

- Ազգային փոքրամասնությունների կրթական, մշակութային, լեզվական, եկեղեցական-կրոնական իրավունքների ոլորտում իշխանությունների կողմից իրականացվող խտրական քաղաքականությունը կամ այդ իրավունքների ոտնահարումն ու անտեսումը կարող են վնասել Վրաստանի միջազգային հեղինակությանն ու երկրում ժողովրդավարության զարգացմանը,

- նշված հարցերի վերաբերյալ իրավահավասարության սկզբունքի վրա խարսխված պետական քաղաքականության բացակայությունը կարող է հարված հասցնել հասարակության մեջ ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը,

- կուտակված խնդիրների լուծման ձգձգումը կարող է ստեղծել նոր եւ անցանկալի լարվածություն,

- առանց այն էլ լարված ու պայթյունավտանգ մթնոլորտն ավելի է շիկանում մի շարք զանգվածային լրատվամիջոցների ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների հրահրած ազգայնամոլական եւ անհանդուրժողականության քարոզչությամբ,

Անհրաժեշտ է համարում

Կրթական ոլորտում

- Առաջնահերթ խնդիր դարձնել Սամցխե-Ջավախքի հայկական դպրոցների կրթական մակարդակի բարձրացումը՝ դրա հետագա զարգացման իրավական եւ նյութատեխնիկական հիմքի ապահովումով:

- Ուսուցիչների պատրաստման եւ վերապատրաստման հարցը: Ջավախքում վերականգնել ուսուցիչների վերապատրաստման խորհրդատվական կետերը:

- Հայկական դպրոցները վրաց լեզվի որակյալ ուսուցիչներով ապահովելը:

- Հայկական դպրոցների ուսումնական ծրագրերի բովանդակության որոշման եւ կրթության գործընթացը մայրենի լեզվով կազմակերպելու իրավունքը:

- Հայկական դպրոցների նկատմամբ պետության ոչ խտրական քաղաքականության ապահովումը, որն արտահայտվում է հայկական եւ վրացական դպրոցների շենքային պայմանների ընդգծված տարբերությամբ, ուսումնաօժանդակ միջոցների ապահովման եւ նյութատեխնիկական մատակարարման խտրական քաղաքականությամբ, հայ եւ վրացի ուսուցիչների աշխատավարձերի անհամաչափությամբ, հայկական եւ վրացական դպրոցների դասարանների աշակերտների նվազագույն թվի համամասնության՝ օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ ի վնաս հայկական դպրոցների:

- Հայկական դպրոցներ բացելու իրավունքը ոչ թե թույլ-տրվության, այլ առավելաբար ծանուցման հիման վրա՝

- Ջավախքում պետական բարձրագույն ուսումնական հաստատության բացումը, որտեղ կրթության լեզուն կլինի հայերենը:

Մշակութային ոլորտում

- Երկրի բոլոր տարածաշրջանների մշակութային զարգացման համար հավասար պայմաններ ստեղծելու պետության պարտավո-րության գործնականացումը:

- Մշակութային հաստատությունների /մշակույթի տներ, կինոդահլիճներ ակումբներ եւ այլն/ վերագործարկումը պետության հովանավորությամբ:

- Առնվազն խոշոր բնակավայրերում մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների եւ արվեստի դպրոցների բացումը:

- Ախալցխա, Ախալքալաք եւ Նինոծմինդա քաղաքներում պետական հովանավորությամբ հայկական թատերական, պարային եւ երգչախմբերի ստեղծումը:

- Հայկական ստեղծագործական միությունների գործու-նեության խրախուսումն ու պետական հովանավորությունը:

- Մշակութային արժեքների պահպանման նպատակով թանգարանների եւ պատկերասրահների ստեղծումը, իսկ արդեն գոյություն ունեցողների նկատմամբ պետական խնամքի եւ հոգատարության ուժեղացումը:

- Պետության կողմից հայկական պատմամշակութային հուշարձանների նկատմամբ հոգատար վերաբերմունքն ու պահպանությունը:

Լեզվական ոլորտում

- Պետության կողմից Հայոց լեզվի օգտագործման եւ պաշտպանության իրավունքի ապահովումը.

- Սամցխե-Ջավախքում վարչական իշխանությունների եւ դատական մարմինների հետ սեփական լեզվով հարաբերվելու հնարավորության իրավունքը:

- Տարածաշրջանի հայ բնակչության, հատկապես պետական ծառայողների համար վրացերեն լեզուն սովորելու իրական պայմանների ստեղծումը:

- Հայ բնակչության հետ անարդել չփվելու եւ վարչական գործունեության օբյեկտիվության ու արդյունավետության բարձրացման համար ազգությամբ վրացի պաշտոնյաների՝ հայերենով հաղորդակցվելու պայմանի ապահովումը:

- Մայրենի լեզվով բազմամակարդակ /միջնակարգ, բազային եւ բարձրագույն/ կրթություն ստանալու իրավունքը:

- Հայոց լեզվով տեղեկատվություն ստանալու եւ այն տարածելու իրավունքը:

Եկեղեցական-կրոնական ոլորտում

- Վրաց եկեղեցու, պետական պատկան մարմինների, գիտական, մշակութային եւ այլ շահագրգիռ կազմակերպությունների ան-կողմանակալ, հավասարակշռված ու գիտականորեն հիմնավորված վերաբերմունքը տարածաշրջանի եկեղեցիների, սրբավայրերի եւ այլ հուշարձանների նկատմամբ, որոնց պատկանելության շուրջ վեճերը կարող են հանգեցնել անցանկալի հետեւանքների:

Համաժողովը, առաջնորդվելով վերոնշյալ հաստատումների տրամաբանությամբ եւ արված առաջարկների իրականացման հրամայականով, որոշում է.

- Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական կազմա-կերպությունների խորհրդին առաջարկել ստեղծել համապա-տասխան մասնագիտական հանձնախմբեր, որոնք պետք է

մշակեն եւ ներկայացեն քննարկված հարցերի լուծման համալիր ծրագրեր՝ առաջնորդվելով վերոհիշյալ հրամայականներով:

- Արտացոլված խնդիրների բազմակողմանի քննարկման եւ պետական հոգածությամբ լուծման ակնկալիքով մեկ անգամ եւս դիմել Վրաստանի կենտրոնական իշխանություններին եւ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններին:

- Արտացոլված խնդիրների լրիվ կամ մասնակի լուծմանը նպաստող նպատակային ծրագրերի նախագծման եւ իրականացման ակնկալիքով դիմել միջազգային կառույցներին, դոնոր երկրներին եւ կազմակերպություններին:

- Առկա խնդիրները ուշադրության կենտրոնում պահելու, համապատասխան հասարակական կարծիք ձեւավորելու, պետական մարմինների արդյունավետ գործունեությանը նպաստելու եւ շահագրգիռ կառույցներին ու անձանց լուծմանը մասնակից դարձնելու ակնկալիքով դիմել Վրաստանում գործող հասարակական կազմակերպություններին եւ զանգվածային լրատվամիջոցներին:
- Հիմք ընդունելով հայ-վրացական դարավոր բարեկամությունն ու միջպետական բարձր մակարդակի հարաբերությունները եւ առաջնորդվելով դրանք նոր գործնական քայլերով ամրապնդելու հեռանկարով՝ դիմել հայկական հասարակական կազմակերպություններին, շահագրգիռ այլ կառույցների եւ անհատների՝ տարածաշրջանում առկա խնդիրների լուծման գործընթացին նպաստելու ակնկալիքով:

Ընդունված է Սամցխե-Ջավախքի կրթամշակութային խնդիրներին նվիրված *«Ինտեգրացում, բայց ոչ ձուլում»* նախաձեռնության երկրորդ համաժողովի կողմից

2 ապրիլի 2005 թ., ք. Ախալքալաք

Բանաձեւ

Ընդունված է Սամցխե-Ջավախքի «Ջավախքի կարգավիճակը Վրաստանի պետական կառուցվածքում» թեմայով *«Ինտեգրացում, բայց ոչ ձուլում»* նախաձեռնության երրորդ համաժողովի կողմից

24 սեպտեմբերի 2005 թ., ք. Ախալքալաք

Համաժողովը, նպատակ ունենալով՝

- Նպաստելու Սամցխե-Ջավախքի առջեւ ծառացած բազմաթիվ և տարաբնույթ խնդիրների առավել ամբողջական և համապարփակ լուծմանը,

- Նպաստելու խնդիրների լուծմանը՝ հիմք ընդունելով ժողովրդավարական միակ ճանապարհը-այն է՝ լիակատար ներգրավում խնդիրների արծարծման, քննարկման և որոշումների ընդունման գործընթացում,

- Նպաստելու Վրաստանի պետական կառուցվածքի վերաբերյալ, մեր կարծիքով, կարևորագույն խնդրի շուրջ-երկրում ծավալված քննարկումների առավել առողջ և բազմակողմանի ընթացքին,

- Նպաստելու Վրաստանի պետական կառուցվածքի վերաբերյալ, մեր կարծիքով, կարևորագույն խնդրի-օբյեկտիվ, արդարացի և իրավական լուծմանը՝ որպես Վրաստանի կայուն և ժողովրդավար զարգացման երաշխիք,

- Սամցխե-Ջավախքում առկա խնդիրների բարելավման միջոցով նպաստ բերելու Վրաստանում ազգամիջյան փոխհարաբերությունների եւ ժողովրդագրական խնդիրների մեղմմանը եւ կարեւորելով բարեփոխումների անհրաժեշտությունն ու նրանց թե տարածքային եւ թե էթնիկ իմաստով հավասարաչափ իրականացումը,

- Սամցխե-Ջավախքում խնդիրների համապարփակ լուծման միջոցով նպաստելու Վրաստանում ներքին ինտեգրացման օբյեկտիվ գործընթացի կայացմանը, երկրում բնակվող տարբեր ազգերի միջև հանդուրժողականության, համակեցության, ներքաղաքական կայունության պահպանմանն ու ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը,

- Մի շարք օբյեկտիվ գործոններից /երկրամասի էթնիկ պատկերը, Հայաստանի հետ սահմանային կապը եւ այլն/ ելնելով՝ Սամցխե-Ջավախքում առկա խնդիրների լուծումը դիտարկելու որպես տարածաշրջանային ինտեգրացիայի կայացման եւ ժողովուրդների բարեկամության ամրապնդման կարեւոր պայմաններից մեկը,

- Ներդրում ունենալու Վրաստանի եւ Հարավկովկասյան տարածաշրջանի՝ եվրոպական ինտեգրացիայի իրական գործընթացում միջազգային /եվրոպական/ հանրության առջեւ Վրաստանի կողմից ստանձնված պարտավորությունների կատարմանն առնչվող հարցերում եւ կարեւորելու յուրաքանչյուր քաղաքացու կողմից գործընթացի դրական պտուղների զգացողության խնդիրը,

- Ամբողջացնելու երեք համաժողովների աշխատանքը

Հիմք ընդունելով համաժողովում հնչած զեկույցները, քննարկումներում արտահայտված մտքերն ու տեսակետները՝ <u>փաստում է.</u>

- Վրաստանի Սահմանադրությունում երկրի պետական կառուցվածքի մասին հստակ ու ամբողջական սահմանումի բացակայությունը չի նպաստում երկրում առկա խնդիրների լուծմանը.

- Վրաստանի Սահմանադրությամբ ճշտված տեղական ինքնակառավարումը կիրառվում է թերի կերպով.

- Տեղական ինքնակառավարման առկա համակարգում միշտ չէ որ հարգվում է քաղաքացիների իրավահավասարության սկզբունքը.

- Առկա օրենսդրությունը եւ հակամարտության շրջանների համար երկրի իշխանությունների կողմից առաջարկվող լուծումները խտրականություն են դնում Վրաստանի բաղկացուցիչ ազգությունների միջեւ. քաղաքացիական հավասարություն ցուցաբերած ազգությունների իրավունքները անտեսվում են, մինչդեռ երկրի տարածքային ամբողջականությունը խախտած շրջաններին առաջարկվում են այնպիսի լուծումներ, որոնք պետք է մատչելի լինեն հատկապես երկրի որոշ տարածքներում կոմպակտ բնակվող ազգությունների համար.

- Հաշվի առնելով Վրաստանի ներկա վարչատարածքային կառավարման ծանր վիճակը, ինչպես նաեւ տարածքային ամբողջականության վերականգնման խնդիրը, ֆեդերալիզմը կարող է լինել առկա խնդիրների լուծման այն ոսկե միջինը, որից Վրաստանը կարող է միայն շահել.

- Ֆեդերալիզմի պարագայում Վրաստանի կազմի մեջ մտնող ինքնավար ազգային սուբյեկտները ոչ միայն կխուսափեն ձուլման վտանգից, այլեւ կարող են տնտեսական զարգացման լայն հնարավորություններ ունենալ: Տնտեսական զարգացման լայն հնարավորություններ կունենան նաեւ ֆեդերացիայի առանձին մաս համարվող վրացական սուբյեկտները:

- Միայն ֆեդերալ միասնական Վրաստանի գոյության դեպքում կարելի է երաշխավորել տարածաշրջանի վերջնական կայունությունը, ինչպես նաեւ երկրի տարածքային ամբողջականությունը:

Համաժողովը, մտահոգված լինելով, որ

- Վրաստանի պետական կառուցվածքում ազգային փոքրամասնությունների նկատմամբ ոչ հավասարակշիռ մոտեցումը կարող է վնասել Վրաստանի միջազգային հեղինակությանն ու երկրում ժողովրդավարության զարգացմանը,

- Վրաստանի պետական կառուցվածքում ազգային փոքրամասնությունների /առավել ևս՝ բնիկ համարվող և

տարածքային իմաստով կենտրոնացված բնակություն ունեցող/ նկատմամբ ոչ հավասարակշիռ մոտեցումը կարող է դառնալ ծառացած տարաբնույթ խնդիրների ոչ քաղաքակիրթ քննարկման և լուծման մեթոդների անուղղակի խրախուսում,

- Վրաստանի պետական կառուցվածքում ազգային փոքրամասնությունների նկատմամբ ոչ հավասարակշիռ մոտեցումը կարող է ի չիք դարձնել պետականության նկատմամբ իրենց հավատարմությունը բազմիցս ապացուցած ազգերի և ազգությունների քաղաքակիրթ գործելաոճը,

- իրավահավասարության սկզբունքի վրա խարսխված պետական քաղաքականության բացակայությունը կարող է հարված հասցնել հասարակության մեջ ազգային փոքրամասնությունների ինտեգրմանը,

- խնդիրների լուծման կոմետիկ ճանապարհը և /կամ/ ձգձգումը կարող է ստեղծել նոր եւ անցանկալի լարվածություն,

- առանց այն էլ լարված ու պայթյունավտանգ մթնոլորտն ավելի է շիկանում մի շարք զանգվածային լրատվամիջոցների ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների հրահրած ազգայնամոլական եւ անհանդուրժողականության քարոզչությամբ,

Անհրաժեշտ է համարում Վրաստանի կողմից հետեւյալ քայլերի իրագործումը

- Վրաստանի պետական կառուցվածքին տալ դաշնային (ֆեդերալ) կառույց, որը բաղկացած կլինի տարածքային միավորներից (entity) եւ կենտրոնական իշխանություններից.

- Վրաստանի պետական դաշնային կառույցում կենտրոնական իշխանություններին վերապահել Վրաստանի Սահմանադրության հոդված 3-ի (ա) կետի ենթակետերով սահմանված բոլոր լիազորությունները.

- Տարածքային միավորների (entity) կազմում՝ հիմք ունենալով Վրաստանի բաղկացուցիչ ազգությունների էթնիկական ինքնության պահպանման եւ զարգացման կարիքներն ու հնարավորությունները.

- Սամցխե-Ջավախքի--իր ներկա սահմաններով եւ Քվեմո-Քարթլիի սահմանակից առավելաբար հայաբնակ բնակավայրերով--վերածումը Վրաստանի պետական ֆեդերալ կառույցի ինքնավար սուբյեկտներից մեկի՝ ինքնակառավարման լայն իրավասություններով, ներառյալ բնակչության կողմից ազատ ընտրություններով ինքնակառավարման բոլոր մարմինների ընտրության իրավունքով.

- Սամցխե-Ջավախքի ղեկավարումը Սամցխե-Ջավախքի գործադիր իշխանության ղեկավարով, որը ընտրվելու է ընդհանուր, հավասար եւ ուղղակի ընտրությունների միջոցով, որտեղ պաշտպանվելու է Սամխցե-Ջավախքի քվեարկողների հավասար իրավունքները.

- Սամցխե-Ջավախքի օրենսդիր գերագույն մարմնի՝ Սամցխե-Ջավախքի խորհրդարանի կազմումը, ազատ եւ ուղղակի ընտրություններով եւ Սամցխե-Ջավախքում մշակույթի, կրթության, սոցիալական քաղաքականության, տնտեսական քաղաքականության, հասարակական կարգի պահպանության, տեղական ինքնակառավարման եւ շրջապատի պաշտպանության կազմակերպման համար ընձեռնված իրավասություններով:

- Վրաստանի օրենսդիր, գործադիր եւ դատական կառույցներում Սամցխե-Ջավախքի ներկայության ապահովումը, ներկայության չափի եւ ձեւի սահմանադրական ճշգրտմամբ:

- Պետության կողմից Սամցխե-Ջավախքում բնակվող ժողովուրդների ազգային ինքնության եւ մշակույթի, լեզվի եւ պատմության պահպանման ու զարգացման երաշխավորումը՝ պետական բյուջեից համապատասխան հատկացումներ կատարելու միջոցով:

- Սամցխե-Ջավախքի տարածքում հայերեն լեզվին, պետության պաշտոնական լեզվին զուգահեռ պաշտոնական կարգավիճակի տրամադրումը:

- Սամցխե-Ջավախքի տարածքում հայերեն լեզվով կրթության երաշխավորումը եւ տարածքում կրթական հարցերի կարգավորման ու կրթական քաղաքականության մշակման լիազորությունը Սամցխե-Ջավախքի իշխանություններին տրամադրումը:

Ընդունված է *«Ինտեգրացում, բայց ոչ ձուլում»*
նախաձեռնության
երրորդ համաժողովի կողմից
24 սեպտեմբերի 2005 թ., ք. Ախալքալաք

ЗАКЛЮЧЕНИЕ

Автор монографии «Проблема Самцхе–Джавахка–Трехка в свете грузинских внутриполитических процессов и армяно–грузинских межгосударственных отношений с конца 1980 по конец 1990 гг.» магистрант кафедры истории сопредельных с Арменией стран Ереванского государственного университета Ваге Саркисян в своей работе сделал попытку с научной точки зрения осветить политическое, социально–экономическое и духовно – культурное развитие края.

В работе представлен краткий исторический очерк административного деления Самцхе–Джавахка–Трехка, начиная с периода вхождения края в состав Российской империи (конец 20–х гг. 19 в.), а затем–СССР и Грузии, дающий наглядное представление о политическо–административном развитии края; прослежены также демографические процессы и динамика взаимоотношений армянского населения с грузинским государством; про-ведены параллели с аналогичными политико–демографи-ческими процессами, происходящими в Аджарии, Абхазии и Южной Осетии.

Находящийся в эпицентре этно и геополитических процессов армянский Самцхе–Джавахк–Трехк за последние двадцать лет, последовавшие за распадом СССР, пережил много потрясений и катаклизмов.
Распад Союза, повлекший за собой обострение национального вопроса на постсоветском пространст-

ве, перманентно продолжающееся внутривластное противостояние в Грузии, катализирующее неустойчивое внутренне положение страны и острый социально – экономический кризис, явились тяжелым испытанием и для армянского населения края, породив безработицу и вынужденную миграцию со своей исторической родины. К тому же, с целью изменения демографической ситуации в армянонаселенном Самцхе–Джавахке–Трехке, политическое руководство Грузии, комбинируя административные рычаги давления с искусственной переселенческой политикой, проводит целенаправленную неадекватно жесткую ассимиляционную линию, направленную на планомерное вытеснение армян из своих родных мест, создавая тем самым опасный прецедент, когда край может лишиться своего исконного населения.

Автор монографии акцентирует внимание на том существенном обстоятельстве, что после распада Союза и провозглашения независимости Грузии, парламент страны в принятых законодательных актах отказался от наследия Советской Грузии и провозгласил государство провопреемницей Грузинской республики 1918–1921 гг., когда край Самцхе–Джавахка–Трехка не входил в ее состав и считался спорной территорией между Грузинской демократической республикой и Армянской республикой. По мнению автора, фактически, была создана политическая ситуация, аналогичная складывающейся в Арцахе, когда вопрос Смацхе– Джавах-

ка–Трехка должен был решаться путем совместных политических переговоров между правительствами Армении и Грузии. Однако политическое руководство РА в условиях острейшего социально–экономического кризиса, охватившего республику и тотальной войны в Арцахе, учитывая возможные негативные последствия полной блокады Армении, вынуждено было признать территориальную целостность Грузии.

Проведенный в работе научный анализ позволяет автору сделать неутешительный вывод: агрессивно–ассимиляционная политика грузинских властей, относительная отстраненность армянского руководства в решении многих проблем региона и отсутствие общей концепции развития края, разнонаправленность и разобщенность армянских общественно – политических сил и организаций создают опасный прецедент, могущий иметь губительные последствия не только для армянского населения Самцхе–Джавахка–Трехка, но и для всего армянства в целом. Надо со всей серьезностью осознать, отмечает автор, что если Арцах является сегодня стратегическим форпостом для армянского государства на востоке, то край Самцхе–Джавахка–Трехка с его свободолюбивым армянским населением прикрывает северные рубежи Республики Армения. Без учета этого важного компонента Армении весьма трудно будет проводить эффективную региональную политику и обеспечивать свою геополитическую устойчивость.

Научная ценность и политико–историчес-кая актуальность монографии состоит в том, что автор впервые были исследовал и представил на суд широкой общественности уникальные новейшие первоисточники – документы, содержащие ценные сведения о прошлом и нынешнем социально–экономическом, политическом состоянии края и его административном устройстве; мемуары и личные архивы непосредственных участников политических процессов; материалы заседаний, конференций, симпозиумов; тексты постановлений, обращений, призывов, законодательные акты грузинского правительства. В книге изучены и обработаны также публикации армянских, грузинских и российских СМИ, научные разработки ведущих научно– исследовательских и аналитических центров, занимающихся проблемами региона.

Глубокий и многосторонний анализ, объективность и непредвзятость оценок, полнота представленной информации, дают цельное, комплексное представление о сути проблем края и позволяют судить о компетентности и высоком профессионализме автора.
Сегодня край Самцхе–Джавахка–Трехка как древ-няя обитель армянского народа со своим многовековым и многопластовым богатым культурным наследием, с непоколебимой внутренней народной силой пытается выстоять перед всеми вызовами современности и сохранить свою национальную самобытность и идентичность.

Автором работы выражается искренняя уверенность в том, что настанет время, когда край удостоится подобающего внимания как со стороны Грузии, так и Армении и выполнит роль своеобразного связующего моста искренней и подлинной братской дружбы между армянским и грузинским народами.

Мы осознаем, что в работе освещены далеко не все вопросы, касающиеся проблем Самцхе–Джавахка–Трехка, а те, которые и отражены, требуют более глубокого и детального изучения на концептуальном уровне. Одно-временно мы исходим из того, что тем самым будет обозначен пройденный этап и исходный пункт будущих научных разработок в рамках данного достаточно широкого направления исследовательской деятельности.

Монография предназначена как для специалистов –историков, политологов, международников, так и для широкого круга читателей, интересующихся проблемой края и судьбами проживающего там армянского населения.

SUMMARY

The turbulent and complicated history of the last fifteen years of Javakhk, as well as its neighboring districts of Samtskhe and Trekhk (district of Tsalka) can be characterized in the terms of processes, which had occurred on the territory of the Soviet Union and post-Soviet newly independent statehoods. Failure of Gorbachev's *perestroika* had sharpened the nationalities issues, which in cube with the processes of the collapse of the empire, brought ethnic matters to the top of the political agenda in multiethnic Georgia. The initial political elite of Z. Gamsakhurdia led nationalist government, which had gained the power after the breakup of the USSR, demonstrated zero tolerance to the problems of the national minorities, which provoked escalation of regional conflicts in Abkhazia and South Osetia. The matters of the Armenian minority were also neglected, due to the absence of a concrete vision and concept to find reasonable solutions. Armenia, on her behalf, had faced a harsh challenge of statehood and hardships of blockade and warfare, and did not manage to pay proper attention to the social-political issues of the Armenian minority in Georgia, therefore her policy also had recorded no solid achievement.

Georgian policy of negation was accompanied with a policy of gerrymandering as the district of Tsalka, populated by Armenians was left away from the newly established Georgian territorial unit of

Samtskhe-Javakheti and the Georgian inhabited Borjom district had been attached to the region, so the number of Armenians in the region had been artificially decreased to 60%.

Social-economic and political problems in Georgia and the biased policy of both Gamsakhurdia and Shevardnadze governments led Javakhk to cultural collapse and social-economic crisis The situation became ever harder due to lack of energy supply also. Mass unemployment and social crisis led to a tremendous labor migration.

The issues regarding Javakhk had always been on the secondary agenda of the Armenian-Georgian relations. The problems which Javakhk faces in the new 21st century are not much different form the ones in the previous decade, harsh social and economic conditions and emigration, discrimination

Javakhk currently has gained a grave geopolitical importance due to the Baku-Tbilisi-Ceyhan pipeline and the new Kars-Akhalkalaki-Tbilisi railroad project, which strengthens Turkey's influence in the Caucasus

Removal of the Russian military bases from Javakhk and the foreign policy shift of the Georgian authorities establish a new foreign political equilibrium in the region

Minority issues in Georgia and especially in Javakhk persist due to the discriminatory policies of Georgia, which is neglecting her own international obligations towards the Council of Europe.

Meanwhile the problem of repatriation of Meskhetian Turks remains a serious concern for the Armenian population of Javakhk and that policy is seen as another tool for demographic influence. Another worry is strongly connected to the bias policy towards the Russian Dukhobor sect.

One of the means to improve the situation in the region is strong and multidisciplinary national education, which, with the protection of the political rights of Armenians can become confidence building tool and Javakhk will become a region that bridges amicable relations between Armenia and Georgia

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Աղբյուրներ

1. Օգտագործվել են նախկին «Ջավախք» ժողովրդական չարժման առաջնորդների, ինչպես նաև Սամցխե-Ջավախք-Թուրքիում քաղաքական գործունեություն ծավալած (և ծավալող) հասարակական-քաղաքական գործիչների անձնական արխիվների նյութերը՝ հայերեն, ռուսերեն և վրացերեն լեզուներով:
2. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբագիր՝ Ջ.Ս. Կիրակոսյան, Ե., 1972:
3. Հայաստանյան, վրաստանյան և միջազգային կազմակերպությունների ինտերնետային կայքեջեր.
   - http://www.ca-c.org/journal/eng-01-2000/07.darchiash.shtml.
   - Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004.
   - http://www.abkhaziainfo.f2o.org/analytics/EpZFApylEFDFHxsDHo.shtml
   - http://www.statistics.ge/_files/english/census/2002/Ethnic%20groups.pdf.
   - http://www.gov.am/armversion/information_centere_8/print.php?id=601&date=1032894000
   - http://www.a-info.org/arm/full.php?id=396
   - http://www.a-info.org/arm/full.php?id=744
   - http://www.a-info.org/arm/full.php?id=504
   - ECMI Working Papers #21: Pentikaen, Oskari and Tom Trier: Between Integration and Resettlement: The Meskhetian Turks August 2004, 54 pp., http://www.ecmi.de/download/working_paper_21b.pdf;

ECMI Рабочие доклады №21: Пентикяйнен, Оскари и Триер, Том: Между интеграцией и переселением: турки-месхетинцы. Август 2004, 38 стр., приложение http://www.ecmigeorgia.org/rus/works_rus/working_paper_21_rus.pdf

- **http://www.a-info.org/arm/full.php?id=753**
- **http://www.a-info.org/arm/full.php?id=756**
- **http://www.a-info.org/arm/full.php?id=773**
- **http://www.a-info.org/arm/full.php?id=607**
- **http://www.a-info.org/arm/full.php?id=744**

Բ. Գրականություն

ա. Հայերեն

4. Բերակչյան Լ.Ա., Բերակչյան Լ.Ա., Լոմատուրցխ գյուղի պատմա-աշխարհագրական ակնարկը, Երևան, 1999:
5. Բոգդանովկայի շրջան: Տեղեկագիրք, կազմողներ՝ Կարա-խանյան Մ., Անխչյան Ժ., Սեդրակյան Մ., Ղազարյան Լ., Եսոյան Մ., Վարդանյան Մ., Երանոսյան Ս., Բոգդանովկա, 1992,
6. Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Երևան, 1997:
7. Կարապետյան Ս., Ջավախք, Երևան, 2006:
8. Կարապետյան Ս., Հայերը Կախեթում, Երևան, 2004:
9. Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բաշխյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ.2, Երևան, 1988:
10. Հայթյան Ա.Խ., Հայաստանի ռուս վերաբնակները, Երևան, 1989:
11. Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990), նյութերի ժողովածու, պրակ առաջին, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հրաչյա Բայրամյանը, Երևան, 2001:
12. Ղազարյան Վ., Ջավախքի արծիվները Արցախի լեռնե-րում, Երևան, 2003:

13. Մելքոնյան Ա., Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար– 20-րդ դարի սկիզբ), Երևան, 2005:
14. Մելքոնյան Աղասի, Ջավախք իմ առասպելական, Երևան, 2003,
15. Մելքոնյան Ա.Ա., Էրզրում (Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)), Երևան, 1994, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Ե., 2003:
16. Մովսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992:
17. Մուրադյան Ի., Թուրք-ամերիկյան հարաբերությունների տարածաշրջանային հիմնախնդիրները, Երևան, 2004:
18. Մուրադյան Ռ., Մեր երթի խաչակիրը: Ժողովրդի հետ, ժողովրդի սրտում, Երևան, 2001:
19. Մուրադյան Ռ., «Մալաթիա» ջոկատի լեգենդը, Երևան, 2005:
20. Սահակյան Տ., Մեծ Հայաստանի Գուգարք-Գոդերձական տարածաշրջանի քաղաքական և հոգևոր-մշակութային ճակատագիրն ի սկզբանե մինչև 1980-ական թվականները, Երևան, 2004:
21. Սանոսյան Ա., Ախալքալաքի և Ախալցխայի գավառների 1918 թվականի ինքնապաշտպանությունը, Երևան, 1992:
22. Սմոյան Գ., Ջավախք: Ովքե՞ր ենք մենք, պրակ երրորդ, Երևան, 2000:
23. Վիրաբյան Վ., 1918 թ. վրաց-հայկական պատերազմը, ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները, Երևան, 2003:

բ. ռուսերեն

1. Мадоян А., Мелик-Шахназарян Г., ...Признать предложение т. т. армян. Неприемлемым, /армяно-грузинские отношение в 1918-1921 годах и на современном этапе, Джавахк, Нухи-Ареш/, Ере-ван, 2006.

2. Клибанов А. И., Из мира Религиозного сектантства, Москва, 1974, с 134.
3. Мяло К. Г., Россия и последние войны XX века (1989-2000), К истории падения сверхдержавы, Москва, 2002

դ. վրացերեն

1. ბუაჩიძე კიტა, შავი ძიგნი, თბილისი, 1990, გვ. 252–253.
2. თეთვაძე შ., თეთვაძე ო., სომხები საქართველოში (უძველესი დროიდან დღემდე), თბილისი, 1998.

Գ. Հոդվածներ և հրապարակումներ

ա. հայերեն

24. Աբեղեան Ա., Մենք եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականութեան խնդիրներ), Հայրենիք, Բոստոն, թիվ 2, դեկտեմբեր, 1928:
25. Էվոյեան Ս., Աջարական հանգոյց, Հայրենի Ջաւախք, Պէյրութ-Լիբանան, 2002:
26. Ղազարեան Է., Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան փոխ յարաբերութիւնների հեռանկարի հարցի շուրջ, Հայրենի Ջաւախք, Պէյրութ-Լիբանան, 2002:
27. Միխայլով Ս. Ա., Վրաստանի և ԱՄՆ-ի յարաբերութիւնները, Հայրենի Ջաւախք, Պէյրութ-Լիբանան, 2002: Շաքարեանց Ս., Հայ վրացական յարաբերութիւնները ժամանակակից փուլում, Հայրենի Ջաւախք, Պէյրութ-Լիբանան, 2002:
28. Ջամալեան Ա., Հայ-վրացական կնճիռը, «Հայրենիք», Բոստոն, 28 ապրիլ, 1928:
29. Ստեփանյան Խ., Ջավախքի ինքնավարությունը՝ որպես նրա զարգացման նախապայման, (Ջավախքը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ, խորհրդաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2006:
30. Ստեփանյան Խ., Ջավախքը մեկ տարում, «Դրօշակ», թիվ 4, հոկտեմեր, 2002:

31. Ստեփանյան Խ., Ջավախքի ինքնավարությունը որպես նրա զարգացման նախապայման, (Ջավախքը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ: Խորհրդաժողովի նյութերի ժողովածու), Երևան, 2006, էջ 25:
32. Ստեփանյան Խ., Ջավախքը մեկ տարում, «Դրոշակ», թիվ 4, հոկտեմբեր, 2002:
33. Տեր-Մինասյան Ռ., Հայաստանը անդրկովկասյան դաշնակցության մեջ, «Դրոշակ», 1926, թիվ 4:

բ. ռուսերեն

1. Герзмава Н , Грузинские Месхетинцы. обустраивая новую жизнь, /Institute for war and Peace reporting/ /IWPR/, Кавказский инфор-мационный еженедельник, вып. N 199, 09.10.2003
2. Гоциридзе Р., Канделаки О , Влиятельные группы и коррупция в Грузии, /Диоспора, нефть и розы ./, Фонд Г Белия и КИСМИ, Ереван, 2005.
3. Григорян М., Последние дни духоборов в Грузии /Institute for War and Peace Reporting (IWPR)/, Кавказский информационный еже-недельник NN253, 254, сентябрь, 2004
4. Кухианидзе А , Армянское и Азербейджанское меньшиства в Грузии О национальной и внешней политике Грузии, /Центральная Азия и Кавказ, Этнические и региональные конфликты в Евразии, общая редакция Малашенко А , Коппитере Б , Тренин Д./, кн.1, Москва, 1997.
5. Курдов А А., Аджарская автономная республика: остров стабильности Грузии, / Грузия· Проблемы и перспективы развития РИСИ/, под редакцией Е М.Кожохина, т.2, Москва, 2002.
6. Митяев В. Г , Грузино-абхазский конфликт и гражданская война в западной Грузии, Грузия Проблемы и перспективы развития РИСИ/, под редакцией Е.М.Кожохина, т 2, Москва, 2002.

7. Новикова Г В., Дашко В И , Самцхе-Джавахети: В эпицентре интересов, Грузия· Проблемы и перспективы развития РИСИ, под редакцией Е.М Кожохина, т.2, Москва, 2002.
8. Зверев А , Этнические конфликты на Кавказе, 1988-1994, /Спорные границы на Кавказе/, Москва, 1996
9. Скаков А. Ю., Южная Осетия социально-демографические проблемы, экономика, Грузия Проблемы и перспективы развития РИСИ/, под редакцией Е.М.Кожохина, т.2, Москва, 2002.
10. Скаков А.Ю , Внутриполитическая ситуация в Грузии, /Грузия Проблемы и перспективы раз-вития РИСИ/, под редакцией Е.М Кожохина, т.2, Москва, 2002.
11. Хаиндрова Ивлиан, Политические процессы в пост советской Грузии, /Диаспора, нефть и розы. Чем живут страны южного Кавказа Под редакцей Ивлиана Хаиндравы и Александра Искандаряна/,Фонд Г.Белия и КИСМИ, Ереван, 2005.

Դ. պարբերական մամուլ

- Հանդեսներ և ամսագրեր

1. «Դրօշակ», թիվ 1, հունվար, 2003, էջ 27:
2. «Դրօշակ», թիվ 4, հոկտեմբեր, 2002, էջ 51.
3. “Конфликты и переговоры”, N 3-4, Тбилиси, 1997
4. **Samtskhe-Javakheti: Realities and Perspectives. UNDP: Tbilisi, 2004, p. 59.**
5. სამცხე-ჯავახეთის პოლიეთნიკური საზოგადოების პრობლემები, ახალციხე, 2005, გვ. 2.

Թերթեր.

ա. Հայերեն.

1. «Ազատամարտ», թիվ 47, նոյեմբեր, 1994, թիվ 48, 1994, թիվ 29, օգոստոս, 1993, 12 ապրիլի, 1991, 02 05.1991, թիվ 21, 25.07.1991, 02.05.1991, թիվ 21, 25.07.1991, 02.05.1991, թիվ 38, 20 11.1991, 21.07.1991, թիվ 24, 12-18 յունիսի, 1992, 5-11 յունիսի, 1992, թիվ 23, թիվ 35, յունիս, 1992, թիվ 35, օգոստոս, 1992, թիվ 35, օգոստոս, 1992, թիվ 34, սեպտեմբեր, 1993, թիվ 14, ապրիլ, 1994, թիվ 31, օգոստոս, 1994, թիվ 26, Հուլիս, 1994, թիվ 43, սեպտեմբեր, 1994, թիվ 23, յունիս, 1994, թիվ 23, յունիս, 1994, թիվ 23, յունիս, 1994, թիվ 48, նոյեմբեր, 1992, թիվ 31, օգոստոս, 1994:

2. «Ազգ», 30.03.1991, 31.07 1991, 08.01.1992, 23.10 1992, 13.06.1992, 14.11.1992, 20.05 1993, 29.04.1993, 27.10.1993, 29 01.1994, 26.08.1995, 18.11 1993, 13.01.1994, 13.12 1994, 08.09.1995, 04.03.1993, 18.07 1992, 24.10 1992, 11.12.1992, 04.06.1992, 06.01.1993, 05.02.1993, 22.02.1994, 05.07.1994, 09.12 1994, 17.05.1994, 12.021994, 03.08.1994, 02.08.1995, 02.09.1995, 03.12.1994, 03.12.1994, 03.12 1994, 03.12.1994, 03.12.1994, 24.11.1994, 08 03 1994, 17 03.1994, 24.11.1994, 25.10.1994, 25.10.1995, 05.06.1996, 06.06.1996, 06.06.1996, 22.08.1996, 15.01.1997, 25.02.1997, 06.05.1997, 24.11.1994, 19.11 1997, 26.06.1998, 26.02.1997, 26.06 1999, 25.06.1998, 27.11.1997, 12.03.1997, 07.06 1996

3. «Ակունք», անկախ պարբերական, թիվ 7 Հուլիս-օգոստոս, 2004, սեպտեմբեր, 2004, թիվ 8-9, սեպտեմբեր, 2005, թիվ 17-18:

4. «Ասպնջակ», թիվ 9, 10.08.1991, թիվ 4, 15 04 1991, 04.12.1991, թիվ 12, թիվ 1, 25.03.1991, թիվ 9, 10.08 1991, 27.06.1992, թիվ 4 (16), 13.01.1994:
5 «Առավոտ», 30.05.2006
6. «Երկիր», 29.10 2004, 1-7 փետրվար, 2002, 30 ապրիլ – 6 մայիս, 2004, 10.12.2004 , 16.09.1998, 10.12. 2004 , 31 Հունվար – 6 փետրվար, 2003, 06.05.1998, 16.06.1998, 05.05.1998, 06 11.1998, 08.09 1998, 22 10 1998, 19.11.2004, 16.10.1998, 27.11.1998, 15 10.1998, 15.10.1998, 15.09.1998, 29.08.1998, 18.08.1998, 25.08.1998, 02.09 1998, 24.12.2004 , 05.02.2005, 17.05.2003, 12-18 Հուլիս, 2002 , 10-16 Հոկտեմբեր, 2003:
7 «Երրորդ ուժ», 9-16 Հուլիս, 2004:
8. «Հայաստան», 7 դեկտեմբեր, 1993:
9. «Հայաստանի Հանրապետություն», 31 08 1994: 25.11 1990, 27.11.1990, 15.11.1990, 02. 03. 1990, 31. 01 1991, 05 03. 1991, 30. 03 1991, 03 04 1991, 10.04 1991, 16.04 1991, 11.04.1991, 16.03.1991, 16 03 1991, 28.02.1991, 13.03.1991, 30.07.1991, 13 09.1991, 17.12 1991, 18.09.1991, 11.01.1992, 17.01.1992, 01.02.1992, 20 02 1992, 27.12.1991, 24.12 1991, 14.01.1994, 26 02 1994, 12.07.1992, 08.07.1992, 10.02.1994, 23.04.1993, 13.10.1994, 22.03.1994, 17.04.1992, 17.04.1992, 19.03.1993, 08.07.1992, 15.05.1992, 21.03.1992, 16.04.1992, 15.05.1992, 15.09.1993, 27.10 1993, 16.09.1993, 06.05.1994, 16 04.1994, 18 02.1992, 24.11.1993, 12.03.1994, 06.06.1992, 18 07.1992, 24 10 1992, 18.08.1992, 27.02.1993, 25 02.1993, 21.05.1993, 20.05.1993, 21.09 1993, 04 06.1994, 21.09 1993, 20.07.1993, 11.09.1995, 16.01.1996, 09.05 1996, 09.02.1996, 05.06.1996, 18.01.1994, 04 12.1993, 04.12.1993, 05.02 1994, 23.03.1995,

19.10 1993, 18.06.1998, 18.09.1998, 04.02.1999, 06.09.1996, 04.02.1999, 04.05.1999, 04.02.1999: 23.10.2001:

10. «Հզոր Հայրենիք», թիվ 13, 23.04.1999, թիվ 9, 20.03.1999, թիվ 8, 20.08.1998, թիվ 4, 4-10 փետրվար, 1999, թիվ 4, 04.02.1999, 20-27 հունվար, 1999, 20-27 հունվար, 1999, 13-20 հունվար, 1999, 14.04.1999:

11. «Մարտիկ», թիվ 37, սեպտեմբեր, 2001:

12. «Ջավախք», պաշտոնաթերթ «Ջավախք» ժողովրդական շարժման, N 1, օգոստոս, 1990, N 1, դեկտեմբեր, 1990, ապրիլ, 1995, N 1, դեկտեմբեր 1990, հուլիս, 1995, N 7 (13), թիվ 1 (38), փետրվար, 1997, N1(7), փետրվար, 1995, սեպտեմբեր, 1994, N 2(4), սեպտեմբեր, 1994, N 2 (4), հոկտեմբեր 1994, N 3 (5), նոյեմբեր, 1994, N 4 (6), հուլիս 1955, N 6 (12), հուլիս, 1995, N 7 (13), օգոստոս, 1995, N 8 (14), սեպտեմբեր, 1995, N 9 (15), «Ջավախք», Ախալքալաքի շրջանի «Արշալույս» կրթամշակութային և բարեգործական կազմակերպության պաշտոնաթերթ, օգոստոս, 1994, N 1, N 1, սեպտեմբեր 1993, N 1, օգոստոս, 1994, «Ջավախք», պաշտոնաթերթ «Ջավախք» ժողովրդական շարժման, օգոստոս, 1995, N 8 (14), օգոստոս, 1995, N 8(14), թիվ 2 (20), օգոստոս, 1998, թիվ 1 (18), փետրվար, 1997, թիվ 1 (19), օգոստոս, 1998, թիվ 2 (20), օգոստոս, 1998, թիվ 2, (20), օգոստոս, 1998, թիվ 1, փետրվար, 1997, թիվ 1, փետրվար, 1997, թիվ 1, օգոստոս 1998, թիվ 1 (18), փետրվար, 1997, թիվ 1 (19), օգոստոս, 1998, թիվ 2 (20), օգոստոս, 1998, թիվ 1 (19), օգոստոս, 1998, թիվ 1 (18), փետրվար, 1997, թիվ 1 (18), փետրվար, 1997, թիվ 2, օգոստոս, 1998, հոկտեմբեր, 1994, N 3 (5):

13. «Վրաստան», 19.08.1995, 19.08.1995, 19.08.1995, 19.08 1995, 09 09.1995, 18.10 1997, 22.11.1997, 22.11.1997, 29.11.4997, 13.12.1997, 14.13.1998, 02.05.1998,

03.10.1998, 02.05.1998, 28.11 1998, 23.05.1998, 21.04 2006, 15.08 1998, 15.09.1998, 23.05.1998, 07.11.1998, 24.10.1998, 07 03.1998, 07 11.1998, 05.06.1999, 25.03.2006, 21.09.2002, 06.05.2006 06.05.2006:

14. «Ինանողի ձայն», Համաուսանողական պարբերա-կան, փետրվար-մարտ», 2005, թիվ 7:
15. «Փարոս», (Վրաստանի Հանրապետության Ախալքալա-քի շրջանային թերթ), 11.12.1996:

բ. ռուսերեն.

1. «Вестник Грузии», 13.02.1991.
2. "Голос Армении", 10.11.2005.
3. « Заря Востока», Тбилиси, 07 06.1989.
4. «Свободная Грузия», 30.09 1992,, 10.03.1992, 02.10.1992, 24.10 1991, 02 07 1991, 02.07.1991, 16.07.1991, 28.08 1991, 27.07 1991, 22.08.1991, 03.08.1991, 30 07.1991, 14 09.1991, 14.09.1991, 14.12.1991, 21.12.1991, 02.07 1991,18.09.1991 19.08 1991,10.01.1992, 16.01.1992, 10.01 1992, 16.01.1992, 01.01.1993, 11.04.1992, 11.04.1992, 01.08.1992, 13.12.1991, 15 08 1996, 15.08.1996, 28.10.1992, 07.11 1992, 27 08.1996,04.02 1993. 13.12.1994, 13.12.1994, 20.07 1999, 05.10.1996, 24.10.1992, 27.07.1994 30 08.1998, 04.09.1998, 20 08 1998, 24.10.1992, 24.10.1992

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան. 10

Գլուխ առաջին

ՍԱՄՑԽԵ–ՋԱՎԱԽՔ–ԹՌԵՂՔԸ ՄԻՆՉԵՎ 1980–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԵՐԸ 25

Գլուխ երկրորդ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՋԱՎԱԽՔՈՒՄ ԽՍՀՄ ՓԼՈՒՋՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԶԲՈՒՄ 51

Գլուխ երրորդ

ՍԱՄՑԽԵ – ՋԱՎԱԽՔ – ԹՌԵՂՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԵՎ Զ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ . . .74

Գլուխ չորրորդ

ՋԱՎԱԽՔԸ՝ ԱՐՑԱԽԻՆ . 117

Գլուխ հինգերորդ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՌԵՂՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ՝ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (1992 Թ -Ի ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) 131

Գլուխ վեցերորդ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՌԵՂՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ /1992 Թ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – 1995 Թ / . 149

Գլուխ յոթերորդ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՌԵՂՔԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱ-ՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈ-ՎՈՒՅԹՈՒՄ /1995 Թ-ՆՈՐ ԴԱՐԱՍԿԻԶԲ/ 198

Գլուխ ութերորդ

ՍԱՄՑԽԵ - ՋԱՎԱԽՔ – ԹՌԵՂՔԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ 261

Վերջաբան 314
Հավելված 1 319
Հավելված 2 323
Հավելված 3 330
Заключение 357
Summary 362
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ 365
Բովանդակություն 375

ՎԱՀԵ ԴԱՎԻԹԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԹՌԵՂՔԸ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

(1980-ական թթ. վերջ - 1990-ական թթ.)

ВАЭ ДАВИДОВИЧ САРГСЯН

«Проблема Самцхе–Джавахка– Трехка в свете грузинских внутриполитических процессов и армяно–грузинских межгосударственных отношений с конца 1980 по конец 1990 гг.»

Խմբագիր՝ Ա Մելքոնյան

Սրբագրությունը՝ ԹԱԴԵՎՈՍ ՉԱՐՉՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
Համակարգչային շարվածքը՝ ՀԱՅԿՈՒՀԻ ԱՎԱԳՅԱՆԻ
Տպագրիչ՝ ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24^{գ}